

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

ԵՐԵՎԱՆ 2010

ՀՏԴ 941(497.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Գ 479

Տպագրությունը երաշխավորել են ՀԱԱ փիլիսոփայության,
իրավունքի եւ սոցիոլոգիայի ինստիտուտի գիտական խորհուրդը,
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ պատմության
եւ իրավագիտության ֆակ-ի խորհուրդը:

Խմբագիրներ. քաղ. գիտ. դոկտոր՝ **Լեւոն Շիրինյան**
բան. գիտ. թեկնածու՝ **Գուրգեն Վարդանյան**

Գեւորգյան Համլետ
Գ 479 «Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը».- Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2010թ.: 528 էջ

«Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը» մենագրությունը Հ. Գեւորգյանի «Ազատագրական պայքարի ռազմավարությունը եւ էջեր նրա հերոսապատումից» աշխատության երկրորդ գիրքն է: Մենագրությունում հայրենական պատմագիտության մեջ առաջին անգամ արխիվային նորահայտ վավերագրերի. հուշագրությունների. մենագրությունների ուսումնասիրմամբ ներկայացվում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում Հ.Յ. Դաշնակցության կովկասյան գործունեությունը:

ՀՏԴ 941(497.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-9939-53-659-0

© Հ. Գեւորգյան. 2010թ.

ԳԼՈՒԽ 1

ՊԱՅՔԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԲԱՑՈՒՄԸ

Հ.Յ. Դաշնակցության (ՀՅԴ) պատմության ուսումնասիրությունը հավաստում է, որ մինչեւ 1903 թվականը նրա գործունեության ոլորտը սահմանափակված էր գլխավորապես Արեւմտյան Հայաստանով:

Հ. Յ. Դաշնակցությունը ծեւավորվել էր արեւմտահայ խնդրի շուրջը, եւ կուսակցության ծրագրում տեղ գտած հիմնադրույթներն ու ՀՅԴ Ընդհանուր ժողովների ընդունած որոշումները հիմնականում վերաբերում էին Օսմանյան բռնապետության լծից Արեւմտյան Հայաստանի ազատագրմանը [1]:

Այսուհանդերձ, 1903 թ-ից Հ.Յ. Դաշնակցության գործունեությունում տեղի են ունենում արմատական տեղաշարժեր, որոնք գլխավորապես պայմանավորված էին Հայկական հարցի եւ կովկասահայության նկատմամբ ցարական Ռուսաստանի դրսեւորած քաղաքականությամբ: Այդ թվականից սկսած Հ.Յ. Դաշնակցությունը իր գործունեությունում բացում է պայքարի երկրորդ՝ Կովկասյան ճակատը:

Եթե սահմանենք Կովկասյան ճակատի բուն էությունն ու ուղղվածությունը, ապա ամփոփ պիտի ասել, որ կայսր Նիկոլայ 2-րդի կողմից հաստատված հայ եկեղեցու կալվածքների ու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի հրապարակումից հետո Հ. Յ. Դաշնակցությունը որդեգրում է ցարական Ռուսաստանի դեմ պայքարի ռազմավարությունը եւ պարզում հեղափոխական պայքարի դրոշն ընդդեմ հզոր կայսրության:

Պիտի նկատել, որ ազատագրական պայքարի ռազմավարության եւ մարտավարության («Տակտիկա կամ գործունէութեան եղանակ») վերաբերյալ Հ.Յ. Դաշնակցության 2-րդ Ընդհանուր Ժողովում (1898 թ. ապրիլին) արդեն ընդունվել էր «Ուժերու Կեդրոնացում կամ ապստամբութեան նախապատրաստութիւն» որոշումը [2]:

Իսկ դրանից առաջ համաձայնություն որոշում, այն է՝ ուժերը Բարձրավանդակում կենտրոնացնելու մասին ՀՅԴ ընդունել էր 1896-97թթ. «Ընդհանուր» ռայոնական ժողովում, բայց մի էական տարբերությամբ: Եթե «Ընդհանուր» ռայոնական ժողովի որոշմամբ պիտի պահպանվեին գավառում արդեն կազմակերպված հայդուկային խմբերը, ապա 2-րդ Ընդհանուր ժողովը մերժում է «ֆետայական ասպատակաձ գործունեությունը» եւ ընդունում «մարտական-զինամարզական խումբեր» կազմակերպելու ծրագիր[3]:

Առաջնորդվելով Ընդհանուր ժողովի որոշմաբ՝ Հ.Յ. Դաշնակցությունը իր ուշադրությունը գլխավորապես բեւեռում է ուժերը Բարձրավանդակում (Սասուն) կենտրոնացնելու ուղղությամբ: Սասունը պիտի դառնար ազատագրական պայքարի միջնաբերդն ու որոշակակիրը: Այդ պատճառով Արեւելյան Հայաստանը, իսկ ավելի լայն առումով կովկասահայությունը, դուրս էր մնացել նրա ուշադրությունից ու տեսադաշտից: Սակայն, իրավիճակը կտրուկ կերպով փոխվում է, երբ Նիկոլայ 2-րդը ստորագրում է հայ եկեղեցու կալվածքների ու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքը:

Հայ եկեղեցու ունեցվածքը միաժամանակ համազգային սեփականություն էր, հետեւաբար ցարի կողմից հռչակած հունիսի 12-ի օրենքը ուղղված էր ոչ միայն եկեղեցու, այլեւ հայ ժողովրդի դեմ:

Հայ եկեղեցու կալվածքների վերադարձնելու կապակցությամբ Նիկոլայ 2-րդին հասցեագրած զեկուցագրում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը, կայսրին ներկայացնելով եկեղեցու եւ հոգեւորականության հետ հայ ժողովրդի ունեցած սերտ կապը, ընդգծում է. «...եկեղեցիական գոյքերի գրաւումը վիրաւորել է ժողովրդի բարոյական զգացումը եւ նրան համարեա գլխովին առանց դասակարգի ու կացութեան խտրութեան, նետել յեղափոխական շարժման մէջ»[4]:

1903 թ. հունիսի 12-ի օրենքի պատճառով բռնկված համաժողովրդական ընդվզումը մատնանշում էր, որ կովկասահայությունը լի էր վճռականությամբ հանդես գալու, պայքարելու ի պաշտպանություն եկեղեցու ունեցվածքի ու իրավունքների: Անհրաժեշտ էր կազմակերպել ու առաջնորդել համազգային պայքարը:

Հ. Յ.. Դաշնակցությունը, որպես համազգային շահերով առաջնորդվող կուսակցություն, բնականաբար պիտի հանդես գար ի պաշտպանություն հայ եկեղեցու իրավունքների եւ ունեցվածքի, քեպետ համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, նրա գործունեության հիմնական առանցքը Բարձրավանդակն էր:

Այսուհանդերձ, Հ.Յ. Դաշնակցությունը մինչեւ Հունիսի 12-ի օրենքի ընդունումը, արդեն հասցրել էր իր կազմակերպական կառույցները հիմնել Կովկասի բազմաթիվ բնակավայրերում:

Աբրահամ Գյուլխանդանյանի պնդմամբ «...Դաշնակցություն կուսակցութիւնը Անդրկովկասում օրէցօր տարածւում եւ դառնում մի զօրեղ կազմակերպութիւն»[5]:

Վերոհիշյալ զեկուցագրում բնութագրելով Հ. Յ.. Դաշնակցությանը՝ կոմս Վորոնցով-Դաշկովը նշում է. «...Վարչութեան տեղեկութիւնների համաձայն չկար հայկական բնակչութիւն ունեցող մի վայր, ուր չգործէր «Դաշնակցութեան» տեղական կոմիտէն...»[6]:

Ա. Գյուլխանդանյանի գնահատմամբ Կովկասում Դաշնակցության հզորացումը կարող էր բացասական ազդեցություն ունենալ եւ ծառայել ի վնաս իր գործունեությանը, եթե կուսակցությունը չկարողանար կուտակած ուժերի գործադրության համար ստեղծել համապատասխան դաշտ: Իսկ Դաշնակցության համար ո՞րն էր լինելու համապատասխան դաշտը, որտե՞ղ պիտի կուսակցությունը գործադրեր իր կուտակած ուժերը: Միաժամանակ, ըստ Ա. Գյուլխանդանյանի, Դաշնակցությունը համոզված էր, որ ցարական կառավարությունը եկեղեցական կալվածների բռնագրավմամբ չէր սահմանափակվելու եւ շարունակելու էր իր հայահալած քաղաքականությունը: Իսկ այդ նույն ժամանակահատվածում հեղափոխական շարժումները ռուսական կայսրությունում ավելի ու ավելի ծավալվելով ու խորանալով, թափանցել էին նաեւ Կովկաս, որտեղ ամենակարեւոր հնոցներից մեկը Բաքուն էր:

«Բնական էր,- գտնում է Ա. Գյուլխանդանյանը,-որ այդ շարժումները պիտի գրաւէին հայ երիտասարդ եւ թարմ տարրերի ուշքն ու միտքը: Դաշնակցութիւնը չէր կարող չկշռել այդ հանգամանքը եւ պէտք չզգալ զգուշութեան բացի Տաճկահայաստանի գործերից նաեւ կովկասահայութեան վիճակով, ինչպէս եւ վճռականօրէն մասնակցելու Կովկասի եւ Ռուսաստանի յեղափոխական շարժումներին»[7]:

Հ.Յ.Դաշնակցության Կովկասյան գործունեության եւ մասնավորապես այդ շրջանի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է պարունակում ցարական ոստիկանական բաժնի հատուկ բաժանմունքի վարիչ գնդապետ Կլիմովիչի եւ 4-րդ բաժնի վարիչ՝ փոխգնդապետ Բեկլեմիշեւի ստորագրությամբ վավերացված ցարական լրտեսական սպասարկության «Օխրանա»-ի տեղեկագիրը[8]:

Համաձայն այդ տեղեկագրի՝ «Հայ յեղափոխական Դաշնակցութիւն» խորագիրը կրող ենթավերնագրում ՀՅԴ գործունեությանը տրված

գնահատականի՝ «Այդ շրջանը (1903-1905 թուեր) Դաշնակցութեան Կովկասի գործունեութեան, այսպէս կոչուած «ինքնապաշտպանութեան շրջան», սկսւում է մի շարք զանգուածային ցոյցերով, զինեալ ապստամբութիւններով, կառաւարական հաստատութիւնները բոյկոտի ենթարկելով եւ ընդհանրապէս խռովարար գործերի շարքով...»[9]:

Ալեքսանդր Խատիսյանի, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը, հավաստմամբ, ցարական կառավարությունը «Առաջին անգամ հայերու դէմ պայքարեցաւ իշխան Գոլիցինի ատեն, յատուկ օրէնքներով, կալւածներու գրաւումով: Պայքարի երկրորդ ուղին հայ-թաթարական ընդհարումներն էին, իսկ երրորդ ուղին դատական հետապնդումներն եղան, այսպէս ասած Հ.Յ. Դաշնակցութեան դատը[10]:

Ալ. Խատիսյանի տեսակետը ճիշտ է, բայց կարելի է ասել՝ փոքրինչ թերի: Ցարիզմի դրսեւորած ոչ հայանպաստ քաղաքականությունը դրսեւորվել էր ավելի վաղ:

Պատմական այն ժամանակահատվածում, երբ սուլթան Աբդուլ Համիդը իրականացնում էր արեւմտահայությանը ֆիզիկապես բնաջնջելու քաղաքականություն, ցարական կառավարությունը Հայաստանի արեւելյան հատվածում (Արեւելահայաստան) կյանքի կոչեց հոգեւոր ու բարոյական բռնությունների հակահայ ծրագիրը: Հայոց դպրոցների փակումը ցարական բյուրոկրատիայի հայատյաց քաղաքականության առաջին դրսեւորումն էր: Փոքր ժամանակ անց հետեւեցին հայ բարեգործական ընկերությունների հիմնած դպրոցների, գրադարանների, ընթերցարանների, հրատարակչական ընկերությունների, թերթերի ու պարբերականների արգելման վերաբերյալ որոշումները:

Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «Ցարական ծանր ռեժիմը հաւասարապէս կը ճնշէր բոլոր քաղաքացիները, սակայն ան աւելի ծանր էր հայերու համար: Իշխան Գոլիցինը կը կարծէր, որ պէտք է հայերը աւելի ուժեղ ճնշել, որովհետեւ անոնք աւելի կազմակերպուած եւ աւելի ուժեղ կերեւային իր աչքին: Յատուկ օրենքներ հրատարակուեցան հայերու համար: Փակուեցան հայկական դպրոցները, հայ բարեգործական հիմնարկութիւնները...»[11]:

1898թ. հունվարին, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Թիֆլիսում գտնվելիս այցելում է Կովկասի փոխարքա Գալիցինին, փոխարքան որպես փաստարկ հայկական դպրոցների փակման, ասել է. «Կովկասի Հայոց դպրոցները յեղափոխական պրոպականդի բոյներ են»[12]:

Հանրահայտ իրողություն է, որ այդ ժամանակահատվածում հայոց դպրոցները գործում էին գլխավորապես հայ եկեղեցու հովանու ներքո: Իսկ եկեղեցին ի զորու չէր ընդվզել ընդդեմ ցարական իշխանությունների եւ, իհարկե, անզոր էր միայնակ որեւէ ծանրակշիռ ու վճռական քայլեր ձեռնարկել՝ պաշտպանելու կրթական ու մշակութային օջախների գոյությունը:

Համանման իրավիճակում իրենց ծանրակշիռ խոսքը պիտի ասեին հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները:

Արմենական կուսակցության մասին խոսք լինել չի կարող: Այդ կուսակցությունը Կովկասում գրեթե չի գործել, իսկ Վանի 1896 թ. ողբերգական դեպքերից հետո, երբ թուրք իշխանությունների դրդմամբ քրդական Մազրիկ ցեղը ուխտադրժորեն կոտորեց Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ դեպի Պարսկաստան ուղեւորվող հարյուրավոր վանեցիների, արմենականները շատ մեծ կորուստ կրեցին եւ գրեթե դադարեցին գործելուց:

Կովկասում հաստատվել ու գործում էին Ս. Դ. Հնչակյան եւ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունները: Որեւէ գաղտնիք չէ, որ այդ կուսակցություններից առավել հզորն ու ազդեցիկը Հ.Յ.Դաշնակցությունն էր, որն արդեն հասցրել էր իր կազմակերպական ապակենտրոն կառույցները հիմնել նաեւ Կովկասի բազմաթիվ քաղաքներում եւ գյուղական բնակավայրերում:

Թեպետ Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը գլխավորապես բեւեռված էր Արեւմտյան Հայաստանի վրա, բայց դա բոլորովին չի նշանակում, որ կուսակցության ուշադրությունից դուրս էին կովկասահայությունը եւ նրա կյանքում կատարվող կենսական նշանակություն ունեցող իրադարձությունները:

Ըստ «Դաշնակցութեան գործունէութենէն» վավերագրի, որը որոշ կրճատումներով տպագրվել է «Դրօշակ»-ում (1909, թիւ 9, էջ 555), ՀՅԴ Արեւելյան բյուրոն անդրադառնալով Հայոց դպրոցների նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության գնահատմանն ու այդ քաղաքականության նկատմամբ ՀՅԴ դրսեւորած դիրքորոշմանը, նշում է. «...մեր կուսակցութիւնը անտարբեր չէր կրնար մնալ Ռուսաստանի մէջ բռնի ռուսացումի քաղաքականութեան հանդէպ»[13]:

Որպես հակազդեցություն դպրոցների եւ կրթական հաստատությունների փակման՝ Հ.Յ.Դաշնակցությունը Կովկասի տարբեր բնակավայրերում հաստատված կուսակցական կառույցների միջոցով իր գործունեության ողջ ընթացքում ընդգրկում է կովկասահայության կրթության ու դաստիարակութ-

յան գործը: Հ.Յ.Դաշնակցության նախաձեռնությամբ քաղաքներում եւ գյուղական բնակավայրերում հիմնվում են գաղտնի դպրոցներ, գրադարաններ[14]:

Այս հարցում ՀՅԴ եւ հայ եկեղեցին գործել են միասնական ու փոխհամաձայնեցված:

«Օխրանա»-ի տեղեկագրի հեղինակների բնութագրմամբ Դաշնակցությունը կովկասահայության դպրոցների ու մշակութային հաստատությունների գործունեությունը հովանավորել է գուտ կուսակցական նպատակներով:

«Իր ազդեցութիւնը ուժեղացնելու համար, «Դաշնակցութիւն»-ը,- նշում է «Օխրանա»-ի տեղեկագիրը,- իր ձեռքն առաւ ժողովրդական կրթութեան գործը եւ այդ նպատակով քաղաքներում եւ գաւառներում հիմնեց գաղտնի դպրոցներ, ուր ուսուցչութիւն էին անում հայոց լեզուով, որի ծախքերը պիտի հոգար համայնքը»[15]:

Հ.Յ.Դաշնակցության գործունեությունում դպրոցների վրա առանձնահատուկ ուշադրություն կենտրոնացնելն ու ուսուցչություն անելն արդեն ընդունված ու փորձված գործելակերպ էր:

Տակավին իր սկզբնավորման առաջին իսկ տարիներին Հ.Յ. Դաշնակցության բազմաթիվ գործիչներ, իբրեւ ուսուցիչ, մուտք էին գործում դպրոցները եւ, մանկավարժական աշխատանքի հետ մեկտեղ, մեծ գործունեություն էին ծավալում կուսակցական կառույցներ հիմնելու, ազատագրական պայքարին զինվորագրվող մարտիկներ կրթելու նպատակով:

Հեղափոխական գործունեություն ծավալելու համար ուսուցչությունը ընդունված, հուսալի եւ լավագույն միջոցներից մեկն էր: Ուսուցիչները, որպես ուսյալ եւ զարգացած մարդիկ, հարգալից համարում ու կշիռ ունեին ժողովրդի մեջ: Բացի դրանից, ուսուցչությունը լավ հնարավորություն էր ընձեռում սերտորեն առնչվելու բնակչության տարբեր խավերին եւ նրանց հաղորդակից դարձնելու իրենց ծրագրերին: Այսինքն՝ ուսուցչությունը լավ հնարավորություն էր տալիս գործիչներին ժողովրդին հաղորդակից դարձնելու ազատագրական պայքարի գաղափարներին:

Պիտի ընդունել , որ այս հարցում ինչպիսին էլ լինի Դաշնակցությանը տված ցարական հատուկ ծառայությունների բնութագիրն ու գնահատականը, այնուամենայնիվ, գաղտնի պայմաններում դպրոցների գործունեության խթանումը, անկասկած, ազգապահպանմանը նպատակաուղղված հայրենանվեր ու կարեւորագույն գործ է, որը դժվար է գերագնահատել:

Ավելին, 1902թ.-ից սկսած Հ.Յ.Դաշնակցությունը կովկասահայության ներքին կյանքում տեղի ունեցող իրադարձությունները կարգավորելու ու վերահսկողություն սահմանելու նպատակով, գավառներում հաստատում է դատարաններ, եւ «...տարիներով գերագոյն իրաւարարի պաշտօնը կատարեց, գիտացիներուն մէջ ծագած ամէն տեսակ վէճեր ինք կը դատեր եւ կը վճռէր, դատաւորները յաճախ ընտրուած էին համայքներէն, կուսակցութեան իսկոյթեան տակ կը գործէին»[16]:

Կովկասահայության մեջ Հ.Յ.Դաշնակցության ունեցած մեծ ազդեցության եւ վերոհիշյալ դերակատարության իրողությունը հաստատում են նաեւ ցարիզմի լրտեսական սպասարկության «Օխրանա»-ի տեղեկագրերը:

«Սկսելով 1902-ից,-նշում է տեղեկագիրը,- Դաշնակցութեան գործունէութիւնը բացահայտ կերպով յեղափոխականանում է: Մի շարք գաւառներում «դաշնակ»-ները հետեւողականորէն իւրացնում են կառաւարական գործունեութեան տարբեր տեսակներ: Օրինակ՝ կուսակցութիւնը հիմնել է իր դատարանը եւ սեփականացրել է գերագոյն դատաւորի դերը, քննելով գիւղացիների միջեւ ծագած բոլոր վեճերը...»[17]:

Կարելի է ասել, որ Հ.Դ. Դաշնակցությունը իր կառույցների միջոցով քայլեր էր ձեռնարկում՝ Կովկասում իրականացնելու պետությանը բնորոշ գործառույթներ, որը, կարելի է ասել, շատ դեպքերում, հատկապես 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, նրան հաջողվել է :

Այսուհանդերձ, կարելի է փաստել, որ մինչեւ ցարական Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդի կողմից 1903թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի ընդունումը հայ ազգային կուսակցությունների գործողություններում, համաժողովների ու ղեկավար մարմինների որոշումներում դժվար է գտնել որեւէ արարք, փաստաթուղթ, որոնք պարունակեին խիստ ընդգծված հակառուսական ուղղվածություն ու բովանդակություն:

Հ. Տասնապետյանը, անդրադառնալով ցարիզմի եւ ռուս հեղափոխական կազմակերպությունների (սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ-հեղափոխական) նկատմամբ Հ.Յ.Դաշնակցության դրսեւորած վերաբերմունքին, նշում է, որ 1903թ. տեղի ունեցած ՀՅԴ ռայոնական ժողովը թեեւ Ռուսաստանի բանվորական շարժումը գնահատում է «կենսունակ եւ խոշոր երեւոյթ», բայց միաժամանակ գտնում է, որ «Դաշնակցութիւնը չի կրնար ակտիւ մասնակցութիւն ունենալ, համակրելով հանդերձ, քանի ազգային դատը աւելի տագնապալի է եւ մեր ուժերը՝ երկու գործի համար անբաւարար»[18]:

Ա. Գյուլխանդանյանը, որն այդ օրերին Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամն էր, անդրադառնալով ծրագրային ու տեսական զանազան խնդիրների շուրջը Հ.Յ.Դաշնակցության եւ ռուս սոցիալ-դեմոկրատների միջեւ ծավալված խնդիրների լուսաբանմանը՝ նշում է. «Մենք (նկատի ունի ՀՅԴ-Հ.Գ.) պաշտպանում էինք այն տեսակէտը, թէ Դաշնակցութիւնը պէտք է դեկաւարէ հայ աշխատաւորութիւնը եւ ոչ թէ նրա պատմութեան եւ կեանքին անծանոթ Ռուսական Սոցիալ Դեմոկրատիան»[19]:

Քանի որ ՀՅԴ-ն իր կազմակերպական կառույցներն էր հիմնել Կովկասի բազմաթիվ բնակավայրերում, եւ ժողովրդի մեջ արդեն ձեռք էր բերել նկատելի կշիռ ու հեղինակություն, բնականաբար նրա համար կարեւորագույն եւ առաջնահերթ նշանակություն էր ձեռք բերում այն հանգամանքը, որ անհրաժեշտության դեպքում հայությանը պիտի ղեկավարեր ու առաջնորդեր հենց ինքը՝ Հ.Յ. Դաշնակցությունը, այլ ոչ թե քաղաքական մեկ այլ կազմակերպություն:

Այն պահից, երբ Նիկոլայ 2-րդը ստորագրում է հայ եկեղեցական կալվածքներն ու գույքը հօգուտ ցարական կառավարության բռնագրավելու մասին 1903թ. հունիսի 12-ին հակահայ հանրահայտ հրովարտակը, Հ.Յ. Դաշնակցության համար կովկասահայության ղեկավարելն ու առաջնորդելը ձեռք է բերում, ինչպես արդեն նշվել է, ռազմավարական նշանակություն:

Ի՞նչ հանգամանքներով էր պայմանավորված ցարիզմի քաղաքականության հակահայ դիրքորոշումը:

1. Մինչեւ հունիսի 12-ի օրենքի ընդունումը ցարական իշխանություններն Արեւելահայաստանում հետեւողականորեն, բայց նուրբ վարպետությամբ կիրառելով հայատյաց քաղաքականություն, միաժամանակ աշխատում էին հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների ուշադրությունը բեւեռել գլխավորապես Արեւմտահայաստանի վրա՝ ստեղծելով այն պատրանքը, թե իբր հայությունը ճնշվում է միայն թուրքական կայսրությունում, եւ այդ խաբկանքը հաջողությամբ իրականացվեց մինչեւ 1903թ. հանրահայտ օրենքի ընդունումը: Այդ ամենին զուգահեռ բացասաբար արձագանքելով Արեւմտահայաստանի ազատագրական պայքարին՝ ցարիզմը ամեն կերպ խոչընդոտում էր հայ գիճատար ու մարտական խմբերի, հեղափոխական գործիչների մուտքը Կովկասից Երկիր:

Անդրադառնալով հայության նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականությանը՝ Ալ. Խատիսյանը տալիս է հետեւյալ ուշագրավ

բնորոշումը. «Ռուս կառավարութիւնը Տաճկաստանի հետ վարած պատերազմներու ընթացքին (1877, 1914-17), կը գրգռեր հայերու բշնամութիւնը դէպի թուրքերը, իսկ խաղաղութեան օրերուն կը հալածէր հայերու բրքատեաց քաղաքականութիւնը: Ու կը ստացուէր բարդ կացութիւն մը՝ բարեկամի եւ թշնամու: Մէկ օր բարեկամ, միւս օրը՝ թշնամի»[20]:

Արեւմտահայաստանի ազատագրումը ցարիզմը դիտում էր արեւելահայության ինքնորոշման իրավունքի իրագործման ձգտումների ամենահզոր ազդակներից մեկը եւ այդ պատճառով գործադրում էր ընծեռված հնարավորությունները՝ խոչընդոտելու հայության ազատագրական պայքարը, ինչպես նաեւ Հայաստանի երկու՝ Արեւմտյան եւ Արեւելյան հատվածների հավանական միասնությանը:

Ըստ Հայկ Սճեմյանի՝ Կովկասի փոխարքա Գոլիցինի գաղտնի զեկուցագրերը եւ բանավոր հավաստիացումները հիմք ընդունելով՝ նախարարների խորհուրդը հանգել էր այն եզրակացության, որ «...իսկապէս Հայ եկեղեցին՝ կեդրոն ունենալով Էջմիածինն ու Հայոց Հայրապետութիւնը, կը հանդիսանայ բարոյական եւ նիւթական այն միակ եւ գերագոյն յենարանը, որ զարկ կուտայ Հայ յեղափոխական շարժումներուն...մէկ խօսքով կը ջանայ պատրաստել Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ծրագիրը»[21]:

2. Ցարիզմի հակահայ քաղաքականությունը ուղղված էր հայ ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող կուսակցությունների եւ հատկապես ընկերավարական գաղափարախոսություն դավանող Հ.Յ. Դաշնակցության դեմ, որն այդ ժամանակ, որպես քաղաքական կազմակերպություն, շնորհիվ իր կազմակերպական կառույցների որոշակի կշիռ եւ հեղինակություն ուներ ոչ միայն Կովկասում, այլեւ կայսրության մի շարք շրջաններում:

«...եթէ նկատի ունենանք,-գրում է Ալ. Խատիսեանը,- եւ այն պարագան, որ հայ յեղափոխական կազմակերպութիւններու գործունէութիւնը կը տարածուէր նաեւ ռուսական սահմաններուն մէջ, պարզ կը լինի, թէ ի՞նչ առիթներէ օգտուելով՝ ռուսական կառաւարութիւնը կը դիմէր պայքարի երրորդ միջոցին, այն է՝ ընդհանուր դատական հալածանքը Հ.Յ.Դաշնակցութեան դէմ»[22]:

3. Բռնագրավելով եկեղեցու հարստությունը՝ ցարական իշխանությունները թուլացնում էին հայոց եկեղեցու կշիռն ու հեղինակությունը: Պետության բացակայության պայմաններում հայոց եկեղեցին հայությանը միավորող, հայապահպանության կարեւորագույն կառույցն էր:

Հայութեան նկատմամբ դրսեւորած քաղաքականութիւնը նախեւառաջ ուղղված էր հայկական դպրոցների եւ մշակութային օջախների դեմ: Գաղտնիք չէր, որ հայկական դպրոցներն ու մշակութային օջախները գոյատեւում էին հիմնականում եկեղեցական կալվածքներից ստացված եկամուտների հաշվին: Հունիսի 12-ի օրենքը փաստորեն զրկում էր եկեղեցուն եւ բնականաբար, կրթական ու մշակութային հաստատութիւններին նիւթական միջոցներից, իսկ դա միանշանակորեն հավասարազոր էր հայկական դպրոցների եւ մշակութային հաստատութիւնների մեկընդմիշտ, վերջնական փակմանը:

Հայ ժողովրդին ուղղված «Թռուցիկ թերթ» խորագիրը կրող ուղերձում, Հ.Յ.Դաշնակցութիւնն անդրադառնալով ցարիզմի կողմից հունիսի 12-ի օրենքի ընդունման իրողութեանը, միանգամայն իրավացիորեն նշում է. «Բռնակալութիւնը ուզում է մութ պահել իր հպատակներին: Խեղդել նրանց տգիտութեան խաւարում, որպեսզի աւելի հնազանդ լինին նրանք:

Չէ՞ որ կրթութիւնը եւ լուսաւորութիւնը ծնեցնում են ազատութեան ծարաւ: Ցարն ու Գոլիցինը այդ նպատակով փակեցին մեր դպրոցները: Նրանք մեր մայրենի լեզուի տեղ ջանացին կերակրել օտարի կաթով-ռուս լեզուվ...»[23]:

Մ. Վարանդեանի բնորոշմամբ «Այդ քաղաքականութիւնը մէկ բառով կը ծեւակերպուեր-ռուսացում...»[24]:

4. Կայսրութեան մի շարք քաղաքներում տեղի ունեցող գործադուլներն ու քաղաքական կուսակցութիւնների գործողութիւնները մատնանշում էին, որ չէր բացառվում, որ Ռուսաստանում բռնկվեր հեղափոխական շարժում: Ցարական իշխանութիւնների քաղաքականութիւնը միտված էր խոչընդոտելու հեղափոխական պայքարի տրամադրութիւնների տարածմանը Կովկաս:

Ցարիզմը, հանուն իր քաղաքական շահերի, ձգտում էր լարվածութիւն, թշնամանք սերմանել կովկասյան ազգերի միջեւ ու նրանց հեռու պահել քաղաքական պայքարից եւ բացառել իր դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու վտանգից: Հետեւանքը երկու տարի անց հենց իշխանութիւնների թողտվութեամբ ու սադրանքով Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներն էին:

Այդ օրերին հայաբնակ տարբեր բնակավայրերից Մկրտիչ Խրիմյան Ա. կաթողիկոսի դիվանը ստանում էր բազմաթիվ հեռագրեր ու նամակներ, որոնց հեղինակները իրենց բողոքը, ցասումն ու առաջարկութ-

յուններն էին արտահայտում ի պաշտպանութիւն հարազատ եկեղեցու [25]:

Հայ եկեղեցու իրավունքների պաշտպանութեան բողոքի ձայն են բարձրացնում նաեւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքութիւնն ու պարսկահնդկական թեմի առաջնորդարանը:

Պահպանվել է Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի նամակը (9 սպտեմբերի 1903թ.) Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Զինովեւին: Նամակում նա պարզաբանում է հայ եկեղեցիների իրավունքների հանդեպ Ռուսաստանի ունեցած ավանդական քաղաքականութիւնը եւ ակնկալում կայսեր մոտ դեսպանի միջնորդութիւնն ու հովանավորութիւնը՝ ի պաշտպանութիւն հայ եկեղեցու իրավունքների [26]:

Մկրտիչ Ա. կաթողիկոսին 1903 թ. հոկտեմբերի 3-ին հասցեագրած նամակում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը կաթողիկոսին հայտնում է. «Մեր կայս. կառավարութիւնն ալ (նկատի ունի Թուրքիայի կառավարութիւնը-Հ.Գ.) շատ զգուշաւոր է Ռուսական կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ, եւ մեզ ալ նոյն զգուշաւորութիւնը կկրկնուի շարունակ, եւ մենք ալ պարտաւոր ենք հնարաւորութեան սահմանին մէջ շարժուիլ եւ աւելորդ միջադէպեր չստեղծել»[27]:

Մկրտիչ Ա. կաթողիկոսին հասցեագրած դիմումում (1903թ. հոկտեմբերի 20) պարսկա-հնդկական թեմի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոսը, առաջնորդարանի եւ բնակչութեան անունից արտահայտելով իրենց դիրքորոշումը հայ եկեղեցու դարավոր գործունեութեան եւ նրա իրավունքները պաշտպանելու վերաբերյալ, նշում է. «Վեհափառ Հոգեւոր Տէր... աղերսում ենք Ձեզ, որպէս Հայոց եկեղեցւոյ Ընդհանրական ծայրագոյն Պետի՝ դիմել ուր հարկն է, դիմել բազաւոր կայսեր բարեգթութեան, դիմել ռուս մարդասէր գործիչների միջամտութեան՝ վերահաստատելու Հայ ազգի եկեղեցիական-կալուածական իրաւունքները»[28]:

Միաժամանակ դիմելով Ռուսաստանի արտաքին գործոց նախարարին՝ Սահակ արքեպիսկոպոսը գրում է. «Պարսկաստանի, Հնդկաստանի, Բրմանի եւ Ջաւաեան կղզիների հայ հասարակութիւնները դիմում են ինձ՝ որպէս Թեմական Առաջնորդի՝ եւ խնդրում են դիմել ամենախոնարհ խնդրանքով Նորին Մեծութեան Կայսեր Ռուսիոյ՝ վերահաստատելու Հայոց բազմաչարչար անկախ Եկեղեցւոյ բազմադարեան իրաւունքները՝ ամբողջ Հայ ազգին պատկանող եկեղեցիական կալուածքների վերաբերմամբ...»[29]:

Ինչպիսի՞ն էր Մկրտիչ Ա. կաթողիկոս Խրիմյանի վերաբերմունքը ցարական կառավարության նկատմամբ:

«Կաթողիկոս Ամենայն Հայոց Հայրիկը,- գրում է Հայկ Ածեմյանը,- երբ լսեց ազգային-եկեղեցիական կալուածներու գրաւման հրովարտակի գոյժը. պահ մը հոգեպէս խորտակուեցաւ եւ ծանր յուսահատութեան մատնուեցաւ»[30]:

Իրոք, ի՞նչ ազդու միջոցներ կարող էր ձեռնարկել 84-ամյա կաթողիկոսն ընդդեմ հզոր կայսրության: Կովկասի փոխարքա Գոլիցինը եւ նրա հաղորդած տեղեկություններով առաջնորդվող կայսր Նիկոլայ 2-րդը եւ ներքին գործոց նախարար Պլեվեն հավատացած էին, որ «...ժողովուրդն ու կաթողիկոսը հազիվ թէ հրապարակ գան»[31]:

Մկրտիչ Խրիմյան Ա. կաթողիկոսի դիրքորոշումն ու նրան հասցեագրած ուղերձները վկայում են, որ կաթողիկոսի, ինչպես նաեւ Կ. Պոլսի պատրիարքարանի եւ պարսկա-հնդկական առաջնորդարանի գործողություններում սկզբնական շրջանում չկար ցարական իշխանությունների դեմ ընդվզումի, առավել եւս զենքի դիմելու նպատակ ու տրամադրվածություն:

Ցարի հրովարտակը արագորեն կենսագործելու նպատակով Կովկասի փոխարքա Գոլիցինի կարգադրությամբ փոխարքայության զինվորական ու ոստիկանական ծառայությունները հայաբնակ բոլոր վայրերում արագորեն անցնում են գործի եւ կտրուկ կերպով պահանջում առանց դիմադրության հանձնել եկեղեցական կալվածքներն ու ունեցվածքը: Համաձայն իշխանությունների հրահանգի՝ «...եթէ հայերը կը դիմադրեին՝ զօրք բերել, դրամատուները հրաման ստացան արգելքի տակ առնել ազգապատկան գումարները, էջմիածինի Սիւնոդին կարգադրեցին յանձնել դրամներն ու հաշիւները...»[32]:

Ժամանակը ցույց տվեց, որ ցարական իշխանությունները սխալվում էին, կարծելով, որ «...ժողովուրդն ու կաթողիկոսը հազիվ թէ հրապարակ գան»:

Ցարիզմը հայ ժողովրդի նկատմամբ դրսեւորած քաղաքականությամբ հայության շրջանում հող նախապատրաստեց հակապետական տրամադրությունների: 20-րդ դարի սկզբներին ցարական լծի տակ հեծող ազգերի մեջ առաջիններից մեկը կովկասահայությունն էր, որն իր ազգային իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու վճռականությամբ ընդվզեց ընդդեմ հզոր կայսրության:

Հ.Յ.Դաշնակցության նշանավոր գործիչ Սարգիս Օհանջանյանը (Ֆարհադ), որն այդ ժամանակ ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեի անդամ էր, անդրադառնալով հունիսի 12-ի օրենքի հետեւանքով կովկասահայության գրեթե բոլոր շերտերում հակացարական տրամադրությունների արմատավորման իրողությանը՝ նշում է. «Անդրկովկասի հայութիւնը մի չտեսնուած ըմբոստութեամբ յուզուեց, ալեկոծուեց, ծառացաւ, բողոքեց ռուսական ցարիզմի ոտնձգութիւնների դէմ: Իր ազգային արժանապատուութիւնը եւ բռնութեամբ խլուած իր իրաւունքները կրծքով պաշտպանելու անխախտ որոշումով՝ նա մղուեց մի գերազանց անհաւասար ու վտանգաւոր մենամարտի մէջ...»[33]:

«Երբ հրատարակուեցաւ Յունիսի 12ի «օրէնքը»,-գրում է Մ. Վարանդյանը,-ասես ռումբ մըն էր, որ պայթեցավ Անդրկովկասի հայ գիտակից շրջաններում... Ամենքը կը գտնեին, որ ատեն է բողոքելու, որ լեցվեր է հայոց համբերութեան բաժակը: Կը հրատարակվեին կոչեր, կը հնչեին հեղափոխական կարգախոսներ, կը ցրվեին կարմրավառ թռուցիկներ՝ «զինված կռվի հորդորներով»[34]:

Կովկասահայությունը, ի պաշտպանություն իր ազգային արժանապատվության եւ հարազատ եկեղեցու իրավանքների, լի էր վճռակամությամբ պայքարի դրոշ պարզել անգամ ընդդեմ հզոր կայսրության: Անհրաժեշտ էր կազմակերպել ու առաջնորդել ժողովրդական շարժումը եւ պայքարել ու թույլ չտալ, որպեսզի իշխանությունները բռնագրավեին հայ եկեղեցու ունեցվածքը:

Միակ ուժերը, որոնք կոչված էին առաջնորդելու հայության պայքարը, հայ ազգային-քաղաքական կուսակցություններն էին: Այդ ժամանակ Հ.Յ.Դաշնակցությունը, շնորհիվ Կովկասում հաստատած իր կազմակերպական կառույցների, անհամեմատ ավելի ուժեղ էր ու հեղինակավոր, քան մյուս ազգային-քաղաքական կուսակցությունները: Բնական է, որ հայ եկեղեցու իրավունքների պաշտպանության նշանաբանով հզոր կայսրության դեմ ընդվզած ժողովրդին պիտի առաջնորդեր Հ. Յ. Դաշնակցությունը:

«Հ.Յ. Դաշնակցութիւնը,-վկայում է Ս. Օհանջանյանը,-որ հայկական ճգնաժամերի ժամանակ միշտ իր կոչման բարձրութեան վրայ եղաւ, հուժկու ձեռքով եւ պատուաւոր կերպով ղեկաւարեց ժողովրդական այդ մեծածաւալ ապստամբութիւնը»[35]:

Իրոք, հայկական բնակավայրերում եկեղեցիների ունեցվածքը բռնագրավող կայսերական ուժերի դեմ համազգային պայքար մղելու կոչով, անհրաժեշտության դեպքում նաեւ զենքով առաջինը հանդես է գալիս Հ.Յ. Դաշնակցությունը:

Անժխտելի է, որ ցարիզմի կողմից հայության նկատմամբ կիրառվող քաղաքականությունն ու հատկապես հունիսի 12-ի օրենքի հնչա-

կումը այն վճռորոշ գործոններն էին, որոնց հարկադրանքով Դաշնակցությունը իր գործունեությունում որդեգրեց երկրորդ, այն է՝ ցարական Ռուսաստանի դեմ պայքարի ճակատը, որը կարելի է բնութագրել որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի Կովկասյան ճակատ:

«Ինձի.-նշում է Մալխասը,- կը թուի թէ, եթէ ոչ 1903-էն, ապա ուրեմն 1905-էն վերջը, հայ յեղափոխութեան գործունեութիւնը նոր շրջանի մը մէջ մտաւ: Մինչ այդ, Դաշնակցութիւնը գերազանցորէն Տաճկահայաստանի ազատագրման նուիրուած կուսակցութիւն մը էր... Դաշնակցութիւնը որպէս յեղափոխական կուսակցութիւն, կովկասահայ կեանքը ղեկաւարելու ուղեգիծ մը չունէր մինչեւ ռուսական յեղափոխութիւնը. կամ եթէ դաշնակցորէն ուզենք արտահայտուիլ, մինչեւ մեր «Նախագիծը (նկատի ունի Դաշնակցության Խորհրդի կողմից 1904թ. ընդունած «Կովկասեան նախագիծը», որը հաստատվել է 1907թ. կայացած ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում-Հ.Գ.)»[36]:

Խրիմյան Հայրիկի գործունեությանը նվիրված աշխատությունում Է. Կոստանդյանը, արժեւորելով հայ եկեղեցու իրավունքների եւ ունեցվածքի պաշտպանության գործում հնչակյանների, սոցիալ-դեմոկրատների եւ Հ.Յ.Դաշնակցության գործունեությունը, նշում է. «Առանձնապես պետք է շեշտել ՀՅԴ-ի կատարած մեծ գործը: Այդ կուսակցությունը իր ձեռքը վերցրեց ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու գործը»[37]:

Խրիմյան Հայրիկի կենսագիրներից ՀՅԴ գործունեությունը ըստ արժանվույն է գնահատում նաեւ Հ. Ածեմյանը. «...Հ. Յ. Դաշնակցութիւնը թեւ ու թիկունք հանդիսացաւ Հայոց Հայրիկին, խրախուսանքի խօսքեր ուղղեցին, բողոքելու, դիմադրելու, յամառելու ոգի ներշնչեցին եւ ամէն կերպով վստահացուցին, որ ժողովուրդն ու յեղափոխական կուսակցությունները իր կողքին կանգնած են»[38]:

Հ.Յ.Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է, որ բացի վերոհիշյալից, ցարիզմի դեմ նրա մղած պայքարը պայմանավորված էր նաեւ այլ գործոններով:

Առաջնորդվելով իր որդեգրած ծրագրով (ընկերվարություն-սոցիալիզմ), Հ.Յ.Դաշնակցությունը օգտագործում է հունիսի 12-ի օրենքի ընձեռած պատեհ պատրվակն ու հնարավորությունը՝ Ռուսաստանի մյուս հեղափոխական կուսակցությունների համագործակցությամբ բացահայտ, հեղափոխական պաքարի դուրս գալու ընդդեմ ցարական իշխանությունների:

Ներկայացնելով Ռուսական կայսրության դեմ Հ.Յ. Դաշնակցության որդեգրած պայքարի դրդապատճառները՝ «Օխրանա»-ի վերոհիշյալ տեղեկագիրը նշում է. «1903 թուին. հայկական եկեղեցիական ստացուածքների գրաւումը կառաւարական վարչութեան կողմից, օգտագործուեց Դաշնակցութեան կողմից որպէս յարմար պահ, բացահայտ կերպով դուրս գալու ռուս կառաւարութեան դէմ եւ իր յեղափոխական գաղափարների քարոզչութիւնը վարելու Կովկասի հայերի մէջ...»:

Համաձայն «Օխրանա»-ի տեղեկագրի, հայ եկեղեցու իրավունքների ու հարստության պաշտպանության նշանաբանով ցարիզմի դեմ ծավալած պայքարն ու քարոզչությունը Դաշնակցությանը լայն հնարավորություն էր ընձեռում՝ առավելագույնս տարածվելու եւ ամրապնդվելու ժողովրդի մեջ եւ իր կազմակերպական կառույցները հիմնելու ոչ միայն Կովկասի հայաբնակ վայրերում, այլեւ Ռուսաստանի մի շարք քաղաքներում:

Ավելին, ընդունելով կուսակցության համաձայն գործունեության հետեւանքով «հայ գանգուածը խուժեց Դաշնակցութեան մէջ» կատարված փաստի իրողությունը, «Օխրանա»-ի տեղեկագիրը նշում է. «...եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ ստացաւ(նկատի ունի Դաշնակցութեանը-Հ.Գ.) բարենպաստ հող իր ազատագրական գաղափարների պրոպագանդի համար նաեւ ռուս կառաւարութեան դէմ: Ինքնօրէն Հայաստան ստեղծելու գաղափարը, նրա կազմի մէջ մտցնելով ընդհանրապէս բոլոր հայերին, միանգամից նշանակալից տարածում ունեցաւ Կովկասում: Ըստ վարչութեան ունեցած տեղեկութիւնների, հայ բնակչութեամբ որեւէ տեղ չկար որ չունենար «դաշնակցական» կոմիտէ»[39]:

Ժողովրդական շարժումը կազմակերպելու եւ առաջնորդելու համար Հ.Յ.Դաշնակցության նախաձեռնությամբ ստեղծվում է «Դաշնակցական անկախ կոմիտե» անունը կրող մարմին: Բացի «Դաշնակցական անկախ կոմիտե»-ից, ստեղծվում է նաեւ եւս մի մարմին, որ կոչվում էր «Հայկական ինքնապաշտպանության Կեդրոնական կոմիտե», որը Կովկասի հայաբնակ քաղաքներում ու գավառական կենտրոններում հիմնում է իր մասնաճյուղերը: Քանի որ ցարիզմի քաղաքականության դեմ մղվող պայքարը համազգային խնդիր էր, ուստի այդ կոմիտեին կարող էին անդամագրվել բոլոր ցանկացողները, անկախ կուսակցական պատկանելությունից: Թեեւ այդ կոմիտեները կազմավորվում էին ոչ կուսակցական հիմունքներով, այնուամենայնիվ, դրանց կազմում գերակշռել են Հ.Յ. Դաշնակցության անդամները:

«Գաղտնի Կոմիտէները,-գրում է Հ. Ամեմյանը,- կազմակերպեցին զինական, թռուցիկ եւ ահաբեկիչ խումբեր, տարածեցին թռուցիկներ եւ ամենուրեք յեղափոխական քարոզներու, բողոքի, ըմբոստութեան ու կռուի չեփորները հնչեցուցին»[40]:

«Դաշնակցության անկախ կոմիտե»-ի թռուցիկներից մեկը որպես պայքարի կոչ նշում է. «Չը հասա՞ւ արդեօք անվեհեր բողոքի ձայնը...

Թո՛ղ Ամենայն Հայոց հայրապետը հրաժարական տայ եւ խզէ ամէն յարաբերութիւն հայ եկեղեցու եւ ռուս կառավարութեան միջեւ:

Թո՛ղ հայոց բոլոր եկեղեցիները փակեն իրենց դռները, իբրեւ սուգի նշան:

Թո՛ղ ժողովուրդը կազմակերպւած ցոյցերով ու հանրագրերով հասցնէ բողոքի ձայնը կենտրոնական կառավարութեան...

Ցոյց տանք ուխտադրուժ բռնապետութեան, որ նա չէ կարող տետրաբար ու անպատիժ կերպով խաղալ մի ազգի ճակատագրի հետ:

Ցոյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգայ ստրուկներ չենք, որ մենք եւս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարում են մեր անկապտելի իրաւունքները»[41]:

Հ.Յ. Դաշնակցության կողմից «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե» հիմնելու, զինված պայքարի մարտավարություն որդեգրելու գործում նշանակալի է եղել հատկապես Ռոստոմի ծառայությունը:

«1902-ին ,-գրում է Ս. Վրացյանը,-Ռոստոմը վերադարձաւ Կովկաս, եւ երբ 1903ին, ցարական կառաւարութիւնը ձեռք դրեց հայ ազգային-եկեղեցական կալուածքներու վրայ, եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը ոտքի հանեց հայութիւնը ի պաշտպանութիւն ազգային իրաւունքների, Ռոստոմը դարձաւ այդ շարժման ոգին»[42]:

Ինչքան էլ ժողովուրդը տրամադրված լիներ պայքարելու, իսկ ՀՅԴ եւ մյուս ազգային-քաղաքական կազմակերպությունները պատրաստակամ՝ կազմակերպելու ու առաջնորդելու ցարական իշխանությունների դեմ ժողովրդի ծավալած պայքարը, այնուամենայնիվ, իր ծանրակշիռ ու վճռական խոսքը պիտի ասեր Խրիմյան Հայրիկը:

«Հայկական ինքնապաշտպանական կոմիտեի» կողմից Խրիմյան Հայրիկի հետ հանդիպելու նպատակով էջմիածին է մեկնում Ռոստոմը: Նա «Հայկական ինքնապաշտպանական կոմիտեի» անունից պիտի համոզեր կաթողիկոսին, որ «... հրատարակէ իր հանդիսաւոր մերժման կոնդակը՝ ի պատասխան ցարի ուկազին: Մեր ընկերը կը խոստանար Դաշնակցութեան կողմէ ամէն աջակցութիւն...»[43]:

Հ.Յ.Դաշնակցության կողմից կաթողիկոսին Ռոստոմի այցելության իրողությունը նշում է նաեւ Ս. Վրացյանը: Հանդիպման ժամանակ Ռոստոմը Խրիմյան Հայրիկին հայտնում է ցարի հրամանը մերժելու կուսակցության կամքը: Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Խրիմեան Հայրիկի համար, անշուշտ, մեծ նշանակութիւն ունեցաւ Դաշնակցութեան աջակցութիւնը ազգային իրաւունքների պաշտպանութեան գործում»[44]:

Խրիմյան Հայրիկը եւ հոգեւորականները, որոնք, համաձայն Մ. Վարանդյանի պնդման, «...չէին համարձակուեր իրենց խորունկ վրդովմունքը արտահայտել բարձրաձայն-այնքան զարհուրելի կը թւէր անոնց՝ ցարիզմի վրիժառու բռունցքը...», համաձայնվում է հրապարակել հունիսի 12-ի օրենքի մերժման կոնդակը[45]:

Կաթողիկոսի կոնդակի հրատարակմանը անմիջապես հետեւում է «Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտե»-ի հետեւյալ «Ազդ»-ը.

«Այս խորհրդաւոր րոպէին, երբ վեհափառ Հայրիկը կտրուկ կերպով մերժել է մեր եկեղեցական ազգային սեփականութիւն կազմող կալւածները ռուս կառավարութեան հանձնելը, երբ Սրբ. Սինոդի բոլոր անդամները, թեմակալ բոլոր առաջնորդները իբրեւ իրենց բողոքի արտահայտութիւն հրաժարւել են պաշտօններից, երբ ժողովուրդը ոտքի է կանգնել եւ բողոքում է այդ կարգադրութեան դեմ, յուրաքանչիւր հայ պարտավոր է միանալ այդ բողոքի հոսանքին... Ահա հենց այդ պատճառով բոլոր կոնսիստորիաներին, գործակալներին, քահանաներին, երեսփոխաններին, կալվածների կառավարիչներին սրանով նախազգուշացնում ենք, որ իրանք ոչ մի դեպքում չհանձնեն իրանց հսկողության տակ գտնւող կալվածները, ոչ մի քուղթ չստորագրեն, ոչ մի կալված կամ գումար ցույց չտան...

Հակառակ դեպքում այդպիսիքները իբրեւ ազգային դաւաճաններ եւ ստոր մարդիկ կը ստանան իրենց արժանի վարձատրութիւնները...»[46]:

Կարելի է ասել, որ «Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտե»-ի «Ազդ»-ը համարձակ պատասխան ու մարտահրաւեր էր ցարական քաղաքականությանը: «Ազդ»-ը ունեցավ վճռական նշանակություն: Մի շարք բնակավայրերում տեղի են ունենում ժողովրդական բողոքի ցույցեր եւ հուզումներ:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ ժողովրդական մեծածավալ ապստամբությունն առաջնորդելու գործում բացառիկ դեր էր վերապահված ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեին:

Նախ, ըստ նրա փաստարկման, Երեւանի նահանգում էին գտնվում հայության հոգեւոր կենտրոնը՝ Էջմիածինը, Հայոց կաթողիկոսը, Լուսավորչական սինոդն ու ամբողջ միաբանությունը: Բնական է, որ ցարական կառավարությունը նախեւառաջ հենց այնտեղ պիտի հասցներ ճակատագրական հարվածը:

2. Անհրաժեշտ էր պայքարելու, ցարի հրովարտակին չենթարկվելու տրամադրվածություն ու վճռականություն հաղորդել հոգեւոր առաջնորդներին:

«Այդ նպատակով,-գրում է Ս. Օհանջանյան,-Երեւանի Կ. Կոմիտեն մի հսկայական ցույց կազմակերպեց ու օգոստոսի 3-ին, կաթողիկոսական թեմակալ-առաջնորդ Պարգեւան եպիսկոպոսի հետ ճանապարհեց Էջմիածին, ոտքով»:

Ս. Օհանջանյանի պնդմամբ, դա ժողովրդական ըմբոստության եւ բողոքի առաջին հզոր ցույցն էր, որով ժողովուրդը Հայոց Հայրապետից պահանջում էր չհնազանդվել ցարի հռչակած հրովարտակին ու որեւէ պարագայում ցարական կառավարությանը չհանձնել եկեղեցու կալվածքները: Նրանց համար ավելի գերադասելի էր զիջել բռնությանը, քան կամովին կառավարությանը հանձնել եկեղեցու ունեցվածքը:

Թեպետ Ս. Օհանջանյանը պնդում է, որ Երեւանի կենտր. կոմիտեի նախաձեռնությամբ օգոստոսի 3-ին Երեւանում կազմակերպած ցույցը առաջինն էր, սակայն «Դրօշակ»-ի հավաստմամբ իշխանությունների վարած քաղաքականության դեմ ուղղված բողոքի ցույցերից առաջինը տեղի է ունեցել Ալեքսանդրապոլում:

Հուլիսի 28-ին կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Սեւան կատարած ճամփորդությունից վերադառնալիս՝ կանգ է առնում Ալեքսանդրապոլի Առաջնորդարանում: Քաղաքի բնակիչները, տեղեկանալով Առաջնորդարանում կաթողիկոսի գտնվելու մասին, հաջորդ օրը առավոտյան ժամը 10-ին մոտ 5.000 հոգի հավաքվում են Առաջնորդարանի դռանը, որպեսզի կաթողիկոսին հայտնեն իրենց բողոքը:

Կաթողիկոսը, համաձայն «Դրօշակ»-ի, ունկնդրելով հավաքվածներին, խոստանում է «...ոչ մի քուղթ չստորագրել: Ոչինչ չհանձնել եւ բողոքել կառավարչական կարգադրութեան դէմ: Ապա քիչ հետո՝ շրջապատուած իր շքախմբով՝ դուրս եկաւ առաջնորդարանից եւ դիմեց դեպի կայարան: Այդ րոպեին անտվոր իրարանցում ընկաւ ժողովրդի մէջ, բոլորը միաբերան գոչեցին. «Վեհափառ մի՛ հանձնիր, մերժի՛ր, մենք քեզ հետ ենք...»[47]:

Օգոստոսի 3-ին Երեւանում տեղի է ունենում բողոքի ցույց, որի մասին շում է Ս. Օհանջանյանը: Այդ օրը քաղաքի նորակառույց Ս. Լուսավորիչ եկեղեցում հոգեհանգիստ էր տեղի ունենում՝ ի հիշատակ Զմյուռնիայի առաջնորդ Մելիքսեթբեկ Մուրադյանի: Հոգեհանգստի արարողությանը ներկա է եղել Երեւանի հոգեւոր թեմի առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանը: Պատարագից հետո, երբ Սուքիաս արքեպիսկոպոսը փորձում է հեռանալ, ժողովուրդը կանգնեցնում է նրան եւ պահանջում՝ անմիջապես գնալ Էջմիածին ու կաթողիկոսին հայտնել եկեղեցու ունեցվածքը կառավարությանը չհանձնելու ժողովրդի պահանջը: Առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսը փորձում է հրաժարվել, բայց հարկադրված նստում է կառքը եւ ավելի քան 5000 ցուցարարների ուղեկցությամբ, չնայած ոստիկանական պրիստավի խնդրանքին, շարժվում է դեպի Էջմիածին:

Նահանգի ոստիկանապետը մեկ պահակախմբով եւ երկու վաշտ զինվորներով շտապում է դեպի Էջմիածին: Մինչեւ Էջմիածին հասնելը բազմությանը միանում են նորանոր մարդիկ: Էջմիածնի մերձակայքում ցուցարարների մուտքը քաղաք փորձում են խոչընդոտել զինվորներն ու ոստիկանները, որոնց միանում է Վաղարշապատից եկած զորքը:

Չնայած զինվորների ու ոստիկանության հարուցած արգելքներին, այնուամենայնիվ, «... հոսանքը շարժեց, ամբոխը կրակ կտրեց, սրերը շողշողեցին, զօրքը զալպով արձակեց հրացանները, բայց օդի մեջ բռնած քարերի կույտեր, շղթան պատռեց եւ հոսանքը առաջացաւ՝ տալով մի քանի վիրաւորած զինուորներ եւ ցուցարարներ»[48]:

Հինգ ժամ հետո բազմությունը մտնում է Վաղարշապատ, ապա ճեմարանի մուտքով լցվում վանքի բակը: Երեւանի հոգեւոր թեմի առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսի գլխավորությամբ տասը հոգուց բաղկացած պատգամավորությունը մտնում է Վեհարան: Նրանց պահանջը կաթողիկոսին ի սկզբանե հայտնի էր՝ չկատարել ցարի հրամանը:

«Ծերունի կաթողիկոսի դիմավորումը ազդու էր, մտքերը խաղաղացնող,-նշում է «Դրօշակ»-ը,-ժամը 7-ին ցուցարարները վերադառնում էին նոյն յաղթական կոչերով»[49]:

Այդ նույն օրերին եկեղեցու իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպված բողոքի ցույցերը առավել ուժգնությամբ շարունակվել են հայաբնակ բազմաթիվ վայրերում: Բողոքի ցույցերի կազմակերպման գործում ղեկավար մասնակցություն է ունեցել «Հայկական ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտե»-ն, հատկապես Ռոստոմը:

«Ռոստոմը,-գրում է Ս. Վրացյանը,-անընդհատ շրջում էր գաւառից գաւառ՝ տեղական ուժերի հետ կազմակերպելով եւ ղեկաւարելով հա-

մազգային դիմադրութիւնը՝ ընդդեմ ռուս բռնապետութեան ոտնձգութիւնների: Նա ամէն տեղ էր եւ բոլորի հետ, ոգեւորում ու պայքարի էր մղում ժողովրդական զանգուածները»[50]:

Ներկայացնելով այդ օրերին Անդրկովկասի բազմաթիվ հայաբնակ վայրերում տեղի ունեցող իրադարձությունների մանրամասները՝ «Դրօշակ»-ը նշում է. «Շարունակ նորանոր պատգամաւորներ եւ խնդրագրեր են թափվում Էջմիածին, միեւնոյն պահանջով-չյանձնել կամովին...

Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերը-գիւղերն ու քաղաքները-սաստիկ գրգռած են եւ կատաղի կերպով բողոքում են կատարուած աւազակութեան դէմ»[51]:

Մի շարք բնակավայրերում, օրինակ, Սուրմալու գավառում, Աշտարակում, Օշականում եւ այլուր, բախումներ են տեղի ունեցել փայտերով, քարերով զինված ժողովրդի եւ զինվորների ու ոստիկանական ուժերի միջեւ:

Շնորհիվ ժողովրդական զանգվածային բողոքի ցույցերի, ինչպես նաեւ «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե» գործունեության, կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, կարելի է ասել, մարտականորեն է տրամադրվում եւ իր դժգոհությունն է հայտնում կառավարությանը:

Ըստ «Դրոշակ»-ի՝ «Հայրիկը երկու կօնդակ է ուղղել Սինօդին, որով արգելում է կալւածները յանձնել: Մի կօնդակ էլ ուղղել է բոլոր կօնսիստօրիաներին, գործակալներին եւ երեսփոխաններին, որով արգելում է առանց իր գիտութեան յանձնել որեւէ կալւածք կամ եկեղեցական գոյք, դրամ եւ այլն[52]»:

Կովկասահայության ծավալած պայքարը, եւ իհարկե, կաթողիկոսի վճռական կեցվածքն ու մերժողական դիրքորոշումը իշխանությունների համար անսպասելի էին ու անցանկալի:

Ռուսաստանի ներքին գործերի մինիստր Պլեւեն 1903թ օգոստոսի 5-ին կաթողիկոսին է ուղարկում հետեւյալ գրությունը. «Տեղեկանալով, որ եկեղեցական կալւածների վերաբերմամբ յունիսի 12-ի բարձրագոյն հրամանի գործադրութիւնը հանդիպում է հապաղումների, խնդրում եմ Ձերդ Սրբութեանդ՝ հոգալ անյապաղ կարգադրութիւն անել այս մասին: Ամէն մի հետաձգում, իբրեւ անհնազանդութիւն թագավորական կամքին, առաջ կը բերի ծանր հետեւանքներ»[53]:

Հայության ծավալած պայքարն ու «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»-ի գործունեությունը կտրուկ փոխում

են իրավիճակը: Բնական է, որ Խրիմյան Հայրիկն այլեւս չէր կարող կատարել իշխանությունների ներկայացրած պահանջը: Նա մերժում է կատարել մինիստրի պահանջը եւ նրան ուղղված 1903թ. օգոստոսի 6-ի գրության մեջ, արտահայտելով ժողովրդի կամքը, գրում է. «... խնդրում եմ Ձերդ բարձր գերագանցութեան, ժամանակաւորապէս հետաձգել կառավարութեան վերոյիշեալ կարգադրութեան գործադրութիւնը եւ կարելիութիւն տալ ինձ ամենահպատակօրէն զեկուցանել Նորին Մեծութեան իմ բացատրութիւնները եւ այն հանգամանքները, որոնք ինձ թւում են անհրաժեշտ՝ խնդրի կանոնաւոր լուծման համար...»[54]:

Պատասխան չստանալով մինիստրից՝ Խրիմյան Հայրիկը դիմում է Նիկոլայ 2-րդին եւ խնդրում նրանից «...թոյլատրել ինձ անձամբ Ձեր Մեծության ոտաց արկանել ամբողջ հայ հոգեւոր հոտի աղերսը եւ ներկայացնել իմ կարեւոր բացատրութիւններն ու նկատառումները՝ մինիստրական կոմիտէի որոշումը կանգնեցնելու մասին, որոնց թելադրում է իմ պարտականութեան զգացումը Ձերդ մեծութեան եւ ինձ հանձնուած հոտի առջեւ[55]:

Այս անգամ կաթողիկոսի դիմումին պատասխանում է ներքին գործերի մինիստր Պլեւեն եւ 1903թ. օգոստոսի 14-ի գրությամբ կաթողիկոսին տեղեկացնում, որ «Թագաւոր-կայսրը բարեհաճեց բարձրագոյն հրամայել՝ մերժել Ձեր խնդիրքը՝ մինիստրական կոմիտէի բարձրագոյն հաստատած յունիսի 12-ի որոշման գործադրութիւնը հետաձգելու մասին»[56]:

Ի տարբերություն օգոստոսի 14-ի գրության, որը սպառնալիք չէր պարունակում, ընդամենը մեկ օր առաջ՝ օգոստոսի 13-ի գրությամբ ներքին գործոց մինիստր Պլեւեն կայսեր անունից կաթողիկոսին հաղորդում է. «Նորին Մեծութիւնը բարեհաճեց իր կայսերական ուշադրութիւնը դարձնել այն բանի վրա, որ ներկայ դէպքը վերջին ժամանակներում առաջին շեղումն չէ հայ եկեղեցու գերագոյն ներկայացուցիչների կողմից առաջւա ամենահնազանդ ընթացքից եւ այդ պատճառով հրամայեց ինձ՝ եթէ հայ հոգեւորականութիւնը շարունակի իր անհնազանդութիւնը պետական իշխանութեան նկատմամբ, ձեռնարկեմ այն հարցի քննության՝ թե որքան է շարունակում ռուս միապետների հայ եկեղեցում պարգեւած վարչական կազմը Ռուսաստանում՝ համապատասխանել պետական շահերին»[57]:

Սակայն կաթողիկոսն արդեն անդրվելի էր: Ժողովրդի միասնական պայքարը եւ հայաբնակ բազմաթիվ բնակավայրերում Հ.Յ.Դաշնակցության առաջնորդությամբ գործող «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»-ի կազմակերպած բողոքի ցույցերն

ու ոստիկանական ուժերի հետ տեղի ունեցած բախումները իրենց կնիքն էին դրել ծերունազարդ կաթողիկոսի դիրքորոշման եւ տրամադրվածության վրա:

«...84-ամեայ Կաթողիկոսը, գրում է Մ. Վարանդյանը,-երիտասարդացած, հին հերոսական օրերը յիշելով, տիտանի պէս ծառացաւ ամէհի բռնապետութեան դէմ ու տուաւ իր խիզախ պատասխանը-«Չեմ կարող»...Չքացաւ Ամենայն Հայոց խոնարհ, հնազանդ Հայրապետը եւ բեմ նետեցաւ Ամենայն հայոց Հայրիկը...»[58]:

Խրիմյան Հայրիկի վճռականությունը ոչ միայն ավելի է ամրապնդում ժողովրդի մարտական տրամադրվածությունը, այլեւ ոգեշնչում է նաեւ հոգեւորականներին, որոնցից շատերը սկսում են մասնակցել «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»-ի կազմակերպած բողոքի ցույցերին:

Մկրտիչ Ա. կաթողիկոսին հասցեագրած նոյեմբերի 5-ի նամակում Կ. Պոլսի պատրիարք արքեպիսկոպոս Օրմանյանը իր երախտագիտությունն ու խրախուսանքն է հայտնում կաթողիկոսին՝ ռուսական կառավարության որոշման դեմ դրսեւորած դիրքորոշման կապակցությամբ[59]:

Միաժամանակ, կաթողիկոսի միջոցով պատրիարք Օրմանյանը եպիսկոպոսների անունից դիմում է հղում Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդին [60]:

Ճիշտ չէ կարծել, որ ՀՅԴ եւ նրա նախաձեռնությամբ ստեղծված Հայկական ինքնապաշտպանության կենտր. կոմիտեն ի սկզբանե որդեգրել էին զինված պայքարի մարտավարություն: ՀՅԴ եւ Հայկական ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի թելադրանքով բողոքի ցույցերը բացառապես պիտի ընթանային խաղաղ պայմաններում, առանց բախումների ու զենքի գործածության: Սակայն հայկական բնակավայրերում եկեղեցիների ունեցվածքի բռնագրավման ժամանակ տեղի ունեցած անցանկալի դեպքերը, ոստիկանության եւ զորքի միջամտությունն ու բռնությունները երբեմն պատճառ էին դառնում զինված բախումների ու գոհերի:

Օրինակ, ժողովրդական բողոքները բախումների են վերածվում ու արյունալի ավարտ են ունենում Գանձակում, Թիֆլիսում Բաքվում, Շուշիում, Նոր-Նախիջեւանում:

Համաձայն «Կուսակցական կեանք» խորագիրը կրող վավերագրի, 1903թ. օգոստոսի 29-ին Գանձակի ՀՅԴ «Մարշիմոն» խմբի առաջնորդությամբ ավելի քան 10.000 հայեր հավաքվում են քաղաքի եկեղեցու մոտ, որպեսզի բեմի հոգեւոր առաջնորդ Բենիկ վարդապետին հայտնեն եկեղեցական կալվածքները կառավարությանը չհանձնելու ժողովրդի պահանջը:

Ժողովրդի շարժումը դեպի առաջնորդարան արգելելու եւ հավաքված բազմությանը ցրելու նպատակով պահնորդական խմբով դեպքի վայրն է գալիս ոստիկանապետը:

Զինված ընդհարում տեղիք չտալու եւ Ժողովրդին հանգստացնելու նպատակով Բենիկ վարդապետը հայտնում է, որ ինքը համապատասխան հրահանգ արդեն ստացել է վեհափառ կաթողիկոսից եւ ոչինչ հոժարակամ չի հանձնի [61]:

Այդ նույն պահին եկեղեցու մերձակայքում հայտնվում է ոստիկանական վաշտը: Ի պատիվ ոստիկանապետի, պիտի ասել, որ նա նկատի ունենալով լարված, պայթյունավտանգ իրավիճակը, հնարավոր բախում թույլ չտալու նկատառումով հեռացնում է վաշտը, բայց մի փոքր անց դեպքի վայրն է գալիս փոխնահանգապետ Անդրեեւը եւ խիստ տոնով հրամայում է բազմությանը՝ ցրվել: Հավաքվածները ոչ միայն հրաժարվում են կատարել փոխնահանգապետի հրամանը, այլեւ հայտնում նրան, որ չեն հանձնի եկեղեցու գույքը: Փոխնահանգապետի հրամանով զինվորներն ու ոստիկանները կրակ են բացում ժողովրդի վրա [62]:

Ըստ վերոհիշյալ վավերագրի, «Խաղաղ ցուցարարների վրայ Գանձակի փոխնահանգապետ Անդրեեւի հրամանով զօրքն ու ոստիկանութիւնը համազարկէր տալով, տուին 16 սպանուած եւ 70-չափ վիրաւոր: Յետոյ տեղի ունեցած բազմաթիւ ձերբակալուածների մէջ էին մեր յայտնի ընկերներց Արշակ Ջամալեանը, Յարութիւն Պետրոսեանը, Արշակ Միսկարեանը, Ավետիս Թաւաքալեանը եւ մի շարք ուրիշ ընկերներ»[63]:

Զորքի եւ ցուցարարների ընդհարման ժամանակ ՀՅԴ տեղի մարտական խմբի անդամների զինված դիմադրության հետեւանքով սպանվում եւ վիրավորվում են մի քանի զինվորներ[64]:

Գանձակի հայության նկատմամբ գործած ոճրագործության համար փոխնահանգապետ Անդրեեւը պիտի պատասխան տար: ՀՅԴ - Գանձակի ՀՅԴ կոմիտեի որոշմամբ փոխնահանգապետ Անդրեեւը դատապարտվում է մահվան:

«Ահաբեկութիւններ» խորագիրը կրող վավերագրի հավաստմամբ «Փոխ-նահանգապետ Անդրեեւի ահաբեկումը կատարուեց Գանձակից 25 կիլօմետր հեռաւորութեան վրայ գտնուող Հաջիքենտ անտառախիտ ամառանոցում, օրը ցերեկով, Բարտումցի Գրիգորի ձեռքով...»[65]:

Փոխնահանգապետի ահաբեկիչ Բարտումցի Գրիգորը ձերբակալվում ու դատապարտվում է գնդակահարության, բայց դատարանը վերանայում

է դատավճիռը եւ այն փոխարինում 20 տարվա տաժանակիր աշխատանքի[66]:

Նույն վավերագրի հավաստմամբ Գանձակի նահանգում ՀՅԴ կոմիտեի որոշմամբ ահաբեկվել են եւս մի քանի հայեր, որոնք եկեղեցիների ունեցվածքը բռնագրավելու ժամանակ օգնել էին իշխանության ներկայացուցիչներին[67]:

Օգոստոսի 29-ին Գանձակում տեղի ունեցած արյունալի դեպքերի լուրը արագորեն տարածվում է: Հաջորդ օրը եւեթ այդ մասին գրում է Թիֆլիսի պաշտոնական թերթը:

Գանձակում ռուս զինվորների կատարած բարբարոսության եւ արյունալի դեպքի լուրը մեծ հուզում ու լարվածություն էր առաջացրել Թիֆլիսահայության մեջ: Ի հիշատակ Գանձակ քաղաքում նահատակված հայերի, կիրակի օրը՝ օգոստոսի 31-ին, Թիֆլիսի Մայր-եկեղեցում պիտի կատարվեր հոգեհանգիստ: Պատարագը դեռ չսկսված՝ եկեղեցին արդեն լցվել էր հոծ բազմությամբ: Եկեղեցու բակում եւ նրանից փոքր-ինչ հեռու գտնվող Ներսիսյան դպրոցի մերձակայքում հավաքվել էին ոստիկաններ եւ ավելի քան 100 հեծյալ զինվորներ[68]:

Հոգեհանգստի ավարտին քահանան՝ Տեր-Ավարատյանը «...ճգովք արտասանեց կառավարութեան հասցէին. անմիջապէս օդը նետուեցին պրոկլամացիաներ եւ լուեցան մի շարք «կեցցէներ»: Ոստիկանները միջամտում են եւ պահանջում լռել. նրանք ուզում են մի երկուսին քարշ տալով դուրս տանել. բայց ժողովուրդը գրոհ է տալիս, եւ սկսում է ծեծը»[69]:

Ոստիկաններն ու հեծյալները, որոնց միանում են կոզակները, հարձակվում են բազմության վրա եւ սկսում անխնա ծեծել հանդիպողներին: Հավաքվածները անընդհատ քարեր են շպրտում եւ նույնիսկ ատրճանակներից կրակոցներ արձակում ոստիկանների ու զինվորների վրա: Ընդհարման հետեւանքով շատերը վիրավորվում են: Ձերբակալվում են Տեր-Ավարատյան քահանան եւ երեք հայեր:

Այս դեպքից հետո Թիֆլիսի փողոցներում մշտապես պարեկություն են անում կոզակ հեծելախմբերն ու բազմաթիվ ոստիկաններ[70]:

Թիֆլիսը Կովկասի կառավարչապետության կենտրոնն էր, այնտեղ մշտապես եղել են զինվորական եւ ոստիկանական ուժեր: Հայկական հեղափոխական կենտրոնական կոմիտեի համար չափազանց դժվար է եղել բառացիորեն մշտապես հերթապահող զորքի եւ ոստիկանության ներկայությամբ կազմակերպել մարտական խմբեր եւ զինված դիմադրության տարբեր եկեղեցու հարստությունը բռնագրավող զինվորական եւ ոստիկանական ուժերին:

Այնուամենայնիվ, օգոստոսի 31-ին Թիֆլիսում տեղի ունեցած դեպքի կապակցությամբ, հայությանը ոգեշնչելու ու պայքարելու կոչելու նպատակով, Հայկական հեղափոխական կենտրոնական կոմիտեն հրատարակում է թռուցիկ, որտեղ արտահայտելով իր բողոքն ու դժգոհությունը՝ նշում է. «...Թիֆլիսի դէպքը ոչ առաջինն էր եւ ոչ էլ վերջինն է լինելու: Գազան Դոլիցիոնը նորանոր դաւեր է սարքելու...Խոնարհութիւնն այլեւս արժէք չունի. որքան խոնարհուենք, այնքան մեծ է լինելու գոհերի թիւը: Հարկաւոր է դիմադրութիւն, ուժեղ դիմադրութիւն:

Սթափուեցէք, հայեր, բաւական է ստրկի նման միշտ երկիտղով շարժուել: Թափած արիւնը, ընկած գոհերը թո՛ղ վառեն ձեր արիւթիւնը եւ միչեւ վերջ պաշտպան կանգնեցնեն ձեր ազգային պատւի ու սեփականութեան»[71]:

Հայաբնակ մի շարք վայրերում ի պաշտպանություն եկեղեցու իրավունքների տեղի ունեցած ժողովրդական ընդվզումների եւ բողոքի ցույցերի մանրամասների ուսումնասիրությունը մատնանշում է, որ այդ ընթացքում թեպետ եղել են նաեւ սահմանափակ ընդգրկումով թեթեւ զինված բախումներ, այնուամենայնիվ, համաժողովրդական շարժումը առաջնորդող Հ. Յ. Դաշնակցության եւ Հայկական հեղափոխական կենտրոնական կոմիտեի գործունեության մեջ զինված դիմադրությունը չի եղել պայքարի հիմնական միջոցը, թեեւ ինչպես արդեն նշվել է, 1904թ. կայացած 3-րդ Ընդհանուր ժողովը ընդունում է «... տեառորի (ահաբեկչութիւն), ժողովրդական ցոյցերի եւ զինուած դիմադրութեան տակտիկը, մնալով հեղափոխութեան հողի վրայ»[72]:

Պատմական այդ ժամանակահատվածում Դաշնակցությունը կշռադատված եւ արդյունավետ մարտավարություն կենսագործելիս պիտի հաշվի առներ հետեւյալ հանգամանքները.

1. Նախ, ՀՅԴ-ն Ընդհանուր ժողովի կամ Բյուրոյի մակարդակով դեռեւս չէր որդեգրել ցարական իշխանության դեմ հեղափոխական պայքար մղելու գործունեությունը:

2. Դաշնակցության նախաձեռնությամբ կազմավորվող մարտական ուժերը, զենքն ու զինամթերքը, համաձայն 2-րդ Ընդհանուր ժողովի որոշման, պիտի ուղարկվեին «Կեդրոնացման վայր»-ը՝ Սասուն, ուր կենտրոնանալու էին կուսակցության գլխավոր ուժերը: Պիտի ասել, որ ցանկության դեպքում անգամ Դաշնակցության ուժերն ու հնարավորությունները չէին կարող բավարարել՝ միաժամանակ կազմակերպելու եւ երկիր ուղարկելու մարտական ուժեր, զենք ու զինամթերք եւ լուրջ զինված պայքար մղելու ընդդեմ հզոր կայսրության:

Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավող ցարական ոստիկանական ուժերի դեմ կազմակերպված զինված դիմադրությունը գաղտնի կերպով ղեկավարել են Հ.Յ. Դաշնակցության առավել հայտնի գործիչները:

Օրինակ, Հովակ Ստեփանյանի հավաստմամբ «1903 թուին էլ անշուշտ, երբ Բաքու քաղաքում, հայոց եկեղեցում, հարիւրաչափ խիզախ մարտիկներ հերոսաբար կռւում էին ռուսական ոստիկանութեան եւ զինուորական ուժերի դէմ, Նիկոլ-Դումանն էր, որ գործնական հրահանգներ էր տալիս, բայց ո՛չ ի ցոյց մարդկանց...»[73]:

Մի քանի բնակավայրերում ոստիկանական ուժերի եւ զինվորների դեմ Հ.Յ.Դաշնակցության մարտական ուժերի ցույց տված դիմադրությունից թերեւս կարելի է առանձնացնել 1903թ. սեպտեմբերի 2-ին Բաքվում տեղի ունեցած դեպքը:

Այդ օրը, առավոտյան ժամը 10-ին, քաղաքում լուր է տարածվում, որ տեղի է ունենալու եկեղեցու ունեցվածքի գրավում: Այդ լուրը հայ բնակչության համար անսպասելի էր. «Ոչ ոք չէր կարծում, թէ այդքան շուտ պիտի կատարուէր...Էջմիածինից նամակ կար, թէ ամսի երկուսին այնտեղ էր լինելու գրաւումը եւ ապա, հետզհետէ ուրիշ տեղերում»[74]:

Լուրը տարածվում է մեծ արագությամբ: Ժողովուրդը, որի մեջ եղել են նաեւ զինված մարդիկ, Բալախանից մտնում է քաղաք, լցվում եկեղեցու գավիթն ու շրջակա փողոցները: Հայտնվում են նաեւ կոզակներն ու ոստիկանները, որոնք ժողովրդին հրահանգում են ցրվել, բայց հավաքվածները հրաժարվում են կատարել նրանց պահանջը: Բազմությանը ցրելու նպատակով կոզակներն ու ոստիկանները երկու անգամ հարձակում են գործում բազմության վրա: Այդ օրը ընդդեմ կոզակների ու ոստիկանների ձեռնարկած հարձակումների ժողովրդին պաշտպանում է Հ.Յ. Դաշնակցության մարտական խումբը: Հավաքված ցուցարարների աջակցությամբ ՀՅԴ մարտական խումբը կարողանում է հետ մղել կոզակների ու ոստիկանների գրոհը: Մի փոքր անց գալիս է հետեւակ զորքը, եւ միացյալ ուժերը պաշարում են եկեղեցին[75]:

Երկու կողմից տեղի է ունենում հրացանաձգություն, որը տեւում է մի քանի ժամ:

Ըստ Յապոնի (Հովհաննես Պարոնյան)՝ «Չնայած կոզակների քանիցս կրկնած յարձակումին, հայերը զէնքը ձեռին դիմադրել էին եւ թոյլ չէին տուել, որ կառաւարական պաշտօնեաները մտնեն հայ եկեղեցի: Հայ տղամարդիկ, ատրճանակը քաշած, ամբողջ հասակով կանգնել էին կոզակների համազարկի առաջ... »[76]:

Յապոնը նշում է, որ նմանօրինակ դեպք տեղի է ունեցել ոչ միայն Բաքվում, այլեւ ուրիշ վայրերում, ուր «...երիտասարդ հայերը կամաւոր էին գրուել դիմադրելու համար...եւ ամէն տեղ էլ հայերը ցոյց են տուած ընդդիմութիւն»[77]:

Համաձայն «Դրոշակ»-ի՝ մինչեւ կես գիշեր զորքին ու ոստիկանությանը չի հաջողվում ներխուժել եկեղեցի: Կեսգիշերից հետո, երբ ժողովուրդն արդեն դատարկել էր փողոցները, «...սվիները սկսում են մոտենալ եկեղեցուն, ավելի մեղացնել շրջանը: Պաշարվածների փամփուշտները սպառվում են, նրանց մի մասը՝ պատուհաններից մի կերպ դուրս գալով, ազատվում է: Մնացածներին – մոտ 100 հոգի-թոկերով կապոտում են իրար ձեռքից եւ զինվորների մի ստվար խմբի հսկողության տակ ուղարկում են բանտ: Եկեղեցու գավիթը այդպիսով մաքրվում է եւ զորքը բռնում է պաշարվածների տեղը...»[78]:

«Դրոշակ»-ը չի նշում զորքի եւ ոստիկանության դեմ կռվողների քանակն ու նրանց առաջնորդների անունները:

Համաձայն Մ.Վարանդյանի, ավելի քան զինված 300 երիտասարդների առաջնորդները եղել են Դաշնակցական Խեչոն եւ Ջալլադը(Երվանդ Բաբերյան): Ի տարբերություն «Դրոշակ»-ի, Մ. Վարանդյանը այլ կերպ է ներկայացնում եկեղեցուց հայերի դուրս գալու իրողությունը: Եկեղեցում գտնվող զինված հայերի հետ բանակցելու ու նրանց այնտեղից առանց կռվի դուրս բերելու նպատակով նահանգապետ Օրինցեւը ժողով է գումարում եւ որոշում դիմել ազդեցիկ հայերի միջնորդությանը: Ընտրում են նույն եկեղեցու երեց Համբարձում Մելիքյանին: Նա մի քանի կարեւոր պաշտոնյաների ընկերակցությամբ մոտենում է եկեղեցուն եւ բանակցելով այնտեղ գտնվողների հետ՝ հորդորում է նրանց անձնատուր լինել: Համբարձում Մելիքյանը իշխանությունների անունից հավատացնում է, որ անձնատուր լինելու դեպքում բոլորն էլ ազատ կարծակվեն: Միջնորդությունը պսակվում է հաջողությամբ:

«Մերիներն ալ արդէն ուրիշ ելք չէին նշմարեր,-գրում է Մ. Վարանդյանը,- Երկար դիմադրելու ոյժ չկար...Բագուի իշխանութիւնները ազատ չարձակեցին մեր ցուցարար ռազմիկները, որոնց կը սպասէր երկարատեւ բանտարկութիւն: Բայց իրենց կեանքը խնայեցաւ»[79]:

Սեպտեմբերի 2-ին Բաքվում տեղի ունեցած զինված ընդհարման ժամանակ սպանված զինվորների ու ոստիկանների թիվը հայտնի չէ, իսկ հայերից գոհվում են 11 հոգի, 45 հոգի վիրավորվում են ծանր, իսկ 40 հոգի՝ թեթեւ[80]:

Զինվորական ուժերի եւ հայ բնակչության միջեւ տեղի ունեցած բախումներից արժանահիշատակ է նաեւ Շուշիում տեղի ունեցած ընդհարումը: Շուշիում կալվածքների բռնագրավումը, համաձայն իշխանությունների որոշման, նախատեսված էր իրականացնել սեպտեմբերի 10-ին: Քանի որ հանրահայտ իրողություն էր արցախահայության ըմբռստ, բռնության դեմ պայքարելու մարտական տրամադրվածությունն ու կարողությունը, «Դրօշակ»-ի տեղեկացմամբ «Յափշտակող Յանձնաժողովի» գործողություններ ղեկավարելու եւ արցախահայությանը ահաբեկելու ու սարսափ ներշնչելու նպատակով, օգոստոսի 8-ին զորքով Շուշի է ժամանում անձամբ Գանձակի նահանգապետը [81]:

Քաղաքը լցնելով իր հետ բերած զորքով, նահանգապետը հրավիրում է քաղաքի ականավոր հայերին եւ հայտարարում. «Յունիսի 12-ի կարգադրութիւնը իրագործելու համար պետական Յանձնաժողովը վաղը պիտի սկսէ իր գործը: Լսել եմ սակայն, որ հայերը ուզում են հակառակել կալւածների գրաւմանը: Այդ առթիւ յայտնում եմ, որ հրահանգ ունեմ բոլոր հայերին կոտորելու, եթէ անհնազանդութեան որեւէ նշոյլ ցոյց տրւի» [82]:

Հաջորդ օրը նահանգապետն ու «Յափշտակող Յանձնաժողովի» անդամները թիկնազորի եւ կոզակների ուղեկցությամբ ուղեւորվում են հայոց կոնսիստորյան:

Նահանգապետը այն աստիճան վախեցած է եղել հայերի հնարավոր ըմբոստությունից, որ մինչեւ կոնսիստորյա մտնելը, հրամայում է փորել շենքի չորս բոլորը, քանի որ «տեղեկութիւն էր ստացել», որ հայերը ուժանակներ են տեղադրել եւ մտադրվել պայթեցնել իրեն ու հանձնաժողովի անդամներին: Սակայն պարզվում է, որ իզուր էր նրա մտավախությունը: Թեպետ նահանգապետի կարգադրությամբ փորում են շենքի պատերի մերձակա տարածքը, բայց ոչ մի տեղ ուժանակ ու պայթուցիկ որեւէ այլ սարք չեն գտնում:

«Յափշտակող Յանձնաժողովը» մտնում է կոնսիստորիայի շենքը եւ անառարկելի տոնով պահանջում՝ հանձնել քաղաքի եկեղեցիների ունեցվածքը: Կոնսիստորիայի անդամները առաջնորդվելով կաթողիկոս Խրիմյանի կարգադրությամբ հրաժարվում են կամովին նրանց հանձնել եկեղեցու ունեցվածքը:

Չկարողանալով կոտրել կոնսիստորիայի անդամների դիմադրությունը, նահանգապետը բռնությամբ ցուցակագրում է եկեղեցու ողջ ունեցվածքը, կողոպտում գանձարանը եւ կեղծ արձանագրություն կազմելով՝ «հաղթականորեն» դուրս է գալիս:



Խրիմյան Հայրիկ

Իսկ այդ ընթացքում Շուշիի հայերը տեղեկանալով իրենց քաղաքում նահանգապետի եւ հանձնաժողովի գտնվելու եւ նրանց մտադրությունների մասին, հոծ բազմությամբ շրջապատում են կոնսիստորիայի մերձակա փողոցներն ու բարձրաձայն բացականչություններով, սուլոցներով, ծաղր ու ծանակով եւ անգամ նահանգապետի ու մյուս բարձրաստիճան պաշտոնյաների հասցեին ուղղված հայհոյանքներով դիմավորում են նահանգապետին եւ հանձնաժողովի անդամներին [83]:

Մնկարդող լինելով առաջ շարժվել՝ նահանգապետը հրամայում է թիկնազորին եւ կոզակներին ցրել հավաքվածներին ու մաքրել փողոցները:

«Սկսում է,-գրում է Դրօշակը,-ընդհարումը: Կօզակների հրացանաձգութեանը պատասխանում է ժողովուրդը նոյն ձեւով: Պատշգամբներից եւ փողոցներից տեղում է կօզակների վրայ կրակ եւ մի րոպէում ընկնում են սպանուած՝ 4 կօզակ, ռէալական դպրոցի 12 տարեկան մի հայ աշակերտ եւ բազմաթիւ վիրաւորներ երկու կողմից» [84]:

Չնայած զորքի միջոցով ձեռնարկած բռնություններին, Շուշիի հայ բնակչությունը չերկյուղելով անգամ ոստիկանական ուժերի եւ կոզակների ներկայությունից, զենքով պաշտպանում է իր եկեղեցու ունեցվածքն ու իրավունքը: Նահանգապետի հրամանով քաղաքում կատարվում են խուզարկություններ եւ ձերբակալում են 120 մարդու, որոնց թվում էին

քաղաքագլուխն ու թեմական ռեալական դպրոցների 37 աշակերտներ: Շուշիում տիրում է չափազանց ծանր ու լարված իրավիճակ[85]:

Եկեղեցական կալվածքները բռնագրավող Հափշտակող հանձնաժողովին արժանի դիմադրություն են ցույց տվել նաեւ Նոր-Նախիջեւանի հայերը: Հափշտակող հանձնաժողովը Նոր-Նախիջեւան պիտի ժամաներ սեպտեմբերի 20-ին: Տեղեկանալով հանձնաժողովի գալու մասին՝ ժողովուրդն այդ օրը հավաքվում է քաղաքի մայր եկեղեցում, խլում է երեցփոխից եկեղեցու բանալիները, ապա առանձին խմբերի բաժանվելով գնում են մյուս եկեղեցիները, որպեսզի վերցնեն նաեւ նրանց բանալիները: Եկեղեցու ունեցվածքը կամովին չպետք է հանձնվեր իշխանություններին, ահա այս էր ժողովրդի պահանջն ու տրամադրվածությունը: Հանձնաժողովը միայն բռնությամբ կարող էր վերցնել բանալիները, ապա նաեւ եկեղեցու ունեցվածքը:

Սեպտեմբերի 20-ին ժողովուրդը հավաքվում է մայր եկեղեցու շուրջը եւ դարձյալ աղմուկով ու սուլոցներով դիմավորում այնտեղ հայտնված գավառապետին եւ հանձնաժողովի անդամներին: Գավառապետը դիմելով հավաքվածներին՝ հնազանդության ու համակերպության է կոչում նրանց եւ փորձում համոզել ենթարկվել կարգադրությանը, բայց ապարդյուն: Չկարողանալով համոզել ժողովրդին՝ գաւառապետի կարգադրությամբ հրդեհաշեջները փորձում են ջրով ցրել ամբոխին, բայց դարձյալ մատնվում են անհաջողության:

«Այն ժամանակ,-ընդում է Դրօշակը,- , ինչպես միշտ, հանդես են գալիս կօզակները եւ մտրակներով ու ատրճանակներով մաքրում են հրապարակը: Շատերն են ծեծել, մի քանի օրիորդներ ուշաթափել են եւ բաւական թուով երիտասարդներ ձերբակալել»[86]:

Թեպետ ձեռնարկած բռնություններին, կոզակներն ու ոստիկանությունը, այնուամենայնիվ, չեն կարողանում եկեղեցիների բանալիները խլել ժողովրդից: Եւ միայն մեկ շաբաթ անց Հափշտակող հանձնաժողովը գալիս է քաղաքային վարչություն եւ հրավիրելով այնտեղ եկեղեցիների երեցփոխներին՝ հարկադրում է նրանց ստորագրել անհրաժեշտ արձանագրությունները:

Հափշտակող հանձնաժողովը համեմատաբար ավելի քիչ հաջողություններ է ունենում գյուղերում:

«Դրօշակ»ի- հավաստմամբ «Գիւղերի արիասիրտ երէցփոխները ոչինչ չեն տուել կամ յանձնել: Նրանք ամէնուրեք դիմադրել են Յանձնաժողովին «չգիտենք», «չենք յիշում» եւ այլ այդպիսի խօսքերով»[87]:

Ամիսներ շարունակ ցարական պաշտոնյաներն ու հանձնաժողովի անդամները շրջել են հայկական բնակավայրերը եւ փորձել ոստիկանության ու կոզակների միջոցով բռնագրավել եկեղեցու ունեցվածքը: Բազմաթիվ բնակավայրերում ժողովրդի կողմից հանդիպելով կազմակերպված դիմադրության՝ Հափշտակող հանձնաժողովը մատնվել է անհաջողության:

Էջմիածնի գյուղերում հերթական անգամ մատնվելով անհաջողության՝ Հափշտակող հանձնաժողովի անդամները Երեւանի փոխնահանգապետ գեներալ Նակաշիձեի գլխավորությամբ, որը միաժամանակ նաեւ հանձնաժողովի նախագահն էր. թիկնազորի ուղեկցությամբ սեպտեմբերի 23-ին դարձյալ գալիս են Էջմիածին եւ ներկայանալով կաթողիկոս Խրիմյան Հայրիկին՝ պահանջում եկեղեցիների գանձարանի բանալիները:

«Վեհափառը,-ընդում է «Դրօշակ»-ը,-այս անգամ արդէն գայրացած, պատասխանում է.-«Քանի՞ անգամ ձեզի արդէն ըսած եմ, որ ոչինչ տալիք չունիմ: Վերջին անգամ կրսեմ, գնացէք, ինչ կուզէք՝ ինքներդ ըրէք»[88]:

Հանձնաժողովի նախագահ գեներալ Նակաշիձեն կաթողիկոսի մերժողական պատասխանը ստանալուց հետո որոշում է արշավանք ձեռնարկել վեհարանի եւ վանքի վրա: Նրա հրամանով զինվորները ներխուժել են վանքի, վեհարանի, ճեմարանի եւ թանգարանի բակերը, ապա կոտրել գանձարանի երկաթյա պահարանները եւ վերցրել այնտեղ պահվող դրամներն ու էջմիածնի վանքին պատկանող արժեքավոր թղթերը:

Զինվորների աջակցությամբ կատարելով փոխնահանգապետ գեներալ Նակաշիձեի հրամանը՝ Հափշտակող հանձնաժողովը Էջմիածնի գանձարանից բռնագրավում է «...կանխիկ դրամ 14 հազար րուլի, կտակներով ու նուէրներով Էջմիածնի վանքին թողած արժէքաւոր թղթեր՝ մօտաւորապես 400 հազար րուբլու, մի շարք վաւերաթղթեր, 6 ֆունտ հին արծաթ դրամներ, 1 ֆունտ տաճկական ոսկի լիրաներ եւ ռուսաց ոսկի դրամներ: Բացի այդ, ցուցակագրել են թանգարանի իրերէները եւ առհասարակ վանքի շարժական եւ անշարժ կայքերն ու գոյքերը»[89]:

Մինչեւ 1905թ. օգոստոսի 1-ը, երբ կայսր Նիկոլայ 2-րդի հրամանով չեղյալ հայտարարվեց հունիսի 12-ի օրենքը, կարելի է ասել, պայքարը՝ ի պաշտպանություն եկեղեցու իրավունքների տարբեր ուժգնությամբ ու ծավալով շարունակվել է գրեթե բոլոր հայաբնակ վայրերում, որոնց մասին բազմաթիվ դրվագներ կան ներկայացված «Դրօշակի» էջերում[90]:

Հայաբնակ վայրերում նշանակալի աշխատանք են ծավալել Հայկական ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի մասնաճյուղերն ու նրան աջակցող առանձին անհատները:

«Ուխտեալներ» խորագիրը կրող վավերագիրը, անդրադառնալով այդ օրերին Թիֆլիսում եւ Լոռվա շրջանում տիրող կացութեանը, ուշագրավ դրվագներ է ներկայացնում այդ շրջաններում ինքնապաշտպանության կոմիտեի անդամների կատարած ազգանվեր գործերի մասին: Մի քանի վայրերում եկեղեցու գույքի բռնագրավման ժամանակ կոզակներին ու ոստիկաններին զինված դիմադրություն են ցույց տվել ՀՅԴ մարտական խմբերը [91]:

Որպես ընդհանրացնող խոսք, վավերագիրը նշում է, որ այդ կոմիտեի անդամները «...մի մի պրօպագանդիստ դարձած, թէ Թիֆլիսում եւ թէ շրջաններում ժողովրդին կազմակերպում եւ պատրաստում էին դիմադրելու ռուս բռնակալութեան ու պաշտպանելու հայ ժողովրդի իրավունքները, իսկ գրաւման օրը պայքարողների առաջին շարքերում էին...»[92]:

Պայքարի ընթացքում երբեմն տեղի են ունեցել այնպիսի դեպքեր, երբ Հ.Յ.Դաշնակցության գործիչների չկշռադատված գործողությունների հետեւանքով զոհվել են ոչ միայն ոստիկաններ, այլեւ հայ բնակիչներ:

Ա. Գյուլխանդանյանը Մռավին (Մարգար Ժամհարյան) նվիրված հոդվածում պատմում է 1904թ. Բաքվում կատարված մի դեպքի մասին, երբ Մռավի եւ Դաշնակցական Խեչոյի չկշռադատված գործողության հետեւանքով սպանվել ու վիրավորվել են նաեւ մի քանի հայեր:

Այդ ժամանակ ընթանում էր ռուս-ճապոնական պատերազմը: Ռազմաճակատում ռուսական զորքերի պարտությունները զոհունակությամբ էին ընդունվում ռուս հեղափոխական կուսակցությունների կողմից: Ցարական իշխանության դեմ պայքարի դրոշ պարզած Հ.Յ. Դաշնակցությունը նույնպես գոհունակությամբ էր ընդունում մի շարք ճակատամարտերում ռուսական զորքերի կրած պարտությունները:

ՀՅԴ «Ինքնապաշտպանության կենտր. կոմիտեն», որի նստավայրը այդ օրերին գտնվում էր Բաքվում, հրատարակում է թռուցիկներ, որոնց միջոցով հորդորում է .«...հայ երիտասարդներին եւ հայ զինուորներին, որ ոչ մի գնով չնպաստեն ռուսական զէնքի յաջողութեանը, որովհետեւ դեռեւս թարմ էին այն վէրքերը, որ ռուսական բռնակալութիւնը հասցրել էր հայութեան, եկեղեցական կալուածները գրաւելու ժամանակ»[93]:

Ռուսաստանի բազմաթիվ բնակավայրերում ռուս հոգեւորականները ռուսական զենքի հաջողության համար պարբերաբար կրոնական ծիսակատարություններ ու մաղթանքներ էին կատարում եւ փառաբանական հեռագրեր հղում ցարին: Իշխանությունների թելադրանքով եւ մասամբ նաեւ ռուսների ազդեցությամբ երբեմն-երբեմն նույն արարողությունները կատարել են նաեւ կովկասյան ազգերը[94]:

Համաձայն Ա. Գյուլխանդանյանի վկայության, Բաքվի հայ հարուստներից ոմանք որոշում են ռուսների օրինակով մաղթանք կատարել հայ եկեղեցում: Իշխանություններին առավելագույնս սիրաշահելու եւ նրանց համակրանքին արժանանալու նկատառումով նրանք աշխատել են հնարավորինս շատ հայերի հավաքել եկեղեցում: Ավելին, հայ հարուստները ոչ միայն կարողանում են մեծ թվով հայերի հավաքել եկեղեցում, այլեւ փորձել են մաղթանք կատարել Պարապետ հրապարակում, որպեսզի դրսում գտնվող հազարավոր հայեր նույնպես կարողանային մասնակցել արարողությանը: Այն պահին, երբ հոգեւորականությունը սկսում է մաղթանքը, հանկարծ հրապարակի կենտրոնում պայթում է մի պատրույգավոր ռումբ, որի պայթյունի հետեւանքով սպանվում ու վիրավորվում են մի քանի հայեր[95]:

Քաղաքում այն կարծիքն է տիրել, որ ռումբ նետողները ռուս խուլիգաններն էին (սեւ հարյուրյակայիններ):

ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի ընկերները նույնպես տեղյակ չեն եղել քաղաքում տեղի ունեցած ողբերգական դեպքի եւ ռումբ նետողի ով լինելու մասին:

ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամ Ա. Գյուլխանդանյանը իր հեղինակած «Մարգար Ժամհարեան (Մռաւ)» հոդվածում պատմում է, որ այդ պահին իրենք հավաքվել էին Նիկոլ Դումանի մոտ եւ քննարկում էին կուսակցական ընթացիկ հարցեր: Հանկարծ անսպասելիորեն ներս է մտնում Թադեւոս Ամիրյանը(Գիժ Թադոս) եւ հուզված ձայնով պատմում հայ հոգեւորականության կազմակերպած մաղթանքի մասին ու համոզված հայտնում, որ ռուս խուլիգանները արարողության պահին ռումբ են նետել ժողովրդի մեջ:

Այդ դեպքից երկու ժամ անց Դումանին եւ ՀՅԴ կենտր. կոմիտեի անդամներին ներկայանում է Դաշնակցական Խեչոն ու նրանց տեղեկացնում, թե այդ օրը ինչ է իրականում տեղի ունեցել քաղաքում:

Ըստ Ա. Գյուլխանդանյանի՝ «Երբ ամբոխը այդպէս ստորաքարշ կերպով համախմբւում է «Պարապետի» վրայ, այդ տեսարանին ականատես է լինում եւ Մարգար Ժամհարեանը: Յուզուած՝ նա չի կարողանում տանել ամբոխի ստորաքարշութիւնը եւ պատուիրում է Դաշնակցական Խէչոյին, որ պահեստից մի ռումբ բերի»[96]:

Մռավը եղել է ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի եւ «Ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի» անդամ: Դաշնակցական Խեչոն, կարծելով, որ Մռավը կատարում է կենտր. կոմիտեի որոշումը, ռումբը տալիս է Մռավին եւ ուղղում, որ «...նա աննկատելի կերպով



Ռոստոմ

վառի ռումբի պատրոյգը եւ ռումբը նետէ հրապարակի բաց տեղը, որ ապատ էր մնացել մարդկանցից: Միաժամանակ սկսում են կանչել բարձր ձայնով, թէ ռումբ է նետուած, որպեսզի մինչեւ ռումբի պայթիլը ամբոխը կարողանայ հեռանալ հրապարակից»[97]:

«Ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի» գործողությունները համաղրող Նիկոլ Դումանը խստորեն հանդիմանել ու դատապարտել է Մռավի ու Խեչոյի արարքը եւ պահանջել արժանի պատիժ տալ նրանց, քեպետ այդ երկու հանրահայտ գործիչները, հատկապես Խեչոն, եղել են նրա մերձավորագույն զինակիցները:

Մռավը Դաշնակցության մեջ հանրահայտ դեմք էր, հավասարակշռված եւ հարգված գործիչ: Ի՞նչը կարող էր նրան մղել դիմելու նման չմտածված ու վնասակար քայլի:

Ըստ Մռավի պատմածի, այդ պահին նրա վրա մեծապես ազդել է հայ ամբոխի ցուցադրած ստորաքարշ վերաբերմունքն այն հրապարակում, որտեղ օրեր առաջ ցարի զորքերը կրակել էին հայերի վրա եւ սպանել 30 երիտասարդների (նկատի ունի 1903թ. սեպտեմբերի 2-ին Բաքվի Պարապետ հրապարակում տեղի ունեցած դեպքը-Հ. Գ.):

Մռավի խոստովանությամբ «Այժմ նոյն հրապարակում հայ հոգեւորականները ծնկաչոք մաղթանք էին ուղում կատարել նոյն այդ ցարի համար: Ինքը ուզել էր ռումբը նետել նրանց վրայ, բայց դժբախտաբար նրանց չէր հասել...»[98]:

Ինչպիսին էլ լիներ Մռավի վկայակոչած փաստարկները, Նիկոլ Դումանի պահանջն անառարկելիորեն պիտի կատարվեր: ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն որոշում է «...պահեստապետի պաշտօնից հեռացուեց Դաշնակցական Խէչօն, իսկ Մարգար Ժամհարեանը զրկուեցաւ «Ինքնապաշտպանութեան Կ. Կոմիտէ» եւ Ոսկանապատի Կ. Կոմիտէ անդամ լինելու իրաւունքից»[99]:

Հարկ է նշել, որ շատերը, ովքեր փորձել էին կամովին հանձնել եկեղեցու ունեցվածքը, Ինքնապաշտպանության կենտր. Կոմիտեի որոշմամբ ենթարկվել են ահաբեկման: Ավելին, «Չգտան մեր բշնամիները, - գրում է Մ. Վարանդյանը, - կեսին կեսը այն վիթխարի հարստութեան, զոր մինչ այդ երեւակայեր էր Գալիցինի հիվանդոտ ուղեղը... Տվին իրենք եւս բազմաթիվ գոհեր, նոյնիսկ խոշոր բարձրաստիճան իշխանավորներեն: Իսկ ստորադաս պաշտոնեաներու կոտորածին հաշիվ չկար: Շատվոր են պրիստավները, ոստիկանները, ժանդարմ ժողովուրդները, զոր պատուհասած է Դաշնակցութեան ահաբեկչի գնդակը»[100]:

Միաժամանակ, Հ.Յ. Դաշնակցությունը համաձայն 2-րդ Ընդհանուր ժողովի որոշման, որդեգրել էր ընդհանուր ապստամբության նախապատրաստման ռազմավարությունը եւ բնականաբար նրա ուշադրության կենտրոնում Դուրան-Բարձրավանդակն էր, ավելի ստույգ Սասունը, որտեղ պիտի կենտրոնանային կուսակցության մարտական ուժերը:

1904 թ. հունվար- փետրվար ամիսներին տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը, որն իրավասու էր վերջնականապես ճշտելու եւ վճռելու ապստամբության հետ կապված խնդիրները:

Շատ կարեւոր էր, թե ինչպիսի վճիռներ պիտի ընդուներ Ընդհանուր ժողովը այն ժամանակահատվածում, երբ նրա առջեւ ծառացած էին լուծելու չափազանց դժվարագույն եւ հույժ կարեւոր հետեւյալ խնդիրները. 1. Ընդհանուր ապստամբության կազմակերպում, մարտական ուժերի, զենք ու զինամթերքի առաքում Դուրան-Բարձրավանդակ:

2. Պայքար ի պաշտպանություն հայոց եկեղեցու ունեցվածքի եւ իրավունքների: Ամիսներ անց այս ամենին գումարվելու է Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներում հայության ինքնապաշտպանության կազմակերպումը:

Ընդհանուր ժողովը նախեւառաջ պիտի վերջնական որոշում կայացներ ապստամբության վերաբերյալ:

Ուշագրավ է, թե ինչպիսի՞ որոշում պիտի կայացներ ցարական հզոր կայսրության դեմ պայքարի դրոշ պարզած Դաշնակցությունը Սասունում նախապատրաստվող ապստամբության վերաբերյալ:

Հայության համար այդ կարեւորագույն նշանակություն ունեցող հարցը քննարկելու եւ համապատասխան որոշում կայացնելու համար Ընդհանուր Ժողովի պատգամավորները, բնականաբար, նախ պարտավոր էին լսել եւ հաշվի առնել ապստամբության կազմակերպմանը վերաբերող Բարձրավանդակի կարծիքն ու առաջարկությունները, որոնք համաժողովին գրավոր ներկայացնում է Աշոտ Երկաթը:

Պիտի նկատել, որ Ընդհանուր ժողովում ապստամբությունից հրաժարվելու վերաբերյալ ժողովականների կողմից որեւէ լուրջ փաստարկ եւ առաջարկություններ չեն եղել: Այդ հարցում ժողովի մասնակիցների համար որպես գործունեության ուղենիշ եղել եւ մնում էին ՀՅԴ նախորդ Ընդհանուր ժողովում ընդունած որոշումները: Ժողովականները տարածայնություններ են ունեցել եւ հակադիր տեսակետներ զարգացրել՝ կապված ապստամբությունը սկսելու ժամկետները որոշելու հետ:

ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը հաստատում է Սասունում ապստամբություն կազմակերպելու մասին նախորդ համաժողովներում ընդունած որոշումը: Եթե ՀՅԴ-ն հրաժարվեր եւ հետ կանգներ ապստամբություն կազմակերպելուց, դա անկասկած նշանակում էր հրաժարում իր մարտավարությունից եւ կուսակցության համաժողովներում այս հարցի վերաբերյալ ընդունած որոշումներից:

1904թ. բռնկված ռուս-ճապոնական պատերազմը, երկիր մեկնող հայ հեղափոխական գործիչների, մարտական ուժերի նկատմամբ ցարական իշխանությունների դրսեւորած բշնամական վերաբերմունքը, ինչպես նաեւ Հայ Դատի հանդեպ արեւմտյան տերությունների որդեգրած երկդիմի քաղաքականությունը թույլ կառավարությանը հրաշալի հնարավորություն են ընձեռում՝ ոչնչացնելու Հ.Յ. Դաշնակցության կողմից հեղափոխական-մարտական ուժերի կենտրոնացման վայր ընտրված Սասունը:

Ժամանակը ցույց տվեց, որ Սասուն մեկնող մարտական խմբերի ճանապարհին կանգնած ամենագլխավոր արգելապատնեշներից մեկը հենց ռուս սահմանապահ զորքերն էին, որոնց բախվելով ջախջախվում էին հայ մարտական ուժերը: Իրավիճակը շատ բարդ էր, ի՛նչ պիտի ձեռնարկեր Հ.Յ. Դաշնակցությունը. շարունակեր ապստամբության նախապատրաստությունը, թե հրաժարվեր մարտական եւ զինատար խմբեր Սասուն ուղարկելու մարտավարությունից:

ՀՅԴ 3-րդ Ընդհանուր _ժողովը քննարկելով ապստամբության վերաբերյալ արտահայտած տեսակետները՝ միաձայն հաստատում է նախորդ՝ 2-րդ Ընդհանուր ժողովի որոշումը, սակայն հետեւյալ վերապահումով. «...տալ Բարձրավանդակի Պատասխանատու Մարմնի լիազօրութիւն ընտրելու այն ուղղութիւնը, որ ինք յարմար կը տեսնէ առաջիկայ գարնան համար, դնելով անոր տրամադրութեան տակ պէտք եղած միջոցները և կռուի տեխնիկական մասի պատասխանատուութիւնը ձգել այս Մարմնին վրայ»[101]:

Միաժամանակ, հաշվի առնելով «Դուրան-Բարձրավանդակ»-ի ներկայացրած պահանջները, Ընդհանուր Ժողովը որպես գոհացում որոշում է.

1. «Զինատար խմբով կամ որևէ ուրիշ միջոցով Սասուն հասցնել ուժանակ, ռումբ, հրացանի մասեր, բերդանի գիլզէներ, 50000 մոսինի փամփուշտ և բերդանի փամփուշտ կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ և այս ամբողջը ոչ ուշ քան Մայիսի կեսը:

2. Որպեսզի Բարձրաւանդակի շարժումները չներկայանան արտաքին աշխարհի առջև իբր տեղական լեռնային բոնռ ժողովրդի մը դժգոհութեան արդիւնք, այլ նկատուին հայկական բողոքի արտայայտութիւն, Ընդ. Ժողովը պարտականութիւն կը դնէ Թուրքիոյ սահմանակից մարմիններու վրայ՝ Սասնոյ շարժումները սկսելուն պէս, խորհրդակցութեամբ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի հետ և բիւզնէի սահմաններուն մէջ, ձայնակցիլ և օժանդակել երկրի շարժումին՝ յարձակողական այլև այլ կռուի կամ տեռորի բնաւորութիւն կրող ձեռնարկներով, թէ՛ սահմանի վրայ, թէ՛ Տաճկաստանի սահմանակից վայրերու մէջ»[102]:

Իհարկե, այդ ժամանակահատվածում Դաշնակցության ուշադրության կիզակետում նախեւառաջ պիտի լիներ Սասունը: Բայց հայ եկեղեցու իրավունքների ու ունեցվածքի պաշտպանությունը նույնպես համազգային խնդիր էր:

Համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, Դաշնակցությունը պաշտոնապես ստանձնում է կովկասահայության ինքնապաշտպանության գործը, որի կենսագործումը հանձնարարվում է «Կովկասի Պատ. Մարմնին, որ պահելով իր «Ինքնապաշտպանութեան Կեդր. կոմիտէ» անունը, պիտի շարունակէ գործել «Դաշնակցութեան» պաշտօնական անուան տակ»[103]:

Կովկասյան գործունեությունում Դաշնակցությունը պիտի առաջնորդվեր գրավոր եւ բանավոր պրոպագանդայի, ահաբեկչության (տեռո-

րի), ժողովրդական ցույցերի, վինված դիմադրության մարտավարությամբ՝ մնալով պաշտպանողական հողի վրա: Այսինքն, Ընդհանուր ժողովը հաստատում է ՀՅԴ գործունեության ոչ թե հարձակողական-հեղափոխական, այլ պաշտպանողական բնույթի մարտավարությունը:

Ընդհանուր ժողովի որոշմամբ Կովկասի Պատասխանատու մարմնին, այն է՝ Ինքնապաշտպանական կենտրոնական կոմիտեին եւ կովկասյան գավառական կոմիտեներին հանձնարարվում էր Կովկասի մեջ համերաշխություն հաստատել այն քաղաքական կազմակերպությունների, հատկապես «Սոցիալիստ-Ռեւոլիւցիոներներու » ու Վրաստանի «Սակարտվէլօ» կուսակցությունների հետ, որոնք կռիվ էին մղում ցարական կառավարության դեմ[104]:

1905 թ. Կովկասի հայ, վրացի եւ մահմեդական բնակչությունը պաշտոնական թույլտվության իրավունք է ստանում՝ հատուկ ուղերձների եւ պատգամավորության միջոցով իրենց պահանջներն ու քաղաքական ցանկությունները ներկայացնել բարձրագույն իշխանություններին:

Համանման պահանջներ ու առաջարկություններ բարձրագույն իշխանություններին ներկայացնելու նպատակով Թիֆլիսում գումարվում է կովկասահայության ժողով, որին մասնակցում են հայկական 24 բնակավայրերի ներկայացուցիչներ:

Ժողովում կովկասահայությանը ներկայացնող պատվիրակները մշակում եւ իշխանություններին են ներկայացնում 20 կետերից բաղկացած քաղաքական ծրագիր:

Պիտի նկատել, որ ծրագրի 20 կետերը վերաբերում են ոչ միայն կովկասահայության կյանքի բոլոր՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական, այլեւ կրոնական, կրթական ու մշակութային բնագավառներին:

Այս հարցում ժողովականները պահանջում են «7. Ընդհանուր, պարտադիր ձրի տարեկան ուսում: Լիակատար ազատություն տալ մասնատր նախաձեռնութեանը՝ բանալու յայտարարական ճանապարհով ամէն կարգի ուսումնարաններ եւ դպրոցական հաստատութիւններ…

Բանալ համալսարան Թիֆլիսում՝ երկու սեռի անձանց համար…նաեւ բանալ բարձրագոյն մասնագիտական դպրոցներ Անդրկովկասում:

8. Պարտադիր անել, որ տարրական դպրոցներում դասաւանդութիւնը հայ ծագում ունեցող երեխաների համար լինի հայերէն: Լուրջ հիմունքների վրայ դնել հայոց կրօնի, հայոց լեզւի, գրականութեան եւ պատմութեան ուսուցումը պետական դպրոցներում…

10. Վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները…

11. Վերադարձնել Հայկական եկեղեցուն նրա ծխական դպրոցները եւ կալւածքները, վերացնելով 1884 թ.-ից մինչեւ 1903 թ. բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք վերաբերում են թէ ծխական դպրոցներին եւ թէ այդ դպրոցների եւ հայոց վանքերի, եկեղեցիների եւ հոգեւոր դպրոցների կալւածքներին…»[105]:

Կարելի է փաստել, որ եթե Կովկասի բնակչությունը, այդ թվում նաեւ հայերը պաշտոնական թույլտվություն էին ստացել ազատ կերպով արտահայտելու իրենց պահանջներն ու քաղաքական ծրագրեր ներկայացնել, ապա դա անտարակույս մատնանշում էր, որ ցարական իշխանությունները կարող էին գնալ որոշակի զիջումների: Իսկ այդ նույն ժամանակահատվածում չթուլացող ուժգնությամբ դեռեւս շարունակվում էին հայոց եկեղեցու ունեցվածքի ու իրավունքների պաշտպանությանը նպատակաուղղված կովկասահայության պայքարն ու ինքնապաշտպանական մարտերը:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Հ.Յ. Դաշնակցության որոշմամբ արդեն ահաբեկվել էին հայկական ջարդերի կազմակերպման, ինչպես նաեւ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման գործում մեղսագործ ցարական բազմաթիվ պաշտոնյաներ ու աստիճանավորներ:

Ի պաշտպանություն կովկասահայության եւ հայ եկեղեցու իրավունքների, Հ.Յ. Դաշնակցությունը ցարական պաշտոնյաներին կրկնակի անգամ զգաստացնելու նպատակով իր պաշտոնաթերթ «Դրօշակ»-ում հրատարակում ու տարածում է հետեւյալ հայտարարությունը. «Հ.Յ.Դ. սրանով յայտարարում է բոլոր ոստիկաններին, ստրաժնիկներին, ոստիկանապետերին, գաւառապետերին, ժանդարմներին, որ այսուհետեւ նրանցից յուրաքանչիւրը անխնայ կերպով կոչնչացուի, եթէ համարձակուի հայերի ձեռքից խլել զէնք, խուզարկութիւն կատարել կամ բանտարկել այդ նպատակով:

…Փոխարքայի կողմից 25 րուբլի ընծայ կամ յեղափոխական գնդակ-ահա ինչ պէտք է ընտրել: Փոխարքան խոստանում է այդ ճեւով վնասուածների ընտանիքին ապահովել. նա թեթեւացնում է մեր գործը, որովհետեւ միայն անմեղ ընտանիքների անօգնական դրութիւնը կարող է դադրացնել յեղափոխականի ձեռքը. այժմ վերցրած է այդ արգելքն էլ»[106]:

Ինչո՞ւ է ՀՅԴ հայտարարության մեջ շեշտվում «25 րուբլի»:

Այդ նույն հայտարարության մեջ, որպես պարզաբանում նշվում է. «Ծանոթութիւն.-Մօտ օրերս Թիֆլիսում մի ոստիկան մի հայ գինաթափ անելիս վիրաւորւում է. փոխարքան այդ բանը լսելով 25 րուբլի ընծայ է տալիս»[107]:

Համաժողովրդական պայքարը ի վերջո ցարական իշխանություններին ապացուցեց, որ դյուրին չէ հայությանը պարտադրել նրա ազգային շահերը ոտնահարող որոշում:

Հ. Տասնապետյանի գնահատմամբ «1903ին հայ եկեղեցական կալուածներու գրաւման ցարական որոշման դէմ ծառացումը, Դաշնակցութեան ներշնչումով եւ առաջնորդութեամբ ցուցական առանձնացած արարք մը չկազմեց իր կարգին, այլ վերածուեցաւ համաժողովրդական ըմբոստացումի...»[108]:

Հ.Յ.Դաշնակցության եւ նրա նախաձեռնությամբ ստեղծված Ինքնապաշտպանության կենտր. կոմիտեի գործուն մասնակցությամբ Կովկասահայության միասնական եւ անզիջում պայքարը ունեցավ իր դրական արդյունքը:

1905թ. օգոստոսի 1-ին ցար Նիկոլայ 2-րդի հրամանով չեղյալ հայտարարվեց հունիսի 12-ի օրենքը, եւ հայ եկեղեցուն վերադարձվեցին նրանից բռնագրավված կալվածքները, եւ վերաբացվում են հայ-ծխական դպրոցները:

Ուշագրավ է, որ ցարի հրամանը հրապարակվեց այն օրերին, երբ կայսրությունը հայտնվել էր չափազանց դժվարին իրավիճակում: Մի կողմից ռազմաճակատում կրած պարտությունները, իսկ մյուս կողմից Ռուսաստանի ներքին կյանքում տեղի ունեցող իրադարձությունը: Կայսրությունում ծավալվում էր հեղափոխական շարժումը եւ բազմաթիվ քաղաքներում տեղի էին ունենում գործադուլներ ու բողոքի ցույցեր: Ցարական իշխանությունները ժողովրդական հուզումները մեղմելու համար հարկադրված գնում էին որոշակի զիջումների: Կարելի՞ է ասել, որ զիջումներից մեկը Նիկոլայ 2-րդի հրամանով հրապարակված օգոստոսի 1-ի օրենքն է:

Պիտի նկատել, որ համաձայն այդ օրենքի, հայ ժողովրդի նկատմամբ այդ զիջումը կատարվել էր շնորհիվ «...հայոց կաթողիկոսի աղերսանքներին եւ կովկասեան փոխարքայի միջնորդութեանը»:

Ինչպիսի՞ն էր Հ.Յ. Դաշնակցության վերաբերմունքը օգոստոսի 1-ի օրենքի նկատմամբ:

ՀՅԴ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն ի պատասխան այդ օրենքի, հրապարակում է հայ ժողովրդին ուղղված «Հայ ժողովուրդ» խորագիրը կրող ուղերձը, որով իր գնահատականն ու վերաբերմունքն է արտահայտում հայ եկեղեցուց հափշտակված հարստության վերադարձի ու դպրոցների վերաբացման նկատմամբ:

Ուղերձում նշելով, որ «...բարձրագոյն հրամանով վերադարձում են հայ եկեղեցուց յափշտակուած կալուածները. նոյն բարձրագոյն հրամանով վերաբացւում են եւ հայ-ծխական ուսումնարանները 1874 թիւն հաստատած ծրագրով», ՀՅԴ հարց է տալիս. թե ի՞նչ պատահեց, որ «Թագաւոր-կայսրը բարեհաճեց զիջանել հայոց կաթողիկոսի աղերսանքներին եւ կովկասեան փոխարքայի միջնորդութեանը»[109]:

Իհարկե, Դաշնակցությունը, որն առաջնորդել էր համաժողովրդական շարժումը, երբեք չէր կարող համաձայնվել ու ընդունել այն տեսակետը, համաձայն որի ցար Նիկոլայ 2-րդը վերանայել եւ չեղյալ է հայտարարել իր իսկ կողմից ընդունած հունիսի 12-ի որոշումը՝ հիմք ընդունելով հայոց կաթողիկոսի աղերսանքներն ու փոխարքայի միջնորդությունը:

Որպես փաստարկ ու ապացույց իր ժխտողական դիրքորոշմանը՝ Դաշնակցությունը վկայակոչում է երկու դեպք.

1. Հայոց ուսումնարանները թագավոր-կայսրի հրամանով փակվել էին տասնհինգ տարի առաջ: Քանի որ բազմաթիվ ուսումնարաններում երեխաները խմբված դասարանների մեջ, չեն ցանկացել դուրս գալ ու հեռանալ դպրոցներից, կայսրի հրամանով կազակները զենքի սպառնալիքով պոկել են երեխաներին նստարաններից ու վռնդել ուսումնարաններից[110]:

2. «Երկու տարի առաջ,-նշվում է ուղերձում,- թագաւոր-կայսրը բարեհաճեց գրաւել հայ եկեղեցու դարաւոր սեփականութիւնը. եւ որովհետեւ հայ մարդիկ փակեցին կայսերական պաշտօնեաների առաջ եկեղեցու դռները, թագաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել իւր կազակներին գնդակահարել այդ մարդկանց»[111]:

Հիմք ընդունելով վերոհիշյալ նախադրյալները եւ իր զարմանքն ու անհամաձայնությունը հայտնելով հայ ժողովրդի նկատմամբ ցար Նիկոլայ 2-րդի դրսեւորած «բարեհաճ» վերաբերմունքի վերաբերյալ, Դաշնակցությունը, որպես եզրակացություն՝ հարց է տալիս. «Բայց մի՞թէ հայոց կաթողիկոսը չէր աղերսում սրանից տասն եւ հինգ տարի առաջ...

Հրա՞շք կատարուեց: Արդեօք թագաւոր-կայսեր բարձրագոյն սիրտը յանկարծ գթով եւ սիրո՞վ վառուեց հայ ազգի համար, կամ կաթողիկոսի աղերսանքները այսօր մի դիւթական ո՞յժ ստացան, որ առաջ չունէին. թէ կայսերական ծառայութեան մէջ ծերացած Կոմ. Վօրօնցով- Դաշկովը յանկարծ իրաւունքի եւ արդարութեան ասպետի՞ վերափոխվեց»[112]:

Դժվար չէ հասկանալ ու գնահատել Դաշնակցության համամնման դիրքորոշումը: Այո՛, անժխտելի է ի պաշտպանություն հայոց եկեղեցու ունեցվածքի ու իրավունքների պաշտպանությանը միտված պայքարում Հ.Յ. Դաշնակցության անշահախնդիր ծառայությունը: Եթե ՀՅԴ ընդուներ օգոստոսի 1-ի օրենքի ընդունման գործում հայոց կաթողիկոսի

եւ Կովկասի փոխարքայի միջնորդությունների վճռորոշ նշանակության իրողությունը, ապա դա հավասարազոր է իր դերակատարության եւ համաժողովրդական պայքարի թերագնահատմանն ու անտեսմանը:

Այս հարցում Դաշնակցության գնահատականը միանշանակ է. հզոր կայսրության դեմ համաժողովրդական պայքարի շնորհիվ ձեռք բերած հաղթանակում պարտական ենք «Քեզ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, եւ միայն Քեզ: Դու էիր, որ պաշտպան կանգնեցար Քո ևիրական իրաւունքներին: Դու քաջութիւն ունեցար չը հնազանդել դահիճ կայսեր բարձրագոյն «բարեհաճման» եւ տարար յաղթութիւնը»[113]:

Անժխտելի է, որ ցարական կայսրության տիրապետության տակ գտնվող ազգերից առաջինը հայերը համարձակվեցին ընդվզել ու պայքարի դրոշ պարզել ընդդեմ հզոր կայսրության:

Ռոստոմի գնահատմամբ «...վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում, լեհական վերջին ապստամբութիւնից (1863) յետոյ, ոչ մի հպատակ ժողովուրդ այնպէս ուժեղ կերպով չէ ըմբոստացել ռուս կառավարութեան դէմ, ինչպէս հայերը 1903-ին. նոյնիսկ ֆինլանդացիք, որոնք համեմատաբար նպաստաւոր պայմանների մէջ են ապրում, չեն կարողացել այդ քայլն առնել»[114]:

1905 թ. օգոստոսի 1-ի օրենքով ցարիզմը տեղիք տալով հայության համաժողովրդական շարժմանը ու առաջնորդվելով նաեւ իր պետական ու քաղաքական որոշակի շահերով, զիջողություններ է անում մի ազգի, որը համարձակվել էր չհնազանդվել ու պայքարել իր ընդունած օրենքի դեմ:

Ալեքսանդրապոլի ՀՅԴ կոմիտեն իր հրապարակած «Եկեղ. կալւածքների վերադարձման եւ դպրոցների բացման լուրը Կովկասում» խորագիրը կրող վերլուծականում (1905 օգոստոսի 19. Ալեքսանդրապոլ) արժանվույնս գնահատելով կայսր Նիկոլայ 2-րդի հրամանով 1905 թ. օրենքի ընդունման գործում հայության մղած համազգային պայքարի դերն ու նշանակությունը՝ նշում է. «Թէ ինչ էին այս օրէնքի ընդունման իսկական պատճառները, դեռեւս վաղ է որոշ եզրակացութեան հանգել, բայց մի բան շատ պարզ է, որ հայ ժողովուրդի միահամուռ բողոքը, բազմաթիւ ակտիւ եւ պասիւ դիմադրութիւնները, բազմաթիւ տէռորական գործողութիւնները այն արեցին, որ Կովկասի բարձրագոյն պաշտօնեաները միւսներուն սկսեցին իրենց զեկուցումների մէջ Պետերբուրգի ականջին շարունակ բզզացնել, որ Կովկասը խաղաղացնելու համար առաջին եւ ամենագլխաւոր պայմանը հայոց եկեղեցու կալւածները վերադարձնելն է...»[115]:

1905 օգոստոսի 1-ի օրենքի հրապարակումից հետո ցարական հատուկ ծառայություններն ու ինչպես նաեւ Կովկասի փոխարքայության

պաշտոնյաները ժողովրդի մեջ խիստ քարոզչություն են ծավալում, ամենուրեք լուրեր տարածելով, որ հայոց եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու ու դպրոցների բացման համար հայ ժողովուրդը պարտական է կովկասահայության նկատմամբ բարյացկամորեն ու գթասրտությամբ տրամադրված ցարի՝ Նիկոլայ 2-րդի բարեհաճությանը:

Ժխտելով համանման երեւույթի իսկությունը՝ վերոհիշյալ վերլուծականը շեշտում է. «Մի հանգամանք, որ ոչ ոքի աչքից չը խուսափեց, դա այն էր, որ սա ոչ թէ մի շնորհ էր (նկատի ունի օգոստոսի 1-ի օրենքը-Հ.Գ.), որ թագաւոր կայսրը «բարեհաճեց» անել հայ ժողովրդին, այլ մի անխուսափելի հետեւանք հայ ժողովրդի յեղափոխական տրամադրութեան եւ տէրութեան ընդհանուր տագնապի»[116]:

Բնական է, որ կայսր Նիկոլայ 2-րդի ընդունած օգոստոսի 1-ի օրենքը մեծագույն ոգեւորությամբ պիտի ընդունվեր բովանդակ հայության եւ, իհարկե, հայոց եկեղեցու, ինչպես նաեւ Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներում մարտնչող հայ ինքնապաշտպանական ուժերի ու նրանց առաջնորդող հայ ազգային կուսակցությունների կողմից: Հայոց եկեղեցուն վերադարձվում էր նրանից խլված հարստությունը եւ ցարական իշխանություններն այլեւս բռնությամբ չէին յուրացնելու նրա ունեցվածքն ու ոտնահարելու իրավունքները: Սկսելու էին ազատորեն գործել կրթական օջախները եւ հայ երեխաներն այլեւս հարկադրված չէին լինելու մշտապես գտնվելով ցարական հատուկ ծառայությունների հսկողության ու սպառնալիքի տակ, ուսումը շարունակել գաղտնի պայմաններում:

Ինչպե՞ս, ինչպիսի՞ միջոցառումներով օգոստոսի 1-ի օրենքի նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտեցին հայության համընդհանուր շարժումն առաջնորդող Հ.Յ. Դաշնակցությունն ու հայ հոգեւորականությունը:

Հայ հոգեւորականությունը Կաթողիկոս Խրիմյանի գլխավորությամբ օգոստոսի 7-ին Թիֆլիսում կատարում է գոհաբանական մաղթանք, որին ՀՅԴ գնահատմամբ միանում են «Հայ աղաները՝ մտքի չարչիները եւ գրպանի բուրժուազիան...»[117]:

Հ.Յ. Դաշնակցությունը իր վերաբերմունքը օգոստոսի 1-ի օրենքի նկատմամբ արտահայտելու նպատակով օգոստոսի 8-ին հրատարակում է «Թռուցիկ թերթ», որի բովանդակությունը բնութագրում նրա, որպես քաղաքական կուսակցություն, որդեգրած պայքարի ուղղվածություն:

«Թռուցիկ թերթ»-ում Դաշնակցությունը նախ իր գոհունակությունն ու վերաբերմունքն է արտահայտում եկեղեցական կալվածքների ու հայ դպրոցների բացման կապակցությամբ՝ ընդգծելով. «Բնական ու

պարզ մի հարց է. կողոպտել էին ինձանից մի բան,-վերադարձնում են. խլել էին մի իրաւունք-յետ են տալիս:

...բռնակալութիւնը, որ երբէք օրէնք ու արդարութիւն չէ ճանաչում, ստիպուած եղաւ զիջել մի բոյլ ժողովրդի...միշտ է Եապոնեան էլ մեծ դեր խաղաց, բայց առանց մեր պահանջի, առանց մեր դիմադրութեան ու արիւնի ոչինչ չէր լինի»[118]:

Ցարիզմի կողմից իր իսկ հռչակած օրենքից հրաժարումը որակելով որպես հայ ժողովրդի հաղթանակ՝ Հ.Յ.Դաշնակցությունը միաժամանակ դատապարտում է օգոստոսի 7-ի օրենքի հեղինակների. այն է՝ ցարական իշխանությունների նկատմամբ դրսեւորած քծնողական, շողոքորթ վերաբերմունքը: Այս առնչությամբ ՀՅԴ դատապարտում ու քննադատում է հայ հոգեւորականությանը, նշելով, որ «Նա իր էութեամբ երբէք չի կարող յեղափոխական լինել: Նա սովոր է միշտ աղօթել. երէկ աղոթում էր Եհովային ու Նազովրեցուն, այսօր հեշտութեամբ կաղօթէ Ցարի, գուցէ եւ Սուլթանի կեանքի համար»[119]:

«Թռուցիկ թերթ»-ում Դաշնակցությունը հատկապես իր անհանդուրժողականությունն է արտահայտում Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ օգոստոսի 7-ին Թիֆլիսում հայ հոգեւորականության կատարված գոհաբանական մաղթանքի նկատմամբ:

Ըստ Հ.Յ. Դաշնակցության հրատարակած «Թռուցիկ թերթ»-ի վկայության, այդ օրերին եղել են առանձին անհատներ, որոնք հիմք ընդունելով օգոստոսի 7-ին Թիֆլիսում հայ հոգեւորականության կատարած գոհաբանական մաղթանքի արարողությունը, այն որակել են հետեւյալ անվայելուչ ու անմիտ արտահայտությամբ. «Դաւաճան է հայոց կաթողիկոսը, դաւաճան են այս մաղթանքը սարքողները...»[120]:

Դաշնակցությունը արտահայտելով իր անհամաձայնությունը հայոց կաթողիկոսին ու հայ հոգեւորականությանը տրված վերոհիշյալ գնահատականին, տալիս է իր գնահատականը. «Ինչ դաւաճանութեան մասին է խօսքը, ողորմելիներ: Ուր էք վիրաւորում ամենքին: Ասացէք ստրկութիւն, ասացէք քծնութիւն, ստորացուցիչ մարդկային արժանապատուութեան համար...»[121]:

Ինչու՞ էր Դաշնակցությունը, առաջնորդվելով օգոստոսի 7-ին Թիֆլիսում հայ հոգեւորականության կատարված գոհաբանական մաղթանքի արարողությամբ, մեղմ ասած, նման տգեղ ու անհարգելի արտահայտություններով բնութագրել բովանդակ հայության կողմից մեծագույն ու անառարկելի յեղինակություն վայելող Խրիմյան Հայրիկին: Իսկ մինչ այդ հիացմունքով դրվատելով ի պաշտպանություն

եկեղեցու ունեցվածքի եւ իրավունքների ցարիզմի դեմ Խրիմյան Հայրիկի դրսեւորած անգիջում պայքարը՝ Հ.Յ.Դաշնակցությունը իր պաշտոնաթերթ «Դրօշակ»-ում նշում է. «...ծերունի կաթողիկոսը գործի սկզբից մինչեւ այսօր, մի գովելի յամառութեամբ ու խորին հաստատակամութեամբ, պահպանում է իր բռնած դիրքը չարունակ պնդելով իր առաջի օրւայ ասածի վրայ-«Չեմ կրնար տալ, կը բողոքեմ»...Ծերունի հայրապետի այդ արժանաւոր դիրքը վերակենդանացնում է բոլորիս մէջ այն փառաւոր պատկերը, որ ստեղծել է հայ ժողովուրդը Խրիմեանի անւան շուրջը»[122]:

Ճիշտ է, երբ ցար Նիկոլայ 2-րդի կողմից 1903 թ. օգոստոսի 12-ին հռչակվեց հանրահայտ օրենքը, ծերունազարդ հայրապետի կողմից սկզբում նկատվում է որոշակի զսպվածություն եւ անվճռականություն, սակայն փոքր-ինչ անց, հատկապես հարավային Կովկասում բռնկված հայթուրքական ընդհարումների ժամանակ, Խրիմյան Հայրիկը բողոքի բազմաթիվ հեռագրեր է հղել Կովկասի փոխարքային, Ռուսաստանի ներքին գործոց նախարարին ու նաեւ անձամբ Նիկոլայ 2-րդին, որոնցում ամենայն շիտակությամբ ու համարձակությամբ ներկայացրել է հայության նկատմամբ ցարական պաշտոնյաների դրսեւորած կողմնակալ ու անօրինական վերաբերմունքը, ինչպես նաեւ հայկական բնակավայրերում թուրք հրոսակախմբերի կատարած կոտորածներն ու ավերառությունները:

Պիտի նկատել, որ հայոց հայրապետի գլխավորությամբ հայ հոգեւորականությունն այդ տարիներին Հ.Յ. Դաշնակցության եւ նրա ղեկավարությամբ գործող «Հայկական ինքնապաշտպանության Կեդրոնական կոմիտե»-ի ու կովկասահայության ինքնապաշտպանական ուժերն առաջնորդող Չինվորական մարմինների հետ գործել է միասնական ու համաձայնեցված: Ավելին, բազմաթիվ են այն հոգեւորականները, որոնք գործում մասնակցություն են ունեցել հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Այդ դեպքում ի՞նչով եւ ինչպե՞ս բացատրել Խրիմյան Հայրիկին ու հայ հոգեւորականությանը տված Դաշնակցության վերոհիշյալ գնահատականը: Պատճառն անկասկած կուսակցության որդեգրած ռազմավարությունն էր:

1904 թ. ՀՅԴ Խորհուրդը, չսպասելով հերթական 4-րդ Ընդհանուր ժողովի գումարմանը ընդունում ու հրատարակում է .«Կովկասյան Նախագիծ»-ը եւ իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը՝ որոշում. «Կովկասյան չարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեութեան...»[123]:

Ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարը Դաշնակցությունը որդեգրել էր դեռևս ՀՅԴ Խորհրդի «Կովկասյան նախագծի» ընդունումից առաջ. 1904թ. նոյեմբերին Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովում, որին բացի Հ.Յ.Դաշնակցությունից մասնակցել են նաեւ ռուս. լեհ, ֆինն, վրաց եւ լատիշ սոցիալիստական գաղափարներ դավանող հեղափոխական կուսակցությունները:

Համաձայն «Կովկասյան Նախագիծ»-ի եւ Փարիզի խորհրդաժողովում ընդունած որոշման, ցարիզմի դեմ մղվող պայքարը Հ.Յ.Դաշնակցության համար հետայսու դառնալու էր ծրագրային դրույթ եւ նրա գործունեությունում ձեռք էր բերում ռազմավարական նշանակություն:

Առաջնորդվելով հենց այդ ռազմավարությամբ, ՀՅԴ արժեւորում ու խրախուսում էր այն ամենը, ինչն ուղղված էր ընդդեմ ցարական ինքնակալության եւ հակառակը՝ քննադատում ու դատապարտում բոլոր այն երեւույթները եւ միջոցառումները, որոնք ուղղված չէին ընդդեմ ցարիզմի ու նրա վարած քաղաքականության: Հ.Յ.Դաշնակցության համոզմամբ, հայոց հայրապետն ու հոգեւորականությունը ոչ թե պիտի կատարեին գոհաբանական մաղթանքի արարողություն, որը նրա գնահատմամբ հավասարազոր է քծնանքի, այլ պիտի ընդվզեին ցարիզմի դեմ եւ իրենց բողոքն ու անհամաձայնությունն արտահայտեին նրա վարած քաղաքականության նկատմամբ:

Իր որդեգրած ռազմավարությունն էր թելադրում, որպեսզի Դաշնակցությունը իր հրատարակած «Թռուցիկ թերթ»-ում դատապարտողի իրավունքով գնահատի. «Հասարակութիւնը վերածւեց քծնողութեան, ստրկական ցոյցերի» եւ դրա համար մեղադրի հայոց կաթողիկոսին ու հոգեւորականությանը[124]:

Պիտի նկատել, որ ավելի քան տարօրինակ է ու չկռահատված ՀՅԴ գնահատականն ու որակումը: Չէ որ հայոց կաթողիկոսն ու հայ հոգեւորականությունը չէին կարող եւ որեւէ տեսանկյունից պարտավոր ու իրավասու չէին առաջնորդվել ինչ-որ քաղաքական կուսակցությունների ընդունած որոշումներով. մանավանդ, որ այն բնավ համահունչ չէր հայության շահերին: Իսկ ժամանակը միանշանակորեն ապացուցեց, հատկապես 1905-1906 թթ. Անդրկովկասում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, որ ՀՅԴ որդեգրած «Կովկասյան նախագիծը» այն է՝ «Կովկասյան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գոր-

ծունեութեան...» ռազմավարությունը ոչ միայն չէր բխում հայության շահերից, այլեւ ինչ-որ առումով վնասակար էր:

Բոլորովին այլ էր Կովկասում գործող յեղափոխական կուսակցությունների դիրքորոշումն ու գնահատականը կովկասահայության ուրախության, հայ հոգեւորականության կողմից օգոստոսի 7-ին Թիֆլիսում կատարած գոհաբանական մաղթանքի եւ ՀՅԴ նկատմամբ:

Հեղափոխական կուսակցությունները բացասաբար գնահատելով հայ հոգեւորականության կողմից օգոստոսի 7-ին Թիֆլիսում կատարած գոհաբանական մաղթանքը, այդ գործում մեղադրում էին Հ.Յ. Դաշնակցությանը՝ գտնելով, որ այդ ամենը կազմակերպվել է հենց նրա նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ: Նրանց գնահատմամբ Հ.Յ. Դաշնակցությունը որպես հեղափոխական կուսակցություն, ոչ թե պիտի հայ հոգեւորականության հետ միասին եկեղեցիներում կատարեր գոհաբանական մաղթանք եւ փառաբաններ ցարի բարեհաճ ու մարդասիրական վերաբերմունքը, այլեւ պետք է պայքարել ցարի եւ նրա վարած քաղաքականության դեմ[125]:

Դաշնակցության կողմից օգոստոսի 1-ի օրենքի ընդունման կապակցությամբ հրապարակած կոչերն ու ուղերձներն աներկբա ցույց են տալիս, որ այս առնչությամբ նրա հասցեին հեղափոխական կուսակցությունների հնչեցրած մեղադրանքները միանգամայն անհիմն են: Կարելի է ասել, որ այդ կուսակցությունները ձգտել են Դաշնակցության պայքարը գլխավորապես ուղղել ընդդեմ ցարական իշխանությունների: Իսկ ՀՅԴ թեպետ ընդունել էր «Կովկասյան նախագիծը», այնուամենայնիվ, եղել ու մնում է նախեւառաջ ազգային խնդիրներով առաջնորդվող կուսակցություն:

Մերժելով հեղափոխական կուսակցությունների կողմից Հ.Յ. Դաշնակցության հասցեին հնչեցրած մեղադրանքը՝ ՀՅԴ Ալեքսանդրապոլի կոմիտեն վերոհիշյալ վերլուծականում նշում է, որ դաշնակցականները «...ինչպէս միշտ այս անգամ էլ շարունակ համոզել են ժողովրդին կռւել բուրժուազիայի անօրինական ձգտումների դէմ, տարածելով այն միտքը, որ քանի դեռ միապետական ռէժիմը Ռուսաստանում գոյութիւն ունի, ոչ մի լուսաւոր երեւոյթ տեւական լինել չի կարող: Այսօրւայ տրւածքը վաղը կարող է յետ առնվել: Եւ իսկոյն այն մարդիկ կարող են Դաշնակցութեան մասին այդպիսի լուրեր տարածել, որոնց ոչնչութիւնը Դաշնակցութեան գոյութեամբ աւելի եւս ակնյայտ է դառնում»[126]:

Որպես ընդհարացնող խոսք պետք է նշել, որ ինչպիսին էլ լինի հեղափոխական կուսակցությունների կողմից պատմական այդ ժամա-

նակահատվածում Հ.Յ. Դաշնակցության գործունեությանը տրված գնահատականը, մի իրողություն անժխտելի է. հայոց եկեղեցու իրավունքների վերականգնման եւ ունեցվածքի պաշտպանության համար ցարիզմի դեմ հայ ժողովրդի ծավալած պայքարն ավարտվել է հաղթանակով եւ այդ գործում անվիճելի ու անգնահատելի է Հ.Յ. Դաշնակցության ծառայությունը:

---

1. Տե՛ս «Նիթեր Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութեան համար», հ. Բ, էջ 7-104:
2. Նույն տեղում, էջ 59:
3. Նույն տեղում:
4. Գ. Լազեան, Հայաստան եւ Հայ Դատը, էջ 130:
5. «Հայրենիք», ամս., թիւ11, էջ 85:
6. Գ. Լազեան, Հայաստան եւ Հայ Դատը, էջ 130-131:
7. «Հայրենիք», ամս., թիւ11, էջ 85:
8. Նիւթեր, հ. Բ, էջ 326-334:
9. Նույն տեղում, էջ 328:
10. Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», Պէյրութ, 1991, էջ 81:
11. Նույն տեղում, էջ 69:
12. Հայկ Ածեմեան, «Հայոց Հայրիկ», Թավրիզ, 1927, էջ 707:
13. ՀՅԴ ԿԱ, թղ. 353, գ. 2, էջ 1:
14. Տե՛ս նույն տեղում:
15. Նիւթեր, հ. Բ, էջ 327:
16. ՀՅԴ ԿԱ, թղ.353, գ. 2, էջ 3:
17. Նիւթեր. հ. Բ, էջ 327:
18. Ն. Տաճապետեան, «Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով», Աբէնք, 1988, էջ 64:
19. «Հայրենիք», ամս., թիւ 11, էջ 85-86:
20. Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», էջ 82-83:
21 Հայկ Ածեմեան, «Հայոց Հայրիկ», Թավրիզ, 1927, էջ 757:
22. Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», էջ 83:
23. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 27, էջ 1:
24. Մ. Վարանդեան, «Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն», էջ 272:
25. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 299, թ. 25-29:
26. Տե՛ս Նույնը, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 124-129:
27. Նույն տեղում, թ. 123:
28. «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության». հ.Գ, Երեւան, 1997, էջ 81:
29. Նույն տեղում:
30. Հայկ Ածեմեան, «Հայոց Հայրիկ», էջ 761:
31. Նույն տեղում, էջ 762:

32. Նույն տեղում, էջ 763:
33. «Հայրենիք», ամս., 1943, թիւ 5, էջ 74:
34. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 275:
35. «Հայրենիք», ամս., 1943, թիւ 5, էջ 74:
36. Մայխաս. «Ապրումներ»:
37. Է. Կոստանդյան, «Մկրտիչ Խրիմյան». Երեւան, 2000. էջ 414:
38. Հայկ Ածեմեան, «Հայոց Հայրիկ», էջ 761:
39. Նիւթեր, հ. Բ, էջ 328:
40. Նույն տեղում, էջ764:
41. Մ. Վարանդեան, նշվ. աշխէջ 275:
42. «Ռուստոմ(Մահուան վաթսունամեակին առթիւ), 1979, էջ 14:
43. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 276:
44. «Ռուստոմ(Մահուան վաթսունամեակին առթիւ), էջ 14:
45. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 276:
46. Նույն տեղում, էջ 277:
47. «Դրօշակ», 1903, թիւ 7, էջ 293:
48. Նույն տեղում:
49. Նույն տեղում, էջ 294:
50. «Ռուստոմ(Մահուան վաթսունամեակին առթիւ), էջ 14:
51. Նույն տեղում:
52. «Դրօշակ», 1903, թիւ7, էջ 294:
53. Նույն տեղում, էջ 295:
54. Նույն տեղում, էջ 30:
55. Նույն տեղում:
56. Նույն տեղում:
57. Նույն տեղում, էջ 302:
58. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 278:
59. ՀՀ ԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 333, թ. 189:
60. Տե՛ս նույնը, թ. 342:
61. ՀՅԴ ԿԱ, թղ. 394, գ. 2, էջ 1:
62. Նույն տեղում:
63. Նույն տեղում:
64. Տե՛ս նույնը, թղ. 394, գ. 2, էջ 1:
65. Նույն տեղում, էջ 2:
66. Տե՛ս նույն տեղում:
67. Նույն տեղում:
68. Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 7, էջ 296:
69. Նույն տեղում:
70. Տե՛ս նույն տեղում:
71. Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 9, էջ 326:
72. Տե՛ս «Նիւթեր..., հ.Գ, էջ 145-146:

73. Յ. Ստեփանեան, Նիկոլ Դուման, Պէյրութ, էջ 72:
74. Նոյն տեղում, էջ 307:
75. Տե՛ս նոյն տեղում:
76. «Հայրենիք», 1941, թիւ , էջ 154:
77. Նոյն տեղում:
78. Նոյն տեղում:
79. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 286:
80. Նոյն տեղում:
81. Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 9, էջ 326:
82. Նոյն տեղում:
83. Տե՛ս նոյն տեղում:
84. Նոյն տեղում
85. Տե՛ս նոյն տեղում, էջ 326-327:
86. Նոյն տեղում:
87. Նոյն տեղում:
88. Նոյն տեղում:
89. Նոյն տղում:
90. Տե՛ս «Դրօշակ», 1903, թիւ 7, էջ 101-120:
91. ՀՅԴ ԿԱ, թղ. 450, գ. 10, էջ 10:
92. . «Հայրենիք», ամս., 1936, թիւ 11, էջ 87:
93. Տե՛ս նոյն տեղում:
94. Տե՛ս նոյն տեղում:
95. Նոյն տեղում:
96. Նոյն տեղում, էջ 88:
97. Նոյն տեղում:
98. Նոյն տեղում, էջ 88:
99. Նոյն տեղում, էջ 89:
100. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 287:
101. «Նիւթեր...». հ. Բ, էջ 111:
102. Նոյն տեղում:
103. Նոյն տեղում, էջ 119:
104. Նոյն տեղում, էջ 118:
105. «Դրօշակ», 1905, թիւ 6, էջ 89-90:
106 Նոյն տեղում, թիւ 7:
107. Նոյն տեղում:
108. Հ. Տասնապետեան, «Ժննտնանեայ հաշուեկշիռ», Պէյրութ, 1985, էջ 26:
109. ՀՅԴ ԿԱ, թղ. 324, գ. 77:
110. Տե՛ս նոյն տեղում:
111. Նոյն տեղում:
112. Նոյն տեղում:
113. Նոյն տեղում:

114. «Նիւթեր...». հ. Գ, էջ 95:
115. «Դրօշակ», 1903, թիւ 9, էջ 328:
116. ՀՅԴ ԿԱ, թղ. 356, գ. 20, էջ 8:
117. «Դրօշակ», 1903, թիւ 9, էջ 328:
118. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 27:
119. Նոյն տեղում:
120. Նոյն տեղում:
121. Նոյն տեղում:
122. Նոյն տեղում:
123. «Նախագիծ կովկասեան գործունեութեան», ժնեւ, 1906, էջ 2:
124. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 27:
125. ՀՅԴ ԿԱ, թղ. 356, գ. 20, էջ 8:
126. Նոյն տեղում:

ԳԼՈՒԽ 2

1905-1906 ԹԹ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԹԱԹԱՐԱԿԱՆ) ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

1905 թվականը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նախադեպը չունեցող այնպիսի իրադարձություններով, որոնք անակնկալ էին ոչ միայն բովանդակ հայության, այլեւ ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-հեղափոխական կուսակցությունների համար: Անդրկովկասում բռնկվում են հայ-թուրքական ընդհարումները, եւ այս անգամ արդեն արեւելահայության վրա է ծառանում ջարդերի սպառնալիքը:

Պատմական նույն ժամանակահատվածում քաղաքական կարեւորագույն իրադարձություններ էին տեղի ունենում ցարական Ռուսաստանում, որոնք իրենց վճռորոշ ազդեցությունն էին գործում եւ խորը հետք թողնում կայսրության տիրապետության տակ գտնվող կովկասյան ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում:

19-րդ դարի վերջերին ռուսական հսկայածավալ կայսրությունում բռնկվում են ժողովրդական ցույցեր ու գործադուլներ, որոնք վերածվում են զինված բախումների: Կայսրության ներքին կյանքում տեղի ունեցող երեւույթներին զուգորդվում է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը: Ռուս-Ճապոնական պատերազմում մի շարք ճակատամարտերում ցարական զորաբանակների կրած պարտությունները ավելի են խորացնում հեղափոխական շարժումները, որոնք սպառնում էին տարածվել նաեւ Անդրկովկաս:

Ցարական Ռուսաստանը հայտնվում է ծանրագույն կացությունում:

Կայսրության մասն կազմող Անդրկովկասի բնակչության մեծամասնությունը, ինչպես հայտնի է, հայերն էին, վրացիներն ու կովկասյան բուրքերը, կամ ինչպես ընդունված է ասել՝ թաթարները, որոնք գուտ տնտեսական ու մշակութային առումով գտնվում էին տարբեր մակարդակներում:

Այդ նույն ժամանակահատվածում, երբ կայսրությունում ծավալվում էր հեղափոխական շարժումը եւ դեռեւս շարունակվում էր ռուս-ճապոնական պատերազմը, Անդրկովկասում բռնկվում է հայ-թուրքական ընդհարումը:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերաբերյալ, հատկապես «Դրօշակի» էջերում, կան բազմաթիվ վերլուծություններ ու տեսակետներ:

Այն հեղինակները, որոնք անդրադարձել են ընդհարումների պատճառների վերլուծությանն ու բնութագրմանը, որպես կանոն, առավելապես ընդգծում են տնտեսական եւ ազգային, ինչպես նաեւ կրթական ու մշակութային գործոններով պայմանավորված երկու ազգերի հակադրությունները ու թշնամանքը: Կովկասյան թուրքերը(թաթարներ), անշուշտ, քաջածանոթ էին իրենց արյունակից օսմանյան թուրքերի դեմ հայության մղած բազմամյա ազգային-ազատագրական պայքարին, որը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ նրանց ազգային շահերի ու հայի նկատմամբ դրսեւորվող զգացումների ու վերաբերմունքի վրա:

«Անդրկովկասեան գիտակից, վարիչ թաթարներու աչքին,- գրում է Մ. Վարանդյանը,- հայը անհաշտ հակառակորդ մըն էր եւ այդ պատճառով, որ նա տասնեակ տարիներէ ի վեր կռիւ կը մղէր, սահմանէն անդին, ցեղակից տաճիկ կայսերութեան դէմ, ճգտելով ստեղծել, Եւրոպայի օգնութեամբ ազատ, ինքնաւար Հայաստան: ...մեր դրացիները - եւ ոչ միայն թաթարը - կը նախանձէին տակաւին հայուն, կատէին անոր յառաջադիմութիւնը, եւ ահաւոր վտանգ կը նշմարէին «հայկական կոմիտէներուն» մէջ...»[1]:

Անդրադառնալով հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերլուծությանը՝ Վահան Մինախորյանն ընդգծում է երկու հիմնական նախադրյալներ. «Տնտեսապէս նրանք արդիւնք էին թուրք նորաբոյս բուրժուազիայի եւ աւատապետութեան պայքարի՝ ուղղուած հայ բուրժուազիայի եւ տնատիրութեան դէմ, որոնք դրութեան տէրն էին Բագուում: Քաղաքականապէս, այդ ընդհարումները արգասիք էին ռուս միապետութեան սադրանքների եւ նպատակ ունէին հեռու պահել յեղափոխութիւնից Անդրկովկասը, տեղական ազգամիջեան պատերազմների միջոցով, ինչպէս նաեւ հայ ըմբոստ ժողովրդի ողնաշարը կոտրել»[2]:

ՀՅԴ Բյուրոյին հասցեագրված նամակներից մեկում, անդրադառնալով հայ-թուրքական ընդհարումների սանձազերծման գործում Ռուսաստանի մասնակցությանը, Դումանը նշում է....այստեղ ռուսական բիւրօկրատիան, իր գոյութիւնն ու դրութիւնը պահպանելու համար, մեծացրեց իր ճնշող ոյժը մութ ոյժերով եւ անբաւարար գտնելով այդքանը, ի վերջոյ, ժողովուրդներն ու ազգերը կանգնեցրեց իրար դէմ»[3]:

Հայ-թաթարական ընդհարումների պատճառներին իր «Միացյալ անկախ Թուրանյա» աշխատությունում անդրադարձել է նաեւ Ջարեվանդը: Այդ աշխատությունում ներկայացնելով «Հայ-թաթարական ընդհարումները», Ջարեվանդը նշում է այդ ընդհարումները պայմանավորող մի շարք գործոններ, որոնք պատճառ հանդիսացան «եղբայրասպան կռվի»[4]:

Նրա համոզմամբ «Պանթուրանականության ուսումնասիրությունը նոր լույս կսփռե հայ-թաթարական հարաբերություններու այդ «առեղծվածային» դրվագին վրա, երեւան բերելով անոր թաքուն ազդակները»[5]:

Ըստ Ջարեվանդի, հայ-թուրքական ընդհարումների բռնկման հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, Օսմանյան Թուրքիայի հետապնդած հեռահար նպատակներն էին, նրա որդեգրած պանթուրանական ծրագրերը: Իր որդեգրած պանթուրանական ծրագրերը իրականացնելու համար Թուրքիային նպաստավոր, հարմար պահ եւ առիթ էր հարկավոր: Իսկ այդ նպաստավոր ու հարմար պահը նրան ընձեռում է ռուս-ճապոնական պատերազմը, առավել եւս ռազմաճակատում ռուսական զորքերի կրած պարտություններն ու կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումը:

«Մոնղոլ հորեղբորորդին, Ճապոնի հաջողությունները, գրում է Ջարեվանդը,- թե տվեր էին իրենց հույսերուն: Մեծ գործին հառաջաբանն էր, որ անոնք կրնային շարժումը վերածել Ռուսիոյ դեմ ապստամբութեան. հակառակ պարագային «թուրք հողը» կմաքրեին անոր վրա իրավունք ունենալ հավակնող եւ իրենց համատարրությունը խանգարող հայեն: Անշուշտ կարգը վրացիներուն ալ պիտի գար: Բայց կարեւորը նախ հայերը մաքրելն էր»[6]:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ, իրոք, պանթուրանականության մասին Ջարեվանդի պնդումներն ավելի քան տեղին են եւ իրական:

Եթե հիմք ընդունենք Ջարեվանդի վերոհիշյալ տեսակետը, ապա պիտի նշել, որ Անդրկովկասում 1905-1906 թթ. ծավալված հայ-թուրքական ընդհարումները գործնականում պանթուրանականության առաջին դրսեվորումներն էին, որոնց առաջին զոհը պիտի դառնար կովկասահայությունը:

Մինչեւ ընդհարումների սանձազերծումը, Պոլսից եկած հատուկ գործակալների ջանքերով Բաքվում կազմակերպվում է համաիսլամական գաղափարներ քարոզող մի կազմակերպություն, որը նպատակադրվում է միավորել մահմեդականության շիա եւ սյունի ճյուղերն ու

առաջին իսկ հնարավորության դեպքում Կովկասը մաքրել քրիստոնյաներից: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Կովկասը նվաճելու ծրագիր: Ռուս հայտնի պատմաբան, հրապարակախոս Ալ. Ամֆիտատրովի պնդմամբ Անդրկովկասում համաիսլամական գաղափարների տարածումը իրականացվել է սուլթան Աբդուլ Համիդի գիտությամբ եւ հրահանգով:

«Աբդուլ Համիդը,- գրում է Ալ. Ամֆիտատրովը,- հեռանկատ մարդ է: Նա նախատեսեց համապատասխանականությունից առաջանալիք վտանգը եւ ժամանակին, որպես ողղահաւատների խալիֆ, հակադրեց նրանց համաիսլամական գաղափարը»[7]:

Համաիսլամիզմի քարոզիչները հաստատվելով Բաքվում, աստիճանաբար եռանդուն գործունեություն են ծավալում Կովկասի գրեթե բոլոր մահմեդաբնակ վայրերում եւ իրենց նպատակն իրականացնելու համար սպասում քաղաքական նպաստավոր պայմանների: Նրանք իրենց քարոզչությունը ծավալելու նպատակով Բաքվում հրատարակում են «Կասպի» լրագիրը:

«Նորին կայսերական մեծության փոխարքա, կոմս Իլլարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին» ներկայացրած զեկուցագրում Կովկասում համաիսլամության գաղափարների ու ծրագրերի տարածման մասին ընգծում է նաեւ Երեւանի նահանգի հոգեւոր թեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը[8]:

ՀՅԴ Նախիջեւանի «Քարաբերդ» կոմիտեի կողմից ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած «Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թուրքական ընդհարումների մասին: Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10ը» խորագիրը կրող տեղեկագրում, հեղինակներն անդրադառնալով ընդհարումների սկզբնապատճառների վերլուծությանը՝ նշում են. «Հասարակ ժողովուրդը, մանավանդ գիւղացիք, հեռու մնալով քաղաքականութեան եւ լուսաւորութեան ամենատարրական միջոցներից, դեգերում էին խավարի մէջ ու մոլլաների ղեկաւարութիւնը նոցա մէջ պահպանել են այն հայացքները, որոնք այսօր նոցա մէջ ծաղկեցնում են ստրկական ոգի, արեւելյան հնազանդութիւն...Այդ քիւրք ամբոխը մի կոյր գործիք, վնասակար զէնք է դարձել զանազան խաների ու բէկերի ձեռքին»[9]:

Տեղեկագիրը Հայ-թուրքականք ընդհարումների բռնկման գործում առավելապես առանձնացնում է մահմեդական բնակչության հետամնացությունը եւ կրոնական կույր հավատն ու մոլեռանդությունը:

Համաձայն Կարապետ վարդապետի զեկուցագրի, Կովկասում բռնկված արյունահեղ դեպքերի պատճառը նախեւառաջ կիսագրագետ

եւ մասամբ էլ գրագետ թաթարներն են: Նրանց հետ համագործակցում ու նրանց են պաշտպանում իշխանության տարբեր օղակներում աշխատող թաթար աստիճանավորներն ու պաշտոնյաները, որոնց միացել են նաեւ Թուրքիայից Կովկաս ժամանած սեիդներն ու սոֆտերը: Նրանք մեծ գործունեություն են ծավալում Կովկասի մոլեռանդ մահմեդական բնակչության մեջ քարոզելու ու տարածելու համաիսլամության գաղափարներն ու ծրագրերը:

«...համաիսլամիզմը,-նշում է Կարապետ վարդապետը,-մահմեդականության համար ոչ միայն կրոնական, այլեւ քաղաքական իդեալ է, այն է՝ միավորել բոլոր ուղղահավատ մահմեդականներին մեկ խալիֆի՝ թուրքական սուլթանի իշխանության տակ»[10]:

Ռուս-ճապոնական պատերազմը, Ռուսաստանում ծայր առած հեղափոխական շարժումները քաղաքական այն նպաստավոր պայմաններն էին, որոնք հնարավորություն ընձեռեցին պանիսլամիզմի ջատագովներին՝ իրականացնելու Կովկասը հայերից ազատելու եւ այն նվաճելու ծրագիրը:

«...կովկասեան իշխանութիւնը,-նշում է Ամֆիտեատրովը,-լիապէս օգնութիւն եւ խրախոյս գտնելով Պետերբուրգի աւելի եւս կոյր ու մոլորված կենտրօնի կողմից, անսպասելի կերպով դաշնակից դարձաւ իր ամենախորամանկ եւ ամենակատաղի արտաքին թշնամիներից մէկին՝ ծայրագաւառային ազգաբնակութեան մի ազգային խմբի դէմ, որ դեռ քիչ ժամանակ առաջ ամենից աւելի խաղաղ, ամենից աւելի օգտակարն ու, թերեւս, ամենից ավելի պահպանողականն էր»[11]:

Ընդհարումների պատճառները վերլուծելիս հեղինակները շրջանցում եւ չեն անդրադառնում մի կարեւոր իրողության, այն է՝ Հ.Յ. Դաշնակցության որդեգրած ռազմավարությանը՝ Կովկասյան նախագծին, որի մասին որոշումը ինչպես արդեն նշվել է, ընդունվել էր ՀՅԴ - Խորհրդի կողմից, իսկ դրանից առաջ 1904թ. նոյեմբերին Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովում:

Փարիզում կայացած խորհրդաժողովում ընդունած վերոհիշյալ որոշումը եւ խորհրդաժողովին ՀՅԴ մասնակցությունը չէին կարող դուրս մնալ ցարական համապատասխան ծառայությունների տեսադաշտից: Հետեւաբար, ցարական իշխանությունների վերաբերմունքը Հ.Յ.Դաշնակցության նկատմամբ, որպես կայսրության դեմ պայքարելու ռազմավարություն որդեգրած հեղափոխական կուսակցության, պիտի որ բացասական լիներ:

«Իշխան Գոլիցինը,-գրում է Ալ. Խատիսյանը,-կը կարծէր, որ պէտք է հայերը աւելի ճնշել, որովհետեւ անոնք աւելի կազմակերպած եւ աւելի ուժեղ կերեւային իր աչքին»[12]:

Հարկ է նշել, որ մինչեւ կայսր Նիկոլայ 2-րդի կոմից 1903 թ. հունիսի 12-ի վերոհիշյալ օրենքի հռչակումը, հայ ժողովուրդը կայսրության բազմաթիվ ազգություններին հավասար եւ, գուցե առավել հավատարմորեն, ծառայում էր ցարական պետության շահերին: Հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից, երբ թուրքական բռնակալության ջարդարար սուրը սպառնում էր ողջ Արեւմտահայաստանը վերածել արյան հովտի, ռուսական, թուրքական կայսրություններում եւ արտասահմանում բնակվող հայության շրջաններում ծայր առած շարժումներն ուղղված էին միմիայն թուրքերի ու քրդերի կողմից բռնադատվող արյունակիցների իրավունքների պաշտպանությանը: Եվ այդ պայքարը ուղղված էր միմիայն թուրքերի դեմ:

Ազգային-ազատագրական շարժումների հիմքի վրա կյանքի կոչված հայ ազգային կուսակցությունների գործողություններում, համաժողովների ու ղեկավարող մարմինների որոշումներում մինչեւ 1903թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումը, դժվար է գտնել գործնական որեւէ արարք, փաստաթուղթ, որոնք պարունակեին հակառուսական ուղղվածություն ու բովանդակություն:

Կայսր Նիկոլայ 2-րդին ներկայացրած զեկուցագրում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը, նշելով Հ.Յ. Դաշնակցության ձեւավորման նախադրյալներն ու պայքարի նպատակն ու ուղղվածությունը, խոստովանում է. «Հայ յեղափոխական «Դաշնակցութիւն» ընկերակցութիւնը, որ իր ժամանակին ստեղծուել է թուրքահպատակ հայերին ազատագրելու Թուրքիայի իշխանութիւնից եւ Ռուսաստանում իրան արտահայտել է միայն դրամ ժողովելով, զէնք առնելով եւ կամաւորներ կազմակերպելով Թուրքիա ուղարկելու համար...»[13]:

Այսուհանդերձ, ՀՅԴ Կովկասյան գործունեության ուսումնասիրությունն այսօրվա մատնանշում է, որ հունիսի 12-ի օրենքի հռչակումից հետո, կուսակցության պայքարը Կովկասում չէր սահմանափակվում սոսկ եկեղեցու ունեցվածքի եւ իրավունքների պաշտպանությամբ: Հայոց եկեղեցու ունեցվածքի ու իրավունքների պաշտպանության համար մղվող պայքարը, անտարակույս կազմում է ազգային-ազատագրական պայքարի անքակտելի մասը:

Պատմական այդ ժամանակահատվածում Հ.Յ. Դաշնակցությունը հունիսի 12-ի օրենքի հռչակումից հետո, ցարիզմի դեմ մղվող պայքա-

րում առաջնորդվում է ոչ միայն ազգային խնդիրների լուծմամբ, այլեւ հանդես գալով որպես քաղաքական կազմակերպություն, հետապնդում է նաեւ զուտ քաղաքական նպատակներ:

Ընթանում էր ռուս-ճապոնական պատերազմը: Մի շարք ճակատամարտերում ռուսական զորքերի պարտությունը գոհունակությամբ էին ընդունվում ռուս հեղափոխական կուսակցությունների կողմից: Հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները՝ Հնչակյաններն ու Հ.Յ.Դաշնակցությունը, կարծես չուզենալով իրենց որդեգրած հակացարական ռազմավարությամբ ու գործունեությամբ դույզն-ինչ զիջել ռուս հեղափոխական կուսակցություններին, նույնպես հանդես էին գալիս հօգուտ պատերազմում ցարական Ռուսաստանի պարտության:

Պատերազմը շարունակելու եւ բանակը համալրելու նպատակով ցարական իշխանությունների կողմից հայտարարված զորակոչի դեմ, այդ օրերին պայքար էին մղում ոչ միայն ռուս հեղափոխական կուսակցությունները, այլեւ Հ.Յ.Դաշնակցությունն ու Հնչակյանները:

Հ.Յ.Դաշնակցության ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն իր պաշտօնաթերթի՝ «Դրօշակ»-ի մեջ տպագրում է հայությանը ուղղված «Կովկասում սպասուող պահեստի զօրակոչի առթիւ» (Ռուս-ճապոնական պատերազմի համար)» խորագիրը կրող ուղերձը [14]:

Սասունի դեպքերից ընդամենը ամիսներ էին անցել, կովկասահայության առաջ ծառացել էր հայոց եկեղեցու ունեցվածքը իշխանությունների բռնազավթումից ու կամայականություններից պաշտպանելու դժվարագույն եւ հույժ կարեւոր խնդիրը: Թվում է, որ ցարական իշխանությունների նկատմամբ ՀՅԴ պիտի դրսեւորեր զուսպ եւ հավասարակշռված վերաբերմունք:

Այսուհանդերձ, Հ.Յ.Դաշնակցությունը ուղերձ է հղում հայությանը, որտեղ ներկայացնելով կայսրության տարածքում բռնադատված ժողովուրդների նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության, պատերազմի հակաժողովրդական, կործանարար նշանակությունը, կոչ է անում, ընդամենը վկայակոչելով Լեհաստանի օրինակը, խափանել զորակոչը եւ որեւէ արձագանք չտալ կառավարության հայտարարած զորակոչին:

Ուղերձում չեչտելով, որ պատերազմի եւ իր գործած ոճիրների հետեւանքով կառավարությունը հայտնվել է հոգեւարքի մեջ, Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն նշում է. «Անմտութիւն է ոչխարի պէս ընդառաջ գնալ դէպի մի անարգ եւ գարշելի մահ, անմտութիւն է եզան նման վիզը երկարացնել՝ ռուս կառաւարութեան յաղթանակը պայմանաւորելու

...Համաշխարհային խաղաղութեան համար անհրաժեշտ է ռուսական բռնապետութեան պարտութիւնը...Իր երկաթէ ծանրութեամբ նա ճնշում է բովանդակ աշխարհի բոլոր ժողովրդական շարժումները: Պէտք է ազատել տառապող մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը ռուսական վտանգից...

Այս սեւ օրերին ոչ մի հայ իրաւունք չունի ռուսական բռնապետութեան համար կուելու: Մենք ինքներս չուժեղացնենք այն թունոտ ձեռքը, որպէսզի յետոյ աւելի չտանջւենք, չամրացնենք այն բազուկը, որպէսզի յետոյ չկորանանք նրա բիրտ ծանրութեան տակ:

Դիմադրե՛նք, կուե՛նք քանի կարող ենք, քանի ապրում ենք»[15]:

1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում ցարիզմի կրած պարտություններն ավելի են խորացնում ժողովրդական շարժումները: Կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումները տարածվում էին նաեւ Անդրկովկասում:

ՀՅԴ կովկասյան գործունեության ուսումնասիրությունը հավաստում է, որ Դաշնակցությունն առավել գործուն կերպով, քան մյուս քաղաքական կուսակցությունները, մասնակցել է իշխանությունների դեմ կազմակերպված բողոքի զանգվածային միջոցառումներին եւ գործադուլներին:

Դեռեւս 1903թ. հուլիսի 13-ին եւ 14-ին Բաքվում տեղի ունեցած երկօրյա գործադուլներին, որի կազմակերպմանը գործուն կերպով իր նպաստն է բերել նաեւ Դաշնակցությունը, մասնակցել են 40.000 բանվորներ:

Հ.Յ. Դաշնակցություն Արեւմտյան բյուրոյի անդամ Խաչատուր Մալումյանի (Ակնունի) գնահատմամբ՝ գործադուլները «բռնեց ամբողջ Ռուսաստանը, գուցեեւ Եվրոպական բանվորական շարժման պատմության մեջ մի տեղ, որ կարող է կենտրոնների «նախանձը» շարժել», մասնակցում էին նաեւ բուրք բանվորներ:

Նույնիսկ 1905 թ. կեսերին, երբ հայ-թուրքական ընդհարումներն արդեն ընգրկում էին Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերն ու հասել էին իրենց կիզակետին, Խ. Ակնունին «Դրոշակ»-ում տպագրված հոդվածում կրկին անգամ հաստատելով ցարիցմի նկատմամբ Դաշնակցության որդեգրած հեղափոխական պայքարի անխախտ տրամադրվածությունն ու դիրքորոշումը՝ նշում է. «...Կռիւը կլինի անդադրում եւ համառ: Փոքրիկ զիջումներն ու քաղաքական կարկատանները երբեք չեն կարող մարել բորբոքւած հրդեհը: Յեղափոխական շունչը կը կայծէ նրան մինչեւ այն օրը, երբ գայիտանն ու թագը կը դառնան մուգէյների զարդ, Պետրո-Պաւլովսկիի տեղ հպարտօրէն կը բարձրանայ Ազատութեան արձանը, կայսերական ու փոխարքայական պալատները

Պետերբուրգ, Վարշաւա եւ Թիֆլիս կը վերածուին ժողովրդական պալատների[16]:

Հարկավոր էր խեղդել կովկասեան ժողովուրդների հեղափոխական տրամադրութիւնները, թոյլ չտալ հայերին, վրացիներին ու թուրքերին միավորվելու՝ ընդդեմ ցարական իշխանութեան:

Հայութեան եւ հայ ազգային կուսակցութիւնների նկատմամբ ցարական իշխանութիւնների դրսեւորած բացասական վերաբերմունքի, հայ-թուրքական ընդհարումների բռնկման պատճառների մասին ուշագրաւ դատողութիւններ են պարունակում վերոհիշեալ Խ. Ակնունում հասցեագրած հայ ազգային-հասարակական անվանի գործիչ Վահան Արծրունու(նա ՀՅԴ անդամ չէր եւ այդ ժամանակ թղթակցում էր «Մշակ» թերթին-Հ.Գ.) նամակում:

Ըստ Վահան Արծրունու, իշխանութիւնները հայութեանը դիտում էին որպես անվստահելի, հակակառավարական տարր: Կովկասեան բարձր իշխանութիւնները եւ հատկապես զինվորականութիւնը այն կարծիքէ էին, որ եթե հայերը չլինեին, ապա Կովկասը հանգիստ կմնար: Նրանց համոզմամբ վրաց բնակչութեան հակացարական տրամադրութիւնները նոյնպես հետեւանք էին հայերի սադրանքների[17]:

«Եւ վարչութիւնը,-գտնում է Վ. Արծրունին,-վարւում էր հայերի հետ ճիշտ այնպես, ինչպէս Ռուսաստանում վարվում էր հրեաների, լեհերի ու ռուս ինտելեգենցիայի հետ, այսինքն պագրոմների սիստեմով...»[18]:

Ինչու՞ էին իշխանութիւններն ավելի վստահում ու պաշտպանում մահմեդականութեանը եւ ոչ քրիստոնեա հայութեանը: Վ. Արծրունու համոզմամբ դա պայմանավորված էր թուրք տարրի խավարամտութեամբ ու վայրենութեամբ: Եթե թուրք տարրը այդքան խավարամիտ ու վայրենի չլիներ, ապա իշխանութիւններին չէր հաջողվի Կովկասի հայ եւ թուրք բնակչութեան մեջ խորացնել զինված բախումները[19]:

Կովկասի ազգաբնակչութեան նկատմամբ ցարիզմը վարում էր ոչ միանշանակ, տարաբնոյթ քաղաքականութիւնը:

Քանի որ խավարամիտ մահմեդականութիւնը հեռու էր հեղափոխական տրամադրութիւնից եւ կայսրութեան համար վտանգ չէր ներկայացնում, ուստի իշխանութիւնների վերաբերմունքը նրա նկատմամբ միանգամայն ավելի մեղմ էր: Դրան հակառակ Վրաստանում, հատկապես Գուրիայի շրջանում, հեղափոխական եւ անջատողական տրամադրութիւնները խեղդելու նպատակով իշխանութիւնները զորքի ու ոստիկանական ուժերի միջոցով դիմել են ծայրահեղ միջոցների՝ սպանութիւնների եւ դաժան բռնութիւնների:

Հայ բնակչութեանը ներքաշելով ազգամիջեան պատերազմի մեջ, իշխանութիւնները հաշվարկել էին, որ հայութիւնն ու հայ հեղափոխական կազմակերպութիւնները դեպքերի թելադրանքով անկասկած կզբաղվեն ինքնապաշտպանութեան կազմակերպմամբ եւ ժամանակ ու հնարավորութիւն չէին ունենա ներքաշվելու հեղափոխական շարժման մեջ[20]:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերլուծութեանն ու գնահատմանը Դաշնակցութիւնը պաշտոնապես անդրադարձել է 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում կայացած ՀՅԴ Ռայոնական ժողովում: Այդ ժամանակ ընդհարումներն արդեն մի քանի ամիս է, ինչ շարունակվում էին: Դաշնակցութիւնը պիտի անհրաժեշտաբար քննարկեր ու արժեւորեր բոլոր այն էական գործոնները, որոնք պատճառ հանդիսացան հայ-թուրքական ընդհարումների բռնկմանը:

Ընդհարումներն ավելի ու ավել էին ծավալվում ու խորանում եւ Կովկասում տեղի ունեցող իրադարձութիւնների սահմանումն ու արժեւորումն անհրաժեշտ էր իրականութիւնից բխող համապատասխան եզրահանգումներ կատարելու, ըստ այդմ կշռադատված որոշումներ կայացնելու եւ դրանք կենսագործելու համար:

Ռայոնական ժողովում այս հարցի քննարկման ժամանակ ժողովականները ներկայացրել են մի շարք կարծիքներ եւ որպես ընդհանրացնող, պաշտոնական տեսակետ արձանագրվել է հետեւյալ ձեւակերպումը. «1. Կառաւարութեան պրովակացիան յանուն ընդհանուր պետական շահերի. հայերին որպէս յեղափոխական ժողովուրդ ընդունելով՝ նրանց թափը կոտրելու համար ռուս կառաւարութիւնը աշխատում է առաջ հանել թուրք խուժանին: Այսպիսի կրիտիկական մոմենտում(նկատի ունեն ռուս-ճապոնական պատերազմը եւ Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումները-Հ.Գ.), Ռուսաստանի ընդհանուր յեղափոխութեան, մանաւանդ կովկասեան յեղափոխութեան ոյժը բուլացնելու համար թուրք-հայկական խռովութիւնները մի լաւ միջոց են:

2. Համախմբամիտքը, որ ծննդոց է առել Երիտղզից եւ Կովկասում ներկայացուցչ է մի քանի ազդեցիկ մարդկանցով:

3. Թուրք խուժանի բալանի ախորժակը:

4. ...թուրքերի քաղաքականութիւնը-որտեղ ուժեղ են՝ յարձակուել, իսկ որտեղ իրենք թոյլ են՝ համերաշխութեան մասին խօսել»[21]:

Ընդհանրացնելով, կարելի է հաստատապես պնդել, որ հայ-թուրքական ընդհարումների պատճառա-հետեւանքային էական նշանակութիւն ունեցող կապերի ու նախադրյալների ուսումնասիրութիւնն ապա-

ցուցում է, որ Անդրկովկասում ծավալված ազգամիջյան պատերազմը նախեւառաջ հետեւանք էր ցարիզմի քաղաքականության:

Կովկասում ցարական իշխանությունները օգտագործեցին ազգային, տնտեսական ու կրոնական հակասությունները եւ դրանք հասցրին ընդհուպ ազգամիջյան ջարդերի:

Եթե Ռուսաստանում հեղափոխական շարժումները խեղդելու համար ցարիզմը կարող էր օգտագործել իր հզոր ռազմական ու ոստիկանական մեքենան, ապա Անդրկովկասում ցարիզմն անհրաժեշտություն չուներ նման միջոցի դիմել:

Ցարական իշխանությունների հովանավորությունից ու թողտվությունից գոտեպնդված, մահմեդական զինյալ հրոսակախմբերը հայկական կոտորածներ են սանձազերծում Անդրկովկասում պանիսլամիզմի կենտրոն Բաքվում: Կոտորածներն արագորեն տարածվում են Երեւանի նահանգ, Զանգեզուր, Արցախ, եւ հայաբնակ բոլոր շրջաններն ու ընդհուպ մինչեւ Թիֆլիս:

Վերոհիշյալ «Տեղեկագիր...»-ը, անդրադառնալով մահմեդական բնակչության կողմից Կովկասում սանձազերծած ընդհարումների պատճառների վերլուծությանն ու արժեւորմանը, նշում է. «Հայ եւ թիւրք տարրերի մէջ սկսուել է կատաղի կռիւ, մի անսպասելի կռիւ հայերի համար, որոնք մինչեւ այդ միանգամայն անտեղեակ լինելով եւ ոչ մի կասկած չտանելով թուրքերի վերաբերմամբ, անպատրաստ գտնուեցին այդ նոր կռուի մէջ, որը հայութեան լինել չլինելու հարցն է դրել ասպարեզի վրայ...»[22]:

Կովկասահայության փրկության միակ միջոցը կազմակերպված ինքնապաշտպանությունն էր, Նիկոլ Դումանի դիպուկ սահմանմամբ. «Բայց, ինչ էլ լինի, թէ՛ քշնամուն եւ թէ՛ բարեկամին յարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ուժն է: Եւ մի ազգ, եթէ ուզում է մնալ յարգուած, եթէ չի ուզում կորչել, պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանութեան համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկեաններուն»[23]:

Ինչպիսի՞ քննություն էր բռնելու ծանրագույն իրավիճակում հայտնված, ցարական իշխանության տիրապետության տակ գտնվող կովկասահայությունը: Այդ օրհասական պահին ո՞վ պետք է օգնության ձեռք մեկներ կովկասահայությանը եւ կազմակերպեր ինքնապաշտպանությունը:

Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ (նա այդ ժամանակ զբաղեցնում էր Թիֆլիսի քաղաքապետի պաշտոնը-Հ.Գ.) «Երկու տարբեր ուժեր զբաղած էին հայ ժողովրդի պաշտպանութեամբ: Մէկը գիտակցութիւնն էր,

ղեկավարութեամբ Հ.Յ.Դաշնակցութեան մարտիկներու, որոնք կռուի դաշտին մէջ դիմաց կանգնած էին թշնամի բանակին, իսկ միւսը՝ հոգեւորականութիւնը եւ քաղաքային գործիչները, որոնք իշխանութեան միջամտութիւնը կապահովէին հայերու պաշտպանութեան համար»[24]:

Հայ-թուրքական ընդհարումների մանրամասների ուսումնասիրությունն ամերկաբ վկայում է, որ իրականում ընդհարումների ողջ ընթացքում գրեթե անհնարին է մատնանշել որեւէ նշանակալի դեպք, երբ իշխանությունները, ոստիկանական ուժերն ու զորքը գործեին ի շահ կովկասահայության ու հայ ինքնապաշտպանական ուժերի: Դրան հակառակ, բազմաթիվ են դեպքերը, երբ շնորհիվ իշխանությունների, ոստիկանական ուժերի ու զորքի միջամտության, վերջնական ջախջախումից փրկվել են հայկական բնակավայրերն ասպատակող մահմեդական հրոսակախմբերը:

Կարելի է պնդել, որ Ալ. Խատիսյանի «...քաղաքային գործիչներ, որոնք իշխանութեան միջամտութիւնը կապահովէին հայերու պաշտպանութեան համար» արտահայտությունը, մեկ ու կես տարի տեւողությամբ ընթացող հայ-թուրքական ընդհարումների ժամանակ գրեթե չի գործել:

Այդ նույն Ալ. Խատիսյանի խոստովանությամբ «...ցարական իշխանութիւնը թուրքերի կողմն է անցած: Թուրքերը կրցած էին կաշառել շարք մը պաշտոնեաներ: Մանր ոստիկանութեան մէջ կաշխատէին մեծ թիւով թուրքեր: Ռուս կառաւարութեան աչքին, թուրքերը յեղափոխական տարր չէին, զոր պէտք է ոչնչացնել: Ընդհակառակը, անոնք կը համարուէին օժանդակիչ ուժ մը կառաւարութեան կողքին՝ յեղափոխութիւնը զսպելու համար»[25]:

Հայ-թուրքական ընդհարումների մանրակրկիտ ուսումնասիրությունը հավաստում է, որ ի տարբերություն թուրք առաջնորդների ու մեծահարուստների, ցարական իշխանության տարբեր կառույցներում ծառայող հայ աստիճանավորներն ու պաշտոնյաները, ինչպես նաեւ դրամատերերը այնքան էլ ջանք ու եռանդ չեն գործադրել շահելու իշխանությունների համակրանքը եւ համապատասխան միջոցներ տրամադրել կազմակերպելու կովկասահայության ինքնապաշտպանությունը:

Ժողովրդի ինքնապաշտպանությունը պարտավոր էին կազմակերպել ու առաջնորդել միմիայն ազգային այն ուժերը, որոնք ունեին կազմակերպված կառույցներ, պայքարի փորձառություն: Իսկ բացի հայ ազգային-քաղաքական կուսակցություններից, օտարի գերիշխանության տակ գտնվող հայությունն այլ իրական առաջնորդող ուժեր չուներ եւ չէր կարող ունենալ:

Արմենականները, որոնք հիմնականում գործում էին Վասպուրականում, անդառնալի կորուստներ էին կրել 1896 թ. Վանի հանրահայտ կոտորածների ժամանակ: Նրանք Անդրկովկասում ընդհանրապես չեն գործել եւ չեն ունեցել իրենց կազմակերպական կառույցները: Այդ պատճառով արմենականները կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում որեւէ դեկավարություն ունենալ չէին կարող: Մնում էին Հնչակյան կուսակցությունը եւ Հ.Յ. Դաշնակցությունը:

Պիտի նկատել, որ այդ ժամանակ հայ ազգային-հեղափոխական այդ երկու՝ Հնչակյան կուսակցությունը եւ հատկապես Հ.Յ. Դաշնակցությունը բավականի ծանրակշիռ ու ազդեցիկ դիրք ունեին Անդրկովկասում:

Հնչակյան եւ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունների գործունեությանը վերաբերող Կովկասի փոխարքայության ոստիկանական ծառայության կազմած փաստաթղթերից մեկի (9 դեկտեմբերի 1905 թ.) տվյալների համաձայն, այդ ժամանակ Կովկասում գործող քաղաքական կազմակերպությունների մեջ, իրենց դավանած ազգայնական որոշակի նպատակներով ու բացառիկ կազմով, առաջին տեղում էին «Հայ հեղափոխական դաշնակցություն» կամ «Հայ հեղափոխական միություն», տեղացիների լեզվով «Դաշնակցություն» եւ «Հնչակ» կուսակցությունները...»[26]:

Այդ նույն փաստաթղթում նշելով, որ նրանց նպատակը Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Թուրքիայի «բռնապետական լծից» հայության ազատագրումն է, ապա հայկական անկախ պետականության կազմավորումը, ոստիկանությունը տեղեկացնում է, որ հայ քաղաքական կազմակերպություններից առավել հզորը «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունն է, որը գործում է ոչ միայն Կովկասում, այլեւ Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում, ինչպես նաեւ Թուրքիայի ու Պարսկաստանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում»[27]:

Իրոք, Հ.Յ.Դաշնակցությունը, որն այդ ժամանակահատվածում իր կազմակերպական կառույցներով, շարքերում ընդգրկված անդամների թվաքանակով ու պայքարը փորձառությամբ առավել մարտունակ էր ու ազդեցիկը, բնականաբար, պիտի ստանձներ կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու դեկն ու պատասխանատվությունը:

Խ. Ակնունու գրած վերոհիշյալ նամակում Վահան Արծրունին գրում է, որ մինչեւ հայ-թուրքական ընդհարումները հասարակությունը Դաշնակցության մասին շատ բյուր գաղափար եւ պատկերացում ուներ: Դաշնակցությունը հասարակության կողմից դիտվում էր մի

կազմակերպություն, որը հերոսական գործեր էր կատարել Թուրքիայում եւ եկեղեցու կալվածքների գրավման խնդրում որոշակի ազդեցություն էր գործել կաթողիկոսի վրա[28]:

Ըստ Վ. Արծրունու «Միայն մօտ մարդիկ գիտեին, որ Դաշնակցութիւնը կազմակերպւում է նոյնպէս եւ Կովկասում, գիտեին նրանից, որ գումարներ էին ժողովում եւ տերրորներ կատարում: Հայ-թիւրքական ընդհարումները առաջին անգամ ասպարէզ հանեցին դաշնակցութիւնը իբրեւ կազմակերպուած զինուորական ոյժ»[29]:

Հայ ազգային-քաղաքական կազմակերպությունները մինչ Կովկասում ծնունդ առած ազգամիջյան բախումները, գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով Արեւմտահայաստանի խնդիրների վրա, ընդհարումների առաջին օրերին հայտնվելով աննպաստ կացությունում, անպատրաստ գտնվեցին արժանի հակահարված տալու թշնամու գործողություններին:

Այդ իրողությունը 1907 թ. Վիեննայում կայացած Հ.Յ.Դ. 4-րդ ընդհանուր ժողովում ունեցած իրենց զեկուցագրում խոստովանում են Մեւքարեցի Սաքոն եւ Խանասորի Վարդանը. «...Դաշնակցութիւնը ոչ մի ուշադրութիւն չէր դարձրել Կովկասահայ ազգաբնակչութեան զինման գործի վրայ, որովհետեւ նախ՝ մենք զբաղած էինք եղել բացառապէս Թիւրքիայ-Հայաստանի գործերով եւ երկրորդ, չէինք կարող երեւակայել, թէ ռուս կառաւարութիւնը կարող կլիներ այդքան յաջողութեամբ հայ-թրքական ընդհարում առաջ բերել: 1905 թ. փետրուարին Բաքւի արիւնահեղութիւնը, եւ Նախիջեւանի կոտորածները մայիսին, մէզ միանգամայն յանկարծակիի բերին...»[30]:

ՀՅԴ Նախիջեւանի «Քարաբերդ» կոմիտեի կողմից ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած «Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թուրքական ընդհարումների մասին: Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10-ը» խորագիրը կրող զեկուցագրում հեղինակները նույնպես խոստովանում են վերոհիշյալ իրողությունը, ընդսմին նշելով. «Մենք մինչեւ այժմ զբաղուած ենք եղել ուրիշ քաղաքական ծրագրերով, զարգացրել ենք եւ նախանձախնդիր էինք աւելի եւս զարգացնելու մեր յեղափոխական գործունէութիւնը, բայց իրերի դրութիւնը մեր առաջ դրեց նոր խնդիրներ, նոր բարդութիւններ: Կովկասում այսօր մեր դեմ հանդէս է եկել մի նոր թշնամի, որին դիմադրելու համար մենք պատրաստ չենք տակաւին...»[31]:

Եթե մինչ այդ Դաշնակցությունը կռվում էր մի ճակատում, ապա այժմ հարկադրված էր կռիվ մղելու երկու ճակատի վրա: Կովկասում ծավալվող դեպքերը միանշանակորեն մատնանշում էին, որ կռիվները բռնկվել էին ոչ թե պատահական ինչ-որ պայմանների ու դիպվածների,

այլ ազգային, սոցիալ-քաղաքական եւ հիմնարար այլ բնույթի նշանակություն ունեցող հանգամանքների թելադրանքով:

«...յոյս չի կարելի տածել,-նշում է «Տեղեկագիր...»-ը,-որ այդ կռիվը անցողական, ժամանակաւոր նշանակութիւն ունի. ընդհակառակն ուսումնասիրելով, խորն մտածելով այդ կռիւն առաջացնող պայմանների մասին, վերջի վերջոյ ստիպուած ենք հակուելու այն կարծիքին, որ այստուհետեւ, քանի որ տակաւին գոյութիւն ունեն վերոյիշեալ պայմանները, երկու ժողովրդի մէջ անկարելի է որեւէ հաշտութիւն կայացնել...»[32]:

Այո, կռիվը սկսվել էր ու այն կարող էր ավարտվել միմիայն հակամարտող կողմերից մեկի հաղթանակով եւ մյուսի վերջնական կատարյալ պարտությամբ:

Հ.Յ. Դաշնակցությունը ընդհարումների բռնկման սկզբնական շրջանում թեեւ անպատրաստ գտնվեց արժանի հակահարված տալու մահմեդական հրոսակախմբերի ոտնձգություններին, այնուամենայնիվ, դրսեւորելով գովելի կազմակերպվածություն, կարողանում է հաջողությամբ կազմակերպել կովկասահայության ինքնապաշտպանությունը:

«...այստեղ միայն,-նշում է նույն «Տեղեկագիր...»-ը,- Դաշնակցութիւնը ստիպած եղաւ անցնիլ ժողովրդի զինման հրամայական գործի գլուխը...»[33]:

Պիտի նկատել, որ թուրքերի կողմից հայկական ջարդերի հիմնական սանձազերծողներն ու մասնակիցները եղել են շիա մահմեդականները, իսկ սյուները չեզոք դիրք են գրավել:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում անդրադառնալով այդ հարցին՝ Ռոստոմը առանձնացնում է հետեւյալ գործոնները. «1. Սիւննիները կը շարժուէին միայն այն ժամանակ, երբ քաղաքական մեշ բարդութիւն կը ծագ՝էր, ինչպէս պատերազմը Տաճկաստանի հետ, եւ նրա շարժումը ուղղված կը լիներ ընդհանրապէս քրիստոնեաների դէմ, որոնց մէջ աւելի նվազ կը տուժէին հայերը քան ռուսները եւ վրացիները:

2. Սիւննիներն աւելի խորն են ատում ռուս կառավարութեան եւ այդ պատճառով դիւրութեամբ չեն ենթարկուի նրա պրովակացիային(գրգռութիւններին):

3. Սիւննիների մէջ չի նկատում բուրժուազիայի զարգացումը. այդ տեսակէտից նրանք չեն կարող մրցակից համարուել հայ վաճառականներին, արհեստավորներին...»[34]:

Հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով ՀՅԴ վտանգված շրջաններ է ուղարկում բազմաթիվ գործիչների, առաջին հերթին բազմափորձ ֆիդայիների, որոնց առաջնորդությամբ

հայաբնակ բոլոր շրջաններում կազմակերպվում են ինքնապաշտպանական մարտախմբեր:

Հայ-թուրքական բախումները առաջինը՝ փետրվարի 6-ին բռնկվում են Բաքվում, ապա տարածվում գրեթե բովանդակ հարավային Կովկասում:

«Բաքուն էր,-նշում է Զարեվանդը,- գործին նախաձեռնողը, ղեկավարն ու մատակարարը: Հուսեինգադե Ալի բեյ(որ Պոլսո առաքելութենեն Կովկաս վերադարձել էր), Ահմեդ Աղաեւ եւ Թոփչիբաշեւ իրենց սպայակույտը հաստատած Բաքվի մեջ, թուրք նավթատերերու գործոն աջակցութեամբ սիստեմատիկ կերպով կազմակերպում էին մասնավորապես թուրք եւ շիա ազգաբնակչությունը, դուրս ձգելով, ոչ թուրք տուննիները: Օգնություն ապահովեր էին մինչեւ անգամ Ատրպատականեն: Եվ տրված ազդանշանի վրա սկսավ ջարդը Բաքվից...»[35]:

Հայերի դիմումը Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձեին՝ ինքնապաշտպանության համար զենք տրամադրելու կամ կոտորածը կանխելու նպատակով, մերժվում է, պատճառաբանելով՝ իբր. «քաղաքում զինվորական բավարար ուժեր չկան»[36]:

Իրականում, այդ ժամանակ քաղաքում կային 6000 զինվորներ: Ավելին, ականատեսների վկայությամբ. «... ոստիկանութեան ստորին պաշտոնեաները, որոնք անմիջական կապեր ունեն ժողովրդի տականքների հետ, թիւրք սրիկաներից կազմում են խմբեր եւ զինում օֆիցերական ատրճանակներով: Կուի ժամանակ թիւրքերի մեծ մասը այդ ատրճանակներով էր զինուած»[37]:

Բաքվի հայության կոտորածները, ըստ Բաքվի հայկական եկեղեցիներից մեկի ավագ քահանա Եղիշե Գեղամյանցի հավաստման, վաղօրոք ծրագրված էր անձամբ Կովկասի կառավարչապետի՝ Գոլիցինի կողմից:

«Գոլիցին,-գրում է Ե. Գեղամյանցը,-անմիջապես Պետերբուրգ հրաւիրեց գեներալ Նակաշիձէին, որին նոր էր նշանակել Բագւի նահանգապետ եւ յատկապես հայ-թուրքական կոտորած յառաջացնելու համար, հրահանգներ տւեց եւ վերադարձրեց Բագու արեան բաղնիսներն կազմակերպելու »[38]:

Գեներալ Նակաշիձեն ստանձնելով Բաքվի նահանգապետի պաշտոնը եվ ինչպես ցույց են տալիս Բաքու քաղաքում ու նահանգում տեղի ունեցած իրադարձությունները, մեծ եռանդով կատարում է Գոլիցինի հրամանը:

Ալ. Խատիսյանի հավաստմամբ «...նահանգապետ Նակաշիձէն իր բով կը կանչէ Բագուի ազդեցիկ թուրքերը եւ կը խնդրէ անոնցմէ օգնել

իշխանութեան եւ թագաւորին՝ պայքարելու երկրի թշնամի հայերու դէմ: Թուրքերը հասկացած էին ակնարկը եւ յարձակած հայերու վրա...»[39]:

Երկու օր մահմեդական զինված ամբոխը անարգել ու անպատիժ սպանում էր անպաշտպան հայերին ու ավերում հայկական թաղամասերը: Բաքվի հայության փրկության միակ միջոցը ինքնապաշտպանության կազմակերպումն էր:

Այդ ժամանակ Նիկոլ Դումանը գտնվում էր Բաքվի շրջաններից մեկում. Արշակ Ղուկասյանի նավթահանքերի կառավարիչն էր: Փետրվարի 5-ին, Բաքվի ՀՅԴ «Ոսկեանապատ» կենտր. կոմիտեի անդամ Աբրահամ Գյուլխանդանյանից ստանալով թուրքերի կողմից հայերին կոտորելու լուրը, Նիկոլ Դումանը անհապաղ գալիս է Բաքու եւ ստանձնում քաղաքի հայության ինքնապաշտպանության ղեկը:

Թվում է, թե անհնարին է եղել Բաքվի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը: Քաղաքում հայերը որեւէ մարտական ուժ ընդհանրապես չեն ունեցել: Բաքվում Դումանի տրամադրության տակ առաջին օրը կային ընդամենը վեց կովղոներ՝ Մկրտիչ Աղամալյանը (Մարհադ), Մարտիրոս Չարուխչյանը, Հմայակ Ջանփոլադյանը, Համբարձում Բալայանը (Համբի), Փոքրիկ Ղազարը (Ղազո), եւ Շամխեցի Իվանը[40]:

Ընդամենը վեց մարտիկներից բաղկացած փոքրաթիվ խմբով նա կազմակերպում է Բաքվի հայության ինքնապաշտպանությունը եւ փրկում նրան անխուսափելի կոտորածից[41]:

Տվյալ ժամանակաշրջանում Բաքվի հայության փրկության նշանակությունը չպետք է սահմանափակել միմիայն Բաքվի շրջանակներով: Եթե Բաքվում թուրքերին հաջողվեր իրականացնել ցարական իշխանությունների թողտվությամբ հայերին ոչնչացնելու ծրագրերը, ապա, անկասկած, զուտ բարոյահոգեբանական, հետեւաբար նաեւ ռազմական առումով, ծանր կացության մեջ կհայտնվեր հարձակումների ենթարկվող մյուս շրջանների ողջ հայությունը: Եթե թուրք հրոսակները չհանդիպեին կազմակերպված դիմադրության, ապա հեշտությամբ նվաճված հաղթանակից ոգեշնչված, կարող էին ակնկալել հետագա հաջողություններ՝ նաեւ ռազմական առումով:

Ընդհարումների առաջին օրերին բոլորովին աննպաստ պայմաններում հայ մարտիկների հաղթանակը, անտարակույս, հսմսագային նշանակություն ունի:

Պիտի նկատել, որ Բաքվի հայության ինքնապաշտպանական մարտիկների դիմադրությունն ու զինված եւ վաղօրոք կազմակերպված

թուրք ամբոխի անհաջողությունը անակնկալ էր նաեւ իշխանությունների համար: Դաշնակցության որդեգրած հակացարան ռազմավարությունը (Կովկասյան նախագիծ) եւ ռուս քաղաքական կուսակցությունների հետ հաստատած նրա կապն ու համագործակցությունն անտարակույս չէին կարող դուրս մնալ կայսրության հատուկ ծառայությունների տեսադաշտից: Այսուհանդերձ, իշխանությունների համար դժվար էր ենթադրել, որ Դաշնակցությունը ի զորու կլիներ սահմանափակ ժամանակահատվածում մարտական ուժեր կենտրոնացնել վտանգված որեւէ շրջանում, օրինակ՝ Բաքվում, եւ հաջողությամբ կազմակերպել ու ղեկավարել տեղի հայության ինքնապաշտպանությունը:

Վահան Արծրունու պնդմամբ «...կառաւարութիւնն էլ սթափուեց հենց Բաքուի փետրուարի կոտորածի միջոցին եւ տեսաւ, որ մի ինչ-որ կազմակերպութիւն կայ, որը կարող է ուժեղանալ եւ մի օր նոյնիսկ սպառնալիք դառնալ իրա-կառաւարութեան համար»[42]:

Փետրվարյան արյունալի իրադարձություններն ավարտվեցին, սակայն հայությանը սպառնացող վտանգը չէր վերացել, իրականում այն ծավալվելու էր ավելի մեծ չափերով ու ուժգնությամբ: Անհրաժեշտ էր լրջորեն նախապատրաստվել՝ դիմագրավելու դժվարագույն փորձություններին:

Բաքվում տեղի ունեցած փետրվարյան արյունալի դեպքերն անշուշտ ուսանելի եւ կարեւոր դաս էին, որից անհրաժեշտ հետեւություններ եւ եզրակացություններ պիտի անեին հայությունն ու նրա ազատագրական պայքարի ղեկն ստանձնած հայ ազգային-քաղաքական կուսակցությունները:

Աբ. Գյուլխանդանյանի գնահատմամբ «Անդրկովկասի մէջ գուցէ առաջին անգամն էր, որ հայ մտաւորականներից ոմանք, մանաւանդ Դաշնակցականները, հիմնաւորապէս եւ մանրազնին կերպով զբաղում էին Անդրկովկասի ժողովուրդների հարցով եւ մտահոգ կերպով դիտում էին, թէ ինչպէս հայութիւնը այդքան աննպաստ կերպով դասաւորուած է զանազան գաւառներում, թէ ինչպէս շատ տեղերում նա կազմում է չնչին փոքրամասնութիւն»[43]:

ՀՅԴ Բաքվի «Ոսկեանապատ» կենտր. կոմիտեի համար այլեւս գաղտնիք լինել չէր կարող, որ գալիք մարտահրավերներին ու փորձություններին դիմագրավելու համար անհրաժեշտ էր զինել հայությանը, ձեռնամուխ լինել կազմակերպելու նրա ինքնապաշտպանությունը: Այդ մտահոգությամբ ՀՅԴ Բաքվի կենտր. կոմիտեն դիմում է կուսակցական վերադաս մարմնին՝ ՀՅԴ Արեւելյան բյուրոյին, որը ըստ Աբ.

Գյուխանդանյանի «...միանգամայն համամիտ էր Բագուի Կ. Կոմիտէի հետ եւ իրամայական անհրաժեշտութիւն էր նկատում Անդրկովկասի հայութեան ինքնապաշտպանութիւնը»[44]:

Առաջին ընդհարումներից հետո Բաքու են գալիս Սիմոն Զավարյանն ու Արմեն Գարոն եւ տեղի կենտր. կոմիտեի անդամներ Աբ. Գյուլխանդանյանի, Հարությունի Շահրիկյանի, Գրիգոր Աղաջանյանի եւ Լեւոն Թադեւոսյանի (Պապաշա) մասնակցությամբ գումարում շրջանային պատասխանատու ժողով[45]:

Այդ ժողովին, բնականաբար, մասնակցել եւ կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու վերաբերյալ իր տեսակետներն է արտահայտել նաեւ Նիկոլ Դումանը, որը թեեւ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամ էր, բայց մինչեւ փետրվարյան դեպքերը այնքան էլ հետաքրքրություն չի դրսեւորել կուսակցական աշխատանքների նկատմամբ եւ շատ քիչ է զբաղվել կուսակցական գործերով:

«Դումանը,- պատմում է կռիվների ամենաներիտասարդ մասնակից, 21-ամյա Դրոն,- ժողովում այն տեսակետն է պաշտպանում, թէ տեղական բնոյթ չի կրում այս դէպքը, ոչ էլ հայ կապիտալի դէմ պայքար մըն է միայն: Հապա դա ռուս պետութեան կողմից հայութեան դէմ կազմակերպուած մի դաւադրութիւն է, որ արձագանք կը տայ ամբողջ Անդրկովկասում:

Դումանը ցոյց է տալիս անմիջական անհրաժեշտութիւնը զէնքի մատակարարման մի մարմին ստեղծելու՝ ամէն գնով Կովկասի հայութիւնը զինելու համար»[46]:

Նրա կանխատեսումը շատ շուտով իրականություն է դառնում: Ազգամիջյան ընդհարումներն արդեն իրողություն էին, եւ ոչ մի երաշխիք այլեւս չէր կարող լինել, որ դրանք չէին ընդարձակվի եւ խորանա: Եթե, իրոք, ընդհարումներն իրականում ծավալվեին ավելի ուժգնությամբ եւ ընդգրկեին նաեւ հայաբնակ մյուս բնակավայրերը, ապա ի՞նչ փորձություն էր սպասելու հայությանը:

Ուշագրավ է, որ սկզբնական շրջանում Հ.Յ.Դաշնակցության Ռուսեւյան բյուրոյում եւ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ»կենտրոնական կոմիտեում այն համոզմունքն է տիրել, որ ընդհարումները չպետք է մեծ ծավալներով տարածվեին ու երկարատեւ ընթացք ունենային: Ավելին, ՀՅԴ բյուրոյում ու Բաքվի կենտրոնական կոմիտեում նաեւ այն կարծիքն է տիրել, որ ընդհարումները չեն տարածվելու գավառներ եւ այդ պատճառով ծրագրել են գլխավոր ուշադրությունը բեւեռել քաղաքների վրա ու զինել միայն քաղաքային բնակչությանը: Եւ միայն Նախիջեւանի գավառում մայիսին տեղի ունեցած դեպերգուկան դեպքերը եկան ապացուցելու, որ կոտորածներն անխուսափելիորեն կսպառնային գյուղական բնակչությանը, եթե լրջորեն չնախապատրաստվեին ինքնապաշտպանության:

Օրվա հրատապ խնդիրն աներկբայորեն դառնում է հայության ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը: Սա այն գլխավոր հարցը, որի լուծման վրա է Դումանը բեւեռում ժողովականների ուշադրությունը:

«Եվ որովհետեւ,- գրում է Աբ. Գյուլխանդանյանը,- զինուորական խնդիրների վերաբերմամբ Նիկոլը համարում էր ոչ միայն Բագուի, այլեւ ամբողջ Դաշնակցութեան մէջ միակ հեղինակատր անձը, այդ իսկ պատճառով նրա բոլոր առաջարկները ինքնապաշտպանութեան մասին անմիջապէս նկատի էին առնում եւ բաւարարում Կ. Կոմիտէի կողմից»[47]:



Նիկոլ Դուման



Վարդան

Հաշվի առնելով Կովկասում ստեղծված ծանր մթնոլորտն ու Բաքվի կռիվների փորձը՝ ժողովականները առաջարկում են Նիկոլ Դումանի ղեկավարությամբ ստեղծել կովկասահայության ինքնապաշտպանությունը գլխավորող զինվորական մարմին: Չհամաձայնվելով այս տեսակետին՝ Դումանը առաջարկում է, որ առավել նպատակահարմար կլինի, եթե կովկասահայության ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարումն ու կազմակերպումը գլխավորեր Դաշնակցության վերին մարմինը (ՀՅԴ բյուրոն), իսկ առանձին շրջաններում՝ տեղերի կենտրոնական կոմիտեներն ու նրանց կողմից ընտրված հրամանատարությունը:

Իրոք, Բաքվից մինչեւ Թիֆլիս, հսկայածավալ տարածքում ինքնապաշտպանության ղեկավարումը իրականացնելու համար անհրաժեշտ էին մեծաքանակ մարտական ուժեր ու դրամական միջոցներ: Իսկ հուսալի ինքնապաշտպանություն կազմակերպելու համար պահանջվող միջոցներն ու ուժերը կարող էին ձեռք բերել միայն այն կազմակերպությունները, որոնք ունեին տնտեսական ու ռազմական որոշակի կարողություն, իսկ հայության կազմակերպված ուժերը հայ ազգային-քաղաքական կուսակցություններն էին:

Փետրվարյան դեպքերը ցույց տվեցին, որ հայ ազգային-քաղաքական կուսակցությունները, այդ թվում ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն, չկարողացան ժամանակին կանխատեսել եւ կանխել հայության սպառնացող վերահաս վտանգը: Հետեւանքը Բաքվի եւ ապա նաեւ Երեւանի նահանգի հայկական ջարդերն էին: Փետրվարյան դեպքերի վերլուծությունը միանշանակորեն մատնանշում էր, որ անհրաժեշտ էր հաշվի առնել անցյալի դասերը եւ ստեղծել հատուկ մարմին, որը կարողանար ժամանակին կանխատեսել սպասվելիք ծավալվող դեպքերը եւ կոիվների վերսկսման պարագայում կազմակերպեր, առաջնորդեր ինքնապաշտպանական մարտական ուժերը:

Բաքվում կայացած խորհրդաժողովում որոշվում է Կենտրոնական կոմիտեներին կից ստեղծել Զինվորական մարմին, որը պետք է զբաղվեր միմիայն ինքնապաշտպանության կազմակերպման եւ մարտերը վարելու հետ կապված խնդիրներով:

Աբ. Գյուլխանդանյանի խոստովանությամբ. «Մասամբ Նիկոլի առաջարկով եւ գլխաւորապէս նրա պաշտպանութեամբ էր, որ առաջին անգամ լինելով Անդրկովկասում՝ Բագում Կ. Կոմիտէին կից կազմուեց «Զինուորական Մարմին» իր յատուկ իրաւունքներով եւ պարտականութիւններով»[48]:


Ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ պետք է ունենար նորաստեղծ Զինվորական մարմինը եւ ինչպիսի՞ պիտի լիներ նրա եւ կենտր.կոմիտեի փոխհարաբերությունը:

1. Համաձայն խորհրդաժողովում կայացած որոշման, Զինվորական մարմինը մինչեւ կոիվների սկսվելը պարտավոր էր հետեւել հակառակորդի գործողություններին եւ զբաղվեր զենք ու զինամթերքի հայթայթման եւ մարտական խմբերի կազմավորման աշխատանքներով: Այդ ընթացքում Զինվորական մարմինը հաշվետու էր եւ ենթակա այդ տարածաշրջանի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին:

2. Կռիվների ժամանակ Զինվորական մարմինը օժտվելու էր առավելագույն ինքնուրույնությամբ եւ պատասխանատվությամբ:

«Այդ ժամանակ Կ. Կոմիտէն դառնում էր Զինուորական Մարմնի աջակից՝ դնելով Զինուորական Մարմնի տրամադրութեան տակ իր բովանդակ նիւթական եւ բարոյական ուժերը: Զինուորական Մարմինն էր, որ դառնում էր պատասխանատու կռիւների ամբողջ ընթացքին: Նա իրաւունք ուներ ընտրել հրամանատար, վարել բոլոր կռիւները մինչեւ հաշտութիւն: Հաշտութիւնը կայանալուց յետոյ, Զինուորական Մարմինը մտնում էր իր նախկին դերի մէջ եւ դառնում էր հաշուետու եւ պատասխանատու Կ. Կոմիտէի առաջ»[49]:

Զինվորական մարմնի անդամ կարող էին դառնալ նաեւ այնպիսի անհատներ, որոնց անդամակցությունը ՀՅԴ պարտադիր չէր:



Հայ-թուրքական ընդհարումների վայրերը

Այդ ամենով հանդերձ, կուսակցության ղեկավար դերը, այնուամենայնիվ, Զինվորական մարմինների կազմում պահպանվելու էր, որովհետեւ.«... հայութեան գոյութիւնը պահանջում էր, որ ինքնապաշտպանութիւնը կրելով հանդերձ համազգային բնոյթ, գտնուէր ամբողջապէս Դաշնակցութեան ղեկավարութեան տակ»[50]:

Բաքվի Զինվորական մարմինը ունենալու էր բազմաթիվ պարտականություններ, որոնցից կարեւորագույներն էին.

«Ա. Բագու քաղաքի, ինչպէս եւ Սեւ քաղաքի (նկատի ունի նավթահանքերի-Հ.Գ.) ու արուարձանների ինքնապաշտպանութեան խնդիրը:

Բ. Նաֆթաշրջանի ինքնապաշտպանութեան խնդիրը:

Գ. Ոսկանապատի Կ. Կոմիտէութեան շրջանի ինքնապաշտպանութեան խնդիրը(Քանի որ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ»-ի Կ. Կոմիտեության շրջանակի մեջ մտնում էր ոչ միայն Բաքու քաղաքը, այլեւ նրա հարակից շրջանները, այդ պատճառով Զինվորական խորհրդի վրա է դրվում նաեւ գյուղական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրը-Հ.Գ.):

Դ. Զէնքերի հայթայթում Բագուի եւ իր շրջանների համար:

Ե. Մարտական եւ զինական ուժերի եւ զէնքերի փոխադրութիւն վտանգաւոր վայրերի համար»[51]:

Նույն տարվա փետրվարի վերջերին ընտրվում են Զինվորական մարմնի առաջին անդամները, որոնք էին Նիկոլ Դումանը, Աբ. Գյուլխանդանյանը եւ Հովհաննես Քաջազնունին, որն այդ ժամանակ դեռեւս Հ.Յ.Դաշնակցության անդամ չէր:

Հովհ. Քաջազնունուն Զինվորական մարմնի կազմում ընդգրկելը բոլորովին պատահական չէր:

«...կարեւոր րոպէներին,-վկայում է Աբ. Գյուլխանդանյանը,- Քաջազնունին, իբրեւ Զինւորական Մարմնի անդամ, պիտի կարողանար ազդել թէ՛ թաթարների եւ թէ՛ հայ բուրժուազիայի վրայ՝ ինքնապաշտպանութեան համար նիւթական հասոյթները աւելացնելու համար...»[52]:

Քանի որ Զինվորական Մարմնի պարտականությունների մեջ էր մտնում նաեւ զենք ու զինամթերքի գնման եւ հայթայթման հույժ կարեւոր գործը, ուստի նրա աշխատանքները թեթեւացնելու ու ավելի կազմակերպված բնույթ հաղորդելու նպատակով Բաքվում կազմվում է հատուկ մարմին՝ Զինական Ֆոնդ (Զիֆոն), որի պարտականությունն էր «...արագացնել զինման գործը, հեշտացնել կուսակցական գնումները, նպաստել զանազան վայրերի համար զէնքի գնման գործին եւ թոյլ չտալ զանազան բախտախնդիր մարդոց կամ կասկածելի միջնորդների հրապարակ գալուն եւ անտեղեակ հասարակութիւնը շահագործելուն»[53]:

Զինական Ֆոնդի(Զիֆոն) աշխատանքները կազմակերպելու եւ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Զինվորական Մարմնի առաջարկությամբ նրա կազմում ՀՅԴ Արեւելյան բյուրոյի որոշմամբ աշխատանքի են ընդգրկում Ստեփան Տեր Մկրտչյանին, որին պատկանում է

Բաքվում Զինական Ֆոնդի հիմնադրման գաղափարը եւ Տիգրան Աղամալյանին: Այդ ժամանակ նշված երկու գործիչներն էլ կուսակցության մեջ հայտնի անուններ էին եւ ինչպես ապացուցեց ժամանակը, հետագայում անգնահատելի ներդրում են ունենում զենք ու զինամթերքի ձեռք բերման եւ տեղափոխման գործում:

Հ.Յ. Դաշնակցության Զինական Ֆոնդը (Զիֆոն) ունեցել է երկու հիմնական կենտրոն՝ Թիֆլիս եւ Բաքու, որոնք զենք ու զինամթերք են մատակարարել ինքնապաշտպանական շրջաններին:

Աբ. Գյուլխանդանյանի տեղեկացմամբ «Թիֆլիսը եւ Բագուն, նկատի ունենալով իրենց հաղորդակցութեան պայմանները եւ յարաբերութիւնները, որոշ աշխատանքի բաժանում առաջ բերեցին: Երեւանի նահանգը ամբողջապէս եւ Գանձակի նահանգի մի մասը, ինչպէս եւ Թիֆլիսի նահանգը ամբողջապէս ծանրանում էր Թիֆլիսի վրայ, իսկ Բագուի նահանգը ամբողջապէս եւ Գանձակի նահանգի մեծ մասը՝ Բագուի վրայ»[54]:

Ժողովում որոշվում է հայաբնակ բոլոր գավառները բաժանել առանձին ինքնապաշտպանական շրջանների, իսկ Նիկոլ Դումանին հանձնարարվում է ամենաարդարձակ ու պատասխանատու Երեւանի նահանգի, ինչպես նաեւ Զանգեզուրի, Ղազախ-Շամշադինի-Իջեւանի շրջանների ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատարությունը:

Դումանի հեռանալուց հետո Զինվորական Մարմնի կազմը համալրել են Գեւորգ Վարշամյանն ու Համբարձում Աղաջանյանը(Կարո):

Պիտի նկատել, որ Բաքվի Զինվորական Մարմնի անդամներից եւ ոչ մեկը զինվորական կրթություն չի ունեցել: Ինքնապաշտպանությունը կազմակերպելու եւ այն կայուն հիմքերի վրա դնելու համար նրանք այդ բացը լրացրել են զինվորականների խորհուրդներով, ռազմագիտական գրքերի ուսումնասիրությամբ եւ այլ միջոցներով:

Բացի դրանից, ըստ Աբ. Գյուլխանդանյանի «Զինւորական Մարմնի անդամների գործը հեշտանում էր այն պատճառով, որ մեր մարտական խմբերը ոչ թէ բաղկացած էին տվորական վարձկան զինուորներից կամ պետական միջոցներով եւ օրինական կազմակերպուած զինուորներից, այլ յեղափոխական կուսակցութեան անդամներ էին, որոնք եկել էին կամաւոր կերպով իրենց ժողովրդին փրկելու համար սպառնացող վտանգից»[55]:

Հայ-թուրքական կռիվներում հայ մարտական ուժերի գործողությունների ուսումնասիրությունը միանշանակորեն ցույց է տալիս, որ «յեղափոխական կուսակցութեան անդամներին» տրված Աբ. Գյուլխանդանյանի գնահատականը չափազանցված չէ: Իրոք, Դաշնակցության նա-

խաճեռնությամբ կազմավորված մարտական խմբերի շարքերը համալրող կամավորների մեծ մասը. եւ նույնիսկ նրանք, ովքեր առաջին անգամ էին զենք վերցնում, իրենց դրսեւորել են որպես հայրենանվեր, երկաթյա կարգապահությամբ օժտված քաջավարժ ռազմիկներ:

Հայ-թուրքական ընդհարումների մանրամասների ուսումնասիրությունը հավաստում է, որ հայ մարտական խմբերում ընդգրկված մարտիկները ինչպես ինքնապաշտպանական մարտերի, այնպես էլ հարձակողական գործողությունների ժամանակ իրենց դրսեւորել են առավելագույն խիզախությամբ, երբ նրանց առաջնորդել են փորձառու ու քաջավարժ հրամանատարներ, հատկապես Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցած կռիվների մասնակից անվանի ֆիդայիներ:

---

1. Մ. Վարանդեան, «Հ.Յ. Դաշն-ի պատմութիւն», հ.1, էջ 298:
2. «Հայրենիք» ամս. 1948, թիւ 7, էջ 16:
3. ՀՅԴ ԿԱ. թծ. 297, գ.18, էջ 3:
4. Մ. Վարանդեան, «Հ.Յ. Դաշն-ի պատմութիւն», էջ 291:
5. Տե՛ս Զարեւանդ, Միացյալ անկախ Թուրանիա, Երեւան, 1993, էջ 19-26:
6. Նույն տեղում:
7. Ալէքսանդր Ամֆիտէատրօվ, «Եւրոպա եւ Հայաստան», էջ19:
8. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
9. ՀՅԴ ԿԱ, թծ.295, գ.2, էջ1:
10. ՀՅԴ ԿԱ, թծ. 298, գ. 32, էջ 2:
11. Ալէքսանդր Ամֆիտէատրօվ. «Եւրոպա եւ Հայաստան», էջ19:
12.Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», էջ73:
13. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
14. Տե՛ս «Դրօշակ», 1904, թիւ 11, էջ 525-526:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում, թիւ 6, էւ 89:
17. ՀՅԴ ԿԱ. թծ. 261, գ.8, էջ3-4:
18. Նույն տեղում:
19. Տե՛ս նույն տեղում:
20. նույն տեղում, էջ 6:
21. Նիւթեր, հ. Բ, էջ 238::
22. ՀՅԴ ԿԱ, թծ.295, գ.2, էջ1:
23. Ն. Դուման, «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան», 1907, էջ 9:
24. Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», էջ 73:
25. Նույն տեղում:
26. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
27. Նույն տեղում:

28. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 261, գ. 8, էջ 1:
29. Նույն տեղում, էջ 1-2:
30. Նույն տեղում, թծ.404, գ. 12, էջ 1:
31. Նույն տեղում:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:
34. «Նիւթեր...». հ. Գ, էջ 95:
35. Զարեւանդ, Միացյալ անկախ Թուրանիա, էջ 20:
36. «Դրօշակ», 1905, թիւ, էջ 37:
37. Նույն տեղում:
38. Ե. Գեղամեանց, Մտորումներ, Թիֆլիս, 1907, էջ 80:
39. Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», էջ71:
40. Տե՛ս «Հայրենիք», ամս., 1932, թիւ 10, էջ 144-146:
41. Մանրամասն տե՛ս Հ. Գեւորգյան, Նիկոլ Դուման, Երեւան, 2002. էջ 140-188:
42. ՀՅԴ ԿԱ, թծ. 261, գ.8, էջ 2:
43. «Հայրենիք», ամս., 1933, թիւ 11, էջ 154:
44. Նույն տեղում
45. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ.325, գ. 3:
46. «Հայրենիք» օր., 1956, ապրիլի 2:
47. «Հայրենիք» ամս., 1933, թիւ 11, էջ 155:
48. Նույն տեղում:
49. Նույն տեղում, էջ 157:
50. նույն տեղում:
51. Նույն տեղում, էջ 159:
52. Նույն տեղում:
53. «Հայրենիք» ամս., 1934, թիւ 7, էջ 138-139:
54. Նույն տեղում, էջ 139:
55. «Հայրենիք» ամս., 1933, թիւ 11, էջ 158:

2. 1. ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Երեւանի նահանգի, Զանգեզուրի եւ Ղազախ-Շամշադինի-Իջեւանի շրջանների ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատարությունը Նիկոլ Դումանին վստահելը, ինչն ապացուցեց ժամանակը, ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի կենտրոնական Զիվորական Մարմնի կողմից համակողմանիորեն կշռադատված էր ու հիմնավորված:

Նախ, Երեւանի նահանգում ի տարբերություն կովկասյան փոխարքայության կազմում գտնվող մյուս խառը բնակչություն ունեցող նահանգների, հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը: Այսինքն, Երեւանի նահանգը կովկասահայության կենտրոնն էր, առավել կարեւորագույն նշանակություն ունեցող բնակավայրը:

Այդ ժամանակ, ըստ Ա-ԴՕ-ի տվյալների, Կովկասում բնակվում էին 1.130.000 հայեր, որից 434.000-ը ապրում էր Երեւանի, 294.000-ը՝ Գանձակի, 219.000-ը՝ Թիֆլիսի, 73.000-ը՝ Կարսի, 50.000-ը՝ Բաքվի նահանգներում, 14.000-ը՝ Բաթումիի շրջանում, իսկ 46-ը՝ մնացյալ նահանգներում:

Երեւանի նահանգում կար 1.301 գյուղ, որից հայաբնակ էր 342-ը: Ի տարբերություն թուրքերով ու այլազգիներով բնակեցած գյուղերի, հայկական գյուղերը ավելի բազմամարդ էին եւ զուտ տնտեսական առումով ավելի հարուստ [1]:

Ըստ «Մշակ» օրաթերթի տվյալների, Երեւանի նահանգում, համաձայն 1902 թ. պաշտոնական վիճակագրության, բնակվում էր 916.496 մարդ,որից՝ 508.358-ը՝ հայ(55.5%), 341.310-ը՝ թուրք(37%), իսկ 66.828-ը՝ ուրիշ ազգի(7.3%) [2]:

Իսկ ըստ «Кавказский календарь на 1905 год»-ի տվյալների, համաձայն 1897 թ. մարդահամարի, Երեւանի նահանգը ուներ 829.000 բնակիչ, որից 434.000-ը հայեր էին, 352.000-ը թուրքեր [3]:

Բոլոր տվյալները վկայում են, որ, իրոք, 23.000 քառակուսի վերստ (մեկ վերստը հավասար է 1066, 8 մ.) տարածություն ունեցող Երեւանի նահանգում հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը:

Երեւանի նահանգը բաղկացած էր 7 գավառներից:

Համաձայն «Кавказский календарь...»-ի, Երեւանի նահանգի մասը կազմող գավառների բնակչությունը կազմում էր.[4]:

գավառներ	*բնակչության ընդհանուր թիվը*	*հայեր*	*թուրքեր*	*Այլազգիներ*
Ալեքսանդրապոլ	*165.000*	*137000*	*7.000*	*21.000*
Նոր Բայազետ	*122.000*	*81.000*	*38.00*	*3.000*
Էջմիածին	*124.000*	*76.000*	*45.00*	*3.000*
Սուրմալու	*89.00*	*27.000*	*55.000*	*7.000*
Երեւան	*152.000*	*58.000*	*87.000*	*7.000*
Շուրուր-Դարալագյազ	*76.000*	*21.000*	*55.000*	*----*
Նախիջեւան	*101.000*	*34.000*	*65.000*	*2.000*
Ընդամենը	*829.000*	*434.000*	*352.000*	*43.000*

Այդպիսի ընդարձակ շրջանի ու դրան գումարած նաեւ Զանգեզուր գավառի հարյուր հազարավոր հայությանը կարող էր հաջողությամբ առաջնորդել ու նրա ինքնապաշտպանությունը արդյունավետ կազմակերպել միայն այն գործիչը, որն օժտված էր կազմակերպական ու ռազմագիտական տաղանդով, կռիվներու ձեռք բերած փորձառությամբ եւ, իհարկե, անբասիր վարքով, ժողովրդի ու մարտական ուժերի շրջանում ունեցած հեղինակությամբ:

«... Երեւանի նահանգի,- գրում է Ղազար Քոչարյանը (Մեծ Ղազար կամ Քաչալ Ղազո),- զինուորական հրամանատարն էր Նիկոլ Դումանը...Դաշնակցութեան մէջ որպէս զինուորական տաղանդ, Նիկոլ Դումանը գրեթէ առաջին տեղը կը գրաւէր այդ ժամանակ: Եւ ճիշտ այդ պատճառով էր որ Հ.Յ.Դ. Բիւրօն անօր էր վստահած Երեւանի պաշտպանութիւնը»[5]:

2. Եթե թուրքական կողմը կարողանար հաղթանակներ տանել Երեւանի նահանգում ու կոտորեր նահանգի հայ բնակչությանը, ապա նրա համար առավել դյուրին կլիներ իր հայաջինջ ծրագրերը իրականացնել նաեւ Կովկասի փոխարքայության այն նահանգներում, որտեղ հայությունը չէր կազմում բնակչության մեծամասնությունը:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թուրքականկողմը հեշտ հաղթանակ տանելու նպատակադրությամբ կիրառել է միեւնույն մարտավարությունը գրեթե բոլոր նահանգներում եւ գավառներում: Թուրք առաջնորդները մեծապես կարեւորել են նահանգների եւ գա-

վառների կենտրոնը հանդիսացող բնակավայրերի նշանակությունը ու իրեց մարտական գլխավոր ուժերը նախեւառաջ կենտրոնացել են գրավելու հենց այդ բնակավայրերը:

Այս առումով. քանի ու Երեւան քաղաքը նահանգի կենտրոնն էր, յուրօրինակ մայրաքաղաքը, այդ պատճառով ընդհարումների հենց առաջին օրերին թուրքական կողմը. նախահաշվածակ լինելով. ձգտել է վճռական գերակշռություն ձեռք բերել առաջին հերթին հենց Երեւան քաղաքում:

Երեւանն Աստաֆյան փողոցով բաժանված էր երկու՝ հայկական ու թուրքական մասերի եւ այդ ժամանակ. ըստ «Кавказский календарь на 1905 год»-ի տվյալների ուներ 29.000 բնակիչ. որից 135000-ը հայեր էին, 13.000 թուրքեր, իսկ 2500-ը այլազգիներ[6]:

Երեւան քաղաքի բնակչության վերոհիշյալ թվաքանակը նշում է նաեւ Ա-ԴՕ-ն, որն անկասկած կրկնում է «Кавказский календарь...»-ի տվյալները[7]:

Ընդհարումները Երեւանում սկսվում են փետրվարի 19-ին եւ շարունակվում նաեւ հաջորդ օրը՝ 20-ին:

Կովկասի փոխարքային ներկայացրած վերոհիշյալ գրությունում Կարապետ վարդապետը տեղեկացնում է, որ ինչպես ամենուրեք, այստեղ եւս թաթարներն են նախահարձակ եղել: Այդ օրը Երեւանի շուկայում մի հարբած թաթար գնդակահարել է հայի: Թուրքի կրակոցը կարծես ազդանշան է ծառայել: Կրակոցից անմիջապես հետո հարյուրավոր զինված թուրքեր միաժամանակ. բոլոր կողմերից հարձակվել են հայերի վրա[8]:

Թուրքերը օգտվելով հայության անպատրաստ վիճակից. նախահարձակ են լինում եւ գնդակահարում մի քանի հայերի: Ինչպես վտանգված մյուս շրջաններում. Երեւանում նույնպես հայությունը մատնվում է սարսափի ու խուճապի: Առաջին օրերին դրության լիիրավ տերը ամենուրեք թուրքերն էին: Ջորքի եւ ոստիկանության միջամտությունը՝ ընդհարումները կանխելու եւ կարգ ու կանոն հաստատելու գործում. կրում էր սոսկ ձեւական բնույթ:

«Սակաւաթիւ զօրքերի բափթփուկ մնացորդները.- վկայում է Ֆարհադը.- կառաւարութիւնը բարեհաճում է ուղարկել սարսափի վայրը այն ժամանակ. երբ արդէն թիւրք խուժանի բարբարոսութիւնը յագեցած է լինում եւ այլեւս ոչ կոտորելի մարդ է մնում. եւ ոչ էլ բալանելու ապրանք...»[9]:

Ըստ Վարդան վարդապետի տվյալների. հարձակման առաջին օրը տուժել են 20 հայեր. որոնցից սպանվել են վեցը. իսկ թուրքական կողմը ունեցել է մեկ սպանված եւ մեկ վիրավոր[10]:

Երեւանում տեղի ունեցած փետրվարյան դեպքերի ուսումնասիրությունը մատնանշում է, որ բուն քաղաքում հայկական կողմը թեեւ թուրքերի համեմատ ավելի շատ է տուժել. բայց ունեցել է որոշակի մարտական ուժեր, որոնք փորձել են դիմագրավել թուրք հրոսակախմբերի հարձակումները:

Հայ-թուրքական ընդհարումների հենց առաջին իսկ օրերին Երեւանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ստանձնում է ՀՅԴ ավագագույն անդամներից Սարգիս Օհանջանյանը(Ֆարհադ): Նա Հոնան Դավթյանի. Նիկոլ Դումանի եւ Հովսեփ Արղությանի ընկերակցությամբ. որպես ուսուցիչ աշխատել էր Թավրիզի Լիլավա քաղամասի հայկական դպրոցում եւ այդ տարիներին մասնակցել մի շարք կռիվների, այդ թվում նաեւ Դերեկի կռիվներին ու Խանասորի արշավանքին եւ ուներ կռիվներ վարելու պատկառելի փորձ:

Նրա խոստովանությամբ ինքը դժկամությամբ է ստանձնել Երեւանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, քանի որ իր անհաշտ, ըմբոստ բնավորության պատճառով իր երկարամյա գործունեության ընթացքում միշտ խուսափել է պատասխանատու պաշտոններից, թեեւ ֆիդայիներն ու մյուս ընկերները միշտ էլ սիրել եւ հարգել են իրեն: Նրա գնահատմամբ վերոհիշյալ հանգամանքների բերումով պատասխանատու պաշտոնները վեր էին իր կարողություններից, բայց նրա դիրքորոշումը կտրուկ փոխվում է, երբ հայտնի է դառնում. որ Երեւանի նահանգում էին գործելու«...այնպիսի կորովի ընկերներ. ինչպիսիք էին Դաշնակցական Խեչօն, Նիգեցի Մաթեէոսը (Մաթեւոս Հովհաննիսյան-Ապարանի շրջանի Քուչակ գյուղի բնակիչ-Հ.Գ.), Մկրտիչ Աղամալյանը(Սարհադ), Դրօն ու Մարտիկը եւ մի շարք Սասունցի հերոսներ»[11]:

Որպես ճշտում նշենք, որ Դրոն այդ ժամանակ գտնվում էր զինվորական ծառայության մեջ, ուսանում էր Պյատիգորսկի Ախուլգինսկի գնդի զինվորական ուսումնարանում եւ որեւէ կերպ չէր կարող գտնվել Երեւանում: Նա Երեւան է գալիս մայիսին, Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձեին ահաբեկելուց հետո:

Ս. Օհանջանյանին հատկապես ոգեւորում է Երեւանում Դաշնակցության անվանի զինվորական գործիչ, Նիկոլ Դումանի մերձավորագույն զինակից Դաշնակցական Խեչոյի ներկայությունը:

Ուշագրավ է Դաշնակցական Խեչոյին տրված նրա հետեւյալ բնութագիրը. «Դաշնակցական Խեչօն դարձաւ իմ ամենակարող օգնականը: Նա իր յեղափոխական կորովին փայլուն կերպով միացրել էր զարմա-

նալի ընդունակութիւն իրեն հետ կապելու ամենայանդուգն ահաբեկիչներին: Նա գիտէր սանձել ամէն մի անտեղի ըմբոստութիւն ու մեծամտութիւն, որոնք անխուսափելի արատներ են տգէտ, բայց փայլուն գործերով յայտնի տեռորիստների: Միեւնոյն ժամանակ նա գիտէր ներշնչել փիւռտրական կարգապահութեան յատուկ պատկառանքն ու յարգանքը դէպի մեծ-ընկերի հեղինակութիւնը...»[12]:

Ստանձնելով Երեւանի նահանգի ինքնապաշտպանութեան ղեկը, Սարգիս Օհանջանյանը մարտական գործողութիւնները վարել է հիմնականում հենց Դաշնակցական Խեչոյի համագործակցութեամբ, որին հանճարարված էր նաեւ քաղաքի հայ բնակչութեան անվտանգութեան ապահովումը:

Երեւանում հայկական կողմը ունեցել է աննշան մարտական ուժեր, չափազանց սակավաթիվ զենք ու զինամթերք: Իսկ դա նշանակում էր, որ հայերը ինչպես Բաքվում, այստեղ եւս գրեթե անպատրաստ էին հաջողութեամբ դիմագրավելու թուրքերի հարձակումներին:

Ինչո՞ւ քաղաքում հայերը չունեին անհրաժեշտ քանակութեամբ մարտական ուժեր, զենք ու զինամթերք:

Ըստ Ս. Օհանջանյանի պարզաբանման՝ Երեւանում անհրաժեշտ քանակութեամբ մարտական ուժեր, զենք ու զինամթերք պատճառը նույն է. «Յայտնի է, որ մեր կազմակերպութիւնը, իր ռազմական պատրաստութիւնները(հրացան, ատրճանակ, փամփուշտ, ռումբ, սրեր, եւ այլն) մթերում էր՝ յատկապես Տաճկա-Հայաստան ուղարկելու համար: Այդպիսի մի բացարձակ անսպասելի անակնկալի ո՛չ ոք չէր սպասում...»[13]:

Ս. Օհանջանյանի հավաստմամբ բախումների բռնկման պահին ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեն իր տրամադրության տակ ունեցել է ընդամենը քառասուն երեք հրացան, որոնց մեծ մասը եղել է հնատիպ ու անորակ: Պարզ է, որ այդ քանակութեամբ, այն էլ անվորակ զենքերով հնարվոր չէր հուսալիորեն կազմակերպել ինքնապաշտպանութիւնը եւ հակառակորդի հարձակման պարագայում ապահովել հայ բնակչութեան անվտանգութիւնը:

Նույն քանակութեամբ հնատիպ ու անորակ հրացաններ նրանք վերցրել են քաղաքի բնակիչներից:

Ինչպե՞ս, ի՞նչ ուժերով պիտի կազմակերպեին Երեւանի ինքնապաշտպանութիւնը եւ թուրքերի հարձակման պարագայում ապահովեին քաղաքի հայ բնակչութեան անվտանգութիւնը:

Համաձայն Ս. Օհանջանյանի վկայութեան, քաղաքի ինքնապաշտպանութիւնը ուժեղացնելու առավել հուսալի միջոց ու այլ ընտրանք

չգտնելով՝ նրանք կայացնում են տվյալ իրավիճակում թերեւս միակ հնարավոր. բայց փոքր-ինչ տարօրինակ թվացող հետեւյալ որոշումը. «Ամենից առաջ ի մի գումարեցինք քաղաքի բոլոր երիտասարդներին, որոնց մէջ պակաս չէին լօթիներ, գրպանահատներ, գողեր, մինկիթաքչիներ. գուռնաչիներ, մարդասպաններ: Այդ բոլորը անխուսափելի վրիպումներ էին. որովհետեւ սպառնալի վտանգը մեր գլխի վրայ կանգնած՝ ընտրութիւն անելու հնարաւորութիւնից զրկում էր, մանաւանդ, եթէ նկատի ունենանք այդ տականքների անձնական ճարպկութիւնն ու չափազանց հանդգնութիւնը [14]»:

Հարց է ծագում. իսկ այդ դեպքում ո՞ւր էին եւ ի՞նչ էին անում քաղաքի հայ բնակչութեան առավել ուսյալ եւ պարկեշտ տարրը, երբ նման ճակատագրական պահին, ի պաշտպանություն հայության Ս. Օհանջանյանի բնութագրմամբ, հանդես են գալիս տականքները:

Այստեղ, Երեւանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Ս. Օհանջանյանի թվարկած մարդկանցից կազմավորում է մարտական խմբեր եւ տեղաբաշխում քաղաքի տարբեր թաղերում: Բացի քաղաքի ռազմական կարեւորագույն դիրքերում հերթապահող մարտախմբերից, կազմակերպվում են ատրճանակներով ու ռումբերով զինված թռուցիկ, շարժուն խմբեր, որոնք պիտի հսկեին խանութներն ու թուրքական փողոցների հետ հարաբերություն ունեցող փողոցները:

Քանի որ վտանգն անխուսափելորեն էր սպառնում նաեւ գյուղական բնակավայրերին, կազմակերպված մարտական խմբերի մի մասը ուղարկում են գյուղերը:

Այդ ժամանակ Երեւանում եղել են նաեւ Հնչակյան մարտիկներ: Բարեբախտաբար, այս անգամ դաշնակցական եւ հնչակ մարտիկները գործել են միասնական ու համերաշխ:

Երեւանում Դաշնակցական Խեչոյի գլխավորած մարտախումբն ու հնչակ մարտիկները դիրքեր են գրավում քաղաքի գլխավոր փողոցներում, միմյանց հարեւանությամբ եւ հետեւում թուրքերի տեղաշարժերին [15]:

Հայ ինքնապաշտպանական ուժերը Երեւանում թեեւ սակավաթիվ էին, բայց. այնուամենայնիվ, կարողացել են պատասխան հակահարվածներ հասցնել թուրքերի ոտնձգություններին: Ավելին, համաձայն փոխարքային հասցեագրած գրության, Վարդան վարդապետը ներկայացնելով Երեւանում թուրք զինյալների հարձակման հետեւանքով հայկական ու թուրքական կողմերի կորուստները՝ հայտնում է. «Հաջորդ օրը թաթարները դարձյալ սկսում են հարձակում եւ առաջին կրակոցը նրանք արձակում են ոստիկանության տեղամասից:

Առաջին ահազանգից հետո հայերը պաշտպանական դիրքից անցնում են հարձակման եւ վռնդելով թաթարներին հայկական թաղերից, սկսում են նրանց սեղմել թաթարական թաղերին...»[16]:

Այդ հարձակման հետեւանքով թուրքերն ավելի շատ կորուստներ են ունեցել, քան հայերը: Թշնամուն սարսափի մատնելու նպատակով, հայերը թուրքերի թաղերի վրա նաեւ ռումբեր են նետում: Նույն օրը հայտնվում է զորքը եւ քաղաքում հայտարարվում է ռազմական դրություն:

Երեւանում բռնկված զինված ընդհարումները Նահանգապետի, պետական պաշտոնյաների ու հոգեւորականների միջամտությամբ դադարեցվում են: Նահանգապետի հրամանով Երեւանում խաղաղ իրավիճակը պահպանելու նպատակով զորքն ու ոստիկանությունը ուժեղացած պարեկություն են սահմանում քաղաքի փողոցներում:

---

1. Ա-ԴՕ, Հայ- թուրքական ընդհարումը Կովկասում, Երեւան, 1907, էջ 43:
2. Տե՛ս «Մշակ», 1905, 15 յուլիս:
3. Տե՛ս Кавказский календарь на 1905 год, 3 отд., ст. 48-49:
4. Տե՛ս նույն տեղում:
5. «Հայրենիք»,ամս.,
6. Տե՛ս Кавказский календарь на 1905 год, 3 отд., ст. 48-49:
7. Ա-ԴՕ, Հայ- թուրքական ընդհարումը Կովկասում, էջ48:
8. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 3, էջ3, էջ 17:
9. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 4, էջ 9:
10. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 3, էջ3, էջ 17:
11. «Հայրենիք»,ամս., 1943, թիւ 5, էջ 77:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, էջ 78:
14. Նույն տեղում, էջ 92:
15. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 47, գ. 3:
16. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 3, էջ3, էջ 17:

2.2. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՎԱՌՎԵՐՈՒՄ

Երեւանի նահանգի գավառներում կռիվներն առաջին հերթին բռնկվում են Նախիջեւանում եւ Շարուրում, որտեղ ապրում էին մեծ թվով թուրքեր, իսկ իշխանությունը գտնվում էր տեղական թուրք խաների ու բեկերի ձեռքում:

Նախիջեւան գավառի բնակչությունը, ըստ Ա-ԴՕ-ի տվյալների, կազմում էր 101.000 մարդ, որից 64.000-ը՝ թուրքեր, 34.000(35%)-ը՝ հայեր, իսկ 2000՝ այլազգիներ: Գավառում կային 170 գյուղեր: Հայաբնակ 60 գյուղերից 40-ը գտնվում էր Նախիջեւանի, իսկ 20-ը՝ Գողթան գավառամասում[1]:

Նախիջեւան քաղաքում հայ բնակչությունը կազմում էր ընդհանուր բնակչության 27,7%-ը, 2500 մարդ(500 ծուխ), որից 300-ը բնակվում էր Սուրբ Գեւորգի, 100-ը Ամբար, իսկ մնացածները՝ Երեք Խորանի եւ Թազաքենդ թաղերում[2]:

Մինչեւ 1905թ. Մայիսի 12-ը Նախիջեւան գավառում եւ քաղաքում հայ ու թուրք բնակչությունը պահպանել են խաղաղ իրավիճակը: Համաձայն «Մշակ»-ում տեղ գտած թղթակցությունների, խաղաղության պահպանման գործում նշանակալի ավանդ է ունեցել հոգեւորականությունը, որի ներկայացուցիչները Բաքվի փետրվարյան զոհերի հիշատակին նվիրված եկեղեցիներում ու մզկիթներում կատարած հոգեհանգստի ժամանակ խաղաղության ու եղբայրության են կոչել հայ եւ թուրք բնակչությանը[3]:

Հայ եւ թուրք հոգեւորականները խաղախություն եւ եղբայրություն քարոզելու նպատակով շրջել են նաեւ գյուղեր. այդ մասին հեռագրում են Թիֆլիս, Բաթումի, Երեւան, Գանձակ, Շուշի եւ այլ քաղաքներ[4]:

Չնայած այն հանգամանքին, որ թուրք պարագլուխներն ու հոգեւորականությունը նույնպես որոշակի ջանքեր են գործադրել բախումներ թույլ չտալու համար, այնուհանդերձ հնարավոր չէր քաղաքում եւ գավառում տեւականորեն պահպանել խաղաղ իրավիճակը:

Համաձայն թուրք պարագլուխների ծրագրերի, Նախիջեւանի տարածքը ամբողջովին պետք է մաքրվեր հայ բնակչությունից եւ այն հայտարարվեր անկախ: Մինչեւ ընդհարումների սանձազերծումը Պոլսից եկած հատուկ գործակալների ջանքերով, Բաքվում հաստատ-

վում է պանիսլամիստների կազմակերպություն, որը «...դրդում է Մաքուի եւ Նախիջեւանի խաներին միանալ իր հետ, պարզելով նրանց առաջ յոյսը՝ վերստին գրաւելու Նախիջեւանի խանութիւնը եւ անկախութիւն ձեռք բերելու»:

Այդ կազմակերպութիւնը տարիների ընթացքում ոչ միայն հաջողութեամբ զբաղվում էր մահմեդականութեան շրջանում պանիսլամիզմի գաղափարների տարածմամբ ու քարոզչութեամբ, այլեւ զենքի կուտակման եւ տեղափոխման գործով:

«Դրօշակի» հավաստմամբ. «Կազմակերպութիւնը, ինչպէս երեւում է, զինման գործը մեծ եռանդով առաջ է տարել տարիների ընթացքում Մաքուի եւ Նախիջեւանի խաների միջոցով, որովհետեւ այժմ հաստատուած է, որ Արաքսի մօտ կայսերական «Աբազիանա» մեծ կալուածում (10 հազար դեսիատին) կառավարիչը, որ մի թիւրք է, հաստատել է զէնքի կենտրօնական պահեստ, տեղը շատ ապահով, որովհետեւ ոչ մի ոստիկանութիւն այդտեղ մուտք գործել չէր կարող, մանավանդ որ Նախիջեւան գաւառի պրիստաւները թիւրքեր են եւ խաների ազգականները: Մաքուի խանութիւնից ահագին քանակութեամբ զէնք են փոխադրում այդ կալուածը եւ այդտեղից տարածում ամեն տեղ»[5]:

Կասկած չի կարող հարուցել, որ թուրքական կողմը զինվում ու նախապատրաստվում էր իշխանությունների լուռ համաձայնությամբ ու թողտվությամբ:

Իսկ ի՞նչ էր անում հայկական կողմը: Բաքվի փետրվարյան դեպքերը թելադրում էին, որ հայկական կողմը եւ հատկապես տեղի Հ.Յ.Դաշնակցության կառույցները պետք է անհրաժեշտ հետեւություններ կատարեին ու լրջորեն պատրաստվեին ինքնապաշտպանության: Նախիջեւան գավառում եւ քաղաքում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը մատնանշում է, որ հայկական կողմն ու ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի կառուցները իրականում թեեւ որոշակի քայլեր ձեռնարկել են ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ, բայց դրանք բացարձակապես անբավարար են եղել ժողովրդին զինելու ու նրա անվտանգությունը ապահովելու համար:

Ի՞նչն էր պատճառը հայկական կողմի, առաջին հերթին ՀՅԴ տեղի կառույցների, թույլ պատրաստվածության:

Համաձայն 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում տեղի ունեցած ՀՅԴ Ռայոնական ժողովի տվյալների «Նախիջեւանում կոտորածներից առաջ կազմակերպութիւն համարեա չկար (ընկատի ունի ՀՅԴ կառույցները-Հ.Գ.). միայն քաղաքում կար: Ամբողջ գավառում հազիվ 50 կտոր զէնք լինէր: Հայերը, որ բնակչութեան 35-40% էին, խմբուած չէին եւ կարող էին միայն պաշտպանուել, բայց ոչ յարձակուել»[6]:

Պահպանվել են Նախիջեւանում տեղի ունեցած ընդհարումների մանրամասները պատմող ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջեւանի գաւառի աղետների» եւ «Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թուրքական ընդհարումների մասին: Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10-ը» խորագրերը կրող տեղեկագրերը, որոնցում նշվում են նաեւ ինքնապաշտպանության թույլ կազմակերպվածության պատճառները:

Համաձայն Հ.Յ.Դաշնակցության Արեւելյան բյուրոյին ներկայացրած Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջեւանի գաւառի աղետների» խորագիրը կրող տեղեկագրի, Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն Բաքվի փետրվարյան դեպքերից հետո կանխատեսելով նախիջեւանահայությանը սպառնացող վերահաս վտանգը, ժողովրդին զինելու նպատակով կազմակերպել է դրամահավաք[7]:

«Ժողովուրդը,- նշվում է տեղեկագրում,-լիառատ տալիս էր որքան կարողանում էր: Նա բոլորովին հաւատացած էր, որ յեղափոխութիւնն ամենակարող է, մի խօսքով կարող է փոթորիկը խաղաղացնել...»[8]:

Ըստ նույն տեղեկագրի, հեղինակների խոստովանության, թեպետ իրենք կարողացել էին դրամահավաքի շնորհիվ զգալի գումար հանգանակել, բայց չէին հասցրել զենք ու զինամթերք գնել ու զինել ժողովրդին: ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն, բնականաբար, չի հասցրել կազմավորել նաեւ անհրաժեշտ ինքնապաշտպանական մարտական խմբեր, որոնք վտանգի պահին ի զորու լինեին դիմագրավել թշնամու հարձակումները[9]:

Համաձայն «Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թուրքական ընդհարումների մասին: Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10ը» խորագիրը կրող զեկուցագրի հեղինակների պատճառաբանության՝ «Մենք մինչեւ այժմս զբաղուած ենք եղել ուրիշ քաղաքական ծրագրերով, զարգացրել ենք եւ նախանձախնդիր էինք ավելի եւս զարգացնելու մեր յեղափոխական գործունէութիւնը, բայց իրերի դրութիւնը մեր առաջ դրեց նոր խնդիրներ ու հարցեր, նոր բարդութիւններ»[10]:

Հ.Յ. Դաշնակցության Խորհուրդն արդեն ընդունել էր «Կովկասեան նախագիծ»-ը եւ ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի զեկուցագրի խոստովանությամբ իրենք առավելապես նախանձախնդիր էին «զարգացնելու մեր յեղափոխական գործունէութիւնը », որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պայքար ցարական իշխանության դեմ: Ահա այդ էր հիմնական պատճառ-

ներից մեկը, որ ՀՅԴ կառույցները իրենց ուշադրությունը բեւեռել են ոչ թե ինքնապաշտպանության կազմակերպման, այլ քաղաքական պայքարի խնդիրների վրա «...միանգամայն անպատրաստ գտնուեցին այդ նոր կռուի մէջ, որը հայութեան լինելու եւ չլինելու հարցն էր դրել...»[11]:

Նախիջեւանում, ինչպես արդեն նշվել է, իշխանությունը պատկանում էր ավատատեր խաներին, որոնք միավորվելով ստեղծել էին իրենց շահերն արտահայտող յուրօրինակ կուսակցություն(խաների կուսակցություն)[12]:

Այդ կուսակցությանը զուգահեռ, Նախիջեւանում գործում էր Եվրոպայում ուսանած, մասնագիտությամբ իրավաբան, Նախիջեւանի բուրք բնակչության մեջ մեծ հեղինակություն վայելող Ասար-Աղա Կինգիրլինկու հիմնած կուսակցությունը:

Ըստ Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջեւանի գաւառնի աղէտները» խորագիրը կրող տեղեկագրի, Ասար-Աղա Կինգիրլինսկին ու նրա հիմնած կուսակցության անդամները մեծ աշխատանք են ծավալել քաղաքում եւ գավառում թուրք բնակչության մեջ տարածելու համաիսլամական գաղափարներ:

«Պրօպագանդը,-նշում է տեղեկագիրը,-առաջ է տարւում մեծ յաջողութեամբ, կազմակերպում է քարաքը, ինչպէս եւ գիւղերից շատերը: Ծրագրի էական կետերից մէկն էլ լինում է. միացած Կովկասի բոլոր ազգութիւնների հետ, կուել Ռուսաց կառաւարութեան դէմ եւ յաջողութեան դէպքում Կովկասում ունենալ Կովկասեան Պարսկաստան»[13]:

«Նորին կայսերական մեծության փոխարքա, կոմս Իլլարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին» ներկայացրած զեկուցագրում Երեւանի նահանգի հոգեւոր թեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը փոխարքային տեղեկացնում է, որ թաթարները միավորվելով համամահմեդիզմի դրոշի ներքո, նպատակադրված են խելամտորեն օգտագործել ընծեռված նպաստավոր հնարավորությունը եւ ոչնչացնել երկրամասի, այն է՝ Կովկասի քրիստոնյա բնակչությանը[14]:

«Այդ շարժման գլուխը,- հայտնում է Կարապետ վարդապետը,-Երեւանի նահանգում կանգնած է Նախիջեւանի բնակիչ, պահեստի սպա Մահմեդ-Ղուլի-բեկ Կինգիրլինսկին: Նրա եղբայրն է հիշատակված Ասադ-աղան, որը գլխավորում էր Նախիջեւանի կոտորածը եւ անկասկած իր կարեւոր դերակատարությունն է ունեցել երկու ազգերի միջեւ երկպառակության ու թշնամանքի սերմանման եւ արմատավորման գործում»[15]:

Կինգիրլինսկու կուսակցության քարոզչության դեմ գործում է տեղական աչքի ընկնող խաների կուսակցությունը, որի նպատակը ըստ

էության նույնն էր, բայց հետեւյալ ուղղվածությամբ.«Հայ տարրը հարավային Կովկասում տիրապետող ոյժ է հանդիսանում կուլտուրապէս եւ նիւթապէս. հարկաւոր է ամենից առաջ գցել հայերին եւ ապա ունենալով ընդհանուր Երեւանեան խանութիւն, ամեն միջոցներով կուել Ռուսաստանի դէմ»[16]:

Խաների կուսակցությունը, ավելի մոտ գտնվելով ժողովրդին եւ տիրապետելով մեծ հարստության, ավելի գերիշխող դիրք է ունեցել: Հայկական կոտորածներ սանձազերծելու պահանջով խաների կուսակցությունը բազմիցս դիմել է Կինգիրլինսկուն, բայց յուրաքանչյուր անգամ նա մերժել է՝ պատճառաբանելով. « Հայկական ջարդը վաղաժամ է...»[17]:

Հակառակորդի համաձայնությունը ստանալու նպատակով խաների կուսակցությունը կազմակերպում է Կինգիրլինկու ազգականների սպանությունը եւ մեղքը բարդում հայերի վրա: Հաշվարկը շատ ճիշտ էր: Այդ սպանությունների թելադրանքով երկու կուսակցությունները միավորվում են: Տե՛ս, նույնն տեղում:

Կինգիրլինկու ազգականների սպանությունից հետո իրավիճակը քաղաքում խիստ կերպով լարվում է: Հայ վաճառականները զգուշանալով թուրքերի վրեժխնդրությունից, փակում են խանութները, իսկ թուրքերը սկսում են եռանդուն կերպով պատրաստություններ տեսնել, որը, իհարկե, նկատում է նաեւ հայ բնակչությունը:

«...Մենք,-խոստովանում են տեղեկագրի հեղինակները,-պարզ տեսնում էինք նրանց ակտիւ գործունեութիւնը հայերի դէմ...Հեռագրեց Երեւան ու Թիֆլիս. տեղս եկան Երեւանից խաղաղացնելու համար Կարապետ վարդապետը (Երեւանի նահանգի հոգեւոր թեմի առաջնորդի պաշտոնակատար-Հ.Գ.), Երեւանի քաղաքագլուխը(Մելիք-Աղամալով), եւ փոխ-նահանգապետը(փոխգնդապետ Տարաևովսկի)...Թուրքերը արդէն բոլորովին կանխապատրաստուած էին, իսկ հայ ժողովուրդը ոչ մի հնար չունէր այդ երկունքի րոպէներին իր «քաւարարքը» տեսնելու, գոնէ ինքնապաշտպանութեան համար»[18]:

Տեղեկագրի վկայությամբ քաղաքում փոխնահանգապետ Տարաևովսկու եւ Երեւանի քաղաքագլխի ներկայությունը ժողովրդի մեջ ավելի մեծ խուճապ ու շփոթություն է առաջացնում եւ լարվածությունը հասնում է ծայրահեղության[19]:

Թուրքական կողմի պատրաստություններն ու քաղաքում եւ գավառում տիրող լարված կացությունը արդեն աներկբա մատնանշում էին, որ թուրքերը շատ շուտով նախահարձակ կլինեն, ու կսկսվի հայերի ջարդը:

Ի՞նչ պետք է արվեր: Ժողովուրդը պատրաստ չէր ինքնապաշտպանության, իսկ Նախիջեւանի ՀՅԴ «Քարակերտ» կոմիտեն չուներ անհրաժեշտ մարտական ուժեր դիմագրավելու թուրք հրոսակների հարձակումներին:

ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն հաշվի առնելով թուրքեր կողմից մոտալուտ հարձակման անխուսափելիությունը, դիմում է ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեին, հույս ունենալով, որ նրանից կստանա ռազմական անհրաժեշտ օգնություն:

Պարզվում է, որ Երեւանում նույնպես չկային բավար քանակությամբ մարտական ուժեր: Քաղաքում գտնվում էր Դաշնակցական Խեչոյի գլխավորած փոքրաքանակ մարտական խումբը՝ փաստորեն միակ մարտական ուժն էր, որը պիտի ապահովեր Երեւանի ինքնապաշտպանությունը: Քաղաքում, բացի Դաշնակցական Խեչոյի մարտախմբից գործում էր նաեւ Երեւանի ռուսական գիմնազիայի աշակերտների նախաձեռնությամբ կազմավորված «Բորեաս» մարտական խումբը: ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեի համար այլընտրանք չկար: Կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Գալուստ Ալոյանը ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի դիմումը բավարարելու համար դիմում է հենց «Բորեաս» մարտախմբի անդամներին:

«Մեր խումբը,-գրում է «Բորեաս» մարտախմբի անդամ Սեդրակ Ջալալյանը(Սեբո, Ապարանի շրջանի Քասախ գյուղից-Հ. Գ.),-որ սեփական զէնքերով ու ռազմամթերքով յագեցած էր ու միշտ պատրաստ կը սպասէր Երկիր անցնելու արտօնութեան, այդ օրերուն միակ խումբն էր, որ կրնար անմիջապէս հասնել Նախիջեւանի օգնութեան: Ու մենք Ալոեանին յայտնեցինք մեկնելու մեր պատրաստակամութիւնը»[20]:

«Բորեաս» մարտական խումբը Նախիջեւան պիտի առաջնորդեր Դաշնակցական Խեչոն, բայց քանի որ ՀՅԴ Արեւյան բյուրոյի որոշմամբ Ս. Օհանջանյանի գինակցությամբ նրան էր հածնարարվում Երեւանի ինքնապաշտպանության ղեկը, ուստի «Բորեաս» մարտախումբը մեկնում է առանց Խեչոյի եւ մայիսի 11-ի երեկոյան հասնում է Նախիջեւան[21]:

Ինչպիսի՞ կացություն էր տիրում Նախիջեւանում:

Քաղաքում, ինչպես նաեւ գավառում տեղի ունեցող իրադարձությունները վկայում էին, որ վաղ թե ուշ թուրքերը նախահարձակ կլինեն: Իսկ ժամանակը չէր խոստում ի նպաստ հայերի: Անհրաժեշտ էր համապատասխան քայլեր ձեռնարկել ու կազմակերպել նախիջեւանահայության ինքնապաշտպանությունը: Գլխավոր խնդիրն էր. ինչպե՞ս, ի՞նչ

ուժերով կազմակերպել քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունն ու ապահովել նրա անվտանգությունը:

ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեության եւ «Բորեաս» մարտախմբի անդամ Ս. Ջալալյանի վկայությունները հավաստում են, որ այդ պահին նրանց հրամանատարության տակ գտնվող սահմանափակ մարտական ուժերով չափազանց դժվար էր, գրեթե անհնարին կազմակերպել նախիջեւանահայության ինքնապաշտպանությունն ու ապահովել նրա անվտանգությունը: Բայց այլ ընտրանք գոյություն չուներ: Անհրաժեշտ էր ընտրել ճիշտ, կշռադատված մարտավարություն եւ ելած մարտական ուժերը համապատասխան դիրքերում տեղաբախշելով՝ թույլ չտալ, խոչընդոտել թուրք հրոսակախմբերին ներխուժելու քաղաքի հայկական թաղամասերը[22]:

Ինքնապաշտպանության կազմակերպման եւ մի շարք այլ հրատապ հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով տեղի է ունեցել ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեության ժողովը:

Քանի որ մարտական ուժերը ավելի քան սահմանափակ էին, ուստի ժողովականները որոշում են. «Միանգամայն վստահ լինելով,-նշում է տեղեկագիրը,- որ խանութները ոչ մի յարձակման չեն ենթարկուելու, կռիւը տեղի է ունենալու քաղերում, որոշեցինք մեր ունեցած առանց այն էլ սակաւ ուժերը կենտրոնացնել քաղերում»[23]:

Համաձայն ժողովի որոշման, նախատեսվում էր քաղերում ունենալ 11 դիրք, իսկ յուրաքանչյուր դիրքում երկուական հրացանավորներ ու ատրճանակավորներ: Այդ ժողովը կայացել է առանց «Բորեաս» մարտական խմբի անդամների մասնակցության:

Նույն նպատակով մայիսի 11-ի երեկոյան տեղի է ունենում ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեության հերթական ժողովը, այս անգամ արդեն «Բորեաս» մարտական խմբի անդամների մասնակցությամբ, որոնք թեեւ նոր էին հանգրվանել քաղաքում, բայց արդեն որոշակի պատկերացում ունեին այնտեղ տիրող իրավիճակի, հայկական կողմի մարտական ուժերի քանակի ու հնարավորությունների վերաբերյալ:

«Մենք,-գրում է Ս. Ջալալյանը,-Կոմիտէէն պահանջեցինք քաղաքին յատակագիծը, ճշտելու համար հայերու եւ թուրքերու բնակավայրերը...Ուզեցինք նաեւ ցուցակը իրենց ունեցած զէնքերուն եւ մարտունակ երիտասարդներուն:

Անոնք ըսին, թէ հայկական խանութներու մեծագոյն մասը կը գտնուի թուրքաց թաղում եւ այդ խանութներու պաշտպանութեան մասին մտածելն իսկ աւելորդ է»[24]:

Ժողովում կրկին ճշտվում են մարտական խմբերի պաշտպանական դիրքերը եւ բուրքերի հարձակման դեպքում սակավարիվ ուժերով հայ բնակչության անվտանգությունն ապահովելու հնարավոր տարբերակները: Հավատ ընծայելով իշխանության ներկայացուցիչների ու բուրք պարագլուխների խոստումներին ժողովականները վերջնականապես որոշում են բոլորովին անպաշտպան թողնել քաղաքային շուկան եւ այնտեղ գտնվող հայերի վաճառատները: Ավելին, հայ վաճառականները իրենց բնակարաններում գտնվող թանկարժեք ապրանքները, ինչպես նաեւ դրամն ու ոսկյա զարդերը տեղափոխում եւ թաքցնում են խանութների պահեստներում ու դրամարկղներում[25]:

Իսկ այդ ամենին չէին կարող տեղյակ չլինել հայերի, հատկապես վաճառականների յուրաքանչյուր քայլին ակնդետ հետեւող թուրքերն ու, իհարկե, իշխանության ներկայացուցիչները:

Ընդամենը մի քանի ժամ անց Նախիջեւան քաղաքում ծավալվող դեպքերը ցույց են տալիս, որ հայկական կողմի հաշվարկներն ու մշակած մարտավարությունն այնքան էլ կշռադատված չէին:

Քաղաքում դեպքերը զարգանում են սրընթաց ու հայ բնակչության համար վտանգավոր ուղղվածությամբ:

Մինչ հարձակում սկսելը, մայիսի 11-ի առավոտյան, Երեւանի փոխնահանգապետն ու Նախիջեւանի քաղաքագլուխ Ջաֆար-Կուլի Խանը մի խումբ պետական պաշտոնյաների ու խաների ուղեկցությամբ շրջում են քաղաքում, այցելում են հայ վաճառականներին եւ «...օձի լեզուով համոզեցին հայ վաճառականներին, որ փոթորիկը անցել է, ու անպատասխանատու է մեզ համար քաղաքիս այս դրությունը, խնդրում ենք վաղուանից բաց անել խանութները. մենք մեր գլխով պատասխանատու ենք, եթէ որ մի բան պատահի, եւ հայերը հաւատացին»[26]:

Հաջորդ օրը՝ մայիսի 12-ի առավոտյան պետական պաշտոնյաների նույն կազմը դարձյալ այցելում է հայ վաճառականներին եւ նրանց ուղարկում է խանութները բաց անելու: Հավատ ընծայելով Ջաֆար-Կուլի Խանի եւ պետական պաշտոնյաների երաշխիքներին հայ վաճառականները բացում են խանութները: Թուրք ամբոխը կարծես հենց դրան էր սպասում: Խանութները բաց անելուց 25 րոպե անց, ժամը 9-ին, թուրք ամբոխը «Եա Ալի գոռգոռալով, հրացաններ, րէվոլվերներ արձակելով չորս կողմից յարձակուեց շուկայի վրայ եւ սպանեց բոլոր այնտեղ գտնուող հայերին, շատ քչերին յաջողուեց մի կերպ ազատուիլ » սկսում է բռնություններն ու թալանը[27]:

Հայկական կողմի համար դեռեւս անհայտ էր, որ թուրքական զինված ամբոխի հարձակումը իշխանությունների հետ վաղօրոք համաձայնեցված էր ու խնամքով նախապատրաստված:

Ավելին, համաձայն վաղօրոք մշակած ծրագրի, ըստ նախիջեւանահայության ջարդի գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Ռահիմ խանի խոստովանության, Նախիջեւանի հայկական թաղերի վրա ձեռնարկվող հարձակմանը պիտի մասնակցեին 500 բուրդ զինյալներ, որոնք պիտի կենտրոնանային Արաքսի ափին ու սպասեին հենց Ռահիմ խանի կողմից տրվող ազդանշանին: Ուշագրավն այն է, որ քրդերը չեն մասնակցել հարձակմանը Նախիջեւանի թուրք ամբոխի պահանջով: Տեղյակ լինելով ավարառության նկատմամբ քրդերի ունեցած հիվանդագին հակվածությանն ու նվիրվածությանը, թուրք ամբոխին մտավախություն եւ անհանգստություն է պատճառել այն հանգամանքը, որ քաղաք ներխուժած քրդերը անպայմանորեն կձգտեն թալանել ու տիրել ոչ միայն հայերի, այլեւ իրենց ունեցվածքը[28]:

Ըստ կռիվների մանրամասները պատմող վավերագրի, հարձակումից մի քանի ակնթարթ առաջ «Մինարէթի վրայ երեւաց սպիտակ շորեր հագած մոլլան. դա ազդանշանն էր: Այնուհետեւ մէջիտի եւ այլ տների վրայ թուրքերը դիրքերը թողնելով սկսեցին հրացանաձգութիւն հայերի վրայ, որոնք միանգամայն անպատրաստ ինքնապաշտպանութեան մէջ փակվում էին իրենց տներում եւ ահ ու դողով սպասում էին որ րոպէ առ րոպէ թուրքերը հարձակումներ կը գործեն հայերի տների վրայ»[29]:

Չհանդիպելով որեւէ դիմադրության, թուրք զինված հրոսակախմբերը սպանում են իրենց ճանապարհին հանդիպած հայերին եւ ներխուժելով շուկա, անխնա կոտորում են վաճառատներում ու փողոցներում գտնվող հայ վաճառականներին եւ անցորդներներին: Այդ օրը քաղաքային շուկայում տեղի ունեցած սպանդից միայն մի քանի հոգու է հաջողվում փախչել ու ապաստանել հայկական թաղամասում:

Հայերի ու նրանց խանութների ու կրպակների վրա թուրք զինված ամբոխի հարձակման ժամանակ շուկայում եւ փողոցներում պարեկություն անող ոստիկանական ուժերը լուռ անտարբերությամբ դիտել են տեղի ունեցող իրադարձություններն ու որեւէ քայլ չեն ձեռնարկել կանխելու կոտորածը:

«Այդ կոտորածի եւ թալանի ժամանակ,-ընդում է տեղեկագիրը,-փոխնահանգապետից սկսած մինչեւ վարչական ու ոստիկանական վերջին պաշտօնեան ամենապախարակելի ու ամենանենգ դեր կատարեցին եւ նոյնիսկ լռելեայն նպաստում ու խրախուսում էին թուրքերին»[30]:

Համաձայն «Նախիջեւանի քաղաքի ու գաւառի հայ-թուրքական ընդհարումների մասին: Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10-ը» խորագրերը կրող տեղեկագրի, երեք օր շարունակ թուրք ամբոխը թալանել ու այրել է հայերի խանութներն ու շինությունները: Ընդսմին, թալանին ու հափշտակություններին մասնակցել են ոչ միայն Նախիջեւանի քաղաքի եւ գավառի, այլեւ տարբեր շրջաններից քաղաք ներխուժած թուրքերը, որոնք հայերից բռնագավթած ապրանքները տեղափոխելու նպատակով, իրենց հետ բերել էին սայլեր, գրաստներ եւ ուղտեր:

Հարձակումներին մասնակցել են նաեւ վաղօրոք նախապատրաստված դարբիններ, որոնք հատուկ գործիքներով կտրատում ու բացում էին երկաթյա դրամարկղները[31]:

Ըստ տեղեկագրի, թուրքերը հայերի խանութներից թալանված «ապրանքը տանում էին երեք ճանապարհով. մէկը դէպի շրջակա գիւղերը, միւսը դէպի երկու պահեստները քաղաքի մէջ. այդ պահեստներից մեկն էլ բանից դուրս է գալիս, եղել է Ռահիմ խանի պալատը»[32]:

Այդ նույն տեղեկագրում տեղ է գտել ռուս աստիճանավորներից մեկի տիկնոջ՝ Անտոնինա Կուլիկովայի ցուցմունքը, որն այդ օրերին գտնվելով Նախիջեւանում, ականատես է եղել այնտեղ տեղի ունեցած իրադարձություններին: Կոտորածի պահին սարսափի մատնված ռուս տիկինը փախել ու ապաստանել է Ռահիմ խանի ապարանքում:

«Ռահիմ խանի պալատը,-պատմում է ռուս տիկինը,-անդադար գալիս էին թուրքեր եւ խորը գլուխ տալով խնդրում էին իրենց թույլատրել սպանել տեղացի յայտնի վաճառական Պողոսեանին, հազարապետ Սիմէօնեանին ու Դարչինեանին: Երբ գնում էին Ռահիմի ապարանքը, նա փոխնահանգապետի (այդ օրերին Երեւանի փոխնահանգապետ Տարանովսկին Նախիջեւանում իջեւանել ու ապրում էր Ռահիմ խանի ապարանքում-Հ.Գ.) հետ ծիով ուղեկցութեամբ ծիաւոր ոստիկանների արշաւում էին փողոցով, իսկ սրանց մօտով թիւրքերը տանում էին թալանած թանկագին խմիչքները, ծխախոտ, բամբակ եւ այլն...

Ռահիմ խանի ծառաները տան վերեւի յարկում սնդուկների մէջ շարում էին բերած գորգերը, կերպասեղէնն ու ապրշումէ կտորները: Ռահիմ խանը տեսնում էր իւր աչքերով բոլորը, նոյնիսկ խանի որդին ճաբօն բերում էր վերեւ զանազան ապրանքներ...»[33]:

Եթե քաղաքի փողոցներում գտնվող ոստիկանական ուժերը լուռ անտարբերությամբ դիտել են թուրք զինված ամբոխի կողմից իրականացվող կոտորածը, ապա նույն պահին գորքը, որը կոչված էր նման պահերին կանխել ու թույլ չտալ հակաօրինական գործողություններ,

առավել եւս զանգվածային սպանություններ, բռնություններ ու թալան, քաղաքի մերձակայքում զբաղված է եղել գորաւարժությամբ: Երբ գորքի հրամանատարին տեղեկացնում են քաղաքում կատարվող սարսափելի դեպքերի, հայերի կոտորածի, զանգվածային թալանի մասին, նա հանգիստ պատասխանում է, որ «երբ գորաւարժությունները վերջանայ, կվերադառնամ քաղաք»[34]:

Թեպետ գորքը, այնուամենայնիվ, վերադառնում է քաղաք, բայց միայն երեք ժամ անց է ներկայանում չուկա եւ հանգիստ դիտում, թե ինչպես են թուրք զինավառ խմբերը սպանում հայերին, թալանում ու հրդեհում հայերին պատկանող խանութները եւ այլ շինություններ:

Ուշագրավն այն է, որ գորքը միջամտում եւ սկսում է քայլեր ձեռնարկել միայն այն ժամանակ, երբ չուկայում բռնկված հրդեհը տարածվելով հասնում է նաեւ թուրքերին պատկանող խանութներին: Զորքի հրամանատարի հրամանով զինվորները ոստիկանների հետ միասին անմիջապես շտապում են հանգցնել թուրքերի խանութների հրդեհը: Շնորհիվ զինվորների ու ոստիկանների ցուցաբերած օգնության, թուրքերին պատկանող խանութներն ու կրպակները գրեթե ամբողջովին փրկվում եւ ոչ մի վնաս չեն կրում[35]:

Ռուս զինվորների եւ ոստիկանության այդօրինակ պահվածքը ամենեւին պատահական չէր:

Ըստ վերոհիշյալ ռուս տիկնոջ պատմածի՝ կոտորածի օրը, ճաշի ժամանակ Երեւանի քաղաքագլուխ Մելիք-Ադամալովի ուղեկցությամբ Ռահիմ խանի ապարանքն է գալիս Երեւանի նահանգի հոգեւոր թեմի առաջնորդի պաշտոնակատար Կարապետ վարդապետը:

Մի քանի օր անցկացնելով քաղաքում եւ գյուղերում՝ Կարապետ վարդապետը զեկուցագիր է ներկայացնում «Նորին կայսերական մեծության փոխարքա, կոմս Իլլարիոն Իվանի Վորոնցով-Դաշկովին», որտեղ մանրամասնորեն ներկայացնում է Նախիջեւան քաղաքում եւ մի շարք գյուղերում տեղի ունեցած իրադարձությունները[36]:

Զեկուցագրում Կարապետ վարդապետը փոխարքային հայտնում է, որ հայության նկատմամբ Նախիջեւանի բաթարների որդեգրած վտանգավոր վերաբերմունքի մասին լուրերը իրեն են հասել Բաքվի փետրվարյան սարսափներից անմիջապես հետո:

Լուրերը տեղում ճշտելու նպատակով Կարապետ վարդապետի խնդրանքով Աբաս-Ղուլի խանը Գարեգին վարդապետի ուղեկցությամբ Նախիջեւան է ուղարկում իր որդիներից մեկին: «Նրանք,-գրում է Կարապետ վարդապետը,- մեծ հաջողությամբ կատարել են հանձնարարու-

թյունը: Բարեկամության մասին հայ և թաթար բնակչության կողմից արտահայտած հանդիսավոր խոստումները հիմք էին տալիս կարծելու, որ խաղաղ կարգավիճակը Նախիջեւանում հաստատվել էր ընդմիշտ»[37]:

Այդ պատճառով վարդապետին մեծ զարմանք է պատճառել իրենց հասած Նախիջեւանում մայիս ամսին կատարված դեպքերի լուրը: Ըստ որում, համաձայն մահմեդականների կողմից տարածվող լուրերի, քաղաքում անկարգությունները բռնկվել են հայի կողմից մայիսի 7-ին խորհրդավոր հանգամանքներում ինչ-որ մի թաթարի սպանության հետեւանքով: Ի պատասխան իրենց արյունակցի սպանության, թաթարները օրը ցերեկով սպանում են մի հայի, որը որեւէ առնչություն չի ունեցել նախորդ օրը կատարված սպանության հետ:

Հաջորդ օրը, երբ Նախիջեւանից ստանում են թաթարների կողմից եւս մի հայերի սպանությունը գուժող նոր տեղեկություններ, նահանգապետը որոշում է Ջաֆար-Ղուլի խանի ուղեկցությամբ այնտեղ գործուղել փոխնահանգապետին՝ փոխգնդապետ Տարանովսկուն:

«Ես,-հայտնում է Կարապետ վարդապետը,-հասկանալով վտանգի մեծությունը, որոշեցի անձամբ մեկնել եւ խնդրեցի, որ ինձ հետ մեկնի նաեւ Երեւանի քաղաքագլուխ Մելիք-Աղամալովը: Մայիսի 11-ին, առավոտյան հասանք Նախիջեւան: Հայերին մենք գտանք խիստ ընկճված ու վախեցած վիճակում: Մելիք-Աղամալովը, առաջին անգամ լինելով Նախիջեւանում, զարմացած էր, ինչպես կարող է խոսք լինել հայերի հանգիստ վիճակի մասին, երբ նրանք մահմեդականների համեմատ փաքրաքանակ էին ու բոլորովին անկարող ինչ-որ բան անել նրանց հանդեպ»[38]:

Ականատես լինելով քաղաքում կատարվող սարսափագնու դեպքերին, նրանք չտապում են հանդիպել փոխնահանգապետի՝ Տարանովսկու հետ: Մայիսի 12-ին Ռահիմ խանի ապարանքում հանդիպելով փոխնահանգապետին, Կարապետ վարդապետն ու Երեւանի քաղաքագլուխ Մելիք-Աղամալովը նրան խնդրում են որեւէ միջոց ձեռնարկել դադարեցնելու կոտորածը:

Ավելի քան տարօրինակ է եղել փոխնահանգապետի պատասխանը, որը տվյալ պահին իր ենթակայության տակ ունեցել է ոչ միայն ոստիկանական ուժեր, այլեւ զորք: Ի պատասխան Երեւանի քաղաքագլխի խնդրանքի, փոխնահանգապետ Տարանովսկին պատասխանում է, որ «...ոչ մի ուժ, հնարաւորութիւն չունի այդ անելու, ho՝ չի կարող իր գլուխը դնել խփողների առաջ: Այդ ասելիս փոխ-նահանգապետը երգում էր մի ինչ-որ զվարդ երգ եւ մատները խաղացնում սեղանի վրայ, իբրեւ դաշնամուր խփելիս լինի...

Կոտորածից ու թալանից յետոյ արդէն փոխ-նահանգապետը հեռագրում է.«...ձեռնարկել եմ բոլոր անհրաժեշտ միջոցները»: Փոխ-նահանգապետը ամենուրեք ու ամենքին ասում էր, որ առաջինը սկսել են հայերը կրակ արձակել»[39]:

Բայց իրականում փոխնահանգապետ Տարանովսկին եւ ընդհանրապես որեւէ պետական պաշտոնյա ոչ մի անհրաժեշտ քայլ չէր ձեռնարկել դադարեցնելու կոտորածն ու թալանը:

Որպես վարձահատույց փոխնահանգապետի դրսեւորած թուրքամետ վերաբերմունքի, Նախիջեւանի խաները նրան եւ «նվիրել» հայերից բռնագավթած թանկարժեք ապրանքների մի մասը:

Վերոհիշյալ տեղեկագիրը արձանագրելով այդ իրողությունը, նշում է. «...երբ փոխ-նահանգապետը հրաժեշտ տուեց խաներին ու հեռացաւ դէպի Երեւան, նրայ ետեւից գնաց նաեւ մի փուրգոն ապրանքներով լի, իբրեւ ընծայ խաների կողմից: Հասկանալի է, թէ ինչ ընծաներ էին եւ ինչու համար»[40]:

Համաձայն տեղեկագրում տեղ գտած տվյալների, մայիսի 12-ից մինչեւ մայիսի 14-ը Նախիջեւան քաղաքում տեղի ունեցած դեպքերի ժամանակ հայերի ունեցած նյութական կորուստները ունեցել են հետեւյալ պատկերը. «Հայերի 195 խանութներից թալանուած էին 180 խանութ, կոտրատուած եւ կողոպտուած 20 երկաթեայ դրամարկղ-պահարաններ: Այդ թալանից առաջացած վնասը հայ վաճառականներին հասցրած, հաւասար է 1,285,866 րուբ. 12 կոպ., որ հաշուել է վաճառականներից կազմուած մի առանձին յանձնաժողով: Այդ կողոպտուած ապրանքներից մի մասը, մոտաւորապէս 10,000р. արժողութեամբ կառաւարութեան ձեռք առած միջոցների շնորհիւ գտնուել է թուրք խանութպանների մօտ: Մինչեւ օրս թալանող, կողոպտող եւ սպանող թիւրքերից ոչ ոք չի ձերբակալուել»[41]:

Թուրք ամբոխը, ինչպես արդեն նշվել է, առավելապես համակված է եղել ավարառության, թալանի ու հայի «հեքիաթային» հարստությանը տիրելու ձգտումներով: Այդ պատճառով հարձակման ժամանակ նրա ուշադրության կենտրոնում եղել են քաղաքային շուկան ու այնտեղ գտնվող հայերի վաճառատները, քանի որ «...համոզուած էին, որ հայերի հարստութիւնը այնտեղ էր գտնւում».

Թալանի, ավարառության նկատմամբ թուրք ամբոխի դրսեւորած անհագուրդ ծարավն ու ձգտումը ինչ-որ չափով նպաստել է, որպեսզի քաղաքի հայ փոքրաքանակ ինքնապաշտպանական ուժերն այդ օրը կարողանային հաջողությամբ դիմագրավել թշնամու հարձակումներին ու թույլ չտային թուրք հրոսակներին ներխուժելու հայկական թաղամասեր:

Նախիջեւանի քաղաքում մայիսի 12-ին տեղի ունեցած դեպքերի մանրամասները ներկայացնելիս հեղինակներն առավել մեծ ուշադրություն են դարձրել նկարագրելու հայկական ջարդերը, հայերի անպաշտպան, անօգնական եւ թշվառ վիճակն ու ինչպես նաեւ թուրք ամբոխի կատարած թալանը եւ դրա հետեւանքով հայ բնակչության կրած նյութական կորուստները: Ընդհատ է, այդ օրը Նախիջեւանում տեղի ունեցած սարսափազդու դեպքերի հետեւանքով մեծապես տուժել է հայկական կողմը, բայց, այնուամենայնիվ, հայ փոքրաքանակ մարտական ուժերը կարողացել են հերոսական դիմադրություն ցույց տալ եւ թույլ չեն տվել թուրք զինված ամբոխին ներխուժելու հայկական թաղեր:

Մայիսի 12-ին Նախիջեւանում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքի հայկական թաղերը թուրքերի հարձակումներից պաշտպանելիս, առավելապես աչքի են ընկել «Բորեաս» մարտական խմբի անդամները, որոնք կռիվների ժամանակ դրսեւորած իրենց վարպետությամբ ու քաջությամբ ոգեշնչել ու մարտի են առաջնորդել քաղաքի սակավաթիվ ինքնապաշտպանական ուժերին:

Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի մղած կռիվները որոշակի մանրամասնությամբ ներկայացնում է «Բորեաս» մարտախմբի անդամ Սեդրակ Ջալալյանը:

Եթե հիմք ընդունենք Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի մղած կռիվների մանրամասների մասին պատմող Ս. Ջալալյանի հուշագրության իսկությունը, իսկ այլ վկայություններ չկան, ապա կարելի է աներկբա պնդել, որ այն, ինչ Նախիջեւանում տեղի ունեցած մայիսյան կռիվների ժամանակ, կատարել է «Բորեաս» մարտական խումբը, վեր է որեւէ գովասանքից ու գնահատականից:

ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի ներկայացրած տեղեկագրում հեղինակները նշում են. չնայած այն իրողությանը, որ թուրքերն առավել մեծ բազմությամբ հարձակվել են շուկայի ու հայերի վաճառատների վրա, այնուամենայնիվ, մի քանի հրոսակախմբեր փորձել են ներխուժել հայկական թաղեր, բայց հանդիպելով հայ մարտիկների դիմադրությանը, հրաժարվել են իրեց մտադրությունից ու դադարեցրել են հարձակումը:

Այդ նույն տեղեկագիրը թեւ չի ներկայացնում կռիվների մանրամասները, այնուամենայնիվ, շեշտում է քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպման գործում եւ հատկապես կռիվներում «Բորեաս» մարտախմբի քաջարի մարտիկների ներդրած անգնահատելի ծառայությունը [42]:

Թուրք ամբոխը, որին գլխավորապես հետաքրքրում էր ավարառությունն ու թալանը, մարտադաշտում երբեք չէր կարող աչքի ընկնել իր

կազմակերպվածությամբ ու մարտունակությամբ: Նրա մղած, Նիկոլ Դումանի դիպուկ արտահայտությամբ «Ամբոխային կռիվը», ինչպես ցույց էին տվել նախորդ մարտերը, կարելի էր վճռասպրդել անգամ փոքրաքանակ ուժերով: «Բորեաս» մարտախմբի անդամները, որոնք Նիկոլ Դումանի սաներն էին, քաջավարժ ու հրաշալի նշանառու մարտիկներ, անշուշտ տեղյակ էին թուրք ամբոխի մղած «Ամբոխային կռվի» էությանն ու յուրահատկությանը:

Նախիջեւանում հանգրվանելու հենց առաջին իսկ օրը, տեսնելով քաղաքում տիրող ողբալի կացությունն ու հայ բնակչության խուճապային տրամադրությունը, նրանք աշխատել են ոգեշնչել տեղացիներին, բացատրելով թուրք ամբոխի մղած «Ամբոխային կռվի» թույլ կողմերը, ընդսմին շեշտելով, որ «...շատ լաւ պատրաստուած ռազմիկներ ենք, եկած ենք տեղական ուժերը ղեկաւարելու եւ յուսահատելու ոչ մի պատճառ կայ: Եթէ դուք հոգիով այնքան ստրկացած էք, որ կուզէք առանց դիմադրելու կոտորուիլ՝ Աստուած ձեզ հետ: Մենք մեր պարտականութիւնը կը կատարենք, ինչպէս վայել է դաշնակցական մարտիկին» [43]:

Ոգեշնչվելով բորեասցիների բացատրությունից ու մարտնչելու տրամադրվածությունից, ՀՅԴ «Քարակերտ» կոմիտեի անդամները խոստանում են «Բորեասի» մարտախմբին տրամադրել զինվորներ եւ նրանց ցույց են տվել քաղաքի առավել կարեւոր նշանակություն ունեցող դիրքերը:

«Բորեասի» մարտախմբի անդամներին է վստահվել քաղաքի առավել վտանգավոր դիրքերի պաշտպանությունը: Իսկ քաղաքի հայկական թաղերի պաշտպանական դիրքերից ամենագլխավորը, ըստ Ս. Ջալալյանի վկայության, եղել է քաղաքային պարտեզի մերձակայքում եւ Սարմանլար անունը կրող թուրքական ամենամեծ բաղի դիմացը գտնվող իրենց մարտախմբի իջեւանած շենքը, որը, կարելի է ասել, համարվում էր դեպի հայկական թաղերը տանող մայրուղու յուրօրինակ դարպասը:

Թեպետ հայ ինքնապաշտպանական ուժերը ավելի քան սահմանափակ էին, բայց այլ ընտրանք չկար: Հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը, բորեասցիները որոշում են մարտախմբի վեց անդամների դիրքավորվել իրենց հանգրվանած շենքի դիմացում գտնվող երկու շենքերում եւ թիկունքից ու դիմահար տեղացող խաչաձեւ հարվածներով դիմագրավել թշնամու հարձակումները: Նրաք հույս են ունեցել նման մարտավարությամբ խուճապի մատնել ավարառության տենչով համակված թուրք ամբոխին ու թույլ չտալ նրան ներխուժելու հայկական թաղեր:

«...Մենք,-գրում է Ս. Ջալալյանը,-չգիտեինք, թէ տասը հոգով ինչպէ՛ս պիտի պաշտպանէինք քաղաքի մը բազմահազար կրաւորական բազմութիւնը: Կը պատկերացնէինք մեր վրայ թափելիք անվերջանալի շարքը վոհմակներուն, ու կը պատրաստուէինք միայն սուղ ծախել մեր կեանքը, ըլլալ պատարիւն. փամփուշտները պարապ չվատնել եւ մեռնիլ հայդուկներու մահով»[44]:

Մայիսի 12-ի ժամը 11-ին հարյուրավոր թուրքեր զինված հիմնականում բերդաձ եւ մարտին հրացաններով, կենտրոնանալով բորեասցիների դիրքավորված շենքի մերձակա քաղաքային այգում, կատաղի կրակ տեղալով, փորձում են ներխուժել հայկական թաղամաս: Սակայն հարձակումը զարգացնելու նրանց ձեռնարկած բոլոր փորձերն ապարդյուն են անցնում:

Բորեասցիների կիրառած մարտավարությունը խելամտորեն հաշվարկված էր ու արդյունավետ: Այդ պահին իրենց վճռորոշ խոսքն են ասում հարձակվողների վրա մյուս երկու շենքերում դիրքավորված մարտիկների թիկունքից տեղացող դիպուկ հարվածները:

Ներկայացնելով այդ պահը՝ Ս. Ջալալյանը նշում է.«...մեր քաջարի ընկերները՝ Յակոբ Բաղրամեան ու Վահան Դարբինեան մինչեւ մեր հասնիլը, իրենց անվրէպ գնդակներով գետին էին տապալած ամէն մէկը որ յանդգնած էր փողոց դուրս գալու»[45]:

Զգաստանալով հայ մարտիկների անվրեպ հարվածներից, թուրքերն ավելի ու ավելի են կուտակվում քաղաքային այգում եւ դադարեցնելով հարձակումը՝ սպասում են հարմար պահի:

Ավելի մեծ թվով թուրքերի գնդակահարելու ու նրանց ահ ու սարսափի մատնելու նպատակադրությամբ հայ մարտիկները որոշում են կիրառել շատ համարձակ, հակառակորդի համար անսպասելի մարտավարություն: Քանի որ թուրքերը երկյուղելով դիպուկ հարվածներից, խմբվել էին քաղաքային այգում ու փորձ չէր անում այնտեղից դուրս գալ, հայ մարտիկները որոշում են դադարեցնել կրակոցները եւ թույլ տալ նրանց դուրս գալ փողոց ու թիկունքից եւ դիմացից տեղացող հարվածներով՝ վճռական պարտության մատնել նրանց:

Հայ մարտիկների կիրառած այդ մարտավարությունը դարձյալ պսակվում է հաղթանակով:

Թուրքերը դուրս են գալիս քաղաքային այգուց եւ փորձում շարժվել դեպի հայկական թաղեր:

ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի կազմած վերոհիշյալ «Ընդհանուր Տեղեկագիր...»-ը ներկայացնելով այդ պահը նշում է, որ թուրքերը օգտվելով կրակի դադարեցումից եւ կարծելով, որ հայկական կողմը դադարեցրել է դիմադրությունը, վերսկսում է հարձակումը. բայց «...մի քանի դիրքերից խիստ դիմադրութեան հանդիպելով. թուրքերը ստիպուած եղան յետ դառնալ...»[46]:

Իր հուշերում իրենց կողմից կիրառած մարտավարության ու նրա արդյունավետության մասին փոքր-ինչ ավելի մանրամասնորեն է անդրադառնում Ս. Ջալալյանը:

«Որոշեցինք,-գրում է Ս. Ջալալյանը,- մեր կրակը դադարեցնել, որպէսզի քաջալերուած թշնամին փողոց լեցուի եւ իր դասը առնէ: Արդարեւ, խուժանը«Եա Ալի» գոչելով մացառներէն թափուեց փողոց: Ապա սկսեց մեր չորս մասւզերներու ճարճատոցը: Երբ կէս վայրկեանի մէջ տասնեակ մը դիակներ փռուեցին, խուճապը տիրեց թշնամւոմ եւ սարսափահար ամբոխը իր չունչը առաւ՝ հոչակաւոր Սարաւնլար թաղը հասնելէն վերջ միայն: Այդ թաղը թուրքերու ամենակարեւոր ելակէտն էր:

Տարած էինք առաջին յաղթանակը»[47]

Մարտադաշտից արսափի ու խուճապի մատնված թուրք զինյալների փախուստը մեկ անգամ եւս ապացուցեց ամբոխի մղած Նիկոլ Դումանի բնութագրմամբ «Ամբոխային կռվի» անկազմակերպվածությունը, թուլությունն ու խոցելիությունը:

Ըստ ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի կազմած տեղեկագրի, այդ օրը տեղի ունեցած կռիվների ժամանակ հայ մարտիկները չեն ունեցել ոչ միայն զոհեր, այլեւ նույնիսկ վիրավորներ: Ջոհվել են միայն պատահական հինգ անցորդներ: Թուրքերը ունեցել են մի քանի տասնյակ սպանվածներ, եւ ավելի շատ վիրավորներ, որոնց թիվը հնարավոր չի եղել ճշտել[48]:

Ս. Ջալալյանի հավաստմամբ, միայն մայիսի 12-ին տեղի ունեցած կռվում իրենց գնդակներին զոհն են դարձել ավելի քան 70 թուրքեր եւ բազմաթիվ, բայց անհայտ քանակությամբ վիրավորներ, որոնց անմիջապես հեռացրել են մարտադաշտից: «Բորեաս» մարտական խմբի անդամներն ու տեղի ինքնապաշտպանական ուժերը չեն ունեցել ոչ մի զոհ եւ ոչ մի վիրավոր[49]:

Քաղաքի ինքնապաշտպանական ուժերի առաջին հաղթանակը ոգեշնչում է Նախիջեւանի երիտասարդությանը: Նույն օրն եւեթ տասնյակ երիտասարդներ ցանկություն են հայտնում զենք վերցնել ու համալրել ինքնապաշտպանական խմբերի շարքերը: Մարտնչելու տրամադրվածությամբ տոգորված երիտասարդների քանակը թեւ արդեն զգալի էր, բայց պակասում էր անհրաժեշտ զենքն ու զինամթերքը, որոնցով պիտի զինեին կամավոր զինվորագրվածներին:

Թեպետ խիստ սահմանափակ է եղել զենք ու զինամթերքի քանակը, այնուամենայնիվ, ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն կարողանում է գինել ու կազմավորել մի նոր մարտական խումբ:

«Օրուայ մեր յաջողութիւնը,-կ՚ակնարկէ Ս. Զալալեանը,-յաւսադրեց տեղացի երիտասարդները եւ մինչեւ երեկոյ յաջողեցանք զէնքի տակ առնել 17 մարտիկներ եւ մեր դիրքերու թիւը հասցնել 8-ի: Ամէն դիրքի մէջ մէկ Բոլշեւսականի ղեկավարութիւնը անհրաժեշտ համարելով, մեր ընկերները բաժնուեցին զանազան դիրքերու վրայ»[50]:

Իշխանությունների աջակցությունը վայելող թուրք պարագլուխները չէին կարող ձեռքից բաց թողնելիայերին կոտորելու են նրանց «հեքիաթային հարստությունը» բռնազավթելու ու թալանելու իրենց ընձեռված ամենահարմար հնարավորությունը:

Հարյուրավոր զինված թուրքեր կենտրոնանում են Սարվանլար թաղում: Հաշվի առնելով նախորդ օրը տեղի ունեցած կռվում կրած պարտությունը, թուրք պարագլուխները փոխում են հայ մարտիկների պաշտպանական դիրքերի վրա ձեռնարկվող հարձակումների մարտավարությունը: Այս անգամ թուրքերը ոչ թե պիտի գործեին հախուռն ու անկազմակերպ, այլ նշանակված հրամանատարների առաջնորդությամբ հարձակվելու էին մարտաշարքերով, առանձին խմբերով, որոնցից յուրաքանչյուրին տրվել էին սահմանված հանձնարարություններ: Հարձակվող խմբերին հաջորդում էին թուրք պարագլուխների թիկնապահներից բաղկացած հատուկ նշանակության խմբեր, որոնց պարտականությունն էր գնդակահարել բոլոր նրանց, ովքեր կփորձեին լքել մարտադաշտն ու փախուստի դիմել:

Մայիսի 13-ի առավոտյան թուրքերն առավել մեծ բազմությամբ վերսկսում են հարձակումը: Թուրք պարագլուխները որքան էլ ջանային կազմակերպված բնույթ հաղորդել ամբոխի գործողություններին, ոչ մի դրական արդյունքի չեն հասնում: Հարձակվելիս խմբերը խառնվել են իրար եւ կորցրել կազմակերվածությունն ու մարտաշաքերը: Հրամանատարները թեպետ ջանքեր են գործադրել, բայց անզոր են եղել շտկել իրավիճակն ու կազմակերպված բնույթ հաղորդել հարձակմանը:

Հարյուրավոր հրացաններից կրակ արձակելով, թուրքերը դարձյալ անկազմակերպ շարքերով մոտեցել են հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերին:

Ներկայացնելով այդ պահը՝ Ս. Զալալյանը նշում է. «...Փողոց նետեցինք ռումբ մը եւ գործի դրինք արգահարուածները: Սարսափահար՝ խուժանը փախուստի դիմեց, իսկ մենք սկսանք գնդակոծել պարտէզին

մացառները. ուրկէ վա՞յ ու վայով դուրս փախաւ բշնամին: Մենք անարգել շարունակեցինք կրակը խառնիճաղանճին վրայ, մինչեւ որ բոլորը փախան ու թաքնուեցին իրենց թաղի առաջաւոր շէնքին ետեւը»[51]:

Թուրքերը կրում են հերթական պարտությունը: Քաղաքում հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը անակնկալ էր ոչ միայն թուրք պարագլուխների, այլեւ իշխանությունների համար: Դժվար էր հավատալ, որ խիստ սահմանափակ թվով մարտիկներ կարող էին դիմագրավել, առավել եւս պարտության մատնել քանակապես հարյուրապատիկ անգամ իրենց գերազանցող զինված թուրքերին:

Մայիսի 12-13-ին Նախիջեւան քաղաքում ծավալված մարտերի ժամանակ հայ մարտիկների դրսեւորած անկոտրում կամքն ու մարտնչելու վարպետությունը իշխանություններին հարկադրում են միջամտել քաղաքում կատարվող իրադարձություններին: Դարձյալ Նախիջեւան է ժամանում Երեւանի նահանգի փոխնահանգապետն ու նույն օրն եւեթ ժողովի հրավիրում հայ եւ թուրք ազդեցիկ դեմքերին: Շատերը հավատացած էին, որ նահանգապետը խաղաղություն հաստատելու առաքելությամբ է ժամանել Նախիջեւան եւ իր նախաձեռնությամբ հրավիրված ժողովում ջանքեր կգործադրի հաշտեցնելու հակամարտող կողմերին:

Իրականում փոխնահանգապետի նպատակը բոլորովին էլ խաղաղություն հաստատելը չէր:

Ժողովում դիմելով մասնակիցներին, փոխնահանգապետը նախ սպառնալի ու դատապարտող տոնով հայտնում է երեք օր առաջ Բաքվում ռումբի հարվածով Բաքվի գեներալ-նահանգապետ Նակաշիձեի սպանության մասին, ապա ավելացրել, որ «...ռուս պետութիւնը չի կրնար Հայերու ձգտումներուն հանդուրժել, այդ պատճառով ալ հայերը արժանի են խստագոյն պատիժներու: Դառնալով թուրք բէկերուն՝ կոչ ըրած է այնպէս դաս տալ հայերուն, որ յաւիտեանս չմոռնան: Ի վերջոյ, հայհոյելով, հայերը վռնտած է ժողովէն»[52]:

Նահանգապետի դիրքորոշումն ու քարոզչությունը ավելի է խրախուսում ու մարտականորեն տրամադրում թուրք երեւելիներին: Հայկական կողմի համար այլեւս որեւէ կասկած լինել չէր կարող, որ շատ շուտով նահանգապետի «այնպէս դաս տալ Հայերուն, որ յաւիտեանս չմոռնան» կոչին հետեւելու են թուրքերի նոր հարձակումները:

Բաքվի գեներալ-նահանգապետ Նակաշիձեի սպանության մասին լուրը մեծ ոգեւորությամբ է ընդունվում Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի կողմից: Նրանք վճռում են գնդակահարել Երեւանի նա-

հանգի փոխնահանգապետին, եթե նա հանդգներ մոտենալ իրենց դիրքերին: Բայց նահանգապետը կարծես խուսափելով հայ մարտիկների վրեժխնդրությունից, հաջորդ օրը մեկնում է Երեւան:

Թուրքերին վերջնականապես պարտության մատնելու նպատակով հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը փոխում է կռիվներ մղելու մարտավարությունը: Մայիսի 12-13-ին տեղի ունեցած մարտերը աներկբա հուշում էին, որ կարելի է դիմել վճռական գործողությունների եւ թշնամուն ջախջախել հենց իր որջում: Առաջնորդվելով իրեց առաջնորդի՝ Նիկոլ Դումանի դավանած մարտավարությամբ, նրաք որոշում են չսահմանափակվել կրավորական ինքնապաշտպանությամբ ու ձեռնարկել հարձակողական գործողություններ: Թշնամին թեեւ քանակական առումով բազմիցս գերազանցում էր հայ մարտիկներին, բայց բացարձակապես մարտունակ չէր, անկազմակերպ էր ու խուճապահար:

Հայկական կողմը հակառակորդի նկատմամբ ուներ եւս մի շատ կարեւոր առավելություն: Ի տարբերություն թուրքերի, որոնք զինված էին հնատիպ գենքերով, հայ մարտիկները զինված էին հեռահար մոսին հրացաններով, մաուզեր ատրճանակներով ու ձեռնառումբերով: Վերոհիշյալ գործոնները հաշվի առնելով՝ հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը վստահ է եղել, որ կարելի էր փոքրաքանակ ուժերով վճռական գրոհ ձեռնարկել թուրքերի վրա եւ դիպուկ հարվածներ տեղալով՝ խուճապի մատնել նրանց ու տոնել հաղթանակ:

Ծրագրելով իրականացնել հարձակողական գործողություն, հայ մարտիկները որոշում են առաջին հերթին խորտակել իրենց դիրքերի առջեւ գտնվող շենքը, որը յուրօրինակ պաշտպանական հենակետ էր ծառայում թուրքերի համար: Սովորաբար, գրոհից առաջ թուրքերը կենտրոնանում էին այդ շենքի հետեւում եւ այնտեղից գրոհ ձեռնարկում հայկական թաղերի վրա: Որպեսզի գրոհը հակառակորդի համար լիներ անակնկալ ու առավել սարսափազդու, հայ մարտիկները որոշում են այդ շենքի վրա հարձակվել գիշերը:

Վերհիշելով այդ հիրավի ճակատագրական նշանակություն ունեցող պահը՝ Ս. Ջալալյանը գրում է. «Օգտուելով գիշերուան մթութենէն, յարձակեցանք այդ դիրքին վրայ. կոտորեցինք պահակները, իրենցմէ գրաւած նաւթով այրեցինք շենքը...»:

Ջուտ մարտավարական առումով շենքի գրավումը շատ կարեւոր էր, հայ մարտիկները հաջողությամբ հաղթահարում են առաջին արգելքը եւ բացում դեպի թուրքական ամենամեծ՝ Սարվանլար թաղը տանող ուղին: Թուրքերը, չկարողանալով դիմակայել հայ մարտիկների հարձակմանը,

դիմում են փախուստի եւ պատսպարվելով Սարվանլար թաղի տներում, սկսում են լուսամուտներից առանց նշանառության անկանոն կրակ արձակել իրենց հնամաշ հրացաններից:

Մայիսի 15-ին հայ մարտիկները ընդհուպ մոտենում են Սարվանլար թաղին: Երբ նրանք փորձեին ճակատային գրոհ ձեռնարկել, ապա անտարակույս կարող էին հայտնվել դժվարին իրավիճակում եւ անտեղի զոհեր տալ: Թուրքերը ինչքան էլ լինեին անմարտունակ եւ անվարժ, այնուամենայնիվ, կարող էին տների լուսամուտներից տեղացող կրակով խոչընդոտել հարձակումը: Անհրաժեշտ էր կիրառել հարձակումը զարգացնելու ավելի արդյունավետ մարտավարություն: Հայ մարտիկները խելամտորեն կատարում են կշռադատված մի քայլ, որը վճռում է կռվի ելքը: Նրանք որոշում են կիրառել թշնամու նկատմամբ իրենց ունեցած գերացանցությունը, այն է՝ մոսիների ու մաուզերների հեռահարության հնարավորությունն ու հեռու տարածությունից դիպուկ հարվածներ տեղալու վարպետությունը:

Հայ մարտիկների ծրագրած այդ մարտավարությունը նույնպես արդյունավետ էր:

Ս. Ջալալյանի վկայությամբ, «Իրենց թաղէն դուրս ելնելուն պէս, մոսինի կրակի կը բռնէինք թուրքերը, որոնք զոհերը տեսնելով՝ ետ կը դառնային կէս ճամբէն: Մեր տղաները նշանառութեան այնքան վարժ էին, որ կրնամ ըսել, թէ ոչ մէկ փամփուշտ պարապ չէր արձակուեր...»[53]:

Հեռահար ու դիպուկ հարվածներով թուրքերին գամելով տներում, հայ մարտիկները շտապում են օգնության 200 թուրք զինյալների կողմից քաղաքից դուրս գտնվով կաշվե գործարանում պաշարված հայերին: Ընդամենը 16 գյուղացիներ մի քանի բերդան հրացանով եւ սահմանափակ քանակությամբ փամփուշտներով դիմադրել են թուրքերին, որոնք գործարանը թալանելու նպատակով հարձակվել էին այնտեղ գտնվող հայերի վրա:

Պարզվում է, որ հայ մարտիկների օգնությունը ճիշտ ժամանակի էր: Գործարանի պաշտպաններն արդեն սպառել էին փափուշտները եւ եւս մի քանի ակնթարթ ու թուրք բազմահազար ավարառուները կներխուժեին գործարան:

«...Մոսիներու երկու համազարկերը,-շարունակում է Ս. Ջալալյանը,-բաւեցին, որ թշնամին խուճապահար փախուստի դիմէր: Ձիեր չունէինք թշնամուն արագօրէն մոտենալու համար: Այնպէս որ փախչողներու ետեւէն կրակելով ու վազելով հազիւ հասանք երկու սայլապան թուրքերու...Եկած էին գործարանի կաշիները փոխադրելու:

Կոտորեցինք զանոնք եւ սպանուած ուրիշ թուրքերու զէնքերը հաւաքելով, բաժնեցինք գործարանի բանւորներուն, որոնք 16 բաջ գիւղացիներ էին...»[54]:

Չկարողանալով հաղթահարել հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրութիւնը եւ յուրաքանչիւր կովում տալով տասնեակ սպանուածներ ու վիրաւորներ, թուրքերը դադարեցնում են հայկական բաղերի վրա ձեռնարկվող հարձակումները:

Եզրափակելով Նախիջեւանի ինքնապաշտպանական մարտերի նկարագրությունը՝ Ս. Զալալյանը Նշում է. «Ամէն վերջ թուրքերու գործողութիւնները ծեծուած շան հաջոցի կը նմանէին: Օրերով լուռ կը մնային եւ անսպասելի կերպով յարձակումներ կը գործէին գիշերները, յուսալով մեզ անակնկալի բերել: Սակայն մեր աչալուրջ հսկողութիւնը պատճառ կը դառնար, որ ձեռնթափ քշնամին ամէն անգամ դիմէր փախուստի»[55]:

Եթե անաչառորեն գնահատենք 1905-1906 թթ. տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ 1905թ. մայիսին Նախիջեւան քաղաքում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների արդյունքները, ապա աներկբա պիտի նշել, որ անգնահատելի է այդ կռիվներում «Ռոռեաս» մարտական խմբի ծառայությունը: Նախիջեւանահայության ֆիզիկական գոյությանը սպառնացող ամենաբախտորոշ ու ճակատագրական պահին հայտնվելով դեպքերի կիզակետում, «Ռոռեաս» մարտական խմբի անդամները գրեթե անելանելի իրավիճակում կարողացան քաղաքի ինքնապաշտպանական ուժերի աջակցությամբ կազմակերպել Նախիջեւանի հայության ինքնապաշտպանությունը եւ նրան փրկել անխուսափելի կոտորածից:

Իր հուշագրություններում բազմաթիվ պատումներով ներկայացնելով հայ-թուրքական ընդհարումների ողբերգական դրվագները՝ Ֆարհադը (Սարգիս Օհանջանյան), որն այդ օրերին գտնվելով Երեւանում, Դաշնակցական Խեչոյի եւ Գալուստ Ալոյանի համագործակցությամբ ստանձնել էր Երեւանի հայության ինքնապաշտպանության ղեկը, գրում է. «... Նախիջեւանում եւ շրջակա գյուղերում կոտորածն ու թալանը, կայքի եւ գոյքի հրդեհը հասաւ ահռելի չափերի: Ընկած հայերի թիւը հարիւրների, իսկ հրդեհուած ու թալանուած նիւթական վնասը միլիոնների հասաւ:

Այս րոպէիս էլ կռիւն ու կոտորածը, թալանն ու հրդեհը տակաւին շարունակւում են ամենուրեք, որտեղ հայն ու թիւրքը խառն են...

Ամէն տեղ էլ հայ ժողովուրդը անգէն, անպաշտպան՝ մատնուած բիւրք խուժանի կատաղի յարձակման: Պատմութեան էջերում կարմիր տառերով թող արձանագրի, ռուս կառավարութեան բուռն քստմնելի դիրքը խայտառակ, դատապարտելի»[56]:

Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջեւանի գաւառնի ադէտները» խորագիրը կրող զեկուցագրի տեղեկացմամբ, Նախիջեւանի հայ բնակչության վրա մայիսի 12-ին թուրք ամբոխի ձեռնարկած զանգվածային հարձակումների հետեւանքով սպանվում են ավելի քան 100 հայեր, քանդվում ու հրդեհվում են հայերին պատկանող բազմաթիվ շինություններ[57]:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ մահմեդական հրոսակախմբերի կողմից հայկական բնակավայրերի վրա իրականացրած հարձակումների, սպանությունների, բռնությունների ու թալանի մասին լուրերին անհաղորդակից էին Կովկասի փոխարքայի պալատն ու անձամբ փոխարքան:

Անկասկած, փոխարքայի պալատը տեղեկացված էր նաեւ Նախիջեւանում տեղի ունեցած դեպքերին: Պաշտոնի բերումով ցարական իշխանությունները զուտ ձեւականորեն փորձել են իրավիճակը կարգավորող քայլեր կատարել:

Մայիսյան արյունալի դեպքերց հետո, մայիսի 18-ին Կովկասի փոխարքայության առաջադրանքով Նախիջեւան է գալիս գեներալ Ալիխանով-Ավարսկին, որը հայտնի էր Վրաստանի Գուրիայի շրջանի գյուղացիության նկատմամբ կատարած ոճրագործությամբ:

Ըստ Նորին մեծության կայսերական գրասենյակի տնօրեն Վ. Օ. Կրաֆիմովին հասցեագրած նրա կազմած «Համառոտ տեղեկագիր Նախիջեւան, Շարուր, Դարալագյազ եւ Զանգեզուր գավառներում տեղի ունեցած դեպքերի մասին» խորագիրը կրող զեկուցագրի, նա գավառապետի իրավունքով նշանակվել էր այդ շրջաններում գտնվող զորքերի հրամանատար եւ պիտի գործեր տեղի գավառապետ կոմս Թիզենգաուզենի համաձայնությամբ[58]:

Տեղեկագրում գեներալ Ալիխանով-Ավարսկին ընդգծում է, որ «Կովկասի փոխարքա Նորին մեծությունն գեներալ աղյուտանտ, կոմս Վորոնցով-Դաշկովը, նկատի ունենալով հայ եւ թաթար բնակչության միջեւ տեղի ունեցող բախումները, իրեն հանձնարարել էր միջոցներ ձեռնարկել վերականգնելու խաղաղությունն ու հաստատելու օրինական կարգը»[59]:

Գեներալ Ալիխանով-Ավարսկին փաստորեն փոխարքայի ներկայացուցիչն էր Երեւանի նահանգում, օժտված լայն լիազորություններով: Նա, որպես փոխարքայի ներկայացուցիչ, փոխանակ կատարեր իր պարտականությունը եւ գավառում հաստատեր խաղաղություն, կարգ ու կանոն, կատարում է ճիշտ հակառակը:

Ազգությամբ թուրք գեներալ Ալիխանով-Ավարսկին առանց երկմտելու անմիջապես անցնում է իր արյունակիցների կողմը:

Մայիսի 12-ին Նախիջեւան քաղաքում տեղի ունեցած դեպքերից ընդամենը մեկ շաբաթ անց, թուրք զինված հրոսակախմբերը Նախիջեւանի, Մակուի խաների ու բեկերի առաջնորդությամբ հարձակվում են գավառի հայկական գյուղերի վրա եւ կոտորածներ ու թալան սփռում հայկական բնակավայրերում:

Գեներալ Ալիխանով-Ավարսկին, որպես պետական պաշտոնյա, ոչ միայն չի կատարում իր պարտականությունները, այլեւ իր կազմած զեկուցագրում Նախիջեւանի խաներին բնութագրում է որպես պետությանը հավատարմորեն ծառայող նվիրյալներ, որոնք տրամադրված էին խաղաղության պահպանմանմամբ եւ որեւէ մեղք չունեին ընդհարումների բռնկման գործում:

Ավելին, խաներին լավագույնս ներկայացնելու նկատառումով ընդգծում է, որ նրանց պապը, որոնք Նախիջեւանի շրջանի նախկին տերերն էին, պարսիկների նկատմամբ ունեցած բշնամանքից դրդված, իրենց կալվածքները հոժարակամ հանձնել են գեներալ Պասկեւիչին, որի համար միանգամից արժանացել են գեներալ լեյտենանտի զինվորական աստիճանի: Իսկ նրա որդին ծառայել է գվարդիայում եւ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ եղել է բրիգադի, ապա դիվիզիայի հրամանատար եւ պարգեւատրվել է Սբ. Գեւորգի շքանշանով եւ ադամանդազարդ սրով: Նա ունի երեք որդիներ, որոնցից մեկը ծառայում է Հեռավոր Արեւելքի Դաղստանյան գնդում, իսկ մյուս երկուսը ռուսական բանակի կազմում իրենց հոր զինակցությամբ փայլուն կերպով մասնակցել են ռուս-թուրքական պատերազմին:

Թվարկելով խաների կողմից դեռեւս գեներալ Պասկեւիչի ժամանակներից Ռուսաստանին մատուցած «արժեքավոր ծառայությունները»՝ գեներալ Ալիխանով-Ավարսկին ընդգծում է:. «Այժմ, անկարգությունների ժամանակ խաները նյութապես ավելի շատ են տուժել, քան տեղացի բոլոր հայերը...

Ես գիտեմ այդ մարդկանց, նրանց մտքերն ու համոզմունքները եւ համարձակորեն կարող եմ ասել. «Տա աստված, որ ռուսական ցարը ունենա ավելի շատ այնպիսի հպատակներ, ինչպիսիք են Նախիջեւանի խաները»[60]:

Իրականում չկա որեւէ փաստաթուղթ, վկայություն, որը հաստատի թուրք գեներալի «խաները նյութապես ավելի շատ են տուժել, քան տեղացի բոլոր հայերը» արտահայտությունը:

Իհարկե, հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչներին նման չինծու արժանիքներով գովաբանող գեներալի վերաբերմունքը հայության նկատմամբ այլ կերպ լինել չէր կարող:

Այդ նույն օրերին Նախիջեւանի գավառ է այցելել նաեւ Երեւանի գեներալ նահանգապետ իշխան Նապոլեոնը: Գավառում տեղի ունեցած դեպքերը ուսումնասիրելուց ու համապատասխան եզրահանգումներ կատարելուց հետո նա վերադառնում է Թիֆլիս եւ 19 կետից բաղկացած զեկուցագիր է ներկայացնում Կովկասի Փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Այդ զեկուցագրով իշխան Նապոլեոնը նախ հայտնում է, որ գեներալ Ալիխանով-Ավարսկին բացահայտ կերպող խրախուսել է թուրքերի ասպատակություններն ու ավարառությունը եւ առաջարկում է նրան հետ կանչել Նախիջեւանից:

Համաձայն փոխարքային նահանգապետի ներկայացրած զեկուցագրի «1. Նախահարձակ են եղել թիւրքերը եւ ոչ թէ հայերը, ինչպէս ամեն կերպ աշխատել է ցոյց տալ Ալիխանովը, 2. եղել է եւ դրսի դրդումն, այսինք յարձակումները հայերի վրայ եղել են թիւրքաց կառաւարութեան դրդմամբ եւ Նախիջեւանի խաները բաւականին ոգեւորուած են եղել այն մտքով, թէ կարող են նորից ետ ստանալ իրենց խանութիւնը»[61]:

Հաշվի առնելով իշխան Նապոլեոնի զեկուցագրում տեղ գտած փաստերը՝ փոխարքա Վորոնցով-Դաշկովի կարգադրությամբ գեներալ Ալիխանով-Ավարսկուն հետ են կանչում Նախիջեւանից:

«Դրօշակ»-ի եզրակացմամբ Նախիջեւանի դեպքերից ու իշխան Նապոլեոնի զեկուցագրից հետո փոխարքան եւ ցարական կառաւարությունը նոր միայն հասկացել են, որ թուրք խաներն ու բեկերը ծրագրել էին բնաջնջել Նախիջեւանի եւ Շարուր- Դարալագյազի հայությանը եւ Պարսկաստան ու Թուրքիայի սահմանագլխում ունենալ թուրքական հոծ բնակչությամբ բնակեցված տարածք [62]:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝, իշխան Նապոլեոնը իր զեկուցագրում պահանջել է , որ կառաւարությունը օգնություն ցույց տա հայերին՝ վերադառնալու իրենց բնակավայրերը, որպեսզի Պարսկաստանի եւ Թուրքիայի սահմանամերձ տարածքը բնակեցված լինի քրիստոնյա բնակչությամբ [63]:

Այսուհանդերձ, հիմք ունենալով իշխանությունների վերաբերմունքն ու տիրող կացությունը՝ «Դրօշակ»-ը նշում է. «...չը նայելով, որ կառաւարութիւնը ինքը յարուցել է վտանգը, դարձեալ վախենում է ազգու միջոցներ ձեռք առնել թիւրքերի դէմ, երկիւղ կրելով թէ հայերը թիւրքերի ապստամբութեան դէպքում գուցէ չը կամենան կամ անգօր լինեն օգնելու իրեն»[64]:

Հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ դեռևս վաղաժամ էր, որպեսզի գարական իշխանությունը ազդու միջոցներ գործադրի վերջնականապես դադարեցնելու ազգամիջյան բախումները:

Ջուտ ինքնապաշտպանության կազմակերպման առումով բուրդ հրոսակախմբերի հարձակումների ժամանակ առավել վատթար ու ողբալի կացությունում է հայտնվել գավառի հայկական բնակավայրերի բնակչությունը [65]:

Համաձայն ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի ներկայացրած «Տեղեկագիր Նախիջեւան քաղաքի ու գաւառի հայ-թիւրքական ընդհարման մասին մայիսի 12-ից մինչեւ 10-ը» խորագիրը կրող զեկուցագրի, հարձակումների ենթարկված հայկական գյուղերը, ըստ կրած վնասների, բաժանվում են երեք խմբի.

«Ա. գիւղեր որոնք միանգամայն աւերուած ու թալանուած են եւ ժողովուրդը փախած:

Բ. Աւերուած են մասամբ, բայց թալանուած:

Գ. Ենթարկուել են յարձակման եւ կրել մասնակի վնասներ»[66]:

Երեւանի զինվորական նահանգապետ գեներալ Լուի Նապալկովին Նախիջեւանի հոգեւորն թեմի առաջնորդ Մեսրոբ վարդապետի ներկայացրած «Նախիջեւանի գաւառի աւերածների պատկերը» տեղեկագրի հավաստմամբ, «Նախիջեւան գաւառի կրած գոյքային վնասների քանակը, համաձայն կողոպտուած գիւղացիների ներկայացրած ցուցակների, հասնում է 2.729.173 րուբլու, իսկ հանձնաժողովի ցուցակով՝ 1.340.893 րուբլու»[67]:

Ըստ նույն տեղեկագրի տվյալների, Նախիջեւանի գավառում ավերված են միմիայն թուրքական երկու գյուղեր՝ Իթդուանը հայերի ձեռքով, Ջահրիմ՝ կոզակների [68]:

---

1. Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 64:
2. Նույն տեղում:
3. «Աշակ», 1905, մարտի 5:
4. Տե՛ս նույն տեղում, ապրիլի 12:
5. «Դրօշակ», 1905, թիւ 8, էջ 120:
6. Նիւթեր, հ. Բ, էջ 237:
7. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 3, էջ 6:
8. Նույն տեղում:
9. Տե՛ս նույն տեղում:

10. Նույն տեղում, գ. 2, էջ 1:
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում, գ. 3, էջ 1:
13 Նույն տեղում:
14. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում, էջ 2:
18. Նույն տեղում:
19. Տե՛ս նույն տեղում:
20. Կարո Գէորգեան, «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 149:
21. Նույն տեղում, էջ150:
22. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 2, Կ. Գէորգեան, «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 148-150:
23. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 2:
24. Կարո Գէորգեան, «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 149:
25. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 2:
26. Նույն տեղում, գ. 3, էջ 2-3:
27. Տե՛ս նույն տեղում:
28. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1022, ց. 2, գ. 175, էջ 18:
29. Նույն տեղում:
30. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 9:
31. Նույն տեղում, էջ 8:
32. Նույն տեղում, էջ 11:
33. Նույն տեղում
34. Տե՛ս նույն տեղում:
35. Տե՛ս նույն տեղում:
36. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1262, ց. 3, գ. 92:
37. Նույն տեղում, էջ 1:
38. Նույն տեղում, էջ 2:
39. Նույն տեղում, էջ 12:
40. Նույն տեղում
41. Տե՛ս նույն տեղում, էջ բ 8-9:
42. Նույն տեղում:
43. Կարո Գէորգեան, «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 151:
44. Նույն տեղում:
45. Նույն տեղում, էջ 153:
46. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 3, էջ 4:
47. Կարո Գէորգեան, «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 153:
48. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 3, էջ 9:
49. Կարո Գէորգեան, «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 154:

50. Նույն տեղում:
51. Նույն տեղում, էջ 155:
52. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 10, էջ 1:
53. Կարո Գէորգեան. «Ամէնուն տարեգիրք», 1956, էջ 157:
54. Նույն տեղում, 157-158:
55. Նույն տեղում, էջ 158:
56. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 10, էջ 1:
57. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ.3, էջ 8:
58. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1022, ց. 3, գ. 97:, էջ 1:
59. Նույն տեղում:
60. Նույն տեղում, էջ 9:
61.«Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 151:
62. Նույն տեղում:
63. Նույն տեղում:
64. Նույն տեղում:
65. Տե՛ս Հավելված:
66. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 3, էջ 5:
67. Տե՛ս նույն տեղում:
68. Նույն տեղում:

2.3. ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Ճիշտ է, Երեւանում փետրվարի տեղի ունեցած զինված բախումները իշխանությունների միջամտությամբ դադարեցվում են, բայց խաղաղ կարգավիճակը շատ երերուն ու խաբուսիկ էր. եւ ինչպես իր զեկուցագրում ներկայացնում է Կարապետ վարդապետը, «...հայերի ու թաթարների միջեւ եղած չափազանց լարված ու վտանգավոր հարաբերությունները պահպանվում են եւ այն չի կարելի անվանել ավարտված...»[1]:

Վերոհիշյալ զեկուցագրում Կարապետ վարդապետը փոխարքային է ներկայացնում Երեւանի եւ նրա հարակից գյուղերի թուրք բնակչության հետագա գործողությունների մասին համառոտ, բայց ուշագրավ տեղեկություններ:

Երեւանի թուրքերը բնավ չհամակերպվելով քաղաքում հաստատված խաղաղ կարգավիճակին, քաղաքի մերձակայքում գտնվող թուրքական գյուղերի բնակիչների հետ հարձակվում են հայկական գյուղերի վրա: Թուրքերի կողմից հարձակման ենթարկված առաջին հայկական բնակավայրը Երեւանին մերձակա Դուրբալի գյուղն էր: Բայց այս անգամ թուրքերը չեն կարողանում ներխուժել գյուղ եւ թալանել հայ գյուղացու ունեցվածքը: Ճիշտ ժամանակին վտանգված գյուղին օգնության են հասնում հարեւան գյուղերի բնակիչները եւ համատեղ հարվածներով փախուստի մատնելով հարձակվողներին, ներխուժում ու թալանում են մոտակայքում գտնվող թուրքական գյուղը[2]:

Այդ անհաջողությունից հետո թուրքերը ձեռնարկում են նոր հարձակում: Արաքսի մյուս կողմից նրանց օգնության են գալիս քուրդ զինյալները: Համալրելով իրենց շարքերը՝ թուրքերը գրոհում են Նովրալու գյուղի վրա: Այս անգամ դարձյալ հարձակման ենթարկված գյուղին օգնության են շտապում հարեւան գյուղերի բնակիչները եւ համատեղ ուժերով գրոհում հարձակվողների վրա: Թուրքերը չդիմանալով հարձակմանը, լքում են մարտադաշտը եւ դիմելով փախուստի, ապաստանում են Քամարլու գյուղում, ուր այդ ժամանակ տեղաբաշխվել էր զորքը:

Հայկական մարտական ուժերը կարող էին ներխուժել գյուղ եւ ջախջախել այնտեղ ապաստանած թուրքերին, բայց միջամտում է այնտեղ գտնվող զորքը: Չհամակերպվելով կրած պարտությանը՝ թուրքերը որոշում են

վրեժխնդիր լինել Քամպոլոի հայերից: Գյուղի շուկայում թուրքերից մեկը ատրճանակի կրակոցով միտավորում է մի հայի: Ամբոխի համար դա ազդանշանն էր. թուրքերը միահամուռ հարձակվում են հայերի վրա, բայց ապարդյուն: Հայերը ոչ միայն կարողանում են հաջողությամբ պաշտպանվել, այլեւ իրենք են դիմում հարձակման: Պարտված թուրքերը փախչում են ու պատսպարվում տներում[3]:

Փոխարքային համառոտակիորեն ներկայացնելով հայկական գյուղերի վրա թուրքերի ձեռնարկած հարձակումների շարժառիթներն ու հետեւանքները, Կարապետ վարդապետը որպես ընդհանրացնող խոսք, ընգծում է. «Չնայած այն հանգամանքին, որ հայերը կարող էին ահավոր կոտորածի ենթարկել նրանց, բայց չեն արել: Նրանք ձեռնպահ են մնացել համարժեք պատասխան տալ թաթարների գործողություններին նույնիսկ այն դեպքում, երբ թաթարները գիշերով գաղտագողի թալանել են հայերի խանութները, կրպակները ու տարել անասունները»[4]:

Ուշագրավն այն է, որ փոխարքային ու ցարական բարձրաստիճան պաշտոնյաներին Կովկասում բռնկված ընդհարումների մանրամասները ներկայացնող զեկուցագրերում, հայկական կողմը որպես կանոն նշում է, որ հայերը կարող էին կոտորել իրենց վրա հարձակվող թուրքերին, բայց ձեռնպահ են մնացել համարժեք պատասխան տալ թուրքերի ոտնձգություններին: Հայազգի պաշտոնյաների, ինչպես նաեւ հոգեւորականության կողմից համաննման բովանդակությամբ զեկուցագրեր ներկայացնելն անկասկած պայմանավորված էր ցարական իշխանությունների անաչառության նկատմամբ դրսեւորած հավատով ու նրանց գութն ու պաշտպանությունը հայցելու ակնկալիքով:

Այսուհանդերձ, փետրվարյան դեպքերից հետո հայկական կողմի համար արդեն գաղտնիք լինել չէր կարող իր անվտանգությանը սպառնացող կործանարար վտանգի լրջությունը: Տվյալ իրավիճակում հայ ազգայի-քաղաքական կուսակցությունների համար այլ ընտրանք այլեւս չէր կարող գոյություն ունենալ:

«...Դաշնակցությունը,-գրում է.-Ս. Օհանջանյանը,- ակամայ ստիպված եղավ միջամտելու այդ եղբայրասպան կռվին, լոկ իր ցեղի ֆիզիկականը փրկելու նպատակով...»[5]:

Ս. Օհանջանյանի բացատրությունում ուշագրավ է «ակամայ ստիպված եղավ միջամտելու» արտահայտությունը:

Ըստ նրա բացատրության. «Ասում ենք ակամայ, հակառակ իր սկզբունքների նրա համար, որովհետեւ մի չարք փորձեր եղավ-յատուկ պատվիրակների, խաղարար կօմիսարների, կոչերի եւ բռուցիկների մի-

ջոցով կանգնեցնել այդ անմիտ կոտորածը, հասկանալ մեր հարեւաններին, որ այդ կռիվը ռուս միապետութեան դիւթած որագայթն է, նրա մարդակեր քաղաքականութեան հետեւանքը: Սակայն իզուր անցան այդ կոչերն ու դիմումները»[6]:

Անհրաժեշտ էր կազմակերպել նահանգի եւ նրա վարչական կենտրոնը համարվող Երեւան քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունը: Ամենացավոտն ու ամենահրատապը զենք ու զինամթերքի ձեռք բերումն էր, ժողովրդի զինումն ու մարտական խմբերի կազմավորումը:

Զենք ձեռք բերելու նպատակով հայկական կողմը դիմել է տարբեր միջոցների: Երեւանի նահանգապետի զեկուցագրերից պարզվում է, որ փետրվարյան դեպքերից հետո հայերը զենք ու զինամթերք են փախցրել անգամ պետական հիմնարկներից:

Զեկուցագրերից մեկում Երեւանի նահանգապետը հայտնում է, որ 1905 թ. ապրիլի 12-ին անհայտ անձինք Երեւան գավառի զինվորական վարչության պետի գրասենյակից գողացել են հրացաններ ու փամփուշտներ, որոնք գտնվել էին վարչության գրասենյակի տարբեր սենյակներում:

Մեկ այլ հեռագրում նահանգապետը հայտնում է, որ հաջորդ օրը՝ ապրիլի 13-ին, դարձյալ անհայտ անձինք նահանգի պետական ունեցվածքի ու հողագործության վարչության արխիվից տարել են «բերդան» 3 նոր հրացաններ եւ 5330 մարտական փամփուշտ[7]:

Այդ օրերին Ռուսաստանի ներքին գործոց նախարարությանը համաննման բովանդակությամբ զեկուցագրեր է ուղարկել նաեւ Կարսի նահանգապետը[8]:

Հայկական կողմը բեպետ որոշակի քայլեր ձեռնարկել է ձեռք բերելու զենք ու զինամթերք, սակայն դեռեւս չէր հասցրել ինչպես հարկն է լուծել ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները: Բացի դրանից, Երեւանի ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեի եւ Զինվորական մարմնի ուշադրության կենտրոնում առավելապես Նախիջեւանում տեղի ունեցող սարսափազդու դեպքերն էին, որոնց մասին պարբերաբար տարաբնույթ տեղեկություններ էին հասնում Երեւան:

Թուրքերի նախաձեռնությամբ մայիսի23-ին(12) Երեւանում վերսկսվում են ընդհարումները եւ ինչպես ցույց են տալիս տեղի ունեցած դեպքերը, հայկական կողմը այս անգամ դարձյալ ինչպես հարկն է նախապատրաստված չէր:

Թուրքերը, օգտվելով հայկական կողմի անպատրաստ վիճակից, Երեւանում վերսկսում են հարձակումները եւ հայերը ընդհարումների առաջին օրերին, դարձյալ հայտնվում են ծանրագույն իրավիճակում:

«Դրօշակ»-ի հավաստմամբ կոտորածից մի քանի օր առաջ Երևնում երեւցել են անծանոթ թուրքեր, որոնք շրջելով քաղաքի փողոցներով, ուշադրությամբ դիտել են հյուրանոցները եւ նրանց մերձակայքում գտնվող տները: Քաղաքում խաղաղ իրավիճակ է տիրել եւ դժվար էր կանխագուշակել, որ ընդամենը մեկ օր անց բռնկվելու էին նոր ընդհարումներ:

Ավելին, ըստ «Դրօշակ»-ի, հայկական կողմի զգոնությունը բթացնելու եւ ապակողմնորոշելու նպատակով «Անաանի մահեղականները հաւատացնում էին ազդեցիկ հայերին կոտորածի նախորդ օրն իսկ, որ թիւրքերի կողմից կոտորածի ոեւէ առիթ չի տրւի, նրանք երդում էին դրանով եւ իրենց բոլոր սրբութիւններով եւ խնդրում հայերին, որպեսզի սրանք եւս միջոցներ ձեռք առնեն հայերին խաղաղացնելու»[9]:

Թուրքերի հավաստիացումներն ու երդումները ինչպես միշտ, այս անգամ նույնպես կեղծ էին:

Մայիսի 23-ին(12), ցերեկվա ժամը 2-ին, թուրք հրոսակախմբերը նախահարձակ են լինում եւ միահամուռ կրակ տեղում քաղաքային շուկայի տարբեր մասերում գտնվող հայերի վրա:Շուկայում սանձազերծած կոտորածից հետո, որին զոհ են դառնում 20 հայեր, թուրքերը խմբերով զինված խմբերի ուղեկցությամբ վերադառնում եւ հավաքվում են իրենց թաղերում:

Հայկական կողմի համար թեեւ թուրքերի ձեռնարկած հարձակումը անսպասելի էր, բայց կարող էին համարժեք պատասխան տալ ու գնդակահարել բազմաթիւ թուրքերի: Նույնիսկ համանման իրավիճակում հայկական կողմը առաջնորդվել է պշտպանողական մարտավարությամբ եւ «Դրօշակ»-ի վկայությամբ «...իրենց զսպում էին, սպասելով տեսնել թէ կառաւարական պաշտոնեաները ի՞նչպէս կը վերաբերեն կոտորածի հեղինակներին»[10]:

Գործին միջամտում է նահանգապետը, որը զինվորների ուղեկցությամբ հայտնվում է հայկական թաղերում եւ համոզում հայերին՝ կրակ չբացել: Հայերը իրենց հերթին շրջապատում են նահանգապետին եւ նրանից պահանջում իրենց հանձնել կռիվմեր հրահրող գլխավոր կազմակերպիչներին:

Ուշագրավ է թուրքական կողմը ներկայացնող խաների դիրքորոշումն ու բացատրությունը: Նրանք հայտարարում են, որ կոտորածի հեղինակները, իրոք, թուրքերն են եւ նահանգապետին ներկայացնելով գործի հետ բոլորովին առնչություն չունեցող երեք թուրքերի, պահանջում են խստորեն պատժել նրանց:

«Դրօշակ»-ի գնահատմամբ թուրքերն այդ քայլով փորձում էին «...հայերին հանգստացնել աշխատեցին, բայց այստեղ եւս թիւրքերն իրենց սովորութեան հաւատարիմ մնացին, փոխանակ գլխաւոր ոճրագործներին՝ նրանք ներկայացրին, իբրեւ յանցաւորներ, ինչ որ խեղճ ու կրակ համալներ»[11]:

Նահանգապետին եւ հայկական կողմին թուրք խաների տված խոստումները կեղծ էին եւ հաշվարկված:Հաջորդ օրերին թուրքերը դարձյալ նախահարձակ են լինում եւ քաղաքի զանազան մասերում կրակ բացում հայերի վրա:

«Երեք օր շարունակ,- նշում է Մ. Վարանդյանը,- 1905-ի մայիսի 12 էն մինչեւ 15, իշխանութիւններու աչքին առջեւ կը կատարւէր խուժանային գիւարբուքը,- ջարդ, հրդեհ, կողոպուտ, կանանց բռնաբարում, եկեղեցիներու սրբապղծում... Հայոց բոլոր ապրանքները յափշտակուեցան, 182 հայկական խանութներէն ազատեցան 4 հատ միայն: Եւ նոյն վայրագութիւնները՝ գաւառի մէջ»[12]:

Թուրքերի հարձակման ճիշտ հաջորդ օրը Բաքվից Երեւան է գալիս Դրոն: Քանի որ ցարական ոստիկանությունը փնտրում էր Բաքվի նահանգապետ Գեներալ Նակաշիձեի ահաբեկչին, այդ պատճառով Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի որոշմամբ, նա պետք է հեռանար Բաքվից:

Դրոն գալիս է Երեւան եւ անմիջապես ներկայանում Դաշնակցական Խեչոյին:

«Ես,-գրում է Դրոն,-Խէչօին երբեք այդքան ընկճած ու մտազբաղ չէի տեսել: Ով նրան ճանաչում էր, գիտէր, որ ինչքան էլ դժուար պայմանների մէջ էլ գտնուէր, միշտ կը պահեր հոգեկան արիութիւնը եւ իր մշտազարթ եւ օրհնեալ կատակներով կուրախացներ ամենքին: Այժմ ընկել էր խորունկ տխրութեան մէջ...»[13]:

Դրոյի այն հարցումին, թե ի՞նչ է տեղի ունեցել, Խեչոն պատասխանել է. «-Էլ Ի՞նչ պիտի լինի...-հալա որ ջարդեցին, մնացածը յետոյ կը պատմեմ»[14]:

Դաշնակցական Խեչոյի օգնական Փառակեցի Մկրտչի պատմածից պարզվում է, որ քաղաքի թուրքերն անսպասելիորեն հարձակվել ու սպանել են 20-25 հայերի: Թուրքերի հարձակումը ոչ միայն սարսափի ու խուճապի էր մատնել քաղաքի հայ բնակչությանը, այլեւ ծանրագույն խնդիրների առջեւ կանգնեցրել Երեւանի ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեին:

«Երեւանցիք,-գրում է Դրոն,-որ գուցէ ամենից լաւ ծանոթ էին Դաշնակցութեան մարտիկների կեանքին ու քաջագործութիւններին, որ

ա՜յնքան մեծ յոյսեր էին դրել Դաշնակցութեան վրա, ա՞յժմ չշմել ու չուարել էին: Չէին հասկանում, թէ ի՞նչպես պատահեց կոտորածը, թէ ինչո՞ւ լուռ եւ անգործ էր Դաշնակցութիւնը, ինչո՞ւ հարուածին չպատասխանեց հակահարուածով»[15]:

Քանի որ այդ ժամանակ քաղաքի ինքնապաշտպանութիւնը հուսալիորեն կազմակերպելու համար Երեւանի ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեի տրամադրության տակ չկար բավարար քանակությամբ զենք ու զինամթերք, ըստ Փառակեցի Մկրտիչի վկայության, այդ պատճառով կենտր. Կոմիտեն նույնպես սարսափի մատնված՝ գլուխը կորցրել ու հրահանգել էր առայժմ զգույշ մնալ ու տեղիք չտալ ընդհարումների[16]:

Ջուտ մարտավարական ու մանավանդ բարոյահոգեբանական առումով ձեռք բերած առաջին հաջողությունը թուրքական կողմին, անկասկած, մեծ ոգեւորություն էր պատճառել ու հայերի նկատմամբ նկատելի առավելություններ ընձեռել: Որեւէ կասկած լինել չէր կարող, որ թուրքերն անպայմանորեն կօգտագործեին հայ բնակչության մեջ տիրող խուճապային տրամադրությունն ու անկազմակերպ իրավիճակը եւ շատ շուտով կվերսկսեն հարձակումը:

Եթե թուրքերին հաջողվեր կրկնել նախորդ հարվածը, ապա ծանրագույն իրավիճակում կհայտնվեին ոչ միայն Երեւանի, այլեւ ողջ նահանգի հայ բնակչությունը: Քաղաքում ձեռք բերած հաղթանակն առավելագույն հնարավորություն էր ընձեռում թուրքերին ավելի հեշտությամբ կոտորածներ սանձազերծել ողջ նահանգում, որտեղ հայ բնակչության իրավիճակն արդեն չափազանց ծանր էր :

Համաձայն Դաշնակցական Խեչոյի վկայության, Երեւանի նահանգում մայիսյան առաջին դեպքերից հետո տիրել է հետեւյալ իրավիճակը. «Նախիջեւանն ու Շարուրը շատ ծանր վիճակի են մատնված, կարող են ջարդվել, Դարալագեազը Ենթակա է Թարաքեամայի (թուրքական քոչվոր ցեղեր) անմիջական հարուածներին: Սուրմալուի մի բուռ հայութիւնն էլ բնաջնջման վտանգի տակ: Երեկւայ ջարդը սիրտ պիտի տա Երեւանի բրքութեան, իսկ հայերի ոգին պիտի ընկճի: Կռիւը շատ ա մէծ, իմ խելքի բանը չէ էս գործը: Բնգեազ Կենտրոնական Կոմիտէի մէջ էլ էն մարդը չկայ, որ այս չափ զինւորական գործ ըմբռնի ու վարէ: Փամփուշտի ու զէնքի տեսակէտից էլ մենք շատ խեղճ ենք, մինչ թրքութիւնը զինւածա ու զինւում է կառաւարութեան օժանդակութեամբ: Ասում են՝ Դումանը պիտի գայ. ախ՜ ուր ա մի գար...»[17]:

Ի՞նչ պետք է արվեր: Ո՞րն էր ելքը:

Անհրաժեշտ էր օգտագործել եղած հնարավորությունը եւ հակառակորդի համար անսպասելի մարտավարությամբ ձեռնարկել այնպիսի պատասխան կանխարգելիչ գործողություն, որը կարող էր արմատական բեկում մտցնել ստեղծված կացությունում:

ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեն, ճիշտ է հրահանգել էր, որ առայժմ զգույշ մնալ ու տեղիք չտալ ընդհարումների, բայց Երեւանում էին մարտական բովով եւ Նիկոլ Դումանի դպրոցով անցած Ս. Օհանջանյանը, Դաշնակցական Խեչոն, Փառակեցի Մկրտիչ: Իրականում հենց նրանք էին ղեկավարում քաղաքի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները:

Տվյալ ճակատագրական ու բախտորոշ պահին Երեւանի մարտական ուժերի հրամանատարությունը(Ս. Օհանջանյան, Դաշնակցական Խեչո, Փառակեցի Մկրտիչ, որոնց հետ էր նաեւ Դրոն-Հ.Գ.) կայացնում է միակ արդյունավետ ու կշռադատված ճիշտ որոշումը, այն է՝ ոչ թե սահմանափակվել սոսկ կրավորական ինքնապաշտպանությամբ, այլեւ նախահարձակ լինել, այսինքն գործել հարձակողական բնույթի մարտավարությամբ:

Անդրադառնալով, հիրավի, ճակատագրական նշանակություն ունեցող այդ մարտավարության կիրառման անհրաժեշտության արժեւորմանը՝ Դրոն նշում է. «Կուի մէջ յաղթութիւնը մեծ չափով ապահուած է նրան, ով իր ձեռքը կառնէ նախաձեռնութիւնը: Բոլոր երեւոյթները ցոյց էին տալիս, թէ սպասելու անմիտ քաղաքականութիւնը կարող էր լինել լիովին կորստաբեր հայերի համար: Ընդհակառակը, հակահարուածը մեր կողմից յաջողութեան դէպքում հիմնովին պիտի փոխէր դրութիւնը եւ հայերին պիտի դնէր աւելի նպաստաւոր վիճակում...

Լաւագոյն պաշտպանութիւնը յարձակումն էր[18]»:

Այդ ժամանակ Երեւանի մարտական ուժերը, համաձայն Դրոյի վկայության, 100 մոսին հրացան եւ 50 ատրճանակներ, որոնց մեծ մասը եղել է մաուզեր: Նույն օրը Ալեքսանդրապոլից ստանում են 15 մոսին եւ 4000 փամփուշտ:

Համաձայն վաղօրոք մշակված ծրագրի՝ հայ մարտախմբերի մի մասը դիրքեր է գրավում մարտավարական առումով քաղաքի առավել կարեւոր նշանակություն ունեցող մասերում եւ փակում հայկական թաղերը տանող ուղիները, իսկ մյուս մասը պիտի բարձրանար Նորքի բարձունքները եւ այնտեղից գրոհեր ու կրակ տեղար հայկական թաղերի վրա հարձակվող թուրքերի վրա:

Մինչ մարտական գործողություններ սկսելը, Դրոն Խէչոյին խնդրում է, որ նա իրեն վստահի բուրքերին բիկունքից հարվածող բռուցիկ մարտախմբի հրամանատարությունը:

Իր հուշագրություններում նկարագրելով կռվի մանրամասները՝ Դրոն նշում է. «Խէչոն համաձայնեց եւ իմ տրամադրութեան տակ դրեց Թիֆլիսից նոր եկած տասը սքանչելի մարտիկներ՝ Կոփեցի Կնեազին, Էրզրումցի Արամին, Թիֆլիսեցի Շէկ Տիգրանին եւ այլն...Խէչոյի հրահանգի համաձայն գնացի ուղիղ մեր պահեստապետի մօտ եւ տղաների համար ստացայ հրացաններ հարիւրական փամփուշտներով: Ձինւած մարտիկներին միացան եւ Նորքի ուժերը, որոնց մի մասը անգէն էին կամ միայն դաշոյն ունէր»:

Մարտախումբը պիտի Նորքից աննկատ տեղափոխվեր Կոնդի բարձունքները եւ բիկունքից հարվածեր հայկական թաղերի վրա հարձակվող բուրքերին:

Քանի որ Դրոյի գլխավորած բռուցիկ մարտախմբին տրված հանձնարարությունը չափազանց կարեւոր էր, Նորք է գալիս նաեւ Դաշնակցական Խէչոն:

«Մեր շարժուելու վայրկեանին,-վերհիշում է Դրոն,- հասաւ նաեւ Խէչօն եւ մեր շուրջը գտնւած անգէն գիւղացիներին տեսնելուվէ սրախօսեց.

-Հը՞, ինչա՞, պոլկ (գունդ) էք կազմել:

Եւ հրամայեց, որ լոյսը չբացւած վերադառնանք Նորք»[19]:

Ի դեպ, թեպետ մինչ այդ Դրոն մասնակցել էր Բաքվի փետրվարյան դեպքերին, բայց որպես մարտական խմբի հրամանատար Երեւանում տեղի ունեցած կռիվը նրա մարտական գործունեությունում առաջին մարտական գործողությունն էր բուն Հայաստանի տարածքում:

Նորքեցիների առաջնորդությամբ մարտախումբը գիշերով աննկատ հասնում է Կոնդ: Նախորդ օրը քաղաքում ընթացող թեժ կռիվներում Դաշնակցական Խէչոյի ընդհանուր հրամանատարությամբ գործող հայ մարտիկները կարողացել են ոչ միայն անառիկ պահել իրենց դիրքերը, այլեւ դիմել են հարձակման եւ բուրքերի ձեռքից խլել մի քանի կարեւոր հենակետեր:

Հաջորդ օրը հայ ինքնապաշտպանական ուժերը պիտի անսպասելի ու սրընթաց գրոհ ձեռնարկեին եւ երկու կողմից տեղացող հարվածներով վճռական պարտության մատնեին հակառակորդին:

Դրոյի գլխավորած մարտախումբը հարմար դիրքեր է գրավում բուրքական բաղամասի վրա իշխող բարձունքի վրա, ապա որսալով հարմար պահը եւ միահամուռ համազարկեր տեղալով՝ գիշերով հարձակվում է բուրքական հրոսակախմբերի վրա, որոնք կրակ էին արձակում հայկական թաղի ուղղությամբ:

Նկարագրելով այդ հիրավի վճռորոշ պահը՝ Դրոն գրում է. «Մեզ հետ եկած անգէն գիւղացիներն էլ «ուռա՜»-ներով սրտապնդում էին մեզ: Այդ աղմուկը գիշերային խորհրդատրութեն մէջ ահաւոր տպաւորութիւն էր թողնում, եւ զարմանալի չէ, Դամլըբուլաղի բուրք բաղի բոլոր ծրագները անմիջապէս մարեցին, երթեւեկութիւնը փողոցներում դադարեց եւ յարձակումները հայերի վրա վերջ գտան»[20]:

Դրության լիիրավ տերն արդեն հայ մարտիկներն էին, որոնք հարձակվում ու հեռահար մոսինեներից բուրքերի վրա կրակ էին տեղում հանդիպակաց ուղղություններից:

Թուրքերի շարքում խուճապն ու սարսափը ավելի է ուժեղանում, երբ հայ մարտիկները ռումբերի հարվածներով պայթեցնում են հայկական դիրքերի մերձակայքում գտնվող բուրքերին պատկանող մի քանի տներ:

Եզրափակելով կռվի մանրամասների նկարագրությունը՝ Դրոն նշում է. «...մեր բիկունքային հարւածը վճռական էր եւ շշմեցրեց բուրքերին...

Գիշերային այդ գրոհը բոլորովին բարձրացրեց քաղաքի հայերի բարոյական կորովը, ոգեպնդեց ու բարձրացրեց նաեւ նահանգի հայութեան տրամադրութիւնը:

Միւս օրը առաւօտեան գնացի տեսնելու Խէչօյին: Նրա դէմքը փայլում էր ուրախությունից: Նա պինդ գրկեց ինձ, տաք-տաք համբուրեց ու ասաց.-Խաթաքեա՜ր(սխալվող), դու որ մի շաբաթ կռիւ անես Քանաքեռի ջաբախանան(զենքի պետական արհեստանոց, պահեստ-Հ.Գ.) քեզ չի հերիքի»[21]:

Թուրք հրոսակախմբերը մայիսի 23, 24-ին եւ առավել ուժգնությամբ 25-ին զանգվածային գրոհներ են ձեռնարկում հայկական բաղամասերի վրա: Հայոց մարտական խմբերը հակահարվածով կանգնեցնում են թուրք հրոսակախմբերի գրոհները եւ խափանում հայկական բաղամասեր թափանցելու բոլոր փորձերը:

«Մայիսի 24-ին եւ 25-ին,- նշում է «Դրօշակը»,- Երեւանում ընդհարումները շարունակւում են: Հայերը համբերութիւնից դուրս եկան, վճռեցին բուռն դիմադրութիւն անել եւ թիւրքերին մի դաս տալ: Սպանուած են մեծ թվով թիւրքեր: Վիրաւորները շատ աւելի են: Կառաւարութիւնը, տեսնելով հայերի տւած զգալի հարւածը՝ միջամտեց...»[22]:

Ըստ արժանվույն գնահատելով այդ կռվում Երեւանի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակը՝ Ս. Վրացյանը գրում է. «Երեւանի բուրքերը, խրախուսվելով առաջին յաջողութիւնից, պատրաստում են նոր յար-

ձակմամբ, բայց այս անգամ անակնկալի են հանդիպում: Խելօք դասատրել էր իր ուժերը այնպէս, որ թշնամին ընկնում է երկու կրակի միջեւ եւ շշմեցուցիչ հարուած է ստանում: Այս կռւում աչքի ընկնող դեր է կատարում Դրոն իր քոուշիկ խմբով եւ զինւած մարդկանցով ու կամաւորներով...»[23]:

Մայիսի 25-ի հաղթանակը Երեւանի նահանգում հայերի կողմից թուրքերին հասցրած առաջին լուրջ եւ ծանրակշիռ հարւածն էր: Շնորհիվ կազմակերպւած հակահարւածի, կանխվեց Երեւանի հայութեան գլխին ծառացած մահացու վտանգը:

Մ. Վարանդեանի գնահատմամբ «Այդ կորովի հակահարւածը, Նիկօլի կտրուկ ու խիստ մեթօդով, փրկեց Երեւանը: Թաքար հրոսակները, եթէ անգօր էին կոտրած սարքելու, դիւրութեամբ սակայն կրնային վառել քաղաքը եւ հրոյ ճարակ դարձնել հայոց թաղերը: Քանի մը անգամ փորձեցին վառել հայ խանութները, զոր նածօրոք կաւիճով նշանակեր էին: Չկրցան...»[24]:

Պատահական չէ Մ. Վարանդեանի «Այդ կորովի հակահարւածը, Նիկօլի կտրուկ ու խիստ մեթօդով, փրկեց Երեւանը» արտահայտութիւնը: Հարձակողական բնոյթի մարտավարութեամբ կռիվներ վարելը Նիկոլ Դումանի դաւանքն էր, իսկ Երեւանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարները՝ Ս. Օհանջանեանն ու Դաշնակցական Խեչոն ոչ միայն նրա մերձաւորագոյն գինակիցներն էին, այլեւ նրա դաւանած մարտավարութեան ջերմ կողմնակիցներն ու հետեւորդները:

Ս. Օհանջանեանի հաւաստմամբ, Երեւանում տեղի ունեցած մայիսեան կռիվներում հայ մարտիկների դրսեւորած քաջագործութիւնները հիացրել են ոչ միայն ռուս սպաներին ու, զինվորներին, այլեւ նոյնիսկ նահանգի եւ քաղաքի իշխանութիւններին, որոնք որեւէ փորձ չեն ձեռնարկել զինաթափելու հայ մարտիկներին[25]:

1905 թ. դեկտեմբերին Երեւանում գումարւած ՀՅԴ «Մրգաստանի» ռայոնական ժողովում ներկայացւած հաշվետու զեկուցագրում, պատշաճորեն արժեւորելով այդ դեպքերի նշանակութիւնը, զեկուցողը նշել է. «... հայ ժողովուրդը իրաւունք չունի մոռացութեան տալու մայիսեան այն փայլուն օրերը: Հայ ազատագրական պատմութեան մէջ ոսկէ տառերով պէտք է արձանագրել այդ օրը եւ կռիւների ժամանակ կռւող զինւորների անունները»[26]:

Երեւանի մարտական ուժերի հաղթանակը չափազանց կարեւոր էր: Որեւէ կասկած լինել չէր կարող, որ եթե թուրքերին հաջողվեր թափանցել քաղաքի հայկական թաղերն ու կոտորել հայերին, ապա անկասկած կշարունակեին նոյն սպանդն առավել հեշտութեամբ եւ ոգեւորութեամբ իրականացնել նաեւ նահանգի հայկական բնակավայրերում:

Երեւանի ինքնապաշտպանական ուժերի հաղթական մարտերը կտրուկ փոխում են իրավիճակը եւ կոտրում թուրք հրոսակախմբերի հարձակողական տրամադրութիւնը: Նոյն Դայռնական ժողովում, մասնակիցներն անդրադառնալով ընդհանուր ինքնապաշտպանութեան կազմակերպման գործում Երեւանի մայիսեան հաղթանակի նշանակութեան գնահատմանը՝ չէ՞տում են. «Դոհումնակութեան ձայներ էին գալիս առանձ հնեռ վայրերում բնակվող հայ եղբայրներից: Դոհ էին բոլոր երեւանցիներից, կարծես երեւանցին էր եւ Երեւանը իրեն փրկողը .... Դոհ էին Երեւանի շրջապատող գիւղացիք, որովհետեւ նրանք շատ լաւ հասկացել էին, որ Երեւանի ընկնելով ընկնելու էին եւ Երեւանի նահանգի բոլոր հայ գիւղերը...»[27]:

Պարտութիւն կրելով Երեւանում ընթացող կռիվներում, թուրքերին հարկաւոր էր ժամանակ շահել եւ ավելի լրջորեն պատրաստվել:

Քաղաքում տիրող քոսային իրավիճակի պատճառով ավելի դժվարին իրավիճակում են հայտնվել քաղաքի թուրք բնակչութիւնը: Քանի որ գավառներում նոյնպես պայթյունավտանգ կացութիւն էր տիրում, կապը քաղաքի եւ գիւղերի միջեւ ընդհատվել էր: Քաղաքում փակվել ու չեն գործել չուկաներն ու խանութները:

«Այսօր,-նշում է Դրօշակ»-ը,-երկուշաբթի 8-րդ օրն է, որ չուկան փակ է: Թիւրք ազգաբնակչութիւնը խիստ նեղւում է այդ բանից, եւ այդ պատճառով նրանց մէջ սկսել է խստովութիւն: Մանրաւաճառները հայհոյում են այն խմբին, որ իրենց այդպիսի կրիթիկական վիճակի հասցրեց: Եթէ խանութները շուտ չը բացւին, թիւրքերը շատ կը նեղւեն իրենց մօտ ալիւր չը գտնելու պատճառով»[28]:

Եթե համանման կացութիւնը պահպանվեր երկար ժամանակով եւ չվերականգնվեր կապը գիւղերի ու քաղաքի միջեւ, ապա թուրք բնակչութիւնը կմատնվեր սովամահութեան: Այս առումով շատ ավելի լավ է եղել հայերի վիճակը, որոնք իրենց տներում ունեցել են բավար քանակութեամբ մթերք:

Թուրքերին այլ ընտրանք այլեւս չէր մնում: Նրանք պագում են սպիտակ դրոշը եւ իշխանութեան ներկայացուցիչների միջնորդութեամբ դիմում են հայերին: Գործին միջամտում է նաեւ նահանգապետ, որի միջնորդութեամբ հայկական եւ թուրքական կողմերի միջեւ կնքում են հաշտութիւն, բայց այն խիստ երերուն էր ու խաբուսիկ:

Հաշտութիւն կայացնելու համար նահանգապետի մոտ են հավաքվում քաղաքի հայ եւ թուրք բնակչութեան ներկայացուցիչները:

Խաղաղութիւն հաստատելու համար հայկական կողմը նահանգապետին ներկայացնում է հետեւյալ առաջարկութիւնները.

1. «...ցանկալի եւ անհրաժեշտ է, որ մահմեդական ազգաբնակչութիւնը իրեն հանգիստ պահէ. հակառակ դեպքում, մենք ստիպուած կլինենք նրանց դիմագրել ծայրահեղ միջոցներով»:

2. «...խորհուրդ ենք տալիս մահմեդականներին իրենց միջից քշել անկարգութիւններ կազմակերպողներին եւ հեղինակներին Կովկասի սահմաններից դուրս»:

3. «...անհրաժեշտ է դադարեցնել Երեւանի նահանգում տիրող հայերին զինաթափ անելու միջոցները, մանաւանդ որ հայերը իրենց զէնքերը ի չարը գործ չեն դնում, այլ աշխատում են գործ դնել միայն ինքնապաշտպանութեան սահմաններում»[29]:

Այս առաջարկությունը խիստ պատճառաբանված էր: Նախորդ օրերին իշխանությունների հրահանգով ոստիկանությունը եւ զինվորները զենք ու զինամթերք հայտնաբերելու եւ հայերին զինաթափելու նպատակով խուզարկումներ ու բռնություններ էին կատարել միայն հայկական բնակավայրերում:

4. «...ցանկալի է նոյնպէս, որ պաշտօնակից լինեն Երեւանի ոստիկանապետը եւ պրիստաւի օգնական Մէհմէտ բէկ Վէզիրովը»[30]

Ըստ «Դրօշակ»-ի, հայկական կողմի առաջարկությունները լավ տպավորություն են թողնում նահանգապետի վրա: Նա խոստանում է չզինաթափել ազգաբնակչությանը եւ խուզարկություններ կատարել միայն այն տներում, որտեղից կսկսվել հրացանաձգություն: Թուրքական կողմը հանձն է առնում, որ ջարդերի ու անկարգությունների նախաձեռնողներն ու կազմակերպիչները մահմեդականներն են եւ խոստանում է պահպանել խաղաղությունն ու սպանությունների կրկնության դեպքում չարագործներին հանձնել կառավարությանը[31]:

Հարկ է նշել, որ թեպետ Երեւանում թուրքերին չհաջողվեց իրականացնել իրենց ծրագրերը, այսուհանդերձ, կռիվներն արդեն տարածվել էին գավառները եւ չնայած նահանգապետի ու թուրքական կողմի տված խոստումներին, ինչպես ցույց տվեց ժամանակը, ծավալվելու էին առավել մեծ ընդգրկումներով ու ուժգնությամբ:

Ճիշտ է, նախորդ կռիվներում Ս. Օհանջանյանն ու Դաշնակցական Խեչոն ու նրանց զինակիցները իրենց դրսեւորել էին արժանապատվորեն, սակայն ընդհարումները խորանալու պարագայում, նրանց իսկ խոստովանությամբ, իրենց ուժերից վեր էր կազմակերպել ու ղեկավարել հայկական ամենամեծ տարածքն ու ամենաբազմաբանակ բնակչությունը ունեցող նահանգի ինքնապաշտպանությունը:

ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի եւ Զինվորական Մարմնի որոշմամբ Երեւան է գալիս Երեւանի նահանգի ու Զանգեզուրի ընդհանուր զորահրամանատար նշանակված Նիկոլ Դումանը եւ անմիջապես ձեռնամուխ լինում քաղաքի ու ողջ նահանգի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Սարգիս Օհանջանյանի պնդմամբ Նիկոլ Դումանին Երեւանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար նշանակել են իր առաջարկությամբ, քանի որ «...երբ ընդհարումները պարբերական բնոյթ ստացան եւ սպառնում էին երբեք վերջ չունենալ, երբ գաւառներում նրանք ահռելի. վտանգաւոր չափերի հասան, ես առաջարկեցի Կենտր. Կոմիտէին հրաւիրել Դումանին, որ այդ ժամանակ Բագուի հերոսական կռիւներին ակտիւ մասնակցութիւն էր ունեցել եւ չափազանց աչքի էր ընկել...»[32]:

«Իմ յիշատակարանը» խորագիրը կրող հուշագրությունում Ս. Օհանջանյանը կրկին անգամ անդրադառնալով նույն հարցին, խոստովանում է, որ երբ ընդհարումները ավելի խորացան եւ տարածվեցին ամբողջ նահանգում «...ես ինձ անձեռնահաս համարելով դիմադրութեան գործը ղեկավարելու, առաջարկեցի Մրգաստանի կենտր, կոմիտեին, որ այդ գործի ղեկավար հրաւիրեին Դումանին-Նիկօլ Տէր-Հովհաննիսեանին եւ Դումանը հեռագրով հրաւիրեց Երեւան եւ ստանձնեց նահանգի ընդհանուր հրամանատարութիւնը»[33]:

Ս. Օհանջանյանի առաջարկությունը գուցեեւ ինչ-որ նշանակություն ունեցել է, բայց, ինչպես արդեն նշվել է, Նիկոլ Դումանը Երեւանի նահանգի ու Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր զորահրամանատար է նշանակվել ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի եւ Զինվորական Մարմնի որոշմամբ:

Երեւանի նահանգը, ի տարբերություն Բաքվի, ուներ իր որակական առանձնահատկություններն ու դժվարությունները: Բաքվում նրա գործունեությունը սահմանափակված էր միմիայն քաղաքի շրջանակներով, իսկ այստեղ նրա հրամատարության իրավասության մեջ էին մտնում Երեւանի, Նախիջեւանի, Օրդուբադի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի եւ վարչականորեն Գանձակի նահանգի կազմում գտնվող Զանգեզուրի գավառները, ինչպես նաեւ Իջեւան-Շամշադին-Ղազախ շրջանները:

Նրա հրամանատարության տակ գտնվող շրջաններում ընդհարումներ տեղի չեն ունեցել միայն Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառներում, որտեղ հայությունը կազմում էր բնակչության բացարձակ մեծամասնությունը:

Երեւանի ղեկավարում Դումանը պետք է կազմակերպեր ու դեկավարեր մեծածավալ մարտական գործողություններ, իր բնորոշմամբ. «կազմակերպված ինքնապաշտպանական կռիվ»[34]:

Համաձայն նրա սահմանման, զանգվածային կռիվը կամ ինքնապաշտպանական կռիվը լինում է՝ ամբոխային կամ հոտային եւ՝ կազմակերպված կամ գիտակցական: Ամբոխային կռվի ժամանակ ժողովուրդը, ըստ Դումանի, նման է ոչխարի հոտի, որն առաջին իսկ կրակոցներից սարսափահար դիմում է խելակորույս փախուստի եւ անխուսափելիորեն տալիս մեծաքանակ զոհեր:

«Ամբոխը չի հասկանում, որ իր շահը մի մասն է ամբողջի՝ նրա հետ սերտ շաղկապած, եւ եթե ուզում է պահել իր սեփականը, պետք է պաշտպանի ամբողջը: Ամբոխը չի ըմբռնում, որ համաճարակին եւ առհասարակ ընդհանուր աղետին կարելի է դիմադրել միայն ընդհանուր ուժերով»[35]:

Բաբկում մահմեդական գինյալ ամբոխի կռիվը հիմնականում կրում էր ամբոխային, հոտային բնույթ: Ի տարբերություն թուրք հրոսակախմբերի, հայության ինքնապաշտպանությունը, զանգվածային մարտեր մղելու մարտավարությունը պետք է լիներ ըստ ամենայնի կազմակերպված եւ գիտակցական:

«Կազմակերպած ինքնապաշտպանական կռիվը,- գտնում է Դումանը,- ըմբռնում է երեւոյթները լայն եւ պարզօրէն, գիտակցում է իր նպատակը. նա գիտէ իր ուժերը ճշտիւ եւ չշնամուն՝ մօտաւորապէս: Նա կարգի է բերում իր բոլոր ռազմիկ ուժերը եւ մտցնում է նրանց մէջ կարգապահութիւն (դիսցիպլին): Հարկաւոր դէպքում չարժում է իր զօրամասերը արագօրէն, կեդրոնանում է՝ ուր անհրաժեշտ է, յարձակւում է՝ ուր հարկաւոր է, պաշտպանում է՝ ուր կարեւոր է»[36]:

«Դումանի գալով,- նշում է Ֆարհադը,- անմիջապէս կազմվեց մի զինւորական մարմին՝ պատերազմական ժամանակի լիազօր իրաւունքներով, այդ մարմնին յանձնուեց ինքնապաշտպանութեան գործի ղեկաւարութիւնը...»[37]:

Ի՞նչ էր անհրաժեշտ անել.

Դումանի մտահղացմամբ, պետք է իրականացվեին միջոցառումների մի շարք համակարգեր, որոնք անհրաժեշտ էին եւ պարտադիր ինքնապաշտպանությունն ավելի արդյունավետ կազմակերպելու եւ ամուր հիմքերի վրա դնելու համար:

1. Ինքնապաշտպանական խմբեր կազմավորել բոլոր բնակավայրերում, զինել, ոգեւորել ու պայքարի կոչել ժողովրդին:

2. Հնարավոր կարճ ժամանակահատվածում պետք էր դուրս բերել հայերին այն շրջաններից, ուր նրանք փոքրամասնություն էին կազմում:

3. Անհրաժեշտ էին փորձված, ժողովրդի ազատության պայքարին նվիրված մարտիկներ, որոնք կարողանային կազմակերպել եւ իրենց հետեւից տանել հայությանը:

Մինչեւ նրա գալը Երեւանում Սարգիս Օհանջանյանի (Ֆարհադ), Դաշնակցական Խեչոյի, Գալուստ Ալոյանի, Մկրտիչ Աղամալյանի (Սարհադ) եւ այլոց գլխավորությամբ արդեն կազմավորվել էին զգալի քանակության մարտական խմբեր, որոնք քաղաքում տեղի ունեցած մարտերում արդեն ձեռք էին բերել կռիվներ մղելու փորձառություն:

Նախորդ ինքնապաշտպանական մարտերի ժամանակ քաղաքը բաժանվել էր չորս ինքնապաշտպանական շրջանների եւ 26 դիրքերի: Յուրաքանչյուր դիրքում որոշված էին մարտիկների քանակը եւ հրամանատարը: Խելամիտ կազմակերպման եւ ղեկավարման դեպքում մարտական այդ ուժերը կարող էին գործել առավել արդյունավետությամբ:

Առաջին անհրաժեշտ քայլը խիստ կարգապահություն հաստատելն էր: Զինվորների կողմից կարգապահության փոքր-ինչ խախտելու դեպքում յուրաքանչյուրին սպառնում էր Դումանի սահմանած խիստ պատիժը: Հաշված օրի ընթացքում Դումանը կարողանում է խիստ կարգապահություն հաստատել քաղաքի ինքնապաշտպանական ուժերի շարքերում:

Ինքնապաշտպանական մարտերին մասնակցելու համար Երեւանում էին հավաքվում ազատագրական պայքարի բազմաթիվ ճշանավոր գործիչներ եւ արեւմտահայեր:

Կովկասահայության ինքնապաշտպանական ուժերի գործողությունների բարերար ազդեցությունը արեւմտահայության մարտական տրամադրության բարձրացման վրա Արամ Մանուկյանը բացատրում է երկու հիմնական հանգամանքներով:

1. Ազգային

Պատմական հիշյալ ժամանակահատվածում արեւմտահայության համար կովկասահայությունը դիտվում էր այն միակ հուսալի պաշտպանը, որը կարող էր իրեն սատար կանգնել անգամ ամենածանր, ճակատագրական պահերին: Եվ քանի որ Անդրկովկասում բռնկված ընդհարումների ժամանակ վտանգված էր արեւելահայությունը, այսինքն իրենց միակ հուսալի պաշտպանը ապա. «... բնական էր, որ սոսկում պիտի համակեր թուրքահայերին, երբ լսէին, որ թուրքերը փորձել են կոտորել եւ կովկասահայերին...»[38]:

2. Հոգեբանական

Կովկասահայության շրջանում սանձազերծած կոտորածները ատելություն ու անվստահություն էին արմատավորում ոչ միայն մեղսագործ ճանաչված պետության, այն է՝ ցարական Ռուսաստանի նկատմամբ, այլեւ. «... նրանք (արեւմտահայությունը - Հ.Գ.),- գրում է Արամ Մանուկյանը, - ատելութեան թոյնով լցուած էին դէպի թուրքերը եւ, առհասարակ դէպի իսլամները, մանաւանդ իմացել էին, որ յաջողութիւնը հայերի կողմն էր: Վրէժն էր եռում թուրքահայերի մէջ»[39]:

Իրոք, ինչպիսի՞ իրավիճակում կհայտնվեր արեւմտահայությունը, եթե թուրքերին հաջողվեր իրականացնել Կովկասը հայ բնակչությունից մաքրելու իրենց ծրագրած պանիսլամական ու պանթուրքական հրեշավոր ծրագրերը: Անտարակույս, այդ դեպքում ոչ թե «տոկում պիտի համակեր թուրքահայերին», այլ ավելին, գուտ բարոյահոգեբանական առումով սարսափելի իրավիճակում կհայտնվեր արեւմտահայությունը:

Պիտի նկատել, որ կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպումը, ըստ էության, այլեւս չպետք է դիտել որպես սոսկ կովկասահայության խնդիր: Անտարակույս, այն իր ընդգրկումներով ու ուղղվածությամբ արդեն դուրս էր եկել կովկասահայության շրջանակներից եւ ձեռք բերել համազգային բնույթ ու նշանակություն:

Կովկասում ծավալվող դեպքերը թելադրում էին, որ ինքնապաշտպանության ղեկն ստանձնած Հ.Յ. Դաշնակցությունը ժամանակավորապես, գոնե մասամբ հանգիստ թողներ Արեւմտյան Հայաստանը եւ իր ուշադրությունը բեւեռեր կազմակերպելու կովկասահայության ինքնապաշտպանությունը:

Ազգային-ազատագրական պայքարը հաջողությամբ կազմակերպելու կարեւորագույն նախադրյալներից մեկը եղել ու մնում էր զենքի ու զինամթերքի ձեռք բերումը: Ընդհարումների ողջ ժամանակաշրջանում դժվարինն ու առաջնայինը դարձյալ մարտական խմբերի զինմանն առնչվող խնդիրներն էին:

Զենք ձեռք բերելու առաջին անհրաժեշտ պայմանը ֆինանսական միջոցների հայթայթումն էր, բայց առավել դժվարինը Ռուսաստանի տարբեր շրջաններից, հատկապես Տուլայից, Անդրկովկասի հայկական վտանգված շրջանները զենքերի ապահով տեղափոխության իրականացումն էր:

Զենքերի գնման եւ փոխադրության հիմնական պատասխանատուն Հ.Յ.Դ. բյուրոյի կողմից ստեղծված Զինֆոնը (Զինական ֆոնդ) այդ գործն իրականացրել է մի քանի ուղիներով:

1. Կազմակերպվում է հայրենանվեր եւ խիզախ հայուհիներից բաղկացած մի խումբ, որի անդամները, վտանգելով իրենց կյանքը եւ բազում խոչընդոտներ հաղթահարելով, կարողացել են Հյուսիսային Կովկասից, իրենց պայուսակներով զենք ու զինամթերք տեղափոխել եւ հանձնել Զինֆոնի տնօրինությանը:

Ռուբեն Դարբինյանը, որն այդ օրերին կուսակցության առաջադրանքով գտնվում էր Հյուսիսային Կովկասում, գրում է. «Ինչ որ ամենեն զարմանալին էր, գրեթե միշտ ալ անոնք կը յաջողեին զենքերը անվնաս տեղ հասցնել: Ոչ ցարական ոստիկանութիւնը, եւ ոչ ալ թուրքերը, ըստ երեւոյթին, կերեւակայէին, թե լաւ ընտանիքներու պատկանող հայ օրիորդներ ու տիկիններ կրնային զբաղիլ վտանգաւոր գործով: Այդ պատճառով ալ անոնց հետապնդումը շատ թեթեւ ու մակերեսային էր»[40]:

2. Զենքերի տեղափոխման համար պատրաստել են հատուկ կառքեր, որոնք ունեցել են գաղտնի պահեստներ: Այդ կառքերը շարժվել են Թիֆլիսից եւ անցնելով բանուկ ճանապարհներով՝ Ռուսաստանի համապատասխան քաղաքներն են հասցրել զանազան ապրանքներ եւ վերադարձել. «... իրենց գաղտնի պահեստներուն մէջ կը լցնեին հրացաններու մասեր ու փամփուշտներ, իսկ փուրգոններու վրայ կը դարսեին խոտ կամ նման թեթեւ ապրանքներ եւ առտու կանուխ կը մեկնեին նոյն Ռազմավարական ճանապարհով դէպի Թիֆլիս ու այստեղեն ալ՝ Անդրկովկասի այն վայրերը, ուր զենքերու պետք կար»[41]:

Զենքի տեղափոխության այս եղանակն առավել արդյունավետ էր, բայց ավելի դժվարին, իսկ բռնվելու պարագայում՝ չափազանց վտանգավոր: Իհարկե, եղել են դեպքեր, երբ ցարական ոստիկանությունը հայտնաբերել ու բռնագրավել է Ռուսաստանից Անդրկովկաս առաքվող զենքերը:

Ռուբեն Դարբինյանը իր հուշերում ներկայացնում է ցարական ոստիկանության կողմից զենքի բռնագրավման մի ուշագրավ դեպք, որը, կարելի է ասել, պերճախոս բնութագիրն է Հ.Յ. Դաշնակցության եւ նրա կիրառած մարտավարության անքակտելի մասը կազմող ահաբեկչական գործողությունների:

Հյուսիսային Կովկասում կատարած շրջագայություններից Լեւոն Քալանթարյանի(ՀՅԴ Հ). Կովկասի «Ժլատ» կենտր. կոմիտեի անդամ- Հ.Գ.) ընկերակցությամբ Վլադիկավկազ վերադառնալիս նրանք տեղի ՀՅԴ կոմիտեին հասցեագրած ծածկագիր- հետագրից տեղեկանում են, որ ոսիկանությունը քաղաքի թուրքերի մատնությամբ հայտնաբերել է իրենց զենքի պահեստները եւ այնտեղ եղած զենքերը արկղների մեջ դասավորած՝ տարել ոստիկանատուն[42]:

Ի՛նչ պիտի ասեին: Իհարկե, դժվար էր հաշտակերպվել մեծ դժվարությամբ ձեռք բերած գենքերի կորստի հետ: Նրանք, ՀՅԴ Վլադիկավկազի կառույցի անդամ Նիկոլայ Բաբաքեխվյանի(Կոլյա) թելադրանքով որոշում են դիմել համարձակ քայլի ու ոստիկանությունից հետ վերցնել բռնագրաված գենքերը: Այդ նպատակով գիշերով այցելում են քաղաքի ոստիկանության պետին՝ գնդապետ Լուպակովին:

«...պատուհանին մէջ, գրում է Ռուբեն Դարբինյանը,- երեւցաւ ինքը՝ գնդ. Լուպակովը: Երբ տեսաւ մեզ, սաստկական ձայնով խնդրեց.

-Ի սեր Աստծոյ, հեռացէք այժմ: Գիշերուան այս ժամուն մի՛ անհանգստացնէք մեզ: Պատոտյ խոսք կու տամ, որ առաւօտեան ժամը 9-ին կընդունեմ ձեզ եւ կաշխատեմ կատարել ձեր խնդիրքը »[43]:

Լուսը բացվելու պես Կոլյան առանց ընկերների տեղյակ պահելու գնում է ոստիկանություն, ներկայանում գնդապետ Լուպակովին եւ համարձակորեն ու սպառնալի տոնով հարցնում. «-Գնդապետ Լուպակով, դուք գիտե՞ք, թէ ում զենքերն էք բռնագրաւել:

«- Ո՛չ չգիտեմ: Ի՞նչ կայ. ինչո՞ւ էք հարցնում,-պատասխանեց անհանգստացած...

«-Ձեր բռնագրաւած զէնքերը պատկանում են Հ.Յ. Դաշնակցութեան: Այժմ, որ դուք գիտէք, անմիջապէս հրամայեցէք, որ զէնքերը մեզ վերադարձնեն: Հակառակ պարագային մենք պատասխանատու չենք լինի ծանր հետեւանքների համար: Փառք Աստծոյ, դուք լաւ էք ճանաչում Հ.Յ. Դաշնակցութիւնը եւ գիտէք, թէ երբէք նա չպիտի ներէ ձեզ այդպիսի մի թշնամութիւն»:

Պարզվում է, որ գնդապետ Լուպակովը լավատեղյակ է եղել Դաշնակցության գործունեությանը եւ նրա իրականացրած ահաբեկչություններին:

Կոլյայի սպառնալի խոսքերը լսելուց հետո «Գնդապետը, բոլորովին այլայլված, զանգահարեց: Ներս մտան երկու ժանդարմներ, որոնց հրամայեց ներսի սենեակի մէջ դրուած զէնքերը արկղներով յանձնել ինձ ու իմ մարդկանց»[44]:

Զենք ու զինամթերքի ձեռք բերման գործին մասնակից են դարձել նաեւ Ռուսաստանի տարբեր ուսումնական հաստատություններում, մասնավորապես Պետերբուրգի համալսարանում սովորող հայ ուսանողությունը[45]:

Եղել են դեպքեր, երբ ցարական ոստիկանությունը զենք ու զինամթերքի ձեռք բերելու պատճառով ձերբակալել ու դատի է տվել հայ ուսանողներին:

Կայսր Նիկոլայ 2-ին ներկայացրած զեկուցագրերից մեկում ցարական ոստիկանությունը կայսրի գիտության է ներկայացնում Պետերբուրգի մի քանի հայ ուսանողների, որոնք ձերբակալվել են զենք ու զինամթերք ձեռք բերելու պատճառով: Ընդորում, իրենց ձեռք բերած զենքն ու զինամթերքը ուսանողները թեեւ թաքցրած են եղել տարբեր տեղերում, նույնիսկ բարեկամների ու ծանոթների բնակարաններում, այնուամենայնիվ, ոստիկանությունը իր ուշադրության կենտրոնում պահելով հայ ուսանողությանը, կարողանում է հայտնաբերել թաքստոցներն ու բռնագրավել այնտեղ գտնվող զենք ու զինամթերքը[46]:

Այդ նույն զեկուցագրում ոստիկանությունը ցարին տեղեկացնում է, որ «... համաձայն իրենց ունեցած տեղեկությունների, թվարկված բոլոր անձինք պատկանում են հայ հեղափոխական կազմակերպություններին եւ կապված են սոցիալիստ-հեղափոխական կուսակցության տեղի կազմակերպության հետ»[47]:

3. Ծովային ուղին. Զիֆոնը ընդհարումների ընթացքում վարձել է «Աննա» բեռնանավը, որի միջոցով մեծ քանակության զենք է տեղափոխվել Աստրախանից Բաքու:

Ռուսաստանից զենքերը փոխադրել են երկաթուղով, խճուղիներով, ձորերով ու սարերի վրայով, գաղտնի գրեթե բոլոր միջոցներով:

Այդ ընթացքում Զիֆոնը մշտապես կապեր է պահպանել Ռուսաստանի զանազան քաղաքների ու գավառների հետ եւ տարբեր վայրերից ստացել բազմաթիւ նամակներ ու հեռագրեր:

Երբեմն պատահել է, որ զենքի ձեռք բերման գործով զբաղվող անձինք անփորձության պատճառով միամտորեն այնպիսի հեռագրեր են ուղարկել, որով վտանգել են իրենց ընկերներին ու զենքերի տեղափոխման գործը:

Համաձայն Աբ. Գյուլխանդանյանի տեղեկացման, զենքի գնման ու տեղափոխման գործով զբաղվող անփորձ ընկերները «...ցանկանալով հրացան կամ փամփուշտ հասկացնել, իրենց նամակներում կամ հաշիւների մէջ գրում էին օրինակ՝

«Ստացանք 100 գրչակոթ՝ գինը 100 ռուբլու, հաւասար է 10,000 ռուբլու». կամ ցանկանալով հասկացնել փամփուշտ՝ գրում էին «5.000 գրիչ, հատը հինգ կոպէկով, 25.000 ռուբլի»[48]

Եթե այդ կարգի հաղորդագրություն հայտնվեր նրանց գործողությունների ակնդետ հետեւող գաղտնի ոստիկանության ձեռքը, ապա նրա համար բոլորովին դժվար չէր հասկանալ, որ նշված 10.000 եւ 25.000

ռուբլու արժողությամբ գրչակոթն ու գրիչը իրականում վերաբերում էին ոչ թե նշված, այլ բոլորովին ուրիշ առարկաների:

Երբեմն պատահել է, որ հեռագիր ուղարկողները հայերեն բառերը գրել են ռուսերեն տառերով՝ համոզված լինելով, որ ռուս ոստիկանները չեն կարողանա հասկանալ իրենց գրածները: Չնայած գաղտնի ոստիկանության իրականացրած խստագույն հետապնդումներին ու հարուցած արգելքներին, զենք ու զինամթերքի ձեռք բերման գործով զբաղվողները, շրջանցելով բոլոր դժվարությունները, միչեւ իսկ բռնվելու դեպքում անգամ Սիբիր աքսորվելու վտանգը, նույն անզգույշ քայլերով համառորեն շարունակել են աշխատանքը:

«Այդ բոլորի առաջն առնելու համար,-գրում է Աբ. Գյուլխանդանյանը,-Զինական Ֆոնդը մշակել էր յատուկ ծածկանուններ եւ յայտարարել է գործին մօտիկ ընկերներին: Շնորհիւ դրան հեշտ եւ անվտանգ կերպով կարելի էր լինում կանոնաւոր կերպով ե՛ւ հաշիւները պահել, ե՛ւ հեռագրերը կամ նամակները գրել»[49]:

Ռուսաստանի տարբեր քաղաքներից զենք ու զինամթերք են տեղափոխել նաեւ թուրքերը: «Մշակ» թերթին հասցեագրած թղթակցություններում կան այդ իրողությունը հավաստող բազմաթիվ վկայություններ[50]:

Թղթակցություններից մեկում նշվում է. «...տասնեակ թուրքեր թէ Մոսկվայում եւ թէ Ռուսաստանի մի քանի քաղաքներում զէնքեր են առնում եւ ճանապարհում Կովկասի զանազան քաղաքներ: Այս թուրքերը մեծամասամբ դարաբաղցի թուրքերն են, եւ քիչ չեն նաեւ Երեւանցի, Շամախեցի, Գանձակեցի, Նուխեցի, Ղազախի թուրքերը»[51]:

Այդ նույն փաստաթղթերից պարզվում է, որ զենք ու զինամթերքի գնման ու տեղափոխման գործով հիմնականում զբաղվել են թուրք ազդեցիկ դեմքերն ու ցեղախմբերի առաջնորդները(բեկեր)[52]:

Այս հարցում դարձյալ դրսեւորվել է ցարական իշխանությունների կողմնակալ վերաբերմունքը: Թուրքերը գրեթե առանց խոչընդոտի «...Վօլկա գետի վրայով մեծ քանակութեամբ զէնք են հասցրել Հաշտարխան, իսկ Հաշտարխանից իւրանց սեպհական նաւերով եւ պարախտներով Բաքու... հայիհ խուզարկում են իսկ թուրքին առանց խուզարկելու բաց թողնում...»[53]:

Ձեռք բերած զենքն ու զինամթերքը Զինական ֆոնդը ուղարկել է ինքնապաշտպանական շրջանների տնօրինությանը:

Երբ հայտնի է դառնում, որ կովկասահայությանը զինելու ու նրա ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով Հ. Յ. Դաշնակցության նախաձեռնությամբ Թիֆլիսում եւ Բաքվում հիմնվել են

Զինվորական ֆոնդեր, կուսակցական կառույցներից ու գյուղական բնակավայրերից անընդհատ բազմաթիվ դիմումներ են ստացվել, որով պահանջել են զենք ու զինամթերք:

Քանի որ Զիֆոնի հնարավորությունները սահմանափակ էին, բնական է, որ հնարավոր չէր բավարարել ինքնապաշտպանական շրջանների ներկայացրած բոլոր պահանջները: Իսկ դա հարուցում էր դիմողների դժգոհությունն ու հուսալքությունը:

Ի՞նչ պետք է արվեր: Ստեղծված իրավիճակից դուրս գալու եւ գործը հաջողությամբ կարգաւորելու համար Զինական Ֆոնդը կազմում է իր կանոնադրությունը եւ ուղարկում շրջանները, որպեսզի նրանք իրենց գործունեությունը չսահմանափակեն միայն դիմումներ հղելով ու Թիֆլիսից ու Բաքվից զենք ու զինամթերք պահանջելով:

Աբ. Գյուլխանդանյանի գնահատմամբ «Այդ կանոնադրութիւնը մի փոքր սթափեցրեց մեր մարմինները եւ առհասարակ հեռաւոր գաւառներում ապրող հայերը, որոնք միմիայն պահանջներ էին անում, եւ զարմանում էին որ այդ պահանջները անմիջապէս չեն կատարւում»[54]:

Ճիշտ է, այդ կանոնադրությունը որոշակի դերակատարություն ունեցել է, բայց շրջաններից շարունակվել է ՀՅԴ Արեւելյան բյուրոյին եւ Զինվորական մարմնին հասցեագրված պարունակող նամակների ու հեռագրերի հոսքը, որի պահանջն ու խնդրանքը միակն էր. զինական աջակցություն, զենք եւ զինամթերք:

Շրջաններից Բաքու հասնող բազմաթիվ նամակներն ու հեռագրերը ու նրանց միջոցով ներկայացված պահանջները բավարարելու համար Բաքվի ՀՅԴ կենտր. կոմիտեն եւ Զինվորական մարմինը հարկադրված պիտի դիմեին վճռական քայլերի: Շրջաններին պահանջները բավարարելու, այն է՝ զենք ու զինամթերք հատկացնելու համար անհրաժեշտ էին հսկայական ֆինանսական միջոցներ, որոնց ձեռք բերումը չափազանց դժվարին խնդիր էր : Այդ դեպքում ի՞նչ պիտի արվեր, ինչպիսի՞ քայլեր պիտի ձեռնարկվեին:

Բաքվի ՀՅԴ կենտր. կոմիտեն եւ Զինվորական մարմինը ստեղծված կացությունից դուրս գալու համար ծրագրում են ձեռնարկել բոնի հանգանակություն այն հայերի մեջ, որոնց համար խորթ էր ու անարժեք ընդհարումների հետեւանքով դժվարագույն իրավիճակում հայտնված հայության աղետալի վիճակը:

Իր ծրագրած ձեռնարկը իրականացնելու նպատակով Բաքվի ՀՅԴ կենտր. կոմիտեն Դարարապի «Ազատաժ»-ի կոմիտեությանն է ուղարկում հետեւյալ նրությունը. «Ուրիշ շրջանների, մանաւանդ ձեր շրջանի

պահանջները բաւարարելու համար, մեզ մնում է դիմել կայանալիք Դաշնակցական Ռայոնական Ժողովին՝ ձեռնարկելու համար բոնի հանգանակութիւն: Ուղարկեցէք դուք եւս ձեր պատգամաւորները նոյնպիսի առաջարկով»[55]:

1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում տեղի է ունենում ՀՅԴ Կովկասեան Ռայոնական ժողովը, որի օրակարգում, ի թիվս մի շարք հարցերի, ընդգրկվում եւ քննարկվում է նաեւ բոնի հանգանակություն կատարելու խնդիրը[56]:

Հայտնի է, որ Քր. Միքայելյանի նախաձեռնությամբ 1901 թ. հիմնված բոնի հանգանակություն իրականացնող «Փոթորիկի» գործունեությունը դադարեցվել էր: Փաստորեն ՀՅԴ Ռայոնական ժողովը պիտի որոշում կայացներ վերսկսել «Փոթորիկի» գործունեությունը:

Ռայոնական ժողովը այս հարցի վերաբերյալ ընդունում է «Փոթորիկ» անունը կրող 8 կետից բաղկացած հետեւյալ որոշումը.

1. Ներկայ պատերազմական ժամանակամիջոցում բացառիկ միջոցներով հանգանակութիւն անելու համար ժամանակաւորապէս վերականգնում է «Փոթորիկ»-ը:

2. «Փոթորիկ»-ը վերակազմելը յանձնում է նախկին «Փոթորիկ»-ին:

3. «Փոթորիկից դուրս Հ.Յ. Դաշնակցութեան բոլոր Մարմիններին խստիւ արգելւում է որեւէ ձեւով եւ անունով՝ հանգանակութեան համար բոնի միջոցների դիմել, բայց «Փոթորիկ»-ն իր դիմումների մասին վաղօրօք յայտնում է, ի գիտութիւն, տեղական Մարմիններին:

6. «Փոթորիկ»-ի դիմումներն ուղղուած պէտք է լինեն որոշ դասակարգի չափազանց սահմանափակ շրջանի եւ ամեն միջոց պէտք է գործի դրուի ծայրայեղ միջոցներից խուսափելու համար:

7. «Փոթորիկ»-ի ձեռք բերած գումարները յանձնուելու են «Ֆոնդի» Մարմնին(նկատի ունի Զինական Ֆոնդը-Զիֆոն-Հ.Գ), միմիայն ընդհանուր գինման եւ ինքնապաշտպանութեան գործին յատկացնելու համար...»[57]:

Կովկասյան Ռայոնական ժողովը, որի աշխատանքներին, բացի ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներից (Նիկոլ Դուման, Վարդան, Մելքարեցի Սաքո, Մեբաստացի Մուրադ, Քեռի), մասնակցել են Դաշնակցության նշանավոր գործիչների մեծ մասը (Ավ. Ահարոնյան, Ավ. Խահակյան, Ավ. Սահակյան(Հայր Աբրահամ), Աբ. Գյուլխանդանյան, Արմեն Գարո, Գարեգին Խաժակ, Եղիշե Թոփչյան, Համո Օհանջանյան, Համազասպ, Հարություն Շահրիկյան, Հովսեփ Արղության, Հովհաննես Քաջազնունի, Սիմոն Վրացյան եւ այլոք),

փաստորեն վերականգնում է բոնի հանգանակություն ունեցող մարմնի՝ Փոթորիկի գործունեությունը[58]:

Համաձայն Ռայոնական ժողովի որոշման, սահմանափակ էր բանակը այն քաղաքների ու բնակավայրերի, որտեղ «Փոթորիկ»-ը պիտի կատարեր բոնի հանգանակություն:

Հ.Յ.Դաշնակցության հանձնարարությամբ Ռուսաստանի եւ Կովկասի նախանշված թույլատրելի շրջաններն են մեկնում կուսակցական բազմաթիվ գործիչներ:

«...այդ առաքելութեամբ, գրում է Աբ. Գյուլխանդանյանը,-Հիւսիսային Կովկաս անցան մեր ընկերներից Յ. Շահրիկեանը, Ս. Մ. եւ ուրիշները, որոնք աշխատելով գլխաւորապէս Եկատերինոդարի եւ Ռոստովի շրջաններում՝ կարողացան զգալի գումարներ ստանալ հայ հարուստներից, որով հնարաւորութիւն ստեղծուեց ինքնապաշտպանութեան գործը դնել աւելի լայն եւ արդիւնաւոր հողի վրայ»[59]:

---

1. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 18:
2. Տե՛ս տույն տեղում:
3. Տե՛ս նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 2:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում, գ. 64, էջ 1-2:
8. Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:
9. «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 103:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Մ. Վարանդեան, Հ.Յ. Դաշնակ-ն պատմութիւն, էջ 313:
13. «Դրո», Երեւան, 1991, էջ 179:
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում, էջ 182:
16. Նույն տեղում, էջ 180:
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում, էջ 183:
19. Նույն տեղում, էջ 186:
20. Նույն տեղում:
21. Նույն տեղում, էջ էջ 186-187:
22. «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 104:
23. Ս. Վրացեան, «Սիրկածին Դրոն», էջ 37:
24. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 319:

25. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 293, գ. 11, էջ 3:
26. Նույն տեղում:
27. Նույն տեղում:
28. «Դրօշակ», 1905, թիւ 7, էջ 104:
29. Նույն տեղում:
30. Նույն տեղում:
31. Նույն տեղում:
32. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 4, էջ 15:
33. Նույն տեղում, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 2-3:
34. Տե՛ս «Նախագիծ ժողովրդականն ինքնապաշտպանութեան», Ժնեւ, 1907, էջ 122:
35. Նույն տեղում, էջ 11:
36. Նույն նտեղում, էջ 12:
37. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 4, գ. 4, էջ 9:
38. ՀՅԴ ԿԱ, թղ. 294, գ. 34, էջ 4:
39. «Հայրենիք», ամս., 1923, թիւ 12, էջ 103:
40. Ռ. Դարբինեան, Երկեր, հ. Ա, էջ 52:
41. Նույն տեղում:
42. Տե՛ս նույն տեղում, էջ 53:
43. Նույն տեղում, էջ 54:
44. Նույն տեղում, էջ55:
45. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 134:
46. Նույն տեղում:
47. Նույն տեղում:
48. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 7, էջ 138:
49. Նույն տեղում
50. Տե՛ս ՀԱԱ. Ֆ. 402, ց. 2, գ. 395, թ. 134:
51. Նույն տեղում, թ. 135:
52. Նույն տեղում:
53. Նույն տեղում:
54. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 7, էջ 139:
55. Նույն տեղում, էջ 142-143:
56. Տե՛ս «Նիւթեր...», հ. Բ, էջ 237:
57. Նույն տեղում, էջ 240:
58. Տե՛ս նույն տեղում, էջ 236-240:
59. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 7, էջ 143:

2.4. ՀԱՅ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Հարկե նշել, որ Զինական մարմինները շրջանների ինքնապաշտպանական ուժերը զինել են ոչ միայն Զինական ֆոնդից ստացած զենքերով, որոնց քանակությունը սահմանափակ էր եւ այն ոչ լիովին, միայն մասամբ էր բավարարում շրջանների մարտական խմբերը զինելու պահանջները:

Զինական մարմինները ՀՅԴ կառույցների աջակցությամբ կարողացել են տարբեր միջոցներով որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել նաեւ իրենց վստահված շրջաններում:

Այս առումով հատկապես աչքի է ընկել Նիկոլ Դումանի գլխավորած Երեւանի նահանգի Զինվորական մարմինը:

Ժամանակի մեծ մասն անցկացնելով իր հրամանատարական կենտրոնավայրում՝ Երեւանում, Դումանը գրեթե մշտապես անխափան գործող կապի միջոցով պարբերաբար անհրաժեշտ տեղեկություններ է ստացել գավառներում կատարվող դեպքերի մասին եւ կարողացել պատշաճ մակարդակով համադրել ու ղեկավարել նրանց գործողությունները:

Գավառների ինքնապաշտպանությունը հուսալիորեն կազմակերպելու համար հարկավոր էր ի սկզբանե դնել առաջին կարեւոր հիմնաքարը, այն է՝ ճիշտ կատարել վտանգված շրջանների մարտական ուժերի հրամանատարության ընտրությունը: Ու՞մ պիտի վստահվեր հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը:

Մեծ հավատ ընծայելով Տարոնի, Սասունի եւ Վասպուրականի շրջաններից եկած ֆիդայիներին՝ Դումանը նրանց ուղարկում է առավել վտանգված շրջաններ, որպեսզի նրանք տարիների կուտակած իրենց մարտական փորձն ու հմտությունը օգտագործեին կազմակերպելու տեղի հայության ինքնապաշտպանությունը:

Այսպես. Զանգեզուրի ու Ագուլիսի շրջաններն է ուղարկում Սեբաստացի Մուրադին ու նրա անբաժան գինակիցներ Կայծակ Առաքելին, Ավոյին եւ Մեհեդի Ավետիսին: Դարալագեազի շրջանի պաշտ-

պանությունը հանձնում է Տարոնի ֆիդայիներ Հաճի Հակոբին. Աղյուծ Ավագին: Մշեցի Սմբատ Բորոյանը(Մսխալուտ) ստանձնում է Վանա-լոյի (Արտաշատ) շրջանի պաշտպանության հրամանատարությունը. Շարուրի շրջանինը՝ Սեյդո Պողոսը:

Այս ամենը գործի կազմակերպման միայն սկիզբն էր: Ընդհարում-ների ընթացքում նահանգի Քինվորական մարմինը պարբերաբար գա-վառների ինքնապաշտպանական ուժերը համալրել է պատմության դեռևս անհայտ երիտասարդ հրամանատարների առաջնորդությամբ գործող մի շարք մարտական խմբերով, որոնք մարտադաշտում հրա-շալի քննություն բռնելով. իրենց նշանակալի ավանդն են ներդրել շա-րունակվող կռիվներում:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ «...Իրեն(նկատի ունի Դումանին-Հ.Գ.) յատուկ հմտությամբ նա ամբողջ նահանգում կազմակերպեց դի-մադրություններ. կազմակերպեց զէնքի եւ ռազմամթերքի ներմուծումը. գի-նեց եւ անհրաժեշտ վայրերում դասաւորեց աւելի քան 3000 դաշնակցա-կան կամաւորներ եւ միանգամայն ապահովեց նահանգի ֆիզիկական գոյութիւնը մինչեւ վերջ»[1]: .

Բաբվի փետրվարյան եւ դրան հաջորդած Երեւանի մայիսյան դեպքերը հստակորեն ցույց տվեցին, որ թեեւ թուրքական կողմը գրեթե ամենուրեք հայերից անհամեմատ ավելի լավ էր զինված ու նախա-պատրաստված եւ վայելում էր իշխանությունների հովանավորությու-նը, այնուամենայնիվ, իրավիճակն այնքան էլ սարսափելի չէր: Համար-ձակ ու խելամիտ գործողություններ ձեռնարկելու պարագայում կարելի էր արժանի հակահարված տալ թուրք հրոսակախմբերի հարձակումնե-րին, մանավանդ որ դրանք ավելի շատ հախուռն ու ամբոխային բնույթ էին կրում եւ այնքան էլ կազմակերպված ու մշակված չէին: Բայց այ-պիսի պայմաններում, երբ թուրքերն ամենուրեք նախահարձակ էին, չա-փազանց դժվար էր ակնկալել սոսկ կրավորական ինքնապաշտպանա-կան մարտեր մղելով նվաճել հաղթանակներ եւ իսպառ վերացնել հա-յության գլխին ծառացած վտանգը:

Հակառակորդի հարձակողական տրամադրվածությունը կոտրելու, նրա նկատմամբ վճռական գերակշռություն ձեռք բերելու համար հարկա-վոր էր նախահարձակ լինել, խլել նրանից նախաձեռնությունը եւ հնարա-վորության դեպքում ձեռնարկել նաեւ հարձակողական գործողություններ:

Երեւանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատա-րությունն ընդունելու առաջին իսկ օրից Դումանը ծրագրում է իրականաց-նել մի շարք հարձակողական գործողություններ, հատկապես այն շրջան-

ներում, ուր մահմեդական տարրը մեծամասնություն չէր կազմում: Համա-ման մի գործողություն պետք է իրականացվեր Բարձր-Տեղի եւ Նիգի (ներ-կայիս Աշտարակի եւ Ապարանի շրջանները - Հ.Գ.) տարածքում: Այդ շրջանների թուրք բնակչությունը, չնայած մեծամասնություն չէր կազմում, թեեւ ղեկավարված ընդհանուր տրամադրությամբ եւ իրենց արյունակիցների ձեռ-նարկած գործողություններով, զինյալ խմբերով հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա:

Բարձր-Տեղի եւ Նիգի շրջանը վարչատարածքային առումով մտնում էր Էջմիածին գավառի մեջ: Խառը բնակչություն ունեցող Էջմիածինի գա-վառում հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Էջմիածինի գավառը բաղկացած էր 219 գյուղերից, որից 88-հայկական էին: Գավառի ընդհանուր ազգաբնակչությունը կազմում էր 124.000 մարդ, ո-րից հայերը՝ 76.000, թուրքերը՝ 45.000 եւ այլ ազգեր՝ 3.000[2]:

Էջմիածին գավառում զանգվածային կռիվները տեղի են ունեցել միայն Աշտարակի շրջանում, որտեղ կային զուտ հայաբնակ, զուտ թուր-քաբնակ եւ խառը՝ հայ ու թուրք բնակչություն ունեցող գյուղեր:

Հայաբնակ գյուղերը ընկած էին Արագածի փեշերին, Քասախ գե-տի եւ նրա մեջ թափվող առվակների հովիտներում: Այդ գյուղերն էին, Աշտարակը՝ 401 տուն, Մուղնին՝ 35, Կարբին՝ 132, Օհանավանքը՝ 69, Իլանչալանը(Արտաշավան)՝ 44 եւ Ղալաչին՝ 45:

Զուտ թուրքաբնակ գյուղերն էին. Փաքրինջը՝ 61 տուն, Ագարակը 69, Քիչիկքենդը՝ 36, Թաքիան՝ 85, Նազրվանը՝ 58, Ուշին՝ 142, Պերսին՝ 34, Անգրասակը՝ 20, Քյուրդալուն 11 եւ Համամլուն՝ 61:

Հայ եւ թուրք խառը բնակչություն ունեցող գյուղերն էին. Փարբին՝ 21 տուն թուրք եւ 86 տուն հայ, Սաղմոսավանքը՝ 14 տուն թուրք ու 10 տուն հայ, Ղոթուրը՝ 11 տուն թուրք եւ 17 տուն հայ[3]:

Ըստ Բարձր-Տեղ եւ Նիգի շրջաններում տեղի ունեցած ընդհարում-ները ներկայացնող վավերագրի, ընդհարումներն այդ շրջանում բռնկվում են մայիսի 24-ին: Այդ օրը, Չոբանքյարի թուրքերը, ոգեւորվե-լով նախորդ օրը Երեւանում տեղի ունեցած դեպքերի արձագանքով, հարձակվում են Աշտարակի հանդերում վար անող գյուղացիների վրա: Լսելով թուրքերի հարձակման մասին, Աշտարակից մի խումբ զինված երիտասարդներ շտապում են օգնության, իսկ թուրքերը տեղիք տալով հայերի ճնշմանը, լքում են մարտադաշտն ու հեռանում[4]:

Հավատարիմ մնալով իրենց որդեգրած քաղաքականությանը, գավա-ռի իշխանությունները պիտի ստեղծեին պատրվակներ, որպեսզի խորաց-նեին ու ընդարձակեին հայ- թուրքական ընդհարումները: Ահա հենց իշ-

խանությունների սադրանքով բացի վերոհիշյալ միջադեպից, Աշտարակի շրջանում պատահում է եւս մի դիպված, պատրվակ:

ՀՅԴ Ալեքսոլի կենտր. կոմիտեի անդամ Կարպովիչը ընկերներին հասցեագրած գրություններից մեկում (19052թ. յուլիսի 8-ին) անդրադառնալով այդ դիպվածին՝ հայտնում է, որ Ղութուրցի հայ բնակիչներից մեկը հրացան գնելու նպատակով փոխարինաբար փող է վերցնում համագյուղացի ինչ-որ մի թուրքից եւ հետո մերժում նրան վերադարձնել թե փողը, եւ թե հրացանը: Խաբված թուրքը մեկ այլ թուրքի ընկերակցությամբ հարձակվում է հայի վրա, եւ փորձում սպանել նրան: Սակայն տեղի է ունենում ճիշտ հակառակը. հարձակման ենթարկված հայն է սպանում թուրքերին: Ղութուրի կատաղած թուրք բնակիչները իրենց արյունակիցների թափած արյան վրեժը լուծելու թույնով համակված, հարձակվում են Ղութուր գյուղի հայերի վրա եւ տանում նրանց պատկանող տավարը: Ղութուրը խառը բնակչություն ունեցող գյուղ էր, հայերն իրենց հերթին հարձակվում են թուրքերի վրա եւ «...8-12 հոգի սպանում, տները թալանում, վառում եւ փչացնում:

Կանայք եւ երեխայք ու փախստական թուրքերը ապաստանում են թրքական Օշի գյուղը, որը շատ մոտ է հայաբնակ Կարբի գյուղին: Այս լուրը լսելով գրգռում է շրջակայքի թուրքերին եւ մեծ բոլով թուրքեր դուրս են գալիս ու փորձում են յարձակվել Կարբի, Ղութուր, Հաւաւանք, Իլանչալան եւ ուրիշ հայ գիւղերի վրայ»[5]:

Կռիվը բռնկվում է, հակամարտող կողմերին խաղաղեցնելու նպատակով գործին միջամտում է ազգությամբ թուրք Աշտարակի պրիստավը եւ առաջարկում, դադարեցնել վերջ տալ թշնամանքին ու հաշտվել: Հայերը համաձայնվում են հաշտվել մի պայմանով, եթե թուրքերը վերադարձնեն իրենց նախիրը, իսկ թուրքերը, քանի որ հաստատապես ծրագրել էին Ուշի եւ մյուս գյուղերի թուրք զինյալների համագործակցությամբ հարձակվել հայկական բնակավայրերի վրա եւ կոտորելով՝ բռնագրավել նրանց ունեցվածքը, կտրականապես հրաժարվում են կատարել պրիստավի առաջարկությունը: Վերոհիշյալ հայկական գյուղերի բնակչությանը հայտնի է դառնում թուրքերի մտադրությունը: Պարզվում է նաեւ, որ իր արյունակիցներին պաշտպանող Աշտարակի պրիստավի խոստումները կեղծ էին: Նրա կողմից հակամարտող կողմերին առաջարկած կեղծ խոստումները նպատակ էին հետապնդում ապակողմնորոշել, խաբել հայերին ու հնարավորինս օգնել թուրքերին:

«...մերոնք, - նշում է Կարպովիչը, - լսած լինելով, որ Իսկանդար աղան (նկատի ունի Աշտարակի պրիստավին- Հ.Գ.) պատուիրել է թուրքե-

րին սպիտակ շորեր հագնել, կեղծել իրենց տարազը, հայերին մոլորեցնելու համար, մեր տղերքը մի զալպ բաց են անում պրիստաւի վրայ: Նա փախչում է, յետոյ թեթեւ կռիւ են ունենում թուրք ամբոխի հետ, որոնցից 5-6 հոգի սպանւում է...»[6]:

Թեթեւակի ընդհարումներից հետո թուրքերը կենտրոնանում են Ուշի գյուղում: Թուրքական գյուղերից հայ բնակչության համար առավել վտանգավորը հենց այդ, գուտ թուրքաբնակ Ուշի գյուղն էր, որն այդ օրերին վերածվել էր թուրք զինված հրոսակախմբերի յուրօրինակ հավաքատեղի:

Մայիսի 31-ին Ուշեցիները կտրում են ոչ միայն Օհանավան, Կարբի եւ Մուղնի գյուղերի ջրերը, այլեւ փակում դեպի Ապարան տանող մայրուղին: Միաժամանակ Ուշիում կենտրոնացած թուրքերը, որոնց միանում են նաեւ Համամլուի եւ Չորաքյարայի զինյալները մի քանի անգամ կրակ են տեղում հայկական գյուղերի եւ հատկապես Սաղմոսավանքի վրա[7]:

Քանի որ կապը կենտրոնի Երեւանի եւ շրջանների միջեւ արդեն հաստատվել ու գործում էր, Բարձր-Տեղի եւ Նիգի տարածքում կատարվող դեպքերին վերաբերվող տեղեկությունները հասնում էին Նիկոլ Դումանին: Շատ լավ առիթ եւ հնարավորություն է ընձեռվում հայ մարտական ուժերին վերջնականապես լուծելու Ուշիի ու այդ տարածաշրջանի թուրքաբնակ գյուղերի հարցը:

Բարձր-Տեղի եւ Նիգի հայկական գյուղերը կարողացել էին կազմավորել եւ արդեն ունեին իրենց պատրաստի մարտական ուժերը: Դումանը որոշում է այդ տարածքում նախահարձակ լինել եւ խիստ պատժի ենթարկել ու քարուքանդ անել նրանց բնակավայրերը, ինչը հրաշալի, զգաստացնող դաս կլիներ այդ շրջանի եւ ընհանրապես, թուրքերի համար:

Բարձր-Տեղ եւ Նիգի գյուղերի մարտական ուժերը կազմակերպելու ու թուրքական բնակավայրերի վրա ծրագրած հարձակումն իրականացնելու նպատակով Երեւանի նահանգի զինվորական մարմնի, անձամբ Նիկոլ Դումանի հանձնարարությամբ, մարտախմբով վերոհիշյալ շրջանն է գալիս Արսեն Տեր Պողոսյանը(Րաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանի (Սամսոն Տեր-Պողոսյան) որդին:

Բարձր-Տեղի եւ Նիգի տարածքում ձեռնարկած մարտական գործողությունների մասին հուշեր է գրել այդ գործողության մասնակից, Ռուբինայի(Քր. Միքայելյանի հոգեզավակն է, ՀՀ 3-րդ վարչապետ Համո Օհանջանյանի տիկինը-Հ.Գ.) եղբայրը՝ խմբապետ Բարսեղը[8]:

Երեւանի նահանգի մարտական ուժերի կողմից Բարձր-Տեղի եւ Նիգի տարածքում ձեռնարկված առաջին հարձակողական գործողությունները ավարտվում են հաջողությամբ: Արդյունքը Ուշի եւ թուրքաբնակ մի քանի այլ գյուղերի կործանումն էր[9]:

Նույն տարվա դեկտեմբերին Երեւանում կայացած Հ.Յ.Դ. «Միգաստանի» կենտր. կոմիտեի շրջանային ժողովում, անդրադառնալով այդ դեպքերի գնահատմանը, Դումանն իր զեկույցում ընդգծում է. «Բարձր-Տեղի եւ Նիգի շրջաններում մեր խմբերի ճնշման տակ բոլոր թուրքերը դարձել են գառնուկներ»[10]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի առաջին հարձակողական գործողությունները շատ կարեւոր էին: Բարձր Տեղի եւ Նիգի շրջաններում ձեռք բերած հաջողություններից հետո Երեւանի նահանգի Զինվորական Մարմինը վճռում է առանց ժամանակ վատնելու անհապաղ լուծել նաեւ Արարատյան դաշտի թուրքաբնակ գյուղերի հարցը: Զուգահեռաբար հայկական ինքնապաշտպանական ուժերը հարձակողական հաջող գործողություններ են ձեռնարկում նաեւ Արամուս եւ Բաշգառնի գյուղերի մերձակայքում գտնվող թուրքաբնակ գյուղերի տարածքում: Համաձայն «Դրօշակ»-ի տվյալների. «... մասամբ թալանուած եւ մասամբ էլ այրուած են թրքաբնակ գիւղերը՝ Քիւզաջի 20 տ., Քիւլուջա 50 տ., Մանգուզ 50 տ., Քեամալ 60 տ. եւ Թուքիան 60տ....:»[11]:

Բացի վերոհիշյալ դեպքերից՝ Դումանի հանճարարությամբ տարբեր շրջանների հրամանատարությունը ստանձնած փորձառու մարտիկները տեղացի ուժերի համագործակցությամբ արդյունավետ կռիվներ են մղում նաեւ Երեւանի նահանգի մի շարք այլ վայրերում: Օրինակ, Դարալագյազի շրջանում հայ մարտական ուժերը Տարոնի անվանի ֆիդայիներ Հակոբ Կոտոյանի (Հաճի Հակոբ) եւ Առյուծ Ավագի գլխավորությամբ, մեծ վարպետությամբ են կազմակերպում հայկական գյուղերի, մասնավորապես՝ Մարտիրոս, Ալմալու (Խնձորուտ) եւ Փաշալու (Զառիթափ), պաշտպանությունը եւ արժանի ջարդ տալիս հայկական բնակավայրերն ասպատակող թուրք զինյալ խմբերին:

Մեծ հաջողությամբ են գործում նաեւ մշեցի Սմբատ Բորոյանի-(Մախլուտո) գլխավորած մարտախմբերը Ազատ-Դաշտի շրջանում (Արտաշատ, Վեդի, Մասիս – Հ.Գ.)[12]:

Ջրաբաշխի (Սեւանի ավազան) հայկական մարտական ուժերը՝ Կայծակ Առաքելի, Ջալլադի (Երվանդ Բաբեյան), Սլաքի (Արմենակ Օխխիկյան) հրամանատարությամբ, դարձյալ դրսեւորելով արժանի կազմակերպվածություն, մի շարք հարձակումներ են գործում թուրքական գյուղերի վրա եւ խափանում հայկական բնակավայրերի վրա հարձակում գործելու ձեռնարկումները[13]:

---

1. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 3:
2. Տե՛ս Ա-Դ-Օ, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, էջ 130:
3. Տես նույն տեղում:
4. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 356, գ. 15, էջ 1:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 356, գ. 15, էջ 2:
9. Տե՛ս Հ. Գեւորգյան, «Նիկոլ Դուման», Երեւան, 2002, էջ 210-215:
10. ՀՅԴ ԿԱ, թծ. 294, գ. 24 ա, էջ 2:
11. «Դրօշակ», 1905:
12. Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 294, գ. 34, էջ 5:
13. Տե՛ս նույն տեղում:

2.5. ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Երեւանի նահանգում իրավիճակը շատ ծանր է եղել նաեւ Շարուր-Դարալագյազ գավառում:

Շարուր-Դարալագյազը Երեւանի նահանգի գավառներից ամենափոքր էր: Նրա մասն էին կազմում երկու շրջանները կամ գավառամասերը՝ Շարուրն ու Դարալագյազը:

Այդ գավառը նահանգի մյուս գավառների համեմատությամբ ուներ մի առանձնահատկություն: Շարուր-Դարալագյազը նահանգի միակ գավառն էր, ուր հայությունը կազմում էր ընդհանուր բնակչության փոքրամասնությունը: Իսկ դա նշանակում էր, որ թշնամու հարձակման դեպքում այնտեղ անհամեմատ դժվարին կլիներ կազմակերպելու հայ բնակչության ինքնապաշտպանությունը:

Ըստ «Մուրճ» հանդեսի տվյալների, Շարուր-Դարալագյազ գավառը բաղկացած 163 գյուղերից, որոնցից հայաբնակ էին 33-ը: Գավառի ընդհանուր բնակչությունը կազմում էր 81408 մարդ, որից 22650 հայեր էին, իսկ 55790-ը թուրքեր[1]:

Ըստ Ա-ԴՕ-ի տվյալների «Գաւառի ազգաբնակչութեան ընդհանուր թիւն է 76 հազար, որից թուրքերը՝ 55 հազար, իսկ հայերը՝21 հազար: Հայերն այս գաւառում ամբողջ նահանգի մէջ կազմում են 21%-ը»:

Շարուր գավառամասը բաղկացած էր 54 գյուղերից, որոնցից վեցը՝ Ուլյանորաշենը, Դաշարխը, Ալաքլուն, Վարմզիարը, Խանլուխլարը, Թազաքենդը զուտ հայաբնակ, իսկ երկուսը՝ Քեշտազն ու Փարչին հայ եւ թուրք խառը բնակչություն ունեցող գյուղեր էին: Քեշտազ եւ Փարչին գյուղերում համապատասխանաբար բնակվում էին 30 ու 50 թուրք ընտանիքներ[2]:

Այդ օրերին նահանգի Զինվորական մարմնի ղեկավար Նիկոլ Դումանի հոտաբը տագնապալի տեղեկություններ էր ստանում Շարուրի շրջանից, ուր հայկական վեց գյուղերի բնակչությունը հարձակման էր ենթարկվել թուրք ամբոխի ու նրան միացած քուրդ հրոսակախմբերի կողմից:

Երեւանի ոստիկանության պաշտոնակատար Կարապետ վարդապետը փոխարքային՝ կոմս Վորոնցով-Դաշկովին ներկայացրած տեղեկագրում հայտնում է, որ Շարուրի գավառակում, որի ողջ

բնակչությունը, բացի 6-7 հայկական գյուղերից, թաթար են, կեղծ լուրեր են տարածել, ըստ որի իբրեւ հայերը հարձակվել են Քամարլու գյուղի վրա եւ կոտորել տեղի թաթար բնակչությանը: Իրականության հետ որեւէ կապ չունեցող այդ կեղծ լուրն այնպիսի խիստ վրդովմունք է առաջացնում թաթարների մոտ, որ նրանք մտադրվում են վրեժխնդիր լինել հայերից: Շարուրի հայկական գյուղերի բնակչությունը հայտնվում է չափազանց հուսահատ եւ ծանրագույն կացությունում:

Կարապետ վարդապետի հավաստմամբ, ինքը Շեյխ-ուլ-իսլամի ընկերակցությամբ մեկնել է Շարուրի գավառակ եւ հանգստացրել են բորբոքված բնակչությանը: Միաժամանակ հեռագիր են ստանում, որը ժխտում է հայերի կողմից Քամարլու գյուղի թաթարներին կոտորելու մասին տարածված տեղեկությունները: Հեռագիրը նաեւ հաղորդում է, որ հայերի ու թաթարների միջեւ հաստատվել է խաղաղ իրավիճակ[3]:

«Շեյխ-ուլ-իսլամը,-հայտնում է Կարապետ վարդապետը,-երդման խոսք վերցրեց թաթարներից, որ նրանք իրենց կպահեն խաղաղ ու հանգիստ...

Բայց եւ այնպես հաջորդ օրը թաթարները հարձակվում են Շարուրի գավառակի հայկական գյուղերի վրա»[4]:

Զեկուցագրում Կարապետ վարդապետը փոխարքային հայտնում է, որ համաձայն Շեյխ-ուլ-իսլամի պատմածի, տեղի թաթարների հետ միասին հայկական գյուղերի վրա հարձակվել են նաեւ 500 քուրդ զինյալներ, որոնք Շարուրի գավառակ էին ներխուժել՝ գետանցելով Արաքսը[5]:

Այդ նույն իրողությունը հաստատում է նաեւ «Մշակ»-ը, որի ներկայացմամբ Շարուրի հայկական բնակավայրերի վրա թուրքերի ձեռնարկած հարձակումից ընդամենը մեկ օր առաջ՝ մայիսի 29-ին «...Նախիջեւանից ժամանած Շեյխ ուլ-իսլամը եւ Կարապետ վարդապետը Բաշնորաշէնում(այդ գյուղը Շարուր գավառամասի վարչական կենտրոնն էր-Հ.Գ.), հորդորում են խաղաղութիւն եւ համերաշխութիւն: Բայց նրանց հեռանալուց յետոյ պատահեց հակառակը...»[6]:

Մայիսի 30-ին, գավառակի թուրքական գյուղերի բնակիչները տարբեր ուղությամբ հարձակվում եւ պաշարում հայկական Ուլյանորաշեն գյուղը, որը շրջանի ութ գյուղերի մեջ ամենահաուստն էր ու ամենամեծը: Գյուղը ունեցել է 220 տուն[7]:

Համաձայն ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեի կազմած «Համառոտ տեղեկագիր Շարուր-Դարալագեազի հայբնակ մի քանի գիւղերի ավերման» խորագիրը կրող փաստաթղթի տվյալների, Ուլյանորաշեն գյուղը ունեցել է 177 տուն[8]:

Տեղեկագիրը հաղորդում է, որ մայիսի 29-ին լուր էր տարածվել, որ հաջորդ օրը թուրքերը հարձակվելու էին Ուլյանորաշեն գյուղի վրա: Այդ օրը գավառապետը Շարուրում չէր, նա գնացել էր Դարալագյազ ժողովրդին հանգստացնելու: Ուլյանորաշենի գյուղացիները հարկադրված դիմում են պրոտոպոպին(գավառի դատավոր-Հ.Գ.), եւ նրան հաղորդում իրենց լսածի մասին: Պրիստավը նրանց պատասխանել է «...թէ այդպիսի բան չի կարող պատահել, ուստի գիւղացիք թող միամիտ լինեն»[9]:

Երեկոյան գալիս է նաեւ գավառապետը եւ հանդիպելով հայ բնակչությանը՝ դարձյալ հերքում է տարածված լուրը: Նույն օրը երեկոյան ժամը 10-ին կառքով գալիս են գավառում ազդեցիկ դիրք ունեցող Իսմայիլ խանի որդին՝ Ուլիա Նորաշէն Հաան խանը եւ պրիստավը եւ «...ժողովեցին հայ հասարակութիւնը հանգստացրին ու միամտացրին որ ոչինչ չի պատահի, թող անհոգ լինեն հայերը եւ միւս օրը թող ապահով ու հանգիստ սրտով սկսեն իրենց դաշտային գործերը»[10]:

Հակառակ իշխանության ներկայացուցիչների ու թուրք առաջնորդի կողմից հայ բնակչությանը տված խոստումներին, թուրքերը հոծ բազմությամբ հաջորդ օրը հարձակվում եւ պաշարում են Ուլյանորաշեն գյուղը:

Տեղեկագրի վկայությամբ այդ օրը գավառապետն ու պրիստավը թեպետ աղաչել-պաղատել, համոզել են թուրքերին հրաժարվել իրենց մտադրությունից, չհարձակվել հայկական բնակավայրերի վրա, բայց ամեն ինչ անցնել է ապարդյուն: Թուրքերը մնացել են անդրդվելի:

«Թուրքերի ահագին խուժանը,-նշում է տեղեկագիրը,-գոռում-գոչումով բռնեցին գիւղի արեւմտեան կողմը եւ անտառների մէջ դարան մտնելով սկսեցին հրացանաձգութիւն»[11]:

Չնայած թուրքերին հաջողվել է գրավել գյուղը, այնումենայնիվ, կարելի է ասել, որ Ուլյանորաշենի բնակիչները մղել են հերոսական մարտեր: Երկու օր շարունակ Ուլյանորաշենի բնակիչները կարողացել են իրեց սահմանափակ հնարավորությամբ, դիմադրել ու հետ մղել թուրքերի գրոհները:

Հունիսի 1-ին հարձակման ենթարկվելով Շարուրի գրեթե ամբողջ թուրք բնակչության եւ զանազան վայրերից եկած ու նրանց միացած թուրք զինյալների կողմից, ուլյանորաշենցիները հարկադրված կռիվ մղելով հեռացել են գյուղից եւ դիրքեր գրավել գյուղի մերձակա Օղլաղալա լեռան վրա:

Ուլյանորաշենի բնակչությունը ունենալով ընդամենը մի քանի հրացան, պաշտպանվել է բացառապես ապավինելով միմիայն իրենց

ունեցած սուղ միջոցներին: Նույնիսկ Երեւանի Զինվորական մարմինը չի հաւսցրել որեւէ միջոցով օգնել պաշարման մեջ հայտնված ուլյանորաշենցիներին:

«Մի քանի հրացանաւորներ,-գրում է Ա-Դ-Օ-ն,- հերոսաբար դիմադրելով խուժանին եւ նրա շարքերից գետին գլորելով բաւական մարդիկ, հնարաւորութիւն տւին ժողովրդին քաշւել բլրի գագաթը...Սակայն նրանցից մէկը, Մաթեւոս Մովսէսեանը, այդ քաջ տղամարդը, իր տանիքի վրա մնչեւ վերջը կռւելով, գնդակահար եղաւ եւ մեռաւ»[12]:

Այդ օրը թուրք ամբոխին հատկապես մեծ ոգեւորություն է պատճառել պրիստավի եւ զորքի վերաբերմունքը:

Հարձակման երրորդ օրը՝ հունիսի 1-ին պրիստավը կես վաշտ զորքի գլուխն անցած գալիս է պաշարված գյուղին օգնության, բայց գյուղին չհասած, տեսնելով հարձակվողների հսկա բազմությունը, առանց որեւէ հրացան արձակելու, հետ է դառնում եւ դիմում փախուստի: Թուրքերը տեսնելով պրիստավի ու զորքի այդ խայտառակ փախուստը, ավելի են ոգեւորվում եւ ավելի վստահ ու համարձակ՝ շարունակում հարձակումը:

«Թիւրքերը,-վկայում է տեղեկագիրը,- մի քանի անգամ գրոհ տուին այս դիրքի վրայ, որպէսզի գրաւեին բլուրն ու կոտորեն հայերին. իւրաքանչիւր անգամ անյաջող էին եւ գոհեր տալով նահանջում: Հայերից սպանւել էր եւ այրուել 5 հոգի, իսկ թիւրքերից սպանւած էին 100-ից աւելի...»[13]:

Չկարողանալով կոտրել Օղլան-դալա լեռան վրա դիրքավորված ուլյանորաշենցիների դիմադրությունը, թուրք ամբոխը հինգ օր շարունակ Ուլյանորաշենում տրվել է թալանի եւ ավարառության, ապա հրդեհել ու մոխրակուտի է վերածել գյուղը: Իսկ իրենց հարազատ բնակավայրի կործանման անխոս վկաները Ուլյանորաշենի բնակիչներն էին, որոնք պատսպարված Օղլան-դալա լեռան վրա, նրա բարձունքներից անխոս դիտել են իրենց բնակավայրի հրդեհն ու կործանումը:

«Ուլիանորաշենը,-եզրափակում է տեղեկագիրը,-ամբողջապէս թալանած, հրդեհած եւ քարուքանդ է արած, ամեն ինչ սրբել, տարել են:

...Ուլիանորշենց հացի բոլոր ցանքսերը փչացան. մի կողմից ոտնահար լինելով, միւս կողմից անջուր մնալով: Նոյ վիճակի են մատնւած եւ բամբակի ցանքսերը»[14]:

Ուլյանորաշենի բնակիչները ավելի քան երկու ամիս մնում են պատսպարված լեռան բարձունքներում եւ կրելով անասելի զրկանքներ ու տանջանքներ, կարողացել են հետ մղել թշնամու բազմիցս կրկնվող հարձակումները՝ պաշտպանվել ու չեն հանձնել իրենց դիրքերը:

Ուլյանորաշենցիները կռիվների ժամանակ ունեցել են ընդամենը չորս զոհ բշնամու 30-ի դիմաց, բայց երկու ամիս շարունակ մնալով Օ-ղան-Ղալայի բարձունքներում ցրտի, քաղցի ու հիվանդությունների հետեւանքով ունեցել է բազմաթիվ զոհեր: Բացի դրանից թուրք ամբոխի իրականացրած թալանի հետեւանքով Ուլյանորաշեն գյուղի նյութական վնասը կազմում է 600.000 ռուբլի, իսկ դաշտերի անխնամ ու անջուր մնալու պատճառով եւս 30.000-ից ավելի դաշտային կորուստ[15]:

Մայիսի 30-ին թուրք ամբոխի հարձակման թիրախն է դառնում նաեւ ընդամենը 54 տուն, խառը բնակչություն ունեցող Քևշտազ գյուղը: Շնորհիվ այն հանգամանքի, որ այդ գյուղի հայ եւ թուրք բնակիչները լավ հարաբերություններ ունեին միմյանց նկատմամբ, գյուղն այնքան էլ վնասներ ու ավերվածություններ չի կրել:Հայերի մի մասը ստիպված իր ունեցվածքի մի մասը պահ է տվել իր հարեւան թուրքերին, իսկ մի մասն էլ թուրքերի կողմից թալանվել է: Գյուղի բնակիչները գիշերով փախել եւ ապաստանել են Խանլուխլար գյուղում:

Տեղեկագրի հաղորդմամբ սպանվել է միայն մի հայ՝ 70 տարեկան մի ծերուկ: Բայց գյուղը կրել էր նյութական, մեծ կորուստներ: Անջուր մնալով չորացել էին գյուղացիներին պատկանող բոլոր հացաբույսերը, բամբակն ու բաղերը: Ոչ ոք վախից ու երկյուղից չէր համարձակվում դաշտ դուրս գալ եւ հնձել ցորենի հասունացած արտերը[16]:

Մայիսի 31-ին գավառամասի թուրքերը, որոնց միանում են քուրդ 500 զինյալները, միասնական ուժերով հարձակվում են գավառամասի հայկական մյուս Դաշարխ, Թազագյուղ, Ալաքլու եւ Վարմազիար գյուղերի վրա: Ի՞նչ կարող էին հակադրել ինքնապաշտպանական չնչին միջոցներից զուրկ, անզեն գյուղացիներն ընդդեմ մահմեդական հազարավոր զինյալների:

Դաշարխ գյուղը, ըստ տեղեկագրի, ունեցել է 54 տուն:

Մայիսի 30-ին տեղեկանալով թուրքերի ձեռնարկումների մասին, գյուղացիները չունենալով ինքնապաշտպանություն կազմակերպելու հնարավորություն, փախչում են Խանլուխլար գյուղ: Ընդ որում գյուղացիները կարողանում են հնարավորության սահմաններում իրենց հետ տանել ունեցվածքի մի մասը, իսկ մեծ մասը բռնագրավում են գյուղ ներխուժած թուրքերը, որոնք չբավարարվելով թալանով, հրդեհում են նաեւ հայերի տները:

Նույն ճակատագրին է արժանանում Թազագյուղի բնակիչները, որոնք նույնպես լքելով իրենց գյուղը՝ ապաստանում են դարձյալ Խանլուխլարում:

Թազագյուղը պատկանել է մեծահարուստ ազնվական կալվածատեր Շահ-Գիրեյին:

«Թուրքերը,- ներկայացնում է տեղեկագիրը,-թալանել են սրան եւ տասնեակ հազարների վնաս հասցրել-5 հազար խալվար ցորէն, 100 մեշոկ ալիւր, 150 փութ բրինձ, 5500 խալվար չալթուկ, թալանել են պահեստները, գրասենեակը, 45.000 արեքանոց արտերի ջուրը կտրել են: Ընդհանուր վնասը հասնում է 150.000-ի»: Դաշարխցիներից սպանուած են երկու հոգի»[17]:

Թուրք հրոսակախմբերի կողմից հարձակման ենթարկված հաջորդ հայկական գյուղերն են Ալիքլուն եւ Վարմազիարը, որոնք համապատասխանաբար ունեցել են 88 եւ 136 տուն:

Այս երկու գյուղերը թուրքերի կողմից հարձակման են ենթարկվել մայիսի 31-ին: Այդ օրը կատարվում է ուշագրավ հետեւյալ դեպքը: Թուրքերի հարձակումը կանխելու եւ բնակչությանը պաշտպանելու նպատակով գավառի իշխանությունները վերջապես որոշում են միջամտել տեղի ունեցող դեպքերին եւ փորձում զորքի միջոցով ձեռնարկել որոշակի վճռական քայլեր:

Մայիսի 31-ին, գավառապետի օգնականը մի խումբ զինվորների գլուխն անցած գալիս է Ալաքլու եւ գյուղի մերձակայքում հանդիպում թուրք ամբոխին, որը Յա՜ Ալի գոռալով հարձակվում էր Ալաքլու գյուղի վրա: Կատարվում է այն, ինչ նախօրդ օրը կատարվել էր Ուլյանորաշեն գյուղում: Տեսնելով թուրքերի հոծ բազմությունը, գավառապետի օգնականը առանց որեւէ քայլ ձեռնարկելու ու կրակոց արձակելու հեռանում է դեպի Վարմազիարի կողմը: Թուրքերն ավելի ոգեւորվելով գավառապետի ու զորքի այդօրինակ պահվածքից, առանց դիմադրության ներխուժում են Ալաքլու գյուղ ու թալանում եւ այրում ամեն ինչ: Գյուղի բնակիչները մի կերպ, մեծ դժվարությամբ ազատվելով՝ փախչում են Խանլուխլար:

Գրեթե նույն իրավիճակն է կրկնվել նաեւ Վարմազիար գյուղում: Հեռանալով Ալաքլուից, գավառապետի օգնականը զինվորների հետ հասնում է Վարմազիար, բայց հանդիպելով գյուղի վրա հարձակվող ամբոխին, դարձյալ առանց որեւէ կրակոց արձակելու, հեռանում եւ դիրքեր է գրավում գյուղի եւ երկաթուղու մեջտեղը ու այնտեղից կոզակների հետ միասին սկսում կրակ տեղալ թուրքերի ուղղությամբ:

Օգտվելով այդ հանգամանքից «Վարմազիարի գիւղացիները փախան, ապաւինեցին Խանլուխլար, իսկ իրենց գիւղը ալան-թալան եղաւ թիւրքերի կողմից:

Վարմազիարից սպանուած են 4 հոգի»[18]:

Հարձակման ենթարկված վերոհիշյալ գյուղերի թվով 4000 բնակիչները, բացառությամբ Փարչիի, հարկադրված հեռանում են իրենց բնակավայրերից ու ապաստանում Խանլուխալար գյուղում[19]:

Թուրք հրոսակախմբերը հետապնդելով հայերին՝ պաշարում են Խանլուխալար գյուղը: Խանլուխալարը 220 տուն ունեցող ամենամեծ հայաբնակ գյուղն էր Շարուրի գավառակում, որը նաեւ կենտրոնական դիրք ուներ հայկական մյուս գյուղերի նկատմամբ:

Ի տարբերություն հայկական մյուս գյուղերի, որտեղ Երեւանի նահանգի Զինվորական մարմինը եւ ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեն, կարելի է ասել, ժամանակին ոչ մի քայլ չէին ձեռնարկել կազմակերպելու այդ գյուղերի ինքնապաշտպանությունը, Խանլուխալար գյուղի նկատմամբ, այնուամենայնիվ, որոշակի քայլեր իրականացրել են: Շարուր գավառակում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը մատնանշում է, որ թուրքերի կողմից հարձակման ենթարկված գյուղերի բնակչության տեղափոխությունը Խանլուխալար պայմանավորված չէր սոսկ այն հանգամանքով, որ այդ գյուղը ամենամեծ էր եւ հայաբնակ մյուս գյուղերի նկատմամբ ուներ կենտրոնական դիրք:

Հայտնի է, որ փետրվարյան, իսկ առավելապես մայիսյան դեպքերից հետո կովկասահայության ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմինը վտանգված շրջաններ էր ուղարկում փորձառու զինվորական գործիչների, հատկապես Տարոնի ու Վասպուրականի ֆիդայիներին, որոնց նկատմամբ մեծ հարգանք ու սարսուռ էին տածում ոչ միայն հայությունը, այլեւ հակառակորդը:

Երեւանի նահանգի Զինվորական մարմինը չէր կարող հանգիստ դիտել եւ որեւէ միջոց չձեռնարկել օգնելու ծանրագույն իրավիճակում հայտնված Շարուրի գավառակի հայությանը, մանավանդ, որ այդ ժամանակ նահանգի ինքնապաշտպանական ուժերի ղեկն արդեն ստանձնել էր Նիկոլ Դումանը:

Ավելին, եթե այդ ժամանակ Երեւանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը անհապաղ անհրաժեշտ քայլեր չձեռնարկեր օգնության հասնելու Շարուրի հայկական գյուղերին, ապա հայ բնակչությունն անխուսափելիորեն կհայտնվեր աներեւակայելի, կործանման իրավիճակում:

Սարգիս Օհանջանյանի վկայությամբ, որը մինչեւ Դումանի գալը Դաշնակցական Խեչոյի զինակցությամբ ղեկավարում էր Երեւանի նահանգի մարտական ուժերը, Զինվորական մարմինը հաշվի առնելով Շարուրում ստեղծված տագնապալի կացությունը, չորս մարտիկների հետ միասին այնտեղ է գործուղում Տարոնի անվանի ֆիդայի Սեյդո Պողոսին, որը մինչ այդ հրաշալիորեն էր ղեկավել Դավսլուի(Արարատի) շրջանի հայ ինքնապաշտպանական ուժերի մարտական գործողությունները:

«Շարուրի Խանըղլար գիւղն ուղարկեցինք,-գրում է Ս. Օհանջանյանը,- Սէյդօ-Պօղոսին չորս հոգով՝ տեղացիներին ղեկաւարելու եւ կազմակերպելու համար»[20]:

ՀՅԴ Վանի «Շամ» կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Վ. Փափազյանի(Կոմս), որն այդ օրերին գտնվում էր Երեւանում, վկայությունից պարզվում է, որ Սեյդո-Պողոսը արեւմտահայ այն ֆիդայիներից էր, որ Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումների մասին լուրը լսելուն պես բուռն ցանկություն է հայտնել անմիջապես մեկնել Կովկաս եւ սատար կանգնել արեւելահայ արյունակիցներին:

«Սէյտօն,-գրում է Վ. Փափազյանը,-անհանգիստ, կարծես փուշէրու վրայ նստած ըլլար: Կովկասեան կռիւներու լուրերը Վան հասան: «Հա՛յտա, ճամբէք ընձի տղէքներու խետ, իմնէք խայ քրիստոնեայ ուղուրին կը կռուին, արիւն թափեն, էս լե խանգիստ նստիմ...Աստուած կապուլ կենէ՞... Եկաւ շատ պնդեց, հանգիստ չթողուց. հարկադրուած ճամբեցինք Կովկաս»[21]:

Նահանգի Զինվորական մարմնի եւ անձամբ Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Սեյդո Պողոսը մի քանի զինակիցներով գալիս է Շարուր ու ստանձնում այդ գավառակի հայության ինքնապաշտպանության կազմակերպման ղեկը:

Վահան Փափազյանը իր հուշերում նշում է, որ Սեյդո Պողոսը Երեւանից Շարուր է մեկնել 1905 թ. հունիսին: Այդ օրը Վ. Փափազյանը Դումանի հանձնարարությամբ կառքով մեկնում էր Հին-Նախիջեւան, Վանա Սարգսի զինակցությամբ ստանձնելու տեղի հայության ինքնապաշտպանության ղեկը: Նույն օրը, միեւնույն կառքով նրա հետ են մեկնել Դաշնակցական Խեչոն՝ Հին-Նախիջեւան, Սեբաստացի Մուրադը՝ Ագուլիս եւ Սեյդո Պողոսը՝ Շարուր[22]:

Մի փոքրիկ ճշտում. Խանլուխալար գյուղի վրա թուրքերը հարձակվել են մայիսի 31-ին: Թուրքական բազմահազար ամբոխը պաշարել եւ փորձել է գրավել գյուղը, բայց ապարդյուն: Խանլուխալարի պաշտպանները կարողացել են խոչընդոտել, թույլ չտալ թուրք ամբոխին ներխուժելու գյուղ: Խանլուխալարի ինքնապաշտպանությունը ղեկավարել է հենց Սեյդո Պողոսը: Հետեւաբար, նա առաջին անգամ Շարուր է մեկնել ոչ թե հունիս, այլ մայիս ամսին:

Ի դեպ «Մշակ» լրագիրը Շարուր գավառակում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների մասին պատմող նյութերը տպագրել է հունիսի սկզբներին (1905, յունիսի4, 5) լույս տեսած համարներում:

Քանի որ Խանլուխլարում էր կենտրոնացել վերոհիշյալ գավառակի հայկական գյուղերի բնակչությունը, բնականաբար Սեյդո Պողոսը պիտի լիներ հենց այդ գյուղում եւ ղեկավարեր այնտեղ պատսպարված հազարավոր գյուղացիների ինքնապաշտպանությունը:

Հաջոր օրը՝ հունիսի 1-ին, գորքի գլուխ անցած Խանլուխլար գյուղ է գալիս գեներալ Ալիխանով-Ավարսկին, որի պարտականությունն էր խոչընդոտել, կանխել զինված բախումները եւ գավառակում հաստատել խաղաղ ու կայուն իրավիճակ:

Իր կազմած տեղեկագրում, թուրք գեներալը՝ Ալիխանով-Ավարսկին գավառում տիրող իրավիճակի եւ այդ օրերին այտեղ կատարված դեպքերի մասին այնպիսի կեղծ, մտացածին տեղեկություններ է հաղորդում, որոնք որեւէ կապ ու առնչություն չունեին իրականության ու կատարված դեպքերի հետ:

«Ծանոթանալով գավառում տիրող կացությանը, -գրում է գեներալը,- ես համոզվեցի, որ հայերը ղեկավարվելով իրենց կոմիտեների ու իհարկե նաեւ հոգեւորականության կողմից, հետապնդում են զուտ քաղաքական նպատակ»[23]:

Ալիխանով-Ավարսկին հայտնում է, որ հայերը իրենցից եկեղեցու ունեցվածքը վերցնելուց հետո(նկատի ունի Նիկոլայ 2-րդի հրապարակած 1903 թ. հունիսի 13-ի օրենքը), ձեռք են բերել մեծ քանակությամբ նոր տեսակի զենքեր, որոնք իշխանություններից խիստ գաղտնի, տեղափոխել են Պարսկաստանի ու Թուրքիայի տարածքով եւ խնամքով թաքցրել գյուղերում:

«Այդ գործը,-նշում է գեներալը,-շարունակվում է այնպիսի հաջողությամբ, որ համաձայն մեր գաղտնի գործակալների, նաեւ ազգությամբ հայ, տեղեկությունների, գավառներում այժմ չկա այնպիսի հայկական գյուղ, որը չունենա տասնյակ նորագույն տեսակի զենքեր եւ մեծ քանակությամբ փամփուշտներ...»[24]:

Ավելին, Ալիխանով-Ավարսկին հավատացնում է, որ իրեն վստահված գավառներում այժմ չկա որեւէ այնպիսի հայկական գյուղ, որտեղ չգտնվեն ռումբեր, տասնյակ թուղիկներ ու հրատարակված այլ նյութեր: Գեներալը պնդում է, որ ոչ միայն քաղաքում, այլ նաեւ նույնիսկ գյուղերում չկա մի այնպիսի հայ, որը չունենա ատրճանակ եւ բավարար քանակությամբ փամփուշտներ[25]:

Իսկ ինչպիսի՞ն էր այդ նույն գավառներում, ըստ գեներալի, մահմեդական բնակչության տրամադրվածությունը, զինվածությունը եւ ունեցած միջոցներն ու հնարավորությունները:

«Բնակչության մահմեդական մասը,- հաղորդում է Ալիխանով-Ավարսկին,-տեղյակ է հայերի պատրաստության մասին եւ խորապես անհանգստացած է, որովհետեւ թեպետ իրենք էլ զենքեր ունեն, բայց բոլորը հնատիպ են ու անպետք»[26]:

Նրա գնահատմամբ, մահմեդականները լինելով կառավարության հավատարիմ կողմնակիցներ, ավելի պահպանողական են ու վստահելի, իսկ հայերը ունեն ճիշտ հակառակ ուղղվածությունը եւ ձգտում են նյութապես ու բարոյապես ճնշել թաթարներին: Իսկ մահմեդականներն այլ ելք չունենալով՝ հարկադրված պաշտպանում են իրենց իրավունքներն ու ունեցվածքը:

Հայերը, ըստ գեներալ Ալիխանով-Ավարսկու, հաստատապես երկու սկզբունք են հետապնդում՝ «նպատակը արդարացնում է միջոցները» եւ «ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է»: Նրա կարծիքով, այդ սկզբունքները կենսագործելու համար հայերն ընտրել են ահաբեկչության(տեռորի) մարտավարությունը:

«Նրանք,-հայտնում է գեներալը,-տեռորը իրականացնում են բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն համակրում իրենց եւ այն երբեմն կատարում են հաջողությամբ: Օրինակ, հայերը նամակներ են հղել գավառի բոլոր պաշտոնյաներին, սպառնալով տեռորի ենթարկել բոլոր նրանց, ովքեր իրենց թույլ կտան փոքր-ինչ վատ վերաբերվել հայերին: Այդ ճանապարհով նրանց հաջողվել է իրենց կողմը գրավել մի քանի պաշտոնյաների...»[27]:

Չնայած այն իրողությանը, որ գեներալը ձգտում էր կեղծ փաստերով ներկայացնել իր գործունեությունը, այնուամենայնիվ, Նախիջեւանում, ապա նաեւ Շարուր-Դարալագյազում նրա կատարած հակահայ գործողություններն այնքան ակնառու էին, որ ոչ միայն հայկական կողմը, այլ նաեւ նույնիսկ պետական պաշտոնյաներն են, որոնց թվում նաեւ Երեւանի նահանգապետ իշխան Նապոլեոնը, նրա ոչ անկողմնակալ, հակաօրինական արարքների ուսումնասիրության կապակցությամբ բողոքներ ու դիմումներ ներկայացրել փոխարքայի պալատը:

Բնական է, որ իր կազմած զեկուցագրում նա պիտի աշխատեր մտացածին փաստերով արդարացներ իր գործողությունները եւ իրեն ներկայացներ որպես անկողմնակալ, օրինականությունը հարգող պաշտոնյա:

Տեղեկագրում նշելով, որ ինքն ավելի շատ պաշտպանել է հայերին, գեներալ Ալիխանով-Ավարսկին միաժամանակ դժգոհում է ժողովրդի մնջ մնձ կշիռ ու հեղինակություն ունեցող հայերի արարքներից: Նա, հատկապես դժգոհում է Կարապետ վարդապետի գործողություններից, որը ոչ միայն խիստ կերպով վախեցնում էր թաթարներին՝ խոստանալով շատ-շուտով կոտորել բոլորին, այլեւ իրեն թույլ էր տվել մահմեդական բազմության ու անգամ զինվորների ներկայությամբ բարձրաձայն հայտարարել. «...որ իր սուրբ պարտականությունն է կիսալուսնի նկատմամբ հաստատել սուրբ խաչի գերապատվությունը »[28]:

Իր կազմած տեղեկագրում գեներալ Ալիխանով-Ավարսկին միայն մեկ նպատակ էր հետապնդում. արդարացնել իր գործողությունները եւ գավառներում տեղի ունեցած դեպքերը Կովկասի փոխարքային գլխի վայր ներկայացնելով, կատարվածի հիմնական պատասխանատվությունը բարդել հայ բնակչության վրա, որն ըստ նրա հավաստման, ավելի լավ էր զինված ու պատրաստված:

Իրականում, «Շարուրի-Դարալագեազի հայաբնակ մի քանի գյուղերի ավերման» խորագիրը կրող վերոհիշյալ տեղեկագիրը, որը պատկերում է թուրք հրոսակախմբերի հարձակումների հետեւանքով այդ գյուղերում ստեղծված իրավիճակը, որեւէ կերպ չի արտացոլում ու չի հաստատում այն ամենը, ինչը իր կազմած տեղեկագրում ներկայացնում է գեներալ Ալիխանով-Ավարսկին:

Թեպետ իր զեկուցագրում գեներալը հավատացնում է, որ իր ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Շարուրում դադարեցվել են անկարգություններն ու հաստատվել է խաղաղ իրավիճակ, բայց իրականում գավառակում տիրող կացությունը եղել է ճիշտ հակառակը՝ խիստ լարված եւ պայթյունավտանգ:

Վստահ լինելով, որ իրենց արյունակից գեներալը չի խոչընդոտելու հայկական բնակավայրերը ոչնչացնելուն եւ թալանելուն ուղղված իրենց գործողությունները, թուրք առաջնորդները, կենտրոնացնելով մեծաքանակ մարտական ուժեր, ծրագրում են տարբեր ուղղությամբ ձեռնարկվող հարձակումներով ամուր շրջափակել ու ոչնչացնել Խանլուխլար գյուղը, որտեղ, ինչպես արդեն նշվել է, պատսպարվել էին հայկական մյուս գյուղերի բնակիչները:

Չնայած այն հանգամանքին, որ ինքնապաշտպանության ղեկը ստանձնած Սեյդո Պողոսն ու նրա չորսը զինակիցները փորձառու եւ քաջավարժ մարտիկներ էին, այնուամենայնիվ, չափազանց դժվար է եղել կազմակերպել Խանլուխլար գյուղի եւ այնտեղ պատսպարված հա-

զարափոր հայերի ինքնապաշտպանությունն ու ապահովել նրանց անվտանգությունը:

Ներկայացնելով Խանլուխլար գյուղում տիրող իրավիճակը՝ տեղեկագրի կազմողները նշում են. «...գիւղը լցած է շրջակայ այրուած ու թալանուած գիւղերի փախստականներով, ազատած անասուններով: Այդ հազարաւոր ժողովրդի համար ուտեստեղենի ու պաշարի մէջ սղութիւն է զգացւում. առանց օթեւանի, բաց երկնքի տակ կուտակած անց են կացնում իրենց օրերը...

Միւս կողմից էլ խանլուխլարցիների հացահատիկների ցանքսերը, բաղերը չորանում են, որովհետեւ վերին թուրքերի Դաշարխից չեն թողնում ջուրը գայ ցանքսերը ջրելու»[29]:

Այս ամենին գումարվում էին թուրքերի անընդմեջ շարունակվող գրոհներն ու գավառի իշխանությունների եւ զորքի անհասկանալի պահվածքն ու վերաբերմունքը:

Թեպետ պաշտպանվելու հնարավորությունը եղել է խիստ սահմանափակ, այնուամենայնիվ, գյուղի պաշտպանները, որոնց միանում են նաեւ այնտեղ ապաստանած գյուղերի բնակիչներից զենք ունեցող երիտասարդները, քաջաբար դիմակայում են թշնամու հարձակումներին: Սեյդո Պողոսը, որը Երեւանից իր հետ բերել էր որոշ քանակությամբ զենք ու զինամթերք, զինակիցների համագործակցությամբ հասցնում է կարճ ժամանակահատվածում կազմակերպել գյուղի մարտական ուժերը:

Գյուղում այդ ժամանակ եղել են նաեւ 100 կոզակ զինվորներ, որոնք սկզբում հայ բնակիչների հետ փոքր-ինչ դիմադրում են թուրքերի հարձակումներին, սակայն փախուստը սպառելու պատճառով թողնում են մարտադաշտն ու տեղափոխվում թիկունք[30]:

Նույն օրը երեկոյան կոզակ զինվորներից կազմված հարյուրակի գլուխն անցած Խանլուխլար է գալիս գավառապետի օգնականը եւ միանալով հայ մարտիկներին՝ երեք ուղղությամբ կրակ են տեղում թուրքերի վրա: Այդ իրավիճակը շարունակվում է մինչեւ գիշերը: Մութն ընկնելուն պես գավառապետի օգնականը առաջնորդվելով միայն իրեն հայտնի մարտավարությամբ, պատճառաբանելով թե իբրեւ թուրքերը մտել են գյուղը, հրամայում է գյուղացիներին դուրս գալ գյուղից: Գյուղացիների մի մասը մնում է գյուղում, իսկ մյուս մասը միամտաբար հավատա ընծայելով գավառապետի օգնականի բյուրիմացաբար տված հրամանին, դուրս է գալիս գյուղից եւ շարժվելով դեպի դաշտերը՝ հայտնվում անորոշ ու անօգնական իրավիճակում:



Մեյդո Պողոս

«Այդ րոպէին,-նշում է տեղեկագիրը,-երբ հայերի բազմութիւնը գնում էր դէպի Դաշարխի կողմը, մի սոսկալի կրակ տեղաց. բոլորը փախան, դարձան դէպի գիւղը: Հայ երիտասարդները տեսնելով այդ կրակը, ամրացան իրենց դիրքերում եւ ոչ մի կերպով թոյլ տուին թշնամուն ներս խուժել գիւղը»[31]:

Գավառապետի օգնականը այդ ճակատագրական պահին դարձյալ ժողովրդին բողնում է միայնակ ու իր առաջնորդած կոզակների հետ հեռանում մարտադաշտից:

Հայ մարտիկները հուսալի դիրքեր ընտրելով՝ քաջութեամբ մարտնչում են մինչեւ լոյս: Առավոտյան դեմ արշալոյսին թուրք մեծաքանակ հրոսակախմբերը կազմակերպված եւ հոծ մարտաշարքերով, չորս ուղղութեամբ հարձակվում են գյուղի վրա:

Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը դարձյալ անընկճելի էր: Այդ օրը հայ մարտիկներին օգնել է նաեւ գորքը: Կարելի է ասել, որ դա միակ դեպքն էր, երբ գորքն առանց ավելորդ, անհասկանալի գործողությունների, օգնել է հայկական կողմին: Թուրքերը կռվել են մինչեւ ժամը 4-ը, որից հետո նահանջել են ու ընդմիշտ հեռացել մարտադաշտից[32]:

«Մէյտոն,-գրում է Վ. Փափազյանը,-մինչ այդ Սասունի մէջ հազիւ փոքր մը կառավարելու կոչուած էր. բայց Խանլուխլարի կռիւներուն երեւան հանեց իր քաջութիւնը եւ ղեկաւարելու մեծ շնորհքը: Ան փրկեց Խանլուխլարի

ամբողջ շրջանը անխուսափելի ջարդէ: Մեր ժողովուրդը լքուած էր եւ պարտուողական ոգիով ներշնչուած՝ թաթար բէկերու շնորհիւ ապաւինելու տրամադրութիւն ունէր, երբ Մէյդոն հոն չէր դեռ: Ան կրցաւ, իր սակաւաթիւ ուժերով, պաշտպանել գիւղը»[33]:

ՀՅԴ Արեւելեան բյուրոյին ներկայացրած զեկուցագրում Նիկոլ Դումանը արժանվույնս գնահատելով իր հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերի մի շարք շրջաններում ձեռք բերած հաղթանակները, առանձնահատուկ ջերմությամբ առանձնացնում է Մեյդո-Պողոսի հրամանատարությամբ գործող Շարուր գավառակի մարտական խումբը, որը «...թէեւ թուով քիչ, բայց այնպէս ջարդ տուեցին թիւրքերին, այնպէս մի դաս տուեցին հազարաւոր թիւրք յարձակուողներին, որ պատմութեան մէջ միշտ յիշելի կլինի մերոնց հերոսութիւնը:

... Մէյդօն իւր հինգ ընկերներով ազատեց Շարուրի վեց հայ գիւղերի հայ եղբայրների կեանքը, Նրան չսարսափեցրեց թիւրքի անհուն շատութիւնը: Թէեւ հայ գիւղերը թալանուեցին եւ այրուեցին, բայց մերոնք՝ դրա փոխարէն, բազմաթիւ գոհեր առան թիւրքերից, մինչեւ 200-250 թիւրք է ընկել այդ կռւում...

Շարուրցիք օրհնում են եւ կօրհնեն Մեյդօների կեանքը...»[34]:

Խանլուխլար գյուղի կռվում հայկական կողմը շնորհիվ կազմակերպված դիմադրության, ունեցել է ընդամենը 2 սպանված, իսկ թուրքերը բազմիցս ավելի: Ականատեսների վկայությամբ թուրքերը իրենց սպանվածների դիակները, հասկանալի պատճառով, անմիջապես վերցրել են ու տարել: Համաձայն այդ կռվի մանրամասների մասին տարածված լուրերի, թուրքերն ունեցել են հազարից ավելի սպանվածներ իսկ հայերը ընդամենը մի քանի[35]:

Փաստերը վկայում են, որ փրկվում են նաեւ այն հայերը, որոնք գավառապետի օգնականի բյուրիմացության շնորհիվ գյուղից դուրս էին եկել ու անհայտացել: Կռիվներից հետո պարզվում է, որ նրանք, թվով 88 հոգի, մեծամասամբ կին եւ երեխա ապաստանել էին Դարալագյազի Խաչիկ գյուղում: Շուտով նրանց մի մասը վերադառնում է իրենց բնակավայրը, իսկ մյուս մասը մնում է Խաչիկում[36]:

Ամիսներ անց Վ. Փափազյանը Նախիջեւանից երեւան վերադառնալիս, Մեյդո Պողոսին տեսնելու նպատակով կանգ է առնում Խանլուխլար գյուղում:

«Մէյտո Պողոսը,- նշում է Վ. Փափազեանը,-դարձած էր պաշտամունքի առարկայ, բայց մնացած էր նոյն պարզ ու համեստ մարդը:

Գիւղացի տղաները երբ կը պատմէին անոր հերոսութիւնները, Սէյտոն ծուռ-ծուռ կը նայէր անոնց ու ակռաներու մէջէն կը մռնտար.

-Ըհէ՛, ըյէ՛, ժղէ՛(չատախիօսել) աղա...յօրի՞ կը խօսաս, կամչըգնուս, մալէ խրապ(աներտուն):

Եւ իրաւի, այդ շատ մեծ գիւղը եւ շրջանի գիւղերը անսահման ոգեւորութեան մէջ էին: Թաթարները մեծ ջարդ էին կերեր եւ հանգիստ էին թողուցեր: Լքուած, ընկճուած ժողովրդի ոգին Սէյտոն բարձրացուցած եւ ուժերը ղեկաւարած»[37]:

Շարուրի ինքնապաշտպանական մարտերը կրկին հաւաստում են, որ կարելի է անգամ փոքրաքանակ մարտական ուժերով, բայց խելամիտ ու նպատակասլաց կազմակերպվածութեան դէպքում հաղթանակներ նվաճել ու փրկվել անխուսափելի թվացող կոտորածից:

Ընդհարումների սկզբնական շրջանում իրավիճակն ու պատկերը գրեթե նույնն են եղել բոլոր այն բնակավայրերում, որտեղ բռնկվել են զինված բախումներ: Մահմեդական հրոսակախմբերը ամենուրեք դիմում էին հարձակումների, իսկ հայերը՝ հայտնվում սոսկ մեծ դժվարությամբ պաշտպանվողի կարգավիճակում: Համանման կացություն է տիրել նաեւ Դարալագյազ գավառակում:

Դարալագյազը մասն է կազմում Շարուր-Դարալալագյազ գավառի եւ այդ ժամանակ բաղկացած էր 25 հայկական գյուղերից: Դարալագյազի հայկական գյուղերը ընկած էին Արփա գետի աջ ու ձախ մասերում, նրա մեջ թափվող Մալիշկա, Հերհեր, Ալագյոզ, Ելփին, Մարտիրոս, Ազադեք եւ Կնիշիկ գետակների մերձակայքում:

Դարալագյազը հյուսիսային եւ հյուսիսարեւելյան կողմից սահմանակից է Սիսիան, հարավային՝ Շարուրի գավառակներին, իսկ հարավ-արեւելքից ու արեւմուտքից՝ Նախիջեւանի, Նոր-Բայազետի եւ մասամբ նաեւ Երեւանի գավառներին:

Արշալույս Աստվածատրյանի վկայությամբ (ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչն էր Շարուր-Դարալագյազի գավառում-Հ.Գ.), այդ ժամանակ Դարալագյազի հայերը առավելապես կապված են եղել Նախիջեւանի հետ, որտեղ վաճառել են իր արտադրած մթերքների ավելցուկը ու կատարել անհրաժեշտ գնումները:

Չափազանց անմխիթար վիճակում են եղել գավառակի հաղորդակցության ուղիները, կապը հարեւան շրջանների հետ:

«Ռուսական իշխանությունն իր գրեթե հարյուր տարվա տիրապետության շրջանում մատը մատին չէր խփել այդ լեռնային ճանապարհների փոքր ի շատե կարգի բերելու...Դարալագյազի ժողովուրդը Երեւանի հետ կապ էր պահում Նախիջեւանի եւ Շարուրի միջոցով, հազվագյուտ դեպքում՝ Զնջուռ-Դավալու գծով»[38]:

Դարալագյազի վարչական կենտրոնը եղել է Քեշիշքենդ գյուղը(Երեգնաձոր), որը միաժամանակ պրիստավի(գավառակի ոստիկանության պետ) ու հաշտարար-դատավորի նստելավայրն էր:

Դարալագյազը տնտեսական ու մշակութային տեսակետից եղել է Երեւանի նահանգի ամենահետամնաց շրջաններից մեկը: Գավառակին բնորոշ էր նույն բացասական երեւույթը, ինչը տիրում էր հայկական գրեթե բոլոր գավառներում: Գյուղի բնակչության գլխավոր մտահոգությունն ու խնդիրը ընտանիքի կարիքները եւ հոգսերը հոգալն էր ու բավարարելը: Այդ նպատակով, հատկապես երիտասարդությունը թողնում էր հայրենի եզերքը, ընտանիքը եւ պանդխտության ցուպը ձեռքին մեկնում տարբեր երկրներ՝ աշխատանք որոնելու ու հաց վաստակելու:

Գավառակում անմխիթար վիճակում է եղել կրթության գործը:

Ա. Աստվածատրյանի հավաստմամբ «...ամբողջ շրջանը(մոտ քառասուն գյուղ) ուներ հինգ տարրական դպրոց, որոնցից մեկը երկդասյան(հնգամյա), իսկ մնացածը՝ մեկդասյան(երեքամյա): Դպրոցներից չորսը հայկական գյուղում էին, իսկ մեկը՝ թուրքական: Բոլոր դպրոցներն էլ պետական էին»[39]:

Մի ուշագրավ իրողություն. նահանգի, գավառների ու գավառակների բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներից եւ ոչ մեկը ազգությամբ հայ չի եղել: Դրան հակառակ պաշտոնյաների մեջ զգալի քիւ են կազմել մահմեդականները:

«Գոնե ես,-գրում է Ա. Աստվածատրյանը,-Երեւանի շրջանում որեւէ հայ պրիստավ չտեսա: Ռուս, վատ վրացիներ, վատ թուրքեր, գերմանացիներ՝ մի տեսակ տականքներ, որ արժանանում էին կառավարության ուշադրության՝ պրիստավի պաշտոնի համար: Մեծ մասամբ տգետ ու կյանքում վրիպած մարդիկ, որոնք պաշտոնի ու դրամի համար պատրաստ էին խիղճերն ուրանալու ու հավատարմությամբ ծառայելու ժողովրդին հալածող իշխանության մութ նպատակներին»[40]:

Իշխանության վերին օղակներում հայերը տեղ չունեին, իսկ հակառակ դրան մի շարք գավառների, այդթվում նաեւ Դարալագյազի գյուղական բնակավայրերում, հայերը փոքր-ինչ ավելի ծանրակշիռ դիրք են ունեցել, քան թուրքերը:

Ի տարբերություն նահանգի ու գավառի բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք այլազգիներ էին, գյուղերի տանուտերերը(գալավա), դա-

տավորներն ու գրագիրները մեծամասամբ հայեր էին: Ընտրությունների ժամանակ թուրքերը իրենց ձայնը տվել են հայ թեկնածուին:

Հայ-թուրք հարաբերության մի ուշագրավ հանգամանք եւս. «...երբ հայը գործով գնում էր թուրքի գյուղը եւ իջեւանում էր ծանոթներից մեկի մոտ, նրան նստացնում էին տան ամենապատվավոր տեղը, իսկ երբ հակառակն էր պատահում, այսինքն՝ երբ թուրքն էր հյուր լինում հայի տանը, նա հրաժարվում էր պատվավոր տեղից...

Հայ շրջիկ առեւտրականները օրերով ու շաբաթներով անց էին կացնում թուրք գյուղերում եւ նրանց հոգում անծանոթ է կասկածն ու երկյուղը»[41]:

Դարալագյազում թուրքերը թեեւ հայերից ավելի աղքատ էին, բայց ավարառու ավազակների գոհ առավելապես դառնում էին թուրքերը եւ ոչ թե նրանցից ավելի հարուստ հայերը:

«Գոնե ես,-նշում է Ա. Աստվածատրյանը,-երկու տարվա ընթացքում, չեմ հիշում մի դեպք, երբ գյուղի(նկատի ունի թուրքականն ամենամեծ գյուղը, որը հայտնի էր նաեւ իր ավազակախմբերով-Հ.Գ.) ավազակները դիպած լինեին հայերին, թեեւ հայերն այդ գյուղում հաճախ լինում էին»[42]:

Միչեւ հայ-թուրքականն ընդհարումները գավառակի հայ եւ թուրք բնակչությունը շատ լավ, տանելի հարաբերություն է ունեցել, ապրել են հաշտ ու խաղաղ եւ միմյանց վերաբերվել են ընդգծված հավատով ու վստահությամբ: Այդ պատճառով նրանց համար դժվար է եղել հավատալ, անգամ Բաքվի ու Երեւանի փետրվարյան արյունալի դեպքերից հետո, որ տարիներ շարունակ հարեւանությամբ ապրող թուրքերն ու հայերը կարող են կոտորել միմյանց: Այսուհանդերձ, Նախիջեւանում եւ Շարուրի գավառակում տեղի ունեցած մայիսյան դեպքերը կտրուկ փոխում են իրավիճակը նաեւ Դարալագյազում:

Հայկական գյուղերը գավառակում տեղաբաշխված էին միմյանցից բավական հեռու եւ շրջապատված էին բազմաթիվ թուրքական գյուղերով: Բացի թուրքական գյուղերի բնակիչներից, ամռանը ոչխարի հոտերով Դարալագյազի լեռներն էին բարձրանում Արաքսի ափերից՝ քրդերը, Շարուրի, Սադարակի ու Ջեբրայիլի հարթություններից՝ թուրքերն ու այլ ցեղեր: Որպես կանոն, ամռանը սարեր բարձրացող, այդ թվում նաեւ Դարալագյազի, թուրքերը, քրդերն ու մահմեդական այլ ցեղերը մշտապես զինված էին եւ հայերի հանդեպ մարտակաորեն տրամադրված:

«Ահա այն պայմանները,-նշում է Ա-Դ-ն,-որոնց մէջ գտնելով այդ շրջանի հայ ազգաբնակչութիւնը, անխուսափելի կերպով կանգնած էր ընդհարումների առաջ»[43]:

Դժվար չէր հասկանալ, որ գավառակի այդօրինակ կառուցվածքը, հայկական գյուղերի դասավորվածությունն ու միմյանցից կտրված լինելու հանգամանքը, զինված բախումների բռնկման պարագայում, գուտ ինքնապաշտպանության կազմակերպման նկատառումով կարող էր վտանգավոր կացության մեջ դնել հայկական գյուղերի բնակչությանը:

Ի տարբերություն Շարուրի, Հ.Յ.Դաշնակցությունը ընդհարումների նախօրեին արդեն իր կուսակցական կառույցներն ուներ Դարալագյազի գրեթե բոլոր գյուղերում: Գործում էր նաեւ կուսակցական կառույցների աշխատանքները համադրող ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կոմիտեն:

Ա. Աստվածատրյանի տեղեկացմամբ «... շրջանային կոմիտեի անդամներից չորսը պետական դպրոցների ավագ ուսուցիչներ էին, մեկը մաքսային պաշտոնյա, երկուսը տեղացի գյուղացիներ...Թեեւ Դաշնակցությունը այդ շրջանում ուներ ընդամենը երկու տարվա կյանք, բայց արդեն հեղինակություն էր ժողովրդի աչքում, ու մեծ էին նրա հմայքն ու ազդեցությունը»[44]:

Բաքվում, ապա նաեւ Երեւանում, առավել եւս Նախիջեւանում ու Շարուրի Ուլյանորաշեն եւ Խանլուխալար գյուղերում տեղի ունեցած բախումները թելադրում էին, որ շատ հուսով այդ նույն դեպքերը կրկնվելու էին նաեւ Դարալագյազում:

ՀՅԴ Վայոց Ձորի եւ գավառակի կուսակցական կառույցների գերխնդիրն էր սթափ գնահատել ստեղծված կացությունը եւ համապատասխան միջոցներ ձեռնարկել կազմակերպելու Դարալագյազի հայության ինքնապաշտպանությունը:

Ի՞նչ պետք է արվեր: Իհարկե, նախեւառաջ անհրաժեշտ էր ձեռք բերել զենք ու զինամթերք եւ կազմակերպել մարտական խմբեր:

ՀՅԴ «Մրգաստան» կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Ա. Աստվածատրյանի խոստովանությունից պարզվում է, որ չնայած այն իրողությանը, որ գավառակի հայությունը թուրքերի համեմատ ավելի հարուստ էր եւ հայ ու թուրք բնակչության կողմից առավելագույնս հարգված, այնուամենայնիվ, զինվածության առումով զգալիորեն զիջում էր հակառակորդին: Ամբողջ շրջանում եղել է ընդամենը 5-6 կանոնավոր զենք:

Իսկ այդ ուղղությամբ ի՞նչ քայլեր էր կատարել ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն, չէ՞ որ Բաքվի ու Երեւանի փետրվարյան դեպքերից հետո անցել էին ամիսներ: Հ.Յ.Դաշնակցության տեղի կազմակերպությունն անհրաժեշտաբար հիմք ընդունելով կատարված դեպքերը, պարտավոր էր կատարել համապատասխան եզրահանգումներ եւ ժամանակին, գոնե մասնակիորեն, լուծել ժողովրդի զինման հարցը:

Ժողովրդին զինելու համար հարկավոր էր զենք ու զինամթերք, որը նախեւառաջ կարելի էր ձեռք բերել անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Իսկ ՀՅԴ տեղի կոմիտեն զենք գնելու համար չուներ պահանջվող գումարներ: Միակ միջոցը հանգանակության (դրամամահավաք) կազմակերպումն էր: Այդ նպատակով ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն դիմում է բնակչության օգնությանը: Բայց հանգանակություն կազմակերպելու նպատակով ժողովրդին ուղղված Դաշնակցության դիմումները արձագանք չեն գտնում գավառակի հայ բնակչության կողմից:

Մինչեւ Նախիջեւանի ու Շարուրի գավառներում տեղի ունեցած դեպքերը հայության կողմից ՀՅԴ հրապարակած դիմումների մերժման հիմնական պատճառը եղել է իշխանությունների ու հարեւանների նկատմամբ ունեցած միամիտ ու կույր հավատը: Նրանց համոզմամբ «Ո՞նց կարող է ռուս իշխանությունը թույլ տալ, որ Շարուրի եւ Նախիջեւանի ավազակները գան հասնեն Դարալագյազ ու անմեղ մարդկանց կոտորեն, թալանեն: Տեսնվա՞ծ բան է այդ: Ուր մնաց, որ ոչ Նախիջեւանում եւ ոչ էլ Շարուրում որեւէ դեպք տեղի չի ունեցել: Չէ՞, Բաքուն մեզ օրինակ լինել չի կարող»[45]:

Ճիշտ է, տեղի հայերը գուտ տնտեսական առումով ավելի բարվոք վիճակում են գտնվել, քան թուրքեր բայց պատրաստի դրամ չեն ունեցել: Իսկ զենք ու զինամթերք գնելու համար հարկավոր էր տասնյակ ռուբլիներ, որոնք այդ պահին գյուղացու համար չափազանց մեծ գումար էին: Շրջանում պատրաստի դրամ ունեցողների թիվը խիստ սահմանափակ էր: Նրանց տված գումարներով հնարավոր չէր զինել բնակչության փոքրագույն մասն անգամ: Այդ դեպքում ի՞նչ պետք է արվեր, ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն ինչպե՞ս պիտի լուծեր դրամ ձեռք բերելու եւ զենք ու զինամթերք գնելու խնդիրը:

«Կոմիտեի անդամներից ոմանք առաջարկում էին դիմել բոնի միջոցի՝ գյուղացու համառությունը կոտրելու նպատակով: Առաջարկվում էր գյուղական կոմիտեների միջոցով ցուցակագրել թե ո՛ր գյուղացին որքա՛ն դրամ, նվազագույն չափով, կարող է տրամադրել զենքի համար ու համաձայն այդ ցուցակների, կոմիտեի անունից պահանջ ներկայացնել գյուղացիներին: Չենթարկվողներին պատժի ենթարկել»[46]:

Ավելի քան տարօրինակ է եւ խիստ զարմանալի. բնաչությունից իր իսկ պաշտպանության համար պահանջվող գումարները բռնությամբ վերցնելու դեպքերը Զինվորական մարմիններն ու ՀՅԴ կառույցները հարկադրված կիրառել են հայկական բազմաթիվ բնակավայրերում:

ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեի անդամները համոզված են եղել, որ մի քանի գյուղացիներ պատժելով, կարելի էր իրականացնել դրամահավաքը: Բայց այս դեպքում կարող է իրեն զգացնել տալ հետեւյալ անցանկալի իրավիճակը: Բոլորովին չէր բացառվում, որ Դաշնակցության համանման վարքագիծը բացասաբար անդրադառնար ՀՅԴ կառույցների ու ժողովուրդի փոխհարաբերության վրա:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն որոշում է դիմել Երեւանի նահանգի Զինվորական մարմնին ու ՀՅԴ «Մրգաստան» կենտր կոմիտեին՝ խնդրելու զենք եւ զինամթերք: Այդ նպատակով ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեի երկու անդամների ուղեկցությամբ Երեւան է մեկնում վերոհիշյալ հուշագրության հեղինակ Արամայիս Աստվածատրյանը:

Մինչեւ Երեւան մեկնելը, քանի որ արդեն գավառում իրավիճակը գնալով շիկանում էր, թուրքերի հնարավոր հարձակումները կանխելու ու հայկական գյուղերի անվտանգությունն ապահովելու նպատակով տեղի Դաշնակցության կոմիտեն ձեռնարկում է մի քանի կանխարգելիչ քայլեր: Դարալագյազի հայկական գյուղերից առավել վտանգված էին գավառակի հարեւանությամբ գտնվող Նախիջեւանի Ալմալու, Սուլթանաբեկ եւ Սերս գյուղերը:

Եթե թուրքերը հարձակվեին այդ գյուղերի վրա, ապա Դարալագյազի կոմիտեն պարտավոր էր օգնության շտապել, ընդսմին տվյալ իրավիճակում կարող էր օգտագործել միմիայն իր ունեցած ընդամենը 5-6 հրացանները, այն էլ սահմանափակ քանակությամբ փամփուշտներով:

Գավառակում ամենավտանգավորը թուրքական Ջուլ գյուղն էր: Մինչեւ Երեւանի զինվորական մարմնի աջակցությամբ ինքնապաշտպանական մարտախմբերի կազմավորումը անհրաժեշտ էր կիրառել Ջուլն ու թուրքական մյուս գյուղերը զսպելու մարտավարություն, ամենակարեւորը՝ ժամանակ շահել:

Այս պայմաններում ՀՅԴ կոմիտեն որոշում է կիրառել հակառակորդի համար անսպասելի ու նրան վախեցնող ու կաշկանդող մարտավարություն, որը պիտի կենսագործվեր հետեւյալ ուղղվածությամբ. ՀՅԴ կոմիտեն որոշում է. «...ֆիդայական խմբեր «ցուցադրել» թուրքական որոշ գյուղերի սահմաններում»:

Ըստ Ա. Աստվածատրյանի «Այդ շրջանի գյուղերից ընտրեցինք մի քանի քաջ երիտասարդներ, կեսին զինեցինք մեր տրամադրության տակ եղած զենքերով, ճարեցինք յափնջիներ ումեր փափախներ: Խումբը պատրաստ էր: Երբ մութը քիչ վրա էր գալիս եւ երբ թուրքերը հանդերից

սկսում էին տուն քաշվել, ծիավոր «խումբը» իմ (Ա. Աստվածատրյան-Հ.Գ.) գլխավորությամբ շրջաններ էր անում այս կամ այն թրքական գյուղի սահմաններում այնպես, որ գյուղից թուրքերը նշմարեին «Ֆիդայիներին»[47]:

Այդ մարտավարությունը ինչ-որ չափով օգտակար էր: Թուրք գյուղացիները տեսնելով յափնջիներով ու մեծ փափախներով «զարդարված» տարբեր վայրերում անսպասելիորեն սրարշավ հայտնված զինված ծիավորներին, լուր էին տարածում իրենց շրջանում գտնվող ֆիդայիների մասին:

Նման մարտավարություն, բայց ավելի մեծածավալ, համարձակ ու սարսափազդու գործողություններ Դուրան-Բարծրավանդակում արդեն կիրառել էր Գեւորգ Չավուշ,: Նշանավոր հայդուկապետի կողմից կյանքի կոչված աննախադեպ մարտավարությունը հարկադրած պատասխան քայլ էր ընդդեմ քուրդ ցեղախմբերի (աշիրեթների) միջոցով արեւմտահայության նկատմամբ կիրառվող քաղաքականության:

Թուրք իշխանությունների խրախուսանքով ու թողտվությամբ քրդական ցեղախմբերը ներխուժում էին հայկական բնակավայրերն ու մահվան սպառնալիքով հայ բնակչությանը դուրս մղում նրանց հայրենի բնակավայրերից:

Ի՞նչ պետք է արվեր, որպեսի խոչընդոտեին, թույլ չտային թուրք ցեղախմբերին չտարածվելու հայկական բնակավայրերում:

Քուրդ աշիրեթներին սարսափեցնելու ու նրանց ձեռնարկումները խոչընդոտելու, ինչպես նաեւ ցեղախմբերի որոշ մասի բարեկամությունը շահելու դիտավորությամբ Գեւորգ Չավուշը գիշերով, ֆիդայիների հեծյալ խմբով անսպասելիորեն հայտնվում էր աշիրեթապետի(ցեղապետ) դռանն ու համարձակորեն ձայն տալիս. «Մեռածի պէս քնած էք, աղա Գէորգ Չաուշին այս մութ գիշերին հերիք չէ՞ սպասեցնէք, դուռը շուտ բացէ, դոնաղ (օթեւանելու) եմ եկել»[48]:

Գիշերային անսպասելի այցելությունները դիտավորյալ առաջին հերթին արժանացնում էր հայ գյուղացիների նկատմամբ իրենց սանձարձակություններով առավելապես աչքի ընկած աշիրեթապետերին եւ «հյուրընկալվելուց» կարճ ժամանակ անց արագորեն անհետանալով՝ հաջորդ օրը հայտնվում մեկ այլ աշիրեթապետի դռանը[49]:

Նման մարտավարությամբ Գեւորգ Չավուշը կարողացավ, գոնե ժամանակավորապես, խոչընդոտել քուրդ ցեղախմբերի մուտքը, տարածումը հայկական բնակավայրեր:

Դժվար է պնդել, որ ՀՅԴ Դարալագյազի կառույցը տեղյակ էր Դուրան-Բարծրավանդակում Գեւորգ Չավուշի կիրառած մարտավարությանը ու կրկնում էր այն: Իհարկե, Դարալագյազի շրջանում Դաշնակցության կիրառած վերոհիշյալ գործողությունները թշնամու վրա չէր կարող ունենալ նույն սարսափազդու ներգործությունը, ինչը քուրդ աշիրեթների վրա ունեին Գեւորգ Չավուշի ձեռնարկումները. բայց մի հանգամանք անժխտելի է. մինչեւ Երեւանի Զինվորական մասնից օգնություն ստանալը, ՀՅԴ «Վայոց Ձոր» կոմիտեն, այնուամենայնիվ, կարողացավ փոքր-ինչ ժամանակ շահել: Իսկ դա անտարակույս նշանակալի արժեք է:

Երեւանում ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեի անդամները «Մրգաստան» կենտր. կոմիտեին ու Զինվորական մասնին ներկայացնում են Դարալագյազում տիրող կացությունը եւ խնդրում զենք ու զինամթերք: ՀՅԴ կենտր. կոմիտեն ու Զինվորական մասինը բավարարում են նրանց խնդրանքը՝ խոստանալով գավառակի ինքնապաշտպանության համար տրամադրել զենք ու զինամթերք:

Դարալագյազին օգնելու համար Զինվորական մարմինը չի սահմանափակվում միայն զենք ու զինամթերք տրամադրելով:

Հարց է ծագում. ինչպիսի՞ աղյուսավետությամբ կօգտագործեր ՀՅԴ Վայոց Ձորի կոմիտեն իրեն հանձնած զենքն ու զինամթերքը Դարալագյազի ինքնապաշտպանությունը կազմակերպելիս: Գաղտնիք չէր, որ գավառակի մարտական ուժերը խելամիտ ու արդյունավետ մարտավարությամբ առաջնորդելու համար առավելապես նպատակահարմար ու օգտակար կլիներ, եթե այնտեղ գործուղվեին փորձառու եւ քաջավարժ ռազմիկներ:

Իսկ այդ օրերին ի թիվս արեւմտահայ բազմաթիվ ֆիդայիների Երեւանում էր գտնվում Աղբյուր Սերոբի զինակից Առյուծ Ավագը: Նա հանրահայտ դեմք էր հայ ազատագրական պայքարում եւ նշանավոր ֆիդայիներից առաջիններից էր, որը ընդհարումների առաջին իսկ օրից մարտադաշտում էր ու քաջաբար մասնակցել էր Բաքվի հայության փետրվարյան ինքնապաշտպանական մարտերին:

19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունն ներկայում ապացուցում է, որ Աղբյուր Սերոբին ու նրա առաջնորդած ֆիդայիներին, իրենց քաջությամբ ու հայության ազատագրական պայքարին մատուցած ծառայություններով, թերևս կարելի է համեմատել միմիայն Գեւորգ Չավուշին ու նրա առաջնորդած ֆիդայիներին: Իրոք լեգենդատիպ են Հայոց ազատամարտը զարդարող այդ երկու անզուգական հայդուկապետերի առաջնորդությամբ տեղի ունեցած հերոսամարտերը:

Առյուծ Ավագը մեկն էր այն ֆիդայիներից, որը մասնակցել էր Աղբյուր Սերոբի գլխավորությամբ տեղի ունեցած գրեթե բոլոր գոտեմարտերին: Իսկ բշնամու բազմապատիկ անգամ մեծաքանակ ուժերի դեմ նրա մասնակցությամբ տեղի ունեցած գոտեմարտերն առանց բացառության հաղթական էին:

Ֆիդայիների ներկայությունը Կովկասում ավելի քան անհրաժեշտ էր, իսկ նրանց ազդեցությունը կովկասահայության, ինեւպես նաեւ հակառակորդի վրա՝ աննկարագրելի:

Ուշագրավ է Առյուծ Ավագին տված Ա. Աստվածատրյանի բնութագիրը:

Ա. Աստվածատրյանը Առյուծ Ավագին առաջին անգամ հանդիպել է Երեւանում, երբ գնացել էր Երեւանի նահանգի Զինվորական մարմնից օգնություն խնդրելու առաջադրանքով:

«Խմբապետեր,-գրում է Ա. Աստվածատրյանը,-շատ էի տեսել: Իսկ այդ օրերին ամեն մի գործոն դաշնակցական խմբապետ էր: Առյուծ Ավագի պարագան տարբեր էր, թվում էր, թե նա դաշնակցական բացառիկ խմբապետերից էր: Նախ արտաքինով: Գլխին ուներ անթերեւակայելի մեծությամբ մի սպիտակ փափախ, որի ծոպերն այնքան երկար էին, որ աչքերը չէին երեւում: Երբեմն, զայրացած պահերին, բարկացկոտ շարժումներով փափախը բարձրացնում էր ճակատն ի վեր ու ցուցահանում կրակոտ աչքերը: Այդ պահերը բռնողը չէր կարող չմտածել՝ «իրոք որ՝ առյուծ»: Իր կազմվածքով ժայռի կտոր էր, նրանից ճառագում էին առողջութիւն, ուժ եւ հանդգնութիւն...

Իր կյանքում մի պաշտամունք ուներ՝ Սերոբ Փաշան: Նրա մասին խոսելիս, հիշեցնում էր տաճարում աղոթող հավատացյալին...Թուրքերի հետ ունեցած ընդհարումներն ոչինչ բան էր համարում՝ խաղ ու պար»[50]:

Երեւանի նահանգի եւ Զանգեզուրի հնքնապաշտպանական ուժերի հրամանատարությունն ու անձամբ ընդհանուր զորահրամանատար Նիկոլ Դումանը արժանվույնս գնահատելով նրա մարտական անբասիր կարողությունները եւ ֆիդայիների շրջանում ունեցած հեղինակությունը, Առյուծ Ավագին է հանձնարարում Դարալագյազի մարտական ուժերի հրամանատարությունը:

Այս նշանակման մասին հետեւյալն է նշում է Ս. Օհանջանյանը, որն այդ ժամանակ Նիկոլ Դումանի օգնականն էր. «Դարալագյազի շրջանն ուղարկեցինք Առիծ-Աւագին ու Օշին-Սարգավագին, տասնութ կամավորներով[51]:

Դարալագյազի ՀՅԴ կոմիտեի ներկայացուցիչ Սարկավագի Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեին ներկայացրած զեկուցագրից (15. յուլիս 1905 թ.) պարզվում է, որ նրան առաջադրանք է տրվում ոչ միայն օգնել Դարալագյազի հնքնապաշտպանական ուժերին պաշտպանելու շրջանի հայ բնակչությանը, այլեւ առաջին իսկ հնարավորության դեպքում ձեռնարկել հարձակողական գործողություններ եւ կործանել թուրք հրոսակախմբերի որեւէ մեկի որջը[52]:

Այսինքն, նրանք իրենց գործողություններում պիտի առաջնորդվեին Դումանի դավանած ակն ընդ ական, այն է՝ հարձակողական բնույթի մարտավարությամբ գործելու սկզբունքով:

Նույն դեպքերին է անդրադառնում նաեւ արդեն բազմիցս հիշատակած Ա. Աստվածատրյանը, որն այդ օրերին ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեի հանձնարարությամբ Երեւանից վերադարձել ու դարձյալ գտնվում էր Դարալագյազի շրջանում:

Ըստ Սարկավագի եւ Ա. Աստվածատրյանի պնդումների, հայ հնքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը վստահ էր, որ հարձակողական գործողությունների կենսագործումը, անպայմանորեն նշանակալի ազդեցություն կունենար բշնամու զգաստացնելու, նրա կրքերը սանձելու ու վախեցնելու գործում[53]:

Մինչեւ հայ մարտական ուժերի կողմից հարձակողական գործողություններ ծավալելը, Դարալագյազում սկսվում են բախումները, եւ այս անգամ դաժան նախահարձակը թուրքերն էին:

Մայիսի 12-ից մինչեւ 20-ը գավառակի թուրք ամբոխը, որոնց միանում են թափառական զինյալ հրոսակախմբերը, զանգվածաբար հարձակում են գործում զուտ հայաբնակ Մարտիրոս, Փաշալու, Դայլախլու, Թառաթումբ, Էրդափին, Քարագլուխ, Ղոյթուլ եւ խառը բնակչություն ունեցող Վերիեր ու Գնդեւազ գյուղերի վրա[54]:

Ի տարբերություն Նախիջեւան գավառի ու Շարուր գավառակի Դարալագյազի հայկական բնակավայրերը, բացառությամբ թերեւս Դայլախլու փոքրիկ գյուղի, բշնամու հարձակումների հետեւանքով թեեւ ունեցել էին նյութական զգալի կորուստներ, սակայն կարողացել էին դիմել ինքնապաշտպանության եւ թույլ չէին տվել թուրք հրոսակախմբերին ներխուժել իրենց բնակավայրերը:

Առաջինը հարձակման են ենթարկվել Նախիջեւանի շրջանին սահմանամերձ Մարտիրոս եւ Փաշալու գյուղերը: Գյուղերի ինքնապաշտպանական ուժերը չնայած իրենց թույլ զինվածությանը, այնուամենայնիվ, կարողանում են հետ մղել հարձակումները: Թուրքերը չկարողանալով ներխուժել Մարտիրոս եւ Փաշալու, «բավարարվում են» այդ գյուղերի ոչխարի հոտերի մի մասի հափշտակմամբ:

Փոքր-ինչ ավելի ծանր իրավիճակում են հայտնվում Դայլախլու, Թառաթումբ, Էրդափին, Քարագլուխ, Ղոյթուլ գյուղերը, հատկապես Դայլախլու գյուղը: Այդ գյուղի բնակչությունը առանց որևէ դիմադրության ցույց տալու իրենցից բազմիցս գերազանցող հրոսակախմբերին, փախչում է գյուղից ու ապաստանում Փոռ գյուղում: Թուրքերը ներխուժում եւ ամբողջովին թալանում ու այրում են Դայլախլու գյուղը:

Կործանելով հայկական փոքրիկ գյուղը, թուրքական Հորս գյուղերի բնակիչները, որոնց միանում են նաեւ մերձակա գյուղերի բնակիչներն ու Այրիջանի թափառական հրոսակախմբերը, օրեր շարունակ պաշարում են Դայլախլու, Թառաթումբ, Էրդափին, Քարագլուխ, Ղոյթուլ գյուղերը: Արժանվույնս պիտի գնահատել այդ գյուղերի բնակչության ցուցաբերած հերոսականությունը: Պաշտպանվելով իրենց ունեցած խիստ սահմանափակ միջոցներով գյուղի քրքրաանակ պաշտպանները կարողանում են յուրաքանչյուր անգամ հետ մղել բշնամու պարբերաբար կրկնվող հարձակումներն ու անառիկ պահել գյուղերի պաշտպանական դիրքերը[55]:

Խառը բնակչություն ունեցող Գնդեվազ գյուղում, որտեղ մինչ այդ հայերն ու թուրքերը վատ հարաբերություններ չունեին, տեղի է ունենում հետեւյալ ուշագրավ դեպքը: Հայերի համագյուղացի թուրքերը իրենց «քարեկամ» հայերին ու նրանց ունեցվածքը պաշտպանելու նպատակով դիմադրում եւ թույլ չեն տալիս այլ վայրերից եկած ավարառու հրոսակախմբերին ներխուժելու Գնդեվազ: Սակայն շատ շուտով պարզվում է նրանց իրական նպատակադրությունը: Թույլ տալով իրենց հավատացյալ հիցներին ներխուժելու գյուղ, Գնդեվազի թուրքերը իրենք են թալանում ու կողոպտում իրենց համագյուղացի հայերին: Հաշվարկը միանգամայն պարզ է ու հասկանալի: Իսկ ինչո՞ւ թույլ տալ, որ հայի հարստությանը տիրեին նաեւ դրսից եկածները, երբ կարելի էր ու հնարավոր, որ այդ հարստությունը թալանեն ու ամբողջովին տնօրինեն միմիայն իրենք:

Ըստ այդ նույն վավերագրի, որը գրեթե նույնությամբ կրկնում է Ա-ԴՕ-ն, փոքր-ինչ այլ կացությունում է հայտնվել մեկ այլ խառը բնակչություն ունեցող Հերհեր գյուղը: Տեղի թուրքերը հարմար առիթի են սպասել, որպեսզի սկսեին թալանը, սակայն «...Դարալագեազում կազմակերպեց ինքնապաշտպանության խումբ, որից յետոյ Հերհերի թուրքերը ստիպված էին մեղայականներով շահել բանական անախորժություններ ծագած համագիւղացի հայերի սիրտը»[56]:

Իրավիճակը Դարալագյազում ավելի է շիկանում մայիսի վերջերին, տեղաբնակ թուրքերը ու մահմեդական թափառական հրոսակախմբերի կողմից Շարուրի հայկական գյուղերի թալանման ու ավերման ժամանակ: Հայկական գյուղերի, մասնավորապես Մարտիրոս եւ Նախիջեւանի Ալմալու(ներկայիս Խնձորուտ) գյուղերի համար մեծ սպառնալիք էին Նախիջեւան գավառի լեռնային շրջանի թուրքական գյուղերը եւ հատկապես Իթդոռան գյուղը:

Նախիջեւանում տեղի ունեցած դեպքերի ժամանակ Իթդոռանում կենտրոնացած թուրք ամբոխը բազմիցս հարձակում էր գործել հայկական մի շարք բնակավայրերի, այդ թվում նաեւ Դարալագյազի Մարտիրոս եւ Նախիջեւանի Ալմալու գյուղերի վրա: Այդ գյուղերը կարողացել էին երկար ժամանակ քաջաբար պաշտպանվել: Մատնվելով անհաջողության, թուրքերը ծրագրում են մարտական լրացուցիչ ուժեր կենտրոնացնել Իթդոռանում ու վճռական հարձակում ձեռնարկել հայկական գյուղերի վրա:

Թեպետ այդ գյուղերի բնակիչներն արդեն ունեին ինքնապաշտպանություն կազմակերպելու որոշակի փորձառություն, բայց ավելի ուժգին հարձակումների ենթարկվելու պարագայում, անկասկած, կհայտնվեին ծանրագույն իրավիճակում:

Ահա այդպսի բախտորոշ ժամանակ մարտախմբով Լեռնային Նախիջեւանի Ալմալու գյուղ է գալիս Առյուծ Ավագը:

Հայ մարտական խմբի ներկայությունը մեծ ոգեւորություն է առաջացնում:

« Դիտացիք, - նշում է Արշալույս Աստվածատրյանը,- սրտառուչ գուրգուրանք էին ցոյց տալիս ղէպի զինուորները: Իսկ այդ զինուորնե՞րը... Հեռո՞ւ աշխարհից եկած նոյնպէս գիւղացի... Ու այդ մարդիք եկել հասել էին սարերի արանքում կորած Ալմալու՝ նրա բնակիչներին պաշտպանելու, փրկելու»[57]:

Ալմալու գյուղում կայանում է զինվորական խորհրդաժողով, որի մասնակիցները որոշում են թուրքերի կողմից հայկական գյուղերի նկատմամբ ձեռնարկած հարձակումները ամենելու եւ նրանց վախեցնելու նպատակով հարձակվել եւ հիմնահատակ կործանել թուրքական Իթդոռան գյուղը: Այդ գյուղը գտնվում է Դարալագյազին սահմանամերձ Նախիջեւանի տարածքում: Իթդոռանը, որպես հարձակման թիրախ ընտրվել էր ոչ պատահականորեն: Բանն այն է, որ թուրք հրոսակախմբերը իրենց կենտրոնավայրը դարձրել էին հենց այդ գյուղը եւ, չթավարարվելով Նախիջեւանի հայկական գյուղերի վրա հարձակումներ գործելուց, պարբերաբար ապաստանում էին նաեւ իրենց հարեւան շրջանների եւ մասնավորապես Դարալագյազի հայկական գյուղերը:

Հատկապես վտանգված էին Նախիջեւանի Ալմալու, Սուլթանաբեկ եւ Սերս գյուղերը: Իսկ այդ գործողությունները ղեկավարում էին գլխավորա-

պես Նախիջեւանի խաները, որոնցից մի քանիսը այդ օրերին գտնվում էին Իթրոան գյուղում: Իզուր չէ, որ թուրքերի գործողությունները որակելիս Դարալագյազի հայերն ասել են.

«- Բոլորը Նախիջեւանի Խաների գործն է:

- Ամենը մէկ են՝ Խան թէ հասարակ ժողուրդ, թուրք են: Միմչեւ չսխենան, հանգիստ չեն նստիլ: Հիմա որ ուտեն, այնուհետեւ արածները կը հասկանան»[58]:

Ջինվորական խորհրդաժողովում քննարկվել են Իթրոանի վրա հարձակվելուն առնչվող հարցերը: Հարձակումից առաջ, հենց նույն ժողովում, հարկ է եղել լուծել մի կճճոռտ հարց: Հայ ֆիդայիները, ընդունված սովորույթի համաձայն, կռիվների ընթացքում երբեք զենք չէին բարձրացնում թշնամու կնոջ եւ երեխայի վրա, բայց քանի որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, թուրք հրոսակախմբերը հայերին սպանելիս հաշվի չէին առնում հայի տարիքն ու սեռը եւ անխնա կոտորում էին իրենց ձեռքն ընկածներին, ուստի վրեժխնդրությամբ համակված ֆիդայիները որոշում են թուրքին պատասխանել հենց նրանց օրինակով, կոտորել բոլորին՝ հաշվի չառնելով նրանց տարիքն ու սեռը:

Միթե՞ հայ ֆիդային կարող էր դիմել նման քայլի:

Հետագայում նրանց մասնակցությամբ տեղի ունեցած բոլոր մարտերը վկայում են, որ հայ ֆիդային թշնամու նկատմամբ ինչքան էլ վրեժխնդրությամբ համակված լիներ, այնուամենայնիվ չէր դավաճանում իր կոչմանն ու դավանանքին՝ այն է .

Կանանց երբե՛ք ձեռք տալու չէ

Վրէժխնդիր հա՛յ ֆիտան...

Ալմալու գյուղում կայացած զինվորական խորհրդաժողովում, Առյուծ Ավագը ժողովի մասնակիցներին հայտնում է, որ ինքը ոչ միայն կրկին ուսումնասիրել եւ ծանոթացել է Իթրոանի դիրքերին, այլ նաեւ արդեն մշակել է գյուղը գրոհով նվաճելու գործողության ծրագիրը: Համաձայն նրա ներկայացրած ծրագրի հայ մարտական ուժերը պետք է քողարկված, աննկատ մոտենային գյուղին, գրավեին համապատասխան դիրքեր եւ լուսաբացին, երբ թուրքերը դեռեւս քնած էին՝ ձեռնարկեին անակնկալ եւ արագ հարձակում:

Ըստ ՀՅԴ Դարալագյազի ներկայացուցիչ Սարկավագի ներկայացրած զեկուցագրի, հայ մարտական խմբերի հրամանատարությունը քաջատեղյակ էր, որ կռվի լուրն առնելուն պես մարտադաշտում անպայմանորեն կհայտնվեին ռուս զինվորներն ու ոստիկանական ուժերը, որոնք որպես կանոն միշտ էլ պաշտպանում էին թուրքերին եւ թույլ չէին տալիս

ու խոչընդոտում հայ մարտիկներին՝ գրավելու թուրքական բնակավայրերը: Առաջնորդվելով այդ հանրահայտ իրողությամբ, հայ մարտական ուժերը արագորեն պիտի գրավեին գյուղը եւ իրականացնեին ծրագրած գործողությունը, քանի դեռ ռուս զինվորներն ու ոստիկանական ուժերը չէին հասցրել հայտնվել մարտադաշտում[59]:

Իթրոան գյուղի վրա ձեռնարկած հարձակումը հայ մարտական խմբերը կենսագործում են ըստ վաղօրոք մշակած ծրագրի եւ մեծ հաջողությամբ: Վերոհիշյալ զեկուցագրի հավաստմամբ, թուրք խաները, ինչպես նաեւ Դարալագյազի քրքության առաջնորդները որեւէ տեղեկություն չեն ունեցել հայ մարտական ուժերի տեղաշարժերի ու մտադրությունների մասին: Նրանց համար կատարյալ անակնկալ էր միմչ այդ միայն սոսկ պաշտպանվողի կարգավիճակում գտնվող հայերի կողմից ձեռնարկած հարձակումը: Զեկուցագրում ընդգծվում է, որ հայ մարտիկներին հաջողվել է լիովին կործանել թուրքական գյուղը, որի բնակիչներից շատ քչերն են կարողացել փրկվել հայդուկների գնդակներից: Այդ հաղթական կռվում հայ մարտիկների տնօրինությանն է անցել գյուղի ողջ հարստությունը[60]:

Ա. Աստվածատրյանը հայ-թուրքական ընդհարումներին նվիրված «Հայրենիք» ամսագրում տպագրված հոդվածում անդրադառնալով ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեին ներկայացված վերոհիշյալ զեկուցագրին՝ նշում է, որ զեկուցագրում տեղ գտած, ներկայացրած փաստերը ուռճացված են: Զեկուցագրում Սարգավագը գրում է, որ հայ մարտիկները կռվել են մեծ հերոսությամբ, իսկ թուրքերը թեեւ ցույց են տվել համառ դիմադրություն, բայց ունեցել են մարդկային հսկայական կորուստներ[61]:

Ա. Աստվածատրյանի պնդմամբ, հայ մարտական ուժերը Իթրոանը գրավել են ոչ թե դաժան կռվով ու հերոսականությամբ, այլ թուրքերը հայ մարտիկների գրոհից սարսափահար եղած, գրեթե առանց դիմադրության փախել են գյուղից:

Ավելին, ըստ Ա. Աստվածատրյանի վկայության «...Իթրոանի ծորի ուղղությամբ ընկած թուրք գյուղերը, իմանալով հարձակման մասին, ոչ թե չէին շտապել օգնության, այլ իրենք էլ, լքելով գյուղերը, փախել էին դեպի դաշտը...»[62]:

Գյուղում գտնվող ոչխարի հոտերը, որոնց գգալի մասը թուրքերը բռնագրավել էին հայ գյուղացիներից, հայ մարտիկները քշում են Սերս, Սուլթանաբեկ ու Ալմալվու գյուղերը եւ մեծ մասը բաժանում չքավոր գյուղացիներին, իսկ մի փոքրիկ մասը վաճառում՝ մարտախմբերի համար ձեռք բերելու զենք ու զինամթերք:

Եթե նույնիսկ ընդունենք, որ թուրքական գյուղի վրա ձեռնարկած հարձակման արդյունքներն իրոք չափազանցված են ու ուռճացված, այնուամենայնիվ անժխտելի է Իթղռանի վրա ձեռնարկած հայ մարտական ուժերի հարձակողական գործողության ձեռք բերած հաջողությունը: Ընդ որում, այդ հարձակողական գործողությունը հայ-թուրքական ընդհարումներում առաջիններից է: Հայ մարտիկներն կարողանում են ոչնչացնել թուրքական ուժերի հենակետերից մեկը, եւ դա մեծ ոգեւորությամբ է ընդունվում Դարալագյազի եւ Նախիջեւանի հայության կողմից:

Վերոհիշյալ Ա. Աստվածատրյանի խոստովանությամբ «Իթղռանի դեպքի ազդեցությունը շատ մեծ էր շրջանի համար: Դա մի ռումբ էր, որ անակնկալիորեն պայթեց թուրքերի գլխին: Ահ ու սարսափից նրանք իրենց գյուղերից քիթ չէին ցույց տալիս: Ֆիդայիների ներկայությունը Դարալագյազում նրանց միանգամայն կաշկանդեց: Իսկ հայ գյուղացին լայնորեն շունչ առավ: Սարսափը, որ բույն էր դրել նրա սրտում, անհետ չքացավ...Իթղռանի մասին շրջան էին անում առասպելական պատմություններ եւ միայն բուն հերոսների մասին...»[63]:

Իթղռանի թուրքական գյուղի կործանումը թեեւ շոշափելի հարված էր եւ նկատելի զգաստացնող ազդեցություն է գործել Դարալագյազի բոլշևության ու նրա առաջնորդների վրա, բայց «... Նախիջեւանի եւ եայլաների թիւրքերը անտարբեր չեն մնալու ու վրէժխնդրութեան փորձեր են անելու: Ուրեմն շրջանը պէտք էր նախապատրաստել հաւանական նոր դէպքերի համար...»[64]:

Իրոք, հետագա դեպքերը գալիս են հաստատելու, որ թուրքերը հեշտությամբ չէին մարսելու Իթղռան գյուղի կործանման խայտառակությունը: Շուտով հայտնի է դառնում այդ կապակցությամբ նրանց մտահղացած իրական նպատակադրությունը: Պարզվում է, որ թուրքերը ձեռնամուխ են լինում կուտակելու նոր մարտական ուժեր եւ նախապատրաստվում հարձակվելու Դարալագյազի Փաշալուի շրջանի ամենամեծ գյուղի՝ Մարտիրոսի վրա: Նրանց նպատակը միանգամայն պարզ էր: Մարտիրոս գյուղը իշխող դիրք ունի հայկական մյուս գյուղերի նկատմամբ: Եթե թուրքերին հաջողվեր ընկճել Մարտիրոսի պաշտպանների դիմադրությունն ու գրավել գյուղը, ապա նրանց մեծ հնարավորություն կընձեռվեր առավել դյուրությամբ ոչնչացնել նաեւ հայկական մյուս գյուղերը[65]:

Այդ պատճառով Դարալագյազի հայության, ինչպես նաեւ սահմանամերձ Նախիջեւանի հայության համար Մարտիրոս գյուղի ինքնապաշտպանության կազմակերպումը ձեռք է բերում հույժ կարեւորագույն նշանակություն: Իրենց ծրագրերը կենսագործելու նպատակով, թուրք պարագլուխները քոչվորների հոտերը վաղօրոք բարձրացնում եւ գրավում են Մարտիրոս գյուղին պատկանող արոտատեղերը, որով ստեղծում յուրօրինակ հարմարավետ հենակետեր, որոնք շնորհիվ իրենց իշխող դիրքերի, մեծ առավելություններ են շնորհում թուրքերին՝ առավել հեշտությամբ իրականացնել Մարտիրոս գյուղի վրա նախատեսված հարձակումը: Դարալագյազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ճիշտ գնահատելով ստեղծված կացությունը, իր հերթին ձեռնարկում է համապատասխան քայլեր եւ հանձնարարում Դարալագյազի հայկական գյուղերի բնակիչներին ակնդետ հետեւել թուրքերի տեղաշարժերին ու իրենց տեսածների մասին ժամանակին տեղյակ պահել շրջանի մարտական ուժերի հրամանատարությանը եւ անձամբ Առյուծ Ավագին[66]:

Հայ գյուղացիների տեղեկություններից հայտնի է դառնում, որ թուրք առաջնորդները շտապ կարգով կենտրոնացնում են նոր զինական ուժեր եւ պատրաստվում ձեռնարկելու ծավալուն գործողություններ:

«Առյուծ Ավագը, - գրում է Ա.Աստվածատրյանը, - իր եւ տեղական բոլոր զինուորներին հաւաքեց Մարտիրոս՝ մի խումբ թողնելով Փաշալու...

Զինուորներին տեղաւորելով Մարտիրոսում, Ավագը կարգադրեց, որ նրանք ցերեկը բնաւ չերեւան իրենց ծածկուած տեղերից անգամ հայ գիւղացուց: Նոյն արեց նաեւ ինքը: Դրսի հետ կապ էր պահում երկու-երեք տեղացի վստահելի տղաների միջոցով»[67]:

Առյուծ Ավագի առաջնորդած՝ գյուղը պաշտպանող մարտական ուժերը թուրք հրոսակախմբերի գրոհները հաջողությամբ դիմագրավելու ու նրանց պարտության մատնելու նպատակով մշակում են կռիվները կենսագործել հակառակորդի համար բոլորովին անհասկանալի, ճկուն եւ համակողմանիորեն կշռադատված մարտավարությամբ:

Ըստ Դարալագյազի դեպքերը ներկայացնող վավերագրի, հայ մարտական ուժերի հարձակումը հակառակորդի համար պիտի լիներ միանգամայն անսպասելի ու սրընթաց: Համաձայն մշակված մարտավարության, հայ մարտական ուժերը եւ Մարտիրոս գյուղի բնակչությունը պիտի բնավ ցույց չտային, որ տեղյակ են թշնամու մտադրություններին եւ շարունակելով իրենց ամենօրյա խաղաղ աշխատանքը եւ դրանով կարողանային թուրք պարագլուխներին վստահեցնել, որ իրենք որեւէ քայլ չեն ձեռնարկում գյուղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար[68]:

Ավելին, հակառակորդի զգոնությունը բթացնելու, նրանց ապակողմնորոշելու նպատակով լուրեր են տարածում, թե իբր հայրուկները

հեռացել են իրենց շրջանից: Հիրավի, հիացմունքի է արժանի գյուղի ինքնապաշտպանության կազմակերպման գործում Մեծ հայդուկապետ Աղբյուր Սերոբի գինակից Առյուծ Ավագի դրսեւորած ռազմագիտական ունակությունն ու կիրառած խելամիտ մարտավարությունը [69]:

Մարտիրոսի ինքնապաշտպանական կռվի ընթացքը առավել մանրամասնորեն ներկայացնում է Ա.Ագնավուրյանը:

«Հայրենիք» ամսագրում տպագրած հոդվածում ներկայացնելով Մարտիրոս գյուղի ինքնապաշտպանության կազմակերպման մանրամասները՝ Արամայիս Ագնավուրյանը նշում է. «Աւագը կարգադրեց բոլոր կանանց ու երեխաներին տեղափոխելու գիւղի ետին մասը: Բոլոր կռուողներին հաւաքեց գիւղի այն մասում, որն առաջին հերթին ենթարկուելու էր յարձակման: Նշանակեց դիրքեր գիւղում եւ գիւղից դուրս, բայց աննկատ: Հրահանգեց, որ վաղ առաւօտեան, ըստ սովորականի թոնիրները վառեն... Զինուորներին հրամայեց, որ մինչեւ իր նշանը կենդանութեան նշոյլ ցոյց չտան, իսկ երբ կրակը լսեն, անխնայ կրակ բանան նաեւ իրենք» [70]:

Տեսնելով գյուղի պաշտպանությունը կազմակերպելու համար ձեռնարկած քայլերը, Մարտիրոսի բնակիչները ավելի են ոգեշնչվում եւ մարտականորեն տրամադրվում: Նրանք արդեն դույզն- ինչ չէին կասկածում, որ իրենք անպայմանորեն կկարողանան դիմագրավել հակառակորդին եւ Իթդռանից հետո տոնել երկրորդ հաղթանակը:

Թուրքերը երկար սպասեցնել չեն տալիս, միավորելով զգալի քանակությամբ մարտական ուժեր, նրանք մոտենում են Մարտիրոսին: Ա.Աստվածատրյանը իր վերոհիշյալ հոդվածում չի նշում Մարտիրոս գյուղի կռվի ստույգ օրը, սակայն համաձայն Դարալագյազի դեպքերը ներկայացնող վերոհիշյալ վավերագրի, ուր բացակայում է հայ մարտական ուժերի հրամանատարի՝ Առյուծ Ավագի անունը, նշվում է, որ այն տեղի է ունեցել «... յունիսի կեսերին եւ հայերը մեծ յաղթութիւն են տարել...» [71]:

Թուրքերի տեղաշարժերին ակնդետ հետեւող հետախույզները Առյուծ Ավագին հայտնում են Մարտիրոսի վրա շարժվող թուրք խառնիճաղանճ զանգվածի հայտնվելու մասին: Ընդամին գյուղի վրա հարձակվող բազմության առջեւից ընթանում էին զինված հեծյալ ու հետեւակ տղամարդիկ, իսկ նրանց հետեւից անզեններն եւ անգամ կանայք, որոնք իրենց հետ բերում էին էշեր ու ջորիներ, որպեսզի նրանց վրա բարձեին հայ գյուղացիներից բռնագավթած ունեցվածքը:

Առյուծ Ավագը որոշում է թողնել թուրքերին, որպեսզի նրանք հանգիստ ու անհոգ մոտենան իրենց դիրքերին եւ անակնկալ ու հզոր հա-

կագրոհ ձեռնարկելով՝ նրանց քշել ձորերը եւ Փաշալուի մարտական խմբի աջակցությամբ երկու կողմից տեղացող հարվածներով՝ գլխովին ջախջախել թուրք հրոսակախմբերը [72]:

Հակառակորդն անտեղյակ հայերի պատրաստվածությունից, անկանոն, խառնիխուռն դասավորվածությամբ, անհոգ ու չափազանց ինքնավստահությամբ համարձակորեն լուսաբացին մոտենում է գյուղի պաշտպանների դիրքերին: Նրանց հետեւից գյուղին են մոտենում նաեւ ավարառու բազմությունը, թուրք խուժանը:

Իսկ այդ ընթացքում Առյուծ Ավագը հանգիստ ու սառնարյուն դիտում է թուրք բազմության այդ «հաղթական երթը» եւ հարմար դիտակետ ընտրելով՝ ղեկավարում է գյուղի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները: Նրա կարգադրությամբ «...գիւղի տղամարդիկ անհանգստութեան նշաններ են ցոյց տալիս, ներս ու դուրս են անում, այս ու այն կողմ վազում, գիւղի վտանգուած քաղից դէպի հեռաւորն ու ապահովը քաշուելու ցոյց էր անում....

Այդ ամէնը թուրքերի վրայ այն տպաւորութիւնը պիտի թողնեն, որ գիւղն անակնկալի է եկել» [73]:

Իրոք, հարձակվողները տեսնելով, որ իրենց ձեռնարկումներին անտեղյակ հայերը որեւէ կերպ չեն պատրաստվում զենքի դիմելու, ավելի են ոգեւորվում եւ գյուղին հասնելուն պես անկանոն համազարկեր են տեղում ու վայրի աղաղակներ արձակելով՝ նետվում գրոհի: Հակառակորդի տեղաշարժերին ուշադրությամբ հետեւող Առյուծ Ավագը «... թոյլ տուեց, որ թուրքերը բոլորովին մօտենան գիւղին, որպէսզի նրանց նահանջ-փախուստը դժուարացնի ու ապա՝ որպէսզի տղաների գնդակները չվրիպեն: Երբ ժամանակը եկաւ, նրա տուած նշանից յետոյ հայ զինուորները գիւղից ու նրա մօտերից կարկտի պէս գնդակներ թափեցին թուրքերի գլխին: Վերջիններս սարսափելի խուճապի մատնուեցին» [74]:

Մարտը վարելու Առյուծ Ավագի կիրառած մարտավարությունը պսակվում է լիակատար հաջողությամբ: Հայ մարտիկների անակնկալ ու կազմակերպված հարվածներից խուճապի եւ ահ ու սարսափի մատնված թուրքերը դիմում են փախուստի եւ թափվում Մարտիրոս գյուղի մերձակա ձորերը:

Փաշալուի մարտական խումբը, համաձայն վաղօրոք մշակած մարտավարության, նախանշված ժամանակին հայտնվում է մարտադաշտում եւ հարձակվում խուճապի մատնված թշնամու վրա: Երկու կողմից կրակների հարվածների տակ հայտնված թուրք զինյալներին ու նրանց հետեւող ավարառուներին այլեւս ոչինչ չէր մնում անելու: Նրանք «Ա-

ննաած երկու կրակի մէջ, թուրքերը իրենց բոլորովին կորցրին ու «Ալլահ, Ալլահ» գոչելով, նետեցին իրենց քարերից ու թուփերից»[75]:

Հայ ինքնապաշտպանական ուժերը Իթրոանի կռվից հետո տոնում են երկրորդ նշանակալի հաղթանակը: Եզրափակելով Մարտիրոս գյուղի համար տեղի ունեցած կռվի մանրամասները ներկայացվող պատմությունը՝ Ա. Աստվածատրյանը նշում է. «Թուրքերի կորուստը մեծ էր. նրանք մեծ թոմով սպանուածներ ու վիրաւորուածներ տուին:

Իսկ այդ պարտութիւնը թուրքերի մէջքը կոտրեց ու այլեւս անընդունակ դարձրեց նրանց որեւէ նախայարձակման»[76]:

Իթրոանի եւ Մարտիրոսի մարտերում հայ մարտական ուժերի ձեռք բերած անվիճելի հաղթանակի եւ կռվում հայ մարտիկների դրսեւորած խիզախության ու հրամանատարության կիրառած մարտավարության մասին, թեեւ չի նշում հրամանատարների անունները, ըստ արժանավույն է գնահատում Դարալագյազի դեպքերի որոշ մանրամասները ներկայացնող վավերագրությունը[77]:

Համաձայն այդ վավերագրի, Իթրոանի եւ Մարտիրոսի կռիվներում հայ մարտական ուժերը ոչ միայն փառահեղ հաղթանակ էին նվաճել, այլեւ այնպիսի սարսափ էին տարածել, որով կտրուկ կերպով փոխել էին թուրքերի նախկին մարտական տրամադրվածությունն ու հայերի նկատմամբ տածած արհամարհական վերաբերմունքը:

Վավերագրի գնահատմամբ՝ այդ հաղթական կռիվներից հետո, դրության տերն արդեն հայն էր[78]:

Իթրոանի կռվում հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակը, իր կազմած վերոհիշյալ տեղեկագրում մոայլ գույներով է ներկայացնում գեներալ Ալիխանով-Ավարսկին:

Դույզն-ինչ չանդրադառնալով հայկական գյուղերում թուրք հրոսակախմբերի սանձազերծած կոտորածների ու ավարառության մանրամասներին՝ գեներալը հայ մարտական ուժերի գործողությունների, մասնավորապես Իթրոանի դեպքի մասին գրում է հետեւյալը. «Այժմ որեւէ կասկած լինել չի կարող, որ հայկական շարժման ղեկավարներն են կազմակերպել անսպասելի հարձակումները Երեւանի, Ղամառլուի եւ Իթրոանի թաթարների վրա...

Հայերի կատարած գազանային արարքները այդ փոքրիկ թաթարական գյուղում (նկատի ունի Իթրոանը-Հ.Գ.), գերազանցեց այն ամենը, ինչը կարել է երեւակայել: Սպանված են ավելի քան 50 տղամարդ, կին եւ երեխա...Բացի դրանից, թաթարներին հատկապես զայրացրել է այն հանգամանքը, որ հայերը իրենց հետ տարել են մի քանի կանանց»[79]:

Իթրոանի ու Մարտիրոսի կռիվներից հետո որոշակի տարածայնություններ են արմատավորվում Դարալագյազի ՀՅԴ շրջանային կոմիտեի անդամների, մասնավորապես Երեւանի նահանգի ՀՅԴ «Միգաստան» կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Ա. Աստվածատրյանի եւ Առյուծ Ավագի ու Սարգավակի միջեւ: Նրանց հարաբերությունն այնպիսի լարվածության է հասնում, որը Ա. Աստվածատրյանը հարկադրված հեռանում է Դարալագյազից:

Ա. Աստվածատրյանի պնդմամբ, Իթրոանի եւ Մարտիրոսի դեպքերից հետո Առյուծ Ավագի վերաբերմունքը գյուղացիների նկատմամբ նկատելիորեն փոխվում է: Դրանից առաջ եթե կես կատակ, կես լուրջ արհամարհանքով է արտահայտվում միայն «կենտրոնում նստած մեծերի» նկատմամբ, ապա այժմ արդեն նա ոչ միայն գոռոզամտությամբ ու արհամարհանքով էր վերաբերվում տեղացիներին, այլեւ թույլ էր տալիս անհադուրժելի արարքներ[80]:

«Այսպես, օրինակ, երբ նա անցներ փողոցով ու այնտեղ նստած ծեր գյուղացիք քիչ ուշ ոտքի ելնեին եւ խոնարհ գլուխ տային, կառներն նրանց մտրակի տակ: Պատահել է, որ նա խփել է նաեւ կանանց: Գիւղացիք Ավագին շատ հարգում ու սիրում էին, բայց նրա այդ անմիտ ու կոպիտ վարմունքներն ընդհանուր հիասթափություն առաջ բերին...»[81]:

Դարալագյազի դեպքերը ներկայացնող վերոհիշյալ վավերագրության հավաստմամբ Առյուծ Ավագը իր կրքերին հագուրդ տալու համար, երբեմն բռնությամբ տիրացել է հայ կանանց եւ շատ հաճախ բոլորովին անտեղի ծեծի է ենթարկել բազմաթիվ գյուղացիների:

Թշնամու սարսափն ու ժողովրդի կողմից սիրված ու հարգված առասպելական հերոս Առյուծ Ավագը իր անբարոյական ու սանձարձակ վարքի պատճառով հայ գյուղացու համար դառնում է անհանդուրժելի ու չարիք[82]:

Առյուծ Ավագի վարքն ու պահվածքը բնականաբար պիտի մտահոգություն պատճառեր Վայոց Ձորի ՀՅԴ շրջանային կոմիտեին, որի նկատմամբ Առյուծ Ավագը սկսել էր վերաբերվել ընդգծված քամահրանքով ու անհադուրժողականությամբ:

Ա. Աստվածյանը մեկնում է Երեւան, տեղի կենտր կոմիտեին ու Նահանգի Զինվորական մարմնին ներկայացնելու Առյուծ Ավագի վարքագիծն ու արարքները: Բացի դրանից, նա նաեւ ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կեմիտեի հանձնարարությամբ Զինվորական մարմնից պիտի պահանջեր Առյուծ Ավագի փոխարեն մեկ այլ խմբապետ ուժարկել Դարալագյազի շրջան[83]:

Քանի որ այդ ժամանակ Նիկոլ Դումանը բացակայում էր Երեւանից, նա ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կոմիտեի պահանջները եւ Առյուծ Ավագի արարքների մասին ներկայացրել է Դումանի օգնական Ս. Օհանջանյանին, որը ուշադրությամբ լսել է նրա հաղորդածը, ապա խիստ բարկացկոտ տոնով պատասխանել.«-Ի՞նչ սարսաղ մարդիկ եք: Առյուծ Ավագը ձեր շրջանը փրկել է ահագին վտանգից, եւ դուք պահանջում եք հեռացնել նրան: Դուք էն ասեք՝ կարող եք առանց Առյուծների յոլա գնալ: Ո՛չ չեք կարող: Իսկ եթե նա մարդկանց թակում է եւ էլ չգիտեմ ի՛նչ է անում, ջհա՛նննամը...»:

Ս. Օհանջանյանը մերժում է Դարալագյազի շրջանը նոր խմբապետ ուղարկելու ՀՅԴ Վայոց Ձորի շրջանային կոմիտեի պահանջը՝ պատճառաբանելով. «Դուք կարծում եք, որ մի ուրիշն ուղարկենք, Ավագից լա՞վ կլինի,-լրջացած շարունակեց նա,-ուր մնաց, որ չունենք էլ: Մեր ամենայն խմբապետները բոլորը գործի վրա են: Երկրորդական խմբապետը Ավագի տեղը չի կարող բռնել, նրա գործը չի կարող անել: Փառք տվեք աստծուն, որ Առյուծի պես խմբապետ է եկել ձեր շրջանը»[84]:

Եթե Ս. Օհանջանյանի համար զինվորի բարձրագույն արժեքը մարտադաշտում ցույց տված նրա քաջագործություններն էին եւ նա կարող էր հաշվի չառնել զինվորի ու առավել եւս հրամանատարի բարոյական նկարագիրն ու ժողովրդի նկատմամբ նրա դրսեւորած վերաբերմունքը, ապա Նիկոլ Դումանը այս հարցում եղել է ավելի քան սկզբունքային ու խիստ: Նա չի հանդուրժել որեւէ մեկին, թեկուզ նա լիներ չափազանց քաջ, եթե թույլ էր տալիս ընկերների, առավել եւս հայ մարդու, հայ գյուղացու նկատմամբ անբարոյական ու անհանդուրժելի արարքներ: Հայրենիքի նվիրյալ զինվորը, Նիկոլ Դումանի գնահատմամբ, ոչ միայն պիտի աչքի ընկներ մարտադաշտում ցուցաբերած քաջությամբ, այլեւ օրինակ պիտի ծառայեր իր բարոյական նկարագրով, համեստությամբ ու ժողովրդին ծառայելու անշահախնդիր նվիրվածությամբ ու պատրաստակամությամբ:

Նրա համոզմունքով զինվորին արժեքավորող բավարար չափանիշը միայն քաջությունը չէր. «Նա,- նկատում է Դրոն,- շատ մեծ կարեւորություն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեանը եւ գաղափարական անձնազոհությունը: Նա պահանջում էր, որ դաշնակցականը իր կեանքով ու գործով օրինակ լինի ժողովուրդին»[85]:

Տեղեկանալով Դարալագյազում Առյուծ Ավագի թույլ տված անբարո արարքների մասին, նա այդ գավառակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը հանձնարարում է Տարոնի անվանի հայդուկ Հաճի Հակոբ Կոտոյանին, իսկ Առյուծ Ավագին ու Չոփուռ Արսենին նշանակում նրա օգնականներ: Միաժամանակ, զգուշացնում է Առյուծ Ավագին, որ խիստ կերպով կպատժի, եթե նա փորձի կրկնել նախկին անբարո արարքները:

Առյուծ Ավագը թեեւ դժկամությամբ, բայց լռությամբ ընդունում է խստաբարո հրամանատարի որոշումը եւ Դարալագյազի շրջանում տեղի ունեցած բոլոր մարտերում դարձյալ աչքի է ընկնում իր անզուգական քաջագործություններով:

Նրա մասնակցությամբ Դարալագյազում տեղի ունեցած կռիվների մասին նկատելի ջերմությամբ «ՎԵՄ» հանդեսում տպագրված հուշերում պատմում է նաեւ Դրոն:

1905 թ. օգոստոսին Նիկոլ Դումանը մի փոքրիկ մարտախումբ վստահելով՝ նրան ուղարկում է Լեռնային Նախիջեւան: Մինչեւ Լեռնային Նախիջեւան անցնելը, Դրոն մի քանի օր անցկացնում է Դարալագյազում, ուր ինքնապաշտպանության ղեկն ստանձնել էին Հաճի Հակոբ Կոտոյանը եւ նրա օգնականներ Առյուծ Ավագն ու Չոփուռ Արսենը:

Անդրանիկի եւ Գեւորգ Չավուշի զինակից Հաճի Հակոբ Կոտոյանը թեեւ իր ֆիդայական փորձառությամբ եւ անձնական քաջությամբ գուցեեւ փոքր-ինչ զիջում էր Առյուծ Ավագին, բայց նույնպես քաջ ֆիդայի էր եւ իր կազմակերպական ընդունակություններով ու մանավանդ բարոյական նկարագրով եւ գյուղացիների նկատմամբ դրսեւորած վերաբերմունքով գերազանցում էր Առյուծ Ավագին: Պատահական չէր, որ Նիկոլ Դումանը հենց նրան էր վստահել Դարալագյազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը:

Իհարկե, դյուրին չէր ստանձնել ստանձնել մի այնպիսի ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը, որտեղ արդեն մեծ կշիռ ու հեղինակություն ունեին Առյուծ Ավագի ու Չոփուռ Արսենի նման անվանի ռազմիկները: Բացի դրանից նկատվում էր որոշակի անհամաձայնություն, սառնություն ու անախորժություն արեւմտահայ եւ արեւելահայ ռազմիկների միջեւ:

Վ. Փափազյանի խոստովանությամբ «ժամանակ մը հակամարտութիւն եւ անախորժ շարժումներ նկատուեցան կովկասցի եւ թրքահայ մարտիկներու միջեւ- «թրքահայ եւ ռուսահայ» յարուցած անմիտ հարցն էր նորէն որ խուլ բրթմնջուններու առարկայ դարձած էր»:

Որպեսզի Դարալագյազի ինքնապաշտպանությունը դրվեր առավել կայուն եւ հուսալի հիմքերի վրա, նախեւառաջ անհրաժեշտ էր արմատախիլ անել արեւմտահայ եւ արեւելահայ ռազմիկների միջեւ առաջացած չափազանց վտանգավոր տարաձայնություններն ու սառնությունը եւ

կազմավորել կարգապահ, համերաշխ ու քաջավարժ զինվորներից բաղկացած մարտական խմբեր:

Վահան Փափազյանը իր «Խոնարհի հերոսներ» գրքում համառոտակիորեն ներկայացնելով Հաճի Հակոբի կյանքն ու գործունեությունը, ընդգծում է նաեւ այն պահը, երբ նա դիմելով արեւմտահայ զինվորներին, որոնք բարձրից էին նայում արեւելահայ զինվորներին՝ ասում է. «Դո՛ւք, Տարօնէն կամ Վասպուրականէն եկած մարտիկներդ, երեւի կը կարծէք թէ դուք էք որ կաք...դո՛ւք միայն գիտեք կռուիլ, գիտցէ՛ք որ կովկասցիները, ահա ասոնք, որ խոնարհ, կարգապահ կանգնած են կողքիս, ձեզի պէս եւ շատերը ձեզմէ ա՛լ աւելի փորձառու, խելացի եւ յանդուգն կռուողներ են: Դուք ամէնքդ միեւնոյն սուրբ գործին եկած էք ծառայելու, այսուհետեւ եթէ ամենափոքր հակաեղբայրական արարք մը նկատեմ, զինուրական դատարանին կը յանձնուիք...իսկ հիմա, ով որ պիտի չհնազանդի, թող զէնքերը թափէ հոս, եւ այժմէն կորսուի աչքէս...»[86]:

Հաճի Հակոբը կարողանում է ամուր կարգապահություն հաստատել մարտիկների շարքերում եւ ավելի ամրապնդել ու կայուն հիմքերի վրա դնել գավառակի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանությունը:

Չնայած կռիվներում նվաճած հաղթանակներին, որոշակի սառնություն եւ լարվածություն էր արմատավորվել Տարոնի այդ երկու անվանի հայդուկների միջեւ: Աղբյուր Սերոբի զինակից Առյուծ Ավագը չէր կարողանում հաշտվել այն իրողությանը, որ «Քաչալ Անդրանիկի» (այդպես են Անդրանիկին անվանել Աղբյուր Սերոբի զինվորները - Հ.Գ.) զինվորը՝ Հաճի Հակոբը, կարող է լինել Սերոբ Փաշի զինվորի հրամանատարը, իսկ նրա խորին համոզմամբ Սերոբից մեծ եւ քաջ մարդ աշխարհում գոյություն չուներ:

«- Հէյ-Հէ՛յ աշխարհ, քեզ հիմ դնողին ի՞նչ ըսեմ, - գանգատվում էր նա, - Սերոբ Փաշի մահէն ետ Քաչալ Անդրանիկ ընոր փոխնորդ ի դառի, էնօր ֆոլտաղչի (խաբեբա) զինուորն էլ, հրամանատար ի դարձի իմ գլխին, վայ լըմըն բաւդ, էդ յուր հասանք... Քո տունն աւրի, աշխարհ..»[87]:

Դարալագյազի կռիվներին նվիրված իր հուշագրությունում Դրոն մեծ ջերմությամբ ու հիացմունքով է նկարագրում արեւմտահայ փորձառու ֆիդայիների եւ հատկապես Առյուծ Ավագի քաջագործությունները[88]:

Աղբյուր Սերոբի մարտական զինակից, բազմաթիվ արիավիրքներով անցած ֆիդային վիրավորանքով ու հիվանդագին է ընդունում այդ նշանակումը, կարծելով, որ Հաճի Հակոբը կարող էր սեփականացնել իր մարտական փառքը:

Սուլթանաբեկի նշանավոր կռվից հետո, երբ հայ մարտական ուժերը Առյուծ Ավագի գլխավորությամբ նվաճում են կարեւորագույն հաղթանակ, նրա դժգոհությունն ավելի է մեծանում: Նրան թվում է, որ իր կատարած սխրագործությունները յուրացնելով՝ Հաճի Հակոբը անուն եւ փառք է ձեռք բերում: Իր մտահոգությունները Դրոյին դառնությամբ արտահայտելով՝ շեշտում է. «- Մըր ամակ ջուր կըլնի, մըր քաջութիւն կը կորսուի:

Հէյ-Հէ՛յ, Սերոբ փաշա, քեռ գերեզմանին մըռնիմ, քեռ զինուորներ քաջութիւն կէնիեն, իդա ֆոլտաղ (խաբեբա) Կոտոյի Հաճին կը շահուի:

...Քեռ տեսած (նկատի ունի Սուլթանաբեկի կռիվը - Հ.Գ.) գրէ պ. Դումանին. թէ չէ մենք կը կռուինք, քաջութիւն կէնինք, դա քեռփակ օղլի ֆոլտաղ Կոտոյի Հաճին թուղթ կը գրէ ու մըր քաջութիւն իրեն կը վերագրէ: Վա՛յ լըմըն աշխարհ, քեռ հիմ դնողին ինչ ըսիմ»[89]:

Դարալագյազի մարտերի ժամանակ, երբ հրամանատարն արդեն Հաճի Հակոբն էր, Առյուծ Ավագը դարձյալ կռվում էր քաջաբար, բայց վիրավորանքն իրեն զգացնել է տալիս եւ նա հաճախակի խախտում էր մարտական կարգապահությունը: Դումանը, լսելով նրա անկարգապահ վարքի մասին, հրաման է ուղարկում նրան՝ հանձնել զենքերն ու գալ Երեւան: Զենքի հանձնումը հայդուկի համար ամենամեծ պատիժն ու անարգանքն էր: Բայց ի՞նչ կարող էր անել. «Մխր ի՞նչ անեմ, որ Դաշնակցութեան կարմիր կնիքը կայ հրամանի տակ, ու Նիկօլի հրամանը»[90]:

Երեւանում Դումանը խիստ հանդիմանում է Ավագին եւ ցույց է տալիս Հաճի Հակոբի նամականը, որտեղ նա արժանիորեն գնահատել էր նրա քաջագործությունները: Առյուծ Ավագը ամոթից ծունկի է գալիս եւ ասում. «Սպանիր, պ. Նիկօլ, սպանիր ինձ...»[91]:

Հաճի Հակոբը փայլուն կերպով է կազմակերպում Դարալագյազի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանությունը: Նրա հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերը ոչ միայն կարողանում են մեծ հաջողությամբ պաշտպանել հայկական բնակավայրերի անվտանգությունը, այլեւ նախահարձակ լինելով՝ տոնում մի շարք անվիճելի հաղթանակներ եւ ի պատասխան հայկական գյուղերում թուրք հրոսակախմբերի կատարած անկարագրելի չարագործությունների, քանդում ու ավերակույտերի են վերածում մի շարք թուրքաբնակ գյուղեր:

Արժանիորեն գնահատելով Դարալագյազի գավառակի ինքնապաշտպանության կազմակերպման գործում Հաճի Հակոբի ծառայությունն ու ներդրումը՝ Վ. Փափազյանը նշում է. «1905-ի հայ-թաթարական

կռիւներուատեն, Կոտօի Հաճին Կովկաս էր: Նիկոլ Դումանի կարգադրութեամբ Զանգեզուրի ինքնապաշտպանութիւնը անոր յանձնուեցաւ:

Վրէժխնդիր Նէմէիսն էր կարծես նստած հոն...Անխնայօրէն ջնջեց շրջանի բաթարական գիւղերը, չնայեց ոչ որի...Անոնց արիւնով կուգէր մեղմել բոցերը Տարօնի ավերման.

Ռազմական եւ վարչական դեկաւար մեծ ոյժ դարձած էր սիրելի լեռնային այդ շրջանի հայութեան: Իր հրամանին տակ էին Կովկասեան եւ Հայաստանէն եկած փայլուն ուժերէ շատեր...»[92]:

Մի փոքրիկ ճշտում: Վ. Փափազյանը չփոթում է՝ նշելով, որ «Նիկոլ Դումանի կարգադրութեամբ Զանգեզուրի ինքնապաշտպանութիւնը անոր յանձնուեցաւ»: Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Նիկոլ Դումանը հանձնարարել է ոչ թե Հաճի Հակոբին, այլ Սեբաստացի Մուրադին:

Դումանը, ինչպես արդեն նշվել է, մեծ ուշադրություն էր դարձնում զինվորների բարոյական մաքրության եւ զինվորական կարգապահության հարցերին: Եվ մարտական կարգապահությունը խախտելու դեպքում չէր զլանում ամենախիստ պատժի ենթարկել նույնիսկ, նախկինում քաջ ռազմիկի անուն վաստակած հայ զինվորներին:

Հայ-թուրքական ընդհարումների մանրամասների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ կովկասահայության ինքնապաշտպանության գործում ներդրած մեծագույն ծառայությանը, իրենց անկարգապահ, իսկ երբեմն անբարո պահվածքով առավելապես աչքի են ընկել արեւմտահայ ֆիդայիները:

Այս կապակցությամբ Վ. Փափազյանը նշում է.«Յիշէր եմ արդէն, որ Տարօն-Սասունէն եկած բազմաթիւ զինուորներն ու խմբապետները գործօն մասնակցութիւն ունէին կռիւներու ղեկաւարութեան մէջ: Ամենէն դժուարը զանոնք կառաւարելն էր. կարգապահական կանոններու ենթարկուելու վարժութիւններ չունէին: Նոյնիսկ Դումանի նման մեծ ղեկաւարի բոլոր ջանքերը «կարգ մտցնելու» այդ ըմբոստ մարդոց մէջ, ապարդիւն անցան...»[93]:

Պիտի նկատել, որ թշնամու դեմ քաջաբար մարտնչող եւ մինչեւ անգամ իր կյանքը հանուն հայրենիքի ազատագրության գոհաբերելու պատրաստակամություն դրսեւորած ֆիդային երբեմն իր անբարո պահվածքով եւ տգեղ վարքագծով տեղիք է տվել հայ բնակչության վրդովմունքի ու բողոքների:

Հայ ֆիդայիների միջավայրում արմատավորված անբարո եւ տգեղ վարքագծի մասին Դումանը ՀՅԴ բյուրոյին հասցեագրած նամակներից

մեկում ակնարկել ու զգուշացրել էր դեռեւս Խանասորի արշավանքի նախօրեին, Խոյ-Սալմաստի շրջանում գտնվելու ժամանակ:

«Ամբողջ հինգ տարի շարունակ ու անկերջ,-գրում է Դումանը,-համարձակ ու անպատիժ, մինը միւսից աւելի խայտառակ, Միաբերթում(նկատի ունի Սալմաստի շրջանը-Հ. Գ.) յաջորդում են իրար գարշելի դէպքեր: Բռնութիւններն ու բռնաբարումները, լկտիութիւններն ու առեւանգումները, սպանութիւններն ու այլ գազանական գործողութիւնները ստեղծեցին զգուանքի մի հեղեղ, որ ողողեց ամբողջ աշխարհը եւ, իբրեւ արատ ու նախատինք, «Եղիչերի» անունը դրոշմեց հայդուկի ճակատին ժողովրդի բերանից: Հայդուկների այդ զազրելի արարքներից ժողովուրդը սեւ քող հիւսեց եւ ձգեց նրան «ֆիդայիի» փառաւոր անուան վրայ: Եւ, իբրեւ տխուր արձագանք, հայ մամուլը բարձրացրեց իր ձայնը, նրան միացաւ օտար մամուլը, նոյնիսկ «Դրօշակը» բողոքեց բարձրագոչ»[94]:

Ի՞նչ պիտի արվեր այդ խայտառակ իրավիճակը շտկելու եւ հայդուկի պատիվն ու կշիռը վերստին բարձրացնելու համար: Դումանն այս հարցում մեղադրելով ընկերներին, առաջարկում է դիմել ամենեւս ծայրահեղ միջոցի, այն է՝ «...սպասում ենք, որ դուք եւս կորոշեք համբերութեան սահմանը եւ սրբէք զէնքով այդ ամօթն ու արատը:

Գիտենք, ծանր բաժին է վիճակում Չեզ-դժուար է զէնքը թշնամուց դարձնել դէպի նախկին ընկերը-բայց. ցաւելով պիտի ասենք, որ այդ է մնացել միակ ելք, որ մաքրելով աստպարէզը թէկուզ այդ ծեւով՝ կը լինի մեծագոյն գործերից մէկը ներկայ պարագաներում»[95]:

Հայ-թուրքական ընդհարումների ավարտից հետո նախկինում իրենց սանձարձակ վարքով հայտնի ֆիդայիները, որոնք դեռեւս մնացել էին տարբեր շրջաններում, իրենց վարքագծով ու պահվածքով ավելի եւ խորացրել բնակչության դժգոհությունը:

«Գանգատներ,-շարունակում է Վ. Փափազյանը,- կուգային շրջաներէն. թէ «չատ պահանջկոտ են», բիչով բաւականար, «կոպիտ են», բռնութիւններ գործ կը դնեն, շրջանի մարմիններուն չեն ենթարկուիր...ու նման բազմաթիւ բողոքներ ժողովրդի եւ կազմակերպական տեղական մարմիններու կողմէ...»[96]:

Վ. Փափազյանի վկայությամբ, ժողովրդի կողմից հնչած բողոքներն առավելապես վերաբերում էին արեւմտահայ հանրահայտ ֆիդայիներ Առյուծ Ավագին եւ Սմբատ Բորոյանին(Մախլուտո)[97]:

Առյուծ Ավագի անբարո վարքագծի մասին կան բազմաթիվ վկայություններ:

Մշեցի ճշանավոր ֆիդայի Սմբատ Բորոյանը(Մախպուտո), որը Հայոց ազատամարտին զինվորագրվել էր դեռևս պատանի հասակում, եղել էր Արաբոյի, Աղբյուր Սերոբի զինվորը, ապա նաև Սասունի կռիվների ժամանակ մարտնչել էր Հրայր Դժոխքի, Գեւորգ Չավուշի, Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի զինակցությամբ, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ մեծ վարպետությամբ է ղեկավարել Դավալուի (Արարատի) եւ Ղամարլուի (Արտաշատ) շրջանների հայ ինքնապաշտպանական ուժերի մարտական գործողությունները: Այստեղներծ, գյուղացիների նկատմամբ երբեմն վերաբերվել է անհարկի կոպտությամբ ու արհարամանքով, որով հարուցել է նրանց գայրույթն ու բողոքը:

Մեղրակ Ջալալյանը(Սեթո) իր հուշերում ներկայացնում է իր եւ Սմբատի հանդիպումներից մի դեպք, որը տեղի է ունեցել Ապարանի շրջանի Սաշլու գյուղում:

Այդ օրը Սեթոն մարտախմբով ավազակներին հետապնդելիս, հանդիպել է ռուս զինվորների եւ խուսափելով անցանկալի հանդիպումից, կանգ է առել Սաշլու գյուղում:

Այդ նույն օրը Էջմիածինից ձիավորներով գյուղ էր եկել նաեւ Սմբատը, որը ՀՅԴ «Մրգաստան» կենտրոնական կոմիտեի եւ Երեւանի Զինվորական մարմնի հանձնարարությամբ եկել էր Ապարանի շրջան, որպեսզի Սեթոյի գլխավորած մարտական խմբի համագործակցությամբ մաքրելու այդ եւ հարակից շրջաններն այնտեղ գործող ավազակախմբերից:

«Սմբատը,-գրում է Սեթոն,- կը ճանչնայի շատ մօտէն: Ուրախութեամբ ըշեցի ձիս եւ մոտեցայ որ բարեւեմ, բայց տեսայ, որ նա ժամանակ չունի նայելու մեր կողմը: Մտրակը բռնած ոտի գլխուն վերեւ կը պոռար ու կը սպառնար.

-Այս րոպէիս մէկ ջրւալ գարի կուգեմ ձիերուս համար, ապա թէ ոչ կաշիդ կը քերթեմ...»[98]:

Սեթոն գյուղի ոեսին Սմբատի հարվածներից փրկելու համար նրան համոզում է ձիուց իջնել եւ ապա հրավիրելով ոեսի սենյակը՝ ասում. «-Սմբա՛տ ջան, եթէ ես հիմա քեզմէ շոքոլա ուզեմ եւ դուն ըսես որ չունիմ, կռապա՞շտ եղած կըլլաս...Ասոնք շատ հիւրասեր մարդիկ են, առուտյտ որքան ուզեէիր, կը բերէին, բայց գարի, տարուան այս եղանակին, չունին որ տան: Յետոյ մի մոռնար, որ Սաշլու գիւղը ընտրեալ դաշնակցականներ են եւ անոնց հետ կարելի չէ մտրակով խօսիլ»[99]:

Թեպետ Վ. Փափազյանի գնահատմամբ «նոյնիսկ Դումանի նման մեծ ղեկաւարի բոլոր ջանքերը «կարգ մտցնելու» այդ ըմբոստ մարդոց

մէջ, ապարդիւն անցան...», այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Դումանի ուշադրությունից ու պատժից չի վրիպել ոչ մի կարգազանց զինվոր, անկախ նրա տարիքից, կոչումից ու վաստակից:

Նրա համոզմունքով զինվորին արժեքավորող բավարար չափանիշը միայն քաջությունը չէր. «Նա,- նկատում է Դրոն,- շատ մեծ կարեւորութիւն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեանը եւ գաղափարական անձնազոհությունը: Նա պահանջում էր, որ դաշնակցականը իր կեանքով ու գործով օրինակ լինի ժողովուրդին»[100]:

Առյուծ Ավագը մարտական կարգապահությունը պարբերաբար խախտելու, անբարոյական արարքներ կատարելու եւ ֆիդայու անունը պախարակելու համար, Դումանի հրամանով գնդակահարվում է:

Սմբատի գլխավորած մարտախումբ ցրվում է, իսկ խմբապետը Դումանի պատժից խուսափելով՝ հեռանում է Կովկասից:

Այստեղներծ, բերված օրինակները բոլորովին չեն նշանակում, որ արեւմտահայ բոլոր մարտիկները, թեեւ քաջ, բայց ունեին վերոհիշյալ ֆիդայիների բարոյական նկարագիրը: Բազմաթիվ են հայ-թուրքական ընդհարումներում իրենց քաջագործություններով եւ անբասիր վարքով փառաբանված բազում արեւմտահայ ֆիդայիներ, որոնք իրավամբ ու արժանիորեն վաստակեցին կովկասահայության խորին հարգանքն ու սերը:

Ուշագրավ է ու միանգամայն իրավացի հայ-թուրքական կռիվներին մասնակցած արեւմտահայ ֆիդայիներին տրված ՀՅԴ անվանի գործիչ Վալադ Վալադյանի բնութագիրը:

Ովքե՞ր էին արեւմտահայ ֆիդայիները, որոնք կովկասահայությանը սպառնացող մահացու վտանգի պահին եկել էին Կովկաս՝ գորավիգ կանգնելու իրենց արյունակիցներին:

Վ. Վալադյանի բնութագրմամբ նրանք սասունցի կամ Սասուն գնացած այն մարտիկներն էին(Սասնո սերունդ), որոնք շուրջ երկու տարի կուրծք էին տվել թշնամու ռումբերին ու գնդակներին: Ազատագրական պայքարի այդ երկու տարիները նրանց համար եղել են որպես ռազմական դաստիարակության միջոց, դպրոց ու մարզարան:

«...Տեւական գործակցութեան շնորհիւ,-գրում է Վ. Վալադյանը,- տեւականացաւ ու զօրացաւ յեղափոխական պայքարի ոգին: Ահա այդ ոգիով տոգորված սերնդին պատկանող հայդուկներն էին, որ Սասնոյ լեռներից նահանջելուց յետոյ, Վասպուրական-Սալմաստ գծով ու մաս-մաս անցնում են Կովկաս՝ ճիշտ հայ-թաթար բախումների նախօրէին»[101]:

2. Հայ-թուրքական բախումների գրեթե բոլոր ճակատներում մարտնչող արեւմտահայ հայդուկների զգալի մասը ազատագրական պայքարի այն սերունդն է, որը ըստ Վ. Վալադյանի, պատմության մեջ մնացել է «Խանասորի սերունդ» անունով:

Ըստ արժանվույնս գնահատելով ազատագրական պայքարում «Խանասորի սերունդ»-ի ծառայությունն ու վաստակը՝ Վ. Վալադյանը իրավացիորեն նշում է, որ այդ արշավանքը ծնեց գաղափարական ու մարտական կոփվածք ունեցող բազմաթիվ մարտիկների, որոնք հիշյալ թվականից սկսած մասնակցել են գրեթե բոլոր հեղափոխական ճեռնարկներին, հայդուկային կռիվներին ու ահաբեկչական գործողություններին:

«Այդ սերնդին պատկանողներից իւրաքանչիւրը իրա հետ կովկաս բերեց, անհատական քաջութիւնից ու փորձառութիւնից բացի, մի շքեղ նկարագիր: Այդ սերնդի էութիւնը ներկայացնելու համար, բաւական է անուններ միայն թվարկել.-Սեբաստացի Մուրադ, Քեռի, Կայծակ Առաքել, Գիւմուշխանեցի Աւետիս, Գոմսայ Իսօ, Սեպուհ, Կոփեցի Մուշեղ, Սէյդօ Պօղոս, Առիւծ Աւագ, Կոտոյի Հաճի, Մեշեդի Աւետիս եւ ուրիշներ...

Ամենն էլ, եթէ գործածելու լինենք վերի երկու ստորոգիչներից մէկը՝ արեւմտահայեր»[102]:

Ընդհարումների առաջին օրերին արեւմտահայ փորձառու հայդուկներից շատ քչերն էին գտնվում Կովկասում: Թուրք առաջնորդները իրենց հայակործան ծրագրերը մշակելիս անշուշտ հաշվի էին առել նաեւ այդ հանգամանքը: Բոլոր այն վտանգված շրջաններում, ուր եղել են տեղացի զինված մարտիկներ եւ գործել են փորձառու մարտական ուժեր, հաջողություններն ավելի քան ակնառու էին:

Ընդհարումների ժամանակ, հատկապես սկզբնական շրջանում, մի քանի վայրերում թուրքերի անակնկալ հարձակումների հետեւանքով հայերը հայտնվել են դժվարին իրավիճակում:

Օրինակ. այդ օրերին դարձյալ ամենատագնապալի լուրերը Երեւան էին հասնում Նախիջեւանից, ուր, ինչպես արդեն նշվել է, բնակվում էին մեծ թվով թուրքական խաներ եւ բեկեր, որոնք մահմեդական բնակչության շրջանում ունեին անառարկելի հեղինակություն: Ընդհարումների նախապատրաստական շրջանում եւ դրանից հետո գլխավորապես հենց նրանք էին զինում մահմեդական բնակչությանն ու նրան թշնամաբար տրամադրում հայերի նկատմամբ: Թուրք առաջնորդները կարողացել էին կաշառել ու շատ լավ գործնական հարաբերություններ

հաստատեն ռուս աստիճանավորների հետ: Նախիջեւանի մայիսյան արյունալի դեպքերը միանշանակորեն ապացուցեցին, որ այդ օրերին իշխանության ներկայացուցիչները եւ թուրք խաներն ու բեկերը գործում էին կատարյալ ներդաշնակությամբ եւ համաձայնեցված:

Ջանգեզուրի հոգեւոր առաջնորդ, Տաթեւի վանքի վանահայր արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանը, անդրադառնալով հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Նախիջեւանում տեղի ունեցած արյունալի դեպքերի բնութագրմանը, ընդգծում է. «Ռուս իշխանաւորները հեգնական ժպիտով կը դիտեին արիւնալի դէպքերը եւ փոխանակ դադրեցնելու, կրնէին անարժեք կարգադրութիւններ, որոնց հետեւանքը յաճախ այն կը լինէր, որ աւելի կը բորբոքէր թուրք խուժանի վայրագ հակումները հայոց դէմ»[103]:

Երեւան ժամանելու առաջին իսկ օրից Դումանը վճռական քայլեր է ձեռնարկում նաեւ Նախիջեւանի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ: Քանի որ մարտական ուժերը դեռեւս խիստ սահմանափակ էին, ուստի անհրաժեշտ էր գործել թուրքական կողմի համար անսպասելի եւ սարսափազդու մարտավարությամբ: Հավատարիմ իր դավանած մարտավարությանը, Դումանը որոշում է հարձակողական գործողություններ ձեռնարկել նաեւ Նախիջեւանի գավառում եւ թշնամուն ջախջախել հենց իր որջում:

Նախիջեւանում իրավիճակն, իրոք, եղել է չափազանց տագնապալի: Մայիսի 12-ին տեղի ունեցած արյունալի դեպքերից հետո Նախիջեւան քաղաքում ու գավառում գործող Հ.Յ.Դ աշնակցության կառույցները դեռեւս չէին հասցրել ինչպես հարկն է լուծել նախիջեւանահայության զինելու, հետեւաբար ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրները: Եթե անհապաղ չձեռնարկվեին համապատասխան քայլեր, ապա դեպքերի հետագա զարգացումը կարող էր հանգեցնել կործանարար հետեւանքների:

ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեի խոստովանությամբ, նույն տարվա դեկտեմբերին Երեւանում կայացած ռայոնական ժողովում. «... Նախիջեւանի դէպքերը՝ մինչեւ մեր ընկեր Դումանի գալը՝ վհատեցուցիչ էին ու հուզիչ եւ կազմակերպութեան համար: Հայ ազգը շատ քիչ ուշադրութիւն էր դարձրել իւր զինման եւ ինքնապաշտպանութեան վրայ...»[104]:

Չնայած ռայոնական ժողովում ՀՅԴ կենտր. կոմիտեի հաշվետվությունում Նախիջեւանի գավառում եւ բուն քաղաքում կատարված ողբերգական դեպքերը ներկայացվում են հիմնականում տեղի «ազ-

գաբնակչութեան չափազանց վախկոտութեան եւ այնտեղ բավարար չափով զինվորական ուժ չունենալու» պատճառաբանությամբ, սակայն 1905 թ. հունիսի 30-ին ՀՅԴ Արեւելյան Բյուրոյին հասցեագրված նամակից պարզվում է, որ ռայոնական ժողովում կենտրոնական կոմիտեի ներկայացրած զեկուցագիրը արտահայտում է ճշմարտության միայն մի մասը: Նախիջեւանի ողբերգության գլխավոր մեղավորներն էին նաեւ տեղի՝ Դաշնակցության «Քարաբերդ» կոմիտեն ու այնտեղ գտնվող մարտական ուժերը:

«Ես,- գրում է Դումանը,- կարմրում եմ մեր գենքերը Նախիջեւանում թողնելու համար: Կարո՞ղ էք երեւակայել, որ քաղաքը դեպքերի ժամանակ ունեցել է 38 հրացան, հարիւրաւոր ատրճանակներ եւ բավականաչափ խնճորներ (ձեռնառումբ), բոլորն էլ «Դիրքերում» անգործադիր»[105]:

Ինչ խոսք, Դումանի նշած գենքերի այդ քանակությունը(«38 հրացան, հարիւրաւոր ատրճանակներ եւ բավականաչափ խնճորներ (ձեռնառումբ)»), զուտ ռազմական առումով այնքան էլ մեծ միավոր չէ, բայց Դումանը իրավունք ուներ զարմանալ ու իր դժգոհությունը հայտնել. չէ՞ որ Բաքվի նման մեծ քաղաքի հայության ինքնապաշտպանությունը նա կարողացել էր կազմակերպել հանպատրաստից, իր հրամանատարության տակ ունենալով ընդամենը վեց մարտիկներ:

Ընդհարումների փորձը միանշանակորեն մատնանշում էր, որ Նախիջեւանում իրավիճակը կարելի էր չտակել, եթե հայկական ինքնապաշտպանական ուժերը ձեռնարկեին հարձակողական գործողություն ու բշնամուն ջախջախեին հենց իր որջում:

Նախիջեւանի հայության կոտորածներին համարժեք պատասխան տալու նպատակով Դումանը հրամայում է հայկական մարտական ուժերին՝ հարձակվել եւ ոչնչացնել 1500 տուն ունեցող Ջահուկ (Ջահրի) ու նրա սամանամերձ թուրքաբնակ գյուղերը[106]:

Ջահուկը(Ջահրի) հայ եւ թուրք խառն բնակչություն ունեցող գյուղ էր: Ջահուկը, ուր հայերն ունեին 176 տուն, համարվում էր գավառի ամենահարուստ գյուղը: Նախիջեւանի կոտորածից մի քանի ժամ հետոյ հայերի տների վրա իրենց գյուղապետ Աբասի գլխավորությամբ հարձակվում են նախ այդ գյուղի թուրքերը: Այնուհետեւ, հարուստ թալանին մասնակցելու նպատակով գյուղ են ներխուժում ու հայերի վրա հարձակվում նաեւ մոտակա թուրքական գյուղերի բնակիչները:

ՀՅԴ «Քարաբերդ» կազմած տեղեկագրում հեղինակները, ներկայացնելով Ջահուկ(Ջահրի) գյուղի հայերի վրա թուրք ամբոխի հարձակման հետեւանքով ստեղծված սարսափելի կացությունը գրում են. «Տեղական թիւրքերից խաբվելով, մօտ 30 կանայք եւ այնքանէլ այլ մարդիկ սրանց ամուսիններից, եղբայրներից եւ որդիներից, իբրեւ թե կոտորածից ազատելու պատրվակով տարան մի թուրքի տուն, որպես մի ապահով ու վտանգից ազատ տեղ: Այստեղ սոցա փակեցին եւ պահում էին իբրեւ գէրի:

Երկրորդ օրը ջահել կանանց բռնաբարեցին հինգ հայ տղամարդկանց ներկայութեամբ ու իրենց թիւրք կանանց առաջ, որոնք իրենց հրճվանքն էին յայտնում այդ առթիւ: Իսկ տղամարդկանց դուրս հանեցին երրորդ օրը գաւիթ եւ մի քանիսներին խողոռեցին ու սպանեցին մինչեւ որ եկաւ Երեւանի թէմակալ առաջնորդ Կարապետ վարդապետը, որը եւ կարողացաւ ազատել ողջ մնացած կանանց ու միւսներին»[107]:

Թուրքերը ոչ միայն սպանել են իրենց ձեռքն ընկած հայերին, այլեւ փորձել են բռնի կերպով իսլամացնել գերի բռնածներին:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին ներկայացրած զեկուցագրում Կարապետ վարդապետը նկարագրելով թուրք ամբոխի կատարած հարձակումների հետեւանքով Նախիջեւան քաղաքում եւ հայկական բնակավայրերում ստեղծված սարսափելի իրավիճակը, հատկապես շեշտում է Ջահուկի գյուղապետի անմարդկային, հասարակ մահկանացուին անհարիր ու անհավատալի արարքները: Չբավավարվելով իր համագյուղացի հայերի սպանությամբ ու նրանց ունեցվածքի բռնազավթմամբ, Ջահուկի գյուղապետը զինված հրոսակախմբերի գլուխն անցած հարձակվել, այրել ու թալանել է նաեւ մի քանի հայկական գյուղեր[108]:

«...այդ գազան գյուղապետը,-գրում է Կարապետ վարդապետը,- սպանում է Սարգիս Գասպարյանցին եւ չհագենալով դրանով, խմում է նրա արյունը եւ դժբախտ զոհի մարմինը կտոր-կտոր անելով՝ շպրտում է գյուղի շներին»[109]:

ՀՅԴ «Քարաբերդ» կազմած տեղեկագրի հավաստմամբ, հարձակման ժամանակ Ջահուկի հայերի մի մասը, ովքեր կարողացել են, փախել են գյուղից դուրս, իսկ մի մասն էլ ապաստանել է Շխմամուտ եւ Ալիաբատ գյուղերում[110]:

«Այս փախստականից մի փոքրիկ մասը,- նշում է տեղեկագիրը,-հետ էր վերադարձել գիւղ մայիսի 22-ին: Բոլոր տներն, խանութներն, եկեղեցին եւ ուսումնարանը թալանված, կողոպտված են: Թալանված են 25 մանուֆակտուրա եւ այլ մեծ խանութներ իրենց ամբարներով ու 30 մանր խանութներ: Այրուած եւ հրդեհված են 8 խանութ ու 4 տուն: Թալանուած գոյքի եւ ապրանքի արժողությունն հնգ[illegible]ասար է 395.000 րուբլու:

Սպանուած են 51 հոգի, վիրաւոր 15 հոգի:

Փչացել է մոտավորապես 70 դէսիատին ցորեն ու գարի: Արտերեն 60 դէսիատին բամբակի ցանքսեր առանց ջրի մնալով չորացել, կորել են: Ոտնահարուած է ու փչացած մոտ 80 դէսիատին Եօնջա»[111]:

ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի «Ընդհանուր տեղեկագիր Հին-Նախիջեւանի գաւառնի աղէտները» խորագիրը կրող զեկուցագրում հեղինակները իրենց անհաջողությունները պատճառաբանելիս ներկայացնում են մի ուշագրաւ իրողություն:

Ինչպես արդեն նշվել է, Բաքվի փետրվարյան դեպքերից հետո Նախիջեւանի ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեն ժողովրդին զինելու նպատակով կազմակերպում է դրամահավաք: Արդյունքում հանգանակում է զգալի քանակությամբ գումար, բայց չի հասցնում գնել զենք ու զինամթերք: Փաստորեն, ընդհարումների բռնկման պահին չունենալով պաշտպանվելու համապատասխան միջոցներ՝ զենք ու զինամթերք, անզեն ժողովուրդը չի կարողանում արժանի դիմադրություն ցույց տալ թուրք հրոսակախմբերին:

Նախիջեւանի հայության վրա թուրքերի ձեռնարկած զանգվածային հարձակումների հետեւանքով, ինչպես արդեն նշվել է, միայն Նախիջեւան քաղաքում մայիսի 12-ին սպանվում են ավելի քան 100 հայեր, քանդվում եւ հրդեհվում են հայերին պատկանող բազմաթիվ շինություններ: Նույն ողբալի իրավիճակն է տիրել նաեւ գյուղական բնակավայրերում: Ժողովուրդն այլեւս չհավատալով հեղափոխական ուժերին՝ մատնվել էր խաբկանքի ու հուսալքության:

Վերոհիշյալ զեկուցագրում ներկայացնելով այդ իրողությունը, ՀՅԴ «Քարաբերդ» կոմիտեի անդամները նշում են. «...մենք յոյս էինք տալիս, որ նա(նկատի ունի ժողովուրդը-Հ.Գ.) չի ջարդուի, չի տուժիլ եւ այդ բոլորից յետոյ տեղի ունեցաւ ե՛ւ ջարդը ե՛ւ կողոպուտը: Եւ ամբոխը տրամաբանեց, որ մենք խաբել ենք իրան, որ մենք պատճառ եղանք այս բոլոր քստմնելի իրողութեան, եւ յեղափոխութիւնը-ժողովրդին մի քանի օր առաջ սրանից շատ սիրելի, նոյնիսկ պաշտելի գործը ընկաւ...Մենք տարուեցանք. խրտնում է մեզանից գիւղացին, քաղաքացին, երկրագործը, արհեստաւորը...մի խօսքով բոլորն էլ խրտնում են..»[112]:

Այդ նույն զեկուցագրում նշվում է, որ գավառի հայկական բնակավայրերում քիչ էին զենք բռնելու ընդունակ երիտասարդները: Պարզվում է, գավառի երիտասարդության մեծ մասը աշխատանք որոնելու, ապրուստի միջոց վաստակելու նպատակով լքել էին իրենց ծննդավայրն ու բնակություն հաստատել օտար վայրերում:

«Ադետը,-նշում է զեկուցագիրը,-շատ հաւանական է, որ այսքան մեծ ծաւալ չստանար եւ հայ բնակչութիւնը այսքան չտուժէր քաղաքում, առաւելապէս գիւղերում, եթէ տեղացիների մեծամասնութիւնը պանդխտութեան մէջ չլիներ...»[113]:

Զեկուցագիրը հատկապես շեշտում է Ջահուկ(Ջահրի) գյուղի աղետալի վիճակը. եւ հարց տալիս.«...ո՞վքեր կարող էին կռուել թուրքերի հետ: Ամբիւ անհամար հարսներն ու աղջիկները, թէ գերեզմանի շէմքին հասած ծերերը: Երիտասարդ ուժերը բոլորն էլ դեգերում են պանդխտութեան մէջ»[114]:

«Քարաբերդ» կոմիտեն նույն գրությամբ դիմում եւ խնդրում է ՀՅԴ Արեւելյան Բյուրոյին, որ նա իր բոլոր հնարավորություններն ու միջոցները օգտագործի, նույնիսկ բռնությամբ պահանջի, որ օտարության մեջ գտնվող երիտասարդները զենք ձեռք բերեն ու զինված վերադառնան իրենց հայրենի բնակավայրերը:

Իրենց պահանջը հիմնավորելու համար զեկուցագրի հեղինակները նշում են. «Մենք համոզված ենք, որ բոլորն էլ կարող են իրենց ապրուստը հայթայթել հայրենիքում եւ մեծ ոյժ կըլինեն այսպիսի օրերում դիմադրել եւ հալածել իրենց վտանգ սպառնացող բոլոր չարիքներին»[115]:

Որպես հարձակման թիրախ Ջահուկ (Ջահրի) գյուղի ընտրությունը պատահական չէր: Այդ գյուղը ոչ միայն գավառի ամենամեծ գյուղն էր, այլեւ Վահան Փափազյանի (Կոմս)փաստարկմամբ «Ջահրիի հայոց ջարդը մոռցած չէինք: Պէտք էր վրէժը հանել: Այդ գիւղը, իր դիրքով (կը տիրեր Նախիջեւանի դաշտին վրայ) մեծ յոյս էր եւ խարիսխ թաթար ազգաբնակչութեան համար: Պէտք էր շշմեցուցիչ հարուածով անդամալուծել թաթարներու ոգին եւ յարձակողական տրամադրութիւնները»[116]:

Այդ գործողության հաջողությունը անտարակույս կարող էր ոչ միայն ներգործող ազդեցություն ունենալ եւ կաշկանդեր հայկական գյուղերի վրա թուրքերի կողմից ձեռնարկվող հետագա ասպատակությունները, այլեւ ոգեշնչեր ու մարտնչելու տրամադրություն հաղորդեր նախիջեւանահայությանը:

Ընդհարումների ընթացքում, հատկապես սկզբնական շրջանում, նկատվել է մի էական հանգամանք: Հայ գյուղացու մեջ կարծես մեռել էր սեփական անձն ու տարիների ընթացքում քրտնաջան աշխատանքով վաստակած ունեցվածքն անձամբ պաշտպանելու գիտակցումն ու ոգին: Գյուղացիների մեջ արմատավորվել էր այն արատավոր մտայնությունը, որ իրենց կոչումը սոսկ աշխատանքն է, թշնամու ոտնձգությունների դեմ

մարտնչելու համար պետք է լինեն բոլորովին այլ մարդիկ, օրինակ ֆիդայիները, որոնց կոչումը կռվելն է:

Իր հուշերում ներկայացնելով նախիջեւանահայության իրական կացությունն ու տրամադրվածությունը՝ Վ.Փափազյանը գրում է. «Մեր ժողովուրդը զինուած չէր եւ ոչ ալ ծանօթ կռիւներուն: Խիստ միջոցներ ձեռք առնուեցան օր առաջ զինման գործը գլուխ բերելու: Երեւանեն հնարաւոր էր զէնք ձեռք բերել: Բայց մեր գիւղացիութիւնը մեծ դժուարութեամբ իր քսակը կը բանար սեփական զէնք ունենալու համար...»[117]:

Նոյնիսկ այն օրերին, երբ ջարդերի սպառնալիքն արդեն ակնհայտ էր, հայ գյուղացին մեծ դժվարությամբ էր կարողանում ձերբազատվել վտանգավոր նման համոզմունքից եւ մտայնությունից: Բայց այլ ընտրանք գոյություն չուներ: Հարկավոր էր զինվել եւ կազմակերպել մարտական խմբեր:

Ինքնապաշտպանության կազմակերպիչները գյուղացիներին զինելու եւ մարտական խմբեր կազմակերպելու համար հարկադրված դիմել են տարբեր միջոցների՝ համոզելուց ու բացատրելուց մինչեւ բռնություն:

«Մեծ դժուարութիւն քաշեցինք,- գրում է Վ.Փափազյանը,- քիչ-շատ զէնք ներմուծելու գիւղերու մէջ: Գիւղացիները կը խոստանային, երբ գիւղ կերթայինք, ժամերով ճառեր կը խօսէինք եւ կը համոզէինք, իսկ երբ գիւղէն ոտքերնիս դուրս կը դնէինք, կը մոռնային... Պէտք եղաւ խելոյի պէրճախօս մտրակը, որ անտարբերները եւ մեզ խաղցնողները փութային կատարել մեր պահանջը»[118]:

1905 թ. հունիսի 12-ի գիշերը խմբապետ Ասլանի, Արտաշես Մելքումյանի եւ Ղազար Քոչարյանի գլխավորած հայկական մարտական ուժերը, Վանա Սարգսի եւ Դաշնակցական Խելոյի ընդհանուր հրամանատարությամբ հարձակվում են Ջահուկ գյուղի վրա: Գյուղի գրոհը կազմակերպվել է խելամիտ եւ կշռադատված մարտավարությամբ: Հայկական մարտական ուժերը նախ, անշշուկ, գիշերով գրավել են գյուղի մոտակա բարձունքներն ու գյուղի հարեւանությամբ գտնվող հին բերդի ավերակները, ապա նոր միայն՝ արշալույսը չբացված, գրոհել գյուղի վրա: Թուրքերը, անակնկալի գալով, չեն հասցրել պաշտպանվել: Հայ մարտիկները գրավում են մի քանի հազար բնակչություն ունեցող գյուղը[119]:

Համաձայն վաղօրոք մշակած ծրագրի, հայ մարտական ուժերի մի մասը՝ հեծյալ մարտախմբերը, շրջել են գյուղերու շուրջը եւ կազմ ու պատրաստ սպասել, անհրաժեշտության դեպքում հարեւան գյուղերի ինքնապաշտպանական ուժերի հետ միասին օգնության հասնել Ջահուկ գյուղի վրա գրոհող մարտախմբին:

Ջահուկ գյուղը գրավելուց հետո հայ մարտական ուժերը պիտի հարձակվեին Կարաքենդ կամ Ղարաբուլախ գյուղի վրա: Ջահուկի մերձակա լեռնային հովտի մեջ գտնվող այդ գյուղը թեեւ այնքան մեծ չի եղել, բայց գուտ մարտավարական առումով կարեւոր դիրք է ունեցել: Այդ գյուղի բնակիչները գավառում հայտնի են եղել որպես քաջավարժ ավազակներ: Նրանք մի քանի այլ ավազակային խմբերի համագործակցությամբ հարձակվում էին հայկական բնակավայրերի, իսկ առավել հաճախ Ջնաբերդ եւ Բատամալու գյուղերի վրա:

Թուրքական գյուղի վրա ընդամենը 50 մարտիկներից բաղկացած պատժիչ արշավախումբը, Վ. Փափազյանի հավաստմամբ, առաջնորդել է ինքը:

Կարաքենդ գյուղի վրա հարձակվելու նախօրեին Վ. Փափազյանի գլխավորած մարտախումբը գիշերով տեղափոխվում է Ջնաբերդ: Այդ գյուղի բնակիչները քաջածանոթ էին տեղանքին եւ այն ամենին, ինչ վերաբերվում էր Կարաքենդ գյուղին: Գրոհի հաջողությունը ապահովելու համար անհրաժեշտ էր ճշգրիտ տեղեկություններ ստանալ գյուղի կառուցվածքի, դիրքի եւ նրա մարտական կարողությունների մասին:

Գյուղը գտնվում էր անդնդախոր ձորերի մեջ եւ մյուս թուրքական գյուղերի հետ կապված էր նեղ արահետով: Եթե հայկական մարտական ուժերը հարձակվեին Կարաքենդ գյուղի վրա, ապա թուրքական մյուս գյուղերի զինյալները միայն այդ արահետով կարող էին օգնության շտապել հարձակման ենթարկված գյուղին:

Ջնաբերդի գյուղացիներից անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց եւ տեղանքը հնարավորինս ուսումնասիրելուց հետո մարտախմբի հրամանատարությունը որոշում է գյուղի վրա հարձակումը իրականացնել հետեւյալ մարտավարությամբ:

Մարտական խումբը բաժանում են երեք մասի: Առաջին տասնյակը պիտի հսկեր Կարաքենդը թուրքական գյուղերի հետ կապող արահետը եւ փակեր օգնություն եկող թուրք զինյալների ճանապարհը: Եթե հարձակումը ձախողվեր եւ մարտախումբը հարկադրված լիներ նահանջ, ապա երկրորդ տասնյակը պիտի ապահովեր նահանջողների անվտանգությունը[120]:

Նախապատրաստական աշխատանքները կատարելուց հետո միայն երրորդ խումբը պիտի հարձակվեր Կարաքենդ գյուղի վրա:

Արշալույսին մարտախումբը մոտենում է գյուղին եւ համազարկեր տեղալով, երեք ուղղությամբ հարձակվում է գյուղի վրա:

Ներկայացնելով այդ պահը՝ Վ. փափազյանը գրում է. «Սահբեկուած թաթարները, իրենց ընտանիքներով, տուր ճիչերով դուրս ընկան տուներէն եւ գլուխնին կորսնցուցած՝ ձորերով կը փախչէին դէպի Ջահրի: Մեր գնդակները կը հնձէին խուժանը: Գիւղը դատարկուեցաւ. դիակները լեցուցած էին գիւղի փողոցները...Խոտի դէզերը քանդուեցան եւ վայրկեանի մը մէջ հրդեհի բոցերը գրկեցին գիւղի տուները»[121]:

Հայ մարտիկների համազարկերը, հրդեհված գյուղից բարձրացող կրակն ու ծուխը չէին կարող աննկատ մնալ: Կարաքենդ գյուղի մերձակա թուրքական գյուղերի բնակիչները տեսնելով գյուղից բարձրացող կրակն ու ծուխը եւ լսելով կրակոցների ձայնը՝ շտապում են հարձակման ենթարկված գյուղին օգնության:

Կարաքենդը թուրքական գյուղերի հետ կապող արահետը հսկող տասնյակը, նկատելով դեպի Կարաքենդ շարժվող մեծաքանակ թուրք ամբոխին, այդ մասին տեղեկացնում է գյուղում գտնվող մարտիկներին: Մարտախումբը պիտի նահանջեր Ջնաբերդ:

«...Սահգին զինուած ամբոխը,-շարունակում է Վ. Փափազյանը,- մեր վրայ կուգար: Վարի ձորերէն եւս կատաղած թաթարները գոռում-գոչումով դէպի մեզ եկան...Բարձրութեանէն գնդակներ տեղացինք գիւղի մէջ եւ միւս կողմէն իջնող ամբոխին վրայ ու օգտուելով անոնց շփոթութենէն՝ շրջուեցանք բլուրէն այն կողմ եւ անվնաս հասանք հայ գիւղ»[122]:

Եզրափակելով թուրքական գյուղերի վրա հայ մարտական ուժերի ձեռնարկած հարձակումների պատմությունը, Վ. Փափազյանը, որպես ընդհանրացնող խոսք՝ նշում է . «Այսպէս վերջացաւ մեր արշաւանքը՝ լաւ դաս մը շրջանի հայ գիւղերու գլխուն պատուհաս դարձած աւազակային որջին:

Ջահրիի եւ այս գիւղի դէմ մեր հարուածները բարձրացուցին հայերու տրմադրութիւնը եւ ինքնաւստահութիւնը»[123]:

Հայ մարտական ուժերի կողմից Ջահուկ գյուղի հիմնահատակ կործանման մասին ՀՅԴ Թավրիզի «Վրէժ» կենտր կեմիտեի ընկերներին 1905 թ. դեկտեմբերի 11-ին գրած նամակում նշում է նաեւ Սեպուհը, որն այդ օրերին գնվելով Նախիջեւանի գավառում՝ մոտիկից ծանոթացել էր գավառի գյուղերում տիրող իրավիճակին:

Ըստ նրա վկայության «...մենք Ջայրիում ունեցել ենք ընդամենը երեք զոհ, իսկ բշնամուց 220 սպանուած եւ վիրաւոր 100-ից աւելի»[124]:

Ջահուկ եւ մյուս թուրքական գյուղերի կոտորածը մեծ ոգեւորություն է առաջացնում Նախիջեւանի հայության շրջանում: Այդ հաղթանակից հետո կամավորների թիվը մարտական խմբերի կազմում ոչ

միայն ավելի է շատանում, այլեւ ժողովուրդը նախկինի համեմատ սկսում է հոժարակամ եւ արագ զինվել ու շատ անգամ դիմում հարձակողական գործողությունների:

Այս գործողություններին զուգընթաց, Նախիջեւանի թուրքաբնակ գյուղերի վրա, հարմար պահեր օգտագործելով, հարձակվել են նաեւ Երեւանի մարտական ուժերը: Եթե չլիներ զորքի ու ոստիկանության միջամտությունը, ապա Նիկոլ Դումանի գլխավորած Երեւանի ինքնապաշտպանական ուժերն անկասկած հիմնահատակ կկործանեին թուրքական ավելի մեծ թվով բնակավայրեր:

«... Եթէ Հ.Յ. Դաշնակցութեաներեւանի Կենտր. Կոմիտէն կամ աւելի ճիշտ, Նիկոլ Դումանը չկարողանար կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- կարելի էր ասել, որ այդ շրջանի հայութիւնը հիմնովին պիտի բնաջնջուէր:

Դումանը ոչ միայն կարողացաւ այդ շրջանի հայութեան ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել, այլեւ հակահարուածներով յաջորդաբար ոչնչացրեց թաթարական բազմաթիւ գիւղեր»[125]:

Միանգամայն արդարացի ու հիմնավորված է Դումանին տրված Ա. Գյուլխանդանյանի գնահատականը: Կռիվներում հարձակողական բնույթի մարտավարությամբ առաջնորդվելը իր հրաշալի արդյունքն է տվել նաեւ Նախիջեւանի գավառում հայ մարտական ուժերի մղած ինքնապաշտպանական մարտերում:

«Մօտ 8 ամիս, նշում է Կոմսը,-մնացինք Հին Նախիջեւանի շրջանը: Ինքնապաշտպանութիւնը ապահովուած էր: Թաթարները ընկճուած էին եւ մերձեցման ու «եղբայրութեան» ձիթենիներով կու մօտենային հայերուն»[126]:

Բացի Ջահրի գյուղի կործանումից, հայ ինքնապաշտպանական ուժերը Նախիջեւան քաղաքում իրականացրել են եւս մի արժանահիշատակ գործողություն:

Մայիսյան արյունալի դեպքերի ժամանակ, ինչպես արդեն նշվել է, թուրքերը հիմնովին այրել ու թալանել էին Նախիջեւանի քաղաքային շուկայում գտնվող հայերին պատկանող վաճառատներն ու այլ շինությունները, իսկ թուրքական մասը մնացել էին գրեթե անվնաս: Միեւնոյն ընդ ական մարտավարությունը գործունեության ուղենիշ դարձրած Դումանը կորոշ էր հանդուրժել նման իրավիճակ:

ՀՅԴ «Մրգաստանի» Ռայոնական ժողովին ներկայացրած Դումանի զեկուցումից պարզվում է, որ ի պատասխան հայերին պատկանող վաճառատների ու այլ շինությունների հրկիզման, նրա հրամանով հայ ինքնա-

պաշտպանական ուժերը նույն ճակատագրին են արժանացրել հուկայում գտնվող թուրքերին պատկանող խանութներն ու այլ կառույցները[127]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին հասցեագրված 1905 թ. հունիսի 30-ի զեկուցագրում Դումանը նշում է. «Այժմ Միգաստանի (Երեւանի նահանգ) ընդհանուր պատկերը. մարդկային զոհերի քիւը, երեւի չի անցնի 300-ից, իսկ թուրքերինն անհամեմատ շատ...

Նախիջեւանի 47 գիւղերից 20-ը հիմնահատակ, 10-ը կիսաւեր: Մնացած շրջաններում հատ ու կտոր թեթեւ նիւթական վնասներ եւ մի քանի անհատական սպանութիւններ:

Թուրքերի կողմից մատնուած են հրի ու սրի 18 գիւղ, որոնցից 2-3 գոհացուցիչ (իմ տեսակետից): Ընդհանուր դրութիւնը այժմ խաղաղ է...»[128]:

Երեւանի նահանգի Զինվորական մարմնի ձեռնարկած համապատասխան քայլերի շնորհիվ իրավիճակը կարգավորվում է նաեւ Լեռնային Նախիջեւանում: Զինվորական մարմնի եւ անձամբ Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ստանձնում է քաղաքացիական Դրոն, որն արդեն իրեն հրաշալիորեն էր դրսեւորել Բաքվում, Կոտայքի շրջանում, Երեւան քաղաքում եւ Դարալագյազի գավառակում տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերի ժամանակ:

Ինչպես Կոտայքի եւ Դարալագյազի շրջաններում, այնպես էլ Լեռնային Նախիջեւանում բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելիս Դրոն առաջին հերթին պետք է ստեղծեր մարտական խմբեր, որոնց զինելու համար անհրաժեշտ էր հայթայթել զենք ու զինամթերք: Ընդհարումների բոլոր շրջաններում մարտական խմբերը կազմակերպվում էին համաձայն Երեւանի նահանգի եւ Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Նիկոլ Դումանի սահմանած խստիվ հրահանգների եւ կարգադրության:

«Համաձայն Դումանից ստացած հրահանգի, - գրում է Դրոն, - հայկական բոլոր գիւղերում ստեղծում էինք հետեւակ ու ձիաւոր մնայուն եւ թռուցիկ խմբեր: Շրջանը, որի գլուխ կանգնած էր ընդհանուր խմբապետը կամ հրամանատարը, գիւղերի դասաւորութեան համեմատ բաժանւում էր շրջանակների: Ամէն մի շրջանակում փորձուած հայդուկներից մէկը նշանակւում էր խմբապետ եւ մէկն էլ՝ նրան օգնական: Ըստ Դումանի յատուկ կարգադրութեան, տեղական հետեւակ թռուցիկ խմբերը կազմում էին ռուսական բանակում ծառայութիւն արած երիտասարդ զինուորներից: Տեղական սեփականութիւն եղող զէնքերը տրւում էին զինաւարժ տղաներին, որոնք մտնում էին տեղական զինեալ ուժերի շարքերը: Կուսակցական (նկատի ունի Հ.Յ.Դաշնակցությանը - Հ.Գ.) փամփուշտը տրւում էր միայն թռուցիկ խմբերին, որոնք նորը ստանալու համար պարտաւոր էին ներկայացնել կրակուած փամփուշտները»[129]:

Բնակչության ինքնապաշտպանության կազմակերպման գործում ամենադժվարին եւ ամենակարեւորը զենքի ու զինամթերքի ձեռք բերման խնդիրն էր: Բավարար քանակությամբ զենք ու զինամթերք ունենալու դեպքում արդեն մեծ դժվարություն չէր ներկայացնում մարտական խմբերը կռվողներով համալրելը, քանի որ մարտնչելու տրամադրությամբ համակված մարդկանց քանակը քիչ չէր:

«Զէնքը, - շարունակում է Դրոն, - այն օրերին շատ թանգ էր, մի մօսին հրացան 2-300 րուբլի արժէր, փամփուշտը հատը՝ 30-40 կոպէկ: Գիւղի ամէն ունեւոր բնակիչ պարտաւոր էր գնել որոշուած քանակով եւ տրամադրել ինքնապաշտպանութեան ընդհանուր գործին»[130]:

Նիկոլ Դումանի սահմանած կարգի համաձայն, ինքնապաշտպանական խմբերին զենք ու զինամթերքով ապահովուելը պետք է հոգային նաեւ համապատասխան բնակավայրի բնակիչները եւ առաջին հերթին հարուստ, ունեւոր մարդիկ: Դաժան պատիժ էր սպասում այն ունեւոր հային, որը կհանդգներ չենթարկվել ու չկատարել նրա սահմանած կարգը: Որպես ինքնապաշտպանական շրջանի հրամանատար՝ Դրոն խստորեն պետք է հետեւեր եւ կենսագործեր մարտական խմբերի կազմակերպման գործում Դումանից ստացած հրահանգները եւ ժամանակին տեղյակ պահեր նրան այն ամենի մասին, ինչ որ կատարվում էր իրեն վստահված շրջանում:

Դարալագյազի դեպքերից հետո, մինչեւ Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության ստանձնումը, Դրոն մի քանի ամիս անցկացնում է Երեւանում, որտեղ նա Նիկոլ Դումանի հանձնարարությամբ ստանձնում է մայրաքաղաքի ինքնապաշտպանական մարտախմբերից մեկի հրամանատարությունը եւ միաժամանակ ուսանում հենց Դումանի նախաձեռնությամբ հիմնած ու նրա անմիջական ղեկավարությամբ գործող նորաբաց ռազմագիտական դպրոցում:

Երեւանում գտնվելու ժամանակամիջոցում նրա գլխավորած մարտախմբերը Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերի կազմում արժանի ջարդ են տալիս մայրաքաղաքի հայկական թաղամասերը ներխուժելու փորձ անող թուրք հրոսակախմբերին եւ հուսալիորեն ապահովում հայկական թաղամասերի պաշտպանությունը: Երեւանում գործնական եւ տեսական շատ լավ դպրոց անցած, մարտական փորձառություն

ձեռք բերած Դրոն դարձյալ մեկնում է Լեռնային Նախիջեւան՝ ղեկավարելու այդ շրջանի ինքնապաշտպանությունը:

Ինչպես Կոտայքի, Դարալագյազի, այնպես էլ հայաբնակ գրեթե բոլոր շրջաններում ամենավտանգավոր թշնամին, որը պետք է վնասազերծվեր, հենց առաջին հերթին քոչվոր խաշնարած թուրքերն էին, որոնք որպես կանոն շատ լավ զինված էին եւ արոտավայրեր փնտրելու, ոչխարի հոտերը պահելու պատրվակով անընդհատ տեղաշարժվում էին մի վայրից մյուսը եւ յուրաքանչյուր պատեհ հնարավորություն օգտագործելով՝ հարձակվում հայկական գյուղերի եւ ամառանոցների վրա: Թուրք քոչվորների գլխավոր նպատակը հայերի ունեցվածքի, ոչխարի հոտերի, կովերի նախիրների, արոտավայրերի թալանն էր ու բռնազավթումը: Նման իրավիճակում հատկապես զգոն եւ եռանդուն պետք է գործեին շարժական բռուցիկ խմբերը, որոնք մշտարթուն հետեւելով քոչվորների տեղաշարժերին՝ պատրաստ պետք է լինեին յուրաքանչյուր պահի հակահարված տալ նրանց ոտնձգություններին, իսկ անհրաժեշտության դեպքում հակառակորդի ձեռնարկած քայլերի մասին ժամանակին իրազեկ դարձնելու շրջանի եւ գյուղերի ինքնապաշտպանական խմբերի հրամանատարներին[131]:

Դրոն բուռն գործունեություն է ծավալում Լեռնային Նախիջեւանում: Շրջանի գյուղերում տեղացիների ուժերից կազմակերպում է մարտական խմբեր եւ կապեր հաստատում հարեւան շրջանների ինքնապաշտպանական ջոկատների հետ: Նրա ակտիվ գործունեությունը եւ հայկական գյուղերում կատարվող տեղաշարժերը չեն վրիպում նրանց քայլերին ակնդետ հետեւող թուրք հրոսակապետերի ուշադրությունից:

Նորս գյուղը, ուր գտնվում էր Դրոյի ռազմական շտաբը, բացառիկ կարեւոր ռազմական նշանակություն ուներ: Փաստորեն այդ գյուղի միջոցով էր իրականացվում հաղորդակցությունը Զանգեզուրի, Դարալագյազի եւ Լեռնային Նախիջեւանի միջեւ:

Շուտով թուրքական մի քանի ցեղախմբերի միավորված ուժերը Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանության կենտրոնը խորտակելու նպատակադրությամբ հարձակվում են Նորս գյուղի վրա: Դրոն, վաղօրոք տեղյակ լինելով հակառակորդի ձեռնարկումներին, կարողանում է, ինչպես հարկն է, վարպետորեն կազմակերպել ու ղեկավարել գյուղի պաշտպանությունը: Նրա հրամանատարությամբ գործող ջոկատները ոչ միայն կարողանում են հուսալիորեն չեզոքացնել թշնամու հարձակումները, այլեւ դիմելով հակագրոհների՝ արժանի ջարդ են տալիս թուրքերին եւ բռնագրավում նրանցից զգալի քանակությամբ զենք ու զինամթերք, ինչպես նաեւ նախիր եւ ոչխարի հոտեր[132]:

Նորսի կռիվներից հետո Նիկոլ Դումանի հրամանով Զանգեզուրի Սիսիանի շրջանի եւ Լեռնային Նախիջեւանի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար է նշանակվում Քեռին, իսկ Դրոն դառնում է նրա օգնականը: Դումանը ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներ ընտրելիս եղել է ավելի քան հետեւողական եւ նախապատվություն է տվել ավելի փորձառու եւ հեղինակավոր ռազմիկների:

Երիտասարդ Դրոն ինչքան էլ քաջ լիներ ու խոստումնալից, այնուամենայնիվ, Քեռին անտարակույս անհամեմատ ավելի փորձառու էր եւ հեղինակավոր:

Քեռու կենսագիրներից Վ. Վալադեանի վկայությամբ «Քեռին ուղարկում է Զանգեզուր 1905 ի նոյեմբերին: Նոր էին տեղի ունեցել թաթարական յարձակումները Շուշի քաղաքի ու շրջակայ գիւղերի վրայ: Կռիւները փոխանցուել էին սահմանակից Զանգեզուր գաւառին, ուր մի շարք հայաբնակ շրջաններ ու բազմաթիւ գիւղեր կային: Գաւառը իր հոծ բազմութեամբ ու լեռներով մեծ կարեւորութիւն էր ներկայացնում եւ ի զուր չէր, որ Քեռու հետ միաժամանակ այդ շրջանն ուղարկուեցին նաեւ Սեբաստացի Մուրադն ու Գոմսայ Իսոն(Կորիւն)»[133]:

Վ. Վալադյանի վկայությունում կա որոշակի անճշտություն: Սեբաստացի Մուրադը իր մարտական զինակիցների Կայծակ Առաքելի, Գյումուշխանցի Ավոյի եւ Մեշեդի Ավետիսի հետ Զանգեզուր է մեկնել ոչ թե 1905 թ. նոյեմբերին, այլ նույն թվականի ամռանը, իսկ ավելի ստույգ ըստ Նիկոլ Դումանի կողմից ՀՅԴ Արեւելյան բյուրոյին հասցեագրած նամակի տեղեկացման՝ 1905 թ. հունիսին[134]:

Դրոյի համագործակցությամբ փորձառու ռազմիկ Քեռին իր հրամանատարական կենտրոնավայրը ընտրելով Սիսիան գավառամասի Անգեղակոթ գյուղը, մեծ նվիրվածությամբ ու արդյունավետությամբ է կազմակերպում շրջանի ինքնապաշտպանությունը: Թուրքերը, բազմիցս համախմբված ու միացյալ ուժերով արշավում են հայկական բնակավայրերի վրա, բայց միշտ պարտվում եւ լքում են մարտադաշտը շնորհիվ Քեռու եւ Դրոյի ղեկավարած ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունների:

Թուրք հրոսակախմբերի դեմ Քեռու եւ Դրոյի ղեկավարած մարտական խմբերի տոնած հաղթանակներից առավելապես կարեւոր է Սիսիան գյուղի թուրքերի նկատմամբ ձեռք բերած հաղթանակը[135]:

Արժանվույն գնահատելով Քեռու գլխավորած մարտական ուժերի գործողությունները՝ Սեպուհը նշում է. «Քեռին մի խմբով Սիսիանի գա-

վառի մի տաճիկ գիւղ բոլորովին սրբել անցել եւ հրդեհի է մատնել: Ամեն տեղ սարսափի է մատնուած տաճիկ ժողովուրդը»[136]:

Արժանահիշատակ է եւ շատ կարեւոր նաեւ Անգեղակոթ գյուղի ինքնապաշտպանական մարտերում Քեռու հրամանատարությամբ հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակը:

Անգեղակոթ գյուղը, որը Քեռու գլխավորած մարտական ուժերի հիմնական հենակետն էր, դարձել էր թուրք հրոսակախմբերի հարվածների թիրախը: Երեք թուրքական կողմից հաջողվեր գրավել Անգեղակոթ գյուղը, ապա կարող էր բեկում մտցնել ընթացող մարտերում եւ գուտ մարտավարական եւ բարոյահոգեբանական առումով հայ մարտական ուժերի նկատմամբ ձեռք բերել վճռական գերակշռություն: Այդ պատճառով թուրք առաջնորդները կենտրոնացնում են մարտական մեծաքանակ ուժեր եւ հարձակվում Անգեղակոթի վրա:

«Յարձակումը, գրում է Վ. Վալաղյանը,-տեղի ունեցաւ 1906 ի սկզբին, ճիշտ Զատիկի օրը, երբ գիւղի բնակչութիւնն ու մարտիկները եկեղեցում ժողված՝ Ծննդեան պատարագն էին ունկնդրում»:

Շատ լավ գինված թուրք հրոսակախմբերը վստահ իրենց բազմաքանակությանը, ներխուժում են գյուղ եւ սկսում թալանել ու կրակի տալ գյուղացիների տները:

Քեռին իր զինվորների հետ այդ պահին գտնվել է եկեղեցում: Տեղեկանալով թշնամու գյուղ ներխուժելու մասին, նա զինվորների հետ միասին անմիջապես դուրս է գալիս եկեղեցուց ու ամենևին խուճապի չմատնվելով՝ սրընթաց գրոհ է ձեռնարկում թուրք հրոսակախմբերի վրա: Անգեղակոթի կռվում Քեռու կիրառած մարտավարությունը միանգամայն կշռադատված էր ու արդյունավետ: Հակառակորդի մեծաքանակ ուժերի վրա Քեռու գլխավորած մարտախմբերի սրընթաց գրոհը կատարյալ անակնկալ էր:

«Թշնամին,-նշում է Վ. Վալաղյանը,-խուճապ կորուստներ տալուց յետոյ, հարկադրուած է լինում նահանջել, ընդմիշտ հրաժարուելով Անգեղակոթը գրաւելու ծրագրից»[137]:

Կարելի է ասել, որ Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ Երեւանի նահանգում եւ Զանգեզուրում գործող հայ ինքնապաշտպանական ուժերը շնորհիվ կռիվներում կենսագործած կշռադատված, ճկուն եւ համարձակ մարտավարության, ինչպես նաեւ վտանգված շրջաններում՝ պատշաճ՝ մակարդակի հաստատված կարգ ու կանոնի, ձեռք էին բերել անվիճելի նվաճումներ:

Մայիսյան, ապա նրան հաջորդած դեպքերից հետո, երբ ընդհարումների շրջանակներն ավելի էին խորացել ու ընդարձակվել, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, կարծես թե արդեն մտահոգված իր փոխարքայության տիրույթում կատարվող արյունալի իրադարձությունների հետեւանքներով ու արդյունքներով, վերջապես որոշում է հանդիպել հակառակորդ կողմերի ներկայացուցիչների հետ:

Անկասկած, երեւ չլիներին Բաքվի փետրվարյան դեպքերի ժամանակ հայ մարտիկների դիմադրությունը, ինչպես նաեւ Երեւանի նահանգում կազմակերպած հարձակողական գործողությունները, կարելի է ասել, որ դժվար թե կոմս Վորոնցով-Դաշկովը համաձայնվեր հանդիպել հակամարտող կողմերի ներկայացուցիչների հետ:

Փոխարքային հետաքրքրող հայ-թուրքական բախումների պատճառների մասին արտահայտվելիս հայ պատգամավորությունը առավելապես շեշտը դրել է կոտորածների եւ թալանի նկատմամբ մահմեդականության մեջ պատմականորեն արմատավորված եւ ձեւավորված վայրենի հակվածության եւ դրանք ամենաբիրտ միջոցներով իրականացնելու գործելակերպի վրա:

«Այդ բոլորը, - գրում է Դումանը, - լսելուց յետոյ փոխարքան պատասխանում է թէ. «Այնուամենայնիվ ինձ թւում է թէ, այդ պատճառները չեն կարող լինել պատճառ այդպիսի արյունահեղ ընդհարումների: Մեղաւորը յեղափոխական կազմակերպութիւններն են, իսկ հայերը աւելի յաւ են գինուած, քան թուրքերը»[138]:

Հայ պատգամավորությանն ուղղված պատասխանում փոխարքան փաստորեն պաշտպանում է մահմեդականության ներկայացուցիչների տեսակետը: Ավելին, Վորոնցով-Դաշկովի հետ կայացած հանդիպման ժամանակ թուրք պարագլուխներ Աղաեւը, Թաղիեւը, Թալիշ Բեկը եւ այլոք պնդել են, որ հայ հեղափոխական կուսակցությունները ոչ միայն հրահրել են ընդհարումները, այլեւ դրդել եւ դրդում են հայերին ու նույնիսկ թուրքերին՝ զինված պայքարի դուրս գալ ընդդեմ օրինական կառավարության:

Հանդիպմանը ներկա գտնվող ցարական պաշտոնյաներից մեկը, որը նախկինում աշխատել էր Պոլսի ռուսական հյուպատոսարանում, առաջ է քաշում հայ-թուրքական ընդհարումների սանձազերծման մի վարկած եւս:

Ըստ նախկին դիվանագետի պնդման, քանի որ հայերը, ենթարկվելով անգլիացիների թելադրանքին, ապստամբել են եւ այդ պատճառով կոտորվել, ուստի այժմ՝ սանձազերծելով նոր կռիվներ, ձգտում են վրեժ լուծել Կովկասի թուրքերից[139]:

Ջրույցների ընթացքում ունկնդրելով հայ եւ թուրք պատգամավորության, ինչպես նաեւ իր պաշտոնյաների տեսակետներն ու կարծիք-

ները, փոխարքա Վորոնցով-Դաշկովը, առանց որեւէ որոշակի վճիռ կայացնելու, ավարտում է հանդիպումները:

Դումանը, վերլուծելով այդ հանդիպման արդյունքները, նշում է «...Միայն մի բան պարզ է երեւում, որ փոխարքան, գիտենալով հանդերձ, թէ յարձակողները թուրքերն են, տուժողները հայերն են, բայց պաշտպանում է թուրքերին՝ իբրեւ հավատարիմ հպատակների, որովհետեւ հայերը որպես թէ փորձել են նրանց գինակից անել պետութեան դէմ»[140]:

Եթե ընդհանրացնենք առաջին ամիսներին Երեւանի նահանգում ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության կենսագործված ձեռնարկումները, ապա կարելի է ասել, որ դրանք ավելի քան արգասաբեր էին: Նիկոլ Դումանի գլխավորած Զինվորական մարմինը ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կոմիտեի համագործակցությամբ կարողանում է դնել ինքնապաշտպանության կայուն եւ հուսալի հիմքերը:

1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում հայության մղած ինքնապաշտպանական մարտերի էությունն ու ուղղվածությունը բնութագրելու եւ գնահատելու համար պիտի ընդունել, որ այն 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի մի փուլ է, որը նախորդ շրջանների համեմատ ուներ իր որակական առանձնահատկություններն ու տարբերությունները:

Մինչ հայ-թուրքական ընդհարումները հայության ազատագրական պայքարում գերիշխողը հայդուկային փոքր կռիվներն էին, ցուցադրական ելույթներն ու ահաբեկչության դեպքերը: Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ մարտական գործողությունները ծավալվում էին Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում եւ նույնիսկ այնպիսի բնակավայրերում, ուր մահմեդական տարրը փոքրամասնություն էր կազմում: Արեւելահայության ինքնապաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու համար, այս առանձնահատկությունը հաշվի առնելուց զատ, հայ ազգային-քաղաքական այն կազմակերպությունների ու գործիչները, որոնք առաջնորդում էին հայության գոյապայքարը, պիտի ուշադրություն դարձնեին նաեւ հետեւյալ հանգամանքները ու գնահատեին դրանք.

1. Ի՞նչ հիմունքներով եւ միջոցներով պետք է կազմակերպվեին մարտական ուժերը կամ՝ Դումանի բնորոշմամբ՝ ինքնապաշտպանական բանակը, ու ովքե՞ր եւ ինչպիսի՞ կարգ ու կանոնով պիտի համալրեին նրա մարտաշարքերը:

2. Ինչպիսի՞ կառուցվածք պետք է ունենար ինքնապաշտպանական բանակը:

3. Ընդհարումների ընթացքում հայկական մարտական ուժերի որդեգրած եւ ձեռնարկած գործողությունների մարտավարությունը:

Ի՞նչ էր անհրաժեշտ անել այդ հարցերը կենսագործելու համար:

Քանի որ մարտական գործողությունները ծավալվում էին ցարական կայսրության տարածքում, եւ պարտադիր զինվորական ծառայության մասին խոսք լինել չէր կարող, ուստի, հայկական ինքնապաշտպանական բանակը պիտի կազմավորվեր բացառապես կամավորական հիմունքներով, բայց՝ որոշակի հիմունքներով ու վերապահումներով:

Բանակի շարքերն առաջին հերթին, անխախտ եւ չգրված օրենքի համաձայն, համալրում էին ազգի առավել հայրենանվեր զավակները, իսկ Դումանի բնութագրմամբ. «Հայրենիքի ինքնապաշտպանութեան գործին անկեղծօրէն նուիրուած մարդիկ իրանք են երեւան գալիս ինքնաբերաբար եւ իրենց ուսերի վրայ են առնում լծի ծանրութեան մի մասը բոլորովին կամաւոր»[141]:

Բայց ընդհարումների ծավալները շատ ընդարձակ էին, կռիվները՝ բազմաթիվ, իսկ «ինքնապաշտպանութեան գործին անկեղծօրէն նուիրուած» զավակների քանակը՝ սահմանափակ: Զինվորական մարմինը՝ «Մրգաստան» կենտր. կոմիտեի հետ համատեղ, հատուկ կարգ է սահմանում կամավորների հավաքագրման, նրանց քանակի սահմանման վերաբերյալ, որի կատարումը յուրաքանչյուր շրջանի եւ գյուղի համար պարտադիր էր: Փաստորեն մարտական խմբեր կազմավորելու գործում հետեւողականորեն կիրառվում է կամավոր-պարտադիր սկզբունքը:

Ընդհարումները դեռեւս շարունակվում էին, եւ ինքնապաշտպանական բանակ ձեւավորելու այլընտրանք տվյալ իրավիճակում չկար եւ չէր կարող լինել:

Ինքնապաշտպանական բանակ ստեղծելու համար պիտի կենսագործվեր երկու կարեւոր պահանջ.

ա. Քանի որ չկային բավարար զինական ուժեր, ուստի հարկավոր էր, որ յուրաքանչյուր գյուղ, շրջան կամ հայաբնակ վայր ինքը ստեղծեր ինքնապաշտպանական խումբ եւ ինքն էլ պարտավոր էր լուծել զինվածության հարցը:

բ. Նպատակահարմար էր, որ տեղերում խմբապետներ ընտրվեն դրսից եկած փորձված, կռվի բովով անցած քաջավարժ մարտիկներից, քանի որ նրանք, որպես օրենք, ավելի մեծ ազդեցություն ունեին տեղի ազգաբնակչության վրա:

Շրջանների ինքնապաշտպանական խմբերին ուղղված հրահանգում, որը բաղկացած էր 36 կետից, Զինվորական մարմինը սահմանում

է տեղերում կամավորներին հավաքագրելու հետեւյալ կարգը. «Ամեն մի գիւղ կամ համայնք պարտաւոր է դնել կազմակերպութեան տրամադրութեան տակ որոշ թւով զինւած կամաւորներ: Կամաւորների թիւր պակաս չը պէտքէ լինի համայնքի մէջ գտնւած զէնքի քանակութեան կէսից: Օրինակ. եթէ գիւղում կայ 50 հրացան՝ նա պարտաւոր է 25 զինւոր տալ իրենց զէնքերով»[142]:

2. Քանի որ Դումանի մտահղացմամբ պիտի ստեղծվեր հայկական իրականության ու նոր ստեղծված պայմաններին համահունչ ինքնապաշտպանական բանակ, ապա, բնականաբար այն պիտի ունենար համապատասխան կառուցվածք, հստակ սահմանվեին հրամանատարների եւ զինվորների պարտականությունները ու զինվորական ստորաբաժանումների անվանումները եւ հրամանատարների ընտրության կամ նշանակման կարգը: Այդ նպատակով մշակվում եւ շրջանների ինքնապաշտպանական խմբերին է առաքվում չորս մասերից եւ 33 կետերից բաղկացած «Հրահանգ» շրջաբերականը:

Առաջին բաժնում տրվում է մարտական միավորների կառուցվածքի, հրամանատարների նշանակման եւ ընտրության, ինչպես նաեւ տեղերում զինվորական խորհրդի կազմավորման վերաբերյալ մշակված կարգը[143]:

Երկրորդ բաժնում սահմանվում են զինվորների եւ հրամանատարների պարտականությունները, որոնք կազմելիս Զինվորական մարմինը դարձյալ առաջնորդվել է՝ ելակետ ունենալով կանոնավոր բանակում գործող չափանիշներն ու կարգը, ընդսմին, հաշվի առնելով տեղի եւ ժամանակի յուրահատկություններն ու պահանջները:

Ծանոթանալով ինքնապաշտպանության կազմակերպմանը նպատակաուղղված ձեռնարկումներին ու որոշումներին, կարելի է վստահաբար պնդել, որ այդ օրերին, հայրենի պետության բացակայության պայմաններում, Զինվորական մարմինները ՀՅԴ տեղական կոմիտեների հետ միասին փաստորեն իրականացրել են պետությանը բնորոշ յուրահատուկ վճիռներ ու պարտականություններ:

Պետություն պետության ներսում, ահա այդպես կարելի է բնութագրել այդ ժամանակահատվածում ինքնապաշտպանությունը ղեկավարող զինվորական մարմինների գործունեությունն ու իրական վիճակը:

3. Հայ-թուրքական ընդհարումներում Նիկոլ Դումանի ներդրած կարեւոր ծառայություններից է նաեւ մարտավարության այն նոր, արգասաբեր եղանակը, որի կիրառումը մեծապես նպաստեց հայության ընդհանուր հաղթանակին:

Հայ ազատագրական պայքարի զինվորական գործիչներից առաջինը Դումանը հայ զինական ուժերը կազմակերպեց ու ղեկավարեց՝ համաձայն կանոնավոր բանակներում գործածվող մարտավարության ու ռազմագիտական կանոնների ու ավանդույթների, իհարկե, հաշվի առնելով նաեւ տեղի եւ ժամանակի յուրահատկությունները:

Մարտավարության հարցում Դումանն իրավացիորեն գտնում էր, որ նախկին հայդուկային կռիվներն արդեն իրենց սպառել էին, եւ ներկա պայմաններում, երբ ընդհարումները ծավալվում էին ավելի լայն ընդգրկումներով եւ ավելի մեծաքանակ մարտական ուժերի մասնակցությամբ, հակառակորդի նկատմամբ վճռական առավելություն ձեռք բերելու համար հարկավոր է կիրառել մարտեր վարելու նոր ձեւեր ու եղանակներ:

Դումանը հետեւողականորեն հայոց մարտական ուժերը կազմակերպում է կանոնավոր զորաբանակում արմատավորված ռազմական՝ առավել կենսունակ օրենքների համաձայն եւ շրջանների ինքնապաշտպանության հրամանատարներին խստագույնս հրամայում՝ կենսագործել իր պահանջները: Մինչ այդ, միայն հայդուկային կռիվներին վարժված բազմաթիվ հայ մարտիկների համար ռազմագիտական կանոններով կռվելը անսովոր երեւույթ էր եւ նրանցից շատերը սկզբնական շրջանում, չհամակերպվելով մարտավարության նման ձեւերին, դժգոհում էին Նիկոլ Դումանի «նորարարություններից»[144]:

Սակայն շատ շուտով Դումանի կիրառած մարտավարությամբ կռվելը, որը անակնկալ էր նախ եւ առաջ թուրքերի համար, տվեց իր լավագույն արդյունքները: Իսկ հայ զինվորներից դժգոհողները, տեսնելով մարտավարության այդ ձեւի առավելությունները, արդեն գովեստով էին արտահայտվում Դումանի մասին[145]:

Դումանի համոզմամբ, ժողովրդի ինքնապաշտպանությունը ապահովելու համար անհրաժեշտ էր դիմել նաեւ հարձակողական գործողությունների (հարձակում ինքնապաշտպանության նպատակով): «Եւ ով որ կարծում է,- գրում է Դումանը,- թէ այդ ապահովումը կարելի է ձեռք բերել՝ միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալվում է»[146]:

Հակառակորդի նկատմամբ վճռական գերակշռություն ձեռք բերելու նպատակով նա առաջարկում է կիրառել մարտի առավել նպատակահարմար գործելակերպ: Ըստ նրա, անհրաժեշտ ու նպատակահարմար էր, որպեսզի հայ զինական ուժերն ընդհարումների բոլոր տեղամասերում կարողանային անակնկալ ու հուժկու հարձակումների սպառնալիքով բշնա-

մու ուժերը մշտապես պահել երկյուղի մեջ ու գամել միեւնույն տեղում: Նիկոլ Դումանի կարծիքով նման գործելակերպը հակառակորդին անխուսափելիորեն կզրկեր ուժերը համախմբելու, կենտրոնացնելու եւ հայկական այս կամ այն շրջանին հարվածելու հնարավորություններից[147]:

Մայիսյան դեպքերից հետո Երեւանում տեղի է ունենում Հ.Յ. Դաշնակցության «Մրգաստան» Կենտրոնական կոմիտեի շրջանային ժողով, որտեղ հանդես է գալիս Դումանը՝ ներկայացնելով իր մշակած Երեւանի նահանգի ինքնապաշտպանության ծրագիրը: Ժողովին ներկա անվանի ֆիդայիները՝ Սեբաստացի Մուրադը, Քեռին, Սեպուհը, Սմբատը, Կայծակ Առաքելը, Հաջի Հակոբը, Ֆարհադը եւ մյուսները, միահամուռ պաշտպանում են Դումանի ներկայացրած ծրագիրը[148]:

Երեւանի շրջանային-պատասխանատու ժողովը, հիմք ունենալով ինքնապաշտպանության կազմակերպման վերաբերյալ Դումանի տեսակետները, նրա եւ «Մրգաստանի» Կենտր.կոմիտեի անդամների ստորագրությամբ հունիսի 12-ին շրջանների կոմիտեներին եւ մարտական խմբերի հրամանատարներին է ուղարկում 20 կետերից բաղկացած հրաման-հրահանգները[149]:

Բացի վերոհիշյալից, բնակավայրերի ինքնապաշտպանությունը կազմակերպելիս եւ համապատասխան հրահանգներ մշակելիս հաշվի էին առնվել նաեւ գյուղական բնակավայրերի հետեւյալ առանձնահատկությունները.

ա. Զուտ հայաբնակ գիւղը՝ հայկական շրջանում.

բ. Զուտ հայաբնակ գիւղը՝ մենակ ընկած օտար շրջանում.

գ. Խառն ազգաբնակչութիւն ունեցող գիւղը, ուր ապրում են նաեւ - հայեր»[150]:

Ի տարբերություն հայկական միջավայրում գտնվող զուտ հայաբնակ գյուղերի, խառը ազգաբնակչություն ունեցող եւ մահմեդականներով շրջապատված հայկական գյուղերն իրենց մարտական ուժերը չպետք է բաժանեին մնայուն եւ թուղթիկ խմբերի: Այդ գյուղերի աննպաստ աշխարհագրական դիրքի եւ նրանց գլխին ծառացած մշտական վտանգի պատճառով մարտական ուժերը մշտապես պետք է մնային միայն տեղերում:

Որպեսզի գյուղերի ինքնապաշտպանական խմբերի գործողությունները լինեին արդյունավետ ու հուսալի, իսկ բնակչության անվտանգությունը՝ առավելագույնս ապահովված, գյուղերի միջեւ անպայմանորեն պիտի հաստատվեր անխափան կապ: Հարձակման ենթարկվելու դեպքում գյուղական յուրաքանչյուր խմբապետ պարտավոր էր անհապաղ սուրհանդակների միջոցով տեղեկացնել եւ օգնություն խնդրել հարեւան գյուղերից, իսկ առավել մոտիկ գտնվող գյուղը. «... հրացանների ձայնը լսելուն պէս՝ օգնութեան է ուղարկում իր թուղթիկ խումբը եւ միաժամանակ իր սուրհանդակների միջոցով հաւար է ձգում շրջակայ միւս գիւղերը»[151]:

Մահմեդականների միջավայրում գտնվող միայնակ հայկական գյուղի եւ խառը ազգաբնակչություն ունեցող գյուղերի հայության անվտանգությունն ապահովելու նպատակով որոշվում է կռիվների նախօրեին նրանց փոխադրել առավել ապահով՝ զուտ հայաբնակ շրջանները:

Հրահանգում սահմանվում է հատուկ կետ նաեւ խառը ազգաբնակչություն ունեցող գյուղերի համար, ուր մահմեդականները կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Եթե կռիվների ընթացքում նրանք չէին փախել եւ մնացել էին գյուղում, ապա. «... պետք է ընդհանուր կուի ընթացքում պահել նրանց պատանդ, իբրեւ սպառնալիք, եւ կամ թէ անվնաս բոլորին դուրս հանել գիւղից, նայելով թէ ինչպէ՞ս է վարւում թշնամին համանման դեպքում հայերի հետ եւ ինչպէ՞ս է վերաբերւում կառավարութիւնը այդպիսի ակտերին»[152]:

Ընդհարումների սկզբնական շրջանում զենք ու զինամթերք ձեռք բերելու, մարտիկներին հանդերձավորելու ու կերակրելու հետ կապված հարցերը մեծ դժվարությամբ են լուծվել:

«Քանի որ,- վկայում է Խանասորի Վարդանը,- սկզբում ժողովրդի մէջ գիտակցութիւն չկար, այսինքն՝ ժողովուրդը դժվարութեամբ էր հասկանում իրքական յարձակումների իսկական իմաստը,- մենք ստիպուած էինք լինում զանազան միջոցների դիմելու, որպէսզի գիւղացին, թեկուզ ակամայ, զենք գնի: Զէնքի համար ծախել էին տալիս նրա կովը, տան խալիչաները: Սակայն հետզհետէ, ժողովուրդը սկսեց արդէն իրքը մտածել զէնքի մասին, երբ տեսաւ, որ, իսկապէս մեծ վտանգներ են այնտեղ կանգնած»[153]:

Զենքի գնման հարցում Դումանը եղել է չափազանց խիստ եւ անզիջող: Բոլոր նրանք, ովքեր հնարավորություն ունեին սեփական միջոցներով գնելու զենք ու զինամթերք, անպայմանորեն պետք է գնեին:

Հարուստների նկատմամբ, անհրաժեշտության դեպքում, Դումանը կիրառել է խստագույն միջոցներ եւ ստիպել նրանց զենք գնել, իսկ չունեւորներին օգնել է, որպեսզի նրանք նույնպես կարողանային զենք ու զինամթերք ձեռք բերել:

Քանի որ ինքնապաշտպանության համար վտանգված շրջաններին խիստ անհրաժեշտ էին զենք ու զինամթերք, հայտնվել էին ճարպիկ, գործունյա մարդիկ, որոնք, օգտագործելով ընձեռված պատեհ հնարավորությունը, շատ բանկ գնով զենք ու զինամթերք էին վաճա-

ռում հայերին: Հաճախ այդ զենքերից շատերը եղել են հին, անորակ եւ անգործածելի: Որպեսզի կարգավորի զենք ու զինամթերքի առքն ու վաճառքը՝ Կենտրոնական Կոմիտեն եւ Զինվորական մարմինը սահմանում են կայուն գներ[154]:

Սահմանվում է պատիժ բոլոր նրանց համար, ովքեր կխախտեին գների հաստատված կարգը, եւ նրանց «...անմիջապէս պէտք է յանձնել տեղական զինուորական մարմիններին, որ վերջիններիս դատէն զինուրական դատարանով, Զինուրական Շտաբի գիտութեամբ ու հաճութեամբ»[155]:

Ընդհարումների ընթացքում, Դումանը ՀՅԴ «Մրգաստան» Կենտ. Կոմիտեի համագործակցությամբ Երեւանի նահանգում հիմնում է մի նոր կառույց՝ ժողովրդական միլիցիա:

Քանի որ բնակչության զգալի մասը, հատկապես երիտասարդությունը, ընդգրկվել էր մարտական խմբերի կազմում, ապա պակասել էր դաշտերում աշխատողների թիվը: Գյուղացուն պետք էր աշխատելու, բերք ածեցնելու հնարավորություն ընձեռվեր, առանց որի մեծապես կդժվարանար բնակչությանն ու մարտական խմբերին սննդով, եւ անհրաժեշտ այլ պարագաներով ապահովելու խնդիրը: Զինվորական մարմնի որոշմամբ պիտի ստեղծվեին մշտական գործող զինվորական մարմիններ, որոնք բնակավայրերի մերձակայքում հսկողություն սահմանելով՝ ազատեին գյուղացիներին դաշտերում հերթապահություն անցկացնելու պարտականություններից եւ պայմաններ ապահովեին անվտանգ աշխատելու համար: Այդ զինվորական մարմինը պետք է լիներ ժողովրդական միլիցիան:

Քաղաքի եւ մյուս բնակավայրերի ներքին կարգն ու կանոնը եւ անվտանգությունը ապահովելու համար ազգային միլիցիայի գոյությունը նույնպես անհրաժեշտ էր եւ շատ կարեւոր: Ժողովրդական միլիցիայի կազմավորման ֆինանսական ծախսերը հոգալու նպատակով ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» կենտր. կոմիտեն եւ Զինվորական մարմինը որոշում են բնակչությունից գանձել «Զինվորական տուրք»: Այդ կապակցության տարածվում է մի շրջաբերական՝ ուղղված «Հայ ժողովրդին»[156]:

Դումանը ձգտել է Երեւանի նահանգում հաստատել իր, որպես ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր զորահրամանատարի (Զինվորական լիազոր) կենտրոնացված եւ բացարձակ մենաշնորհային իշխանությունը:

ՀՅԴ Բյուրոյին հասցեագրած նամակներից մեկում Դումանը պնդում է, որ պատերազմական իրավիճակում կուսակցության գործունեությունը պետք է լիներ առավելապես կենտրոնացած: Այն ասելիքը,

ովքեր կրում էին շրջանի կամ առավել եւս, նահանգի հայության ինքնապաշտպանության պատասխանատվությունը, պետք է օժտված լիներին ամենալայն, անգամ բացարձակ իշխանությամբ[157]:

Պատերազմական իրավիճակում կենտրոնացման գործելակերպին առավել նախապատվություն տալու իր համոզմունքները նա պաշտպանում եւ ավելի է հիմնավորում նույն տարվա դեկտեմբերին Երեւանում կայացած ՀՅԴ «Մրգաստանի» կենտր. կոմիտեի շրջանային ժողովում:

Նախ, նա իր ելույթներում թվարկում եւ հիմնավորում է այն հանգամանքներն ու պայմանները, որոնք հարկադրել են Հ.Յ.Դ. Բյուրոյին ինքնապաշտպանության կազմակերպումն ու դեկը Զինվորական մարմիններին (շտաբ) եւ առավել կարող ու փորձառու անհատներին վստահելու անհրաժեշտությունը:

«Յուրաքանչիւր պետութեան մէջ,- նշել է Դումանը,- պատերազմ հայտարարողը, կամ արդէն յայտարարած պատերազմ ընդունողը կենտրոնական վարչութիւնն է:

Մեզանում, ուրեմն, այդ իրաւունքը պատկանում է ընդհանուր ժողովին կամ նրան փոխարինող «Դաշնակցութեան խորհրդին»: Փորձով տեսանք արդէն, որ այդ իրաւունքից օգտուել չըկարողացան թէ մէկը, թէ միւսը եւ չէին էլ կարող, որովհետեւ մեր կազմակերպական սիստեմը (նկատի ունի ապակենտրոն համակարգը - Հ.Գ.) միանգամայն անպետք էր պատերազմի համար, մանաւանդ այն դէպքում, երբ կռիւ յայտարարողը մենք չենք: Եւ, յիրաւի, վերին աստիճանի ծիծաղելի կը լիներ, երբ թուրքերը իրանց անակնկալ յարձակումներով կոտորում էին մեզ,- մենք աշխարհի զանազան ծայրերից մարդիկ հաւաքէինք ընդհանուր ժողով կամ դաշնակցական խորհուրդ կայացնելու համար»[158]:

Նա ճիշտ է նկատում, որ ժամանակը բացարձակապես չէր ներում Ընդհանուր ժողով գումարելու եւ համապատասխան վճիռներ կայացնելու համար: Հակառակորդի ձեռնարկումներին պետք է համարժեք պատասխան տրվեր անմիջապես, առանց ավելորդ ժամանակ կորցնելու: Եթե Դաշնակցությունը ճիշտ ժամանակին իր ապակենտրոն կառույցներով կարողանար ապահովել ժողովրդի անվտանգությունը եւ հուսալիորեն կազմակերպեր վտանգված շրջանների ինքնապաշտպանությունը, ապա բոլորովին անհրաժեշտություն չէր ծագի նախապատվությունը տալ կենտրոնացման համակարգին եւ բնակչության անվտանգությունը վստահել զինվորական մարմիններին ու առանձին գործիչների:

Ինքնապաշտպանության կազմակերպման դեկը Կենտրոնական կոմիտեների տնօրինությանը հանձնելու իրողությունը հարցի լուծման

սոսկ ձեւական կողմն էր, իրականում գործի հիմնական ծանրությունը իրենց ուսերին են կրել Զինվորական մարմինն ու ինքնապաշտպանական շրջանների հրամանատարությունը:

Ընդհարումներն սկսվելուց հետո Երեւանում, ինչպես նաեւ նահանգի տարածքում շատացել էին գողության եւ թալանի դեպքերը: Հասարակության մեջ հայտնվել էին վտանգավոր տարրեր, որոնք, օգտվելով խառնակ իրավիճակից, թալանում էին մարդկանց ունեցվածքը եւ դրանով իսկ ավելի ապակայունացնում՝ իրավիճակը:

Նահանգի հայ բնակիչները օրինական վրդովմունքով իրենց դժգոհությունն էին հայտնում նման դեպքերի կապակցությամբ եւ բողոքներով դիմում էին ՀՅԴ Երեւանի «Մրգաստան» Կենտ. կոմիտեին եւ Զինվորական մարմնին:

ՀՅԴ «Մրգաստան» կենտրոնական կոմիտեն 1905 թ. յուլիսի 18-ի թվագրված շրջաբերականում՝ բնակչությանը տեղեկացնելով նահանգի տարածքում այդօրինակ արատավոր դեպքերի մասին, հայտարարում է. «... իգիտութիւն այդպիսի արատաւոր անհատների ու խմբակների, որ այսուհետեւ կազմակերպութիւնը աչալուրջ կըհսկի նրանց եւ բռնելով՝ նոքա կենթարկուեն ամենածանր, մինչեւ իսկ մահւան պատժի»[159]:

Դումանը մեծ ուշադրություն էր դարձնում զինվորների բարոյական մաքրության եւ զինվորական կարգապահության հարցերին: Եվ մարտական կարգապահությունը խախտելու դեպքում չէր զլանում ամենախիստ պատժի ենթարկել նույնիսկ նախկինում քաջ ռազմիկի աւնում վաստակած հայ զինվորներին[160]:

Վտանգված շրջանների ինքնապաշտպանությունը ղեկավարող արեւմտահայ ֆիդայիներից ոմանք, չնայած մարտադաշտում դրսեւորած քաջագործություններին, երբեմն բնակչության նկատմամբ այնքան էլ լավ չեն վերաբերվել: Նրանց վարքագիծը հաճախ մեծ դժգոհություն է առաջացրել հայ բնակչության շրջանում: Ֆիդայիների մեջ եղել են մարդիկ, որոնք կարծել են, որ թուրքերի դեմ կռվելով, իրենք նվաճել են ուզած ձեւով ապրելու իրավունքը: Այդ օրերին ֆիդայիների թույլ տված արարքների համար հայ գյուղացիները բազմիցս բողոքներով դիմում էին «Մրգաստան» կենտր. կոմիտեին եւ անձամբ Դումանին: Բնակչության նկատմամբ անվայել ու բռնի միջոցներ գործադրած զինվորի նկատմամբ, անկախ նրա ծառայությունից ու ունեցած վաստակից, Դումանը կիրառել է ամենախիստ պատժամիջոցները, ընդհուպ մինչեւ գնդակահարություն:

Երեւանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը վարելիս նա իրականացնում է եւս մի մարտավարություն, որը

նույնպես անհրաժեշտ նորույթ էր ազատագրական պայքարում: Հրամանատարներ ընտրելիս նա, որպես օրենք, նախապատվությունը տալիս էր կռիվների բովով անցած մարտիկներին եւ հատկապես՝ արեւմտահայ ազատվել հայտնի փորձառու ֆիդայիներին: Բայց, երբ ընդհարումների ծավալները ընդարձակվեցին եւ տարածվեցին գրեթե ողջ հայաբնակ շրջանները, արդեն նկատելիորեն զգացվում էր փորձառու եւ վստահելի մարտիկների պակասը: Այդ իրավիճակում Դումանը կատարում է համարձակ, արդյունավետ միակ վճիռը: Նա ընտրում է առավել վստահություն ներշնչող երիտասարդների եւ նրանց հանձնարարում ինքնապաշտպանական շրջանների եւ մարտական խմբերի հրամանատարությունը:

Ինքնապաշտպանական շրջանների մարտախմբերի հրամանատարությունը երիտասարդներին վստահելու անհրաժեշտությունը ունեցել է եւս մի քանի պատճառներ: 1905 թ. Երեւանում կայացած Ռայոնական ժողովում Դումանի կողմից զինվորական մասի վերաբերյալ կարդացած զեկուցումից պարզվում է, որ ընդհարումների սկզբնական շրջանում կռիվների փորձ ունեցողներից քչերն են պատրաստակամություն հայտնել մասնակցելու մարտական ուժերի կազմակերպմանը եւ մեկնել գյուղերը:

«...Մարտական ուժեր կազմակերպելու համար,- ժողովում նշել է Դումանը,- դիմումներ եղան բոլոր փորձած եւ զինվորական մասին յայտնի գործիչներին, բայց, դժբախտաբար, դրանցից ոչ ոք չկարողացաւ գաւառ դուրս գալ...

Ստիպած գործը յանձնուեցաւ 10-12 թէեւ անփորձ, բայց եռանդուն ու նուիրուած երիտասարդների, որոնք արին, ինչ-որ կարող էին»[161]:

Ճիշտ է, նրա ընտրած երիտասարդները արժանավորներ էին, բայց մարտական գործողություններ ղեկավարելու համար անհրաժեշտ էին գիտելիքներ: Դումանն իր ընտրած երիտասարդներին անհրաժեշտ գիտելիքներ, զինվորական մարտարվեստի նրբություններին հաղորդակից դարձնելու եւ ուսուցանելու նպատակով Երեւանում հիմնում է ռազմագիտական դպրոց:

Նույն Ռայոնական ժողովում, անդրադառնալով ռազմական դպրոցի ստեղծման անհրաժեշտությանը, Նիկոլ Դումանը նշում է. «...Մենք չունինք զինուորական դպրոցներ: Այո՛, չունինք. բայց դա դեռեւս չի նշանակում, թէ մենք համերաշխ շտաբի փոխարէն պիտի ստեղծենք քաոս:

Դժբախտութիւն է, որ գործին չեն մասնակցում մեր օֆիցերները, դժբախտութիւն է, որ մենք չունինք զինուորական դպրոց, բայց դրա փոխարէն մենք ունենք մի ուրիշ, թէեւ անբաւարար, շկօլա: Դա մեր յեղափոխական կեանքն է: 15 տարուայ փորձերն ու փորձութիւնները...»[162]:

Հայկական կանոնավոր բանակ ստեղծելու գործում ռազմագիտական դպրոցի հիմնադրումը կարեւորագույն քայլերից մեկն էր: Նիկոլ Դումանն առաջինն էր, որ կարողացավ ոչ միայն ժամանակին գնահատել այդպիսի դպրոցի անհրաժեշտությունը, այլեւ կենսագործել, կյանքի կոչել այն:

«Այդ ժամանակ,- գրում է Սեդրակ Ջալալյանը,- Նիկոլը որոշեց զինուորական դպրոց բացել այն երիտասարդների համար, որոնք գործնականի մեջ հաջող էին եւ իրենց ընդունակություններով խոստանում էին զինուորական ասպարէզում ղեկավարողի դեր կատարել: Ընտրեցին 12 հոգի, որոնց մեջ մտնում էր Դրօն, հանգուցեալ Մկո Աղամալեանը, Արտաշէս Մելքոնեանը, բժ. Սմբատ Եղիազարեանը, ես եւ ուրիշ ընկերներ... 3 ամիս շարունակ Նիկոլը մեզ ծանոթացրեց զինուորական արուեստի թէօրիայի հետ»[163]:

Մարտական խմբեր կազմակերպվել են նաեւ Երեւանի գիմնազիայում, դպրոցներում, մայրաքաղաքի մի շարք թաղամասերում, ինչպես նաեւ հեռավոր շրջաններում: Այդ խմբերում ընդգրկված երիտասարդներին ամենօրյա պարապմունքների ընթացքում իրենց փորձն ու գիտելիքները են հաղորդել համապատասխան մարզիչ-մասնագետներ, որոնք նշանակվել են Զինվորական Մարմնի կողմից[164]:

Դպրոցն ավարտելիս Դումանը նրանց տվել է զինվորական խմբեր կազմելու, մարզելու եւ ղեկավարելու վկայականներ[165]:

Ընդհարումների սկզբնական շրջանում, քանի որ ամենուրեք թուրքերն էին նախահարձակ եղել եւ դարձել դրության տերը, տարբեր շրջանների միջեւ հաղորդակցության միջոցները լավ չէին գործում: Իսկ կայուն եւ ուժեղ ինքնապաշտպանություն կազմակերպելու համար անհրաժեշտ էր, որպեսզի հարեւան բնակավայրերի միջեւ հաղորդակցության ուղիները գործեին անխափան եւ մարտախմբերի համագործակցությունը դրվեր պատշաճ բարձրության վրա: Այդ ժամանակ լավ չէր գործում կապը Ջանգեզուրի, Դարալագյազի եւ Լեռնային Նախիջեւանի միջեւ: Որպեսզի այդ շրջանների միջեւ հաստատվեր հուսալի կապ, եւ տեղերի մարտական ուժերը կարողանային հարկավոր պահերին ազատորեն հաղորդակցվել եւ օգնել միմյանց, անհրաժեշտ էր վերացնել եղած խոչընդոտները, եւ առաջին հերթին, այդ շրջանները միմյանցից անջրպետող թուրքաբնակ գյուղերը:

Հարձակողական գործողություններ ծավալելու եւ թուրքական գյուղերը մաքրելու նպատակով Դումանը միավորում է միմյանց հարեւանությամբ գտնվող մի քանի ինքնապաշտպանական շրջաններ եւ ընդհանուր հրամանատար է նշանակում առավել փորձառու եւ համբավավոր ռազմիկների:

ՀՅԴ Բյուրոյին հասցեագրած հունիսի 30-ի նամակում՝ Դումանը հաղորդում է. «...Հրահանգ տվի, որ Մուրադը իր խմբով միանա Ռաշիդի հետ եւ ընդհանուր հրամանատարութիւնը վերցնի իր վրա: Դաշնակցական Խէօյին յօթը զինուած հայդուկներով ուղարկում եմ նրան օգնական: Այս խմբին կը միանայ եւ Մրգաստանից կամավորների մի խումբ հինգ հոգուց՝ իրենց սեփական զենքերով...»[166]:

Լեռնային Նախիջեւանի եւ Դարալագյազի շրջանների ընդհանուր կործանում թուրքաբնակ մի շարք գյուղեր, որոնցից ամենաշահավորը Սիսի հրամանատարությունը ստանձնում են անվանի հայդուկ Քեռին (Արշակ Գաֆֆյան) եւ Դրոն:

Շատ շուտով զգացվում է այդ մարտավարության՝ հարձակողական գործողություններ ծեռնարկելու արդյունավետությունը: Լեռնային Նախիջեւանի մարտական ուժերը Քեռու ու Դրոյի առաջնորդությամբ դիմում են հարձակման եւ ան գյուղն էր: Շնորհիվ այդ հաղթանակի բացվում են Նախիջեւանը Ջանգեզուրին եւ Դարալագյազին կա պող ուղիները: Հարձակողական գործողությունները հաջողությամբ են պսակվում նաեւ մի քանի այլ շրջաններում:

«Սիւնիքի խմբերը,- վկայում է Թադեւ Պետրոսյանը, որն այդ օրերին Դումանի հանձնարարությամբ գտնվում էր Ջանգեզուրում,- իրենց հակահարուածներով կրցան լռութեան մատնել թուրք ջարդարարներին: ...Ռաշիդի խումբը լաւ դաս տուեց Դարաբաղի թրքութեան. ազատուողները փախան դէպի Աղուտի-Վաղուտի: Չոփուռ Արսէնի խումբը, սարսափի մատնելով Զաբուղի թրքութիւնը, մի քանի հաջող արշաւանք ձեռնարկեց Շուռնուխի խճուղիի երկու կողմը գտնուած թուրք գիւղերի վրայ»[167]:

Իր ուշադրության տեսադաշտում մշտապես պահելով շրջանների ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները՝ Դումանը մեծ ուշադրություն է դարձնում Երեւանի մարտական ուժերի ամրապնդմանը: Քաղաքի յուրաքանչյուր թաղում կամ ինքնապաշտպանական գոտում փորձառու խմբապետերի գլխավորությամբ դիրքեր էին գրավել զինված մարտական խմբեր:

«Նախապիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գրքույկում անդրադառնալով քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրներին՝ Դումանը գրում է. «Քաղաքը բաժանվում է թաղերի, եւ ամեն մի թաղ կազմակերպում է ինքնապաշտպանութեան մի խումբ: Թաղերն իրենց խմբերը բաժանում են երկու մասի - մնայուն եւ թուղթի:



Սմբատ Բորոյան (Մախլուտա)

«Թռուցիկ» խմբակը օգնութեան է վազում ընդհարման կէտը կամ գնում է ուժեղացնելու վտանգավոր ծայրաթաղը՝ նայելով պայմաններին, յարմարութիւններին եւ ստացած հրահանգին: Այդ խմբերից զատ, կամավորներից կազմակերպվում է ամբողջ քաղաքի համար մի առանձին խումբ՝ շրջիկ կամ «ֆռռա» անունով: Այս խումբը, երբ զգացվում է ընդհարման վտանգը, բաժանվում է մասերի՝ ցերեկները աննկատելի պտտում է բոլոր բազմամարդ վայրերում, ուր ժողովուրդը խառն է, որպեսզի անակնկալ ընդհարման րոպեին ցույց տա առաջին դիմադրութիւնը եւ այդպիսով սահմանափակի իր ազգակիցների զոհերի քիւը»[168]:

Փոքր ծավալի ընդհարումներ սանձազերծելուց զատ, մահմեդական վերնախավը, լրջորեն նախապատրաստվելով, վճռում է նոր հարձակումներ ձեռնարկել Երեւանի հայկական թաղամասերի վրա եւ վճռական բեկում մտցնել արդեն ամիսներ շարունակվող ընդհարումներում: Զանազան ուղիներով եւ միջոցներով Երեւանում կենտրոնացնելով զգալի քանակութեամբ մարտունակ ուժեր՝ թուրքերը սեպտեմբերի կեսերին զանգվածային հարձակումներ են ձեռնարկում հայկական թաղամասերի վրա:

Դումանի գլխավորած Զինվորական շտաբը իր հերթին համապատասխան քայլեր է կենսագործում հակառակորդի գրոհները դիմագրա-

վելու եւ ջախջախիչ հարված հասցնելու ուղղութեամբ: Թուրքերի սեպտեմբերեան հարձակումը Երեւանի ինքնապաշտպանական ուժերի համար արդեն անակնկալ չէր: Ջուտ մարտավարական նկատառումներով Դումանը խստիվ հրամայում է հայ զինվորներին՝ նախահարձակ չլինել եւ առաջինը չսկսել կռիվը: Նրա մտահղացմամբ, թուրք հրոսակախմբերին հարկավոր էր թույլ տալ առաջինը սկսել հարձակումը, հրապուրել նրանց գրոհելու հայ ինքնապաշտպանական ուժերի դիրքերի վրա եւ հզոր հակահարվածներով վերջնականապես պարտութեան մատնել:

«Թուրքերը,-պատմում է այդ դեպքերի մասնակից Տիգրան Դեւոյանը,- երես առած, ամէն տեղից սկսեցին կրակել հայերի վրայ: Վերջապէս, խօսեց Դումանը՝ հրամայելով. «Կրակ բոլոր դիրքերից»:

Նորքի տակի լեռներից, թուրքերին սահմանակից թաղերից մի այնպիսի ուժեղ համազարկի կապուեցաւ թուրք քաղամասը, որ 3-4 օր թուրքերը հնարաւորութիւն չունեցան իրենց քիթը դուրս հանելու»[169]:

Ինչպես նախորդ՝ մայիսյան, այնպես էլ այդ օրը տեղի ունեցած մարտերում դաշնակցական մարտախմբերի հետ միասնական բշնամու դեմ մարտնչել են հնչակյան մարտիկները:

Այդ իրողությունը իր հուշերում վկայում է Ս. Օհանջանյանը՝ նշելով. «Երկու կազմակերպութիւնների- դաշնակցութեան եւ հնչակեանների-դիրքերից, շարունակ լսում էին անընդհատ, կատաղի հրացանաձգութիւն, փողոցներում ոչ մի թուրք չէր երեւում... »:

Հայ ինքնապաշտպանական ուժերը նվաճում են հերթական փայլուն հաղթանակը եւ ինչպես նախորդ մարտերում, այս անգամ եւս հայ մարտիկները հաղթում են ոչ թե քանակական գերակշռությամբ, այլ մարտում դրսեւորած կշռադատված, խելամիտ, իհարկե, հարձակողական բնույթի մարտավարությամբ ու կռվելու վարպետությամբ:

Ս. Օհանջանյանի գնահատմամբ «Կռտղ հայերի յամառ եւ կատաղի դիմադրութիւնը խորին հաւատ էր ներշնչում ժողովրդին, որ հայը այլեւս առաջւանը չէ, թիւրքի սրի առաջ մորթվող ոչխարը, որ հայն էլ վերջապէս եկաւ այն խորին գիտակցութեան, որ մեր ինքնապաշտպանութեան ամենալաւ միջոցը-Մովսեսական անողոք օրենքն է՝ աչքի տեղ աչքը, ատամի տեղ ատամը...»[170]:

Ինչպես նախորդ, այնպես էլ սեպտեմբերյան կռիվներում հայկական մարտական ուժերի հարվածը վճռական եւ գգաստացնող նշանակություն է ունենում: Երեւանի նահանգապետը մահմեդական բնակչության վերնախավի խնդրանքով հարկադրված միջոցներ է որոնում հայ ինքնապաշտպանական ուժերի հարձակումը կանգնեցնելու եւ հաշտություն կայացնելու համար:

«Նահանգապետ Տիգէնհաուզէն եւ զօրքերի ընդհանուր հրամանատար Շվէտով,- ըչում է Ս. Օհանջանյանը,- առաջարկեցին հաշտել...»[171]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, քննարկելով առաջարկությունը, նահանգապետին որպես հաշտության երաշխավորի դարձյալ առաջադրում է գրեթե նույն պահանջները, ինչրներկայացրել էր մայիսյան կռիվների ավարտին[172]:

Քանի որ իշխանությունները զորքի աջակցությամբ շարունակում էին իրականացնել հայերին զինաթափելու քաղաքականությունը, այդ պատճառով հայկական կողմը չի սահմանափակվում միայն այս պայմանների առաջադրմամբ: Կռիվները դադարեցնելու եւ խաղաղություն հաստատելու համար նահանգապետին եւ թուրքական կողմին առաջադրվում են նաեւ հետեւյալ պահանջը. «...նկատի առնելով ազգաբնակչութեան անապահով վիճակը՝ ներկայ պայմաններում անհրաժեշտ է դադարեցնել Երեւանի նահանգում տիրող հայերին զինաթափ անելու միջոցները...»[173]:

Հայկական կողմից նահանգապետին ներկայացված՝ հայերին չզինաթափելու պայմանը պատահական չէր: Մինչ սեպտեմբերյան կռիվները Երեւանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի Զինվորական մարմինը երբեմն հարկադրված էր միջոցներ ձեռնարկել ոչ միայն ինքնապաշտպանություն կազմակերպելու ուղղությամբ:

Երեւանի նահանգում հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակներն ու մահմեդականության պարտությունը ցարական իշխանություններին թելադրում են հայերի նկատմամբ ձեռնարկել նոր միջոց՝ զինաթափում: Անդրադառնալով զինաթափման պատճառներին՝ «Դրօշակ»-ը առանձնացնում է նրանցից երկուսը. «Յանցաւոր է րին՝ «Դրօշակ»-ը առանձնացնում է նրանցից երկուսը. յայտարարւում հայը, որ թոյլ չը տւեց իրեն խողխողել ոչխարի պէս: Այս բոլորը արդիւնք է այն բանի, որ թուրքերն ամէն տեղ ընկճւել են ու քիթերը կախել: Քանի մեզ էին կոտորում, կառաւարութիւնը հետեւում էր laisser faire-ի քաղաքականութեան, հենց որ մենք սկսեցինք պատասխանել, սկսւեց զինաթափումը:

Հայերին զինաթափ անելու երկրորդ նպատակն էր՝ հնար տալ թուրքերին գարնանը սար՝ եայլաղ բարձրանալ...Կառաւարութեան վերաբերմունքը չափազանց ննդգաւոր էր ու կասկածելի: Հայ գիւղեր են ոմբակոծում, իսկ ոչ մի թուրք գիւղ չի պատժվում»[174]:

Վ. Արծրունու գնահատմամբ հայերին զինաթափելը պայմանավորված էր նաեւ հետեւյալ հանգամանքով: Կայսրությունում ծավալվող հեղափոխական շարժումներից հայությանն ու հայ հեղափոխական կազ-

մակերպություններին հեռու պահելու ու նրանց ուշադրությունը ինքնապաշտպանության կազմակերպման վրա բեւեռելու քաղաքականությունը կենսագործելիս, ցարական իշխանությունները չէին նախատեսել, որ «...այդ կռւի մէջ պէտք է աւելի ուժեղանային կազմակերպութիւնները: Այդպէս էլ եղաւ, ինքնապաշտպանութեան հետ աւելի ուժեղացաւ յեղափոխական շարժումը եւ կառաւարութիւնը շփոթուեց: Այդ տեսնելով զինւորական շտաբը իր ձեռքն առաւ երկրի վարչութեան ղեկը ու սկսեց մի ուրիշ ձեւի քաղաքականութիւն, որը այնպէս յաջող կերպով գործ էր դրել միւս ծայրագաւառներում, այն է պատժական սիստեմը»[175]:

Զորքի միջոցով ինքնապաշտպանական ուժերին զինաթափելու եւ պատժիչ միջոցներ կիրառելու ժամանակ իշխանությունները հետապնդել են հետեւյալ նպատակը. 1. Ժողովրդին ցույց էր տալիս իր զինվորական ուժը: Ժողովուրդը, տեսնելով զինվորական ուժը, կարող էր սարսափի մատնվել ու հեռու մնալ հեղափոխական շարժումներից, 2. Հեղափոխական կազմակերպություններին տրամադրում էր զորքի դեմ, եւ դրանով հող նախապատրաստում զորքի ու հեղափոխական կազմակերպությունների բշնամացմանն ու ընդհարմանը: Այսինքն, ցարական իշխանությունների կողմից դա մշակված քաղաքականություն էր, զորքի միջոցով ոչնչացնել հայ մարտական ուժերը[176]:

Կատարելով իշխանությունների հրամանը, զորքը բազմիցս փորձեր է ձեռնարկել զինաթափել ու պատժել հայ բնակչությանն ու ինքնապաշտպանական ուժերին գրեթե բոլոր հայկական բնակավայրերում, բայց շատ անգամ մատնվել է անհաջողության:

Հայերը, նախապես տեղեկանալով ցարական իշխանությունների կողմից ձեռնարկվող զինաթափման մասին, խնամքով թաքցնում են զենքերը:

Օրինակ, Երեւանի նահանգապետը մահմեդականներին օգնելու նպատակով որոշում է զորքով Քանաքեռից շարժվել Երեւան եւ զինաթափել հայերին: Այդ մասին իմանալով՝ Դումանն անմիջապես իր ստորագրությամբ եւ դաշնակցության կարմիր կնիքով հաստատված մի սպառնալից երկտող է ուղարկում նահանգապետին՝ հիշեցնելով Նակաշիձեի ճակատագիրը եւ առաջարկում է նրան զորքը Երեւանից հետ տանել Քանաքեռ, պահպանել նախկին չեզոքությունը: Բաքվի նահանգապետ Նակաշիձեի եւ ցարական բազմաթիվ աստիճանավորների սպանությունները հայ վրիժառուների կողմից իզուր չէին անցել: Ստանալով Դումանի երկտողը եւ տեղյակ լինելով նրա սպառնալիքի արժեքին՝ նահանգապետը փոխում է իր որոշումը[177]:

Հայ-թուրքական ընդհարումները տարածվելով ու խորանալով, 1905 թ. աշնանը ընթանում էին Անդրկովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում: Թեպետ հայ ինքնապաշտպանական ուժերը մի շարք շրջաններում արդեն կարողանում էին կազմակերպված հակահարվածներով պատասխանել հայկական բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերի ոտնձգություններին, սակայն կռիվները չթուլացող ուժգնությամբ շարունակվում էին եւ դեռեւս որեւէ հավաստող երաշխիք չկար, որ դրանք շատ շուտով կարող էին ավարտվել:

Կովկասահայության ինքնապաշտպանության դեկն ստանձնած Հ. Յ. Դաշնակցությունն անհրաժեշտաբար պիտի վերլուծեր անցած ամիսներին կովկասահայության կյանքում, մասնավորապես ինքնապաշտպանական մարտերում տեղի ունեցած իրադարձությունները, կատարեր համապատասխան եզրահանգումներ եւ ըստ այդմ ընդուներ ստեղծված կացության համահունչ որոշումներ:

Քանի որ հնարավոր չէր գումարել Ընդհանուր ժողով, ՀՅԴ Արեւելյան բյուրոն 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում գումարում է Կովկասյան Ռայոնական ժողով:

Ցարական կայսրությունում եւ կովկասահայության կյանքում ծավալվող դեպքերի թելադրանքով Ռայոնական ժողովի օրակարգն է դառնում . «Փետրվարեն ի վեր ծայր տուած հայ-թաթարական կռիւները, ինչպէս նաեւ, անշուշտ, Դաշնակցութեան գործունեութիւնը համառուսական ծիրին մէջ»[178]:

Նախորդ ամիսներին տեղի ունեցած դեպքերն ու հատկապես ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները միանշանակորեն ապացուցում էին, որ ինքնապաշտպանության կազմակերպման գործում կարեւորագույներից մեկն ու առաջնահերթը ֆինանսական միջոցներն էին: Այդ պատճառով նկատի ունենալով ինքնապաշտպանության հույժ կարեւորությունը, Ռայոնական ժողովում ժողովականներն առաջին հերթին քննարկում են դրամի հետ կապված խնդիրը[179]:

Ինչպես միշտ բարվոք չի եղել կուսակցության տրամադրության տակ գտնվող ֆինանսների վիճակը:

Ըստ Ռայոնական ժողովի արձանագրություններում տեղ գտած տվյալների. «Շրջաններից տրուած տեղեկութիւններից երեւաց, որ 1905 թ. Հ.Յ.Դաշնակցութիւնը մուտք է ունեցել 500.000-600.000 ռ., որից գէնք է գնուել 200.000 ռ., առանց հաշուելու ճանապարհածախսն

ու կորուստը: Կուսակցութիւնը Կովկասում ունի մօտաւորապէս 1.800 մոսին եւ բերդան, 640 մաուզէրի ատրճանակ, մօտ 100.000 ծայր.-ինչ որ չափազանց անբաւարար է»[180]:

Ինչ խոսք, արձանագրությունում նշված դրամի քանակը, իրոք. չափազանց սահմանափակ է: Կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու, զենք ու զինամթերք գնելու համար Դաշնակցությունն անհրաժեշտ գումարներ ձեռք բերելու համար , ինչպես արդեն նշվել է, քաղաքներում եւ շրջաններում կազմակերպել է դրամահավաք: Այսինքն, դրամը տրամադրում էին ոչ թէ հայ մեծահարուստները, որոնք Կովկասում պատկառելի թիվ էին կազմում, այլ ժողովուրդն ինքն էր հոգում՝ գնելու զենքն ու զինամթերքը:

Հարկ է ընդգծել, որ փաստաթղթերում զենք ու զինամթերքի, ինչպես նաեւ ծախսված դրամի քանակությունը ներկայացնող թվերը հիմնականում տարբեր են եւ այնքան էլ հավաստի ու համոզիչ չեն:

Օրինակ, Աբ. Գյուլխանդանյանի տվյալներով հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանական շրջաններից յուրաքանչյուրը ունեցել է.

«Բագուն մօտ 300 հրացան եւ 400 ատրճանակ.
Շամախի՝ Գէօքչայ եւ Նուխի, մօտ 200 հրացան եւ 200 մեծ ատրճանակ.
Գանձակ քաղաք եւ գաւառ, մօտ 500 հրացան եւ 200 մեծ ատրճանակ
Շուշի քաղաք եւ գաւառ, մօտ 600 հրացան եւ 200 մեծ ատրճանակ.
Ջանգեզուրի շրջան», մօտ 300 հրացան եւ 200 մեծ ատրճանակ.
Ղազախի շրջան, մօտ 500 հրացան եւ 200 մեծ ատրճանակ.
Երեւանի գաւառ, մօտ 400 հրացան եւ 200 մեծ ատրճանակ.
Էջմիածնի գաւառ, մօտ 200 հրացան եւ 100 մեծ ատրճանակ.
Նախիջեւանի գաւառ, մօտ 400 հրացան եւ 200 մեծ ատրճանակ.
Թիֆլիսի գաւառ, մօտ 300 հրացան եւ 2000 մեծ ատրճանակ.
Ուրեմն ընդամենը՝ 4.000 հրացան եւ 2,000 -2,500 մեծ ատրճանակներ»[181]:

Ջենքերի նշված քանակությանը, ըստ Աբ. Գյուլխանդանյանի, պիտի գումարել նույն քանակությամբ հրացաններ ու ատրճանակներ, որոնք ընդհարումների ժամանակ ձեռք էին բերել հայ բնակչությունը եւ դաշնակցական կառույցները:

Բոլորը միասին կստանանք «մօտ 8,000 հրացան եւ մօտ 4.000 մեծ ատրճանակ: Եթէ ամէն մի ատրճանակին հաշուենք մօտ 300 փամփուշտ եւ ամէն մի հրացանին մօտ 1,000 փամփուշտ, կը ստանանք մօտ 7-8 միլիոն փամփուշտ»[182]:

Կարելի է ասել, որ Ռայոնական ժողովում եւ Աբ. Գյուլխանդանյանի վկայած տվյալները բավարար չեն լիովին ներկայացնելու հայ ինքնապաշտպանական ուժերի տրամադրության տակ գտնվող զենք ու զինամթերքի, ինչպես նաեւ ծախսված դրամի իրական քանակը:

Օրինակ, հանրահայտ իրողություն է, որ դեռեւս ընդհարումներից առաջ՝ 1904 թ. շնորհիվ Պատվավի Վարդի եւ Բիձայի (Սվազցի Հարություն) նախաձեռնության ու հնարամտության, Ուսուլ Դրիգորը, Արամայիսը, Ուսուլ Խէչոն եւ Վռամը կարողացել էին Ալեքսանդրապոլի զինվորական պահեստից փախցնել հարյուրավոր հրացաններ եւ տասնյակ հազարավոր փամփուշտներ եւ տեղափոխել կուսակցության գաղտնի պահեստները:

Մեկ այլ օրինակ. 1910 թ. Կոպենհագենում տեղի ունեցած ընկերվարական (սոցիալիստական) կուսակցությունների միջազգային համագումարում ունեցած իր ելույթում Նիկոլ Դումանը ժողովի մասնակիցների ուշադրությանը ներկայացնելով զինված ապստամբության եւ ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրները՝ նշել է. «...Դաշնակցությունը Կովկասում այժմ ունի ոչ թէ գեներալներ առանց բանակի, այլ հակառակը, բանակ՝ առանց գեներալների: Բայց ինչպիսի՞ բանակ է դա: Միայն մի նահանգում, որտեղ ես ինքս էի գլխավորում բանակը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, զենք էին կրում (հրացան, եւ ոչ թէ ատրճանակ), մի ողջ դիվիզիա, գրեթե 16000 թվակազմով...»[183]:

Սեդրակ Ջալալյանի հավաստմամբ իր եւ Արտաշես Մելքոնյանի մարտական խումբը, որին Դումանը ուղարկել է Ղազախ-Շամշադինի շրջան Սեւքարեցի Սաքոյին օգնության, բաղկացած էր 300 մարտիկներից[184]:

Այդ նույն Աբ. Գյուլխանդանյանի վկայությամբ Գանձակում իրենց կառուցած փամփուշտի պատրաստման մեծ արհեստանոցում օրական պատրաստում եւ պահեստավորում կամ դիրքերն էին ուղարկում Բերդաձորի հրացանի 10.000 փամփուշտ[185]:

Կարելի է վկայակոչել նաեւ բազմաթիվ փաստեր, որոնք միանշանակորեն ապացուցում են, որ զենք ու զինամթերքի քանակության վերաբերյալ Աբ. Գյուլխանդանյանի ներկայացրած տվյալները ավելի քան համեստ են: Չի բացառվում, որ նրա ներկայացրած տվյալները վերաբերում են Բաքվի Զինվորական մարմնի կողմից, որի անդամն էր նաեւ ինքը, ինքնապաշտպանական շրջաններին հատկացրած զենքերին:

Զենք ու զինամթերքի գնման հարցում թուրքական կողմը ընդհարումներից առաջ եւ ընդհարումների ընթացքում ունեցել է զգալի առավելություններ: Ի տարբերություն հայերի, թուրքական կողմը դրամահավաքի կարիք չի ունեցել: Զենք ու զինամթերք գնելու ծախսերը հիմնականում հոգում էին բուրք առաջնորդներն ու մեծահարուստները:

Քանի որ զենքն ու զինամթերք ձեռք բերելու հիմնական միջոցը եղել եւ մնում էր դրամը, բնական է, որ թուրքականը կողմը տիրապետում էր զենք ու զինամթերքի անհամեմատ մեծ միջոցների:

Օրինակ, Կովկասում Դաշնակցության ունեցած մոտավորապես 1.800 մոսին եւ բերդան հրացանների(Ռայոնական ժողովի պաշտոնական տվյալն է-Հ.Գ.) փոխարեն թուրքերի կողմից Գանձակի գավառում գործող Դալի Ալիի հրոսակախումբը ունեցել է 200, իսկ Նազիի հրոսակախումբը՝ 70 մոսին հրացան եւ մեծ քանակությամբ փամփուշտ: Ընդորում, ոչ միայն վերոհիշյալ, այլեւ գրեթե բոլոր թուրք հրոսակախմբերը զինված են եղել մեծամասամբ մոսիններով[186]:

Որքա՞ն ֆինանսական միջոցներ էին պետք, որպեսզի Դաշնակցությունը կարողանար գնել անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք եւ լուծեր ժողովրդին զինելու, մարտական խմբեր կազմավորելու խնդիրը:

Այդ հարցի վերաբերյալ Ռայոնական ժողովում եղել են տարբեր կարծիքներ եւ առաջարկություններ:

Օրինակ, «Ոսկանապատի(Բաքու)ներկայացուցիչը պնդում է, որ «Հ.Յ.Դաշնակցութեան համար հարկաւոր է ճարել առնուազն 2 միլիոն ռ., թէ չէ կը խայտառակուենք»[187]:

«Ոսկանապատի» պահանջած 2 միլիոնը վերաբերում է միայն Բաքվին, իսկ որքան էր անհրաժեշտ վտանգված մնացած բոլոր ինքնապաշտպանական շրջաններն ըստ ամենայնի զինելու եւ այլ կարիքները հոգալու համար:

Այսուհանդերձ, թեեւ այս հարցը չափազանց կարեւոր էր, բայց դրա վերաբերյալ վերջնական որոշում ՀՅԴ Ռայոնական ժողովում չի ընդունվել:

Ռայոնական ժողովում բուռն վիճաբանություններ է ծավալվել մարտավարության(տակտիկա)խնդրի քննարկման ժամանակ: Ինչպիսի՞ դիրքորոշում պիտի որդեգրեր Դաշնակցությունը ընթացող կռիվներում թուրքերի վերաբերմամբ:

Ժողովականներից ոմանք, օրինակ Ավետիք Իսահակյանը, Համազասպը, Արմեն Գարոն, Շահրիկյանը եւ այլոք, ելակետ ունենալով այն իրողությունը, որ թուրքերը պատրաստություններ տեսնելուց հետո անպայմանորեն հարձակվելու էին հայերի վրա, առաջարկում են նախահարձակ լինել եւ թույլ չտալ նրանց՝ քոչը բարձրացնելու սարերը: Ժողովականների մյուս մասը, որոնց թվում Իշխանը(Հովսեփ Արղության), Համո Օհանջա-

նյաններ պաշտպանում են հակառակ տեսակետը: Նրանք առաջարկում են դիմել հաշտության, խախտողություն կնքել եւ թույլ տալ թուրքերին՝ քոչը բարձրացնելու սարերը[188]:

Բուռն վիճաբանություններից հետո Իշխանի ու Հով. Քաջազնունու կողմից ներկայացվում են երկու հակոտնյա բանաձեւեր, որոնք ժողովականների կողմից մշակվելուց հետո, ընդունվում են հետեւյալ ձեւակերպմամբ.

«Ա) Ընդունում ենք, որ մեր իրծը հաշտութիւնն է եւ ոչ կռիւ թուրքերի հետ...ընդունում ենք, որ իսկական եւ հաստատ հաշտութիւն չի կարող կայանալ, մինչեւ թուրքերը չհամոզվեն, թէ իրենց դէմ մի ոյժ ունեն, որն ընդունակ է ինքնապաշտպանութեան եւ որ յարձակման դեպքում՝ պատրաստ է խստիւ պատժել յարձակուողին...

...պատրաստ լինելով ընդդիմութեան՝ մենք երբեք նախայարձակ չպետք է լինենք այն տեղերում, ուր թուրք տարրը թոյլ է կամ իր բռնած դիրքով մեզ վնաս է սպառնում: Միանգամայն մերժելով նախայարձակման տակտիկան՝ ընդունում ենք, որ այն տեղերում եւ դեպքում, ուր մեզ պարզէ ի պարզ վտանգ է սպառնում թուրքերի բռնած դիրքից, դիրք՝ որ այսօր-վաղը կարող է բացարձակ յարձակման վերածուել, այդ տեղերում եւ այդ դէպքերում ոչ միայն ընդունում ենք նախայարձակման ինիցիատիւը, այլեւ պարտաւորական ենք համարում»[189]:

Իսկ ո՞վ պիտի որոշեր նախահարձակ լինելու պահն ու անհրաժեշտությունը: Համաձայն Ռայոնական ժողովի որոշման, այդ իրավունքը վերապահվում էր ՀՅԴ կենտրոնական կոմիտեներին եւ կենտրոնականի իրավասություններ ունեցող կոմիտեներին, որոնք նախահարձակման մասին որոշում կայացնելու համար պիտի գումարեին իրենց շրջանի Ռայոնական ժողով: Այնուհետեւ, «Նախայարձակ լինելու մոմենտի որոշումը իրաւասու մարմինները վճռում են գաղտնի քուէարկութեամբ՝ ժողովականների ձայների 2/3 ի մեծամասնութեամբ»[190]:

Բ) Ամենախիստ պրոպագանդ անել աշխատաւոր թուրք դասակարգի մէջ, բարձրացնելու նրա գիտութիւնը, հասկացնելով՝ որ երկու ազգերի շահերը կատարելապէս համապատասխան են իրար»[191]:

Քանի որ Հ.Յ.Դաշնակցությունը ընկերավարական(սոցիալիստական) կուսակցություն է, ապա պիտի նկատել, որ մարտավարության վերաբերյալ ընդունած որոշման Բ. կետը պայմանավորված էր նրա որդեգրած ընկերավարության(սոցիալիզմ) ծրագրային դրույթով ու գաղափարաբանությամբ: Իսկ այն դժնդակ ժամանակահատվածում, երբ թուրքական հրոսակախմբերը հարձակումներ էին գործում հայաբնակ

գրեթե բոլոր բնակավայրերի վրա, միամգամայն անհնաստ էր եւ բոլորովին հիմնագուրկ ու անտեղի հույսեր ունենալ, որ կարելի էր թեկուզեւ ամենախիստ քարոզչությամբ(պրոպագանդա) բարձրացնել թուրք աշխատավոր դասակարգի գիտակցությունը:

Կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպմանը վերաբերող կարեւորագույն բաղադրամասերից մեկը Կովկասում զինվորական ուժերի կազմակերպման ու պահպանման հարցն էր. որը նույնպես քննարկվել է Ռայոնական ժողովում:

Ինչպիսի՞ զինվորական ուժեր պիտի ունենար Հ. Յ. Դաշնակցությունը՝ զո՞րք թէ միլիցիա(տեղական ոստիկանություն):

Համաձայն Ռայոնական ժողովի արձանագրություններում տեղ գտած տվյալների, Հ. Յ. Դաշնակցությունը Կովկասում ունեցել է երեք տեսակի զինվորական ուժեր.

1. Զորք...

Հ. Յ. Դաշնակցության ձեռքի տակ գտնվող ամենամեծ զինվորական ուժը զորքն էր, որը կազմված էր զինվորական գործին նվիրված անհատներից: Զորքի անդամները ապրել են կուսակցության հաշվին, նրանից յուրաքանչյուր ամսեկան ստացել է 10-12 ռուբլի, հագուստ, զենք, ձի եւ այլ անհրաժեշտ պիտույքներ:

Զորքը կազմված է եղել հետեւակ եւ հեծյալ զինվորներից: Հետեւակը կովող ուժն էր, նրա պարտականությունն էր պահպանել իրենց բնակավայրերը, կատարել հետախուզություն, իսկ հեծյալները՝ «սահմանապահ, աւազակներ բռնող, թալանը յետ խլող, յարձակումների դիմադրող, յարձակուող, սուրհանդակ, նաեւ հետախոյզ եւ այլն»[192]:

2.Միլիցիա...

Զինվորական ուժի այս տեսակը կազմված էր տեղացի երիտասարդներից, որոնք նախկինում ծառայել էին ռուսական բանակում: Միլիցիայում ընդգրկվածները ապրում էին իրենց գյուղերում եւ ժողովրդի ու կուսակցության կողմից չեն վարձատրվել: Նրանք գործել են իրենց ընտրած խմբապետի ու տասնապետի հրամանատարությամբ եւ յուրաքանչյուրը ունեցել է իր սեփական զենքը: Եթե միլիցիայի անդամը ունեւոր չէր, ապա զենքը ստանում էր կազմակերպությունից:

Համաձայն ժողովի բնութագրման«Միլիցեան ծանրութիւն չէ ժողովրդի համար, ինչպէս զօրքը. միլիցեան բարոյապէս աւելի բարձր է, քան զօրքը, բայց եւ այնքան շարժուն եւ ռազմունակ չէ ինչպէս զօրքը, որ շարունակ զէնքի տակ է: Միլիցեան կատարում է նոյն գործը, բայց իր գիւղի սահմաններում»[193]:

Բացի վերոհիշյալներից, Դաշնակցության տրամադրության տակ կային գյուղացի կամավորներից կազմված խմբեր, որոնք ոչ զինվեր էին համարվում եւ ոչ էլ միլիցիա, բայց պատրաստ էին անհրաժեշտության դեպքում մասնակցել կռիվներին:

Զինվորական ուժի որ տեսակին պիտի նախապատվություն տրվեր՝ զորքին, թե միլիցիային: Զորքը թեեւ ավելի շարժուն էր եւ ռազմունակ, բայց դրա փոխարեն նրան պահելու, զինելու ու հանդերձավորելու համար հարկավոր էին ֆինանսական հսկայական միջոցներ, որոնք կուսակցությունը ձեռք էր բերում չափազանց մեծ դժվարությամբ:

Այս հարցի վերաբերյալ կարճ վիճաբանությունից հետո ժողովականները միաձայն ընդունել են հետեւյալ որոշումը.

«1. Իբրեւ սիստեմ ընդունել միլիցիան, որի կազմակերպութեանը դիմել անմիջապէս պարտաւորեցուցիչ կերպով ամէն տեղ:

2. Պատրաստի ազատ զինուորներ ունենալ, կարիք զգացուողի դեպքում՝ պահանջի minimum-ի(նվազագույն)չափով»[194]:

Եթե ելակետ ունենանք պատմական այդ ժամանակահատվածում հայության, մասնավորապես կովկասահայության կյանքում տեղի ունեցող դեպքերի ու իրադարձությունների յուրահատկություններն եւ փորձենք անաչառորեն գնահատել Ռայոնական ժողովի ընդունած որոշումները, ապա պիտի ընդգծել, որ այդ որոշումները, հատկապես միլիցիայի եւ զորքի վերաբերյալ, այնքան էլ հասկանալի, փաստարկված եւ համահունչ չեն ժամանակաշրջանի պահանջներին ու առանձահատկություններին:

Ինքնապաշտպանությանը առնչվող թերեւս միակ հստակ բանաձեւը, որն ընդունել է Ռայոնական ժողովը, վերաբերում է Ահաբեկչությանը(տեռոր):

Նախորդ տարիների փորձը, հատկապես 1903 թ. հունիսի 13-ի ցարի տխրահռչակ օրենքի հրապարակումից հետո ցարական աստիճանավորների ու նրանց գործակալների նկատմամբ կատարած ահաբեկչության դեպքերը հավաստում էին, որ այդ գործողությունները ինչ-որ տեղ ունենում էին զգաստացնող ազդեցություն: Իսկ իր գործունեության ընթացքում Դաշնակցությունը, կարելի է ասել, արդեն ձեռք էր բերել շոշափելի փորձառություն: Բնական է, որ տեռորը հետայսու դարձյալ պիտի մնար նրա ուշադրության կենտրոնում:

Համաձայն «Ահաբեկչության» (տեռոր)-ի մասին ընդունած բանաձեւի.

«1. Ընդունում է տեռորը՝ պաշտօնական եւ ոչ պաշտօնական անհատների դէմ, որոնք մեզ համար անյարմար դեր են կատարում բուրք-հայկական ընդհարումների խնդրում:

2. Տեռորի կարող են ենթարկուել բոլոր պաշտօնեաները՝ առանց պաշտօնների եւ աստիճանների խտրութեան:

3. Տեռորը կատարում է «Հայկական Ահաբեկիչ Մարմնի» անուան տակ:

4. Պրիստաւին եւ նրանց ցածր պաշտօնեային տեռորի կարող է ենթարկել միմիայն տեղական Կենտրոնական կոմիտէն»[195]:

Ընդհարումների ընթացքում գավառներում ու շրջաններում տեղի ՀՅԴ կառույցներին կից, ինչպես արդեն նշվել է, կազմավորվել ու գործում էին Զինվորական մարմիններ, որոնց իրավասության մեջ էին մտնում ինքնապաշտպանական մարտական ուժերի ղեկավարումը: Ռայոնական ժողովում քննարկվել եւ համապատասխան բանաձեւ է ընդունվել նաեւ այս հարցի, այն է՝ ինքնապաշտպանությունը ղեկավարող մարմինների վերաբերյալ:

Ըստ ժողովի ընդունած բանաձեւի. Պատերազմական իրավիճակում ՀՅԴ յուրաքանչյուր մարմնից կից կազմվում է համանուն Զինվորական մարմին: Օրինակ, ՀՅԴ բյուրոյից կից՝ Զինվորական բյուրո, կենտրոնական կոմիտեից՝ Կենտրոնական Զինվորական մարմին եւ այլն: Ընդսմին, Զինվորական բյուրոյին էին ենթարկվելու Զինվորական մարմինները:

Զինվորական բյուրոյի իրավասության մեջ էր մտնում զենք ու զինամթերքի եւ մարտական ուժերի բաշխումը: Զինվորական բյուրոյի էր վերապահվում Ռայոնական ժողովի որոշումների սահմաններում որոշելու ընդհանուր մարտավարության ուղղվածությունը, բայց հետեւյալ վերապահումով՝ այդ դեպքում նա իր ընդունած որոշումները պիտի համաձայնացներ ՀՅԴ տեղի մարմնի հետ[196]:

Արդեն մի քանի ամիս շարունակվող կռիվները միանշան ցույց էին տալիս, որ զորքն ու ոստիկանությունը ոչ միայն պաշտպանում եւ հովանավորում էին թուրք հրոսակախմբերին, այլեւ շատ հաճախ նրանց հետ միացած, ներխուժում էին հայկական բնակավայրերն ու սպանում հայերին եւ բռնագրավում նրանց ունեցվածքը: Ռայոնական ժողովն անշուշտ պիտի անդրադառնար նաեւ այդ հարցին եւ համապատասխան որոշում կայացներ: Համանման իրավիճակում ի՞նչ պիտի անեին ու ինչպե՞ս պիտի իրենց դրսեւորեին հայ մարտական ուժերը. լուռ համբերությամբ պիտի դառնային տեղի ունեցող դեպքերի սոսկ ականատե-

՞սը, թե պատասխան համարժեք հակահարված տային նրանց ոտնձգություններին:

Համաձայն Ռայոնական ժողովի որոշման «...այդպիսի դէպքերում սկզբունքով ընդունել նաեւ կռիւը զօրքերի դէմ, եթէ տեղական մարմինները կը գտնեն նպատակայարմար ու կարեւոր»[197]:

Ռայոնական ժողովի աշխատանքներին չեն մասնակցել ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներից շատերը, օրինակ Նիկոլ Դումանը, Վարդանը, Մեբաստացի Մուրադը, Սեւքարեցի Սաքոն, Սմբատ Բորոյանը, որոնք կարելի է ասել, Հայոց Ազատամարտի ամենաճշանավոր դեմքերն էին: Ինչպես կընդունեին նրանք Ռայոնական ժողովի որոշումները, մասնավորապես մարտավարությանը վերաբերող նախահարձակման մասին որոշումը: Նրանցից ոմանք, հատկապես Նիկոլ Դումանը, ինչպես արդեն նշվել է, ի սկզբանե կողմ էր հարձակողական բնույթի մարտավարությանը եւ առաջին իսկ հնարավորության դեպքում հետեւողականորեն կիրառում էր այն:

Պիտի նշել, որ կռիվների սկզբնական շրջանում, բացառությամբ Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Վարդանի, հարձակողական բնույթի մարտավարության կողմնակից էին վտանգված շրջանների ինքնապաշտպանական ուժերի ղեկն ստանձնած անվանի ռազմիկներ Մեբաստացի Մուրադը, Քեռին, Սեւքարեցի Սաքոն, Սմբատը, Առյուծ Ավագը եւ այլոք:

Օրինակ, մինչ վերոհիշյալ Ռայոնական ժողովի գումարվելը Դումանի հրամանով հայ մարտական ուժերն արդեն մի շարք հարձակողական գործողություններ էին ձեռնարկել նրա հրամանատարության տակ գտնվող Երեւանի նահանգի, ինչպես նաեւ Զանգեզուրի եւ Ղազախ-Իջեւան-Շամշադինի շրջաններում: Իսկ վերոհիշյալ ռազմիկները գործել են հենց Երեւանի նահանգում եւ Զանգեզուրի ու Ղազախ-Իջեւան-Շամշադինի շրջաններում:

Երեւանի նահանգը չափազանց կարեւոր ռազմավարական նշանակություն ուներ: Եթե թուրքերին հաջողվեր ընկճել Երեւանի նահանգի պաշտպանների դիմադրությունը, գրավել քաղաքը եւ մերձակա բնակավայրերը, ապա նրանց ռազմական, բարոյահոգեբանական առումով բացարձակ հնարավորություն կընձեռվեր ջարդերի ալիքը տարածել մյուս գավառները եւ հեշտությամբ հաղթահարել նաեւ այդ շրջանների դիմադրությունը: Ահա այդ պատճառով Դումանն իր հրամանատարական շտաբը կենտրոնացնելով Երեւանում, ժամանակի հիմնական մասն անցկացնում էր մայրաքաղաքում: Գավառների ինքնապաշտպանության

հրամանատարների հետ հաստատած անխափան կապը Դումանին հնարավորություն էր տալիս հաստատակամորեն ղեկավարելու նրանց գործողություններն ու ժամանակին կազմակերպել շրջաններին առաքվող ռազմական օգնությունը: Անգամ նրա հրամանատարության ներքո գտնվող ամենահեռավոր Շամշադին-Ղազախ շրջաններում (հրամանատար՝ Սեւքարեցի Սաքո - Հ.Գ.) ծավալվող դեպքերն ու մարտական գործողությունները չէին վրիպում նրա տեսադաշտից: Ինչպես վկայում է Դրոն «Դումանի հետ միշտ խորհրդակցութեան մէջ էր Սեւքարեցի Սաքոն, որ Ղազախ- Իջեւան-Շամշադինի ինքնապաշտպանական շրջանի պատասխանատու ղեկավարն էր: Նա միշտ Դումանի խորհուրդներով էր առաջնորդում եւ պետք եղած օգնութիւնը ստանում էր նրանից»[198]:

Տեղեկանալով Ղազախ- Իջեւան-Շամշադինի շրջաններում կատարվող իրադարձություններին՝ Դումանը հրամայում է անհապաղ կազմակերպել Սաքոյին օգնության ուղարկվող 300 հոգանոց զինախումբ եւ այդ պատասխանատու առաջադրանքը հանձնարարում է իր կողմից խմբապետների կոչումների արժանացած երիտասարդ հրամանատարներ «Բորեաս» խմբի անդամներ Սեդրակ Ջալալյանին եւ Արտաշես Մելքոնյանին[199]:

Ճիշտ ժամանակին ստանալով ընդհանուր զորահրամանատարի՝ Նիկոլ Դումանի ուղարկած օգնական ուժերը՝ Սաքոն վարպետորեն է կազմակերպում Փոլար-Այրիի թուրքերին պատասխան հարված հասցնելու գործողությունը: Հայկական մարտական ջոկատները հիմնահատակ կոչնչացնեին Փոլար-Այրիի եւ նրան հարակից թուրքաբնակ գյուղերը, եթե չլիներ ռուսական հեծելազորի միջամտությունը[200]:

Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը՝ թուրքերը փոխում են իրենց մարտավարությունը եւ փորձում գաղտնի սպանությունների ու հափշտակությունների միջոցով ահաբեկել հայությանը: Յանկացած վայրում հանդիպելով հայերի՝ թուրքերը նրանց սպանում էին կամ էլ առեւանգում:

Իր ճամակներից մեկում անդրադառնալով այդ խնդրին Սարգիս Օհանջանյանը նշում է. «Առաւօտեան միամտաբար տանից դուրս եկողը, երեկոեան այլեւս տուն չի վերադառնում»[201]:

Ընդհարումների առաջին օրերին շրջանների ինքնապաշտպանության հրամանատարներին ուղղված հրահանգ-հրամանում Դումանը պահանջում էր նրանցից՝ յուրաքանչյուր մեկ հայի դիմաց երկու թուրք, իսկ այժմ հակառակորդի ակտիվությունն ու նախահարձակ տրամադրությունը վերջնականապես խափանելու համար վճռում է «մեկի փոխարեն հինգը»[202]:

Դումանի հրամանը չկատարելը, որպես օրենք, կարող էր ավարտվել ամենաախիստ պատժով:

Այդ կապակցությամբ Ս. Օհանջանյանը վերոհիշյալ նամակում ներկայացնում է Ղամարլուի(Արտաշատ) կատարված հետեւյալ դեպքերը. «5 հայի եւ մի քահանայի փոխարեն, հայերը թուրքերգ մաքրել, անյայտացրել են ձիով, արորով, եգներով ու ինչ-որ ռաստ է եկել, մինչեւ այսօր 30-ը: Նոր-Բայազետից էլ 4 հեռագիրը գուժում էր, որ թիւրքերը եւ քրդերը վրա են տվել եւ թալանել 4-5 հազար մեծ ու փոքր տեսակի տաւար, ոչխար, ձի: Գիժ Թաթոսը (Թադեւոս Ամիրյան) 12 հոգով անցաւ նրանց կողմերը՝ Նոր-Բայազետ»[203]:

Նիկոլ Դումանի մերձավորագույն զինակից Գիժ Թաթոսը մասնակցել էր բազմաթիվ կռիվների եւ մարտերում դրսեւորած քաջագործությամբ արժանի հեղինակություն ու հարգանք էր վայելում զինվորների շրջանում: Նա փայլուն կերպով է կատարում Դումանի հանձնարարարությունը: Նրա գլխավորած մարտական խումբը ոչ միայն կարողանում է թուրքերից ամբողջովին խլել ու հետ բերել հայ գյուղացիներից գողացածը, այլեւ բռնագրավում է ոչխարի մի քանի հոտ, մեծ քանակությամբ կովեր եւ ձիեր[204]:

Այդ իրավիճակում միանգամայն արդարացի ու անհրաժեշտ գործողությունների միջոցով հաջողվում է ստիպել թուրքերին՝ հրաժարվելու հայերի դեմ նման մարտավարությամբ գործելուց:

Հայության կազմակերպած դիմադրությունը անակնկալի է բերում ցարական իշխանություններին ու թուրք երեւելիներին: Երեւանի նահանգում Դումանը հետեւողականորեն առաջնորդվում է հարձակողական բնույթի մարտավարությամբ, որի արդյունքը հայկական կողմի համար ավելի քան դրական է: Ամենուրեք հայ մարտական խմբերի կազմակերպված հարվածների տակ թուրքերը, մեծ կորուստներ տալով, նահանջում են: Անկասկած, հաջողությունն ավելի մեծ կլիներ, եթե ռուսական իշխանությունները թուրքերին ջախջախումից փրկելու նպատակով չկանգնեցնեին հայ մարտական խմբերի հակահարձակումը:

Թիֆլիս ուղարկած տեղեկագրերից մեկում Դումանը գրում է. «Անելիքների համար ոչինչ չեմ կարող ասել դրական, որովհետեւ զինվորական դրութիւնը լուրջ մտածմունքի առարկա է ինձ համար եւ երկիւղ եմ կրում, որ նախահարձակ լինելով (մեր կողմէն), կառավարութիւնը աչկարայ ու ակտիվ դատի թուրքերին...»[205]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը, թուրքերի մեծաթիվ կորուստները, ինչպես նաեւ ստեղծված ծանր կացությունը ստիպում են թուրք պարագլուխներին պարզել սպիտակ դրոշ եւ իշխանությունների միջնորդությամբ, իրենց հոգեւոր առաջնորդի՝ Շեյխ ուլ իսլամի միջոցով հաշտություն կայացնելու համար դիմել Երեւանի նահանգապետին:

Հաշտություն կայացնելու համար հայերը նահանգապետին ներկայացնում են հետեւյալ պահանջները. «... Յաճախակի փորձը ցույց տվեց մեզ, որ մահմեդականների հավաստիացումները՝ անկարգութիւնները չվերսկսելու գործում մեզ հավատ չեն ներշնչում: Ուստի եւ մենք յայտարարում ենք,- խաղաղութիւնը վերականգնելու համար ցանկալի եւ անհրաժեշտ է, որ մահմեդական ազգաբնակչութիւնը իրեն հանգիստ պահի... Նկատի ունենալով ազգաբնակչութեան անապահով վիճակը, ներկայ պայմաններում անհրաժեշտ է դադարեցնել Երեւանի նահանգում տիրող հայերին զինաթափ անելու միջոցները, մանավանդ որ հայերն իրենց զէնքերը իզուր գործ չէն դնում, այլ աշխատում են գործ դնել միայն ինքնապաշտպանութեան սահմաններում, ցանկալի է նույնպես, որ պաշտոնական լինեն Երեւանի ոստիկանապետը եւ պրիստավի օգնական Մեհմէտ Բեկ Վեզիրօվը...»[206]:

Իրենց հերթին թուրքերը պահանջում են, որ Երեւանի նահանգում հաստատվի զինվորական դրություն: Տվյալ պարագայում դա բացատրվում էր այն հանգամանքով, որ օգտվելով քաղաքական խառնաշփոթ վիճակից, հայ զինական խմբերը, ղեկավարվելով փոխվրեժի սկզբունքով՝ հարձակում էին գործում թուրքական այն գյուղերի վրա, որոնք հայկական բնակավայրերում ավերածություններ ու բռնություններ էին կատարել:

Բացի վերոհիշյալից՝ թուրքերը պահանջում էին, որ քաղաքից հեռացնեին ընդհարումների օրերին Երեւանում ապաստանած գաղթականներին: Բացառությամբ այս պահանջի՝ մնացածները նահանգապետի կողմից ընդունվում են:

Քանի որ Երեւանում վիճակն ավել կայուն էր եւ խաղաղ, Զինվորական մարմինը հիմնական ուշադրությունը բեւեռում է շրջանների վրա: Երեւան քաղաքում (հակառակորդին) ջախջախիչ հարված հասցնելուց զուգընթաց, շատ կարեւոր էր, որպեսզի հայ ինքնապաշտպանական ուժերը եւս մի այդպիսի հուժկու հարված հասցնեին նաեւ շրջաններում: Եթե հայ մարտական ուժերին հաջողվեր Երեւանում նվաճած հաղթանակը ամրապնդել նաեւ շրջաններում, ապա դա, անկասկած, վճռորոշ նշանակություն կունենար թուրքերի մարտական ոգին, դիմադրությունը կոտրելու եւ նրանց վերջնականապես պարտության մատնելու գործում: Այդ պատճառով Զինվորական մարմինը քաղաքում թողնելով նվազագույն քանակի մարտիկներ,

մարտական ուժերը գլխավորապես ուղարկում էր առավել վտանգված շրջանները:

Հայերի յուրաքանչյուր քայլերին մանրակրկիտ հետող թուրքերը տեղեկանալով, որ մարտական ուժերի հիմնական մասը քաղաքից մեկնել է շրջանները, օգտագործում են հարմար պահը եւ մայիսի 27-ին վերստին հարձակվում հայկական թաղերի վրա: Մայրաքաղաքի հայությունը դարձյալ հայտնվում է դժվարին իրավիճակում: Թուրքերի հարձակումները կասեցնելու եւ ներքաշ անգամ նրանց ջախջախիչ հարվածներ հասցնելու նպատակով Դումանն անհապաղ կազմակերպում է նոր մարտական խմբեր եւ նրանց զինելու համար, առանց տատանվելու, օգտագործում է Երկիր առաքման համար նախատեսված՝ Երեւանում պահեստավորված զենքերը:

«Ահա՛,- շարունակում է Դումանը,- այսպիսի պայմաններում էր, որ Երկրի 29 հրացանը, 3300 հատ մաուզերի փամփուշտները եւ մի քիչ էլ բերդանի փամփուշտներ բերի, հանեցի փոշիից եւ դրի քաղաքի ինքնապաշտպանության գործում»[207]:

Զինվորական Մարմնի ձեռնարկած համապատասխան միջոցառումների շնորհիվ, մայրաքաղաքի փոքրաքանակ ինքնապաշտպանական ուժերը դիմագրավում են թուրք հրոսակախմբերի գրոհները եւ խափանում հայկական թաղամասերը թափանցելու նրանց ներքաշ ձեռնարկումները:

Եթե մարտադաշտում հայ ինքնապաշտպանական ուժերը հաղթանակներ էին նվաճում, ներկուսակցական կյանքում Զինվորական Մարմինն ու անձամբ Դումանը բախվում էին նոր խոչընդոտների:

1905 թ. Ռուսական կայսրությունում ծավալվող հեղափոխական շարժումների ու գաղափարների ներգործությամբ լիցքավորված երիտասարդների նոր սերունդ էր համալրել մինչ այդ ազգային խնդիրների լուծմանը զինվորագրված Հ.Յ. Դաշնակցության շարքերը:

Հ.Յ. Դաշնակցության շարքերը համալրած երիտասարդներից շատերը ապրել ու կրթություն էին ստացել Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Նրանց հոգեւոր եւ գաղափարական ձեւավորման եւ հաստունացման վրա, որպես հեղափոխական մարտիկների, խոր դրոշմ էին դրել ռուս հեղափոխականների որդեգրած ծրագրերը, պայքարի սկզբունքներն ու եղանակները: Հայ գյուղի եւ հայ գյուղացու սոցիալական վիճակի բարելավման, նրա իրավունքների համար մղվող պայքարը դարձել էր ռուս հեղափոխականացած դպրոցի ավանդույթներով եւ դավանած գաղափարներով դաստիարակված երիտասարդ

դաշնակցականների գործունեության գլխավոր նպատակն ու շարժիչ ուժը: Առաջնորդվելով «Դեպի գյուղ» կարգախոսով՝ նրանք մեկնում էին գյուղերը եւ հեղափոխական ավագ սերնդի ներկայացուցիչների օրինակով, որպես ուսուցիչներ, աշխատանքի էին ընդունվում գյուղական դպրոցներում: Բոլոր նրանք, ովքեր հասարակության մեջ ունեին որոշակի դիրք, հարստություն եւ պաշտոններ, դիտվում էին որպես հայ գյուղացու հարստահարիչներ ու իրավունքների բռնաւատողներ: Երիտասարդ հեղափոխականների գերխնդիրն էր ընկերավարական գաղափարների քարոզչությունը:

Յարական լրտեսական սպասարկության «Օխրանա»-յի տեղեկագրում հեղինակները, ներկայացնելով Դաշնակցության շարքերը համալրած ընկերվարական գաղափարներ դավանող դաշնակցականների ծավալած գործունեության հետեւանքով կուսակցությունում տիրող իրավիճակը՝ նշում են. «Կովկասում սոցիալիստական բանվորական շարժման ազդեցութեան տակ եւ հայ մտաւորականութեան մէջ սոցիալիստական գաղափարների տարածման հետեւանքով, այս հզոր կազմակերպութիւնը վերջին տարիները արագ հոլովոյթով գնաց սոցիալիստ-յեղափոխականների աշխահայացքի կողմը եւ աւելի ու աւելի, տեսականօրէն ու գործնականօրէն, սկսեց մօտենալ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան»[208]:

Ըստ «Օխրանա»-յի տեղեկագրի պարզաբանման, հայ-թուրքական ընդհարումներ ժամանակ Դաշնակցությունը ստանձնել էր կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ու առաջնորդելու դերն ու պատասխանատվությունը: Քանի դեռ ընթանում էին կռիվները, Դաշնակցության ուշադրությունը գլխավորապես բեւեռված էր զենք ու զինամթերք ձեռք բերելու եւ կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու վրա: Այդ իրավիճակում, բնական է, որ ընկերավարական գաղափարներ դավանող դաշնակցականները չէին կարող ազդեցիկ դերակատարություն ունենալ կուսակցության ներսում եւ ընկերվարությունը այն ուժը չէր, որ կարող էր միավորել եւ իր հետեւից տանել հայությանը[209]:

Թշնամու նկատմամբ մարտադաշտում Դաշնակցության առաջնորդությամբ հայ ինքնապաշտպանական ուժերի նվաճած հաղթանակները մեծապես նպաստել են հայության շրջանում, եւ ընհանրապես, կուսակցության հեղինակության բարձրացմանը: Հպարտավոր հայորդիներ, հրապուրվելով Դաշնակցության հմայքով եւ ձեռք բերած նվաճումներով, համալրել են կուսակցության շարքերը:

Պիտի նկատել, որ Հ.Յ.Դաշնակցության շարքերը համալրող անհատներից ոչ բոլորն էին աչքի ընկնում իրենց բարոյական անաղարտ նկարագրով ու կարգապահությամբ:

Սարգիս Օհանջանյանի գնահատմամբ՝ կուսակցության կարգապահությունը թեեւ օրինակելի էր, իսկ կամավոր-ընկերների վարքն ու կյանքը՝ միանգամայն վայելուչ ու կուսակցության հեղինակությանը համահունչ, սակայն «Հայ-բրքական ընդհարումների խառնակ տարիներին Դաշնակցութեան շարքերի մէջ մտան շատ մութ ու անմաքուր տարրեր, որոնք իրենց անվայել վարքով (շանտաժ, գողութիւն, անմեղ սպանութիւն, կազմակերպութեան անուանը չարաշահում եւ այլն), սկսեցին վարկաբեկել Դաշնակցութեան անբիծ անունը: Բայց դա մի անցողական շրջան էր, մի ժամանակաւոր եւ անխուսափելի աղետ, որ կարճատեւ փոթորիկի նման եկաւ ու անցաւ»[210]:

Որպեսզի ընդգծի, համոզիչ դարձնի ժողովրդի մեջ Հ.Յ.Դաշնակցության աննախադեպ ծավալման իրողությունը՝ Ս. Օհանջանյանը նշում է. «Մենակ Երեւանի Կենդր. Կոմիտէ տրամադրութեան տակ 13.000-14.000 խմբեր կային, ամէն խումբը 10-15 հոգի, 60.000-70.000 տարեկան բիւջէով: Եւ այդ գումարը հաւաքւում էր հինգ կոպէկից սկսած մինչեւ յիսուն կոպէկ ամսաւճարից: Իսկ Երեւանի «Զինւորական Շտապը» հայ-բրքական ընդհարումների ժամանակ, իր տրամադրութեան տակ ունէր մօտաւորապէս երեք հազարանոց սպառազէն, կազմակերպւած մի զօրամաս»[211]:

Եթե հիմք ընդունենք Սարգիս Օհանջանյանի վկայած տվյալների իսկությունը, ապա պիտի ընդունել, որ համաձայն պարզ թվաբանական հաշվարկի, ՀՅԴ «Մրգաստան» կենտր. կեմիտեի ղեկավարությամբ գործող կառույցներում, այն է՝ միայն Երեւանի նահանգում հայ-բրքական ընդհարումների ավարտական փուլում Դաշնակցություն կուսակցությունը մոտավոր հաշվով ունեցել է 140.000-210.000 անդամ:

Կուսակցության ներսում տիրող կացությունը փոխվում է ընդհարումների ավարտական փուլում եւ դրանից հետո, երբ ընկերվարական գաղափարները թափանցեցին կուսակցության շարքերը: Հայ-թուրքական ընդհարումներից հետո նկատվում է ճիշտ հակառակ երեւույթը, ՀՅԴ անդամների քանակն աստիճանաբար սկսում է նվազել:

Նախ, Դաշնակցության շարքերից հեռանում են այն հայորդիները, ովքեր կուսակցության շարքերն էին համալրել բշնամու դեմ մարտնչելու նպատակով: Նրանց համոզմունքով ՀՅԴ պիտի լիներ հայությանը միավորող եւ նրա ազգայի-ազատագրական պայքարն

առաջնորդող ուժը, այլ ոչ թե ընկերվարություն դավանող ու դասակարգային պայքարը ջաթագովող կուսակցություն: Նրանց համար ընկերվարությունը խորթ էր եւ անընդունելի:

Համաձայն «Օխրանա»-ի տեղեկագրի գնահատման՝ «Սոցիալիստական տենդենցեւների կուսակցութեան մէջ թափանցելը ստեղծեց ներքին բաժանում եւ վերջացաւ «Երիտասարդ դաշնակցականներ»-ի խմբի ստեղծումով, որն այդ ժամանակ ամբողջովին ընկած էր սոցիալիս-յեղափոխականների ազդեցութեան տակ, մինչդեռ առաջ կուսակցութեան մէջ էին»[212]:

Հեղափոխականի պայքարի նպատակը հաշվելով գլխավորապես դասակարգային պայքարը եւ արհամարհելով ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրները, ընկերվարական գաղափարախոսությամբ առաջնորդվող երիտասարդ դաշնակցականները քննադատում եւ մերժում էին Նիկոլ Դումանի ու նրա զինակիցների գործելակերպը՝ համարելով այն միապետական, բռնակալական եւ ոչ հեղափոխական ու ընկերվարական:

«Երիտասարդ դաշնակցականները»,-նշում է «Օխրանա»-ի տեղեկագիրը,-ժխտում էին մէկ կուսակցութեան մէջ միացնելու հնարաւորութիւնը բրքահայերի ազգային ազատագրութեան պայքարի ու սոցիալիզմի, աշխատաւոր ժողովրդի ազատագրութեան խնդրի»[213]:

Սարգիս Օհանջանյանի (Ֆարիադ) գնահատմամբ «1906թի վերջերում ընդհարումները սկսեցին թուլանալ եւ կորցնել իրանց վտանգը: Դրա փոխարեն կուսակցութեան շարքերում սկսեցին անմիտ վէճեր: Ամեն անգամ, երբ հայութեան գլխին կախուած վտանգը կորցրել է իր սուր, սպառնալից բնաւորութիւնը, երբ այս վտանգը կանխող անձնազոհ ընկերները այլեւս «անհրաժեշտ» չեն համարւիլ, դրանց շուրջը տեղի են ունեցել անմիտ քննադատութիւններ ու նրանց տապալելու ապերախտ ձգտումներ»[214]:

Թեպետ 1906 թ. կեսերին Երեւանում հայ-թուրքական ընդհարումները հիմնականում ավարտվել էին, բայց լարվածությունը դեռ պահպանվում էր, իսկ Երեւանի նահանգի մի շարք շրջաններում կռիվները դեռեւս շարունակվում էին: Բնավ չէր բացառվում, որ ընդհարումները դարձյալ կարող էին վերստին բռնկվել: Անհրաժեշտ էր չտարվել այն հույսով, որ կովկասահայությունը արդեն ձերբազատվել է բոլոր տեսակի վտանգներից: Այն ժամանակ, երբ հայության գլխին դեռեւս ծառացած էր ջարդարար սուրը, որքա՞ն էր խելամիտ եւ արդարացված տարվել գլխավորապես ընկերվարական խնդիրների լուծմամբ եւ անտեսել

ամենակարեւորը: Դումանի համոզմամբ հայության ինքնապաշտպանության կազմակերպմանն ու ամրապնդմանը նպատակաուղղված աշխատանքները եղել եւ պետք է մնային հայ ազգային կուսակցությունների եւ գործիչների գործունեության գլխավոր առանցքը:

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների եւ հետեւանքների վերլուծությանը նվիրված «Դրօշակի» 1905-1906 թթ-ի համարներում տպագրված ընդարձակ հոդվածաշարում հեղինակը, արժանի քննադատության ենթարկելով բոլոր այն մարքսիստ եւ սոցիալ-դեմոկրատ տեսաբաններին եւ քաղաքական գործիչներին, որոնք իրենց պայքարի նշանաբանը դարձնելով «անդադար կռւել նացիոնալիզմի դէմ, ոչնչացնել նրան իր արմատում» սկզբունքի կենսագործումը, մեղադրանքի սլաքին են գամում Հ.Յ. Դաշնակցությանը՝ գտնելով, որ. «Դաշնակցութիւնը չը պէտք է կազմակերպէր իր խմբերը բիւրոկրատիայի ու թուրք խուժանի դէմ նոյն ազգային նշանաբանի տակ, նա չը պէտք է առաջ մղէր քաղաքների եւ գիւղերի հայ ժողովուրդը՝ նոյն վտանգած հաւաքական գոյութիւնը զէնքը ձեռքին պաշտպանելու համար... Այդ բոլորը «նացիոնալիզմ է»...»[215]:

Այս տեսակետը պաշտպանող գործիչների դիրքորոշումն ավելի քան տարօրինակ է եւ անհասկանալի, իսկ ո՞վ պետք է պաշտպաներ հայերին կոտորածներից, չէ՞ որ հայերը չունեին առավել կազմակերպված եւ միաձույլ այլ քաղաքական կազմակերպություն, քան Դաշնակցությունն էր:

Վերքելով այդ կարգի մեղադրանքները՝ «Դրօշակ»-ը իրավացիորեն նշտում է. «Մենք տեսանք սակայն, թէ տիեզերական պրոլետարիատի անունով խռնող ինտերնացիոնալիստները, Դաշնակցութեան չօվինիզմի առթիւ գլուխ ծեծողները ինչ օգնութիւն արին մորթող հայութեան «պօգրօմների» օրերին...

Առողջ տրամաբանութիւնը ըմբռնստանում է այդ կամայական ու բռնազբօսիկ ֆորմուլաների դէմ. նա ասում է, որ կարելի է սոցիալիստ լինել եւ ամենաջերմ պաշտպան կանգնել իր ազգայնական իրաւունքներին ու անկախութեան. նա հաստատում է, որ կարելի է ամենառադիկալ մարքսիզմ դաւանել եւ հրապարակ գալ ազգային դրօշակի ու նշանաբանի տակ...»[216]:

Համամիտ լինելով «Դրօշակի» հոդվածաշարի հեղինակի՝ միանգամայն փաստարկված եւ տրամաբանված տեսակետին՝ համանմանության կարգով կարելի է հարց տալ. ի՞նչն էր խանգարում ընկերվար դաշնակցականներին, որ ընդհարումների ընթացքում գոնե ժամանակավորապես հանգիստ թողնեին իրենց ընկերվարական համոզմունքները եւ առաջնորդվելով հայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը կանխելու անհրաժեշտությամբ՝ առաջնահերթ նախապատվություն տային ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը նպատակաուղղված խնդիրների լուծմանը:

Հունիսի 9-ին եւ 10-ին ընդհարումները Երեւանում, ոչ այնքան մեծ ծավալով, վերսկսվում են: Թեպետ այս անգամ եւս նախահարձակը դարձյալ թուրքերն էին, բայց քաղաքի մարտական ուժերը կարողանում են առանց մեծ ջանքերի չեզոքացնել սպառնալիքը[217]:

Եթե մարտադաշտում իր գլխավորած ինքնապաշտպանական մարտախմբերով Նիկոլ Դումանն արդեն Երեւանի նահանգում տիրող կացության լիիրավ տնօրենն էր, ապա դրությունը բոլորովին այլ էր ներկուսակցական կյանքում, մանավանդ այն ժամանակ, երբ ընդհարումներն արդեն թուլացել եւ հայ բնակչության համար այլեւս սարսափելի ու վտանգավոր չէին:

«Վտանգի ժամանակ ծակերը մտած,- գրում է Ս,. օհանջանյանը,- Դումանին երկինք բարձրացնող եւ նրա հմայքը գովաբանող դաշնակցական «ձախ» թեւը, վտանգն անցնելուց յետոյ սկսեցին կեղտոտ բերանով քննադատել նրան...»[218]:

1906 թ. ամռանը Երեւանում կայացած ՀՅԴ «Մրգաստան» կենտ. կոմիտեի ընտրություններում հաղթանակ են տանում երիտասարդ ընկերվարները եւ այնպիսի վաստակաշատ գործիչներ, ինչպիսիք են Գալուստ Ալոյանը եւ Սարգիս Օհանջանյանը (Ֆարհադ) դուրս են մնում կենտրոնական կոմիտեի կազմից:

Գնահատելով իր համար ստեղծված ոչ այնքան հաճելի իրավիճակը, եւ քանի որ ընդհարումներն արդեն ավարտվել էին, Դումանը որոշում է հրաժարվել Երեւանի նահանգի ընդհանուր հրամանատարի պաշտոնից եւ այդ մասին 1906 թ. հունիսի 11-ին գրած նամակում հայտնում Հ.Յ.Դաշնակցության բյուրոյին[219]:

Դումանի հետ Երեւանից հեռանում են նաեւ Դաշնակցական Խեչոն, Գալուստ Ալոյանը, Սարգիս Օհանջանյանը, Մկրտիչ Արամալյանը եւ բազում այլ վաստակաշատ գործիչներ, որոնք ընդհարումների ողջ ընթացքում իրենց ուսերին էին տարել Երեւանի նահանգի ինքնապաշտպանության գործը:

---

1. Տե՛ս «Մուրճ», 1905, թիւ 7, էջ 146:
2. Տե՛ս Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 107:

3. Տե՛ս ՀԱԱ, ֆ.1262, ց. 3, գ. 92, էջ 17-18:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում, էջ 18:
6. «Մշակ», 1905, 4 յունիսի:
7. Տե՛ս Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 108:
8. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 295, գ. 1, էջ 1:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում, էջ 2:
12. Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 110:
13. ՀՅԴ ԿԱ, բծ. 295, գ. 1, էջ 2:
14. Նույն տեղում, էջ 2:
15. Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 110:
16. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 295, գ. 1, էջ3:
17. Նույն տեղում, էջ 5:
18. Նույն տեղում, էջ 6:
19. Տե՛ս «Մշակ», 1905, 5 յունիսի:
20. «Հայրենիք», ամս., 1943, թիւ 5, էջ 78:
21. Կոմս, «Խոնարհ հերոսներ», գիրք Դ, Պէյրութ, 1966, էջ 63:
22. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, Բոսթըն, 1950, էջ 433:
23. ՀԱԱ, ֆ.1022, ց. 3, գ. 97, էջ 3:
24.. Նույն տեղում:
25. Տե՛ս նույն տեղում:
26. Նույն տեղում:
27. Նույն տեղում, էջ4:
28. Նույն տեղում:
29. ՀՅԴ ԿԱ, բծ. 295, գ. 1, էջ 8:
30. «Մշակ», 1905, 5 յունիսի:
31. ՀՅԴ ԿԱ, բծ. 295, գ. 1, էջ 7:
32. Տե՛ս նույն տեղում, էջ 8:
33. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, էջ 433
34. ՀՅԴ ԿԱ, բծ. 294, գ. 34, էջ 5:
35. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 295, գ. 1, էջ 8:
36. Տե՛ս նույն տեղում:
37. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, էջ 433:
38. Ա. Աստվածատրյան, «Սարդարապատի պատմաշինությունը եւ այլ երկեր», Երեւան 2007, էջ 271:
39. Նույն տեղում, էջ 271:
40. Նույն տեղում:
41. Նույն տեղում:
42. Նույն տեղում:

43. Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 110:
44. Ա. Աստվածատրյան, նշվ., աշխ., էջ 219:
45. Նույն տեղում, էջ 274:
46. Նույն տեղում, էջ 275:
47. Նույն տեղում, էջ 276-277:
48. Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 324:
49. Նույն տեղում:
50. Ա. Աստվածատրյան, նշվ., աշխ., էջ 291:
51. «Հայրենիք», ամս., 1943, թիւ 5, էջ 78:
52. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 390 ա, գ. 8, էջ1:
53. Նույն տեղում եւ «Հայրենիք», ամս., 1938, թիւ 10, էջ 132:
54. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 298, գ. 1, էջ1:
55. Տե՛ս նույն տեղում, էջ 1-3:
56. Տե՛ս նույն տեղում, էջ 1-3:
57. Ա. Աստվածատրյան, նշվ., աշխ., էջ 297:
58. Նույն տեղում, էջ 299:
60. Տե՛ս նույն տեղում:
61. «Հայրենիք», ամս., 1938, թիւ 10, էջ 132:
62. Ա. Աստվածատրյան, նշվ., աշխ., էջ 305-306:
63. Նույն տեղում:
64. «Հայրենիք», ամս., 1938, թիւ 10, էջ 139-140:
65. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 298, գ. 1, էջ 4:
66. Տես նույն տեղում:
67. «Հայրենիք», ամս., 1938, թիւ 10, էջ 139-140:
68. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 298, գ. 1, էջ 2:
69. Նույն տեղում:
70. «Հայրենիք», ամս., 1938, թիւ 10, էջ 140:
71. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 298, գ. 1, էջ 5:
72. «Հայրենիք», ամս., 1938, թիւ 10, էջ 139:
73. Նույն տեղում, էջ 140:
74. Նույն տեղում:
75. Նույն տեղում:
76. Նույն տեղում:
77. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 298, գ. 1, էջ 5:
78. Տե՛ս նույն տեղում:
79. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 97, էջ 5:
80. Տե՛ս Ա. Աստվածատրյան, նշվ., աշխ., էջ 310:
81. Նույն տեղում:
82. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 298, գ. 1, էջ 5:
83. Տե՛ս Ա. Աստվածատրյան, նշվ., աշխ., էջ 311:
84. Նույն տեղում, էջ 312:

85. «Դրո», Երեւան, 1991, էջ 193:
86. Կոմս, «Խոնարհի հերոսներ», գիրք Բ, Պէյրութ, 1950, էջ 80:
87. Տե՛ս ՎԵՄ, 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 7:
88. Նույն տեղում:
89. Նույն տեղում, էջ 5:
90. «Նիկոլ Դուման», ՀՅԴ երիտասարդական, «Կայծեր», մատենա չար. թիւ 5, էջ 14:
91. Նույն տեղում:
92. Կոմս, «Խոնարհի հերոսներ», գիրք Բ, էջ 90:
93. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, էջ 441:
94. ՀՅԴ ԿԱ
95. Նույն տեղում:
96. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ. 1, էջ 442:
97. Նույն տեղում:
98. Կ. Գէորգեան, «Ամենուն Տարեգիրք», 1960, էջ 206:
99. Նույն տեղում:
100. Նույն տեղում, էջ 193:
101. «Հայրենիք», ամս., 1960, թիւ 2, էջ 51:
102. Նույն տեղում, էջ 51-52:
103. Մ. Վարանդեան, «Մուրատ», 1931, էջ 108:
104. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 23ա, էջ 2:
105. Նույն տեղում, թծ. 294, գ. 26, էջ 2-3:
106. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 8, էջ 116-117:
107. ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 15:
108. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 92, էջ 14:
109. Նույն տեղում:
110. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 295, գ. 2, էջ 16:
111. Նույն տեղում:
112. Տե՛ս նույն տեղում, գ. 3, էջ 7:
113. Նույն տեղում, էջ 5:
114. Նույն տեղում:
115. Նույն տեղում, էջ 6:
116. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, էջ 436:
117. Նույն տեղում, էջ 434:
118. Նույն տեղում:
119. Տե՛ս Հ. Գետրգյան, «Նիկոլ Դուման»,Երեւան, 2002, էջ 218-225:
120. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, էջ 436:
121. Նույն տեղում:
122. Նույն տեղում, էջ 437-438:
123. Նույն տեղում, էջ 438:
124. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 21, էջ 2:
125. «Հայրենիք», ամս., 1933, թիւ 6, էջ 144:

126. Վ. Փափազեան, Իմ Յուշերը, հ.1, էջ 439:
127. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 294, գ. 24, էջ6:
128. ՀՅԴ ԿԱ, թծ. 320, գ. 10, էջ10:
129. ՎԵՄ, 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 8:
130. Նույն տեղում, էջ 6:
131. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 4, գ. 208ա, էջ 12:
132. Տե՛ս ՎԵՄ, 1934, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 6-7:
133. «Հայրենիք», ամս., 1960, թիւ 2, էջ 51:
134. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ.293, գ. 23ա, էջ 1:
135. Տե՛ս Հ. Գետրգյան, «Դրո», Երեւան, 2007, էջ 41-45:
136. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 21, էջ 2:
137. «Հայրենիք», ամս., 1960, թիւ 2, էջ 51:
138. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ.14, էջ 2:
139. Նույն տեղում, էջ 4:
140. Նույն տեղում, էջ 4-5:
141. ՀՅԴ ԿԱ, թծ.324, գ. 24, էջ 3:
142. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ.324, գ.25, 1-5:
143. Նույն տեղում:
144. Տե՛ս «Դրո», 1991, էջ 211:
145. Տե՛ս նույն տեղում, էջ 220:
146. Նիկոլ Դուման, «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան», էջ 36:
147. Տե՛ս նույն տեղում:
148. Տե՛ս «Հայրենիք» ամս., 1930, թիւ 7, էջ 155:
149. Տե՛ս ՀՅԴԿԱ, 293-55:
150. Նիկոլ Դուման, ընտ. աշխ., էջ 29:
151. Նույնը, էջ30:
152. Նույնը, էջ 31:
153. ՀՅԴ ԿԱ, թծ.404, գ. 12, էջ 1:
154. Նույնը, թծ. 293, գ.45:
155. Նույն տեղում:
156. Նույնը, գ. 65:
157. ՀՅԴ ԿԱ, թծ. 297, գ. 18:
158. Նույնը, թծ. 294, գ. 26, էջ 3-4:
159. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 56:
160. Կ. Գէորգեան, «Ամենուն Տարեգիրք», 1957, էջ 168-169:
161. ՀՅԴ ԿԱ, թծ. 294, գ. 25, էջ 2:
162. Նույնը, թծ. 294, գ. 24ա:
163. Կ. Գէորգեան, «Ամենուն Տարեգիրք», 1957, էջ 172-173:
164. Տե՛ս «Հայրենիք», ամս., 1934, թիւ4, էջ 68:
165. ՀՅԴ ԿԱ, թծ. 355, գ.15, էջ3:
166. Նույնը, թծ. 293, գ. 23ա, էջ 1:

167. «Հայրենիք» ամս., 1957, թիւ 9, էջ 21-22:
168. Տե՛ս Նիկոլ. Դուման, նշվ. աշխ., էջ 30:
169. ՀՅԴ ԿԱ, բծ.292, գ. 25, էջ 3:
170. ՀՅԴ ԿԱ, բծ. 293, գ.11, էջ 3:
171. Նույն տեղում:
172. Տե՛ս «Դրօշակ», 1905, հա. 3, էջ 38:
173. Նույն տեղում:
174. «Դրօշակ», 1905, հա. 3, էջ 38:
175. ՀՅԴ ԿԱ, բծ. 261, գ. 8, էջ 6:
176. Տե՛ս նույն տեղում:
177. Տե՛ս, ՀՅԴ ԿԱ, բծ. 261, գ.8, էջ 67:
178. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմ. համար», հ. Բ, էջ 236:
179. Տե՛ս նոյն տեղում, էջ 237:
180. Նույն տեղում:
181. «Հայրենիք» ամս., 1934, թիւ 7, էջ 145:
182. Նույն տեղում, էջ 145-146:
183. ՀՅԴ ԿԱ, բծ. 1265, գ. 20:
184. Տես Կ. Գեւորգեան, «Ամենուն Տարեգիրք», 1957, էջ 173-174:
185. Տե՛ս «Հայրենիք» ամս., 1934, թիւ 6, էջ 163:
186. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմ. համար», հ. Բ, էջ 236:
187. Նույն տեղում, էջ 262:
188. Տե՛ս նույն տեղում, էջ 237:
189. Տե՛ս նույն տեղում, էջ 238:
190. Նույն տեղում:
191. Նույն տեղում, էջ 239:
192. Նույն տեում9:
193. Նույն տեղում:
194. Նույն տեղում:
195. Նույն տեղում, էջ 240:
196. Նույն տեղում, էջ 239:
197. Նույն տեղում:
198. ՀՅԴ ԿԱ, բծ.185, գ.23:
199. Տե՛ս Կ. Գէւորգեան, «Ամենուն Տարեգիրք», 1964, էջ 226-227:
200. Տե՛ս Հ. Գեւորգեան, Նիկոլ Դուման, էջ 209-215:
201. ՀՅԴ ԿԱ, բծ. 293, գ. 11, էջ 1:
202. Տե՛ս Վ. Փափազեան, Իմ յուշերը, հ. 1, էջ 431-432:
203. ՀՅԴ ԿԱ, բծ. 293, գ. 11, էջ 2:
204. Նույն տեղում:
205. Նույն տեղում, գ. 10, էջ 6:
206. ՀՅԴ ԿԱ, բծ. 297, գ. 19:
207. Նույն տեղում», գ. 20, էջ 5-6:

208 «Նիւթեր ...», հ. Բ, էջ 239:
209. Տե՛ս նոյն տեղում:
210 . «Հայրենիք» ամս., 1943, թիւ 5, էջ 202:
211. Նույն տեղում, էջ 76:
212. «Նիւթեր...հ.», Բ, էջ 329:
213. նույն տեղում:
214. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 2:
215. «Դրօշակ», 1906, թիւ 13, էջ 197:
216. Նույն տեղում:
217. Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 6, էջ 104:
218. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 2:
219. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 299, գ. 15:

2.6. ԳԱՆՁԱԿԻ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ) ՆԱՀԱՆԳԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երեւանի նահանգի համեմատ Գանձակի (Ելիզավետպոլ) նահանգն ուներ իր յուրահատկությունը, որը բնականաբար իր դրոշմն էր թողնում ինքնապաշտպանության կազմակերպման ողջ գործընթացի վրա: Եթե Երեւանի նահանգի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայեր, ապա այդ հարաբերակցությունը նույնը չէր Գանձակի նահանգում:

Համաձայն ՀՅԴ Արեւելյան բյուրոյին Գանձակի նահանգի Հ.Յ.Դաշնակցության «Ապառաժ» կենտրոնական կոմիտեի կազմած տեղեկագրի՝ Ապառաժի շրջանը կազմում էին Գանձակի նահանգի չորս գավառները՝«Ջանգեզուրի(6742.92 քառակուսի վերստ(ք.վ.) տարածութեամբ, Շուշուայ (4423.28ք.վ.), Ջիվանշիրի (4654.06ք.վ.), Ջիբրայիլի(3276.31ք.վ.): Ընդհանուր տարածութիւն մօտ 18-19000 քառ. վ.»[1]:

Այդ գավառներում, բացի հայերից, որոնք չէին կազմում բնակչության մեծամասնությունը, ապրում էին նաեւ թուրքեր եւ քրդեր: 1905թ. տվյալներով Գանձակի նահանգի գավառներում կային 235 գյուղ, մեկ քաղաք՝ Շուշին, որտեղ բնակվում էին մոտավորապես 190000 հայեր:

«Եթէ,-նշում է տեղեկագիրը,-վերցնենք միայն լեռնային մասերը եւ բաց թողնենք դաշտայինը, որտեղ գլխաւորապես տեղաւորւում է թուրք տարրը, հայ տարրը ամբողջ տարածութեան վրա կը կազմի 70-80%»[2]:

«Ապառաժ» կկ-ի վիճակագրական տվյալները համապատասխանում են «Кавказский календарь на 1907 годъ »-ում տեղ գտած տվյալներին[3]:

Ըստ այդ տեղեկագրի՝ գավառների բնակչությունն ուներ հետեւյալ կազմը.[4]

գավառներ	գիւղեր	հայեր	թուրք.	քիւրդ	ընդամենը
Դիզակ	30	17500	52000	----	80000
Ջիվանշիր	33	23663	44000	8902	76239
Վարանդա Խալեթ	22 68	64000	58000	------	122000
Ջանգեզուր	82	66200	77500	6600	151140
Քաղաք		17982	14548	------	33000
Ընդամենը	235	189345	246048	15502	452379

Ի տարբերություն վերոհիշյալ գավառների, Գանձակի նահանգում բնակչության մեծամասնությունը կազմում էր մահմեդականությունը: Նահանգի ազգաբնակչությունը հասնում էր 878 հազարի, որից 554 հազարը թուրքեր էին, իսկ 294 հազարը՝ հայեր[5]:

Քանի որ Գանձակի նահանգում մահմեդականությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը, այդ պատճառով ընդհարումներն այդ նահանգում ընթացել են ավելի մեծ ծավալով ու տեւողությամբ:

Գանձակի նահանգի բնակչության վերոհիշյալ տվյալները մեջբերում է նաեւ Ա-ԴՕ-ն[6]:

գավառներ	ընդ.թիւը	թուրքեր	հայեր	վանագան ազգեր
Գանձակի	162.000	105.000	43.000	14.000
Շուշու	139.000	63.000	74.000	2000
Ջանգեզուրի	138.000	74000	63.000	1000
Նուխու	120. 000	92.000	20.000	8000
Ղազախի	112.000	64.000	44.000	4000
Ջիվանշիր	73.000	53.000	20.000	---
Արէշի	67.000	53.000	14.000	---
Ջիբրայիլի	67.000	50.000	16.000	1000
Բոլորը միասին	878.000	554.000	294.000	30.000

Նահանգի բազմաթիվ պաշտոնյաներ ազգությամբ թուրք էին: Նահանգապետը Նակաշիձեի քրոջորդին էր՝ ազգությամբ վրացի գեներալ Տակայշվիլին, որը Մ. Վարանդյանի բնութագրմամբ «Իր քեռիի պէս հայատեաց եւ անոր վրէժխնդրութեամբ վառուած... Նա արդէն շարունակ կը մեղադրէր հայերը, որպէս բոլոր խռովութիւններու պատճառ»[7]:

Հայ-թուրքական ընդհարումները Գանձակի նահանգում, ի տարբերություն Բաքվի ու Երեւանի նահանգների, ավելի ուշ են բռնկվում: Նահանգում, հատկապես նրա վարչական մասը կազմող Ջանգեզուր, Արցախ եւ Գանձակ գավառներում, կռիվները եղել են ավելի արյունահեղ ու շարունակվել նույնիսկ այն ամիսներին, երբ արդեն դադարել էին մարտերը Երեւանի նահանգում եւ հայաբնակ մյուս շրջաններում:

Թեպետ Գանձակի նահանգում եւ մասնավորապես Ղարաբաղի գավառում խաղաղ իրավիճակը պահպանվում էր, բայց այդ խաղաղությունը խաբուսիկ էր, անկայուն եւ բնականաբար չէր կարող երկար շարունակվել:

ՀՅԴ բյուրոյին ներկայացրած զեկուցագրերում ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն տեղեկացնում է, որ մինչ ընդհարումները ոչ միայն հայությունն էր ձգտում պահպանել խաղաղ իրավիճակը, այլ նաեւ՝ մահմեդական բնակչությունը: Սակայն, ի տարբերություն հայության, թուրք բնակչությունն ավելի դյուրին ու շուտ էր տրվում սադրանքների եւ առաջնորդվելով թուրք ազդեցիկ, հեղինակավոր դեմքերի քարոզչությամբ ու խոստումներով՝ բշնամաբար էր տրամադրվում իր դարավոր հարեւանի՝ հայերի նկատմամբ [8]:

Քանի որ արդեն կար Կովկասում ազգամիջյան բախումներ սանձազերծելու ցարական կառավարության որոշումը, ուստի նահանգի իշխանություններն ու հայի հարստությանը տիրելու նպատակներ հետապնդող թուրք առաջնորդները համապատասխան քայլեր էին ձեռնարկում խաղաղությունը բշնամանքի վերածելու, ապա նաեւ զինված բախումներ առաջացնելու համար: Մինչեւ հայ-թուրքական ընդհարումների բռնկումը, նահանգում պաշտոնյաների մեծ մասը հայեր էին: Սակայն այդ իրավիճակը կտրուկ փոխվել է, երբ ծրագրված սցենարով հայ պաշտոնյաներին փոխարինել են թուրքերն ու վրացիները: Եթե հայ էին պրիստավն ու մյուս պաշտոնյաները, ոչ մի խտրականություն չի եղել, իսկ երբ ցարական կառավարության որոշմամբ հայերի փոխարեն նահանգի իշխանության ղեկին հայտնվում են թուրքերը, «...աւագակների եւ մարդասպանների քիւը ավելցավ: Օրինակ. թուրք աւագակը քրիստոնեաներին սպանում է, բալանում է, նա իր հաւատակից մուսուլման պրիստաւի շնորհիւ ազատ է...» [9]:

Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարներից մեկի՝ Արամայիսի գնահատմամբ«...թուրքերը, դժբախտաբար, չկարողացան խեղդել իրանց մէջ արիւն թափելու տենչն ու տարուելով զանազան էմիսարների ու գրգռիչների քարոզներով, մղձաւանջն աւելի ու աւելի խեղդիչ դարձրին» [10]:

Այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը աներկբա ցույց է տալիս, որ հայ ազգային-քաղաքական կուսակցություններից թերեւս միակը Հ.Յ. Դաշնակցությունն էր, որը կարողացել է ընդհարումների

նախօրեին իր կազմակերպական կառույցները հիմնել Գանձակի նահանգում: Հետեւաբար նահանգի ինքնապաշտպանության կազմակերպման ղեկը պիտի ստանձնեին Հ.Յ. Դաշնակցության կառույցներն ու ՀՅԴ Արեւելյան բյուրոյի կողմից նշանակված Զինվորական մարմինը:

Հ.Յ.Դաշնակցությունը իր կառույցները Գանձակի նահանգում հիմնել է սկսած 1901թ-ից, իսկ ավելի մեծ ծավալով 1903թ-ից: Համաձայն Գանձակի նահանգում ՀՅԴ գործունեությունը ներկայացնող վավերագրի, «Գանձակում դաշնակցական խմբերի կազմակերպիչները եղել են անհատ ընկերներ. տեղացի եւ եկուոր: Եկուորների մէջ են եղել նաեւ օր. Սաքենիկ Մատինեանը. հետագայում իշխ. Յովսեփ Արղութեանի կեանքի ընկերուհին եւ ՀՅԴ հիմնադիր ընկերներից Նիկոլ Մատինեանի քոյրը, Լեւոն Թադեւոսեանը(Պապաշան), Քր. Միքայելեանի քրոջորդին, Երեւանցի ընկ. Մարը(Թադեւոս)... » [11]:

Ըստ վավերագրի, ՀՅԴ անդրանիկ խումբը՝ «Մարշիմոն» անունով, հիմնվել է 90-ական թվականներին եւ մինչեւ 1903թ. ունեցել է ընդամենը երեք տասնյակ անդամներ: Դաշնակցությունն իր գործունեությունը Գանձակի նահանգում առավել ակտիվորեն ծավալում է 1903թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի հրապարակումից հետո: Ի պաշտպանություն հայ եկեղեցու, ՀՅԴ ձգտում էր իր կառույցների միջոցով ցարական կառավարության հռչակած օրենքի դեմ բողոքի ցույցեր ու ելույթներ կազմակերպել նաեւ Գանձակի նահանգի հայաբնակ շրջաններում [12]:

Արշակ Ջամալյանի (հայ-թուրքականի կռիվների ժամանակ եղել է Գանձակի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի անդամ-Հ.Գ.) վկայությամբ «1901-ի վերջերից սկսած կուսակցական կեանքը եռուզեռի մէջ էր Այգեստանում (Գանձակ): Կարծէք վերահաս փոթորիկների կանխազգացողութեամբ՝ հայ ժողովուրդը խուռներամ դիմում էր Դաշնակցութեան շարքերը թէ՛ քաղաքում եւ թէ՛ գիւղերում» [13]:

1904թ. Դաշնակցության կառույցներ հիմնվում են նահանգի հայկական գրեթե բոլոր շրջաններում: Նույն տարում ընտրվում են ՀՅԴ «Ապառաժ» եւ Գանձակի «Այգեստան» կոմիտեները, որոնք համաձայն ՀՅԴ Կովկասյան Ռայոնական ժողովի 1905 թ. նոյեմբերի 13-ին կայացած որոշման, զինվորական գործում ժամանակավորապես տրվում է կենտրոնական կոմիտեի իրավունք [14]:

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն ոչ միայն համադրել է Նահանգի կուսակցական կառույցների գործունեությունը, այլեւ Զանգեզուրի եւ Ղարաբաղի Ջինվորական մարմինների համագործակցությամբ ազմակերպել եւ առաջնորդել է այդ գավառների, ինչպես նաեւ Գանձակ քաղաքի ու շրջանի ինքնապաշտպանական ուժերը:

Գանձակի գավառում թուրքերի մեծ մասը բնակվել է դաշտային մասերում, իսկ հայ բնակչությունը «... միայն քաղաքն ու մօտակայ Ղարադաղու եւ Խոյլար գիւղերն են գտնւում դաշտային մասում, իսկ 38-ի չափ հայաբնակ գիւղերը լեռնոտ վայրերում, զուրկ բաւարար չափով վարելահողերից եւ ընդհանրապես հասոյթաբեր աղբիւրներից»[15]:

Գանձակ քաղաքում հայերը բնակվում էին քաղաքը երկու մասի բաժանող Գանձակ գետի ձախ ափին: Քաղաքը ունեցել է 37.000 բնակիչ, որից 17.000 թուրքեր էին, 15.000 հայեր, իսկ 5000-ը այլազգիներ[16]:

Պետական հիմնարկների մեծ մասը գտնվել է քաղաքի թուրքական թաղամասում, իսկ հայկական քաղաքամասի մեջ վարչական մարմիններ անհամեմատ քիչ են եղել, նույնիսկ քաղաքամասային «...ոստիկանութիւնն էլ բաղկացած էր մէկ ոստիկանապետից, օգնականից եւ մի քանի ոստիկաններից»[17]:

Ճիշտ է, ընդհարումների նախօրեին Դաշնակցությունը կարողացել էր իր կազմակերպական կառույցները հիմնել նահանգի հայկական բազմաթիվ բնակավայրերում, ինչպես նաեւ Գանձակ քաղաքում, բայց այստեղ եւս հայությունը, ի տարբերություն թուրքերի, շատ քիչ էր զինված:

Հայ-թուրքական ընդհարումների ուսումնասիրությունը ներկա հավաստում է, որ թուրքական բոլոր բնակավայրերի բնակիչներն առանց բացառության միշտ էլ շատ լավ զինված են եղել: Ինչո՞ էին թուրքերը մշտապես զինված, իսկ հայերը՝ ոչ: Գանձակի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի կազմած տեղեկագրերի հեղինակների կարծիքով, այդ իրողությունը պայմանավորված էր հետեւյալ հանգամանքներով.

1. Նահանգի հայ բնակչությունը մշտապես զբաղված է եղել խաղաղ աշխատանքով եւ նրա նախասիրությունների ու հետաքրքրասիրության ողորտից դուրս էր գենքն ու բռնի ճանապարհով ապրուստի միջոցներ ձեռք բերելը: Ի տարբերություն խաղաղ աշխատանքը գերադասող հայության, թուրքերը, անբնդհատ տարված լինելով գողություններով ու ավազակությամբ, մշտապես կարիք ունեին գենքի ու բռնի միջոցներ կիրառելու : Այդ պատճառով գենք ձեռք բերելու համար նրանք տալիս էին անգամ իրենց վերջին ունեցվածքը:

2. Տարբեր ցեղախմբերի ու բնակավայրերի միջեւ հաճախակի կրկնվող «ներքին թայֆայական կռիւներ...»-ի :

3. «...ռուս կառավարութեան խրախուսանքը աւարատենչ բաթար ամբոխին հայերին կոտորելու ու թալանելու հրապուրիչ առիթը»[18]:

Գանձակի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի համար չէր կարող գաղտնիք լինել, որ կռիվներ բռնկվելու պարագայում քաղաքի ու հայկական գյուղերի բնակչությունը թույլ զինվածության պատճառով չէր կարող լուրջ դիմադրություն ցույց տալ թշնամու հարձակումներին: Գավառում եւ քաղաքում տիրող իրավիճակի մասին ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի ներկայացրած զեկուցագրերից ՀՅԴ Արեւելյան բյուրոն տեղյակ էր այնտեղ տիրող տագնապալի կացությանը[19]:

Անդրկովկասում ծավալվող դեպքերը միանշանակ ցույց էին տալիս, որ ընդհարումները վաղ թե ուշ կբռնկվեն նաեւ Գանձակ գավառում եւ քաղաքում: Ելակետ ունենալով այդ իրողությունը՝ Հ.Յ.Դաշնակցության Արեւելյան բյուրոյի հանձնարարությամբ «Այգեստան» կոմիտեն հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ու անվտանգությունը ապահովելու նպատակով իր գործունեությունը կենտրոնացնում է հետեւյալ խնդիրների վրա:

1. Քանի որ քաղաքի, առավել եւս գավառի հայ բնակչությունը դեռեւս դույզն-ինչ պատրաստ չէր ինքնապաշտպանության, ուստի ՀՅԴ «Այգեստան» կոմիտեն աշխատում էր հնարավորինս թուրք բնակչության հետ պահպանել բարի դրացիական հարաբերություններ ու ժամանակ շահել:

Գանձակում զինված բախումներ եւ անկարգություններ թույլ չտալու նպատակով քաղաքի հայ եւ թուրք բնակիչների համաձայնությամբ մայիսի կեսերին ընտրվում է 80 քաղաքացիներից բաղկացած հանձնախումբ: Քաղաքի բնակչության ձեռնարկած այդ խաղաղ նախաձեռնությունը հավանության է արժանանում նահանգապետի կողմից: Նրա հանձնարարությամբ հանձնախմբի անդամներից ընտրվում է 12 պատգամվորներից բաղկացած խաղաղարար կոմիտե, որը պետք է հսկողություն սահմաններ ոչ միայն քաղաքում, այլեւ գավառում[20]:

Ավելին, օգոստոսի 17-ին Գանձակի քաղաքային խորհրդարանի որոշմամբ կազմվում են հատուկ նշանակության խմբեր, որոնք քաղաքում հեղի-

նակություն վայելող անձանց ղեկավարությամբ պիտի հսկողություն սահմանեին քաղաքի թաղերում ու բույլ չտային եւ կանխեին անկարգություններն ու առավել եւս զինված բախումները[21]:

Գավառում եւ քաղաքում խաղաղություն պահպանելու եւ ընդհարումները կանխելու նպատակով նկատելի աշխատանքներ է ծավալել նաեւ Գանձակի հոգեւոր առաջնորդ Կորյուն վարդապետը, որը, մահմեդականների հոգեւոր առաջնորդի ընկերակցությամբ բազմիցս շրջելով քաղաքի թաղերում ու սրբավայրերում, անիծել է ազգամիջյան կռիվներ հրահրողներին ու խաղաղության է կոչել հայ եւ թուրք բնակչությանը:

Համաձայն «Արշալույս»-ում տեղ գտած թղթակցության, նահանգում տիրող կացությանը տեղում ծանոթանալու եւ համապատասխան վճիռներ կայացնելու նպատակով սեպտեմբերի 9-ին Գանձակ է ժամանում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը: Փոխարքան շքախմբով այցելում է քաղաքի սրբավայրերը՝ հայկական եկեղեցի եւ մահմեդականների մզկիթ: Եկեղեցում կայացած հանդիպման ժամանակ փոխարքան հայերին հավատացնում է, որ նրանք կարող են հանգիստ ու ապահով լինել, քանի որ «...հարկաւոր միջոցները ձեռք են առնուած...»[22]:

Ի տարբերություն հայերի, որոնց խաղաղություն պահպանելու խոստումներ է տալիս, մզկիթում կայացած հանդիպման ժամանակ նահանգապետը մահմեդականներին կոչ է անում պահպանել օրենքն ու կարգը եւ զերծ մնալ բռնություններ ու անկարգություններ հրահրելուց[23]:

Չնայած ձեռնարկած միջոցառումներին, նահանգում ու մասնավորապես Գանձակ գավառում եւ քաղաքում տիրող կացությունը ավելի ու ավելի է լարվում: Գանձակ գավառում եւ քաղաքում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունն աներկբա մատնանշում է, որ այնտեղ տիրող կացության շիկացմանն ու հայ եւ թուրք բնակչության միջեւ թշնամանքի խորացմանը իր սադրիչ ու հակահայ գործողություններով մեծապես նպաստել է նահանգապետը՝ գեներալ Տակայաշվիլին, որն այդ օրերին Կովկասի փոխարքայի հրամանով ստանձնել էր նահանգում տեղաբաշխված զորքերի հրամանատարությունը:

Նա թեեւ փորձեր է ձեռնարկել բարի դրացիական հարաբերություններ հաստատել երկու ժողովուրդների միջեւ, բայց իրականում քաջալերել ու հովանավորել է թուրք հրոսակախմբերին ու նրանց թշնամաբար

տրամադրել ընդդեմ հայերի: Գեներալ Տակայաշվիլին թշնամանքով վերաբերվել ու հալածել է հայերին, իսկ բազմաթիվ թուրք հանցագործների ազատ է արձակել կալանքից: Նահանգապետի գործողությունները հարուցում են հայ բնակչության զայրույթն ու վրդովմունքը: Գանձակի հոգեւոր թեմի առաջնորդ Կորյուն վարդապետը, խիստ դժգոհելով նահանգապետի վերաբերմունքից, մեկնում է Թիֆլիս, հանդիպում Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովին եւ ներկայացնելով նրան Գանձակ քաղաքում եւ գավառում տիրող իրավիճակն ու գեներալ Տակայաշվիլիի չարագործությունները՝ խնդրում է պաշտոնանկ անել նահանգապետին: Փոխարքան, ունկնդրելով Կորյուն վարդապետին, ընդառաջում է նրա խնդրանքին եւ Գանձակում տիրող իրավիճակն ու իշխանությունների գործողությունները քննելու նպատակով Գանձակ է ուղարկում փոխարքայության հատուկ գործերի հանձնակատար Օսոցկուն[24]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած զեկուցագրերում Գանձակի «Այգեստան» կոմիտեն նշում է, ու կոմիտեության շրջանակներում գործող կուսակցական կառույցները մշտապես շփվել են թուրք ազդեցիկ դեմքերի հետ եւ աշխատել հնարավորինս կանխել ընդհարումները[25]:

2. Այսուհանդերձ, Գանձակ քաղաքում եւ գավառում տիրող իրավիճակը թելադրում էր, որ հայ բնակչության անվտանգությունն ապահովելու միակ կայուն երաշխիքը, այնուամենայնիվ, բնակչության զինումն ու ինքնապաշտպանության կազմակերպումն էր:

Բաքվի փետրվարյան դեպքերից հետո ՀՅԴ Արեւելյան բյուրոն Գանձակ գավառի ու քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով այնտեղ է գործուղում ֆիդայական կռիվների բովով անցած բազմաթիվ փորձառու գործիչների: Իր անբաժան զինակիցների՝ Կայծակ Առաքելի եւ Ավոյի ընկերակցությամբ Գանձակ է գալիս Սեբաստացի Մուրադը:

«Եկան,-նշում է վավերագիրը,- տեսան Գանձակի հայ ժողովրդի անզէն ողբալի վիճակը: Անշուշտ այդ մասին հաղորդեցին մեր վերին Մարմնին...»[26]:

Մուրադը թեեւ երկար չի մնում Գանձակում, բայց հասցնում է զինակիցների ու ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի ընկերների աջակցությամբ կազմակերպել մարտական խմբեր եւ «...ինչպես նաեւ կարեւոր դիրքերը որոշել եւ կռուի ընդունակ մեր ընկերներին բաժանել դիրքերի վրայ»[27]:

Զանգեզուրում իրավիճակի կտրուկ վատթարացման հետեւանքով Մուրադը Կայծակ Առաքելի եւ Ավոյի ընկերակցությամբ մեկնում է Զանգեզուր եւ ստանձնում այդ գավառի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը: ՀՅԴ Արեւելյան բյուրոյի որոշմամբ Գանձակի ինքնապաշտպանական շրջանի հրամանատար է նշանակվում Հին-Նախիջեւանցի Ռաշիդը: Գանձակի դեպքերը լուսաբանող վավերագրերի բնութագրմամբ՝ Ռաշիդը թեեւ փորձառու եւ քաջ զինվորական էր, օժտված նաեւ կազմակերպական տաղանդով, բայց չի կարողացել արժանանալ Հ.Յ.Դաշնակցության տեղի կառույցների եւ ժողովրդի հարգանքին ու վստահությանը[28]:

Հարկ է նշել, որ Գանձակի շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում որոշակի տարաձայնություններ ու հակասություններ են ծագել ՀՅԴ Արեւելյան բյուրոյի կողմից այդ շրջանը գործուղված լիազորների միջեւ: Ռաշիդին հավասար իրավունքով ՀՅԴ Արեւելյան բյուրոյի կողմից Գանձակի շրջանի լիազոր է նշանակվել նաեւ Արամայիս Ազնավուրյանը:

1905թ. ամռանը նա Արմեն Գարոյի ընկերակցությամբ յոթ մարտիկներից բաղկացած թռուցիկ հեծելախմբով գալիս է Գանձակ, եւ քանի որ այդ ժամանակ Ռաշիդը գտնվում էր Թիֆլիսում, ստանձնում է քաղաքի եւ շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը: Մի քանի օր անց Թիֆլիսից վերադառնում է Ռաշիդը եւ «Այգեստան» կոմիտեին է ներկայացնում ՀՅԴ Արեւելյան բյուրոյի հանձնարարականը, «...որով ինքը նշանակւում էր միակ լիազորը Գանձակի եւ շրջանի ինքնապաշտպանութեան»[29]:

Այդ որոշումը թեպետ խիստ դժգոհություն է առաջացնում, բայց ինքնապաշտպանության գործը չվնասելու նկատառումով Ա. Ազնավուրյանը ընդունում է ՀՅԴ կոմիտեի առաջարկությունը եւ մեկնում գավառի գյուղերը՝ կազմակերպելու հայկական բնակավայրերի մարտական ուժերը:

Ա. Ազնավուրյանի հավաստմամբ, ինքը իր գլխավորած թռուցիկ խմբով արդյունավետ աշխատանքներ է ծավալել Բանանց եւ Գետաբեկ շրջանների բոլոր գյուղերում: Գյուղերում բնակիչները ջերմությամբ են ընդունել նրանց ու անմիջապես համաձայնել են անհրաժեշտ գումարներ տրամադրել զենք ու զինամթերք գնելու համար: Գյուղերում կազմակերպվել է հանգանակություն: Արդյունքում հավաքվել է զգալի

քանակությամբ գումար: Միայն Բանանց գյուղում ընդամենը մեկ օրում հանգանակել են 3000 ռուբլի[30]:

Հանգանակած գումարները ուղարկել են Գանձակի ՀՅԴ կոմիտեին ու Զինվորական մարմնին, որպեսզի նրանք հրացաններ ու փամփուշտներ գնեին ու ուղարկեին գյուղերը: Սակայն, ըստ Ա. Ազնավուրյանի, «...ամիսների իմ ու ժողովրդի դիմումները մնացին անհետեւանք: Անգամ նամակներիս պատասխան չտուեցին:

Ինձ ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ յայտնել Կենտրոնական Կոմիտէին եւ Ռաշիդին իմ խիստ դժգոհութիւնները եւ այդ շրջանից հեռանալու վճիռը[31]:

Ա. Ազնավուրյանի բացատրությունը ավելի քան անհասկանալի է: Նա փաստորեն, կարելի է ասել, Գանձակի Կ. Կոմիտեին եւ Ռաշիդին մեղադրում է, որ նրանք յուրացրել են գյուղացիների հանգանակած գումարները եւ չեն ուղարկել համապատասխան քանակության հրացաններ ու փամփուշտներ: Եթե դա իրոք այդպես էր, ապա իր վճռական խոսքը պիտի ասեր ՀՅԴ Արեւելյան բյուրոն:

Արամայիս Ազնավուրյանը, առանց ՀՅԴ Արեւելյան բյուրոյին եւ գավառի կուսակցական կառույցի պատասխանատուներին տեղյակ պահելու, թողնում է Գանձակի շրջանը եւ, իր թռուցիկ խմբով մեկնում է Ղազախ-Շամշադինի շրջան՝ Սեւքարեցի Սաքոյի մոտ, ապա այնտեղից անցնում է Ալեքսանդրապոլ ու Կարս:

Ա. Ազնավուրյանի կողմից Գանձակի տարածքը թողնելու իրողությունը նշվում է ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի կազմած «Գանձակի պագրոմը» խորագիրը կրող տեղեկագրում: Համաձայն տեղեկագրի՝ Ա. Ազնավուրյանը ծիավոր թռուցիկ խմբով հեռացել է Գանձակի տարածքից ինքնակամ, առանց որեւէ մեկին տեղյակ պահելու[32]:

Նրա հեռանալը, նշվում է տեղեկագրում, «...վատ տպաւորութիւն թողեց թէ մեր ընկերների եւ թէ տեղական ժողովրդի վրայ: Արամայիսը «Հայրենիք»-ում լոյս տեսած իր յուշերի մէջ այդ մասին տուած բացատրութիւնը լոկ ինքնարդարացման միջոց է: Եթէ որոշել էր մենակ կամ ընկերներով հեռանալ, Արամայիսը պարտաւոր էր հեռացողների կազմակերպական գործերն ու ծիերը յանձնել Գանձակի ղեկաւար մարմնին»[33]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած բացատրությունում Ա. Ազնավուրյանը ի պատասխան իրեն հասցեագրած «Ինչու՞ թողեցիր Գանձակի շրջանը» հարցին՝ պատասխանում է. «Թողեցի, որովհետեւ

ձեր նշանակած լիազօրն ու Գանձակի Կենտրոնական Կոմիտէի անդամները բացարձակապէս մերժեցին ինձ տուած իրենց խոստումները կատարել եւ հայրենասէր ժողովրդի դրամներով զէնք ու փամփուշտ հայթայթել»[34]:

Ճիշտ չէ միանշանակորեն ընդունել Արամայիս Ազնավուրյանի պատճառաբանության իսկությունը: «Կուսակցական կեանք» խորագիրը կրող վավերագրում նշվում է, որ Գանձակի գավառից հանգանակած գումարներով, այնուամենայնիվ, ՀՅԴ Արեւելյան Բյուրոյի աջակցությամբ ՀՅԴ տեղի կոմիտեի եւ Ջինվորական մարմնի ընկերները գնել են զէնք ու զինամթերք եւ ուղարկել մարտական խմբերը զինելու:

Ավելին, այդ նույն վավերագրի խոստովանությամբ «Դրամական օգնութեան տեսակետից էլ ՀՅԴ Արեւելյան Բիւրօն շատ խոշոր դեր կատարեց. թէ չէ Գանձակի մէջ գանձուած գումարը ընդհանուր ծախքի մեկ երրորդ մասն էր»[35]:

Ա. Ազնավուրյանի հեռանալուց հետո Գանձակից հեռանում է նաեւ Ռաշիդը: Ռոստոմի առաջարկությամբ նրա փոխարեն Գանձակի շրջանի լիազոր է նշանակվում Աբրահամ Գյուլխանդանյանը[36]:

Ռոստոմն այդ ժամանակ գտնվում էր Շուշիում եւ տեղում ծանոթանալով քաղաքի ու գավառի իրական կացությանը՝ մշակում է ՀՅԴ կառույցների գործունեության եւ հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման «Գաւառի ինքնապաշտպանութիւնը» խորագիրը կրող նախագիծը:

Ըստ արժանվույն գնահատելով հայ-թուրքական ընդհարումներում Ռոստոմի ներդրած ծառայությունը, պիտի նշել, որ նրա կազմած վերոհիշյալ նախագիծը մեծ նշանակություն է ունեցել ոչ միայն Ղարաբաղի, այլ նաեւ Գանձակի նահանգի հայկական բնակավայրերի ինքնապաշտպանության կազմակերպման գործում[37]:

Մինչեւ Գանձակի հայ-թուրքական ընդհարումները, որոնք սկսվել են նոյեմբերի 18-ին, կռիվներ արդեն տեղի էին ունեցել Քաքվում, Նախիջեւանում, Երեւանում, Շարուր- Դարալագեազում, Զանգեզուրում եւ Ղարաբաղում: Կարելի է ասել, որ հայ մարտական ուժերը, ճիշտ է, սկզբնական շրջանում թեեւ կրել էին զգալի կորուստներ ու ունեցել էին անհաջողություններ, բայց ի վերջո կարողացել են գրեթե բոլոր ինքնապաշտպանական մարտերում նվաճել անվիճելի հաղթանակներ: Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռում ՀՅԴ Արեւելյան բյուրոյին այդ շրջաններից

բազմաթիվ փորձառու ռազմիկների, զենք ու զինամթերք եւ անգամ մարտախմբեր տեղափոխել Գանձակ[38]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյի հրահանգով Գանձակ գավառի հյուսիս-արեւմտյան հայաբնակ ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը ստանձնում է Բուլանուխցի վարժապետ Մարտիրոսը* [1]: Նա իր թռուցիկ խմբով փոխարինում է Արամայիս Ազնավուրյանին: Գանձակից Ղարաբաղ տանող ուղիների եւ Գյուլիստանի շրջանի հսկողությունը հանձնարարվում է գանձակեցի Լեւոն Արամյանի գլխավորած թռուցիկ խմբին[39]:

Նահանգի ինքնապաշտպանության կազմակերպիչները կարողացել են մասամբ լուծել զենք ու զինամթերքի տեղափոխման խնդիրը: Ըստ ՀՅԴ «Այգեստան» կոմիտեի կազմած տեղեկագրի, ղարադաղլուեցի Սերգեյի ղեկավարությամբ «Սուրհանդակ» տասնեակ ձիատրները գիշերները շաբաթը մի քանի անգամ գաղտնի ճամբով գնում էին երկաթուղիի կայարանը եւ այնտեղ զէնք եւ մարդկանց տեղափոխում քաղաք[40]:

Նահանգի ինքնապաշտպանության կազմակերպիչներին հաջողվել էր հուսալի կապ հաստատել Գանձակ, Ղարաբաղ, Զանգեզուր եւ Ջիվանշիր գավառների միջեւ: Վերոհիշյալ տեղեկագրի վկայությամբ ղարադաղլուեցի Սերգեի գլխավորած «Սուրհանդակի» հեծելախումբը գավառները զենք փոխադրողների ապահովության համար նրանց «...ուղեկցում էր քաղաքից 30 կիլօմետր հեռաւորութեան վրայ գտնուող հայկ. Գետաշէն գիւղը, որտեղից լեռնային ճամբով ապահով էր ճանապորդութիւնը մինչեւ Զանգեզուր»[41]:

*** 1 Բուլանուխցի վարժապետ Մարտիրոս:**

Գանձակի նահանգի ինքնապաշտպանական մարտերում իրեն հերոսաբար դրսեւորած , բնակչության ու հայ մարտիկների չքջանում մեծ հեղինակություն վայելած խմբապետ Մարտիրոս Ստեփանյան Պետրոսյանցը Արեւմտյան Հայաստանի Տարոն աշխարհի Բուլանուխ գավառի Եռնջալա գյուղից էր: Դեռեւս 1891 թ. զինվորագրվել է Հայոց Ազատամարտին եւ հայդուկային խմբերի կազմում մասնակցել երկրում տեղի ունեցած մի շարք կռիվների: 1896 թ. հարկադրված հեռացել է երկրից եւ մեկնել Կովկաս ու անդամագրվել Հ.Յ. Դաշնակցությանը: 1902թ. նորից վերադարձել է երկիր ու զբաղվել ուսուցչությամբ:

1903 թ. խմբապետ Մխիթարի մարտախմբի կազմում մասնակցել է Արդվինի կռվին:: Մեկ տարի անց վերադարձել է Կովկաս եւ երկու անգամ ձերբակալվել ու նստել է Բաթումիի ու Ալեքսանդրապոլի բանտերում: Ազատվելուց հետո ՀՅԴ Արեւելյան բյուրոյի հանձնարարությամբ մեկնել է Գանձակի նահանգ եւ մեծ վարպետությամբ կազմակերպել ու ղեկավարել հայ բնակչության ինքնապաշտպանությունը:

Գանձակի նահանգում հայ-թուրքական հարաբերությունները քննարկելու եւ համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով ՀՅԴ «Այգեստան» կենտր. կոմիտեն որոշում է հրավիրել Շրջանային ժողով եւ այդ կապակցությամբ 1905 թ. նոյեմբերի 11-ին հրապարակում է նահանգի կուսակցական կառույցներին ուղղված «Հրաւէր» խորագիրը կրող հետեւյալ շրջաբերականը. «Այգեստանի Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ սոյն 1905 թ. նոյեմբերի 20-ին, առավօտեան ժամի 10-ին, ձրաւնակուած է Գանձակում Շրջանային ժողով, որին մասնակցելու են հրաւիրվում շրջանի ամեն մի գիւղից մի ներկայացուցիչ ու մի-մի ներկայացուցիչ էլ քաղաքի ենթակոմիտէներից, աշակերտական ու կարմիր խաչի կազմից: Ժողովի քննադատութեան պէտք է առաջարկվեն՝ ա. միջոցներ, որոնք անհրաժեշտ են կազմակերպութիւնը ամուր հողի վրա դնելու համար համաձայն կանոնադրութեան Հ.Յ. Դաշնակցութեան, բ. պրոպագանդայի հարցը ու հայ-թուրքական յարաբերութիւնների հարցը...»[42]:

Ինչպես հայտնի է, նախատեսված Շրջանային ժողովը չի կայանում քաղաքի հայկական քաղաքամասի եւ հատկապես շուկայում գտնվող հայերին պատկանող վաճառատների վրա նոյեմբերի 18-ին թուրքերի ձեռնարկած հարձակման հետեւանքով:

Այսուհանդերձ, բերված փաստերը վկայում են, որ ՀՅԴ տեղի կազմակերպությունը, ի դեմս «Այգեստան» կենտր. կոմիտեի, աշխատում էր որոշակի քայլեր ձեռնարկել նահանգի հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ:

Չնայած ձեռնարկած քայլերին, Գանձակի գավառում եւ քաղաքում հայկական կողմը, այնուամենայնիվ, մասամբ անպատրաստ գտնվեց պատշաճ մակարդակով դիմագրավելու թուրք հրոսակների հարձակումներին:

1905թ. նոյեմբերի 18-ին՝ ուրբաթ օրը, առավոտյան ժամը 101/2-ին, թուրք հրոսակները հանկարծակի ներխուժում են քաղաքային շուկա եւ հարձակվելով հայերին պատկանող խանութների վրա՝ սկսում են սպանդն ու կողոպուտը[43]:

Այդ օրերին Թիֆլիսում ընթանում էր Հ.Յ.Դաշնակցության «Կովկասեան ռայոնական» ժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին Գանձակի զինվորական շտաբի անդամները, որոնց թվում նաեւ գավառի Զինվորական մարմնի լիազոր Աբրահամ Գյուլխանդանյանը: Նրա եւ

շտաբի անդամների բացակայության պայմաններում քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպման ու ղեկավարման ղեկը ստանձնել է ՀՅԴ տեղի կոմիտեն, որի կազմում չի եղել ռազմական գործին ծանոթ գեթ մեկ մարտական գործիչ: Բարեբախտաբար այդ ժամանակ Գանձակում էր գտնվում Ղարաբաղի ինքնապաշտպանական մարտերում դրսեւորած իր քաջագործություններով հայտնի Ալեքսան Բալասյանը, որը իր տրամադրության տակ ունեցել է ղարաբաղցի քաջավարժ մարտիկներից բաղկացած մարտական խումբ, որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք:

ՀՅԴ Գանձակի կոմիտեն նկատի ունենալով Ալեքսան Բալասյանի մարտական փորձառությունը, բնակչության եւ զինվորների շրջանում ունեցած մեծ հեղինակությունը, նրան է վստահում Գանձակի զինվորական ուժերի հրամանատարությունն ու կռիվները ղեկավարելու պատասխանատվությունը:

Գանձակի ինքնապաշտպանությունը կայուն հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ էր խելամտորեն ու կշռադատված օգտագործել քաղաքում գտնվող մարտական ուժերը, ընտրել կռիվներ մղելու արդյունավետ մարտավարություն: Ալեքսանն անհապաղ զինում է իր հետ եկած ղարաբաղցի բոլոր զինուորներին, եւ ավելորդ զենքերն ու փամփուշտները բաժանում Դաշնակցության տեղի կազմակերպության զինվորներին: Համաձայն Գանձակի կռիվների մանրամասները ներկայացնող վավերագրության՝ «...դրանք բոլորը կազմակերպութեան Գանձակի զինուորների հետ միանալով, կազմեցին մի այնպիսի ոյժ, որ հնարաւորութիւն ունէր ոչ միայն պաշտպանել հայոց քաղաքամասը թուրքերի ներխուժումից, այլեւ ակտիւ գործողութիւններ սկսել նրանց դեմ»[44]:

Ալեքսան Բալասյանի գլխավորությամբ կազմվում է մարտական գործողությունները ղեկավարող ռազմական շտաբ (Զինվորական մարմին), որի հանձնարարությամբ Գանձակում գտնվող մարտական ուժերը տեղաբաշխվում են երեք հիմնական հենակետերում, այսինքն այն ուղղություններում, որտեղից սպասվում էին թուրքերի հարձակումները:

Օրինակ, «Չայլում գործում էին շրջանապետ Սիմոնի (տաճկաստանցի) ղեկավարութեամբ. Մոլլա-Չայլում շրջանապետ Ջհանի (տեղացի), միւս շրջանի զինուորները շրջանապետ Մեժլում Ժամհարեանի ղեկավարութեամբ պահում էին հայոց քաղաքամասի այն կէտերը, որտեղից

թուրքերը կարող էին ներ խուժել, անցնելով գետը Քաղմանլարից, թրքական մասից կամ գալով Ելինդօրֆ գիւղի կողմից »[45]:

Գաւնճակի վրա թուրքերի հարձակումը սկսվել է ուրբաթ օրը՝ նոյեմբերի 18-ին: Ուրբաթը թուրքերի համար տոն օր էր(բայրամ) եւ այդ պատճառով նրանց խաւնութները փակ էին, իսկ հայերը, հավատալով փոխարքայի ու նահանգապետի խոստումներին եւ բնավ չկասկածելով, որ այդ օրը թուրքերը կարող էին նախահարձակ լինել, գտնվում էին արհեստանոցներում ու խաւնութներում եւ հանգիստ զբաղված էին իրենց սովորական աշխատանքով:

Քաղաքի վրա ձեռնարկվող հարձակումն ու հայ բնակչության կոտորածը թուրքական կողմը սկսել է ըստ վաղօրոք մշակած սցենարի: Քաղաքում պատսպարվել են հատուկ նշանակության սուրհանդակներ, որոնք կոտորածը սկսվելուն պես պիտի անհապաղ մեկնեին քաղաքի մերձակա գյուղերը եւ այնտեղ կատարվող դեպքերի մասին հայտնեին բնակչությանը: Գաւնճակի գրավմանը, կոտորածին անպայմանորեն պիտի մասնակցեր նաեւ գյուղական բնակավայրերի մոլեռանդ ամբոխը, որը կազմ ու պատրաստ սպասում էր ազդանշանի, որպեսզի անհապաղ ներխուժեր քաղաք եւ ավերի ու ավարի վերածեր քաղաքը եւ նրա հայ բնակչությանը:

Ներկայացնելով այդ իրողությունը՝ Գաւնճակի դեպքերը լուսաբանող վավերագրություններից մեկը նշում է. «Գաւնճակից հիւսիս դէպի Կուր գետը ձգվող տափարակի վրա գնում էին բազմաթիւ թրքաբնակ գիւղեր: Հայկական գիւղեր այդ տարածութեան վրա չը կան: Բացառապես թուրքերից բաղկացած թրքական գիւղերի խիտ ցանցը սկսվում է քաղաքից հազիւ վեց-յոթ վերստ հեռու: Սուրհանդակներն այդ պատճառով շատ շուտ տեղ են հասնում: Լուրը կայծակի արագութեամբ գիւղից գիւղ է անցնում ու թուրք վայրագ խուժանը «Եա Ալի» բղավելով բոլորէապես ոտքի է կանգնում, հոծ խառնիճաղանջ բազմութեամբ վազում դէպի քաղաք...»[46]:

Գաւնճակի սպանդը պատմող վավերագրերից մեկը, ներկայացնելով այդ օրը քաղաքում եւ մասնավորապես շուկայում տեղի ունեցած ջարդերի սարսափելի տեսարանները, նշում է. «Մի քանի րոպէում շուկայի ընդարձակ հրապարակը իր շրջակայ բազմաթիւ հայկական խաւնութներով ու արհեստանոցներով սպանդանոց է դառնում... հայերը անզէն, անպաշտպան դես ու դէն էին փախչում: Շատերն ընկնում էին խաւնութներում կամ փախչելիս բազմաթիւ հարուածների տակ: Գետին տապալված վիրավորներին սպանում կամ կտոր-կտոր էին անում...»[47]:

Համաձայն այդ նույն վավերագրի, ամենավայրագ կոտորածը տեղի է ունեցել շուկայի մեծ հրապարակին կից գտնվող «Քուծաղչի խանա» անունը կրող իջեւանատանը, որտեղ այդ պահին աշխատել են բազմաթիվ հայ արհեստավորներ: Գազազած ամբոխը անընդհատ «Յա Ալի» վանկարկելով ներխուժել է իջեւանատուն եւ կոտորել այնտեղ գտնվող գրեթե բոլոր արհեստավորներին: Այդ օրը բուրք հրոսակները, չհանդիպելով որեւէ դիմադրության, կոտորածներ են սանձազերծել քաղաքի մի շարք մասերում: Ուշագրավ է, որ թուրքերը իրենց առաջնորդների հանձնարարությամբ հայերին կոտորելու համար, որպես անաղմուկ, հարմար գենք հիմնականում օգտագործել են դաշույնը[48]:

Ոչ պակաս ուշագրավ է իշխանությունների ու ոստիկանության վերաբերմունքը: Ոստիկանությունը ոչ միայն քայլեր չի ձեռնարկել կանխելու բուրք հրոսակների հարձակումներն ու պաշտպանել հայերին, այլեւ «...ինքն էլ մեծ եռանդով ու խուժանից ոչ պակաս վայրագութեամբ յանձինս բազմաթիվ թուրք պրիստաւների, ոստիկանապետ Թեմուր Բէկ Հասանբեկովի ու պրիստաւի օգնական Խրաֆիլբէկովի ղեկաւարութեամբ մասնակցում է կոտորածին ու կողոպուտին...»[49]:

Գաւնճակի դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների վկայությամբ նոյեմբերի 18-ին քաղաքում հայ բնակչության կոտորածները իրականացվել են նահանգապետի՝ գեներալ Տակայշվիլիի գործուն մասնակցությամբ: Օրինակ, ինչպե՞ս բացատրել, որ նրա թույլտվությամբ կոտորածների օրերին իր 300 հոգանոց հրոսակախմբով քաղաք է ներխուժել հռչակավոր ավազակապետ Դալի Ալին[50]:

Մ. Վարանդյանի հավաստմամբ «Նահանգապետը՝ նոյն վրացի Տակայշվիլին, թոյլ տուաւ քաղաք մտնել անգամ հռչակատր աւազակապետ Դալի Ալին, որ հալածուած էր իշխանութիւններու կողմէն իր բազմաթիւ ոճիրներուն համար: Դալի Ալին ներս խուժեց իր 300 հրոսակներով եւ միացաւ իրենց ցեղակիցներուն՝ իրագործեցին արիւնոտ դաւը»[51]:

Գաւնճակի դեպքերը ներկայացնող սկզբնաղբյուրների վկայությամբ, իշխանությունների կողմից իր գործած բազմաթիվ ոճիրների համար հետապնդվող հայտնի ավազակապետ Դալի Ալին իր գլխավորած հրոսակախմբով քաղաքում է հայտնվել նոյեմբերի 19-ին, այսինքն այն ժամանակ, երբ քաղաք ներխուժած բուրք ամբոխը տեղի թուրքերի հետ հիմնավորապես թալանել ու այրել էր հայերի խանութներն ու վաճառատները: Հռչակավոր ավազակապետին խիստ գայրացրե է ցեղակից-

ների արարքները: Փաստորեն նրան եւ իր հրոսակախմբին ոչինչ չեր մնացել թալանելու ու քանդելու:

Ջայրացած ավազակապետը «...հայհոյում է կողոպտողներին ու սպառնում է բույլերին նրանց անպաշտպան թողնել ու հեռանալ քաղաքից: Բուրք ղեկավարները վախենում են Դալի Ալիի սպառնալիքից ու նրա տարամտողությեան տակ դնում քսան հազարի չափ մի գումար: Աւազակապետը մնում է քաղաքում»[52]:

Պարզվում է, որ Դալի Ալին քաղաք մեկ օր ուշացած է մտնելու պատճառն այն էր, որ նա երկյուղել է իշխանությունների վերաբերմունքից: Եթե չլիներ այդ երկյուղն ու մտավախությունը, անտարակույս նա իր հրաշոսակախմբով կհայտնվեր քաղաքում ավելի վա: Քաղաք մտնելու համար նրան պետք էր իշխանությունների կայուն երաշխիքն ու բարյացակամ վերաբերմունքը:

Մի քանի անհաջող քայլերից հետո բուրք ազդեցիկ դեմքերին վերջապես հաջողվում է նրան համոզել, որ «...գեներալ գուբերնատոր Տակայաշվիլին ու առհասարակ այժմեան թուրքասեր ռուսաց իշխանությունները նրան ոչ միայն չեն բռնիլ, այլեւ ճակատը կը պաչեն նոյնիսկ, յարգանք ու մեծարանք ցոյց կը տան...»[53]:

Այդ բացատրությունից հետո նոր միայն Դալի Ալին իր հրոսակախմբով հայտնվում է Գանձակում եւ համոզվում, որ «...ինքը ցանկալի հիւր է ոչ միայն թուրքերի, այլեւ Տակայաշվիլու ու նրա դժոխային ուղղութեան հետեւող բոլոր պաշտոնեաների համար...»[54]:

Թուրք հրոսակապետի ներկայությունը Գանձակում թեեւ փոքր-ինչ ուշացած էր, բայց նահանգապետի համար ցանկալի:

Ավելի քան գազանաբարո եւ հակամարդկային է եղել քաղաքում Դալի Ալիի առաջնորդած հրոսակների պահվածքը: Թալանից անմաս մնալու պատճառով գազազած ու կատաղությամբ համակված հրոսակները շրջել են քաղաքում եւ հոշետել ու այլանդակել են իրենց ձեռքն ընկած հայերի դիակները: Նրանց գազանաբարո արարքները գարմանք է պատճառել նոյնիսկ այդ տեսարանների ականատես ռուս սպաներին ու զինվորներին: Զինվորականների այն հարցին թե ինչու՞ են այդպես վարվում, նրանք պատասխանել են. «Ինչ անենք բա, գիւղից նոր էնք եկել: Կենդանի հայեր չենք գտնում բազարում, որ սպանենք ու նրանց արիւնը տաք-տաք խմենք: Սրանով գոնէ պետք է մեր սիրտը հովացնենք»[55]:

Այդ սարսափազդու տեսարանների ականատես, օրեր առաջ հայ-թուրքական բարեկամություն քարոզող, հայերի անվտանգությունը ե-րաշխավորող նահանգապետը՝ գեներալ Տակայշվիլին ոչ միայն չի փորձել կանխել նման ստորագույն արարքները, այլեւ ավելին, կոտարածից հաշված ժամեր առաջ իր հրամանատարությամբ գործող զորքի մի մասը ուղարկում է «...հայոց քաղաքամասի սահմանագլուխը կամրջի մօտ՝ առնելու համար զինված հայերի ներս խուժումը բազար ու այդպիսով հնարաւորութիւն տալու թուրքերին անարգել կոտորել ու կողոպտել հայերին բազարում»[56]:

Կոտորածները սկսվելուց երկու ժամ անց գեներալ Տակայշվիլին դուրս է գալիս շուկայի մերձակայքում գտնվող իր բնակարանից եւ հանգիստ ու ժպտադեմ դիտում, թէ ինչպես էին թուրք ավարառուները սայլերով ու ֆուրգոններով կրում հայերին պատկանող խանութներից թալանված ապրանքները: Իսկ երեկոյան, երբ թուրքերը մութն ընկնելուն պես սկսում են հրդեհել հայերի բնակարանները, խանութներն ու արհեստանոցները, «...գեներալ Տակայշվիլին դիտում է հրդեհը իր բնակարանի լուսամուտից ու լսում երգիչ կազակներին. այդ րոպէին նրա մօտ ուրախ ճաշկերույթ է լինում մի քանի մտերիմների մասնակցութեամբ...»[57]:

Գեներալ Տակայշվիլիի ու ոստիկանության համաձայնությամբ շէշտում են նաեւ Գանձակի դեպքերը պատմող եւս երկու այլ վավերագրեր[58]:

Նոյեմբերի 18-ի դեպքերը ներկայացնող վավերագրերի հավաստմամբ, թուրքերի հարձակման հետեւանքով քաղաքի շուկայում եւ նրա հարակից տարածքում զոհվել են գրեթե 100 եւ վիրավորվել երկու տասնյակից ավելի հայեր[59]:

Այդ օրը շուկայում եւ մեծ հրապարակին կից գտնվող «Բուծաղչի խանա» անունը կրող իջեւանատանը տեղի ունեցած դեպքերի ժամանակ թուրքերը բացառապես գործ են ունեցել պաշտպանվելու որեւէ հնարավորություն չունեցող անզեն հայերի հետ:

Այսուհանդերձ, շուկայի մի կետում երեք զինված հայեր, պատսպարվելով «Ագօվօ-տօնեան» բանկի կտուրի տակ, այնուամենայնիվ, կարողացել են արժանի դիմադրություն ցույց տալ եւ գնդակահարել ավելի քան 60 թուրքի[60]:

Համաձայն նույն վավերագրի. «Նոյեմբերի 20-ին նրանց տեղը իմացել են ռուս կազակները. գինաթափ են արել հայ բաջերին ու ձերբա-

կալել: Մի քանի օրից յետոյ նրանցից երկուսին հաջողվում է փախուստով ազատվել»[61]:

Եթե նոյեմբերի 18-ի առաջին հարձակման ժամանակ թուրք հրոսակներին հաջողվել է գրեթե առանց դիմադրության չուկայում կոտորել բազմաթիվ հայերի ու բռնազավթել նրանց ունեցվածքը, ապա քաղաքի մյուս մասերում դեպքերը զարգացել են բոլորովին այլ ուղղվածությամբ:

Նույն օրը, նույն ժամին թուրք հրոսակախմբերը քաղաքի արեւելյան՝ Չոլագ արվարձանի եւ հյուսիսային՝ Չայլու քաղամասի կողմից հարձակվել են հայկական քաղաքամասի վրա: Համաձայն թուրք առաջնորդների վաղօրոք մշակած ծրագրի, հարձակումը իրականացվել է միաժամանակ, մեծաքանակ ուժերով ու հայկական կողմի համար անսպասելի: Քանի որ ըստ նրանց հաշվարկի հայկական կողմը չուներ մեծաքանակ մարտական ուժեր եւ հետեւաբար միաժամանակ պաշտպանվելու հնարավորություն, ուստի թուրք առաջնորդները վստահ են եղել, որ հարձակումը նման մարտավարությամբ իրականացնելու պարագայում իրենց կհաջողվեր արագորեն հաղթահարել հայերի դիմադրությունն ու ներխուժել նրանց քաղաքամասը:

Թուրքական կողմը վաղօրոք շատ լավ նախապատրաստվել էր: Հարձակման նախօրեին թուրք պարագլուխները իրենց մարտական ուժերը կենտրոնացրել են հայոց քաղաքամասի հարեւանությամբ գտնվող 2500 բնակիչ կամ 250 տուն ունեցող թուրքական Չայլու ու Չոլագ թաղերում, որտեղից նոյեմբերի 18-ին սկսել են հարձակումը[62]:

Այդ թաղերի բնակիչները, մինչեւ Գանձակի հայկական քաղաքամասի վրա հարձակում սկսելը, օրեր շարունակ իրենց բնակարաններում պատսպարել են բազմաթիվ թուրք զինյալների, որոնք պիտի մասնակցեին վաղօրոք ծրագրած հարձակմանը:

Վերոհիշյալ վավերագրերի հեղինակների հավաստմամբ, թուրքական կողմի մարտավարությունը ի սկզբանե պարզ էր ու հասկանալի:

«...եթէ,-նշում է վավերագիրը,-Չայլուից եւ Մօլլա-Ջալլուից հաջողվեր նրանց ներս խուժել միաժամանակ բազարի կոտորածի հետ ու այդպիսով իրարանցում առաջ բերել հայոց քաղաքամասում, նրանք ներս կը խուժեին նաեւ այդ քաղաքամասի հարաւային ու հարաւ-արեւմտեան կողմից, Բաղմանլար արուարձանից...»[63]:

Անհրաժեշտ էր ճիշտ եւ արդյունավետ օգտագործել մարտական ուժերի հնարավորությունները եւ թույլ չտալ հակառակորդին ներխուժել

հայկական քաղաքամաս: Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ժամանակին գնահատելով թուրքական կողմի ծրագրերը, հակառակորդից գաղտնի մարտական ուժերը դիրքավորում է այն ուղղություններում, որտեղից սպասվում էր հարձակումը:

Նոյեմբերի 18-ին՝ առավոտյան ժամը 10/2-ին, թուրք հրոսակները հարձակվում են հայկական քաղաքամասի վրա: Նրանք, անտեղյակ հայկական կողմի ձեռնարկած քայլերին եւ ապավինելով իրենց պատրաստվածությանն ու քանակական գերակշռությանը, ավելի քան վստահ են եղել իրենց հաղթանակին: Միաժամանակ, թուրք հրոսակներին ոգեշնչելու նպատակով, նրանց առաջնորդները այնպիսի հավատ ու վստահություն են ներշնչել հարձակվողներին, որ նրանք ընդամենը մի երկու ժամում կարող էին հեշտությամբ բնաջնջել թույլ զինված հայերին[64]:

Բայց իրականում հակառակորդի համար կատարվում է անսպասելին: Ալեքսան Բալասյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող շրջանապետեր Մեժլումի, Ջհանի եւ Սիմոնի գլխավորած մարտական խմբերը գործել են ավելի քան կազմակերպված ու փոխհամաձայնեցված: Շրջանապետ Մեժլումի առաջնորդած մարտախումբ անկոտրում պաշտպանությամբ դիմագրավելով Բաղմանլարի թուրքերի հարձակումներին, հնարավորություն է ընձեռում Ջհանի եւ Սիմոնի գլխավորած մարտական խմբերին, առանց իրենց թիկունքի մասին մտածելու, ամբողջ ուժերը տրամադրել դիմակայելու Չայլուից եւ Մօլլա-Ջալլուից սպասվելիք հարձակումները: Կարելի է ասել, որ այդ ժամանակ քաղաքի հայության ճակատագիրը գլխավորապես վճռվում էր հենց այդ ուղղությունում ծավալվող դեպքերի ելքով: Հայ ինքնապաշտպանական ուժերը ոչ միայն կարողանում են հաջողությամբ դիմագրավել թուրքերի հարձակումը, այլեւ դիմելով հակահարձակման՝ փախուստի են մատնում հրոսակներին: Ավելին, չնայած այն իրողությանը, որ թուրքերը Չայլում եւ Մօլլա-Ջալլում ունեցել են շատ լավ զինված զգալի քանակությամբ հետեւակ ու նաեւ հեծյալ մարտական ուժեր, այնուամենայնիվ, հայ մարտիկները կարողացել են ներխուժել այդ հենակետերը եւ փախուստի մատնել այնտեղ դիրքավորված թուրք մարտիկներին[65]:

Ի պատասխան Չայլուում եւ Մօլլա-Ջալլուում կրած պարտության, թուրքական կողմը որոշում է Գանձակի հայկական քաղի վրա հարձակում ձեռնարկել նոր ուղղությամբ: Ըստ նրանց մտահղացման թուք հրո-

սակախմբերը պիտի Չայլուի մերձակայքով անցնեին գետը եւ ներխուժեին հայկական թաղը: Թուրքերը մի քանի անգամ նախանշված ուղղությամբ փորձում են անցնել գետն ու ներխուժել հայկական թաղ, բայց ապարդյուն: Հայ ինքնապաշտպանական ուժերը յուրաքանչյուր անգամ կարողանում են հաջողությամբ հետ մղել թուք հրոսակախմբերի ձեռնարկած գրոհները [66]:

Այդ օրը տեղի ունեցած կռիվներում հայ մարտիկները կիրառել են ուշագրավ եւ արդյունավետ մարտավարություն: Քաղաքի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը հրահանգում է, որ մարտիկները իրենց նշանառության տակ վերցնեն գլխավորապես բշնամու առաջնորդներին ու մարտի ժամանակ առավել աչքի ընկնող կռվողներին: Հայկական կողմի համոզմամբ, նման մարտավարության կիրառումը կարող էր խուճապ ու սարսափ առաջացնել հարձակվողների շարքերում:

Այդ մարտավարության շնորհիվ «Յարձակման առաջին րոպեներին թուրքերից աչքի ընկնողները գետին տապալուեցին սպանված ու վիրաւորված: Չայլւում սպանվեց կոտորածի գլխաւոր կազմակերպիչներից մինը. Գանձակի թուրքերի մէջ շատ ազդեցիկ յայտնի խուլիգան Ղարաբաթ-օղլին ...»[67]:

Ղարաբաթ-օղլին Չայլուի եւ Մօլլա-Ջալլուի թուրքերի առաջնորդներ էր: Նա հավատացրել էր այդ գյուղերի բնակչությանը, որ կռիվներ սկսվելու դեպքում հայերը մի երկու ժամ հազիվ կկարողանան դիմադրել: Նրա սպանությունը նկատելի հուսալքություն է առաջացրել այդ գյուղերի բնակիչների եւ այնտեղ ապաստանած թուրք զինյալների մեջ: Կռիվները սկսվեցին եւ թուրքերը համոզվեցին, որ իրենց առաջնորդ Ղարաբաթ-օղլու հավաստիացումները բացարձակապես կեղծ ու անհիմն են:

Թուրք հրոսակախմբերը, կորցնելով իրենց առաջնորդներին, խուճապի են մատնվում եւ անկարող լինելով դիմակայել հայ մարտախմբերի գրոհներին՝ հեռանում են իրենց քաղաքամասը: Հայ ինքնապաշտպանական ուժերը կարող էին հետապնդել փախուստի դիմած թուրքերին ու ներխուժել նրանց թաղերը, բայց հրամանատարության որոշմամբ դադարեցնում են հարձակումը եւ վերադառնում իրենց դիրքերը:

Հայ ինքնապաշտպանական ուժերի քաջագործությունները, մարտում կիրառած մարտավարությունը հիացրել են նույնիսկ ռուս սպաներին ու զինվորներին:

«Մի քանի ռուս օֆիցերների, որոնց աջողվել էր մօտիկից դիտել մեր տղերանց կռիւը վերոյիշեալ թաղերում, հիացած էին մնացել թէ նրանց քաջութիւնից եւ թէ առաւել եւս նրանց տակտիկայից: Օֆիցերները համեմատում էին մեր տղաներին իսպանցիների հետ ու ասում, որ եթէ մի հարիւր հոգի լինէին նրանցից, Գանձակն ամբողջովին կարող է հայոց տիրապետութեան տակ անցնել մեկ-երկու օրում»[68]:

Անդրադառնալով Գանձակում տեղի ունեցած կռիվների լուսաբանմանը՝ «Դրօշակ»-ը նշում է. «...ինչպէս ամէն տեղ՝ Գանձակում էլ թուքերը յանկարծ յարձակւել են հայոց շուկայի վրայ, կոտորել ու թալանել: Ուշքի գալով հայերը զորեղ դիմադրութիւն են ցոյց տւել եւ յետ մղել դէպի հայոց քաղը դիմող թուրքերի խուժանը...Մի քանի մամր ընդհարումներ եղան, ուր հայերը շարունակ յաղթել են, եւ եթէ գօրքը չը խանգարի, երեւի մի նոր եւ ահռելի ընդհարումով իրար կը ջնջեն, այն աստիճան լարւած են: Հայերը պատրաստ են եւ ընդհարումից չեն փախչում»[69]:

Ընդհանրացնելով կռիվների առաջին օրվա արդյունքները՝ կարելի է ասել, որ հայ ինքնապաշտպանական ուժերն իրենց հերոսական դիմադրությամբ տապալեցին քաղաքը հայերից մաքրելու թուրքերի ծրագրած ձեռնարկումները: Քաղաքի հայ բնակչությունը փրկվեց անխուսափելի ջարդերից: Հայ մարտիկները բշնամուն պարտության են մատնում շնորհիվ իրենց կազմակերվածության, քաջագործության եւ իհարկե, հրամանատարների վարպետությամբ ու կռիվներում կիրառած կշռադատված ու արդյունավետ մարտավարության:

Այսուհանդերձ, պիտի նշել, որ հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության գործողություններում կային լուրջ վրիպումներ: Անկասկած, Գանձակի հայ բնակչության կոտորածը չէր կարող տեղի ունենալ, եթե իրենց բարձրության վրա գտնվեին Զինվորական մարմինը եւ ՀՅԴ «Այգեստան» կոմիտեն, մանավանդ, որ քաղաքում ու շրջանում արդեն կային կազմակերպված մարտական ուժեր եւ այլեւս գաղտնիք չէին թուրքական կողմի նկրտումներն ու իշխանությունների վերաբերմունքը: Գանձակի Զինվորական մարմինը պարտավոր էր սթափ գնահատել քաղաքում տիրող կացությունը եւ շուկայում ու նրա հարակից տարածքում գտնվող հայերի անվտանգությունն ապահովելու նպատակով իր ուշադրության մշտարթում տեսադաշտում պահեր նաեւ քաղաքի այդ մասը:

Գանձակի հայ առտրական հաստատությունների, ինչպես նաեւ արհեստանոցների մեծագույն մասը գտնվել են թուրքական քաղաքամասում: Նկատի ունենալով վերահաս վտանգը՝ Գանձակի Զինվորական մարմինը խորհուրդ է տվել հայ վաճառականներին ու արհեստավորներին, որ իրենց ունեցվածքը տեղափոխեն հայկական քաղաքամաս: Հայ վաճառականներն ու արհեստավորները, սթափ գնահատելով քաղաքում տիրող տագնապալի իրավիճակը եւ հաշվի առնելով Զինվորական մարմնի զգուշացումը, փորձում են խանութների ու արհեստանոցներում գտնվող ապրանքները թուրքականից տեղափոխել հայկական քաղաքամաս: Բայց, «...յաջորդ օրը, երբ սայլերով ու կառքերով ապրանքների տեղափոխութիւնը ծայր տուաւ, բաւականին հապճեպ կերպով, Գանձակի գլխաւոր ոստիկանապետ Հասանբեգովը (թաթար) արգելեց, պատճառաբանելով, թէ այդպիսով հայերդ խուճապ կը ստեղծէք եւ ընդհարման պատճառ կը դառնաք: Եւ բարձած ապրանքները նորից տեղափոխեցին իրենց խանութները»[70]:

Քանի որ քաղաքի իշխանությունները արգելել են, որ հայ վաճառականներն ու արհեստավորները իրենց ապրանքները տեղափոխեն հայկական քաղաքամաս, Գանձակի Զինվորական մարմինը առանձնացնում է մաուզերներով ու ձեռնառումբերով զինված 50 փորձառու ռազմիկների, որոնք պիտի աննկատ պտտվեին թուրքական քաղաքամասի հայաշատ վայրերում եւ ընդհարումներ սկսվելու պարագայում ապահովեին հայերի անվտանգ տեղափոխությունը հայկական քաղաքամաս[71]:

Բայց անհասկանալի է, թե նոյեմբերի 18-ի առավոտյան որտե՞ղ էին վերոհիշյալ 50 սպառազինված մարտիկները, երբ թուրք հրոսակները կոտորում էին թուրքական քաղաքամասում գտնվող հայերին: Գանձակահայությունն անկասկած կարող էր ունենալ անհամեմատ ավելի մեծ կորուստներ, եթե թուրք հրոսակները տիրապետեին մարտարվեստի հմտությանը եւ մղեին, Նիկոլ Դումանի բնութագրմամբ, ոչ թէ ամբոխային, այլ կազմակերպված կռիվ:

Անդրադառնալով այդ օրը տեղի ունեցած կռիվների լուսաբանմանը՝ վերոհիշյալ վավերագրությունը նշում է. «Թաթարները եթէ խուժանաւարի չհարձակուեին եւ բալանով տարուեին, այլ կանոնաւոր խմբեր կազմելով գրաւեին ղէպի հայկ. քաղաքամասը տանող միակ կամուրջի երկու փողոցները, քէրեւս մօտ 3000 հայերից, որ ամեն օր կամրջով անցնում էին թաթար. մասը, կեսից աւելին կը կոտորուեին»[72]:

Մ. Վարանդյանի պատճառաբանությամբ հայ ինքնապաշտպանական ուժերի թույլ տված վրիպումները հետեւանք էին այն իրողության, որ «...տեղւոյն զինուորական մարմնի երկու ղեկաւար անդամներ գացեր էին Թիֆլիզ՝ Կուսակցութեան շրջանային ժողովին մասնակցելու»[73]:

Բայց այս ամենը բոլորովին չի վերաբերում Ալեքսան Բալասյանի եւ մյուս փերձառու հրամանատարներին, որոնք կարողացան անհամեմատ փոքրագույն ուժերով փրկել Գանձակ քաղաքի հայությանն անխուսափելի կոտորածից:

Նոյեմբերի 20-ին Թիֆլիսից վերադառնում է ՀՅԴ Գանձակի տեղական կազմակերպության ներկայացուցիչ Աբրահամ Գյուլխանդանյանը, որը միաժամանակ ղեկավարելու էր գավառի զինվորական շտաբը:

Գանձակում տեղի ունեցած դեպքերի մասին Աբ. Գյուլխանդանյանը տեղեկացել է Թիֆլիսում՝ ժողովի ժամանակ: Ժողովականները, տեղեկանալով Գանձակում սկսված զինված բախումների մասին, դադարեցնում են քննարկումներն ու որոշում. «...որ ժամանակաւորապէս շրջանը կառաւարի եւ զինուորական ոյժը կազմակերպի Ա-ն(նկատի ունեն Աբրահամ Գյուլխանդանյանին-Հ. Գ.)»[74]:

Աբրահամ Գյուլխանդանյանը անմիջապես մեկնում է Գանձակ:

Գանձակ քաղաքում տեղի ունեցած զինված բախումները մեծ արձագանք են գտնում ոչ միայն նահանգում եւ Կովկասյան փոխարքայությունում: Այդ օրերին կայսրության տարբեր քաղաքներից Կովկասի փոխարքայի անունով բազմաթիվ հեռագրեր են հասնում Թիֆլիս, որոնցում հեղինակները դատապարտում են Գանձակի ջարդերը եւ պահանջում կանխել բախումները: Գանձակում նոր կոտորածները կանխելու ու խաղաղություն հաստատելու խնդրանքով Թիֆլիսի հոգեւոր թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի միջոցով Կովկասի փոխարքա Վորոնցով- Դաշկովին է դիմում Խրիմյան Հայրիկը: Փոխարքան խոստանում է կատարել կաթողիկոսի խնդրանքը[75]:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 21-ին, Գանձակ են մեկնում Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ Ալ. Խատիսյանն ու Համազասպը. վերջինս այդ օրերին գտնվելով Թիֆլիսում, մասնակցում էր ՀՅԴ «Կովկասեան ռայոնական» ժողովին[76]:

Ալ. Խատիսյանի հավաստմամբ, ինքն է ընդառաջել Գանձակի հայության առաջարկությանը եւ ընդհարումները դադարեցնելու խնդրանքով դիմել փոխարքային՝ հայցելու նրա աջակցությունը[77]:

Գանձակի հայությանն աջակցելու եւ հայ ու թուրք բնակչությանը խաղաղության կոչելու նպատակով Ալ. Խատիսյանը փոխարքայի՝ Վորոնցով-Դաշկովի հանձնարարությամբ Թիֆլիսի քաղաքային վարչության մեկ այլ անդամի՝ Կոգդիանի ընկերակցությամբ մեկնում է Գանձակ: Իրավիճակը, ըստ Խատիսյանի, քաղաքում խիստ տագնապալի է եղել: Շրջագայելով քաղաքում՝ նրանք քաղաքի գլխավոր հրապարակում են հանդիպում հայազգի գնդապետ Մելիք-Ալլահվերդյանի գլխավորած անգործության մատնված մի հեծյալ զորամասի:

«Սպան,-գրում է Խատիսյանը,-գանգատեցաւ, որ իրեն արգիլած է որեւէ միջամտութիւն՝ իրեն վերապահելով միայն դիտորդի դերը: Ջօրքերը կը տեսնէին, թէ ինչպէս մարդիկ նաւթ կը լեցնէին տուներու վրայ՝ այրելու համար զանոնք, բայց անկարող էին միջամտել»[78]:

Քաղաքում տիրող իրավիճակը քննարկելու եւ համապատասխան վճիռներ կայացնելու նպատակով գումարվում է ժողով, որին մասնակցում են հայ եւ թուրք պատգամավորները, քաղաքային վարչության անդամները. Կորյուն վարդապետը, քաղաքագլուխը, նահանգապետարանի պաշտոնեաները, եւ նահանգապետ գեներալ Տակայշվիլին[79]:

Ժողովում նկար ունենալով՝ Խատիսյանը դիմել է երկու կողմերին՝ առանց դատելու թույլ տալ վերսկսել նախկիններն ու դադարեցնել արյունահեղությունը: Իսկ՝ բռնկվածի վերջած բախումները, ո՞վ էր մեղավոր:

Ժողովում, գրում է Ալ. Խատիսյանը, «...երկու կողմերն ալ կը ճառէին դարաւոր բարեկամութեան մասին, որ իրար կը կապէ երկու ժողովուրդները, որ «Շէյթանի» գործ է երկու ժողովուրդները իրար վրայ հետելը: Հենց այստեղ որոշուեցաւ զինադադար կնքել՝ կամուրջը նկատելով որպէս գօտի: Ինձ խնդրեցին պտտիլ քաղաքը եւ ամէնուրեք յայտարարել խաղաղութեան մասին»[80]:

Գանձակում զինադադար է հայտարարվում: Ալ. Խատիսյանը հակամարտող կողմերին խաղաղության կոչելու նպատակով իշխանության եւ հայ ու թուրք բնակչության ներկայացուցիչների ուղեկցությամբ լինում է քաղաքի մի քանի մասերում: Դումարվում են միտինգներ եւ ժողովներ, որտեղ ելույթ ունեցողները փորձել են խաղաղության կոչել ու զսպել հակամարտող կողմերին:

«...Ինձ,-գրում է Ալ. Խատիսյանը,- վիճակուեցաւ քանի մը ուրիշ վայրեր ալ հանդիպել եւ նոյնպէս խաղաղութիւն կնքել տալ երկու կողմերուն: Գանձակէն մեկնեցանք՝ թողնելով այնտեղ Համազասպը...»[81]:

Թեպետ Գանձակի առաջին ընդհարման ժամանակ հայ ինքնապաշտպանական ուժերը կարողացան փլուզել թուրքերի ծրագրած գործողությունները, բայց միանգամայն պարզ էր, որ հայ բնակչությանը սպասում էին ավելի դաժան փորձություններ: Անհրաժեշտ էր ավելի ուժեղացնել քաղաքի ու գավառի հայկական բնակավայրերի մարտական ուժերը եւ պատրաստ լինել հաջողությամբ դիմագրավելու հակառակորդի հարձակումներին:

Նոյեմբերի 22-ին Ղարաբաղից Գանձակ է գալիս Ռոստոմը: Նրա ներկայությունը շատ կարեւոր էր: Ռոստոմը ոչ միայն հմուտ կազմակերպիչ էր ու հեղինակավոր առաջնորդ, այլ նաեւ զենքերի պատրաստման ու վերանորոգման արհեստանոցներ հիմնադրող հմուտ վարպետ-կազմակերպիչ:

Գանձակի ինքնապաշտպանությունը ավելի ամրապնդելու նպատակով ՀՅԴ Արեւելյան բյուրոյի հրահանգով «Նոյեմբ. 21-ին համազասպի հետ միասին Գանձակ մտան ընտիր, փորձված զինուորներ՝ Թիֆլիսից 20 հոգի, Բաթումից 18, Բագուից 19: Նրանց մէջ էր գտնվում Խաչէնի հռչակաւոր հրոսակապետը, Բագուի եւ Ղարաբաղի կռիւներում իր անօրինակ քաջութեամբ հերոսացած Բաղշին...Թալիշի շրջանից եկաւ Դաւիթ Բեկ Մելիք Բէկլարեանի խումբը, թուով մօտ 25 ձիաւոր, Գետաշէնի շրջանից Առուստամ Իւզբաշու, Երեւանդ ու Ալեքսանդր Մելիք Մնացականեանի խումբը, թուով 50 ձիաւոր: Բանանցի շրջանից Մարտիրոս վարժապետի (տածկաստանցի) ու Գանձակի գաւառում յայտնի հրոսակապետ-դաչաղ Համբօյի խումբը, թուով 30 ձիաւոր...»[82]:

Ընդամենը երեք օրում տարբեր շրջաններից Գանձակ են հասնում լրացուցիչ օգնական ուժեր: Գանձակում կենտրոնացած մարտական խմբերի հրամանատարների համաձայնությամբ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը ստանձնում է Համազասպը, թեպետ ՀՅԴ Արեւելյան բյուրոյի որոշմամբ Գանձակի Զինական մարմնի լիազոր էր նշանակված Աբրահամ Գյուլխանդանյանը[83]:

Ռոստոմի վկայությամբ, ՀՅԴ Արեւելյան բյուրոյի կողմից Աբրահամ Գյուլխանդանյանին Գանձակի Զինական մարմնի լիազոր նշանակելը, կատարվել է իր առաջարկությամբ[84]:

Համազասպին ինքնապաշտպանական ուժերի հրամանատար ընտրելու վճիռը, ինչը աներկբա ապացուցեց ժամանակը, շատ ճիշտ էր: Աբրահամ Գյուլխանդանյանը չուներ հրամանատարին անհրա-

ժեշտ մարտական փորձառություն, իսկ դրան հակառակ Համազասպը «...ճահանգում ժողովրդական հերոսի հռչակ վայելող յայտնի զինվորական գործիչ էր, որին զինուորները եւ ժողովուրդը վերաբերվում էին կատարեալ հաւատով ու անկեղծ սիրով...»[85]:

Թուրքական կողմը նույնպես անընդհատ գտնվել է շարժման վիճակում: Համաձայն Գանձակի ընդհարումները ներկայացնող վավերագրերի, թուրք հրոսակները քանակական առումով մոտավորապես տասն անգամ գերազանցում էին հայ մարտիկներին: Բացի հետեւակ զինյալներից, թուրքերն ունեցել են հեծյալ խմբեր, որոնք «...գիշեր-ցերեկ կապ էին պահպանում թէ այդ քաղերի մէջ եւ թէ այդ քաղերի ու թրքական քաղաքամասի մէջ, որտեղից բերում էին կուի վայրը ռազմամթերք ու հրահանգներ իրանց խուլիգան ղեկաւարներից»[86]:

Թուրք հրոսակներին առաջնորդելու էր հայտնի ավազակապետ Դալի-Ալին, որը Գանձակի առաջին դեպքերի ժամանակ անմասն էր մնացել քալանից ու կոտորածից: Թուրք պարագլուխները համոզված են եղել, որ հանրահայտ ավազակապետն այս անգամ կկարողանա կոտորել Գանձակի հայությանը:

Նոյեմբերի 21-ին եւ 22-ին, չնայած առանձին կրակոցներին, համեմատաբար խաղաղ է անցնում: Հայկական կողմը հասցնում է ժամանակը շատ արդյունավետ օգտագործել:

Գանձակի մարտական ուժերի հրամանատարությունը Համազասպի գլխավորությամբ մշակում է ինքնապաշտպանական կռիվներ մղելու ծրագիրը: Քաղաքի հայկական քաղամասի չորս կողմերում կառուցվում են պաշտպանական ամրություններ, որտեղ դիրքավորվում են մարտական ուժերը: Յուրաքանչյուր մարտախմբի տրվում են հստակ հանձնարարականներ: Ոչ մի պարագայում չպետք է հնարավորություն ընձեռվեր թուրք հրոսակախմբերին ներխուժելու հայկական քաղաքամասը: Ավելին, Գանձակի Զինվորական մարմնի որոշմամբ քաղաքի մարտական ուժերը ոչ թե պիտի բավարարվեին սոսկ ինքնապաշտպանությամբ, այլ պիտի ձեռնարկեին հարձակողական գործողություններ եւ քաղաքը ամբողջովին մաքրեին թուրք հրոսակներից:

Զինվորական մարմնի համար շատ կարեւոր էր ստույգ ճշտել հակառակորդի հարձակման հիմնական ուղղություններն ու պարզել, թե որ կետերից են թուրք հրոսակախմբերը փորձելու ներխուժել հայկական քաղաքամաս: Քանի որ թուրքական կողմի նախապատրաստական

աշխատանքները մատնանշում էին, որ հակառակորդը հայկական քաղաքամասի վրա հարձակումը ձեռնարկելու է երեք ուղղությամբ՝ Չայլու քաղի եւ Դիք-քյուչա ու Պատի փողոցների կողմից, ուստի հայ մարտական ուժերը կենտրոնանում են դիմակայելու հենց այդ երեք ուղղությամբ սպասվող հարձակումները[87]:

Նոյեմբերի 22-ի երեկոյան ժամը 9-ին Բաղմանլարի դիրքերից թուրք զինյալները սկսում են կրակ տեղալ հայկական քաղաքամասի ուղղությամբ: Պարզվում է, որ թուրք հրամանատարությունը հայկական քաղաքամաս ներխուժելու համար հիմնական ուժերը կենտրոնացրել էր հենց Բաղմանլարում: Հարձակումը սկսելու պես այդ ուժերը պիտի արագորեն տեղափոխվեին Դիք-քյուչա ու Պատի փողոցների դիրքերում ու այնտեղից ներխուժեին հայկական քաղաքամաս: Գանձակի Զինվորական մարմինը կարողանում է ճիշտ ժամանակին նկատել թուրքական մարտական ուժերի կենտրոնացման վայրն ու հարձակման գլխավոր ուղղությունները եւ մշակում հակառակորդին ջախջախելու կշռադատված մարտավարություն: Դիք-քյուչա ու Պատի փողոցների ուղղությունից սպասվելիք հարձակմանը դիմագրավելու նպատակով Զինվորական մարմինը կենտրոնացնում է մարտախմբերի մի մասը: Միաժամանակ հայ ինքնապաշտպանական ուժերը պիտի դիմեին հարձակման, գրավեին Բաղմանլարի դիրքերն ու շրջափակման մեջ վերցնեին Դիք-քյուչա ու Պատի փողոցների ուղղություններից իրենց դիրքերի վրա հարձակվող հրոսակախմբերին[88]:

Նոյեմբերի 22-ին երկոյան ժամը 10 1/2-ին թուրքերը Դիք-քյուչա փողոցից սկսում են հարձակումը եւ փորձում ներխուժել հայկական քաղաքամաս: Հայ ինքնապաշտպանական ուժերը կազմ ու պատրաստ ոչ միայն հաջողությամբ դիմագրավում ու հետ են մղում հակառակորդի գրոհները, այլեւ դիմում են հարձակման: Թուրք հրոսակները չդիմանալով հայ մարտիկների գրոհին, դիմում են փախուստի եւ պատսպարվում շրջակա այգիներում: Հայ մարտիկները հետապնդում են փախչողներին եւ ներխուժելով այգիներ «...դուրս քշեցին նրանց այգիներում գրաւած դիրքերից եւ աջ ու ձախ հարուածելով, այս ու այնտեղ տապալելով հասցրին նրանց Գանձակ գետը, որտեղից նրանք չյանդգնեցին այլեւս առաջ շարժվել...»[89]:

Այսպիսով ձախողվում է Դիք-քյուչա փողոցի ուղղությունից հայկական քաղաքամաս ներխուժելու թուրք առաջնորդների ձեռնարկած

հարձակումը: Հայ մարտական ուժերը կարողանում են հաջողությամբ կատարել Զինվորական մարմնի մշակած ծրագրի մի մասը: Այն պահին, երբ թուրքերը Դիք-բյուչա փողոցի ուղղությունից փորձում էին ներխուժել հայկական քաղաքամաս, Համբոյի եւ Մարտիրոս վարժապետի գլխավորած մարտախմբերը, համաձայն վաղօրոք մշակած ծրագրի, շարժվում են դեպի Բաղմանլար: Հարձակումը ավարտվում է լիակատար հաջողությամբ: Թուրքերը հայտնվելով հանդիպակաց ուղղություններից տեղացող հարվածների արանքում՝ շպրտում են սրբազան պատերազմի խորհրդանիշը հանդիսացող կանաչ դրոշակը եւ սարսափահար դիմում փախուստի [90]:

Այդ օրն ընթացող կռիվներում հայ մարտիկները հակառակորդին գերազանցել են թե քաջությամբ եւ թե մարտեր մղելու վարպետությամբ: Իր քաջագործությամբ առավելապես աչքի է ընկել Համբոն: Գանձակի ընդհարումները պատմող վավերագրերը հիացմունքով են նկարագրում նրա կատարած սխրանքները, որոնք վճռական նշանակություն են ունեցել հայ ինքնապաշտպանական ուժերի հաղթանակի գործում [91]:

Այդ կռվի մանրամասները պատմող վավերագրություններում առավել ուշագավն ու ուսանելին, կարելի է ասել, Համբոյի սխրագործությունը պատկերող պատմությունն է, որը ներկայացնում ենք ամբողջությամբ՝ «Երբ ակնհայտ դարձաւ, որ թուրքերը իրանց ոյժերի ամենաճշանատար մասը կենտրոնացնում են Դիք-քիւզի գլխին՝ այնտեղից ներս խուժելու համար, այդ ժամանակ Պատրի փողոցի գլխից իջան գետը Համբոյի ու Մարտիրոս վարժապետի խմբերը ու շարժվեցին դէպի թրքական ոյժերի կենտրոնը, զալպեր տալով նրա ուղղութեամբ, ուղղակի դէպի Բաղմանլար: Իր խմբով, մօտ տասը հոգի ընտիր քաջերից բաղկացած, առաջ է շարժվում դէպի Բաղմանլար ինքը հրոսկապետ Համբօն, Բաղմանլարի թուրքերին քաջ յայտնի իր նախկին սխրագործութիւններով: Հենց Բաղմանլարի սահմանագծում Համբօն թուրքերից խլում է մի ուժեղ դիրք, մի ջրաղաց, որտեղ ամրացած է լինում թրքական մի մեծ խումբ, մօտ քսան հոգուց բաղկացած: Նա վառում է ջրաղացը ու կռելով առաջ գնում: Նրա ետեւից հասնում է ջրաղացին Մարտիրոսը ու ընդարձակում նրա հրդեհը: Համբօն իր մտերիմ ընկեր խաչակապցի Արզմանի հետ, հրոսակապետից ոչ պակաս քաջ, նետում է իրան Բաղմանլարի մեծ փողոցը, թրքական ամբոխով ու զինուրներով լիք, սկսում է աջ ու ձախ հարվածել սոսկալի ա-

դաղակներով, սարսափ, իրարանցում տարածելով չորս կողմում: Արզմանն էլ կռում է առիծի պէս: Նրանց ետեւից առաջ են նետում իրանց երկու ուրիշ քաջեր՝ խաչկապցի Գրիգորն ու բանանցի Հանէս Մելիքեանը: Կռում են թուրքերի տարափի տակ, կռում են հարիւրների դէմ: Անհաւասար կռում(հարիւրների դէմ) մեր խնկելի քաջերից երեքը՝ Արզմանը, Գրիգորըն ու Հանէսը՝ ընկնում են: Համբօն մնում է մենակ, բայց չի յուսահատում բնաւ: Վրեժխնդրութեան ծարաւով լցուած նա նետում է իրան թրքական վհմակների մէջ, կոտորում, ջարդում է անխնայ, անողորմ: Մտնենում է այնչափ, որ ոչ միայն գնդակով, այլ իրացանի կոթով էլ է խփում թշնամիներին: Վերջիներս սարսափահար եղած փախչում են դէս ու դէն: Մի քանի րոպէ Համբօյի առաջ մարդ չի նկատւում: Նա փոխում է իր ընթացքը ու այնպէս ձեւացնում, թէ յետ է նահանջել: Այս ու այն անկիւնից սկսում են երեւալ թրքական զինուրները: Միմիանց ով լինելը իմանալու համար, տւած հարցերին բոլորն էլ անխտիր պատասխանում են՝ «Եա Ալի»: Համբօն դրանից եզրակացնում է , որ այդ նրանց գիշերվայ անունը, պարօլն է ու մեծ վարպետութեամբ օգտվում է նրանից: Գետնի երեսին սողալով շարժվում է դէս ու դէն ու երեւացողին, գիշերվայ մթութեան մէջ, հարցնում թուրքերէն, մաքուր թրքական ակցենտով՝ «ադա, քիմ սեան(ով ես): Երեւացող թուրքը քարի ետեւից, փոսից, դիրքից բարձրացնում է գլուխը ու աղաղակում «Եա Ալի՝» չկրակելով հարցնողի ուղղութեամբ, իրանց զինվոր համարելով:

Համբօն թուրքի գլուխը նկատելուն պէս վայրկենապէս կրակում է իր մօսինը ու իսկոյն եւեթ իր տեղը փոխում ու մի ուրիշ դիրքից նոյն խորամանկութեամբ խփում մի ուրիշ թուրք: Այդպէս շարունակում է նա կռել մեծ մենակ Բաղմանլարի մէջ: Թուրքաց գերեզմանատան մօտ, մինչեւ գիշերվայ ժամը 2-ը յանկած օ՜ սարսափ, Համբօյի մօսինը հրաժարվում է ծառայելուց, չախմախը փչանում է, հաւանական է, շատ շարժվելուց: Մինչ այդ կրակած է լինում 130 անգամ: Համբօն իրան չի կորցնում: Նա հանգիստ, հանդարտ քայլերով սկսում է յետ նահանջել դէպի գետը, դէպի մեր դիրքերը: Այդ նկատում են թուրքերը: Համբօն չնայած, որ թուրքերի հարցերին նրա ով լինելու մասին պատասխանում է «ա Ալի՝» բացականչութեամբ, ճանաչվում է վերջապէս: Թուրքերը յարձակում են, կրակելով անկարգ ու անկանոն, Համբօյի ականջ լռութիւնը նրանց խրախուսում է: Նրանք մօտ են վազում ահագին թւով ու շրջապատում Համբօյին, հաւանական է նրան կենդանի բռնելու համար, կրակը դադարեցնում են:

Համբօն ահա այդ վճռական մօմենտում գործ է դնում իր սոսկալի ֆիզիկական ոյժը: Նա ամբողջ ուժով, հրացանի խզակոթով խփում է աջ ու ձախ, ջարդում, փշրում թրքական մի քանի գանգեր, աղաղակելով հայերեն ու թուրքերեն ահարկու ձայնով՝ «տղէք, տուէք տղէք, կոտորեցէք...»: Թուրքերը կարծելով, թէ Համբօն մօտիկ շրջակայքում շատ ընկերներ ունի, մի քանի գոհեր տալով, փախչում են սարսափահար: Համբօն անցնում է իր վերջի գոհերի դիակների վրայով ու նետում իրան գետը թուրքերի գնդակների տարափի տակ: Բանանցի ու Խաչակապի սարերի ազատասէր առիծը, ահարկու հրոսակապէտ Համբօն, յաղթանակը տարած, թուրքերին զգալի ջարդ տուած, առաւօտեան ժամը 3-ին մօտ դուրս եկաւ Բաղմանլարից բոլորովին անվնաս: Նրան մեր դիրքերում հանդիպեցին ոգեւորված կեցցեներով, գրկում ու համբուրում էին անվերջ...»[92]:

Համաձայն Չինվորական մարմնի հրահանգի, այն պահին երբ Համբոյի ու Մարտիրոս վարժապետի առաջնորդած մարտախմբերը հարձակման են անցնում Բաղմանլար թաղի վրա, հայ մատիկները պիտի մնային իրենց դիրքերում ու սպասեին դեպքերի հետագա զարգազմանը: Սակայն մեծ է լինում հայ մարտիկների զարմանքը՝ տեղեկանալով, որ «...Համբոյի խումբը գետն անցնելով կռւի է բռնուել Բաղմանլարի թաթարների հետ, բայց այստեղ էլ հայկ. քաղաքամասի երկու ծայր թաղամասերում ինչ-որ խոտի դեզեր եւ տներ են այրւում»[93]:

Բաղմանլարը թուրքերի գլխավոր հենակետն էր, այնտեղ էր կենտրոնացած նրանց մարտական ուժերի մեծ մասը: Հայկական կողմի կիրառած մարտավարությունը, այն է սահմանափակ ուժերով հարվածել հակառակորդի ամենաուժեղ հենակետին, իրոք, չափազանց համարձակ եւ ավելի քան անհավանական գործողություն էր:

Թուրք հրամանատարությունը իր հերթին նույնպես փորձել է կիրառել հայ ինքնապաշտպանական ուժերին խուճապի մատնելու մարտավարություն: Թուրքերը վառել են հայկական քաղաքամասի երկու ծայրամասերում գտնվող մի քանի տներ, մի քանի խոտի դեզեր եւ ծրագրել Բաղմանլարում կենտրոնացած մարտական ուժերով գրոհ ձեռնարկել հայկական քաղաքամասի վրա: Նրանք վստահ են եղել, որ այս անգամ իրենց կհաջողվի հաղթահարել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել հայկական քաղաքամաս: Սակայն Համբոյի եւ Մարտիրոս վարժապետի գլխավորած մարտական խմբերի մուտքը Բաղմանլար. թուրքական ուժերի դասավորման կենտրոնին նրանց

հասցրած ջախջախիչ հարվածը կտրուկ կերպով խառնում են թուրքական կողմի ծրագրերը:

Հայկական քաղաքամասի վրա հարձակվելու կազմ ու պատրաստ Բաղմանլարի թուրքական մարտական ուժերի համար կատարյալ անակնկալ էր իրենց հենակետերում հայտնված հայ մարտիկների ներկայությունը, որոնց դիպուկ հարվածների գոհն էին դարձել տասնյակ թուրքեր[94]:

Հայ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը շատ ճիշտ ու արդյունավետ է օգտագործում ընձեռված հնարավորությունը եւ անհապաղ գրոհ է ձեռնարկում հակառակորդի դիրքերի վրա: Թուրք հրոսակախմբերը անկարող լինելով դիմակայել հայկական մարտական ուժերի հարձակմանը, թողնում են իրենց դիրքերը, որտեղից ծրագրել էին ներխուժել հայկական թաղեր եւ զգալի գոհեր տալով՝ հեռանում մարտադաշտից:

Պիտի նշել, որ կռիվները վարպետությամբ է ղեկավարել Համազասպը: Պատշաճ բարձրության վրա են գտնվել առանց բացառության բոլոր հրամանատարները: Ռոստոմն ու Գյուլխանդանյանը, մշտապես գտնվելով կռվողների մարտաշարքերում, ոգեւորել ու սխրանքների են կոչել մարտիկներին[95]:

Հայ մարտիկների քաջագործություններն արժանվույնս են գնահատել նույնիսկ ռուս սպաները, որոնք մոտիկից դիտելով քաղաքում ընթացող մարտերը՝ «...հիացած էին մնացել նրանց քաջութիւնից եւ թէ առաւել եւս նրանց տակտիկայից. օֆիցերները համեմատում էին մեր տղաներին իսպանացիների հետ...»[96]:

Թուրք պարագլուխները Գանձակի գավառում դարձյալ փորձել են կիրառել նույն մարտավարությունը, ինչը կիրառել էին Ղարաբաղում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ: Նրանք համոզված էին, որ գավառի հայ բնակչությանը ավելի դյուրին ու արագ կոտորելու համար անհրաժեշտ էր նախ եւ առաջ գրավել քաղաքի հայկական քաղաքամասը: Այդ պատճառով նրանք իրենց մարտական ուժերը առավելապես կենտրոնացրել են հենց Գանձակ քաղաքում: Բայց այս անգամ եւս թուրք պարագլուխների ծրագրերը տապալվում ու չեն իրականանում:

Նոյեմբերի 22-ին եւ 23-ին Գանձակում տեղի ունեցած հաղթական կռիվները մեկ անգամ եւս հաստատեցին հարձակողական բնույթի,

կազմակերպված, ոչ ամբոխային կռիվներ մղելու մարտավարության առավելությունն ու արդյունավետությունը:

Ընդհանրացնելով կռիվների արդյունքները՝ կարելի է հարցնել. ի՞նչ - տեղի կունենար Գանձակում, եթե Հ.Յ. Դաշնակցությունը չկարողանար կազմակերպել գանձակահայության ինքնապաշտպանությունը: Որպես այդ հարցի պատասխան «Թուրք-հայկական ընդհարումները Գանձակում» խորագիրը կրող վավերագիրը նշում է. «Դժուար չէ երեւակայել, թէ ինչ կլիներ հայոց քաղաքամասի դրութիւնը, եթէ բրքական վոհմակները կարողանային ներս խուժել: Նրանք ոչ միայն չկարողացան այդ անել, այլեւ խայտառակ կերպով փախան...

Կեցցեն մեր քաջարի զինւորներն ու նրանց անձնուէր ղեկաւարները...»[97]:

Թեպետ ընդհարումների գլխավոր ճակատը Գանձակ քաղաքն էր, այնուամենայնիվ, կռիվները ոչ պակաս ուժգնությամբ, իսկ մի քանի դեպքերում նույնիսկ առավել դաժանությամբ, ընթացել են նաեւ գավառի մի շարք բնակավայրերում:

Մ. Վարանդյանի գնահատմամբ «Կատարեալ էր հայերու յաղթանակը նաեւ Գանձակի գաւառին մէջ, ուր ամենուրեք հայ ժողովուրդը ենթակայ էր նոյն հրոսակներու յարձակումներուն»[98]:

Գանձակի գավառում տեղի ունեցած ընդհարումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մ. Վարանդյանի գնահատականը կարելի է ընդունել որոշակի վերապահումով: Գավառի Զինվորական մարմնին չի հաջողվել հայկական մի քանի գյուղերի բնակչությանը տրամադրել զենք ու զինամթերք, փորձառու մարտական ուժեր եւ կազմակերպել հուսալի ինքնապաշտպանություն: Ըստ Գանձակի գավառում տեղի ունեցած դեպքերը ներկայացնող տեղեկագրի՝ «Գանձակի շրջանը ընդհարումների ժամանակ ունէր մօտաւորապէս 400 կռուողներ, ընտիր զենքերով զինուած: Ինչ խօսք զէնքերի եւ փամփուշտների մեծ մասը կարելի եղաւ ձեռք բերել Հ.Յ.Դ. Զիֆոնի (Զինական ֆոնդ) միջոցով: Կռուողների մեկ երրորդ մասն էլ Վերին Մարմնի կողմից ուղարկուած փորձուած հին ռազմիկներ էին. Թրքահայաստանից եւ Կովկասի ու արտասահմանի զանազան կողմերից եկած»[99]:

Տեղեկագրում նշված 400 զինվորների մեջ ամենայն հավանականությամբ չեն մտնում հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերը, որոնց զգալի մասը զինված է եղել հնաոճ զենքերով:

Ինչքան էլ փորձառու լինեին վերոհիշյալ 400 զինվորներն ու շատ լավ զինված, այնուամենայնիվ, այդ քանակության ուժերով չափազանց դժվար էր ապահովել գավառի գյուղերի անվտանգությունը:

Թուրքական ուժերը դեռեւս նոյեմբերի 18-ին են պաշարել Չարդախլու, Բադա գյուղեր, Գետաբեկի գործարանն ու նրա մերձակա Ղազախ գյուղը: Այս անգամ թուրքական կողմը ծրագրել է վերոհիշյալ գյուղերի վրա հարձակում ձեռնարկել միաժամանակ: Թուրք առաջնորդներն ավելի քան վստահ են եղել, որ համանման մարտավարությամբ իրենց կհաջողվի հայկական մարտական ուժերին գամել իրենց բնակավայրերում եւ նրանց զրկել միմյանց օգնության հասնելու հնարավորությունից: Մինչեւ հարձակում ձեռնարկելը, թուրքերը խուզարկու խմբերի միջոցով հետեւողականորեն հետախուզել եւ ուսումնասիրել են վերոհիշյալ գյուղերի տեղանքը, մարտական ուժերի քանակն ու հնարավորությունները: Քանի որ վերոհիշյալ գյուղերից ամենաուժեղը, հետեւաբար ամենավտանգավորը Չարդախլուն էր, ուստի թուրք առաջնորդները որոշում են հիմնական ուժերով, չորս կողմից հարձակվել հենց այդ գյուղի վրա եւ այն իսպառ ոչնչացնելուց ու թալանելուց հետո, նոր միայն հարվածել Գետաբեկի գործարանին ու Ղազախ գյուղերին:

Նոյեմբերի 18-ին կենտրոնացնելով մեծաքանակ մարտական ուժեր, թուրքական կողմը համաձայն մարտ վարելու իրենց սովորությանը, հեռվից համազարկեր տեղալով եւ «Յա՜ Ալի՛» վանկարկելով հարձակվում է Չարդախլու գյուղի վրա: Գյուղի պաշտպանները ընդունում են հակառակորդի մարտահրավերը եւ նրանց մարտավարությանը պատասխանում է հետեւյալ մարտավարությամբ:

Ներկայացնելով այդ պահը՝ այդ կռիվների մանրամասները լուսաբանող վավերագրությունը նշում է. «Մեր տղէքը չեն պատասխանում: Թուրքերը սիրտ են առնում ու մոտենում, հայերի վախկոտութեան վերագրելով նրանց լռութիւնը: Երբ տարածութիւնը մերոնց ու թուրքերի մէջ բաւականին կրճատվում է, մեր կտրիճները մի քանի վճռական զալպ են տալիս դէպի թուրքերը, որոնք մի քանի զոհեր տալով ու լաւ քոտակ ուտելով՝ յետ են քաշվում, փախչում են»[100]:

Հաջորդ օրը թուրք հրոսակախմբերը համալրելով իրենց մարտաշարքերը, վերսկսում է հարձակումը: Թեպետ թուրքերն այդ օրը Չարդախլուի վրա հարձակվել են մեծաքանակ ուժերով, այնուամենայնիվ,

գյուղի ինքնապաշտպանական ուժերը կարողանում են հաջողությամբ հետ մղել հակառակորդի հարձակումները:

Թուրքերը, հանդիպելով լուրջ դիմադրության եւ կրելով զգալի կորուստներ, դադարեցնում են գրոհները:

Պարտություն կրելով Չարդախլու գյուղի համար մղվող կռիվներում, թուրքերը բաժանում են իրենց ուժերը երկու մասի եւ հարձակվում Գետաբեկի գործարանի ու նրա մերձակա Ղազախ եւ Բադա կամ Բադաքենդ գյուղերի վրա:

Գետաբեկի պղնձի գործարանը եւ նրան կից Ղազախ գյուղը գտնվում են Գանձակ գավառի արեւմտյան մասում, լեռնային սարահարթի վրա՝ շրջապատված լեռնաշղթաներով: Լեռնավայրում ամռանը թուրքերի թիվը կրկնապատկվում եւ եռապատկվում էր ի հաշիվ Կուր գետի սարահարթից ամռանը լեռները բարձրացող խաշնարած բազմահազար թուրքերի:

Հայկական գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումներին, որպես օրենք, մշտապես մասնակցել են նաեւ սարահարթի թուրքերը, որոնք վերոհիշյալ վավերագրության հավաստմամբ «...աւելի մեծ թիւով էին մասնակցում այդ արշաւանքներին, աւելի լաւ էին զինված, հետեւաբար ավելի մեծ դեր էին խաղում տեղի ունեցող դէպքերում...»[101]:

Նոյեմբերի 19-ին թուրքական ուժերը կենտրոնանում են Գետաբեկի մերձակայքում եւ պատրաստվում գրոհելու գյուղի ու գործարանի վրա:

Համաձայն վավերագրության վկայության, Գետաբեկում կային բազմատեսակ ու մեծաքանակ ապրանքներով հարուստ խանութներ, որոնք մեծամասամբ պատկանում էր հայերին: Գետաբեկը թուրք ամբոխին գրավում էր իր հարստությամբ: Նրանց վաղեմի երազանքը էր՝ տիրել Գետաբեկին ու տեր դառնալ հայերի անբավ հարստությանը:

Ավելի ու ավելի համալրելով իրենց ուժերը, թուրքեր գրոհում են Գետաբեկի ու Ղազախ գյուղի վրա, ընդսմին առավել ուժգին հարվածներ են հասցնում Գետաբեկին, հատկապես տեղի չուկային ու խանութներին:

Ինչպիսի՞ ուժերով էին դիմակայելու թուրք հրոսակախմբերի հարձակումներին Գետաբեկի պաշտպանները:

Ըստ վավերագրության, Գետաբեկի ինքնապաշտպանական ուժերը հակառակորդի հետ համեմատած ավելի քան սահմանափակ էին: Հարձակման ժամանակ Գետաբեկը ունեցել է ընդամենը 30 տեղացի մարտիկներից բաղկացած խմբապետ Բեգլար Ավագյանի ա-

ռաջնորդությամբ գործող մարտական խումբը, որը կազմավորվել էր դաշնակցության տեղական կազմակերպության նախաձեռնությամբ: Կարելի է ասել, որ խմբապետ Բեգլար Ավագյանի գլխավորած Գետաբեկի ու Ղազախի ինքնապաշտպանական մարտերը Գանձակի նահանգում հայ ինքնապաշտպանական ուժերի մղած ամենահերոսական ու հիշարժան կռիվներից են:

Դիրքեր գրավելով Գետաբեկի ու Ղազախի մեջ գտնվող հայկական գերեզմանատանը, հայ մարտիկները հեռահար ու դիպուկ կրակոցներով կարողացել են զգալի կորուստներ պատճառել հարձակվողներին ու հետ մղել նրանց գրոհները: Ընդ որում թուրքերի շարքերն անընդհատ համալրել են մարտադաշտում հայտնված հրոսակախմբերը, իսկ «...մերոնց ոչ մի տեղից ոչ մի օգնութիւն չէ հասնում: Հայ գիւղերը կտրված լինելով Գետաբեկից դժուարանցնելի սարերով, նեղ կիրճերով ու խոր ձորերով, շուտափույթ օգնութեան չէին կարողանում հասնել»[102]:

Թուրքերը օգտելով իրենց քանակական գերակշռությունից, Գետաբեկի վրա հարձակում են ձեռնարկում նաեւ Ղազախի կողմից: Հայ ինքնապաշտպանական փոքրաքանակ ուժերի համար չափազանց դժվար է եղել միաժամանակ պաշտպանել չուկան, խանութները եւ գյուղի բնակչությանը: Ստեղծված իրավիճակում հայ մարտիկները իրենց ուշադրությունն առավելապես կենտրոնացնում են գյուղի պաշտպանության վրա, որտեղ համեմատաբար ավելի մեծ թվով հայեր էին գտնվում, քան չուկայում եւ գործարանում:

Մի քանի անհաջող հարձակումներից հետո թուրքերին վերջապես հաջողվում է գիշերը ներխուժել չուկա եւ անխնա կողոպտել ու քանդել հայերին պատկանող խանութները: Թուրքերի կողմից գիշերը իրականացրած հարձակմանը մասնակցել են Ղազախ գյուղի շրջակա թուրքական գրեթե բոլոր բնակավայրերի բնակիչները: Թվում է, որ թուրքական հրոսակախմբերի մեծաքանակ ուժերին այլեւս հնարավոր չէր դիմակայել եւ փրկության որեւէ հույս ակնկալել: Այդ անելանելի թվացող իրավիճակում հայ մարտիկները իրենց հրամանատարի՝ Բեգլար Ավագյանի առաջնորդությամբ ձեռնարկում են հակառակորդի համար անսպասելի մի այնպիսի գործողություն, որը շրջադարձային նշանակություն է ունենում եւ կտրուկ կերպով փոխում մարտադաշտում տիրող կացությունը:

«...անզուգական կտրիճ Բեգլար Աւագեանը,-նշում է վավերագիրը.- Ազրունց տղայ անունով մի ուրիշ քաջի հետ վերցնում է մի քանի

ռումբեր, վճռաբար, առանց յետ ու առաջ նայելու, վագում դէպի բազար ու ռումբերը նետում թրքական ժխորի մէջ...»[103]:

Պայթում են Բեգլար Ավագյանի ու նրա մարտական ընկերոջ նետած ռումբերը ու իրենց անսովոր ահավոր դղրդյունով սարսափի են մատնում խաւնութների թալանով տարված թուրքերին: Ռումբերի պայթյուններից կորցնելով տասնյակ զոհեր ու վիրավորներ՝ թուրքերը լքում են մարտադաշտն ու դիմում փախուստի:

Չբավարարվելով ձեռք բերածով՝ Բեգլար Ավագյանն ու նրա զինակիցը հետապնդում են փախչողներին եւ հասնելով նրանց «...կրկին նրանց մէջ նետում ռումբեր, որոնք փայթում են նոյն ոյժով ու նոյնչափ զգալի հարուած հասցնում մեր արիւնարբու թշնամիներին: Բազարը մաքրվում է թուրքերից ու անցնում մեր կտրիճների տիրապետութեան տակ»[104]:

Ճիշտ է, այդ օրը ընթացող կռվում հայ ինքնապաշտպանական ուժերը նվաճում են անվիճելի հաղթանակ, բայց Գետաբեկ ու Ղազախ գյուղերի համար մղվող մարտերը դրանով չեն ավարտվում:

Հաջորդ օրն եւեթ՝ նոյեմբերի 20-ին թուրք հրոսակախմբերն առավել ստվար բազմությամբ դարձյալ վերսկսում են հարձակումը եւ այս անգամ ավելի մեծաքանակ ուժերով գրոհում են Ղազախ գյուղի վրա: Հայ մարտիկների գերխնդիրը Ղազախ գյուղի պաշտպանությունն էր, բնակչության անվտանգության ապահովումը: Ինչքան էլ հերոսաբար կռվեին, այնուամենայնիվ, անհնար էր ընդամենը 30 մարտիկներով դիմագրավել հազարավոր թուրք զինյալների հարձակումներին, մանավանդ արդեն սպառվել էին ռումբերը եւ քիչ էր նաեւ զինամթերքը: Այդ իրավիճակում Բեգլար Ավագյանի առաջնորդած մարտիկները բնակչությանը սպառնացող անխուսափելի կոտորածից փրկելու համար, կատարում են միակ հնարավոր ու խելամիտ քայլը:Նրանք կռվում են մինչեւ մութն ընկնելը ու դրանով հնարավորություն են տալիս Ղազախ գյուղի ավելի քան 500 բնակչիներին՝ տեղափոխվել Չարդախլու:

Պիտի նշել, որ Ղազախ գյուղի բնակչիները Չարդախլու են հասել գրեթե անկորուստ, շնորհիվ այն հանգամանքի, որ «Քաջ երիտասարդները Բեգլար Աւագեանի հրամանատարութեամբ ուղեկցում են գաղթող ժողովրդին դէպի Չարդախլու ու այդպիսով, չարունակ կռուիլով ճանապարհի այս ու այն կողմում երեւացող թրքական խմբերի դէմ՝ խեղճ, տնանկ ժողովրդին մի կերպ հասցնում են Չարդախլու»[105]:

Թուրք ամբոխը ներխուժում է Ղազախ եւ տներում մնացած հայերի վերջին ունեցվածքը կողոպտելուց ու թալանելուց հետո, սարսափելի կերպով քանդում եւ մոխրակույտերի են վերածում գյուղը: Այսուհանդերձ,Ղազախ գյուղի բնակիչները փրկվում են, բայց դաժան ճագատագրի են արժանանում անպաշտպան մնացած Գետաբեկի գործարանում եւ չուկայում գտնվող ավելի քան 80 հայերը:

Համաձայն վավերագրի տեղեկացման այդ ութսուն հոգուց շատ քչերին է հաջողվել ազատվել, այն էլ մի քանի տեղից վիրավորված, սոսկալի վիճակում՝ արյունալվիկ եղած, դժոխային տանջանքներ կրած ու բռնաբարված:

Բեգլար Ավագյանի առաջնորդած մարտիկների անգնահատելի ծառայությունը ոչ միայն այն իրողությունն էր, որ նրանք իրենց հերոսական գործողություններով անխուսափելի կոտորածից փրկել են Ղազախ գյուղի ավելի քան 500 բնակչիների, այլեւ հանգրվանելով Չարդախլուում, նույն հերոսականությամբ ու նվիրվածությամբ մասնակցել են այդ գյուղի ինքնապաշտպանական մարտերին:

Ըստ վավերագրի՝«Գետաբեկի կտրիճներից իր անձնուրաց քաջութեամբ աչքի է ընկել բացի Բեգլար Ավագյանից նաեւ Աղաբէկ Մահտեսի Խաչիկեանը, որը առաջինի հետ միասին մեծապէս նպաստել է Ղազախ գիւղի բնակիչների ազատման սոսկալի կոտորածից: Իրենց գիտցի ազգաբնակչութեան հետ միասին հասնելով Չարդախլու, այդ հազագիւտ քաջերը իրենց կտրիճ ընկերներով՝ միացել են տեղի հայ զինւորներին ու այդպիսով մեծ զարկ տւել այդ բազմամարդ նշանաւոր հայ գիւղի ինքնապաշտպանութեան գործին»[106]:

Մի քանի օր ընթացող կռիվների ժամանակ մոտակա հայկական բնակավայրերից այդ գյուղերին օգնության են գնացել ընդամենը 29 ձիավորներ, այն էլ ուշացած: Նոյեմբերի 29-ին ձիավորները հասնում են Ղազախ այն պահին, երբ բնակիչներն արդեն լքել էին գյուղը, իսկ Գետաբեկի ամբողջ սարահարթը ծածկված է եղել թուրք ամբոխով, որի մի մասը եղել է անգեն: Ի՞նչ կարող էին անել ընդամենը 29 մարտիկները ընդդեմ բազմահազար ամբոխի: Այդ իրավիճակում նրաք կայացնում են մի հանդուգն ու անհավանական որոշում, որը, կարելի է ասել, հավասարազոր է ինքնազոհողության:

Չնայած հակառակորդի ունեցած քանակական ահռելի գերակշռությանը, հայ մարտիկները համազարկեր տեղալով, գրոհում են Գետաբեկի սարահարթում գտնվող ամբոխի վրա: Նրանց սրընթաց հար-

ձակումը, անվրեպ հարվածները կատարյալ անսպասելի ու անակնկալ էր հայերի «հեքիաթային» հարստության տիրելու ցանկությամբ խանդավառված ավարառու ամբոխի համար:

Համաձայն Գետաբեկի ու Ղազախ գյուղի դեպքերը պատմող վավերագրի՝ սկզբում թուրքերը սարսափահար եղած մերոնց հարվածներից, հետ են նահանջել, իսկ անզեն, կողոպտող ու ավերող խուժանը փախել է շատ հեռու: Սակայն կռիվը դրանով չի ավարտվել: Տեսնելով հայ մարտիկների սակավաթիվ լինելը, թուրքեր նորից առաջ են շարժվել եւ փորձել շարունակել իրենց ավերածությունն ու ավարառությունը: Թվում է, որ հայ մարտիկներն այդ իրավիճակում սթափ կգնահատեն կացությունն ու կհեռանան մարտադաշտից, բայց կատարվում է ճիշտ հակառակը:

«Մեր ռազմիկներից մի քանիսը,-նշում է վավերագիրը,-զայրացած թուրք խուժանի յանդգնութեան վրայ, առաջ են վազել ու մտել նրա բազմության մէջ, կրակելով աջ ու ձախ: Թուրքերը փախել են նրանց առաջից ու բաժանվելով երկու մասի, շարժվել են այնպէս, որ կարողանան շրջապատել մեր սակաւաթիւ քաջերին»[107]:

Թուրքերը, չնորհիվ իրենց քանակական ահռելի գերակշռության, անշուշտ, կարող էին շրջապատել հայ մարտիկներին, որոնք կհայտնվեին ծանրագույն եւ անելանելի իրավիճակում: Նկատելով ու ճիշտ գնահատելով հակառակորդի ձեռնարկումը, հայ մարտիկներն անվարան գրոհ են ձեռնարկում, ճեղքում են թուրք հրոսակախմբերի մարտաշարքերն ու անկորուստ հեռանում մարտադաշտից:

Ինչպես արդեն նշվել է, թուրք հրոսակախմբերը նոյեմբերի 18-ին կենտրոնացել էին ոչ միայն Չարդախլու, Ղազախ գյուղերի եւ Գետաբեկի գործարանի, այլեւ Բադա գյուղի մերձակայքում: Գյուղի ինքնապաշտպանական ուժերը, ոչ այնքան լավ զինված եւ ընդամենը 200 մարտիկներից բաղկացած մարտական խմբերն անմիջապես համապատասխան դիրքեր են գրավում եւ սպասում դեպքերի զարգացմանը:

«Բադա-Բադաբենդ կամ Բադաձոր հայ գիւղը գտնվում է Գանձակի գաւառի արեւմտեան սահմանագլխում, երկաթուղու Ջադամ կայարանից 15-17 վերստ հարաւ... Գիւղի հողը պետական է, բաւականին ընդարձակ ու պտղաբեր եւ անչափ հարուստ է ծաղկավէտ արօտավայրերով ու խոտհարքներով... Նա էր, որ կարողանում էր դէմ կենալ իր շրջակայ բազմաթիւ թուրք ամբոխի ու անթիվ ընչաքաղց, գիշատիչ թուրք բէկերի քայքայիչ հարեւանութեան...»[108]:

Բադան գավառում հայտնի էր ոչ միայն իր հարստությամբ, այլեւ հյուրասիրությամբ, ճվիրական աղ ու հացով:

Ըստ Բադայի մասին պատմող փաստաթղթի «Համարեա օր չէր անցնում, որ Բադան իր հիւրասէր հարկի տակ չընդունէր 20-30 թուրք, չընդունէր այս կամ այն բէգին իր ծառաներով, եւ այդպէս անցել են բազմաթիւ տարիներ: Ղեկավարվելով այն առածով, որն ասում է «հայի կտրածը թուրքը չի կտրել», նահապետական Բադան տարիներ շարունակ հացով սրտաբուխ հիւրասիրութեամբ գրավել է իր գազանաբարոյ հարեւաններին...Բայց հացն էլ անզօր գտնվեց զսպել արիւնարբու գազանին...»[109]:

Թուրք ամբոխին հնարավորություն էր ընձեռվել բռնագրավելու իր հարեւանի՝ հայի հարստությունը եւ նա պիտի իրականացներ տարիների երազանքը: Թուրքերը Բադայի վրա ձեռնարկվող հարձակումը սկսել են մասնակի սպանություններով եւ գյուղի տավարի հափշտակությամբ:

Նոյեմբերի 21-ին թուրք ամբոխը «Յա Ալի՛» վանկարկելով ու վայրենի աղաղակներով հարձակվում է Բադա գյուղի վրա: Ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով պիտի Բադայի ընդամենը 200 մարտիկները դիմակայեին բազմահազար թուրք զինյալների գրոհներին:

Մի ուշագրավ հանգամանք. թուրքերը զինված են եղել ավելի կատարելագործված զենքերով՝ մոսին հրացաններով ու մաուզեր ատրճանակներով եւ ունեցել են անսպառ զինամթերք:

Բադայի ինքնապաշտպանական ուժերը ճիշտ հակառակը՝ ունեցել են հնատիպ զենքեր եւ սահմանափակ քանակությամբ զինամթերք: Հարց է ծագում, եթե բադացիները թուրքերից անհամեմատ ավելի հարուստ էին, ինչու՞ չէին տիրապետում կատարելագործված զենքերի ու անհրաժեշտ քանակության զինամթերքի:

Ըստ Ա-ԴՕ-ի տվյալների «Գիւղի հարստութիւնը անասելի էր. 40-50-ով եզ, կով, ձի, գոմէշ ունենալը սովորական էր բադեցու համար. միմիայն եզների թիւը գիւղում հասնում էր 2500-ի. նրա ամբարները լիքն էին, մառանները նոյնպէս, տները ամուր ու գեղեցիկ»[110]:

Բադան 400 ծուխ եւ 2713 բնակիչ ունեցող մեծ գյուղ էր՝ շրջապատված թուրքական 24 մեծ գյուղերով[111]:

Թվում է, որ Բադայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունն ու հարստությունը պիտի առավելապես թելադրեին գյուղի բնակչությանը իր հարստության գոնե փոքրագույն մասն տրամադրելու զենք

ու զինամթերքի ծեռք բերմանն ու դրանով իսկ ապահովելու իր անվտանգությունը: Բայց բաղացիները պատշաճ ուշադրություն չեն դարձրել զինման ու մարտական խմբերի կազմակերպմանը: Ինչու՞. պատասխանը միանշանակ է: Այդ գյուղում դարձյալ տիրել է նույն հիվանդությունը, ինչ մյուս գավառներում: Ի տարբերություն թուրքի եւ քրդի, հայը ավելի շատ կարեւորելով աշխատանքն ու նյութական բարիքների արտադրությունը, շատ քիչ է մտահոգվել զենք ու զինամթերք գնելու եւ ըստ այդմ իր անվտանգությունն ապահովելու խնդիրներով:

Ալ. Խատիսյանի խոստովանությամբ «Նախքան ընդհարումները՝ հայերը անզեն էին, իսկ թուրքերը միշտ լավ զինուած: Պէտք էր զէնք ձեռք բերել Ռուսաստանէն, արտասահմանէն, պետական պահեստանոցներէն»[112]:

Պիտի ընդգծել, որ գավառի ինքնապաշտպանության կազմակերպման գործում անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվել գավառի Զինվորական մարմինը: Գավառի հայ բնակչությունը, ինչպես արդեն նշվել է, թուրքերից անհամեմատ հարուստ էր: Կարելի էր ժամանակին կազմակերպել դրամահավաք եւ մասամբ լուծել զինման խնդիրը: Անհրաժեշտության դեպքում կարելի էր հետեւել Երեւանի նահանգում Նիկոլ Դումանի կիրառած միջոցներին եւ հարուստներից դրամ վերցնել բռնությամբ: Գանձակի գավառում Զինվորական մարմինը կռիվների նախօրեին ու անգամ դրանից հետո չի կատարել ոչ մեկը եւ ոչ էլ մյուսը:

Ողբերգական ավարտ է ունեցել 2500 բնակիչ ունեցող Բադա գյուղի ինքնապաշտպանությունը: Նոյեմբերի 19-ին թուրքերը շրջապատում են Բադան եւ թալանում գյուղից 5 վերստ հեռավորության վրա գտնվող Ջառչի-Բինան:

Քանի որ Բադան պատրաստ չի եղել դիմելու ինքնապաշտպանության, ճարահատյալ դիմում է թուրք ազդեցիկ առաջնորդներից մեկի՝ կալվածատեր Ալլահեար բեկ Ջուլգադարովի օգնության:

Ըստ Ա-Դ-Օ-ի հավաստման, Ալլահեար բեկը ընդառաջելով բաղացիների խնդրանքին՝ մեկնում է Բադա եւ այնտեղ հանդիպելով գյուղացիներին «...գտաւ փառահեղ հիւրասիրութիւն եւ երեց իր կտրած աղ ու հացով, որ նա քանի կենդանի է, բաղեցու մի մազին անգամ դիպչող չի լինի: Բայց քաղցած ամբոխի «ռեխը» ծգելու համար 3000 րուբ. պահանջեց...»[113]:

Համաձայն «Հայ-թուրքական ընդհարումներ Գանձակի գավառում» խորագիրը կրող վավերագրի, որի նյութերից անկասկած օգտվել է նաեւ

Ա-Դ-Օ-ն, բաղացիները լսելով Ալլահեար բեկի պահանջը երդվում են, որ այդքան փող՝ 3000 ռուբլի այդ պահին գյուղում չեն կարող գտնել: Երկարատեւ ասկարկումներից հետո Ալլահեար բեկը բաղացիներից պահանջում է 1000 ռուբլի եւ իր ծիերի համար 15 բաղար(մոտ 620 փութ) գարի:Գյուղացիները համաձայնվում են կատարել բեկի պահանջը, միաժամանակ խոստանում նրան տալ նաեւ կով, գոմեշ, ծիեր ու ոչխարներ[114]:

Այդ բոլորը տեղի ունեցել նոյեմբերի 19-ին: Հաջորդ օրն ուեք թուրքերը հարձակվում են գյուղի վրա: Թուրքերի հարձակումից սարսափահար եղած բաղացիները դիմում են Ալլահեար բեկին, որը մի խումբ բաղացիների եւ իր մարդկանց հետ գնում է հրոսկախմբերինընդառաջ եւ հրմայում է նրանց դադարեցնել կրակը: Այստեղ տեղի է ունենում մի զավեշտալի միջադեպ, որը մերկացնում է Ալլահեար բեկի իրական դեմքն ու մտադրությունը:

Համաձայն վավերագրի, թուրքերը ծայնից ճանաչում են բեկին եւ դադարեցնում են հրացանաձգությունը: Բայց երբ բեկը հրամայում է ցրվել տները, չկռվել հայերի հետ ու չարշավել Բադա, թուրքերի կողմից լսվում է հետեւյալ արտահայտությունը. «Լաւ, էս բոլորն ինչ-որ մենք անում ենք, քո եւ միւս բէկերի պլանը չի՞, քո սարքած բանը չի՞: Մենք տուրեցնում ես թաքուն, էլ՝ գնացէք հայերին կոտորեցէք, բնաջինջ արէք. ամենատնիկը. ոուսը ձեզ պատժել չի: Հիմի հայերի հետ եկել ես ու պշրայ նրանց լաւութիւն ե՞ս անում»[115]:

Բադայի դեպքի մասին վավերագրում տեղ գտած պատմությունը կրճատումներով մեջբերում է նաեւ Ա-Դ-Օ-ն[116]:

Այդ օրը՝ նոյեմբերի 20-ին, թուրքեր լսում են Ալլահեար բեկի հրամանը, դադարեցնում հարձակումը եւ հեռանում Բադայի մերձակայքից: Բայց շատ շուտով պարզվում է, որ այդ ամենը բացարձակապես չինծու էր, կեղծ ու խաբուսիկ:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 21-ին թուրք հրասակները հարձակվում են Բադայի վրա:

Գյուղի ինքնապաշտպանական ուժերը նոյեմբերի 21-ից մինչեւ նոյեմբերի 23-ը կարողացել են դիմագրավել հազարավոր թուրք զինյալների հարձակումներին: Բադան միայնակ մարտնչելով՝ ոչ մի օգնություն չի ստացել:

Հայկական մարտական ուժերը մինչեւ նոյեմբերի 24-ը կենտրոնացել էին Գանձակ քաղաքում, իսկ մերձակա հայկական գյուղերի մար-

տական ուժերը նույնպես չեն կարողացել հասնել օգնության: Քանի որ Բադան մեկուսացված էր եւ շրջապատված բազմամարդ թուրքական գյուղերով, հայկական գյուղերի մարտական ուժերը ի զորու չէին ճեղքելու թուրքերի խիստ օղակն ու օգնության հասնելու վտանգված գյուղին: Պաշարման շղթան ճեղքելու համար անհրաժեշտ էին ամենաընտիր զենքերով զինված հայդուկային խմբեր:

Բադայի ինքնապաշտպանական ուժերը թեեւ մի քանի օր կարողացել են դիմադրել թուրք հրոսակախմբերի հարձակումները, բայց մարտական ուժերի ու հատկապես զինամթերքի սակավության պատճառով անկարող են եղել երկարատեւ դիմադրություն ցույց տալ ու անառիկ պահել իրենց դիրքերը:

«Թուրքերը վայրենի աղաղակներով ներս են խուժում գիւղ: Սկսվում է մի սոսկալի կոտորած ու կռիւ գիւղի փողոցներում: Գիւղացիները կռւում են դաշույններով, կացիններով, փայտերով...Ժողովուրդը թափվում է շրջակայ ձորերն ու անտառները, փախչում է դէս ու դէն, փախչում է Չարդախլու գլխավորապես»[117]:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ բոլորովին այլ ճակատագրի կարժանանային Բադայի բնակիչները, եթե իրենց հարստության մի մասը ժամանակին տրամադրեին ձեռք բերելու զենք ու զինամթերք եւ կազմավորեին մարտական խմբեր:

Բադա գյուղի 2500 բնակիչներից փրկվել են 1200 հոգի, մեծամասամբ կանայք ու երեխաներ, որոնց, համաձայն այդ դեպքերը ներկայացնող վավերագրության, «...Ալլահեար բէկն անձամբ իր եղբայրներով հաւաքում է շրջակայ անտառներից ու տանում իր մօտ գերի. յետոյ մաս-մաս բաժանում է նրանց Չարդախլուի ու Շամշադինի միալի հայ գիւղերի մէջ...»[118]:

Նոյեմբերի 25-ին բազմահազար թուրք հրոսակները պաշարում են Չարդախլու գյուղը: Բադա եւ Ղազախ գյուղերի գրավումն ու թալանը ոգեւորել են թուրք առաջնորդներին: Նրանք ավելի քան վստահ են եղել, որ իրենց կհաջողվի այդ գյուղերի ճակատագրին արժանացնել նաեւ Չարդախլուին, որը Գանձակ գավառի արեւմտյան մասի ամենամեծ, շեն ու հարուստ գյուղն էր:

Գյուղի վրա ձեռնարկած առաջին իսկ գրոհը աներկբա ցույց է տալիս, որ Չարդախլուն ոչ Բադա է, եւ ոչ էլ Ղազախ: Թուրքական կողմը հասկանում է, որ այս անգամ իրենք գործ ունեն առավել կազմակերպված մարտական ուժերի հետ: Մի քանի անհաջող գրոհներից հետո, թուրքերը դադարեցնում են հարձակումները եւ սահմանափակվում միայն հեռու տարածությունից գյուղի ուղղությամբ համազարկեր արձակելով: Նույն մարտավարությամբ հակառակորդին պատասխանում են նաեւ հայ ինքնապաշտպանական ուժերը:

Նոյեբերի 29-ին Գանձակից Չարդախլու է հասնում Մարտիրոս վարժապետ Պետրոսյանի գլխավորած քաջավարժ ռազմիկներից բաղկացած հայդուկային խումբը, որը աչքի էր ընկել հատկապես Գանձակի թուրքական Բաղմանոցար թաղամասում նոյեմբերի 22-ի գիշերը տեղի ունեցած կռվում: Այդ օրհասական պահին Չարդախլու գյուղում հայդուկային խմբի հայտնվելը պատահական չէր:

Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ինչպես արդեն նշվել է, իր ուշադրությունը գլխավորապես բեւեռելով Գանձակ քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպմանը, մարտական ուժերը հիմնականում կենտրոնացրել էր քաղաքում: Կարելի է ասել, որ բավարար քանակության մարտական ուժեր, զենք ու զինամթերք չունենալու պատճառով գավառը դուրս էր մնացել Զինվորական մարմնի ուշադրությունից: Հարձակման ենթարկվելու դեպքում գյուղական բնակավայրերը պիտի ապավինեին իրենց սեփական ուժերին, որոնք, կարելի է ասել, այնքան էլ զինված ու կազմակերպված չէին:

Քանի որ շատ քույլ էին կազմակերպված գավառի ինքնապաշտպանական ուժերը, հետեւաբար պատշաճ մակարդակի չի կարգավորվել գյուղերի փոխօգնության խնդիրը: Այսուհանդերձ, Զինվորական մարմինը նկատի ունենալով գյուղերի ինքնապաշտպանական ուժերի սահմանափակ հնարավորությունները, առանձնացրել է հատուկ նշանակության մարտական խումբ, որն անհրաժեշտության դեպքում պիտի օգնության շտապեր օրհասական կացությունում հայտնված գյուղերին: Այդ չափազանց պատասխանատու գործը Զինվորական մարմինը հանձնարարել է Մարտիրոս վարժապետի գլխավորած հայդուկների քաջավարժ մարտախմբին:

Չարդախլուի համար վճռական կռիվը տեղի է ունենում նոյեմբերի 23-ին: Անտարակույս, եթե այդ օրը հայ ինքնապաշտպանական ուժերը չկարողանային հաղթել հակառակորդին, ապա կոչնչանար ոչ միայն Չարդախլուն, այլեւ ծանրագույն կացությունում կհայտնվեին նաեւ գավառի հայկական մյուս գյուղերը:

Ինչպես նախորդ մարտերում, այս անգամ դարձյալ նախահարձակ են լինում թուրքերը, որոնք անկանոն եւ անկարգ մարտաշարքերով ու կրակոցներով շարժվում են դեպի գյուղ: Հայ ինքնապաշտպանական ուժերը համաձայն վաղօրոք ծրագրած մարտավարության, սառնասրտորեն թողնում են, որ թուրքերը մոտենան իրենց դիրքերին, ապա միահամուռ կրակ են տեղում հարձակվողների վրա: Այդ օրվա կռվում թուրքերը տրամադրված են եղել մարտականորեն ու կռվել են համառորեն: Յուրաքանչյուր հարձակման հետեւանքով թեպետ զգալի զոհեր են տվել, բայց համալրել ու կարգավորել են իրենց մարտաշարքերն ու շարունակել գրոհները:

Այդ օրը տեղի ունեցած բախտորոշ կռիվներում Չարդախլուի ինքնապաշտպանական ուժերի դրսեւորած խիզախությունն ու մարտունչելու վարպետությունը վեր է որեւէ գովասանքից ու գնահատականից:

«Մերոնք,-նշում է վավերագիրը,- խմբապետ Մարտիրոս վարժապետի հմուտ ղեկավարութեամբ կռւում են այնպէս, որ նրանց նախանձել կարող էին եւրոպական զօրքերի շարքերում կրթւած զինտրները...թուրքերը երկրորդ անգամ են յարձակւում. դարձեալ ջարդւում են ու բողոքովին յետ նահանջում, թողնելով կռւի դաշտում շատ դիակներ...»[119]:

Մարտիրոս վարժապետի հմուտ ղեկավարությամբ հայ ինքնապաշտպանական ուժերը նվաճում են անվիճելի, փայլուն հաղթանակ: Թշնամին մարտադաշտում թողել է տասնյակ սպանվածներ, իսկ վիրավորներն անհամեմատ ավելի շատ են եղել: Հայկական կողմը ունեցել է ընդամենը միայն մեկ զոհ՝ Չարդախլեցի Շամիրը[120]:

Պարտություն կրելով Չարդախլուի համար մղվող մարտերում, թուրք պարագլուխները ծրագրում են կռիվները շարունակել այլ մարտավարությամբ: Դյուրին հաղթանակներ եւ հաջողություններ ձեռք բերելու նպատակադրությամբ ու ակնկալիքով, նրանք որոշում են հարձակվել թույլ պաշտպանված, սակավամարդ բնակչություն ունեցող գյուղերի վրա:

Թուրքերը որպես իրենց հարվածի առաջին նշանակետ ընտրում են Բարսում գյուղը, որը գտնվում է Շամխոր գետի հովտում, Չարդախլուից դեպի հարավ արեւելք: Ճիշտ է, այդ գյուղը բնակչության, բնականաբար նաեւ կռվողների թվով զգալիորեն զիջել է Չարդախլուին, բայց շնորհիվ գերազանց բնական ամրությունների ունեցել է իր առավելությունները: Բարսումը գտնվում է անդնդախոր ձորի մեջ եւ շրջապատված է բարձրաբերձ ժայռերով ու լեռներով:

Դեկտեմբերի 3-ին Թուրք հրոսակախմբերը մոտենում են Բարսումին, բայց զգուշանալով ամրակուռ պաշտպանական հենակետերում դիրքավորված բարսումցիների հարվածներից, հարձակվում են գյուղից բավականի հեռու գտնվող նախիրի վրա: Սակավաթիվ նախրապահները չեն կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ եւ թուրքերը օգտվելով այդ հանգամանքից, շրջապատում ու տանում են նախիրը: Նախրապաները շտապել են հասնել գյուղ եւ գուժել են տեղի ունեցածը:

Երբեմն ճակատագիրը օգնել է նաեւ հայերին: Մինչեւ բարսումցիների զինավառ մարտախումբը կհասներ դեպքի վայրը, նախիրը քշող ավարառու հրոսակախմբերին հանդիպում է Չարդախլուից Բարսում վերադարձող Մարտիրոս վարժապետի գլխավորած հայդուկների խումբը: Արագորեն կողմնորոշվելով, հայդուկները հարձակվում են թուրքերի վրա, որոնք չնայած իրենց թվական գերակշռությանը, թողնում են նախիրը եւ դիմում են փախուստի: Հայ մարտիկները հետապնդելով փախչողներին՝ ներխուժում են մերձակայքում գտնվող թուրքական գյուղը եւ վերցնում զգալի քանակությամբ ռազմավար:

Եզրափակելով այդ կռվի մանրամասները ներկայացնող պատմությունը՝ վավերագրությունը նշում է. «Բեկլարի, դասաբ Գրիգորի, Ախալքալակցի Պետրոսի, Կարոյի, հրամանատար Մարտիրոս վարժապետի ու նրանց միւս քաջ ընկերների համար այդ կռիւը, այսպէս ասած, լինում է կատարեալ խաղ ու պար»[121]:

Բարսումում կրած պարտությունից հետո թուրքերը ոչ միայն այլեւս չեն համարձակվում ոտնձգություններ կատարել հայ գյուղացիների նկատմամբ, այլեւ հայդուկների ներկայությունից ահաբեկված լքում են իրենց օջախն ու գաղթում առավել հեռու գտնվող թուրքաբնակ այլ բնակավայրեր:

Չարդախլու եւ Բարսում գյուղերի կռիվներում պարտություն կրելուց հետո, թուրքական կողմը փոխում է իր մարտավարությունը: Թեպետ Գանձակ քաղաքում նոյեմբերի 22-23-ին տեղի ունեցած մարտերում թուրքերը կրել էին պարտություն, այնուամենայնիվ, նրանք ծրագրում են մարտական ուժերը դարձյալ կենտրոնացնել քաղաքում եւ վճռական հարձակում ձեռնարկելով՝ պարտության մատնել ու կոտորել հայ բնակչությանը: Այդ նպատակով թուրք պարագլուխները փորձում են իրենց մարտական ուժերը գյուղերից տեղափոխել ու կենտրոնացնել քաղաքում: Միաժամանակ տարբեր բնակավայրերից դեպի Գանձակ են ուղեորվում թուրքական զինյալ խմբերն ու ամբոխը:

Պիտի նշել, որ զուտ ռազմական առումով գավառում թուրք հրոսակախմբերը հայկական կողմին գերազանցել են թվաքանակով եւ զինվածությամբ, իսկ հայկական մարտական ուժերը հակառակորդի նկատմամբ անվիճելի առավելություն են ունեցել իրենց կազմակերպվածությամբ ու կռիվներ մղելու վարպետությամբ:

Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության համար գաղտնիք չէր թուրքական կողմի պատրաստվածությունն ու նպատակը: Գավառի Զինվորական մարմինը թուրքերի ծրագրերը խափանելու նպատակով դեկտեմբերի սկզբներին որոշում է նրանց պատասխանել հարձակողական գործողություններով: Համաձայն այդ մարտավարության, հայ մարտական ուժերը պիտի մի շարք հարձակումներ ձեռնարկեին թուրքական բնակավայրերի, հատկապես այն գյուղերի վրա, որոնք գտնվում էին Գանձակ գավառի լեռնային մասում եւ մշտական սպառնալիք էին հայկական գյուղերի համար: Թուրքական այդ գյուղերի բնակիչները մասնակցել էին Բարա եւ Ղազախ գյուղերի ու Գետաբեկի գործարանի հայերի կոտորածին եւ նրանք անպայմանորեն պիտի պատժվեին [122]:

Պիտի նկատել, որ հայկական կողմի ծրագրած համանման մարտավարությունը համակողմանիորեն կշռադատված էր ու հաշվարկված: Գավառի տարբեր հատվածներում գտնվող հակառակորդի ուժերին պարբերաբար հարվածներ հասցնելու միջոցով կարելի էր խոչընդոտել Գանձակում թուրքական ուժերի կենտրոնացմանը: Դրանով հնարավոր էր հրոսակախմբերին ստիպել ցրված մնալ գավառի զանազան կետերում ու այդպիսով թե Գանձակի հայկական քաղաքամասը ապահով պահել թուրքերի ներխուժումից եւ թե կանխել հայկական գյուղերի վրա ուղղած հարձակումները:

Տվյալ իրավիճակում համանման մարտավարությամբ առաջնորդվելը, ինչն ամերկբա ապացուցեց ժամանակը, անտարակույս ամենակշռադատվածն էր ու ամենաարդյունավետը:

Փոքրի-ինչ առաջ անցնելով կարելի է նշել, որ Գանձակի գավառում տեղի ունեցած կռիվների ժամանակ հայկական մարտական ուժերի հրամանատարության ձեռնարկած հարձակողական գործողությունները ոչ միայն միշտ հաղթական ավարտ են ունեցել, այլեւ, այդ կռիվներից մի քանիսը իրենց հերոսականությամբ, կարելի է ասել, որ վեր են որեւէ գովասանքից: Դրանցից իրենց նշանակությամբ պիտի առանձնացնել գանձակ գավառի հյուսիս արեւմտյան մասում, հայկական Նուզգար եւ Չովգաս բնակավայրերի հարեւանությամբ գտնվող թուրքական Բալչլու շրջանի Աղիոխուշ, Ախրջա, Մարաքենդ եւ հատկապես Թոփալ-Հասանլու եւ Սեգյութլու գյուղերի գրավումը: Վերոհիշյալ գյուղերից Թոփալ-Հասանլուն եւ Սեգյութլուն թուրք հրոսակախմբերի գլխավոր հենակետերն էին, կենտրոնավայրը: Ամիսներ շարունակ այդ հենակետերում կենտրոնացած թուրք հրոսակախմբերը պարբերաբար հարձակումներ են գործել Գանձակ քաղաքի եւ հայկական մյուս բնակավայրերի, առավել հաճախ Բարաջրի, Մուրուտ, Ոսկանապատ, Միրզիկ ու Բանանց գյուղերի վրա [123]:

Իրենց ավազակային գործողություններով նախկինում աչքի ընկած Աղիոխուշ, Ախրջա, Մարաքենդ գյուղերը ավելի մոտ էին գտնվում Գանձակի թուրքական քաղաքամասին: Քաղաքից մինչեւ այդ գյուղերը կարելի էր հասնել ընդամենը 2-3 ժամում: Վերոհիշյալ գյուղերի հրոսակախմբերը կարող էին ցանկացած պահի զինական օգնություն ստանալ Գանձակից եւ հարձակվել հայկական բնակավայրերի, մասնավորապես Նուզգար եւ Չովգաս գյուղերի վրա: Հարկավոր էր օր առաջ հարվածել ու վնասազերծել այդ գյուղերը, քանի դեռ նրանք Գանձակից որպես համալրում չէին ստացել անհրաժեշտ մարտական ուժեր:

Գանձակի Զինվորական մարմնի հանձնարարությամբ թուրքական գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումը հանձնարարվում է իրականացնել Մարտիրոս վարժապետի գլխավորած 80 մարտիկներից բաղկացած մարտախմբին, որը համալրվում է Նուզգար եւ Չովգաս գյուղերի մարտիկներով: Դեկտեմբերի 10-ի առավոտյան հայկական մարտական ուժերը հարձակվում են թուրքական Աղիոխուշ գյուղի վրա, որտեղ այդ պահին կենտրոնացել էին Բալչլուի շրջանի մի քանի գյուղերի բնակիչները:

Ներկայացնելով այդ պահը՝ Աղիոխուշ գյուղի կռիվը պատմող վավերագրությունը նշում է. «Թուրքերը լաւ զինուած, նոյն իսկ մօսիններով, սպասելիս են լինում նրանց դիրքերում: Սկսում է կատաղի կռիւը, մերոնցից անվեհերութեամբ առաջ են շարժւում առիւծների պէս, Մարտիրոսի հետ միասին վանեցի Մելքոնեան Կարօն, Գետաբեկցի Բեգլար Աւագեանը, Բաբանցեցի Մակիչ Անաստասեանը ու փիբեցի Համբարձում Բալասեանը: Նրանց հետեւից գրոհ են տալիս ղէպի թուրքերը միւս քաջերը...Թուրք կովողները կես ժամից աւել չեն կարողանում դիմադրել, իրանցից բաւականին զոհեր տալով, թողնում են դիրքերը, թողնում են նոյն իսկ գիւղը բազմաթիւ կանանցով ու երեխաներով եւ փախչում խայտառակ կերպով»:

Հայ մարտիկները առանց որեւէ զոհի ու նույնիսկ առանց վիրավորի գրավում են Աղիոխուշ գյուղը եւ որպես ռազմավար վերցնում 600 ոչխար, 150 գլուխ տավար, 35 ձի ու բազմապիսի կենցաղային ու տնային իրեր [124]:

Զարգացնելով հաղթանակը՝ հայ ինքնապաշտպանական ուժերը շարունակում են հարձակումը եւ նույն ճակատագրին արժանացնում Ախրջան ու մի քանի այլ թուրքաբնակ մանր գյուղեր: Հայ մարտիկների գործողություններն ու թուրքական գյուղերի կործանումը ահ ու սարսափ է տարածում: Բալչլուի շրջանի թուրքական գյուղերի բնակիչներն ահաբեկված տեղի ունեցող սարսափազդու դեպքերից, այրում են իրենց տները եւ հեռանալով իրենց բնակավայրերից՝ ապաստանում Գանձակի թուրքական քաղաքամասի մերձակայքում գտնվող թուրքական գյուղում:

Հայկական մարտական ուժերի հաջորդ նշանակետերն արդեն թուրք հրոսակախմբերի գլխավոր հենակետերն էին՝ Թոփալ-Հասանլու եւ Սեգյութլու գյուղերը:

Թոփալ-Հասանլու գյուղը գտնվում է Գանձակից դեպի հարավ արեւմուտք ձգվող ճանապարհի վրա, որը Բանանցի շրջանի հայկական գյուղերը քաղաքին կապող միակ հաղորդակցության ուղին էր: Փաստորեն Թոփալ-Հասանլուն վերածվելով թուրք հրոսակախմբերի կենտրոնատեղի, անջրպետում էր հայկական գյուղերը Գանձակից: Ջուտ մարտավարական առումով չափազանց կարեւոր էր վերացնել թուրք հրոսակախմբերի որջը եւ բացել քաղաքը հայկական գյուղերից անջրպետող արգելապատնեշը:

Թոփալ-Հասանլուում կենտրոնացած ուժերը Բաքվի, ապա նաեւ Նախիջեւանի դեպքերից, ինչպես նաեւ իշխանությունների հովանավորությունից առավելագույնս ոգեւորված ու քաջալերված, բաժանվում են մի քանի հրոսակախմբերի եւ ավելի մեծ համախականությամբ շարունակում են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկվող հարձակումները: Այդ իրավիճակում Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը թուրքերի ոտնձգությունները կանխելու եւ արժանի հակահարված հասցնելու, նրանց ոգեւորությունն ու ինքնավստահությունը կոտրելու նպատակով վճռում է ջախջախել ամենաուժեղ եւ հեղինակավոր հրոսակախմբին:

Այդ անչափ կարեւոր եւ պատասխանատու հանձնարարությունը փայլուն կերպով կատարում են նշանավոր խմբապետ բաղմանլարցի Համբոյի գլխավորած մարտիկները: Համբոյի գլխավորած փոքրաքանակ մարտախումբը ղեկտեմբերին գլխովին ջախջախում է թուրքական հրոսակախմբին, որի անդամներից ազատվում է միայն մեկ հոգի:

Այդ պարտությունից զգաստացած Թոփալ-Հասանլուում գտնվող հրոսակախմբերը դադարեցնում են գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումները եւ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով Գանձակի վրա՝ մարտական ողջ ուժերով մասնակցում են նոյեմբերի 18-ին քաղաքի տեղի ունեցած կռիվներին, բազարի ավերմանն ու կողոպուտին:

Գանձակի դեպքերից հետո Թոփալ-Հասանլուի հրոսակախմբերը հարուստ ավարով վերադառնում են գյուղ եւ դիրքեր գրավելով հայկական գյուղերը տանող ճանապարհի վրա՝ կտրում են Գանձակը Բանանցի շրջանի եւ Չարդախլու գյուղերին կապող հաղորդակցության ուղին: Այդ գյուղերը, կտրվելով քաղաքից, դարձյալ հայտնվում են կոզիացած, մեկուսացված վիճակում:

Թոփալ-Հասանլուի ոչնչացումը խիստ անհրաժեշտ էր եւ կենսական նշանակություն ուներ հայկական բնակավայրերի համար:

Նոյեմբերի 21-ին Մարտիրոս վարժապետի, բաղմանլարցի Համբոյի եւ Ալեքսան Բալասանյանի գլխավորած մարտախմբերը Գանձակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Համազասպի առաջադրանքով կենտրոնանում են Թոփալ-Հասանլուի մերձակայքում եւ հաջորդ օրը՝ նոյեմբերի 22-ի առավոտյան հանգիստ, անաղմուկ, հակառակորդի համար հանկարծակի, ներխուժում են գյուղը:

Հարձակմանը զուգընթաց Թոփալ-Հասանլուին թուրքական մյուս բնակավայրերից սպասվելիք զինական օգնությունից զրկելու նպատակով, հայկական մարտախմբերը նաեւ հսկողություն են սահմանում եւ կտրում գյուղ տանող ուղիները: Այդպիսով Մարտիրոս վարժապետի առաջնորդած մարտախմբերի գործողությունները Թոփալ-Հասանլուի մեջ հետապնդումն ապահոված էին թիկունքից, այն է՝ թուրքական հրոսակախմբերի հարձակումներից: Այդ մարտական խմբերի գործողությունները ղեկավարել է անձամբ Համազասպը:

Հակառակորդի համար հայկական ուժերի հարձակումը կատարյալ անակնկալ էր: Ներկայացնելով այդ պահը՝ վավերագիրը նշում է. «... մեր զինվորները կռում են գիշի ծոռ ու մոռ փողոցներում, բաղերում: Կռում են անվեհեր քաջութեամբ ինքը հրամանատար Մարտիրոս վարժապետը, գետաբեկցի Ըէկլար Աւագեանը, Կարապետ Սելքոնեանը, դասաբ Գրիգորը, բանանցեցի Մսակիչ Անաստասեանը, Սարգիս Գաբրիելեանը: Վերջինս Համբո-

յի հետ մտնում է գիւղի ամենախուլ անկիւններից մինը, վառում են խոտի մի դէզ ու մի տուն: Սկսում է հրդեհը, որով շուտով բռնկվում է ամբողջ գիւղը...»[125]:

Թուրք հրոսակախմբերը, որոնք ամիսներ շարունակ պարբերաբար հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա, այս անկարող լինելով դույզն-ինչ դիմադրել հայ մարտիկների գրոհին, խուճապի են մատնվում եւ դիմում փախուստի:

Ընդամենը 160 մարտիկներից բաղկացած Մարտիրոս վարժապետի հրամանատարությամբ գործող մարտախումբն առանց որեւէ գոհի եւ վիրավորի գրավում է թուրքական կարեւոր հենակետերից մեկը:

Թոփալ-Հասանլուի գրավման հետեւանքով հայ մարտիկները որպես ռազմավար վերցնում են 1000 ոչխար, 160 տավար, 30 ձի ու ջորի եւ բազմաթիւ այլ կենցաղային առարկաներ [126]:

Հայ մարտախմբերի կողմից Թոփալ-Հասանլուի գրաման լուրը շուտով հասնում է Գանձակ: Քաղաքում գտնվող թուրքական հրոսակախմբերը, ավերված գյուղի, սպանված ու վիրավորված արյունակիցների վրեժը լուծելու վճռականությամբ շտապում են մարտադաշտ: Բայց նրաց չի հաջողվում վրեժխնդիր լինել հայ մարտիկներից: Գանձակ գետի հոսանքի երկարությամբ, Աղ-Քեօրփի ձորում դիրքեր գրաված Համազասպի գլխավորած հայ մարտական խմբերը իրենց շեշտակի հարվածներով գլխապատառ փախուստի են մատնում թուրք հրոսակխմբերին:

«Մեր զինւորներից,-նշում է վավերագիրը,-առանձնապէս աչքի է ընկնում իր անվեհեր քաջութեամբ կուսապատցի Սարգիս Առուստամեանը, որը առաւել յայտնի է «Չոփուռ» անունով: Նա անցնում է Գանձակ գետը, դիրք գրաւում Բաղմանլարից բաւականին մոտիկ ու կռւում առիւծի պէս: Չոփուռը լուրջ վիրաւորվում է ոտից, բայց բնաւ ուշադրութիւն չի դարձնում նրա վրա, կռւում է մինչեւ թուրք հրոսակախմբերի անհետանալը կուի վայրից...Չոփուռը Ղարաբաղի ժողովրդական հերոս հռչակաւոր հրոսակապետ Բախշիի ընկերն է, նրա խմբի խիզախ, յանդուգն անդամներց մինը...»[127]:

Նույն օրը՝ նոյեմբերի 22-ին հայ ինքնապաշտպանական ուժերը սրընթաց հարձակումներով գրավում ու ոչնչացնում են Դարաբեկլու եւ Քարա-Եաթաղ թուրքական ավելի փոքր գյուղերը:

«Դրօշակ»-ի գնահատմամբ «Թիֆլիսից ու Գանձակից կռիւներն անցան իրանց գաւառները. թուրքերը քարուքանդ արին Գանձակի

մօտ երկու հայ գիւղեր՝ Բաղաճոր եւ Գետաբեկ: հայերը պատասխանեցին քանդելով երեք թուրք գիւղեր՝ Կէրվէնդ, Բալչալու եւ Թոփալ-Հասանլու, երկու կողմից էլ կատաղութիւնը զարհուրելի է: Համազասպը իր դերում է: Կռիւը շարունակւում է. երկրի աւերումը զարհուրելի չափերի է հասնում»[128]:

Հայկական մարտական ուժերի կողմից Գանձակ գավառի թուրքական ամենավտանգավոր ավազակաբունի՝ Թոփալ-Հասանլուի եւ նրա սահմանամերձ Դարաբեկլու եւ Քարա-Եաթաղ գյուղերի գրավումը մեծ ոգեւորություն է պատճառել գավառի ու քաղաքի հայ բնակչությանը ու բարձրացրել նրա մարտունչելու տրամադրվածությունը: Այդ հաղթական կռիվներն ակնառու կերպով ցույց տվեցին, որ խիզախ ու կարող հրամանատարի առաջնորդությամբ կշռադատված մարտավարությամբ առաջնորդվելու, հարձակողական գործողություններ ձեռնարկելու պարագայում կարելի էր նույնիսկ փոքրաքանակ մարտական ուժերով հաղթանակներ նվաճել եւ սանձել թուրք հրոսակախմբերի ոտնձգությունները:

Թոփալ-Հասանլուի գրավումից հետո հայկական կողմը ծրագրում է շարունակել հարձակողական գործողությունները եւ վրեժխնդրության նպատակով հարձակվել այն գյուղերի վրա, որոնց բնակիչները մասնակցել էին հայկական գյուղերի ոչնչացմանն ու կողոպուտին: Այդ նպատակով Մարտիրոս վարժապետի գլխավորությամբ Չարդախլու գյուղում կազմավորվում է 200 հեծյալ ու հետեւակ մարտիկներից բաղկացած հատուկ նշանակության մարտախումբ: Դեկտեմբերի 31-ի երեկոյան մարտախումբը դուս է գալիս Չարդախլուից եւ մեկնում կատարելու իրեն հանձնարարված առաջադրանքը: Ճանապարհին Մարտիրոս վարժապետի մարտախմբին են միանում նաեւ հայկական մի շարք գյուղերի մեծ ու փոքր մարտախմբեր[129]:

Թուրքական գյուղերի բնակիչները տեղեկանալով հայկական կողմի ձեռնարկումների, իրենց գյուղերի վրա ծառացած սպառնալիքի մասին, լքում են իրենց բնակավայրերը եւ կենտրոնանում Սեգյութլու գյուղում: Այդ գյուղում կենտրոնացել էին ավելի քան 1000 թուրք զինյալներ, որոնց օգնության են գալիս Գետաբեկի թուրքերը [130]:

«Այդ գիւղում ժողովուած է լինում մօտ 180 տուն կամ 1000 հոգի: Կռւողները լաւ զինված... Սիօգիւտլուն գտնւում է Գէտաբէկի գործարանի մօտիկ, որտեղ կան բաւականաչափ թուրքեր: Վերջիններս մի ժամւայ ընթացքում կարող էին օգնութեան հասնել Սիօգիւտլուին...»[131]:

Հայկական մարտական ուժերը դեկտեմբերի 31-ին մոտենում եւ շրջապատում են Սեգյութլուն եւ 1906թ. հունվարի 1-ի լուսաբացին իրենց հրամանատարի՝ Մարտիրոս վարժապետի հրամանով չեփորից հնչեցրած առաջին իսկ ազդանշանով՝ հարձակվում են գյուղի վրա:

Թուրքերը թեւ այդ պահին այնքան էլ պատրաստ չեն եղել կազմակերպված դիմադրություն ցույց տալու, այնուամենայնիվ, դիրքեր են գրավում եւ անկանոն համազարկերով փորձում պաշտպանվել: Կռվում իրենց վճռորոշ խոսքն են ասել հայ մարտական ուժերի հրամանատարների փորձառությունն ու խիզախությունը:

Ներկայացնելով Սեգյութլուի կռվի մանրամասները՝ վերոհիշյալ վավերագրությունը նշում է. «Խմբապետ Մարտիրոսը քոչում է դիրքից դիրք, խրախուսում, քաջալերում տղերանց: Իր անձնական օրինակով, քաջությամբ ու րիսկով ոգեւորում, իր ետեւից տանում իր ռազմիկներին: Բէգլար Աւագեանը Ղազախ գիւղացի, վրեժի ծարավով բռնված, Պետրոս Ախալքալաքեցի, Ղասաբ Գրիգորը(վանեցի), Կարապետ Մելքոնեանը(վանեցի), Մակիչ Անաստասեանը(բանանցեցի) ու փիրեցի Համբարձում Թաւաքալեանը առանց յետ ու առաջ նայելու նետում են իրանց գիւղի մէջ, դուրս են քշում թուրքերին իրենց դիրքերից»[132]:

Որպեսզի հարձակումը ընթանար առավել դյուրին եւ ավատվեր հնարավորինս քիչ կորուստներով, հայկական կողմը ծրագրել էր գյուղի վրա հարձակումը իրականացնել տարբեր ուղղություններից՝ միաժամանակ տեղացող հարվածներով: Այն պահին, երբ Մարտիրոս վարժապետի առաջնորդած մարտախմբերը ներխուժում են Սեգյութլու, գյուղի վրա գրոհում է խմբապետ Վարդան Մշեցու գլխավորած շատ լավ զինված եւ քաջավարժ մարտախումբը: Հայկական մարտական ուժերն առանց մեծ ջանքեր գործադրելու ներխուժում են գյուղ: Կռիվը երկար չի շարունակվում: Թուրքերը ընդամենը մեկ ժամ դիմադրելուց հետո՝ լքում են իրենց բնակավայրն ու դիմում փախուստի:

Հայկական մարտախմբերը ամբողջովին գրավում են գյուղը եւ «...ընդամենը երեք ժամուայ ընթացքում Սիօզիւտլուն ոչնչանում է: Գիւղից դուրս են տանում ահագին աւար՝ մօտ 3000 ոչխար, 500 գլուխ տաւար, ձի ու ջորի ...Թուրքերից ընկնում են մօտ 100 հոգի, մնացածները փախչում են Գետաբէկ...Մինչ այդ մերոնք ոչ մի զոհ չեն տալիս»[133]:

Ընդությունն այդ օրը օգնել է թուրքերին: Եղանակը խիստ մառախլապատ է եղել եւ մառախուղը ինչ-որ չափով փակելով հայ մարտիկների տեսադաշտը՝ հնարավորություն է ընձեռել թուրքերին խուսափել իրենց վրա տեղացող գնդակներից ու առավել քիչ կորուստներով հեռանալ գյուղից:

Սեգյութլուի հաղթական մարտից հետո հակառակորդին վերջնականապես պարտության մատնելու վճռակամությամբ Գանձակի Զինվորական մարմինը որոշում է զարգացնել հարձակումը եւ գրոհել Գետաբեկի գործարանի եւ թուրքական մյուս հենակետերի վրա: Բայց այս անգամ նրանց ռուս հրամանատարության կողմից սպասվում էր տհաճ անակնկալ[134]:

Սեգյութլուից Գետաբեկ փախած թուրք հրոսակներն էին Ղազախ, Բաղա եւ Բարսում գյուղերի կոտորածների գլխավոր մեղսագործները: Հայ մարտիկները պիտի վրեժխնդիր լինեին եւ հիմնահատակ կործանեին Գետաբեկն ու այնտեղ պատսպարված հրոսակներին: Հայ մարտախմբերն անկասկած կնվաճեին հերթական հաղթանակը, եթե մարտադաշտում անսպասելիորեն չհայտնվեր ռուսական զորքը: Այն պահին, երբ հայ մարտական խմբերը մոտենում էին Գետաբեկին ու պատրաստվել գրոհելու, հանկարծ նկատում են հեծյալների , որոնք մեծ արագությամբ գալիս էին գյուղի ուղղությամբ: Հայ մարտիկները սկզբում կարծելով, որ դրանք Գետաբեկին օգնության շտապող թուրքական հեծելախմբեր էին, պատրաստվում են դիմագրավել հարձակվողներին : Սակայն մի փոքր անց պարզվում է, որ դրանք «...մեծ մասամբ ռուս դրագուներն են, թվով մօտ 150 հոգի կամ մի էսկադրոն: Նրանց հետ լինում են նաեւ թուրքեր Գետաբեկի գործարանից, նրայ շրջակայ թուրքաբնակ վայրերից»[135]:

Ռուս զինվորները, որոնց աջակցում են նաեւ թուրք զինյալները, համազարկեր տեղալով մոտենում են: Այս կռվում դարձյալ հայ մարտիկները չգրված օրենքի համաձայն չպատասխանելով ռուս զինվորների հարվածներին, կրակում են միայն թուրք զինյալների վրա: Օգտվելով իրենց նկատմամբ դրետրած «սիրալիր» վերաբերմունքից, ռուս զինվորներն աջակցում են թուրք զինյալներին եւ աշխատում պաշարման օղակի մեջ վերցնել հայ մարտիկներին: Եթե հակառակորդը կարողանար իրականացնել իր մտադրությունը, ապա հայ մարտիկները կհայտնվեին շրջապատման մեջ, անելանելի իրավիճակում: Հայ մարտախմբերի հրամանատար բազմափորձ Մարտիրոս վարժապետը իսկույն ըմբռնում է հակառակորդի. այս պարագայում ռուս հրամանատարության կիրառած մարտավարությունն ու կայացնում է միակ խելամիտ եւ փրկարար որոշումը:

Մարտիրոս վարժապետը հրամայում է «իր զինուորներին կուելով յետ նահանջել: Նահանջը կատարվում է մեծ վարպետութեամբ: Առիւծի պէս կուելով մերոնք դուրս են գալիս մարտադաշտից, ոչ մի զինուոր գերի չի ընկնում: Հետամուտ լինող ռուս դրագուներն ու նրանց բարեկամ թուրքերը ձեռնունայն են մնում»[136]:

Եթե նախորդ կռիվներում հայ մարտիկները նկատել էին ծանրակշիռ հաղթանակներ առանց զոհերի եւ նույնիսկ առանց վիրավորների, ապա այս անգամ ունենում են շատ ցավալի ու անփոխարինելի կորուստներ: Նահանջի ընթացքում հայ մարտիկներին կրնկակոխ հետապնդող ռուս զինվորների գնդակներից զոհվում են նախորդ կռիվներում իրենց քաջագործություններով աչքի ընկած Բեգլար Ավագյանն ու Պետրոս Ախալքալակցին, ծանր վիրավորվում են Մարտիրոս վարժապետը, բանանցեցի Մակիչ Անաստասյանը եւ բազմաթիվ այլ մարտիկներ:

Ներկայացնելով այդ կռվում ռուս զինվորների դրսեւորած քստմնելի, կարելի է ասել, հակահայ վերաբերմունքը՝ վավերագրությունը տալիս է հետեւյալ գնահատականը. «Երբ Բաղա ու Ղազախ գիւղերը թուրք բէկերն ու հրոսակները ոչնչացնում էին, երբ սրախողող էին անում Գետաբեկի հայերին, այն ժամանակ հայերին պաշտպանելու համար ռուս կառավարութիւնը զորք չունի...

Երբ հայերը գնացին առնելու թուրքերից աւերված հայ գիւղերի ու յոշոտված հայ մանուկների վրէժը, այն ժամանակ կարծես կախարդական ուժով գետնի տակից դրագունների ահարկու էսկադրոններ դուրս եկան թուրքերին պաշտպանելու համար: Եթէ զօրքը չգար ու չխանգարեր մեր տղերանց՝ Գետաբէկի գործարանում ու նրա շրջակայ լեռնավայրերում այլեւս թուրք ազգաբնակչութիւն չէր մնալ...»[137]:

Որպես վերոհիշյալ դեպքերի լուսաբանման եզրափակիչ եւ ընդհանրացնող խոսք ու գնահատական՝ վերոհիշյալ վավերագրությունը ընդգծում է. «Այդ նշանավոր գործը(նկատի ունի Թոփալ-Հասանլուի եւ Սեգյութլուի հաղթանակները-Հ.Գ.) իր աջողութեամբ պարտական է Դաշնակցութեան, նրա քաջ հայդուկներին, տեղացի կամավոր զինուորներին ու նրանց հրամանատար Մարտիրոս վարժապետին, որը գիտէ, իր աչք դրած նպատակին հասնել, գիտէ իր զինուորներին հաւատ ներշնչել դէպի գործը»[138]:

Խայտառակ պարտություն կրելով մի շարք կռիվներում, թուրք առաջնորդները որոշում են հարձակվել Գանձակ գավառի արեւմուտքում գտնվող թուրքական գյուղերով շրջապատված Նուգզար գյուղի վրա եւ

այն հիմնահատակ կործանել: Այդ գյուղը գրավելու նպատակով մարտադաշտում են հայտնվում նաեւ Սեյֆալլու եւ Շամխոր գետերի հովիտներում գտնվող թուրքական գյուղերի ավարառու ամբոխը:

1906 թ. հունվարի 6-ի առավոտյան ժամը 10-ին թուրք հրոսակախմբերը հարձակվում են Նուղդար գյուղի վրա: Բարեբախտաբար Գանձակի Զինվորական մարմնի հանձնարարությամբ այդ ժամանակ արդեն գյուղում էին գտնվում սակավաթիվ հայդուկներ, որոնք տեղի զինվորների հետ միասին կարողանում են հետ մղել հակառակորդի գրոհները եւ գյուղը զերծ պահել թուրքերի ներխուժումից: Սակայն Նուղդար գյուղի համար մղվող կռիվը դրանով չի ավարտվում: Թուրք առաջնորդները համալրում են իրենց մարտական ուժերի շարքերը, եւ Գանձակ նահանգում հայտնի ավազակապետ Դալի-Ալիի գլխավորությամբ 3000 հոգուց բաղկացած հրոսակախմբերը հունվարի 10-ին դարձյալ հարձակվում են Նուղդար գյուղի վրա: Բացի Դալի-Ալիից՝ թուրք պարագլուխներից հրոսակախմբերին առաջնորդել են նաեւ Սուլեյման Շամխորսկին ու Գետաբեկի պրիստավ Մուսեիբը: Թեպետ այս անգամ թուրքերի մարտական ուժերը ավել բազմամարդ էին ու կազմակերպված, այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում ընկճել Նուղգարի պաշտպանների դիմադրությունն ու ներխուժել գյուղ:

Անհաջողությունից կատաղած Սուլեյման Շամխորսկին կռվի ժամանակ անընդհատ գոռացել է. «Նուգգարը իր տոհմին է եղել պատկանելիս ու այսուհետեւ պէտք է ինձ պատկանի: Ես պէտք է սրբեմ գետնի երեսից Նուգգարը եւ կարտօֆիլ սերմեմ: Վայրագ բէկը, ի հարկէ, չի հասնում: Թուրքերը փառատր ջարդ են ուտում ու յետ նահանջում ամենախայտառակ կերպով: Աւարի համար բերած ֆուրգոնները լցնում են իրենց սպանվածներով ու վիրաւորներով եւ գլխիկոր յետ դառնում»[139]:

Մ. Վարանդյանի գնահատմամբ տեղի է ունեցել մի ճակատամարտ, որը տեւել է առավոտյան ժամը 5-ից մինչեւ 11-ը: Թեպետ թուրք հրոսակախմբերը Դալի Ալիի գլխավորությամբ համառորեն մի քանի գրոհներ ձեռնարկելով փորձել են կոտրել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել գյուղ,, սակայն Նուղդարի պաշտպանները կարողացել են անկոտրում պաշտպանությամբ ամրակուռ պաշտպանել իրենց դիրքերը [140]:

Գանձակի Զինվորական մարմնի որոշմամբ հայ մարտական ուժերը թուրքերին մեկ այլ հարված են հասցնում նաեւ Գանձակի գավառի արեւմտյան մասում, Արցախ աշխարհի պատմական Գյուլիստան գավա-

ռում: Մինչ այդ Գյուլիստանի տարածքում հայ եւ մահմեդական բնակչության միջեւ բեժ բախումներ են տեղի ունեցել հատկապես Մոավ եւ Քեափազ լեռների ստորոտներից սկիզբ առնող Ղարա-Չայ(Սեւ-Գետ) եւ Քյուրակ-Չայ գետերի հովիտներում ու ինչպես միշտ, նախահարձակը դարձյալ թուրքերն են եղել:

Գյուլիստանի Ղարա-Չայ հովտում գտնվող հայկական Վերին եւ Ներքին, Խարխապուտ, Պարիս, Մանասբեկ, Ղաբրիքենդ եւ Աղջաղալա գյուղերի վրա թուրքերը փոքր ծավալի մասնակի հարձակումներ են գործել դեռեւս ամռան վերջերին, քոչը սարից իջեցնելու ժամանակ: Թուրք հրոսակները հնարավորության դեպքում առիթը բաց չեն թողել սպանելու ու թալանելու իրենց ձեռքն ընկած այդ գյուղերի բնակիչներին [141]:

Նույն ժամանակահատվածում հայ եւ մահմեդական բնակչության միջեւ ավելի ուժգին բախումներ են տեղի ունեցել Քյուրակ-Չայ գետի հովտում: Քյուրակ-Չայ գետի մեջ թափվող Էրքեջ գետակի վրա գտնվում են Բուզլուխ, Մանաշիդ եւ Էրքեջ գյուղերը:

Ընդհարումների ժամանակ հատկապես ծանրագույն իրավիճակում են հայտնվել Քյուրակ-Չայ գետի ստորին հովտում գտնվող հայկական Ղարադաղլու, Խոյլար եւ Սարով գյուղերը, որոնք կտրված լինելով հայկական գյուղերից ու շրջապատված լինելով թուրքական բնակավայրերով, փաստորեն հայտնվել էին շրջապատման մեջ:

Վերոհիշյալ գյուղերի բնակիչները շատ թույլ էին զինված ու բացարձակապես պատրաստ չէին ինքնապաշտպանության: Տեղիք տալով հարեւան թուրքական գյուղերի բնակիչների կողմից իրենց նկատմամբ պարբերաբար կրկնվող բռնություններին ու սպանություններին, նրանք թողնում են իրենց բնակավայրերն ու տեղափոխվում այդ շրջանի ամենամեծ՝ 6-700 տնտեսություն ունեցող Գետաշեն գյուղը: Սակայն, դեռեւս Գետաշեն չհասած, Չայլար գյուղի մերձակայքում հարձակման են ենթարկվում թուրքերի կողմից: Բարեբախտաբար հարձակման ենթարկվածներին ժամանակին օգնության են հասնում Գետաշենի մարտական ուժերը, որոնց պաշտպանությամբ գյուղացիների բազմությունը կարողանում է անկորուստ հասնել Գետաշեն:

Թուրքերը կողոպտում են գյուղի մինչեւ վերջին ունեցվածքը, ապա հրդեհում հայերի տները:

Ըստ Ա-Դ-ի «Այդ երեք գիւղերի կորուստը՝ հաշուած ընդամենը 150 տուն, իւրաքանչիւրը տան վնասը շէնքերի եւ մթերքների համար միա-

սին վերցրած 5-6000 ր., կը լիներ ոչ պակաս 70-80.000 րուբ., դեռ չը հաշուած այն կորուստները, որ նրանք կրել էին եւ մինչեւ այժմ էլ կրում են դաշտերի անմշակ մնալուց »[142]:

Բացի վերոհիշյալ գյուղերից, թուրքերի հարձակման ու ավարառության թիրախն են դարձել եւս մի քանի հայկական գյուղեր, որոնց կորուստը կազմում է «1. Ֆրիդոնովի շքեղ ջրաղացն իր շինութիւններով, որի վնասը հասնում էր 40-50.000 րուբլու, 2. Առաքելեանի կալւածքը-20դեսեատին այգին իր շինութիւններով եւ 600 դեսեատին վարելահողը-կրելով 70-80.000 րուբլու վնաս եւ 3. Ղորղանեանի կալւածքը-50 դեսեատին այգին, շքեղ տունն իր շքեղ կահաւորութեամբ, պահեստները 12.000 վեդրօ հին եւ նոր տեսակի գինիներով եւ 250 դեսեատին վարելահողը-ունենալով 150.000 րուբլու կորուստ»[143]:

Բերված տվյալները վկայում են, որ հայ գյուղացիները ընդհարումների սկզբնական շրջանում կրել են նյութական հսկայական կորուստներ: Բայց այդ կորուստները կարող էին չլինել, եթե հայ բնակչությունը իր կարողությունների գեթ փոքրագույն մասը տրամադրեր զենք ու զինամթերք գնելուն, զինվեր եւ կազմակերպեր իր բնակավայրի ինքնապաշտպանությունը:

Գանձակ քաղաքի կոտորածից հետո թուրքերն ավելի են ուժեղացնում իրենց գործողությունները եւ Գետաշենն ու հայկական մյուս գյուղերը մեկուսանալով, փաստորեն զրկվում են միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորությունից: Մասնավ., դեկտեմբերի 10-12-ին Չայլարի թուրքերը երկու անգամ հարձակվում են հայկական Աբլաի գյուղի սահմանների վրա եւ չհանդիպելով դիմադրության՝ առաջին անգամ տանում են 85, երկրորդ անգամ՝ 100 գլուխ տավար:

Այդ դեպքերից հետո թուրքական կողմը հայերի բնակավայրերը, մասնավորապես Գետաշեն, Բուզլուխ, Մանաշիդ եւ Էրքեջ գյուղերը իսպառ կործանելու ու նրանց հարստությունը բռնագրավելու նպատակադրությամբ պատրաստվում է ավելի լայնածավալ հարձակումների, բայց այդ տարածաշրջանում իրադարձությունները զարգանում են բոլորովին այլ ուղղվածությամբ:

Քանի որ մինչ այդ հայկական կողմը շատ թույլ էր իրեն դրսեւորել, ուստի թուրքերն ավելի քան վստահ են եղել, որ այդ շրջանում հայերը ոչ մի հնարավորություն չունեն դիմելու հարձակողական գործողությունների: Անհրաժեշտ էր օգտագործել թուրքերի համանման վերաբերմունքը, այն է

չափից դուրս ունեցած ինքնավստահությունն ու գոռոզամտությունը եւ անսպասելի ու վճռական հարված հասցնել Գյուլիստանի շրջանի թուրքական բնակավայրերին:

Գանձակի նահանգում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակ Գյուլիստանի տարածքում արդյունավետ հարձակողական գործողություններ կենսագործելու համար Գանձակի Զինվորական մարմինը, իր տրամադրության տակ դեռեւս չուներ անհրաժեշտ քանակությամբ պատրաստի մարտական ուժեր: Բայց չափազանց կարեւոր էր արմատական բեկում մտցնել նաեւ այդ տարաշրջանում ընթացող ընդհարումներում եւ վճռական հարված հասցնելով թշնամուն՝ ապահովել հայ բնակչության անվտանգությունն ու ունեցվածքը:

Նախորդ կռիվների փորձը միանշանակ ապացուցել էր, որ կարելի էր ակնկալել հաջողություն, եթե վտանգված շրջանը ուղարկեին թեկուզեւ փոքրաքանակ, բայց փորձառու եւ ժողովրդի ու զինվորների շրջանում արժանի հեղինակություն վայելող մարտական ուժեր:

Գանձակի Զինվորական մարմնի եւ անձամբ ընդհանուր հրամանատար Համազասպի որոշմամբ այդ չափազանց կարեւոր առաջադրանքը հանձնարարվում է նախորդ կռիվներում իրենց հրաշալիորեն դրսեւորած, Ղարաբաղի հերոս զավակ Ալեքսան Բալասյանին, որի գլխավորած ընդամենը 20 քաջավարժ մարտիկներից բաղկացած մարտական խումբը դեկտեմբերի սկզբներին Գանձակից մեկնում է Գետաշեն: Մարտախմբի կազմում Գետաշեն է մեկնել նշանավոր Բաղչին, վավերագրության բնութագրմամբ «...անւեհեր հրոսակապետ Բաղչին, մեր գինուորների ու մեր նահանգի հայ ժողովրդի սակաւաթիւ պարծանքներից մինը...»:

Քանի որ թուրքերը յուրաքանչյուր պահի կարող էին հարձակվել Գանձակի վրա, այդ պատճառով Համազասպը մնում է քաղաքում:

Գետաշենում նրանց են միանում տեղացի եւ շրջակա գյուղերի զինավարժ երտասարդներ եւ Ալեքսան Բալասյանի ու Բաղչիի գլխավորած մարտական խումբը ունենում է 240 մարտիկներ:

Հակառակորդին պարտության մատնելու համար նախեւառաջ հարկավոր էր ճիշտ ընտրել հարձակման հարմար կետը եւ անսպասելի ու սրընթաց հարված հասցնել:

Հայկական գյուղերի վրա ձեռնարկած ավազակային հարձակումներով մինչ այդ առավելապես աչքի էին ընկել հատկապես Չայլար, Սարիսու, Թոդան, Դարդարան եւ Դոզիլար գյուղերը: Հայ մարտական ուժերի հրամանատարությունը, որպես հարվածի առավել հարմար կետ ընտրում է Գետաշենի հյուսիսում գտնվող 60 տնից բաղկացած ամենաավազակաբարո՝ Չայլար գյուղը:

Այդ գյուղի ընտրությունը պատահական չէր, այն «...հարուստ գիղ է, ունի պտղաբեր հողեր, ընդարձակ, խոտավետ արոտավայրեր, պարապում է երկրագործութեամբ ու անասնապահութեամբ մեծ մասամբ: Նոյեմբերի 19-ից յետոյ Չայլար է ժողովվում շրջակա մի քանի թուրք գիւղերի ազգաբնակչութիւնը: Դեկտեմբեր սկզբներին Չայլարում լինում է ադեն մօտ 200 տուն ժողովուրդ, թուվ մօտ 1200 հոգի, որոնց մէջ կուտղներ լինում են մօտ 300-350 հոգի»[144]:

Հայ մարտական ուժերը թեեւ զուտ քանակական ու նաեւ զինվածության առումով զգալիորեն զիջել են հակառակորդին, բայց դա բոլորովին չի խոչընդոտել նրանց գերազանց կատարելու առաջադրանքը:

Դեկտեմբերի 15-ի լուսաբացին հայ մարտական ուժերը Ալեքսան Բալասյանի ու Բախշիի առաջնորդությամբ հարձակվում են Չայլարի վրա: Հարձակման սկզբում հայկական կողմը թույլ է տվել մարտավարական որոշ վրիպումներ: Հակառակորդին վճռական պարտության մատնելու եւ հնարավորինս շատ զոհեր պատճառելու համար պիտի Չայլարը շրջապատվեր բոլոր կողմերից, ամբողջովին: Բայց գյուղի աննպաստ աշխարհագրական դիրքի եւ տեղացի վալադների անբավարար փորձառության եւ թույլ տված սխալների պատճառով դեպի Կուր գետը ձգվող տարածքում մի երկու տեղ բաց է մնում, որից հետագայում, գյուղից փախչելու ժամանակ օգտվում են թուրքերը: Մինչ հայ մարտիկների մի մասը աշխատում էր գտնել ու փակել դեպի գյուղ տանող ուղիները, քաջավարժ հայդուկների ու տեղացի զինվորների մարտախումբն Ալեքսան Բալասյանի ու Բախշիի առաջնորդությամբ սրընթաց ներխուժում է գյուղ եւ անկասելի հարվածներով արագորեն գրավում թուրքերի պաշտպանական դիրքերի մեծ մասը:

Թուրքերը կարողանում են ընդամենը 40 րոպե դիմադրել եւ անկարող լինելով հայ մարտիկների գրոհներին, սարսափահար փախչում են գյուղից: Չայլարի գյուղացիներին հաջողվում է փախչել շնորհիվ այն հանգամանքի, որ բաց էին մնացել գյուղից դեպի տափարկը տանող ուղիները:

Հայ մարտիկները գրավում են գյուղը եւ բռնագրաված տավարը տանում են Գետաշեն: Գյուղի գրավմամբ հայ մարտիկները սխալմամբ կար-

ծել են, որ դրանով ամեն ինչ վերջացած է եւ իրենց այլեւս ոչ մի վտանգ չի սպառնում: Հանկարծ մարտադաշտում հայտնվում են Չայլարին օգնություն շտապող մի քանի հարյուր զինյալներից բաղկացած ու շատ լավ զինված թուրքական հրոսակախմբերը: Հայ մարտիկները հայտնվում են ծանրագույն իրավիճակում, քանի որ նրանք ցրված էին մի քանի կետերում, այսինքն կենտրոնացված չէին, իսկ մի մասն էլ զբաղված էր բռնագրաված տավարը եւ այլ իրերը Գետաշեն տեղափոխելու գործով:

Չնայած լուրջ դժվարություններին, այնուամենայնիվ, Ալեքսան Բալասյանն ու Բախշին եւ նրանց առաջնորդած մարտիկները դույզն-ինչ խուճապի չեն մատնվում եւ սառնասրտորեն ընդունում են մարտադաշտում հայտնված թուրք հրոսակախբերի մարտահրավերը:

Թուրք զինյալների գրոհները որեւէ արդյունք չեն տալիս: Հայ մարտիկները իրենց քաջագուն հրամանատարների առաջնորդությամբ ոչ միայն կարողանում են դիմակայել հակառակորդի գրոհներին, այլեւ մարտից դուրս են գալիս հաղթանակած: Բայց այդ օրը հայկական կողմը հաղթանակը ևվաճում է ուժերի գերազույն լարումով եւ շատ մեծ զոհողության գնով: Ջոհվում է «Խաչէնի մեծահռչակ հրոսակապետ, Խաչէնի ադիւծ Բաղշին...Բաղշին կռւում է առիւծի պէս, այնպէս, ինչպէս վայել էր Բաղշուն: Կռւում էր առանց մի քայլ յետ նահանջելու...Կեանքի վերջի րոպէում հրացանը նետում է իր ընկերներին, կարողանում է արտասանել միայն՝ «ազատիր հրացանս»[145]:

Չայլարի կռվում, բացի Բաղշիից, զոհվում են նախորդ մարտերում իրենց քաջաբար դրսեւորած եւս մի քանի մարտիկներ: Այսուհանդերձ, չնայած այն իրողությանը, որ այդ կռվում հայկական կողմը թեեւ ունեցել է շատ ցավալի ու շոշոփելի կորուստներ, բայց Չայլարի գործողությունը կարելի է գնահատել հաջողված, քանի որ վերացվեց հայ գյուղերի համար չարիք համարվող, թուրք հրոսակախմբերի հավաքատեղիի վերածված գյուղը:

Չայլարի դժվարագույն, բայց հաղթական կռվից հետո հայ մարտական ուժերը Ալեքսան Բալասյանի գլխավորությամբ շարունակում են թուրքական բնակավայրերի վրա ծրագրած հարձակումները եւ տանում են մի շարք հաղթանակներ: Մարտերում Ալեքսան Բալասյանի, զոհված Բաղշիի ու մյուսների հերոսական կերպարը մեծ ոգեւորություն է առաջացրել: Գյուլիստանի մի շարք հայկական գյուղերում կազմակերպվել են մարտական խմբեր: Հայ-թուրքական ընդհարումներում տեղի է ունեցել արմատական բեկում:

Հայ ինքնապաշտպանական ուժերի գործողությունների հետեւանքով «Գետաշէնի ու շրջակայ հայ գիւղերի դաշնակցական կամաւոր գինւորների ձեռքով ոչնչացած են հետեւյալ թուրքական գիւղերը՝ Մօլա-Ջալու, Դօզիկար, Սարատ, Թեօղան ու Հաջի- Միամեանդու: Բուզլուխ հայ գիւղի՝ նրա շրջակայ միւս հայաբնակ գիւղերի գինւորները ոչնչացրել են՝ Բարուդաղ, Ակի-Ուչաղի, Բայրամլու ու Եենգջա թուրքական գիւղերը: Էրքեջ հայ գիւղի գինւորները ոչնչացրել են Գիւրգարլար գիւղը: Ամեն տեղ, որտեղ կառավարութիւնը զօրքերը չեն խանգարել մեր գինւորներին ու վերջիններս հնարաւորութիւն են ունեցել թուրքերի դէմ ազատ գործելու՝ չնայած մեր հակառակորդների գերազանց թիւն, մեր տղերքը միշտ յաղթող են հանդիսացել ու միշտ էլ աննշան թով զոհեր են տուել իրանցից»[146]:

Թոփալ-Հասանլուի եւ նրա սահմանամերձ Դարաբեկլու եւ Քարաեաթաղ գյուղերի եւ հատկապես Սեգյութլուի, ինչպես նաեւ Նուգզարի եւ Գյուլիստանի շրջանում ձևվաճած հաղթական մարտերը մեծ նշանակություն ունեցան ոչ միայն այն պատճառով, որ ոգեշնչեցին, մարտական ոգի ներարկեցին գավառի ու քաղաքի հայ բնակչությանն եւ բարձրացրեցին նրա մարտնչելու տրամադրվածությունը, այլեւ զգալի տպավորություն գործեցին թուրքերի վրա: Նրանք տեսան ու համոզվեցին, որ այսուհետեւ այլեւս հնարավոր չէ անպատիժ կերպով ոտնձգություններ կատարել հայ բնակչության ձևատմամբ: Վերոհիշյալ հաղթական մարտերից հետո թուրք հրոսակախմբերը, երկյուղելով հայ մարտական ուժերի պատասխան հակահարվածներից, դադարեցնում են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկվող հարձակումները:

Գանձակի գավառում տեղի ունեցած կռիվների ուսումնասիրությունը հստակորեն մատնանշում է, որ թուրքերը կարողացել են խուսափել ջախջախումից շնորհիվ ռուսական զորքի միջամտության: Արդեն որեւէ գաղտնիք լինել չէր կարող, որ կռիվների հետագա շարունակման դեպքում թուրքական հրոսակախմբերն անկասկած կջախջախվեին, եւ հայ մարտախմբերը կարող էին գավառն ամբողջովին մաքրել թուրք բնակչությունից: Դեպքերի նման զարգացումը ցարիզմի ծրագրերից բացարձակապես դուրս էր: Այդ պատճառով ամենաճակատագրական պահին ռուսական զորամասերը հայտնվել են մարտադաշտում եւ օգնել թուրքերին՝ փրկվելու վերջնական ջախջախումից:

Ավելին, իշխանությունների հրահանգով նահանգում հայտնվում են պատժիչ զորամասեր, որոնք փորձում են, անգամ բնդհանրների կրակի

սպառնալիքով, զինաթափել Գանձակ քաղաքի ու գավառի հայ ինքնապաշտպանական մարտախմբերին: Զուգահեռաբար, համանման գործողություններ նրանք իրականացրել են նաեւ նահանգի մյուս գավառներում, իհարկե, առաջին հերթին Ջանգեզուրում եւ Ղարաբաղում:

Ընդհարումների ընթացքում Գանձակի նահանգի ինքնապաշտպանական ուժերը հիմնականում Դաշնակցության ջանքերով ստացել էին զգալի քանակությամբ զենք ու զինամթերք: Կարելի է ասել, որ ինչ-որ չափով լուծվել էր նահանգի հայ բնակչությանը զինելու խնդիրը: Քանի որ իշխանությունները պատժիչ զորամասերի միջոցով ձգտում էին զինաթափել հայ բնակչությանը, ուստի ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի ու Զինվորական մարմնի առաջնահերթ խնդիրն էր թույլ չտալ, որպեսզի իշխանությունները բռնագրավեին մեծ դժվարությամբ ձեռք բերած զենքն ու զինամթերքը:

Ի՞նչ պիտի արվեր:

Գանձակի ՀՅԴ կոմիտեի կազմած տեղակագրի «Զենքի պահեստները» բաժնում տեղ գտած տեղեկություններից պարզվում է, որ Գանձակում ՀՅԴ Արեւելյան բյուրոյի ներկայացուցիչ Սբր. Գյուլխանդանյանը այդ խնդիրը լուծելու համար, 1906 թ. աշնանը տեղական մի քանի ընկերների գործակցութեամբ վստահելի անհատների տներում գաղտնի պահեստներ է շինել տալիս եւ զենքն ու զինամթերքը տեղափոխում ու թաքցնում է այդ նույն պահեստներում [147]:

Նույն տեղեկագրի վկայությամբ «Դիւրին գործ չէր մի քանի հարիւրի հասնող հրացաններն ու ատրճանակները, ինչպէս նաեւ տասնեակ հազարաւոր փամփուշտներ տեղափոխելը, այլ էլ հալածանքի մղձաւանջի տակ ապրող ժողովրդի մօտ»[148]:

Չկարողանալով հայտնաբերել հայերի զենքի պահեստները, նահանգի ոստիկանությունը հետեւողականորեն շարունակում է որոնումներն ու խուզարկությունները: Զենքի պահեստների անվտանգության ապահովումը հանձնարարված էր ՀՅԴ տեղական կոմիտեի անդամ Մանվել Ենգիբարյանին, որը մի քանի վստահելի ընկերների համագործակցությամբ, թեեւ մեծագույն դժվարությամբ, այնուամենայնիվ, կարողացել է կատարել կուսակցության անչափ պատասխանատու հանձնարարությունը:

«...ցարական ոստիկանութիւնը,-նշում է «Տեղեկագիրը»,- չկարողացաւ մեր պահեստների տեղը գտնել: Անտանգ անցաւ նաեւ յաճախակի զենքի տեղափոխութիւնները, որ ստիպուած էինք կատարել տան տէրերի

պահանջմամբ եւ կամ մենք գտնելով աւելի յարմար պահեստներ եւ զենքերը տեղափոխելով, տեղատրում էինք նոր պահեստներում»[149]:

Ի՞նչ եղան պահեստավորած զենքերը: Այդ նույն «Տեղեկագիր»-ի հավաստմամբ պահեստավորած զենքերի մի մասը, համապատասխան քանակության փափուշտներով 1908 թ. տեղափոխվել է Երեւան, իսկ 1912 թ. աշնանը՝ Վան: Գանձակի ՀՅԴ կոմիտեն իր տրամադրության տակ թողել է ընդամենը «...հարիւր ընտիր հրացաններ եւ ատրճանակներ ու որոշ քանակութեամբ փամփուշտներ: Այս զէնքերը շատ լաւ վիճակի մէջ կարելի եղաւ անտանգ պահել մինչեւ 1917թ. աշնանը եւ առանձին դաշնակցական խմբով մասնակցել 1917-18թթ. Գանձակի հայթաթարական կռիւներին: 1918 թ. յունիսին տաճկական զօրքը Գանձակը գրաւելուց յետոյ մեր այդ զէնքերը, ինչպէս եւ ժողովրդի սեփական զէնքերը չքացան բոլշեւիկների տիրապետութեան հետեւանքով»[150]:

Ընդհանրացնելով Գանձակ քաղաքում ու գավառում 1905-1906 թթ. տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների արդյունքները, կարելի է վստահաբար ասել, որ հայ ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունների հարկադրանքով թուրքական կողմը պարզում է սպիտակ դրոշը եւ իշխանությունների աջակցությամբ դիմում հաշտության:

---

1. ՀՅԴ ԿԱ, թծ. 404, գ. 10, էջ3:
2. Նույն տեղում:
3. Տե՛ս «Кавказский календарь на 1907 год », Тифлис, :
4. ՀՅԴ ԿԱ, թծ. 404, գ. 10, էջ 3:
5. Տե՛ս Նույնը, էջ 4:
6. Տե՛ս Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 143:
7. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 321:
8. Տե՛ս. ՀՅԴ ԿԱ, թծ. 404, գ. 10, էջ 4:
9. ՀԱԱ, ֆ .227, ց. 1, գ. 395, թ. 136:
10. Նույն տեղում, ֆ. 150, ց. 1 ,գ. 4, էջ 6:
11. ՀՅԴ ԿԱ, թծ. 394, գ. 1, էջ 6:
12. Նույն տեղում
13. Ռոստոմ, Բելգրութ. 1979, էջ 240:
14. Նիւթեր, հ. Բ, էջ 23:
15. ՀՅԴ ԿԱ, թծ. 394, գ. 1, էջ 6:
16. Տե՛ս Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 308:
17. ՀՅԴ ԿԱ, թծ. 394, գ. 1, էջ 7:
18. Նույն տեղում, էջ10:
19. Նույն տեղում, թծ. 393, գ. 6, 7, 8:

20. Տե՛ս Նույն տեղում, թԴ. 396, գ. 3, էջ 2:
21. Նույն տեղում:
22. «Արշալոյս», 1905, սեպտեմբերի 11:
23. Նույն տեղում:
24. Տե՛ս «Արշալոյս», 1905, նոյեմբերի 11:
25. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԴ. 393, գ. 6, 7,8:
26. Նույն տեղում, թԴ.394, գ. 1, էջ 10:
27. Նույն տեղում:
28. Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:
29. «Հայրենիք», ամս., 1938, թիւ 2, էջ 121:
30. Տե՛ս նույն տեղում, էջ122:
31. Նույն տեղում:
32. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԴ. 394, գ. 1, էջ 11
33. Նույն տեղում:
34. «Հայրենիք», ամս., 1938, թիւ2, էջ12-13:
35. ՀՅԴ ԿԱ, թԴ. 394, գ.2, էջ17:
36. Տե՛ս նույն տեղում, էջ18:
37. Տե՛ս «Ռոստոմ», Պէյրութ, 1999, էջ 398:
38. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԴ. 394, գ. 2, էջ 11:
39. Նույն տեղում:
40. Նույնը, էջ 11-12:
41. Տե՛ս, ՀՅԴ ԿԱ, թԴ.392, գ. 20, էջ 3:
42. Նույն տեղում, գ. 9:
43. Նույն տեղում, գ. 20, էջ 3:
44. Նույն տեղում, էջ 4:
45.Նույն տեղում:
46. Նույն տեղում, թԴ. 395, գ. 1, էջ 1:
47. Նույն տեղում:
48. ՀՅԴ ԿԱ, թԴ. 392, գ. 20, էջ 4:
49. Նույն տեղում, էջ 4:
50. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԴ. 393, գ. 6, 7, 8:
51. Մ. Վարանդեան, . Ազգ. աշխ., էջ 348
52. ՀՅԴ ԿԱ, թԴ. 395, գ. 1, էջ 1:
53. Նույն տեղում, էջ 2:
54. Նույն տեղում:
55. Նույն տեղում:
56. ՀՅԴ ԿԱ, թԴ. 392, գ. 20, էջ 6:
57. Նույն տեղում:
58. Տե՛ս, նույն տեղում, է:
59. Նույն տեղում:
60. Նույն տեղում, էջ 2:
61. Նույն տեղում:
62. Նույն տեղում, էջ 8:
63. Նույն տեղում, էջ 9:
64. Նույն տեղում:

65. Նույն տեղում:
66. Նույն տեղում:
67. Նույն տեղում, էջ 2:
68. Նույն տեղում, գ 2, էջ 4:
69. «Դրօշակ», 1906, թիւ 1, էջ 10:
70. ՀՅԴ ԿԱ, թԴ.392, գ. 2, էջ 10:
71. Նույն տեղում, էջ 13:
72. Նույն տեղում:
73. Մ. Վարանդեան, Ազգ. աշխ., էջ 348:
74. «Մշակ», 1905, նոյեմբերի 30:
75. Տե՛ս «Նոր Դար», 1905, օրաթերթ, Թիֆլիս, նոյեմբերի 30:
76.. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թԴ. 394, գ. 2, էջ15:
77. Տե՛ս Ալ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակարանը», էջ 79:
78. Նույն տեղում:
79. Տե՛ս նույն տեղում:
80. Նույն տեղում, էջ 80:
81. Նույն տեղում:
82. ՀՅԴ ԿԱ, թԴ. 393, գ. 2, էջ 6:
83. Տե՛ս նույն տեղում:
84. Տե՛ս Ռոստոմ, Նամականի, էջ 398:
85. ՀՅԴ ԿԱ, թԴ. 393, գ. 2, էջ 4:
86. Նույն տեղում, էջ 7:
87. Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:
88. Տե՛ս նույն տեղում, էջ 8:
89. Նույն տեղում:
90. Տե՛ս նույն տեղում, էջ 9:
91. Նույն տեղում, գ. 2, էջ 10:
92. ՀՅԴ ԿԱ, թԴ. 392, գ. 2, էջ 8-9:
93. Նույն տեղում, էջ15:
94. Նույն տեղում:
95. Նույն տեղում, էջ 15-16:
96. ՀՅԴ ԿԱ, թԴ. 394, գ. 2, էջ 15:
97. Տե՛ս նույն տեղում:
98. Մ. Վարանդեան, Ազգ. աշխ., էջ 348:
99. ՀՅԴ ԿԱ, թԴ. 394, գ. 2, էջ 15:
100. Նույն տեղում, թԴ.395 գ. 1, էջ 8:
101. Նույն տեղում:
102. Նույն տեղում, էջ 9:
103. Նույն տեղում:
104 Նույն տեղում:
105. Նույն տեղում, էջ 10:
106. Նույն տեղում:
107. Նույն տեղում, էջ 12:
108. Նույն տեղում:
109 Նույն տեղում:

110. Ա-Դ-Օ, նշվ. աշխ., էջ 343:
111. Տես նույն տեղում:
112. Ալ Խատիսեան, նշվ. աշխ., էջ 81:
113. Ա-Դ-Օ, նշվ. աշխ., էջ 343:
114. Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 395, գ. 1, էջ 13:
115. Նույն տեղում:
116. Ա-Դ-Օ, նշվ. աշխ., էջ 346:
117. ՀՅԴ ԿԱ, թծ. 395, գ. 1, էջ 14:
118. Նույն տեղում:
119. Նույն տեղում:
120. Նույն տեղում, էջ 15:
121. Նույն տեղում:
122. Նույն տեղում, էջ 16:
123. Նույն տեղում, էջ 17:
123. Նույն տեղում:
124. Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 395, գ. 1, էջ 17-18:
125. Տես նույն տեղում, գ. 5, էջ 23 :
126. Նույն տեղում, էջ 23:
127. Նույն տեղում:
128. «Դրօշակ», 1906, թիւ 1, էջ 10:
129. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 352:
130. ՀՅԴ ԿԱ, թծ. 395, գ. 5, էջ 25:
131. Նույն տեղում:
132. Նույն տեղում:
133. Նույն տեղում:
134. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 353:
135. ՀՅԴ ԿԱ, թծ. 395, գ. 5, էջ 26:
136. Նույն տեղում:
137. Նույն տեղում, էջ 27:
138. Նույն տեղում:
139. Նույն տեղում, էջ 28:
140. Տես Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ353:
141. Տես Ա-Դ-Օ, նշվ. աշխ., էջ 327-328:
142. Նույն տեղում, էջ 332
143. Նույն տեղում:
144. ՀՅԴ ԿԱ, թծ. 395, գ. 5, էջ 18:
145. Նույն տեղում, էջ 20:
146. Նույն տեղում, էջ 28:
147. ՀՅԴ ԿԱ, թծ. 394, գ. 2, էջ 15:
148. Նույն տեղում:
149. Նույն տեղում, էջ 16:
150. Նույն տեղում:

2.7. ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Ջանգեզուրը, բեպետ մասն էր կազմում Գանձակի նահանգի, բայց կազմակերպական առումով ընգրկվում է Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ գործող Երեւանի նահանգի ինքնապաշտպանական շրջանի կազմում: Ջանգեզուրը Դումանի գլխավորած ինքնապաշտպանական շրջանի մաս կազմող մյուս բնակավայրերի համեմատ ամենաընդարձակն էր: Գավառում մեծ թիվ էր կազմում մահմեդական բնակչությունը, որը մարտական առումով քուրք բեկերի գլխավորությամբ վաղօրոք շատ լավ կազմակերպված էր ու զինված: Այդ պատճառով Ջանգեզուրի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու եւ առաջնորդելու համար անհրաժեշտ էին առավել կարող, ազատագրական պայքարում նշանակալի կշիռ ու հեղինակություն ունեցող անվանի գործիչներ:

Այդ օրերին նոր-նոր կազմակերպվող մարտական խմբերի հրամանատարների կազմում էր նաեւ Սեբաստացի Մուրադը եւ նրա անբաժան զինակիցներ Կայծակ Առաքելի, Գյումուշխանի Ավոն եւ Մեչեդի Ավետիսը: Նկատի ունենալով ազատագրական պայքարի գործիչների շրջանում Սեբաստացի Մուրադի ունեցած հեղինակությունն ու բազմաթիվ կռիվներում ձեռք բերած փորձառությունը՝ Նիկոլ Դումանը նրան է հանձնարարում Ջանգեզուրի ինքնապաշտպանության հրամանատարությունը, որի մասին ՀՅԴ Արեւելյան Բյուրոյին հայտնում է 1905 թ. հունիսի 30-ին թվագրած նամակում. «...Ռաշիտին» յետ կանչեցի: Հրահանգ տուի, որ Մուրատը իր խմբով միանայ Ռաշիտի խմբին եւ ընդհանուր հրամանատարութիւնը վերցնի իր վրայ...»[1]:

Նիկոլ Դումանն անշուշտ տեղյակ էր Գանձակի շրջանում ՀՅԴ Արեւելյան բյուրոյի կողմից Գանձակի նահանգում լիազոր նշանակված Ռաշիդի եւ Արամայիս Ազնավուրյանի հետ կապված անցանկալի, իսկ տվյալ իրավիճակում վնասակար միջադեպին եւ այդ նշանակով, ինչը միշտանակ ապացուցեց ժամանակը, կատարում է խիստ օգտակար եւ շատ ճիշտ քայլ:

Իր հուշերում անդրադառնալով Զանգեզուրի հայության համար հիրավի կարեւորագույն նշանակություն ունեցող, պատմական այդ պահի հիշատակմանը՝ Մելիք-Թանգյանը նշում է. «Մի օր, Գորիսում սեմեակումս նստած, աչքերս յառած պատուհանին նայում եմ փողոցը, տեսնում եմ մի ծիաւոր, յետեւին կապած խուրջին, կամացուկ իջաւ քարուանասարայ: Ապա երեւաց երկրորդ ծիաւորը նրա ետեւից, յետոյ մի երրորդը: Այդ րոպէին հասաւ նաեւ Տաթեւի վանքի մեր սուրհանդակը եւ ասաց, որ անմիջապէս ճանապարհեմ դեպի վանքը, որտեղ մարդիկ են եկել եւ կամենում են ինձ տեսնել: Իսկոյն նստեցի ձիս եւ գնացի Տաթեւ:

Մի օր յետոյ Սիսիանից վանք է մտնում Սեբաստացի Մուրադը՝ ծիաւոր 50 հայդուկներով»[2]:

Մուրադը Կայծակ Առաքելի, Ավոյի եւ Մշեղի Ավետիսի ուղեկցությամբ Զանգեզուր է գալիս՝ ունենալով ընդամենը 50 մարտիկներ: Հաշված օրերի ընթացքում նրա գլխավորած ջոկատի անձնակազմը համալրվում է տեղի կամավորներով եւ բազմապատկվելով հասնում է 200-ի: Այս գործում նրան զգալի աջակցություն է ցույց տվել Զանգեզուրի հոգեւոր առաջնորդ վարդապետ Մելիք-Թանգյանը:

Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպմանը խոչընդոտում էր մի ցավալի իրողություն, որն այդ ժամանակահատվածում բնորոշ էր հայկական գրեթե բոլոր գավառներին:

Զանգեզուրի երիտասարդության զգալի մասը աշխատանք որոնելու նպատակով ծգտում էր մեկնել տարբեր քաղաքներ: Հարց է ծագում, իսկ այդ դեպքում ովքե՞ր պիտի ընդգրկվեին նոր-նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերի կազմում ու պաշտպաներին իրենց հարազատ օջախը, եթե զենք կրելու ընդունակ երտասարդությունն ազգի համար բախտորոշ ժամանակահատվածում թողնում էր իր հայրենի գյուղն ու մեկնում օտար երկրներ:

Գավառի երիդասարդությանը իրենց ծննդավայրում պահելն ու նրան մարտախմբերում ընդգրկելը դառնում է Ձինվորական մարմնի առջեւ ծառացած կարեւորագույն ու հրատապ խնդիրներից մեկը: Իսկ նման իրավիճակում այլ ընտրանք չկար եւ չէր կարող լինել: Գավառում ստեղծված տագնապալի իրավիճակը ՀՅԴ «Միւնիքի» Ձինվորական մարմնին թելադրում էր դիմել վճռական քայլերի եւ թույլ չտալ ու խստագույնս արգելել զենքի ընդունակ երտասարդությանը հեռանալու իրենց բնակավայրերից:



Սեբաստացի Մուրադ

Այդ նպատակով Ձինվորական մարմինը գավառի բոլոր գյուղերում տարածում է հետեւյալ հրահանգը.

« 1. Ոչ ոքու չհեռանալ իրենց բնակավայրերից.

Տանուտէրները վկայական չտան անցագրերի համար,

Իւրաքանչիւր ոք, ով կցանկանայ գնալ օտարութեան(եթէ նոյն իսկ ամենակարճ ժամանակով) պիտի գայ մեզ յայտնէ եւ ստանայ թոյլտուութիւն, ով եթէ հեռանայ, նորա հորը, եղբօրը եւ ազգականներին կենթարկենք տուգանքի եւ կբանտարկէնք, մինչեւ որ օտարութեան գնացածը չվերադառայ,

Իր ժամանակին պիտի անենք կարգադրութիւն, որ միւս քաղաքներում Միւնեցիներին արձակեն պաշտօներից եւ յետ դարձնեն հայրենիք:

«Միւնիքի» Հ.Յ. Դ Ձինուորական մարմին»[3]:

Ձինվորական մարմնի ընդունած այդ որոշումը միանգամայն հիմնավորված էր ու արդյունավետ:

Մուրադը զինակիցների համագործակցությամբ կարողանում է Զանգեզուրի մի շարք գյուղերում կազմավորել ինքնապաշտպանական մարտախմբեր, որոնց շարքերում առաջին հերթին ընդգրկում էր ռուսական բանակում ծառայած, զենքին եւ մարտական կյանքին քաջածանոթ երիտասարդների:

Զանգեզուրում եւ մասնավորապես Ղափանի շրջանում հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելիս Մուրադն ու նրա զինակիցները ի սկզբանե կարողանում են ճիշտ արժեւորել մի կարեւոր հանգամանք եւս. Զանգեզուրի մահմեդականությանը առաջնորդում էին հիմնականում մի քանի թուրք ցեղապետեր՝ բեկեր, որոնք իրենց արյունակիցների միջավայրում ունեցած իրական իշխանությամբ եւ հեղինակությամբ շատ մեծ վտանգ էին ներկայացնում: Հայկական բնակավայրերի վրա թուրքերի ծեռնարկած հարձակումները ժամանակին չեզոքացնելու եւ հակահարված տալու համար նախ եւ առաջ հարկավոր էր ուշադրության կենտրոնում պահել հենց նրանց գործողությունները: Որպես կանոն, բոլոր թուրք ցեղապետերն ունեին իրենց զինյալ հրոսակախմբերը եւ, անհրաժեշտության դեպքում սերտորեն համագործակցում, աջակցում էին միմյանց:

Սեբաստացի Մուրադը իր զինակիցների՝ Կայծակ Առաքելի, Ավոյի եւ Մեշեդի Ավետիսի զինակցությամբ կազմակերպում եւ ղեկավարում է Զանգեզուրի հայության ինքնապաշտպանությունը: Գրեթե մեկու կես տարի ընթացող կռիվներում Զանգեզուրի ինքնապաշտպանական ուժերը նրանց հրամանատարությամբ ջախջախիչ պարտության են մատնում հայկական բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերին[4]:

Զանգեզուրում եւ հատկապես Ղափանի շրջանում Սեբաստացի նշանավոր ռազմիկի գլխավորած ինքնապաշտպանական ուժերի ծանրակշիռ հաղթանակները ոչ միայն փոխում են հայերի աննպաստ կացությունը, այլեւ վճռական ազդեցություն գործում մահմեդական վերնախավի դիրքորոշման եւ տրամադրվածության վրա: Ամենուրեք հայ ինքնապաշտպանական ուժերի վճռական հարվածներից ջախջախված մահմեդական ցեղախմբերից շատերը ճարահատյալ դիմում են հաշտության:

Համաձայն Ներսես Մելիք-Թանգյանի հավաստման.«Այնուհետեւ թուրքական խմբեր էին, որ գալիս էին Տաթեւի վանքը, հաշտութիւն էին խնդրում, իմ միջնորդութեան էին դիմում, անիծում էին իրենց խաներին, որոնք կոտորածներին պատճառ էին եղած, անիծում էին, որ զուր տեղը կռուեցրին երկու հարեւան ժողովուրդներուն»[5]:



Մեպուհ



Մեշեդի Ավետիս



Կայծակ Առաքել



Գյումուշխանի Ավո

Զանգեզուրում ընդհարումները. Չնորհիվ հայ ինքնապաշտպանական ուժերի հարձակումների, ավարտվում են: Իշխանությունները հակամարտող կողմերի միջև կռիվները մարելու, վտանգված շրջաններում կարգ ու կանոն հաստատելու պատրվակով գավառի տարածքում են կենտրոնացնում պատժիչ զորամասեր, հիմնականում կոզակական հեծյալ ջոկատներ եւ անգամ հրանոթներով զինված զորավաշտեր: Հաշտության կոչելով հակամարտող կողմերին՝ նրանք գավառի հայ եւ մահմեդական ազգաբնակչությանը, կռիվներ սանձազերծելու, պետական օրենքները խախտելու մեղադրանքներ ներկայացնելով՝ սկսում են տուգանքներ սահմանել ու անգամ ոմբակոծության ենթարկել ու այրել գյուղերը: Պատժիչ զորամասերի հարվածների հիմնական թիրախը հայկական բնակավայրերն էին:

Զարեվանդի գնահատմամբ «Ռուս կառավարությունը, երկու թշնամ մեկ քարով զարնելու, թե՝ հայ եւ թե՝ թուրք ազգայնականությունը մեկ հարվածով եւ իրարու ձեռքով ոչնչացնելու, ամենց միության եւ անկախության ձգտումները խեղդելու այս առիթեն չափազանց գոհ՝ կատարեց ո՛չ միայն հանդիսատեսի, այլեւ հրահրողի դեր եւ ի վերջո թուրքերու սպրքած ոճիրը պսակեց իր «պատժող արշավախմբերով»(նկատի ունի հայկական բնակավայրերն ասպատակող պատժիչ զորախմբերը-Հ. Գ.)» [6]:

ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի կազմած «Գանձակի պագրոմը» խորագիրը կրող զեկուցագրում. հեղինակները հայկական բնակավայրերի նկատմամբ իշխանությունների ու ըստ այդմ էլ պատժիչ զորամասերի դրսեւորած այդօրինակ վերաբերմունքը պարզաբանում եւ հիմնավորում են հետեւյալ փաստարկներով.

1. Հայ-թուրքական ընդհարումներում հայկական ինքնապաշտպանական ուժերի օր-օրի հզորացումն ու նվաճած անվիճելի հաղթանակների իրողությունը: Ցարական կառավարությունը տեսավ ու համոզվեց, որ գնալով ավելի ու ավելի վտանգավոր չափերի էր հասնում հայ ազգային-ժ-հեղափոխական կազմակերպությունների ու նրանց առաջնորդած ինքնապաշտպանական մարտախմբերի գործունեությունը:

2. Կառավարությունը կարողանում է բանակի եւ ոստիկանության միջոցով ճզմել բուն Ռուսաստանի մեջ բռնկված հեղափոխական պոռթկումները: 1906 թ. կեսերից սկսած ցարական իշխանությունները խիստ միջոցներ են ձեռնարկում խաղաղեցնելու նաեւ Անդրկովկասը: Քանի որ իշխանությունների գնահատմամբ Անդրկովկասում որպես առավել հեղափոխական ու վտանգավոր տարր դիտվում էր հայությունը, ուստի պատժիչ զորամասերը ուղարկում է հայկական գավառներ, հայերին զինաթափ անելու ու նրանց հեղափոխական տրամադրությունները արմատախիլ անելու նպատակով: Պատժիչ զորամասերը մի շարք հայկական գյուղերի վրա կրակ են տեղացել նույնիսկ թնդանոթներից:

3. Թուրքերին չի զինաթափում, թողնում է զինված, որպես նեղ օրերի համար կույր գործիք [7]:

Օրինակ, հայկական կողմին պատժելու նպատակով. «...Ղաթար եւ Քեարխանա թուրք գիւղերը աւերելու պատճառով իւրաքանչիւր գիւղացի ենթարկւեց 10 ր. տուգանքի: Իսկ երբ գեներալ Բառւերը եկաւ, տուգանքները դարձրեց 25-ական րուբլի, իւրաքանչիւր ծխից: Եւ շնօրհիւ այդ կարգադրութեան տուգանքներ առան՝ Վաչագանից-10-75 ր., Բաղաբուրջից-925 ր., Կուտկումից-1200 ր., Ըեխից-425 ր., Կավարտից-1200 ր. եւ Բարաբաթումից-1025 րուբլի: Ոմբակոծեցին այդ բոլոր գիւղերը:

...Հագարակից-1200, Եղւարդից-1100ր., Սիրքաթասից-480 ր. եւ Ուժանիսից-570 րուբլի» [8]:

Հակամարտությունը դադարեցնելու պատրվակով նման միջոցների գործադրումը հիանալի հնարավորություն է ընձեռում ցարական իշխանությունը ներկայացնող պաշտոնյաներին եւ սպաներին, խաղաղություն հաստատելու անվան տակ, թալանել գավառի հայ ու մահմեդական ազգաբնակչությանը:

Նահանգի իշխանությունները տուգանք են սահմանում նաեւ Գենվազի շրջանի գյուղերի վրա. «Մեղրեցիներից առան 800 ր., Վահրաւարցիներից-1800 ր., Օրդուբաթցիների ոչխարները քշելու համար, Կալերից-500 ր., Վանքից 700 ր., Լիչկից-800 ր., Տաշտունից-700 րուբլի» [9]:

Գավառում հաստատած իրավիճակի ու գյուղացիների նկատմամբ սպաների եւ զինվորների դրսեւորած սանձարձակությունների հետ այլեւս հնարավոր չէր համակերպվել, այլապես, առանց այդ էլ ծայրահեղորեն քայքայված գյուղերը կարող էին վերջնականապես սովամահության մատնվել: Անհրաժեշտ էր ինչ-որ ազդու, կանխարգելիչ քայլեր ձեռնարկել եւ սանձել պաշտոնյաների եւ նրանց թողտվությամբ գյուղերում սանձարձակությունների տրված ռուս զինվորներին:

«Այդ ժամանակ Փոխրուտում (Վերին Ղափանի հայկական գյուղերից-Հ. Գ.) է լինում մեր հերոս Մուրատը. լսելով գաւառապետի մտադրութիւնը, պրիստաւ Շահգալդիեւի միջոցով սպառնում է եւ առաջար-

կում զօրքը դուրս բերել, հակառակ դէպքում գաւառապետին եւ օֆիցէրներին տէռօրի պէտք է տայ...»[10]:

Իշխանության ներկայացուցիչներին եւ Զանգեզուրի գավառապետին, անշուշտ, շատ լավ հայտնի էր հայ վրիժառուի սպառնալիքի արժեքը: Պրիստավ Շահգալդիից տեղեկանալով իրենց ահաբեկելու սպառնալիքի մասին՝ գավառապետը դադարեցնում է հալածանքներն ու գյուղերի ոմբակոծությունը եւ բավարարվում միայն թեթեւ տուգանքներ սահմանելով:

«Ամբողջ Ղափանի եւ Գենուազի հայ ժողովուրդը,- գրում է Մ. Վարանդյանը,- իր բուռն շնորհակալութիւնն է արտահայտում Դաշնակցութեան մարտիկներին՝ Մուրադին, Կայծակ Առաքելին, Աւետիսին, Խէչոին, Հայրիկին, Ենօքին եւ բոլոր տեղական խմբապետներին ու քաջարի կռուողներին... Եթէ չը լինեին այդ մարտիկները եւ պատրաստած ոյժերը, վաղուց ամբողջ Ղափանի գիւղերը անդառնալի կորած կը լինեին...»[11]:

---

1. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 23ա, էջ 1:
2. Մ. Վարանդեան, «Մուրատ», 1931, էջ 113:
3. ՀԱԱ, Ֆ. 1457, ց. 1, գ. 34:
4. Տես Հ. Գեւորգյան, «Սեբաստացի Մուրադ», Երեւան, 2003, էջ 92-162:
5. Մ. Վարանդեան, «Մուրատ», էջ 116:
6. Զարեւանդ, էջ 21:
7. ՀՅԴ ԿԱ, թծ. 293, գ. 23ա, էջ 1:
8. «Դրօշակ», 1907, թիւ 3, էջ 41:
9. Նույն տեղում, էջ 42:
10. «Դրօշակ», 1907, թիւ 3, էջ 42
11. Մ. Վարանդեան, «Մուրատ», էջ 115:

2.8. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ղարաբաղում Հ.Յ.Դաշնակցության կառույցները շնորհիվ Մարգար Ժամհարյանի (Մռավ), 1904թ. միավորվելով կազմել են Հ.Յ.Դաշնակցության առաջին կոմիտեն:

Համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կոմիտեի կազմած տեղեկագրի, Ղարաբաղում «... 1905-ին բոլոր գիւղերը, բացի 4-5 գիւղից կազմակերպուած էին Դաշնակցութեան դրօշի տակ...գանազան տեղեր եղել են ենթակոմիտեներ, գինուորական ներկայացուցիչներ, դատաւորներ: Այդ շրջանում կազմակերպութիւնը հանդիսացել էր իբրեւ մի կառաւարութիւն իր բոլոր ֆունկցիաներով»[1]:

Ղարաբաղի հայությունն ու ՀՅԴ կոմիտեն կարողանում են սկզբնական շրջանում խուսափել գինված բախումներից եւ պահպանել խաղաղ իրավիճակը: Բայց այդ խաղաղությունը խաբուսիկ էր եւ անկայուն: Ղարաբաղում տիրող խաղաղ իրավիճակը պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ թուրքերի մի մասը՝ քոչվորները իրենց ոչխարի հոտերի հետ տարվա այդ ամիսներին գտնվում էին սարերում: Քոչվոր թուրքերը, որոնք իրենց կեցության թելադրանքով սերտ կապերի մեջ էին քրդերի հետ, որպես կանոն, համարվում էին մահմեդական բնակչության ամենաարկածախնդիր ու մարտունակ, իսկ հայության համար ամենավտանգավոր տարրը: Իրավիճակը կարող էր կտրուկ փոխվել աշնանը, այսինքն այն ժամանակ, երբ քոչվորները սարերից կիջնեին: Հ.Յ.Դաշնակցության տեղի կոմիտեի համար գաղտնիք լինել չէր կարող, որ ընդհարումներն անխուսափելիորեն կբռնկվեն նաեւ Ղարաբաղում:

«Բոլոր նշանները,- նշում է Արամայիսը,-պարզ ցոյց էին տալիս, որ հայ-թրքական ընդհարումները Ղարաբաղում եթէս հնարաւոր են դառնալու, քանի որ շահագրգռուած կողմերի մէջ անվստահութիւնը գնալով աւելի ու աւելի զարգանում է, իսկ տեղական իշխանութիւնը մատների արանքով է նայում բոլոր երեւոյթներին...

...Ուստի Հ.Յ.Դաշնակցութիւնը իր գործիչների, ղեկաւարների ցանցով պատեց գաւառները...ինքնապաշտպանութիւն կազմակերպելու համար»[2]:

Այդ իրավիճակում Հ.Յ. Դաշնակցության գործունեության ուղղվածությունը պիտի լիներ ժողովրդի զինումն ու ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը:

Ինչպիսի՞ եւ ինչքան զենք ու զինամթերք ունեին Ղարաբաղի մարտական ուժերը: Համաձայն «Ապառաժ» ԿԿ-ի տվյալների, 1904թ. Խաչենի 22 գյուղերը(2000 ծուխ) ունեցել են ընդամենը 280 բերդան հրացան, յուրաքանչյուրը 15 փամփուշտով [3]:

Կռիվներ սկսվելու պարագայում այդ միջոցներով հնարավոր չէր կազմակերպել հուսալի ինքնապաշտպանություն, իսկ թուրքական կողմը լրջորեն պատրաստվում էր հայկական կոտորածներ սանձազերծել նաեւ Ղարաբաղում: Այդ օրերին հայկական լրագրերին , մասնավորապես «Մշակ»-ին հասցեագրած թղթակցություններում հեղինակները, բազմիցս անդրադառնալով Ռուսաստանի տարբեր քաղաքներում թուրքերի կողմից զենք ու զինամթերք գնելու իրողությանը, առավելապես նշում են Ղարաբաղի թուրքերի անունները [4]:

Այդ նույն թղթակցություններից պարզվում է, որ ի տարբերություն հայերի, թուրքական կողմից զենք ու զինամթերք գնելու գործով զբաղվել են ոչ թե քաղաքական կազմակերպությունները, այլ առավել ազդեցիկ, մեծահարուստ դեմքերը [5]:

Այս առումով թուրքական կողմը, հայկականի համեմատ ուներ իր առավելությունն ու դրական հաշվեկշիռը:

Թղթակցություններում հեղինակները, դատապարտելով հայ մեծահարուստների անտարբեր վերաբերմունքը, գովեստով են արտահայտվում Ռուսաստանի տարբեր շրջաններում հանգրվանած արցախցի ու գանձակեցի գյուղացիների մասին, որոնք «...չնայած իրենց շատ աննպաստ պայմաններին եւ չքաւոր դրութեան, այնուամենայնիվ, չմոռացան իրենց լուման ձգել ընդհանուր օգնութեան գործին մէջ՝ հայ աղէտեալ եղբայրների համար» [6]:

Չնայած մի շարք դժվարությունների, ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն, այնուամենայնիվ, կարողանում է մասամբ լուծել ժողովրդին զինելու խնդիրը:

1905թ. Խաչենի ինքնապաշտպանական ուժերը ունեցել են «...800 բերտան հրացան-150-ական փամփուշտներով, իսկ մոտիկ ու մատղեր-120 հատ, յուրաքանչյուրը 200-ական փամփուշտներով» [7]:

Ջիվանշիրի շրջանի 33 գյուղեր 1904թ. ունեցել են 2 մոտիկ, 1100 բերդան, իսկ մեկ տարի անց 465 մոտիկ՝ յուրաքանչյուրը 150 փամփուշտով եւ 2000 բերդան՝ 50 փամփուշտով:

Վարանդայում(5000 ծուխ) 1904թ. եղել է 250-300 բերդան, իսկ 1905թ.՝ 3500 բերդան 50-60 փամփուշտով եւ 300 մոտիկ 100-ական փամփուշտով: Շուշի քաղաքի մարտական ուժերը ունեցել են ընդամենը 300 հրացան: Բացի այդ ամենից, ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն կարողացել է պահեստավորել 250000 փամփուշտ եւ 200 հրացան [8]:

Տեղեկագրում բացակայում են Զանգեզուրի գավառի եւ Դիզակի շրջանի մարտական ուժերի տվյալները:

Տեւական եւ մեծածավալ կռիվների դեպքում զենքի ու զինամթերքի այդ քանակությամբ նույնպես հնարավոր չէր կազմակերպել հուսալի ինքնապաշտպանություն եւ ապահովել հայ բնակչության անվտանգությունը:

«Չափազանց ծանր էր գնում,- նշում է Վարդանը,- զինման գործը: Մեր ժողովուրդը սովոր չէր զենքի, այդ զենքին սովոր էին թուրքերը: Յեւ մեր զինման գործը անցնում էր ճնշման, բռնութեան տակ: Ժողովրդի մէջ վորոշ քանակութեան զենք կար, կարելի էր եւ ձեռք բերել ի հարկէ փողով, բայց չէին ուզում փող ծախսել զէնք ձեռք բերել, մանաւանդ ունեվոր դասակարգը...» [9]:

Զենք ու զինամթերքի խնդիրը հնարավոր էր լուծել, եթե ինքնապաշտպանության կազմակերպիչներն ունենային անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Զենք գնելու նպատակով ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն Ղարաբաղի գյուղերում կազմակերպում է դրամահավաք: Համաձայն «Ապառաժ» ԿԿ կազմած տեղեկագրի, դրամահավաքի արդյունքում ամենամեծ գումարը Խաչենի, Վարանդայի ու Ջիվանշիրի շրջաններում հանգանակել է Համազասպը: Հավաքված գումարներով գնել են զենք եւ զինամթերք ու տրամադրել ինքնապաշտպանական ուժերին [10]:

ՀՅԴ բյուրոյի կողմից Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի(Զինվորական մարմին) հրամանատար է նշանակվում Խանասորի Վարդանը: Ուշագրավ է, որ Վարդանի թեկնածությունը որպես Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարի, Ս. Զավարյանի մասնակցությամբ Բաքվում կայացած խորհրդաժողովում առաջարկել է Նիկոլ Դումանը [11]:

Ինչպիսի՞ մարտավարություն էր ընտրելու ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, եթե կռիվները բռնկվեին ու ծավալվեին Ղարաբաղի շրջաններում: Բաքվում եւ Երեւանի նահանգում տեղի ունեցած ընդհարումները միանշանակորեն հավաստում են, որ կռիվներ նախաձեռնողը մշտապես թուրքական կողմն էր, այսինքն նրա մարտա-

վարությունը հարձակողական գործողություններն էին: Միաժամանակ, կռիվների փորձը, հատկապես Բաքվում Նիկոլ Դումանի կիրառած մարտավարությունը վկայում են, որ պասիվ ինքնապաշտպանությունը նպատակահարմար եւ արդյունավետ մարտավարություն չէր, քանի որ հայությունը, ի տարբերություն հակառակորդի, պատրաստված չէր ու թույլ էր զինված: Մարտավարության հարցում Դաշնակցության մեջ կար երկու հակոտնյա տեսակետներ: Սկզբնական շրջանում ավելի տիրապետող էր այն տեսակետը, համաձայն որի պիտի խաղաղություն պահպանել եւ թուրքերի հարձակման դեպքում միայն պաշտպանվել: Երկրորդ տեսակետի կողմնակիցները առաջարկում էին նախահարձակ լինել, ճնշել թուրքերին ու թույլ չտալ նրանց հարձակվելու հայերի վրա:

Այդ տեսակետը պաշտպանող Բաքվի Զինվորական մարմինը, որի ղեկվարն այդ ժամանակ Նիկոլ Դումանն էր, ապրիլ-մայիս ամիսներին դիմել է ՀՅԴ Արեւելյան բյուրոյին եւ առաջարկել, որ կռիվների բռնկման պարագայում բոլոր ինքնապաշտպանական շրջաններն առաջնորդվեն այդ՝ հարձակողական բնույթի մարտավարությամբ:

Բաքվի զինվորական մարմնի առաջարկությունը քննարկելու նպատակով 1905 թ. հունիսի 21-ին գումարվում է ՀՅԴ «Քարի» (Ալեքսանդրապոլի) կենտրոնական կոմիտեի ժողովը, որի աշխատանքներին մասնակցել են ՀՅԴ Արեւելյան բյուրոյի, Մեծ-Քաղաքի(Թիֆլիս), Ապառաժի(Ղարաբաղ), Քարի (Ալեքսանդրապոլ) եւ Ջրաբերդի (Կարս) ՀՅԴ կառույցների ներկայացուցիչները: Ելույթ ունեցողները մերժել են Բաքվի Զինվորական մարմնի առաջարկությունը եւ պաշտպանել են նախահարձակ չլինելու ու միայն պաշտպանվելու մարտավարությունը:

Առավել ուշագրավ է եւ անհասկանալի հատկապես ՀՅԴ Արեւելյան բյուրոյի ներկայացուցչի տեսակետը. «Նախահարձակ լինելը կարող է մեծ կոտորած առաջացնել Թուրքիայի եւ Պարսկաստանի փոքրաթիւ հայերի մէջ: Մեր կուլտուրական կեանքը տարիներով յետ կը մնայ: Մեր նպատակը պէտք է լինի հանգցնել կրակը եւ ոչ թէ կոտորած առաջացնել:

...Յարձակուելով, մենք երեք թշնամու հետ պիտի գործ ունենանք՝ ռուսը, բաթարը եւ մասամբ վրաց ազգունականութիւնը: Ես հակառակն եմ Բագուի առաջարկին: Դա մեր կողմից անխոհեմութիւն կլինի»: **(Տե՛ս «Նիւթեր...», հ. Բ, էջ 249-250)**

Պիտի ընդունել, որ դա ՀՅԴ Արեւելյան բյուրոյի պաշտոնական տեսակետն էր, որը ինչպես աներկբայ ցույց տվեց ժամանակ, ոչ միայն կենսունակ չէր, այլեւ վտանգավոր եւ անարդյունավետ:

1905թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում կայացած ռայոնական ժողովում թեպետ շեշտվում է, որ պասիվ ինքնապաշտպանությունը նպատակահարմար եւ արդյունավետ մարտավարություն չէ, բայց, այնուամենայնիվ, այդ հարցի վերաբերյալ չի կայացվում միանշանակ որոշում, որը պարտադիր լիներ ինքնապաշտպանական շրջանների հրամանատարության համար: Ավելին, ռայոնական ժողովը ելակետ ունենալով ապակենտրոն սկզբունքով գործելու ավանդույթը՝ որոշում է.«...ակտիւ յարձակողական տակտիկը վերապահել տեղական մարմիններին եւ զինվորական լիազորներին»[12]:

Փաստորեն այդ որոշմամբ մարտավարության ընտրությունը վերապահվում է ինքնապաշտպանական շրջանների հրամանատարությանը: Վարդանի գլխավորած Զինվորական մարմինը սկզբնական շրջանում ընտրում է պաշտպանողական բնույթի մարտավարություն եւ աշխատում տեղիք չտալ ու խուսափել կռիվներից[13]:

Թուրքական կողմի նախապատրաստությունները ցույց էին տալիս, որ նրանց մարտական ուժերի հարձակման գլխավոր նշանակետերը լինելու էին Շուշին եւ Գանձակը:

Շուշին, կարելի է ասել, որպես Արցախի մայրաքաղաք, իր մշակութային եւ կրթական հաստատություններով ու գերիշխող դիրքով ռազմավարական կարեւորագույն նշանակություն ուներ արցախահայության համար: Թուրքական կողմը համոզված էր, որ գրավելով Շուշին, կարելի էր խուճապի ու սարսափի մատնել արցախահայությանն ու արագորեն հայաթափել Արցախը:

«Անոնք,-գրում է Մ. Վարանդյանը,- ծրագրեր էին, որ թրքական նախայարձակը սկսելուն պէս, գաւառի թրքութիւնը պէտք է շարժէր երկու ուղղութեամբ,- դէպի Շուշի եւ դէպի Գանձակ, աւերելով ճանապարհին բոլոր հայ գիւղերը եւ կոտորելով հայ բնակչութեանը»[14]:

Շուշիի բնակչության մեծամասնությունը հայեր էին: Թուրքական կողմը, նկատի ունենալով, որ միայն Շուշիում ունեցած ուժերով անհնարին կլիներ ընկճել հայ մարտիկների դիմադրությունը, ծրագրում է քաղաքի վրա հարձակում ձեռնարկել նաեւ երկրորդ՝ Աղդամի ուղղությունից: Այդ նպատակով «Կազմուած էին,-շարունակում է Մ. Վարանդյանը,- ձիաւոր խումբեր, զօրակոչն ուղղուած էր նաեւ հեռաւոր վայրերու թուրքերուն, հրապուրելով զանոնք դիւրին ու առատ կողոպուտի հեռանկարով»[15]:

Կանխատեսելով անխուսափելի վտանգը՝ հայկական կողմը նույնպես պատրաստվում էր: Ճիշտ գնահատելով հակառակորդի մտադ-

րությունը՝ Վարդանի գլխավորած Զինվորական մարմինը իր ուշադրությունը նախ եւ առաջ կենտրոնացնում է Շուշիի պաշտպանության վրա: Նկատի ունենալով քաղաքի բացառիկ նշանակությունը՝ Վարդանը իր հրամանատարական կետը՝ Զինվորական մարմնի շտաբը, ընտրում է Շուշին: Բացի Զինվորական մարմնից, որն անմիջականորեն ղեկավարելու էր մարտական գործողությունները, Շուշիի քաղաքացիներից ընտրվում է Խորհուրդ, որի պարտականությունն էր ինքնապաշտպանական ուժերի տնտեսական մասի, թիկունքի ապահովումը: ՀՅԴ - նախաձեռնությամբ կազմավորվում է ժողովրդական միլիցիա, որի մեջ ընդգրկվում են 150 զինավարժ երիտասարդներ, որոնք ծառայության համար ստանում էին Զինվորական մարմնի ու Խորհրդի կողմից սահմանված աշխատավարձ:

Ինչպես Երեւանի նահանգում, Ղարաբաղում եւս Զինվորական մարմինն ու ՀՅԴ կենտր. կոմիտեն փորձում են կազմավորել ժողովրդական բանակ, որը պիտի ղեկավարվեր կանոնավոր բանակում ընդունված կարգ ու կանոններով:

Թուրք հրոսակախմբերին դիմագրավելու նպատակով Զինվորական մարմինը քաղաքը բաժանում է քաղերի: Յուրաքանչյուր քաղ, որպես պաշտպանական առանձին հենակետ, ուներ իր քաղապետն ու քաղապետի օգնականը: Թաղերի՝ ռազմական տեսակետից կարեւոր կետերը վերածվել էին մարտական դիրքերի: Յուրաքանչյուր դիրքում մշտապես հսկում էին 4-ից 10 զինվորներից բաղկացած մնայուն մարտախմբեր: Կազմավորվում են նաեւ բռուցիկ մարտախմբեր, որոնք անհրաժեշտության դեպքում պիտի օգնության հասնեին վտանգված շրջաններին [16]:

Եվկախ- Շուշի ճանապարհը փակ լինելու պատճառով անհամեմատ դժվար է եղել զենք եւ զինամթերքի տեղափոխությունը: Հ.Յ. Դաշնակցությունը իր կառույցների միջոցով եւ բնակչության աջակցությամբ կարողանում է լեռների, ձորերի վրայով եւ հայաբնակ վայրերով մեծ դժվարությամբ Թիֆլիսից ու Գանձակից զենք ու զինամթերք տեղափոխել Շուշի:

Զենք ու զինամթերքի տեղափոխությունը ավելի դժվարին է եղել, երբ այն տեղափոխել են մեծ ծավալ ու կշիռ ունեցող արկղներով:

«Ընկերներ»-ին գրած նամակներից մեկում (1905թ. օգոստոսի 10), նկատի ունենալով այդ իրողությունը, Վարդանը առաջարկում է, որ այն ապրանքները, որոնց արկղերով ուղարկում են իրենց «...մի փութից աւել չլինի, բացի այդ արկղը ինքը ահագին ծանրութիւն ունէր: Աշխատեցէք

ուղարկելուց որ արկղերը թեթեւ լինեն իսկ ամբողջ ծանրութիւնը մի փութից աւել չլինի, այդ ձեւով շատ յարմար է եւ շատ ապահով կստանանք»:

Եթե զենք ու զինամթերքի տեղափոխությունը Շուշի կատարվել է հաջողությամբ, ապա իրավիճակը բոլորովին այլ է եղել, ավելի դժվարին գյուղական բնակավայրերում:

Վարդանը այդ նույն նամակում(1905թ. օգոստոսի 10), կանխատեսելով կռիվների բռնկման դեպքում Շուշիում հաղթելու հավանականությունը, միաժամանակ իր մտահոգությունն է հայտնում գավառի մի շարք գյուղերի անբավարար, թույլ պատրաստվածության վերաբերյալ եւ դարձյալ պահանջում զենք ու զինամթերք [17]:

Նկատի ունենալով այդ իրողությունը՝ Զինվորական մարմինը ուշադրությունը կենտրոնացնում է նաեւ շրջանների, հատկապես թուրքական բնակավայրերին սահմանակից հայկական գյուղերի ինքնապաշտպանության կազմակերպման վրա: Քանի որ սահմանափակ է եղել մոսին հրացանների քանակը, ուստի Զինվորական մարմինը մոսին հրացաններով առաջին հերթին զինել է առավել վտանգված սահմանամերձ բնակավայրերի ինքնապաշտպանական մարտախմբերին: Կռիվների ողջ ընթացքում ինքնապաշտպանական շրջանների միջեւ անխափան գործել են կապն ու հաղորդակցության միջոցները [18]:

Զինվորական մարմնի կողմից ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրների մեջ էին մտնում քաղաքում եւ գյուղական բնակավայրերում ներքին կարգ ու կանոնի հաստատումն եւ վերահսկողությունը, հատկապես պայքարը գողության ու առանձին անբարո անհատների կողմից կատարվող տարբեր կարգի հանցագործությունների եւ չարաշահումներ դեմ:

Վերոհիշյալ նամակում (1905թ. օգոստոսի 10), Վարդանը անդրադառնալով նաեւ այդ հարցին՝ գրում է. «Այստեղ կատարուած գողութիւնները պարզում են: Այստեղի մեր դատական գործերը բաւականին յաջող են, տասնեակ հազարների գործեր են վճռում...Մեր դատաւորը մշտական չպէտք է մնայ այստեղ, գուցե մօտ ապագայում հեռանայ, ուստի մի իրաւաբանի ներկայութիւնը այստեղ անհրաժեշտ է, որին եւ կարող կլինենք ապահովել ռոճիկի կողմից, իսկ խոշոր գումար»:

Թեպետ իրավիճակը գավառում եւ քաղաքում խիստ լարված էր ու տագնապալի, բայց Զինվորական մարմնի ու ՀՅԴ «Ապառաժ» կոմիտեի ուշադրության կենտրոնում եղել է նաեւ դպրոցների, կրթության խնդիրը: Դպրոցներն այդ օրերին անխափան կերպով շարունակել են գործել, բայց խիստ կերպով զգացնել է տվել ուսուցիչների պակասը:

«Ընկերներ»-ին հասցեագրած վերոհիշյալ նամակում նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Վարդանը գրում է. «Մտածեք եւ այստեղի դպրոցների համար ուսուցիչներ գտնել, որպեսզի կարողանանք դպրոցները մեր ձեռքում պահել»[19]:

Միևնեւ խմբային մեծածավալ կռիվների սկսվելը՝ օգոստոսի սկզբներին տեղի են ունենում փոքր ընդգրկումներ ունեցող զինված բախումներ Խաչեն գավառակի հայ գյուղացիների եւ քոչվոր թուրքերի միջեւ:

«Խաչէն գավառում,- հայտնում է Վարդանը,-սպանուած են երեք հայ, որի փոխարէնը սպանուած են երկու յայտնի աւազակներ, որոնք հայերի սպանութեան մէջ մասնակից են եղել: Այստեղ քաղաքումն էլ մի թուրք է սպանուած թուրքերի ձեռքով, որին վերագրում են հայերին...»[20]:

Թուրքերի ձեռնարկած մասնակի գործողությունները, ճանապարհներին ու այլ վայրերում հայտնված հայերի, ինչպես նաեւ թուրքերի կողմից կանխամտացված դիտավորությամբ թուրքերի սպանություններն ու մեղքը հայերին վերագրելը, գավառում իրավիճակն առավելագույնս շիկացնելու եւ արցախահայությանը սարսափի ու խուճապի մատնելու նպատակ էին հետապնդում: Սակայն ընդհարումներում հաջողությունը մշտապես ուղեկցել է հայկական կողմին: Հատկապես նշանակալի էր Առաջածոր գյուղի մոտակայքում աղդամցիների 300 զինյալներից բաղկացած հրոսակախմբի ջախջախումը[21]:

Օգոստոսի 16-ին կռիվները սկսվում են նաեւ Շուշիում: Ինչպես միշտ նախահարձակը դարձյալ թուրքական կողմն էր: Նախորդ օրը թուրքերը վիրավորում են երկու հայերի ու սպանում նախկին հաշտարար դատավոր Լուսաեակինին: Մի քանի հայեր մեկնում են թուրքական թաղամաս՝ պարզելու, թէ ի՞նչ է կատարվել իրականում: Թուրքերը հարձակվում են իրենց թաղամասում հայտնված հայերի վրա եւ գնդակահարում նրանցից մի քանիսին: Հայերի սպանության լուրն անմիջապես հասնում է հայկական թաղամաս:

«Թուրքի մեյդանում,-գրում է Ա-ԴՕ-ն,- հայերին կոտորում են», ահա այն լուրը, որը հասնելով Թոփխանա՝ հայերն էլ այստեղից սկսեցին կրակել: Մի վայրկեան օդը խլացաւ հրացանների տրաքոցներից, սարսափահար եղած ժողովրդի հարայ-հրոցից եւ կանանց ու երեխաների վայնասունից»[22]:

Օգոստոսի 17-ին քաղաքում խաղաղություն հաստատելու նպատակով 200 զինվորներով Շուշի է գալիս Գանձակի նահանգի փոխնահանգապետ Բարանովսկին: Հայերը, հարգելով նրա պահանջը, դադարեցնում են կրակոցները, իսկ թուրքերը, ուշադրություն

չդարձնելով նրա ներկայությանը, շարունակում են կրակ տեղալ հայկական թաղամասի վրա:

Հաջորդ օրը կռիվը վերսկսվում է ավելի մեծ ուժգնությամբ: Աղդամից քաղաք էին թափանցել հարյուրավոր թուրք զինյալներ, որոնք օգտվելով այն հանգամանքից, որ հայերը հարգելով փոխնահանգապետի պահանջը՝ դադարեցրել էին կրակոցները, փորձում էին ներխուժել հայկական թաղամաս:

Քաղաքը բաժանված էր երկու մասի: Վերեւի մասում հայերն էին, իսկ ներքեւում՝ թուրքերը: Շուշիի առաջին կռիվը շարունակվել է հինգ օր: Քաղաքի հայ ինքնապաշտպանական ուժերը կռվել են ոգեւորությամբ, առանց որեւէ խուճապի:

«Հայ քաղաքացիների տրամադրութիւնը,- նշում է Շուշիի կռիվները պատմող վավերագիրը,- վերին աստիճանի բարձր էր: Քաղաքի բոլոր անկիւններում վխտում էին զինւած ու անզեն երիտասարդները եւ խրախուսում էին իրար: Ամենն էլ հաւատացած էին, որ վերջնական յաղթութիւնը հայինը պիտի լինի»[23]:

Զինվորական մարմինը թեեւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել էր կազմակերպելու Շուշիի ինքնապաշտպանությունը, բայց, այնուամենայնիվ, քաղաքի բնակչության զգալի մասը անզեն էր: Կռիվները սկսվելուն պես հարյուրավոր շուշեցիներ ներկայացել են Դաշնակցության գրասենյակ եւ պահանջել զենք ու զինամթերք: Այդ պահին ժողովուրդը այլընտրանք չուներ: Միակ քաղաքական կազմակերպությունը, որը մտահոգված էր ու աշխատանքներ էր տանում ժողովրդին զինելու եւ քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ, Դաշնակցությունն էր:

Շուշիի կռիվները ներկայացնող վավերագրերից մեկը, ընդգծելով այդ իրողությունը, նշում է. «Քաղաքացիներ, որոնք երբէք չեն օժանդակել քաղաքը պաշտպանող միակ հայ կազմակերպության, եկել էին նոյն կազմակերպութիւնից զենք ու փամփուշտ պահանջելու...ժողովուրդը եւ Դաշնակցութիւնը ի մի էին ձուլել: Սահմանագիծը քաղաքական կուսակցութեան ու հայ մասսայի միջեւ չքացել էր»[24]:

Պիտի ասել, որ Զինվորական մարմինը թեպետ մեծ դժվարությամբ, բայց կարողացել է հաջողությամբ ղեկավարել քաղաքի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները: Թուրքերի ձեռնարկած բոլոր փորձերը՝ ընկճելու հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժելու հայկական թաղերը, անցնում են ապարդյուն: Կռիվների ընթացքում, համաձայն Վարդանի վկայության, իրենց քաջությամբ հատկապես աչքի են ընկել գավառներից եկած մարտիկները[25]:

Շուշիի պաշտպանների դրսեւորած վարպետությունն ու քաջությունը համակրանք են ներշնչել անգամ այդ կռիվներին ականատես կոզակներին:

«...Կոզակների համակրանքը,- վկայում է վավերագիրը,-մեր կողմն է: Կուի ընթացքում նրանք ապացուցեցին այդ՝ հայ տղաների հետ քովքով կռուելով թուրքերի դեմ: Նրանցից շատերը փախչում էին մինչեւ անգամ զօրանոցից եւ գալիս միանում տղաներին»[26]:

Չկարողանալով ընկճել հայ մարտիկների դիմադրությունը՝ թուրքերը հրդեհում են քաղաքի հայկական թաղերը: Այդ օրը հակառակի նման ուժեղ քամի է փչել եւ մոտավորապես 400 տներ այրվել են: Որպես պատասխան թուրքերի կատարած չարագործության՝ հայ մարտիկները հարկադրված հրդեհում են թուրքական թաղերը[27]:

Կռիվների ընթացքում հայ մարտական ուժերի գլխավոր մտահոգությունն այն էր, որ չեն ունեցել բավարար քանակության զենք ու զինամթերք: Եթե թուրքերը կարողանային Շուշիի վրա կենտրոնացնել լրացուցիչ ուժեր ու շարունակեին գրոհները, ապա քաղաքի պաշտպանները զինամթերքի պակասի պատճառով անխուսափելիորեն կհայտնվեին ծանրագույն կացությունում:

Օգոստոսի 20-ին՝ կռիվների վերջին օրը, հայ մարտիկների համար ստեղծվում է տագնապալի իրավիճակ: Թուրքերը ստանում են նոր համալրում: Քաղաքում հայտնվում են 580 զինյալներ, որոնց հաջորդ օրը եւս 300-ը: Զգացել է տալիս զինամթերքի պակասը: Թուրքերի անընդմեջ կրկնվող գրոհները դիմագրավելու համար հայ մարտիկները օգտագործել են ձեռնառումբեր եւ նույնիսկ քաղաքում պահպանված հնատիպ հրանոթները: Շուշեցի զինագործներին հաջողվել էր մարտական վիճակի բերել հրանոթներից մեկը եւ այն պահին, երբ արդեն զգացել էր տալիս զինամթերքի պակասությունը, լիցքավորում են հրանոթն ու երեք անգամ կրակ արձակում հարձակվողների վրա: Հրանոթի արձակած ահռելի ձայնն ու դղրդյունը սարսափելի ազդեցություն են գործում: Թուրքերը, սարսափի մատնվելով, դիմում են փախուստի:

«Մեր թնդանոթների կրակոցները,-գրում է Վարդանը,- նոցա թողած տպատրութիւնը շատ մեծ եղաւ: Թուրքերը հաշտություն առաջարկեցին»[28]:

Շուշիում հինգ օր ընթացող կռիվներն ավարտվում են հայ ինքնապաշտպանական ուժերի անվիճելի հաղթանակով: Ըստ «Մշակ» թերթի հրապարակման՝ հայերը ունենում են 40 սպանված եւ 68 վիրավոր, թուրքերից՝ 93 սպանված, 50 վիրավոր,իսկ գորքից՝ 12 սպանված ու վիրավոր [29]:

Հանածայն ՀՅԴ «Ապառաժ» ԿԿ տեղեկագրի. հայկական կողմը ունենում է 40 սպանված եւ 68 գոհ, իսկ թուրքական կողմը՝ ավելի քան 500 սպանված[30]:

Նույն տվյալները մեջբերում է նաեւ Մ. Վարանդյանը, որն անկասկած օգտվել է վերոհիշյալ տեղեկագրից[31]:

Շուշիի առաջին կռվի մասին Արեւելյան բյուրոյին հասցեագրած նամակում համառոտ տեղեկություններ է հաղորդում Ռոստոմը, որը այդ կռվից մի քանի օր անց գտնվում էր Շուշիում եւ անշուշտ քաջատեղյակ էր քաղաքում տեղի ունեցած դեպքերի մանրամասներին:

Ռոստոմի հավաստմամբ մինչ այդ տեղի ունեցած կռիվներում երբեք թշնամին այնքան բազմաքանակ զինվորներ չի ունեցել, որքան ունեցել էր Շուշիի կռվի ժամանակ: Ընդ որում թուրքերը զինված են եղել ամենաընտիր զենքերով եւ կռվել են հմուտ հրամանատարների առաջնորդությամբ: Թեեւ Թուրքերի դիրքերը հայկական կողմի պաշտպանական դիրքերի համեմատ անհաջող են եղել, բայց նրանք, այնուամենայնիվ, կարողացել են գրավել մարտավարական առումով երկու կարեւոր հենակետեր եւ այնտեղից հարձակումներ ձեռնարկելով՝ զգալի ներողություններ պատճառել հայերին[32]:

Ռոստոմի գնահատմամբ, այդ ամենը հետեւանք էր այն իրողության, որ հայ ինքնապաշտպանական ուժերի մեջ բացակայել է զինվորական կայուն կարգապահությունը: Կռիվների ամենավճռորոշ պահին երիտասարդների մի մասը զբաղված է եղել ամենախայտառակ թալանով: Շուշիում մեծ խուճապ է առաջացրել քաղաքում բռնկված հրդեհը:

Իր նամակում Ռոստոմը հաղորդում է, որ կռիվների ընթացքում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ քաղաքի հասարակությունը սկսել է հուսալքվել վհատվել եւ նույնիսկ պահանջել թուրքերի հետ հաշտություն կնքել:

Նրա հավաստմամբ «Դրութիւնը փրկել է թնդանօթը, որը թէեւ ոչ մի նիւթական զգալի վնաս չի հասցրել, բայց շատ վախեցրեց: Երբ թնդանօթի որոտների հետ միասին սկսում են միահամուռ գարկերը դիրքերից, թիւրքերը բարձրացնում են սպիտակ դրօշակներ եւ խնդրում հաշտութիւն»[33]:

Թուրքերին, այս անգամ չի հաջողվել տրվելու իրենց ամենասիրելի զբաղմունքին՝ թալանին: Նրանք կարողացել են Շուշիից տանել ընդամենը երկու ֆուրգոն ապրանք, որն էլ Ասկերանի կիրճում նրանցից ետ է խլում Համազասպը[34]:

Շուշիի առաջին կռվում հայկական կողմը թեպետ տոնում է հաղթանակ, բայց ունենում է անփոխարինելի կորուստ: Զոհվում է Մարգար

ժամհարյանը(Մռավ), որը կռիվների ընթացքում մշտապես գտնվելով առնենաժվարին տեղամասերում, մեծապես օգնել է Վարդանին՝ ղեկավարելու քաղաքի ինքնապաշտպանական ուժերի գործողությունները[35]:

Ծանոթանալով գավառում եւ Շուշիում տիրող իրավիճակին՝ Ռոստոմը ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացնում է հետեւյալ պահանջները. «Պետք է այստեղ լուրջ պատրաստուել, թիւրքերի յարձակման դեպքում, թէ չէ խայտառակութիւնը կատարեալ կը լինի: Աչքի առաջ ունեցէք, որ գաւառներում թիւրքերը ահագին ուժ ունեն: Այստեղ էլ մարդ է հարկաւոր Մարգարին փոխարինող: Ուղարկէք փամփուշտներ 1. Մաուզեր ատրճանակի մինչեւ 2000 հատ 2. Մաուզեր հրազանի 7 միլիմ. 1000 հատ 3. Պարեբոլում 500 հատ 4. Մոսին՝ որքան կարող էք:

Ուղարկէք նաեւ, եթե ունէք, վառօդ եւ պայթուցիկ: Անհրաժեշտ է այս շրջանի համար մի զինագործ...»[36]:

Ընկերներին ներկայացնելով վերոհիշյալ պահանջները՝ Ռոստոմը վերջում ավելացնում է. «Ուղարկելիք ապրանքի փոյը ձեզ անմիջապէս կը վճարուի»[37]:

Իսկ դա նշանաւում է, որ զենք ու զինամթերքի գնման համար նախատեսված անհրաժեշտ գումարը՝ Ղարաբաղի Զինվորական մարմինը, այնուամենայնիվ, ունեցել է:

Շուշիի համար մղվող պայքարը չէր սահմանափակվում միայն քաղաքում ընթացող կռիվներով: Ինչպես արդեն նշվել է, թուրքական կողմը նկատի ունենալով, որ միայն Շուշիում ունեցած ուժերով անհնարին կլիներ ընկճել հայ մարտիկների դիմադրությունը, ծրագրում է քաղաքի վրա հարձակում ձեռնարկել նաեւ երկրորդ՝ Աղդամի ուղղությունից: Զինվորական մարմինը, կանխատեսելով թուրքերի ծրագրած գործողությունները, ձեռնարկում է համապատասխան քայլեր՝ դիմագրավելու նաեւ Աղդամի ուղղությունից սպասվելիք հարձակմանը:

Շուշիի կռիվների առաջին օրը՝ օգոստոսի 16-ին, Զինվորական մարմնի հրամանով Արամայիսի (Արամայիս Տեր-Դանիելյան) եւ Մածոն Խեչոյի (Գրիգոր Միրզաբեկյան) գլխավորած 30 մարտիկներից բաղկացած մարտական խումբը փակում է Ասկերանից դեպի Շուշի տանող ճանապարհը: Քանի որ մարտախմբի ուժերը սահմանափակ էին, Արամայիսն ու Մածոն Խեչոն որոշում են դիրքեր գրավել Վարանդայի կողմն ընկած մարտկոցներում, միաժամանակ տեղեկացնելով Խաչենի մարտական ուժերին, որպեսզի նրանք շտապեն մարտադաշտ եւ գրավեն իրենց դիրքերի հանդիպակաց մարտկոցները: Եթե թուրքերը Ասկերանի ուղղությամբ փորձեին շարժվել դեպի Շուշի, ապա անխուսափելիորեն կհայտնվեին հանդիպակաց մարտկոցներում դիրքավորված հայ մարտիկների կրակի տակ:

Օգոստոսի 17-ի լուսաբացին թուրք հազարավոր հեծյալներ մոտենում են Ասկերանին եւ անտեղյակ հայկական կողմի նախապատրաստությունից, երեք մասի բաժանվելով, շարժվում են դեպի Նախիջեւանիկ, Խանաբադ եւ Շուշի: Վարանդայի եւ Խաչենի մարտկոցներում համապատասխանաբար դիրքավորված 30 ու մեկ տասնյակ մարտիկները միահամուռ կրակ են տեղում դեպի Շուշի արշավող հեծյալների վրա: Թուրքերը, օգտվելով իրենց քանակական գերակշռությունից, փորձում են արագ տեղաշարժերով խորտակել հայ մարտիկների դիմադրությունն ու բացել դեպի Շուշի տանող ուղին: Հայ մարտիկները դիմադրում են աննահանջ, բայց այդ կռիվները ղեկավարող Արամայիսի խոստովանությամբ ուժերի սահմանափակության պատճառով չէին կարող երկարատեւ դիմադրել, եթե ժամանակին չստանային անհրաժեշտ օգնություն:

Պատշաճ մակարդակով են գործել ինքնապաշտպանական շրջանների միջեւ կապն ու փոխհամագործակցությունը: Ասկերանից ստանալով ահազանգը՝ Խաչենի մարտական ուժերը Համազասպի գլխավորությամբ շտապում են մարտադաշտ եւ թիկունքից հարվածում հայ մարտիկների դիրքերը գրոհող թուրք հեծյալներին:

Անսպասելի եւ սրընթաց հարվածը վճռում է կռվի ելքը: «Հարուածը,- գրում է Արամայիսը,-կուռ էր, համարձակ. թուրքերն ընկրկեցին, եւ չկարողացան դիմադրել, չնայելով որ ահագին բազմութիւն էին կազմում...»[38]:

Մարտադաշտում հայտնվում են Խաչենի եւս 2, ինչպես նաեւ Թարագլուխ եւ Խանաբադ գյուղերի թուրքիկ խմբերը: Թուրքերը պարտություն են կրում եւ չկարողանալով առաջանալ Շուշիի ուղղությամբ, օգոստոսի 19-ին հարձակվում են Խրամորթի վրա: Խրամորթի գյուղացիների մղած կռիվները կարելի է դասել Ղարաբաղում տեղի ունեցած ամենահերոսական ինքնապաշտպանական մարտերի շարքում: Խրամորթի պաշտպանները օրեր շարունակ կարողացել են իրենց սակաթիվ ուժերով կասեցնել թուրքերի գրոհները: Խրամորթի դեպքերի ժամանակ եւս իր վճռորոշ խոսքն են ասել ինքնապաշտպանական շրջանների միջեւ հաստատված անխափան կապն ու ժամանակին օգնության հասնելու սահմանված կարգը: Խրամորթի մարտիկները թեեւ պաշտպանվել են քաջաբար ու աննահանջ, բայց ուժերը խիստ անհավասար են եղել: Կռվի վճռական պահին նրանց օգնության են հասնում Արամայիսի ու Մածոն Խեչոյի, Հա-

մազապի հրամանատարությամբ գործող Վարանդայի եւ Խաչենի մարտախմբերը:

«...Դէպի Խրամորթ,- ՝ շում է Արամայիսը,-սկսան Վարանդայի եւ Խաչենի մարտկոցներում դիրք բռնած մարտիկներից մի խումբ. նրանք գնդակի արագութեամբ հասան, մեծ ուժով գարկեցին թուրքերի ձախ թեւից, որ կռուի բախտը որոշեց. թուրքերն անկանոն նահանջով յետ փախան, բազմաթիւ դիակներ թողնելով Խրամորթի տակ»[39]:

Թուրքական կողմի համար, ինչպես արդեն նշվել է, կարեւորագույն նշանակություն ուներ Շուշին նվաճելը: Ասկերանի ու Խրամորթի պարտություններից հետո թուրք պարագլուխները ոչ միայն չեն հրաժարվում քաղաքը գրավելու մտադրությունից, այլեւ հաջորդ օրերին մինչեւ օգոստոսի 24-ը շարունակում են կռիվները եւ փորձում գրոհներ ձեռնարկելով՝ հաղթահարել հայ մարտիկների դիմադրությունն ու արշավել Շուշի:

Այդ օրերին տեղի ունեցած կռիվների ուսումնասիրությունը աներկբա ցույց է տալիս, որ թուրքական կողմը թեեւ ունեցել է մարտական ուժերի գերակշռություն, բայց չի կարողացել հաղթահարել հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը: Ուշագրավ եւ ուսանելի են օգոստոսի 22-ին տեղի ունեցած կռիվները: Այդ կռիվներում, որոնց ականատեսն են եղել գավառի պրիստավն ու նրա թիկնագորը, հայ մարտախմբերը տարել են տպավորիչ հաղթանակ՝ շնորհիվ կշռադատված ու ճկուն մարտավարության: Պրիստավի ու նրա գլխավորած զինվորների պարտականությունն էր միջամտել ու թույլ չտալ բախումները, բայց նրանք գրեթե ոչինչ չեն ձեռնարկել կանխելու կռիվները:

Այդ օրը թուրք հրոսակախմբերը, հերթական անգամ մեծաքանակ ուժեր կենտրոնացնելով, դարձյալ փորձել են հարձակում գարգացնել Ասկերան-Շուշի ուղղությամբ: Բայց գիտենալով, որ Ասկերանից դեպի Շուշի տանող ուղիները պաշտպանվում են հայկական մարտական ուժերի կողմից, զգուշացել ու չեն համարձակվել առաջանալ այդ ուղղությամբ: Հայ մարտախմբերի հրամանատարությունը թուրքերին ապակողմնորոշելու նպատակով դիտավորյալ թողնում է, որպեսզի թուրքական մի խումբ առանց որեւէ միջադեպի անցնի դեպի Շուշի տանող խճուղիով: Այդ մարտավարությունը պսակվում է հաջողությամբ:

Թուրքական հեծելախմբերից մեկը անտեղյակ հայկական կողմի նախապատրաստությունից՝ խճուղիով անարգել անցնում է: Խոջալուի մոտակայքում կենտրոնացած թուրք հեծյալները, տեսնելով հեծելախմբի անարգել անցումը, պրիստավի առաջնորդությամբ սրարշավ մո-

տենում են հայ մարտիկների դիրքերին եւ փորձում անցնել խճուղիով: Դարանակալ հայ մարտիկները «...սպասեցին, որ թուրքերի վերջը դուրս գար Ասկերանից, եւ հենց որ ամբողջ խումբը մտաւ օղակի մէջ, չորս կողմից դժոխային կրակ բաց արին: Պրիստաւը մի քիչ կանգնեց, դէս քշեց, դէն քշեց, գոռաց, բայց գործի լրջությունը տեսնելով՝ խոհեմաբար դուրս թռաւ ճանապարհից դէպի Խանաբադ, ապա դէպի Խանքենդի ու անհետացաւ»[40]:

Կռիվը շատ արագ է ավարտվել: Հայ մարտիկները թուրք հեծյալների վրա հարվածներ են տեղացել այնպիսի վարպետությամբ ու արագությամբ, որ նրանք չեն հասցրել ուսերից ցած բերել հրացաններն ու արձակել գեթ մեկ կրակոց: Մարտադաշտից փոքր-ինչ հեռու խմբված հարյուրավոր թուրք հեծյալները, ականատես լինելով դեպի Շուշի արշավող հեծելախմբերի ջախջախմանը, սարսափի են մատնվել ու որեւէ փորձ չեն ձեռնարկել օգնության ցույց տալ իրենց արյունակիցներին: Թուրքական կողմը շատ լուրջ կորուստներ է ունեցել. սպանվել էին բազմաթիվ բեկեր ու ցեղապետեր: Շնորհիվ կիրառած ճկուն մարտավարության՝ հայ մարտիկները չեն տվել ոչ մի զոհ, անգամ վիրավոր[41]:

Շուշիի եւ Ասկերանի դեպքերին զուգընթաց կռիվներ էին ընթանում նաեւ Ղարաբաղի մի շարք բնակավայրերում:

Օգոստոսի 18-ին թուրք հրոսակախմբերը ավարառության նպատակով հարձակվում են Ամարասի վանքի վրա: Ամարասի պաշտպանները համառ դիմադրություն են ցույց տալիս, բայց թշնամու բազմիցս գերակշռող ուժերին հաջողվում է ընկճել նրանց դիմադրությունն ու ներխուժել վանք: Թուրք ավարառուներն ամբողջովին թալանում են վանքի ունեցվածքը[42]:

Ամարասի վանքը թալանելուց բացի՝ թուրք հրոսակախմբերին չի հաջողվում հաղթանակ տանել եւ ոչ մի մարտում: Ամենուրեք հայ ինքնապաշտպանական ուժերին հաջողվում է հետ մղել հարձակումները եւ ապահովել իրենց բնակավայրերի անվտանգությունը[43]:

Ղարաբաղում տեղի ունեցած մարտերը ներկայացնող վավերագրերի ու հուշագրությունների ուսումնասիրությունը մատնանշում է, որ հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակներում, հատկապես Ասկերանի շրջանում տեղի ունեցած կռիվներում, իր հրամանատարական վարպետությամբ ու քաջությամբ աչքի է ընկել Խաչենի ինքնապաշտպանական մարտախմբերի հրամանատար Համազասպ Սրվանձտյանը:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Առանձնապէս նշանաւոր են նրա վարած կռիւները Խաչէնի եւ Ասկերանի շրջաններում: Ժողովուրդը կոչեց նրան Ասկերանի հերոս, իսկ աշուղները երգում—

Ամբողջ աշխարհի հռչակուեցաւ
Համագասպը պաճծալի»[44]:

Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակների հարկադրանքով նահանգի իշխանութիւնները, ի ցոյց հակամարտող կողմերի, փորձում են միջամտել ծավալվող իրադարձութիւններին:

Օգոստոսի 22-ի կռիվներում թուրքական հրոսակախմբերի ջախջախիչ պարտութիւնից հետո ռուս զինվորները վերջապես փակում են Ասկերանից դեպի Շուշի ձգվող ճանապարհը՝ դրանով խոչընդոտում Շուշիում գտնվող թուրքական ուժերին միանալու Աղդամի հրոսակախմբերին: Հակամարտող կողմերին հաշտեցնելու ու խաղաղութիւն հաստատելու նպատակով Օգոստոսի 25-ին Ղարաբաղ է գալիս Գանձակի նահանգապետ գեներալ Տակայաշվիլին: Շուշիում նահանգապետը հանդիպում է հակամարտող կողմերի ներկայացուցիչներին եւ ներկայանալով որպես կռիվները դադարեցնելու ու խաղաղութիւն հաստատելու կողմնակից՝ ասում է.«Ղարաբաղում ես հոսեց երկու հարեւան ազգերի արիւնը...Սակայն բաւական է. ես եկել եմ եւ ոչ մի միջոց չպիտի խնայեմ խաղաղութիւն հաստատելու համար...Թէ չէ՝ սա ինչի՞ նման է. ինքներդ ասացէք. եւ նա ցոյց տուաւ չորս կողմը փռուած թուրքերի դիակները, որոնք դեռ չէին հաւաքուած. սա ինչի՞ նման է, կրկնեց գեներալը,-եւ սա արուել է հայերի ձեռքով...»[45]:

Հայկական կողմը բացատրել է նահանգապետին, որ հայերի ձգտումն ու ցանկութիւնը միշտ եղել ու մնում է միմիայն խաղաղութեան պահպանումը: Նախահարձակը բոլոր դեպքերում եղել են թուրքերը, որոնք օգոստոսի 17-ից սկսած 10-12 անգամ հարձակումներ են գործել հայկական բնակավայրերի վրա: Կողմերից յուրաքանչյուրը փորձել է նահանգապետին հավատացնել, որ կռիվները սանձազերծել է ոչ թէ ինքը, այլ հակառակորդը: Նահանգապետը ուշադրութեամբ լսել է կողմերի բացատրութիւնը եւ ի զարմանս հայ եւ թուրք ներկայացուցիչների՝ նշել.«...հայերն իբրեւ աւելի քաղաքակիրթ ժողովուրդ, արեւմ հետ գործ չպետք է ունենան. ես հաստատում եմ, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել...այսուհետեւ Ասկերանում զինուած մարդ չլինի, հակառակ դէպքում՝ կը պատժեմ խիստ կերպով»[46]:

Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարութեան համար արդեն գաղտնիք չէր, որ թեպետ թուրքերը պարտութիւն էին կրել գրեթե բոլոր կռիվներում, բայց դա բոլորովին չէր նշանակում, որ նրանք հարկադրված պիտի հրաժարվեին հայկական բնակավայրերի վրա հարձակումներ ձեռնարկելու մտադրութիւնից ու խաղաղ դաշն

կնքեին հայերի հետ: Անհրաժեշտ էր ոգեշնչել ու զինել բնակչութեանը եւ ավելի կայուն ու ամուր հիմքերի վրա դնել արցախահայութեան ինքնապաշտպանութիւնը:

Սեպտեմբերի 19-ին Հ.Յ. Դաշնակցութեան «Ապառաժ»-ի կոմիտեն «Ղարաբաղի հայ ժողովրդին» խորագիրը կրող կոչով դիմում է արցախահայութեանը:

«Կատարուեց այն,-նշում է կոչը,- ինչ պիտի կատարուէր անխուսափելիորեն:

Ղարաբաղի մահմեդականութիւնը յարեց համաիսլամական շարժման եւ մեր հայրենիքը սուզուեց նորից խաւար եւ խայտառակ միջնադարի մէջ: Մի շարժում, որի մղիչ գաղափարը ոչնչացումն է ամէն մի քաղաքակրթութեան, որի ղեկավարները բարոյագուրկ եւ գիշատիչ կալուածատերերն են...Հայրենիքի մի ծայրից մինչեւ միւս ծայրը հրդեհում, բալանում եւ սպանում է թուրքը...»[47]:

ՀՅԴ «Ապառաժ»-ի կենտր. կոմիտեն այդ կոչով արցախահայութեանն է ներկայացնում համաիսլամական գաղափարախոսութեան էութիւնն ու թուրքերի կողմից կռիվների սանձազերծման իրական պատճառները: Միաժամանակ, ըստ արժանվույն գնահատելով Շուշիի հինգ օր ընթացող կռիվներում հայ մարտիկների դրսեւորած հերոսականութիւնը, ՀՅԴ կոմիտեն միանգամայն իրավացիորեն նշում է սեփական ուժերին ապավինելու, միասնական ուժերով մարտնչելու կարեւորութիւնը՝ որպես հաղթանակ ձեռք բերելու անհրաժեշտ պայման:

Ղարաբաղի հայութեանը ոգեշնչելու նպատակով ՀՅԴ հայտարարում է. «...ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ այս վայրկենին աւելի զօրեղ է, քան երբ եւ իցէ, որ նա որոշել է այսուհետեւ եւս, ինչ գնով էլ լինի՝ պաշտպանել հայ ժողովուրդը թուրք խուժանի յարձակումներից եւ պատժել խստօրեն իսլամական ամեն մի անիրաւութիւն»[48]:

Ղարաբաղում ընթացող դեպքերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ արցախահայութիւնը, ինչպես նաեւ Զինվորական մարմինը եւ ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն իրականում փորձել են խաղաղութիւն հաստատել գավառում ու որոշակի քայլեր են ձեռնարկել՝ դադարեցնելու կռիվները: Բայց հայկական կողմի խաղաղ նախաձեռնութեանը թուրք առաջնորդները յուրաքանչյուր անգամ պատասխանել են հայկական բնակավայրերի վրա ձեռնարկած հարձակումներով ու բռնի այլ գործողութիւններով:

Նահանգապետի այցելութիւնը, խոստումներն ու սպառնալիքը գրեթե ոչ մի ազդեցութիւն չեն գործում: Իհարկե, եթե նահանգապետը՝ գե-

ներալ Տակայաշվիլին, իրականում ցանկանար վերջ տալ բախումներին եւ հաշտեցներ հակամարտող կողմերին, ապա կարող էր դիմել առավել ազդեցիկ գործնական քայլերի ու նահանգում հաստատեր խաղաղություն: Մանավանդ, որ նրա տրամադրության տակ կային բավարար քանակությամբ մարտական ուժեր: Բայց նահանգում եւ մասնավորապես Ղարաբաղում խաղաղություն հաստատելը դեռեւս ցարիզմի օրակարգում չէր ու բնականաբար դուրս էր նահանգապետի ծրագրերից:

Գեներալ Տակայաշվիլիի հեռանալու հաջորդ օրը եւեթ կռիվները փոքր ընգրկումներով շարունակվում են: Ինչպես նախորդ դեպքում, այս անգամ եւս նախահարձակն ու պարտվողը դարձյալ թուրքական կողմն է: Այդ կռիվներում հայ մարտական ուժերի նվաճած հաղթանակներից առավել արժանահիշատակը Ավդալ-Գյուլափլուի եւ Խրամորթի կռիվներն են:

Չնայած մի շարք կռիվներում կրած պարտությանը, թուրք պարագլուխները բնավ չեն հրաժարվում Ղարաբաղը հայաթափելու մտադրությունից: Նրանք, հայկական բնակավայրերի վրա հարձակվելու նկատառումով, նախքան հիմնական գործողություններ ծավալելը, ռազմական հենակետեր էին ստեղծել Ղարաբաղի տարբեր շրջաններում:

Այդ հենակետերից էին Ասկերանին ու Վարանդային սահմանակից 800 ծուխ ունեցող թուրքաբնակ Ավդալ եւ Գյուլափլի գյուղերը, որտեղ պահեստավորել էին մեծ քանակության զենք ու զինամթերք: Կենտրոնանալով վերոհիշյալ հենակետերում եւ հատկապես Աղդամի շրջանում, թուրք հրոսակախմբերը պարբերաբար հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա [49]:

Անհրաժեշտ էր համապատասխան քայլեր ձեռնարկել՝ վնասազերծելու այդ հենակետերը: Պիտի նկատել, որ մինչեւ 1906թ. փետրվարին Թիֆլիսում կայացած հայ զինվորական ղեկավարների խորհրդաժողովը ՀՅԴ գործունեությունում գերիշխող նախահարձակ չլինելու, սոսկ ինքնապաշտպանություն կազմակերպելու մարտավարությունն էր: Իհարկե, բացառությամբ Նիկոլ Դումանի [50]:

Ավդալ եւ Գյուլափլի հենակետերից պարբերաբար ձեռնարկած հարձակումների հարկադրանքով Ղարաբաղի Զինվորական մարմինը եւ ՀՅԴ պաշտոնական մարտավարությունը հետեւողականորեն կենսագործող Վարդանը որոշում են դիմել հարձակողական գործողությունների եւ ոչնչացնել այդ հենակետերը [51]:

1905թ. սեպտեմբերի 10-ին Ավդալ եւ Գյուլափլի հենակետերից թուրք հրոսակախմբերը հարձակվում են հայկական Միրաջալու գյուղի

վրա: Գյուղի ինքնապաշտպանական ուժերը իրենց օգնության եկած Վարանդայի եւ Խաչենի մարտախմբերի համագործակցությամբ հետ են մղում բշնամու հարձակումները եւ որոշում են համատեղ ուժերով հարձակվել Ավդալ եւ Գյուլափլու գյուղերի վրա: Այդ օրերին տեղի ունեցած կռիվներին հետեւող կոզակների գործողություններում դրսեւորվել է երկակի մոտեցում: Սկզբում, համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի կազմած տեղեկագրի.«...Կոզակների վերաբերմունքը դէպի հայերը այնչափ էլ վատ չէր»[52]:

Այն պահին, երբ հայկական մարտական ուժերը, հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, ներխուժում էին Ավդալ եւ Գյուլափլի գյուղերի տարածքը, Աղդամի թուրք հրոսակախմբերը կոզակական հարյուրակի աջակցությամբ հարձակվում են Վարազաբույն գյուղի վրա: Եթե հարեւան շրջանների մարտախմբերը չհասցնեին ժամանակին օգնություն ցուցաբերել Վարազաբույնի պաշտպաններին, ապա թուրքական գերակշիռ ուժերը ի վերջո կհաղթահարեին գյուղի պաշտպանների դիմադրությունը եւ կոչնչացնեին ողջ բնակչությանը: Հայ մարտախմբերը հարկադրված դադարեցնում են հարձակումն ու շտապում օգնության հասնել Վարազաբույնի պաշտպաններին: Թուրքական գյուղերի բնակիչները, օգտվելով հայ մարտախմբերի հեռանալուց, փախչում եւ ապաստանում են Աղդամում:

Համաձայն վերոհիշյալ տեղեկագրի, մարտադաշտում հայտնված «...հայերը այնքան ուժեղ ու թիւրքերի համար անսպասելի գրոհով մտան գիւղը, որ թիւրքերը ոչինչ չկարողացան հակադրել եւ դիմեցին փախուստի...»[53]:

Այդ հաղթական կռվից հետո հայ մարտական ուժերը փորձում են զարգացնել հարձակումը եւ գրավել Ավդալ-Գյուլափլու գյուղերը: Բայց այդ գյուղերին օգնության են հասնում Աղդամում կենտրոնացած թուրք հրոսակախմբերը եւ կոզակների աջակցությամբ կասեցնում հայ մարտական ուժերի հարձակումը: Ավելին, թուրք հրոսակախմբերը, չբավարվելով այդ գյուղերի պաշտպանությամբ, շարունակում են հարձակումներ գործել հայկական բնակավայրերի վրա: Ավդալ եւ Գյուլափլի հենակետերը լուրջ վտանգ էին ներկայացնում արցախահայության համար: Անհրաժեշտ էր ավելի լուրջ նախապատրաստվել ու վերացնել բշնամու հենակետերը:

Զինվորական մարմնի կարգադրությամբ Վարանդայի եւ Խաչենի մարտական ուժերը սեպտեմբերի 6-ին սկսում են այդ հենակետերը գրավելու գործողությունը: Այդ գյուղերի վրա Վարանդայի եւ Խաչենի մարտական ուժերի ձեռնարկած գրոհը իրավամբ կարելի է համարել

հարձակողական բնույթի մարտական գործողության լավագույն օրինակներից մեկը:

Թուրքական կողմը Ավդալ եւ Գյուլափլի հենակետերը ավելի ուժեղացնելու նպատակով սեպտեմբերի սկզբներին այնտեղ է կենտրոնացնում ավելի քան 2000-2500 զինյալների: Գրոհի նախօրեին գյուղերի վրա հարձակվող հայ մարտական ուժերը բաղկացած էին ընդամենը 375 մարտիկներից [54]:

Վստահ իրենց ուժերի գերակշռությանը, թուրքերը վաղօրոք գրավելով Միրչալու գյուղի մերձակա բարձունքները, հարձակվում են գյուղի վրա: Հայկական մարտական ուժերը կարողանում են հաջողությամբ հետ մղել հակառակորդի գրոհները: Զարգացնելով հաջողությունը՝ հայ մարտական ուժերը կարողանում են ոչ միայն փախուստի մատնել հարձակվողներին, այլեւ դիմելով հակահարձակման՝ ներխուժում են Ավդալ, ապա նաեւ թուրքերի առավել ամրացված հենակետը՝ Գյուլափլու գյուղը: Թուրք հրոսակախմբերը, զուտ քանակական առումով, բեեւ բազմիցս գերազանցել են հայկական մարտական ուժերին, բայց անկարող են եղել դիմակայել նրանց սրընթաց հարձակմանը [55]:

Հայկական մարտական ուժերը վերջնականապես հիմնովին ավերում են ոչ միայն Ավդալ եւ Գյուլափլու գյուղերը, այլ նաեւ թուրքական Ղարադաղլու՝ 150 տուն, Դիվանլար՝ 120 տուն եւ Հազրաֆլու՝ 35 տուն գյուղեր [56]:

Թուրքերը, չհաշտվելով վերոհիշյալ գյուղերի կործանման ու դրանից առաջ՝ օգոստոսի 19-ին Խրամորթի պաշտպաններից կրած պարտության հետ, զուտ վրեժխնդրության նպատակով երեք անգամ հարձակվում են Խրամորթի վրա, բայց դարձյալ ապարդյուն:

Անհաջողության մատնվելով նաեւ հայկական գյուղական մի քանի բնակավայրերի վրա կատարած հարձակումների ժամանակ, թուրք առաջնորդները ժամանակավորապես դադարեցնում են գրոհները:

Օգտվելով ժամանակավոր դադարից, Համազասպը մեկնում է Թիֆլիս, մասնակցելու նոյեմբերի 13-ին այնտեղ գումարվող ՀՅԴ Ռայոնական ժողովին, որտեղ ի թիվս մի շարք հարցերի, ժողովականները պիտի քննարկեին եւ ընդունեին որոշումներ ինքնապաշտպանական ուժերի կազմակերպման եւ մարտավարության վերաբերյալ:

Թեպետ նախորդ մարտերում Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը կարողացել էին անվիճելի հաղթանակներ նվաճել, սակայն գավառի ինքնապաշտպանությունն առավել կայուն եւ հուսալի հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ էին զենք ու զինամթերք եւ դրամ:



Մարտիրոս Վարժապետ

Ներկայացնելով ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն(Շուշի, Ղարաբաղ), Համազասպը, բնականաբար, Ռայոնական ժողովում պիտի հայտներ իրենց պահանջը, այն է՝ զենք ու զինամթերք եւ դրամ: Ի դեպ, Ռայոնական ժողովում համանման պահանջ ներկայացրել են շրջաններից եկած գրեթե բոլոր մասնակիցները:

Ըստ ժողովի մանրամասները ներկայացնող արձանագրությունում տեղ գտած տվյալների. ««Ապառաժ» կենտր. կոմիտեն(Շուշի, Ղարաբաղ)՝ խմբապետ Համազասպ.- կարիք կայ 600.000 ծայրի, 5000 հրացանի եւ 50.000 ռ. դրամի՝ ծախսերի համար»[57]:

Քանի որ ստույգ տվյալներ չկան, ապա դժվար է ասել, թե Զինվորական բյուրոն որքան զենք եւ զինամթերք ու դրամ է հատկացրել Ղարաբաղի ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի տնօրինությանը:

Ռայոնական ժողովի ավարտից հետո, Համազասպը Ալ. Խատիսյանի ընկերակցությամբ նոյեմբերի 21-ին գնացքով գալիս է Գանձակ, ապա այնտեղից վերադառնում Ղարաբաղ: Ի դեպ, նա Ռայոնական ժողովում մարտավարությանը վերաբերող հարցը քննարկելիս, պաշտպանել է հարձակողական բնույթի մարտավարությամբ գործելու տեսակետը:

Իսկ այդ ընթացքում թուրքական կողմը ուժեր էր կուտակում եւ պատրաստվում վճռական գոտեմարտերի: Թուրքերի հարձակման

գլխավոր թիրախներից մեկը, ինչպես նախորդ մարտերում, դարձյալ եղել է Խրամորթ գյուղը: Նոյեմբերի 26-ին եւ 27-ին թուրք հրոսակախմբերը հերթական անգամ հարձակումներ են ձեռնարկում այդ գյուղի վրա, բայց դարձյալ որեւէ արդյունքի չեն հասնում: Գյուղի ինքնապաշտպանական ուժերն այս անգամ եւս կարողանում են հետ մղել թուրքերի բոլոր հարձակումները:

Նոյեմբերի 28-ին թուրք առաջնորդները, կենտրոնացնելով ավելի քան 1500 զինյալներից բաղկացած հրոսակախմբեր, վերսկսում են հարձակումը: Այդ նույն պահին կոզակները, նստած Ասկերանի պահականոցում, որեւէ փորձ չեն ձեռնարկել կանխելու կռիվները: Ինչպես նախորդ՝ օգոստոսի 19-ին տեղի ունեցած կռվում, այս անգամ դարձյալ Խրամորթի պաշտպաններին օգնության են գալիս Համազասպի, Մածուն Խեչոյի եւ Արամայիսի գլխավորած Խաչենի ու Վարանդայի բռուցիկ մարտախմբերը եւ սրընթաց հարձակվում արդեն գյուղ թափանցած թուրքերի վրա:

«...օգնութիւն հասած խմբերը,- գրում է Արամայիսը,- խրուեցին թուրքերի մէջ. կռւում էին քսան քայլի վրայ, իսկ երկու տեղ արդէն ձեռնամերձ կռուի էին մտել: Վերջապէս թուրքերը յետ մղուեցին, 13 դիակ թողնելով տների առաջ, իսկ հետները տարածը յայտնի չեղաւ: Հայերից սպանուել էին մի կին եւ մի ծերունի...»[58]:

Շուշիի հնգօրյա եւ գավառներում տեղի ունեցած կռիվները ցույց տվեցին.

1. Թուրքականը կողմը, հավատարիմ իր մարտավարությանը, Ղարաբաղում ընթացող կռիվներում վարում էր հարձակողական բնույթի գործողություններ:

2. Ի տարբերություն թուրքերի՝ հայկական կողմը բացառությամբ Ավդալ-Գյուլափլիի կռիվների, առաջնորդվում էր պաշտպանական մարտավարությամբ, այսինքն՝ առայժմ մղում էր միմիայն ինքնապաշտպանական բնույթի կռիվներ:

3. Թուրքական կողմը ուներ քանակական գերակշռություն: Կռիվներին մասնակցել են ոչ միայն տեղաբնակ թուրքերը, այլ նաեւ հարակից շրջաններից, հատկապես Աղդամից Ղարաբաղի տարածքը ներխուժած թուրք եւ քուրդ հրոսակախմբերը:

4. Թուրքական կողմը վաղօրոք կազմակերպված էր եւ ամենակարեւորը՝ շատ լավ զինված:

5. Ղարաբաղի ինքնապաշտպանական շրջանների մարտական ուժերը ինչպես հարկն է նախապատրաստված չէին եւ զուտ քանակական առումով զգալիորեն զիջում էին հակառակորդին ու ունեին սահմանափակ քանակության զենք ու զինամթերք:

Ի տարբերություն «հոտային, ամբոխային» կռիվներ մղող թուրք հրոսակախմբերի, հայկական մարտական ուժերը ավելի կազմակերպված էին եւ հակառակորդի առավելություններին հակադրում էին իրենց քաջությունն ու վարպետությունը: Հայ մարտախմբերի հրամանատարների զգալի մասը(Վարդան, Մոռավ, Համազասպ, Արամայիս, Մածուն Խեչո եւ այլոք) կռիվների բովով անցած քաջավարժ մարտիկներ էին, որոնք իրենց փորձառությամբ ու մարտ վարելու կարողությամբ գերազանցում էին թուրք հրոսակախմբերի առաջնորդներին:

Ընդհանրացնելով Ղարաբաղում տեղի ունեցած կռիվների արդյունքները՝ Արամայիսը նշում է.«Ասկերանեան «յաղթութիւնները» թուրքերի վրայ, իհարկէ, ճնշող տպաւորութիւն էր թողնում, իսկ հայերի վրայ, ընդհակառակը. նրանց մէջ պաշտպանելու ոգին արդէն իւր տեղն էր գրաւել, «վախկոտ» հայը այժմ քաջաբար դիմագրաւում էր հակառակորդին, ինչ թիւ էլ կազմելիս լինեին նրանք: Դրան ապացոյց՝ քաջ Խրամորթ գիւղը»[59]:

Կռիվների հետեւանքով հայերի ու թուրքերի կրած մարդկային եւ նյութական կորուստները եղել են հակոտնյա: ՀՅԴ բյուրոյին հասցեագրած զեկուցագրերից մեկը ներկայացնելով այդ իրողությունը՝ նշում է. «Ընդհանուր առմամբ գաւառում մեր կրած վնասները նիւթական տեսանկիւնից զգալի են. մարդկային կորուստները շատ չեն: թուրքական կորուստները մարդկային-անհամեմատ շատ են»[60]:

Նահանգում տեղի ունեցած դեպքերը ակնառու կերպով հավաստում էին, որ ցարական իշխանությունները առավելապես նախապատվություն տալով թուրքերին, գործնականում ոչ մի կանխարգելիչ քայլ չէին ձեռնարկում խոչընդոտելու հայկական բնակավայրերի վրա շարունակաբար կրկնվող հարձակումները: Շրջաններում տիրող համանման կացությունը ինքնապաշտպանության հրամանատարությանը թելադրում էր դիմել ավելի կտրուկ եւ վճռական գործողությունների:

Թուրքերի հարձակողական նկրտումներին հակահարված տալու նկատառումով Ղարաբաղի Զինվորական մարմինը որոշում է շրջափակել Շուշիի թուրքական թաղամասը եւ սովամահ անելու սպառնալիքով հարկադրել թուրք պարագլուխներին դադարեցնել հայկական գյուղերի վրա ձեռնարկվող հարձակումները: Հայկական մարտական ուժերը ամուր շրջափակում են թուրքական թաղամասը եւ այն ամբողջովին կտրում արտաքին աշխարհի հետ ունեցած կապերից[61]:

Թուրքերն անխուսափելիորեն կմատնվեին սովամահության, եթե չլիներ իշխանությունների միջամտությունը: Շուշիի թուրք բնակչությանը սովամահությունից փրկելու նպատակով նահանգի իշխանությունների կարգադրությամբ կոզակական ջոկատները գրավում են Ասկերանի մարտկոցներն ու բացում Ասկերան-Շուշի մայրուղին: Նույնիսկ այս պարագայում, թուրքերը զգուշանալով հայ մարտիկների հարվածներից, չեն համարձակվում շարժվել Ասկերան-Շուշի ճանապարհով եւ սննդամթերք հասցնել քաղաքի թուրք բնակչությանը:

Նահանգի իշխանությունների աջակցությամբ թուրքերը, այնուամենայնիվ, տասնյակ ֆուրգոններով փորձում են բեռներ փոխադրել Շուշի եւ փրկել իրենց արյունակիցներին: Պիտի ասել, որ հայ մարտական ուժերը, խիստ հսկողություն սահմանելով դեպի Շուշի ձգվող ուղիների վրա, բռնագրավել են այդ բեռների մեծ մասը [62]:

Արամայիսի հավաստմամբ միայն դեկտեմբերի 26-ին իրենք թուրքերից կարողացել են վերցնել 116 ձի, 54 ֆուրգոն, 6000 փութ տարբեր տեսակի ապրանքներ [63]:

Ուշագրավ է ֆուրգոններին ուղեկցող ռուս աստիճանավորների եւ զինվորների վերաբերմունքը: Նրանք ոչ միայն որեւէ փորձ չեն ձեռնարկել խոչընդոտելու հայ մարտիկների գործողությունները, այլեւ ըստ Արամայիսի. «Ստրաժնիկներն ու Ասկերանի «պահապան» կոզակները եւս իրենց համար մի բաւական բաժին վերցրին՝ հետեւյալ օրը հայերի վրա ծախելու համար: Իսկ ֆուրգոններին ուղեկցող 150 կոզակները մի զարմանալի անտարբերութեամբ հեռացան դէպքի վայրից» [64]:

Շուշիի թուրք բնակչությունը հայտնվում է անելանելի իրավիճակում: Այդ օրերին Կովկասի փոխարքայի անունով բազմաթիվ հեռագրեր են հասնում Թիֆլիս: Հեռագրերի հեղինակները, դատապարտելով հայ մարտիկների գործողությունները, խնդրում են փոխարքային փրկել սովամահության սպառնալիքում հայտնված Շուշիի թուրք բնակչությանը [65]:

Այդ ընթացքում թեեւ մարտական մեծածավալ կռիվներ տեղի չեն ունեցել, բայց թուրք հրոսակախմբերը շարունակել են իրենց ավազակային գործողությունները: Հայկական մարտական ուժերը, ի պատասխան թուրք հրոսակախմբերի ավազակային գործողությունների, շարունակել են ամուր շրջափակման մեջ պահել Շուշիի բոքությանը եւ հսկողություն սահմանել հաղորդակցության ուղիների վրա:

Նահանգի իշխանությունները, փոխանակ սանձելու թուրքերի հարձակողական նկրտումներն ու կանխելու նրանց ավազակային գործողությունները, կատարում են թուրքական կողմի պահանջները եւ

քնդանոթներից ռմբակոծում են Շուշիի մերձակա հայկական գյուղերն ու զենքի ուժով բացում քաղաք տանող ճանապարհները:

«Ընկերներ» վերնագրած նամակում Համազասպը, ներկայացնելով իշխանությունների ձեռնարկած վերոհիշյալ միջոցառումները, նշում է. «Գնաց կռիւը: Ռմբակոծեցին գիւղեր, ոչ թէ մէկ, այլ մի քանի: Տիրեցին մեր դիրքերը եւ լաւ իմացեք, պարոններ, այն տակտիկայով, որ կուում էր թուրքը, այժմ մեծ տարբերութիւն կայ» [66]:

Ճանապարհները բացելուց հետո զինվորների ուղեկցությամբ հայերն ու թուրքերը ֆուրգոններով ապրանքները հասցնում էին Շուշի, ընդսմին «...հայերի ապրանքները,-գրում է Արամայիսը,-բերում էին Շուշի փութին ստանալով 60 կոպէկ, իսկ թուրքերից 30. ամեն տեսակ կենսական մթերքներ տարան թուրքերի համար, իսկ հայկական մասը շատ քիչ բան էր գնում. այդ պատճառով շատ անհրաժեշտ մթերքներ այդ օրուանից թուրքերի մօտ աւելի էժան էր լինում, քան թէ հայերի» [67]:

Ղարաբաղում, կարելի է ասել, հարաբերական խաղաղությունը պահպանվում է մինչեւ 1906թ. հուլիսի կեսերը: Այդ ընթացքում մեծածավալ կռիվներ թեպետ տեղի չեն ունեցել, բայց թուրքական կողմը շարունակել է ավազակային գործողությունները եւ արցախահայության դեմ պայքարելու համար կիրառել է այլ մարտավարություն:

Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը թուրքերը, ինչպես Երեւանի նահանգում, Ղարաբաղում նույնպես փորձում են գաղտնի սպանությունների, առեւանգումների ու ավարառությունների միջոցով ահաբեկել արցախահայությանն ու ապակայունացնել Ղարաբաղում տիրող կացությունը: Թուրքերի ավազակային գործողություններին նպաստում էր նաեւ Ղարաբաղի Զինվորական մարմնի եւ հատկապես Վարդանի կիրառած մարտավարությունը:

Երեւանի նահանգում թուրքերի սանձարձակություններին վերջ տալու համար, Դումանը բոլոր խմբապետներից խստորեն պահանջում էր, որ յուրաքանչյուր սպանված կամ անհետացած հայի փոխարեն անպայմանորեն սպանել կամ անհետացնել հինգ թուրք: Դումանի պատվիրանի չկատարումը կարող էր ավարտվել ամենախիստ պատժով:

«Դումանը,-գրում է Վ. փափազյանը,- հրամանները արձակելու ատեն բոլորովին կը մոտենար ենթակային... Իր դիմագիծը կատղած առիւծի կերպարանք կը ստանար, իսկ հրամանները հատիկ-հատիկ, շիկացած երկաթի պէս կը մխրճէր դիմացինի ուղեղին մէջ - մէկ սպանուած հայի փոխարեն հինգ թաթարի գլուխ պիտի ձգես,- կը ֆշշար Դումանը իր խոշոր ակռաներու մէջէն. կարելի՞ էր չկատարել...» [68]:

Ի տարբերություն հարձակողական մարտավարությամբ առաջնորդվող Նիկոլ Դումանի, Վարդանի համար ավելի նախապատվելի էր պաշտպանողական բնույթի մարտավարությունը: Այսինքն, նա հետեւողականորեն կիրառում էր Հ.Յ.Դաշնակցության պաշտոնական, այն է՝ նախահարձակ չլինելու մարտավարությունը:

Մ. Վարսանյանի բնութագրմամբ. «Վարդանը՝ մեղմ, փափուկ սրտի տէր երբեմն փոքր-ինչ վարանոտ, անվճռական... երբ նա ընդհանուր հրամանատար էր Ղարաբաղի մէջ, ստէպ կը մերժէր ընկերներու յորդորները՝ ակն ընդ ականի օրէնքով գործել թշնամիի դէմ, վառել այս կամ այն թաթար գիւղը, ոչնչացնել խուժանը...»[69]:

Հայ-թուրքական ընդհարումները տարածվել էին բովանդակ Արեւելահայաստանում եւ Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում: Կովկասահայության ինքնապաշտպանության ղեկն ստանձնած Դաշնակցությունը պիտի որդեգրեր ժամանակի պահանջներին ու յուրահատկություններին համահունչ կենսունակ մարտավարություն:

1905թ. նոյեմբերին Թիֆլիսում տեղի է ունենում ՀՅԴ Ռայոնական ժողովը, որն ի թիվս բազմաթիվ հրատապ խնդիրների քննարկում է նաեւ մարտավարության եւ ինքնապաշտպանական շրջաններին ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցերը:

Համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կենտրոնական կոմիտեի տեղեկագրի «Ապառաժ» (Շուշի, Ղարաբաղ)՝ խմբապետ Համազասպ.- Կարիք կայ 600.000 ծայրի, 5000 հրացանի եւ 50.000 ռ. դրամի՝ ընթացիկ ծախսերի համար»[70]:

Ժողովում բուռն բանավեճ է ծավալվել հատկապես մարտավարության ու քոչին վերաբերվող հարցերը քննարկելիս: Ժողովականների մի մասը, որոնց թվում Ավ. Իսահակյանը, Համազասպը, Հովհաննես Քաջազնունին, Արմեն Գարոն, Շահրիկյանն ու այլոք նկատի ունենալով, որ թուրքերը հետայսու դարձյալ շարունակելու էին հարձակվել հայկական բնակավայրերի վրա, առաջարկում են հրաժարվել պաշտպանական բնույթի մարտավարությունից եւ ձեռնարկել հարձակողական գործողություններ: Նրանց կարծիքով պիտի արգելել նաեւ քոչը: Այսինքն թույլ չտալ, որպեսզի ամռան ամիսներին քոչվոր թուրքերը իրենց հոտերը բարձրացնեին հայկական բնակավայրերում գտնվող սարերն ու արոտավայրերը:

Ըստ Դավիթ Ամանունի տվյալների՝ Ղարաբաղի ամառային արոտավայրերը կազմում էին մոտավորապես 307 հազար դեսյատին: Յուրաքանչյուր ամառ իրենց անասունների հոտերով այդ արոտավայրերն

էին բարձրանում 26000 ընտանիքներ, որոնց միայն 10% էին կազմում հայերը, իսկ թուրքերը՝ 75%, մնացած 15%-ը՝ քրդերն ու թաթարները[71]:

Կռիվների փորձը ցույց էր տալիս, որ քոչվորները լուրջ վտանգ էին ներկայացնում: Նրանք, սարեր բարձրանալիս, գրավում էին հաղորդակցության կարեւոր ուղիները եւ կտրելով մեկը մյուսից հայկական բնակավայրերը՝ պարբերաբար հարձակումներ էին գործում գյուղերի եւ ճամփորդների վրա:

Ժողովականների մյուս մասը պաշտպանել է հակառակ տեսակետը: Նրանց կարծիքով պետք է նախահարձակ չլինել, դիմել հաշտության եւ թույլ տալ քոչը: Ժողովականները տարաձայնություններով հանդերձ ընդունում են հետեւյալ որոշումը.

«1.- Նախայարձակ չլինել եւ պատրաստուել հակահարուած տալու ու յարձակուելու, եթէ թուրքերն են սկսում:

2.- Նախայարձակ լինենք, երբ նկատենք, որ նրանք են յարձակւում.

3.- Հայերին համախմբել եւ կոմպակտ մասսա կազմել»[72]:

Այս վերջին՝ 3-րդ կետը առաջարկել է Ավ. Իսահակյանը:

Ժողովականներից հարձակողական մարտավարության ամենաընդգծված հակառակորդը եղել է Հովսեփ Արղությանը(Իշխան), որը նույնիսկ պահանջել է արձանագրության մեջ մտցնել իր բողոքը, որ «...Հ.Յ. Դաշնակցութիւնը իր ծրագրի մէջ մտցնում է յարձակողական տակտիկան»:

Հարձակողական մարտավարության ամենաջերմեռանդ կողմնակիցների մեջ են եղել Ավ. Իսահակյանը, Համազասպը, Արմեն Գարոն, Քաջազնունին եւ Շահրիկյանը:

Ռայոնական ժողովում մարտավարության վերաբերյալ ընդունած որոշումը գրեթե ոչնչով չի տարբերվում նախորդ որոշումից: Ինչպես նախկինում, հետայսու դարձյալ ՀՅԴ ապակենտրոն կառույցների իրավասության մեջ էր մտնում որոշելու իրենց մարտավարությունը, այն էլ «Նախայարձակ լինելու մոմենտի որոշումը իրաւասու մարմինները վճռում են գաղտնի քուէրկութեամբ՝ ժողովականների ձայների 2/3-ի մեծամասնութեամբ»[73]:

Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Վարդանը, առաջնորդվելով Ռայոնական ժողովի որոշմամբ, ինքնապաշտպանական խմբերի հրամանատարներին հրահանգում է գործել առավելագույն զգուշությամբ եւ չպատասխանել հակառակորդի ավազակային գործողություններին: Բնական է, որ նման մարտավարությունը չէր կարող գոհացնել մարտական հրամանատարներից շատերին, որոնք որոշակիորեն

տեղյակ էին Երեւանի նահանգում Դումանի ձեռնարկած հարձակողական գործողությունների արգասաբեր արդյունքներին: Վարդանը մշտապես գտնվել է Շուշիում եւ գրեթե չի այցելել շրջանները:

Թուրքերը, լավագույնս օգտվելով հայ մարտական ուժերի պասիվությունից, շարունակում էին իրենց ավազակային գործողությունները: Խաչենի մարտական ուժերի հրամանատար Համազասպը, չհամակերպվելով Ղարաբաղում տիրող կացությանը, նամակներից մեկում իր բողոքն է հայտնում Ջինվորական մարմնի եւ Վարդանի կիրառած մարտավարությունից: Նա պահանջում է նախահարձակ լինել, ձեռնարկել պատասխան գործողություններ եւ դրանով զգաստացնել ու սարսափի մատնել թուրք հրոսակներին [74]:

Ղարաբաղում տիրող կացության վերաբերյալ Վարդանին հասցեագրած նամակում արտահայտելով իր դժգոհությունը՝ Վարանդայի մարտախմբերի հրամանատարներից Մածուն Խեչոն գրում է. «Չգիտենք ի՞նչ դիրք բռնենք թուրքերի դեմ եւ ի՞նչ տակտիկայով առաջ ընթանանք: Նրանք իրենց աւազակային յարձակումներով յաջող կերպով անհանգստացնում են հայերին. ի բեւ խաղասեր մեր ժողովրդին...աշխատանքի օրեր շարունակ զբաղուած ու հոգնած գիւղացին տրամադրութիւն չունի թշնամուն դարանամուտ լինելու...» [75]:

Նույն նամակում, Վարդանին ներկայացնելով թուրքերի կողմից իրականացրած մի շարք ահաբեկչական ու հայերի առեւանգման դեպքեր՝ Մածուն Խեչոն նույնպես պահանջում է դիմել պատասխան գործողությունների ու խստորեն պատժել թուրք ավազակախմբերին [76]:

Հայկական մարտական ուժերի գործողությունները որոշակիացնելու եւ ժամանակաշրջանի պահանջներին համահունչ մարտավարություն որդեգրելու նպատակով 1906թ. փետրվարին Թիֆլիսում տեղի է ունենում Ջինվորական խորհրդակցություն, որին պիտի մասնակցեին ինքնապաշտպանական շրջանների հրամանատարները՝ Երեւանի նահանգից Նիկոլ Դումանը, Ղարաբաղից՝ Վարդանը, Արեւելյան բյուրոյի եւ Թիֆլիսի կողմից՝ Արմեն Գարոն, իսկ Բաքվի եւ Գանձակի կողմից՝ Աբրահամ Գյուլխանդանյանը: Խորհրդակցությանը չի մասնակցել Վարդանը:

Խորհրդակցությունում միաձայն որոշվում է. «...պաշտպանողական տաքտիկայից անցնել յարձակողականի...նախայարձակ լինել եւ ջնջել բոլոր այն որջերը, որոնք աւազակային կենտրոններ էին» [77]:

Ջինվորական խորհրդակցությունում որոշվում է խստագույնս արգելել քոչը եւ բույլ չտալ, որպեսզի մահմեդական վաչկատուն ցեղերը բարձրանան հայկական տարածքներում գտնվող արոտավայրերը [78]:

Ռայոնական ժողովը, համաձայն ՀՅԴ կանոնադրության, իր կարգավիճակով ավելի բարձր է, քան՝ Ջինվորական Խորհրդակցությունը: Նրա որոշումները իրավասու է բեկանել Ընդհանուր ժողովը: Պատերազմական իրավիճակում Ջինվորական մարմինները թեեւ օժտված էին մեծ լիազորություններով, բայց Ջինվորական խորհրդակցության որոշումները ՀՅԴ ապակենտրոն կառույցների համար ավելի շուտ բարոյական նշանակություն ունեին, քան օրենքի: Այս առումով ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն իրավասու էր յուրովի, ըստ իր հայեցողության վերաբերվել Ջինվորական Խորհրդակցության որոշմանը, իսկ Վարդանը որպես Ղարաբաղի Ջինվորական մարմնի լիազոր, այն է՝ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, պարտավոր էր կատարել Ջինվորական խորհրդակցության որոշումները:

Ղարաբաղում ծավալվող դեպքերը հարկադրում են, որպեսզի Ջինվորական մարմինը առավելագույնս ակտիվացներ իր գործունեությունը, մանավանդ, որ արդեն կար հարձակողական գործողություններ ձեռնարկելու մասին Թիֆլիսում կայացած Ջինվորական խորհրդակցության որոշումը: Արցախահայությանը մեծ վնասներ էր պատճառում ոչ միայն արտաքին, այլ նաեւ ներքին թշնամին: Մ. Վարանդյանի արտահայտությամբ «Պակաս չէին դաւաճանները եւս... Կային թրքաբարոյ եւ աւազակաբարոյ հայ մարդիկ, որոնք ձեռք կը մեկնէին դրացի կամ հեռու թուրք գիւղերու ոջիխբաշիներուն եւ անոնց հետ կը դաւէին հարազատ ժողովրդին դէմ» [79]:

Հայտնի փաստ է. ներքին թշնամին ավելի դավադիր է ու ավելի վտանգավոր: Գավառում կայուն իրավիճակ հաստատելու, ինքնապաշտպանությունը ավելի ուժեղ հիմքերի վրա դնելու ու ամրապնդելու համար Ջինվորական մարմինն ու Հ.Յ. Դաշնակցության կենտրոնական կոմիտեն անհրաժեշտաբար պիտի անխնա պայքար ծավալեին նաեւ ներքին թշնամու դեմ:

Ներքին թշնամիներից առավել վտանգավորն են եղել Վարանդայի Քյաթուկ գյուղի բնակիչներ Հաթամ բեկն ու նրա եղբայր Շամիրը: Հաթամ բեկի կատարած ավազակային գործողությունների ու սխրագործությունների մասին արցախահայությունը առասպելական պատմություններ էր հյուսել [80]:

Մ. Վարանդյանի բնութագրմամբ, Հաթամ բեկը «Կտրիճ մը՝ որ լաւ շրջանի ու պայմաններու մէջ, պիտի դառնար գաղափարական ու զինուորական հազւագիւտ պարագլուխ մը, մեր մեծ հայրուկապետներու Աղբիւր Սերոբի, Անդրանիկի, Դումանի տիպարով... Բայց թշնա-

ռականը ճշմարիտ դաւաճան մրն էր, մէկը ամենէն անգութ, անխիղճ ազգուրացներէն...»[81]:

Հաթամ բեկի ու նրա եղբոր ներկայութիւնն ու նրանց ազգադաւ գործունեութիւնը լուրջ վտանգ էին ներկայացնում Վարանդայի ինքնապաշտպանութեան կազմակերպմանը: Հարկավոր էր ծերբազատվել դավաճաններից: Նրանց զգաստացնելու, դարձի բերելու նպատակով Վարդանը վերջապես դուրս է գալիս Շուշիից, մեկնում է Վարանդայի Քյաթուկ գյուղ եւ պատվիրում իր մոտ բերել Հաթամ բեկին: Վարդանի խրատներն ու քարոզները, անգամ սպառնալիքը ապարդիւն են անցնում: Վարդանի հրամանով Հաթամ բեկն ու նրա եղբայրը գնդակահարվում են հենց Քյաթուկ գյուղի մեջ:

Ըստ Հ.Յ.Դաշնակցության «Ապառաժ» կենտր. կոմիտեի հաշվետվության՝ Ղարաբաղում 1905-1906թթ Չինվորական մարմնի եւ կենտր. կոմիտեի վճռով ահաբեկչության են ենթարկվել ավելի քան 20 մատնիչներ ու դավաճաններ[82]:

Յուրաքանչյուր անգամ մահապատիժը իրականացնելուց հետո ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն այդ մասին տեղեկացրել է բնակչությանն ու անցանկալի դեպքեր տեղիք չտալու նպատակով հայտնել. «Զգուշացնում ենք յիշյալ անձնաւորութիւնների ազգականներին եւ բարեկամներին չվերագրել այդ սպանութիւնները մասնաւոր մարդկանց»[83]:

Կռիվների ու թուրք հրոսակախմբերի ավազակային գործողությունների հետեւանքով հայկական բնակավայրերը մեծ դժվարությամբ են կարողացել հաղորդակցվել միմյանց հետ: Այդ իրավիճակում ՀՅԴ - կառույցների առջեւ ծառացած կարեւորագույն եւ դժվար լուծելի խնդիրներից էր բնակչությանը հացով եւ կենսական այլ մթերքներով ապահովելը:

ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեն հայ համայնքների համար սահմանում է հացի վաճառքի հաստատուն գներ եւ զգուշացնում. «Նրանք որոնք թոյլ կտան այս սակագնից բանգ ծախել իրենց ցորենը. կենթարկուեն ամենախիստ պատժի Դաշնակցութեան կողմից: Պատժի կենթարկվեն եւ կապալառուները, որոնք չահադիտական նպատակով կը կամենան մեծ քանակութեամբ ցորեն գնել եւ ամբարել»[84]:

Չինվորական մարմնի մարտավարության փոփոխությունն ու հայկական մարտական ուժերի վճռական գործողությունները նկատելիորեն փոխում են Ղարաբաղում տիրող իրավիճակը: Թուրք հրոսակախմբերի յուրաքանչյուր ոտնձգութեանը հայկական կողմը պատասխանում է առավել ազդեցիկ գործողությամբ: Թուրքերը, զգաստանալով հայերի պատասխան հարվածներից, զգալիորեն սահմանափակում են իրենց ավազակային գործողությունները: Չնայած առանձին փոքր ընդգրկում ունեցող բախումներին, Ղարաբաղի շրջաններում մինչեւ 1906թ. գարունը տիրում է համեմատաբար ավելի կայուն եւ հանգիստ իրավիճակ: Բայց դա բոլորովին չէր նշանակում, որ թուրքերը հրաժարվել էին Ղարաբաղը հայաթափելու ծրագրից:

Ընդհարումներն արդեն երկրորդ տարին էր, ինչ շարունակվում էին: Հայության համար գաղտնիք չէր իշխանությունների հակահայ եւ թուրքամետ բացահայտ դիրքորոշումը, բայց այն, ինչ նրանց կողմից իրականացվել է 1906թ. ապրիլին Վարանդայի 15 գյուղերում, Խաչենի ու Դիզակի շրջաններում, անսպասելի էր ոչ միայն հայկական, այլ նաեւ թուրքական կողմի համար:

ՀՅԴ «Ապառաժ» կենտր. կոմիտեի կազմած «Գանձակի պագրոմը» խորագիրը կրող տեղեկագրի «Զենքի պահեստները բաժնում այդ կապակցությամբ նշվում է. «Ինչպես յայտնի է ցարական կառաւարութիւնը տեսնելով որ գնալով աւելի վտանգաւոր չափերի է հասնում մեր ինքնապաշտպանութեան խմբերի գործունեութիւնը, միւս կողմից էլ կառաւարութեանը յաջողվեց ճգմել բուն Ռուսաստանի մէջ յեղափոխական պոռթկումները, 1906 թ. կեսերից սկսած խիստ միջոցներ ձեռք առաւ Անդրկովկասը խաղաղացնելու: Այս նպատակով էլ պատժիչ զորամասեր ճամփեց մի շարք հայկական գիւղեր, հայերին զինաթափ անելու նպատակով: Նոյնիսկ քնդանօթի կապեց Ղարաբաղի մի շարք հայկական գիւղեր: Իսկ թաթարներին թողեց զինուած որպէս նեղ օրերի համար իր ձեռքում կոյր գործիք»[85]:

Նահանգի իշխանությունները հայ հեղափոխականներին ծերբակալելու եւ հայկական բնակավայրերի զինված մարտախմբերը զինաթափելու պատրվակով մարտի վերջերին զինվորական պատժիչ զորախմբեր եւ ոստիկանական ուժեր են ուղարկում հայկական բնակավայրերը: Զորախմբերից մեկը մուտք է գործում Վարանդայի շրջան ու քնդանոթներից կրակ տեղում հայկական գյուղերի վրա: Ավելին, զորախմբի ավելի քան 400 զինվորներ գնդապետ Վիվերնիի, գավառապետ Ֆրեյլիխի, պրիստավ Ֆիտի առաջնորդությամբ ներխուժում են գյուղեր եւ առանց որեւէ պատճառաբանության սկսում են զանգվածային բռլանն ու դաժանաբար ծեծի եւ տանջանքների ենթարկել գյուղացիներին: Պատժիչ մեկ այլ զորախումբ ներխուժում է Խաչենի շրջան եւ դարձյալ քնդանոթներից ռմբակոծում հայկա-

կան գյուղերը: Մի շարք բնակավայրերում կատարվել են նաեւ սպանություններ [86]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին գրած նամակում(1906թ. մարտի 27) Վարդանը, ներկայացնելով Ղարաբաղի շրջաններում պատժիչ արշավախմբի գտնվելու իրողությունը, նշում է.«Մօտ 400 կոզակներ օֆիցերներով, գաւառապետով, բնդանօթներով շրջանի գիւղերում ամէն տեսակ լրբութիւններ են կատարում: Մի քանի գիւղերում, ինչպիսիք են այժմ Թաղլար, Տող(Դիզակի շրջան-Հ. Գ.), այդ բաշիբոզուկների բանակը մնացել են 2-3 օրով սանձարձակ, իրենց կամայականութիւններին անասնական կրքերին հագուրդ տալու: Գիւղացիների մնձ մասը կանանց երեխաների հետ փախուստի են դիմել ծիւնապատ լեռներն ու անտառները... [87]:

Կոզակները հայկական բնակավայրերում ոչ միայն բռնություններ ու թալան են կատարել, այլեւ բռնաբարել են բազմաթիվ կանանց ու աղջիկների: Այդ օրերին ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ն ու «Յառաջ»-ը իրենց էջերում հրապարակում են բազմաթիվ փաստեր, որոնցով ներկայացնում ու դատապարտում են ռուս զինվորների կողմից հայկական բնակավայրերում կատարված բռնություններն ու բռնաբարությունները [88]:

Գյուղացիների ունեցվածքը բռնազավթելու նպատակով զինվորները բռնությունների գործադրմամբ նրանցից պահանջել են տուգանք մուծել: Թեպետ գյուղացիները պատրաստակամություն են հայտնել մուծել պահանջված գումարը, բայց սպանությունները, բռնությունները եւ թալանը, այնուամենայնիվ, շարունակվել են: Վարանդայի եւ Խաչենի մի քանի գյուղերի բնակիչներ, չդիմանալով զինվորների ու կոզակների գործադրած բռնություններին, լքում են գյուղերը եւ ապաստանում անտառներում ու սարերում [89]:

Ինչու՞ էին նահանգի իշխանությունների հանձնարարությամբ պատժիչ զորախմբերը ներխուժել Վարանդայի եւ Խաչենի տարածք, ոմբակոծել այդ շրջանների, առավելապես Վարանդայի գյուղերն ու դաժան բռնությունների ու ծեծի ենթարկել բնակչությանը:

Վարանդայի ինքնապաշտպանական շրջանի հրամանատարներից Արամայիսը, անդրադառնալով այդ հարցի պարզաբանմանը, տալիս է հետեւյալ պատասխանը.«...միթե՞ ժողովուրդն ապստամբել էր. հարկ չէ՞ տալիս, զինուորութեան չէ՞ր գնում, ռուսներին հալածու՞մ էին-...Ո՛չ, դրանցից ո՛չ մէկն էլ չկար.եւ եթե կար մի որեւէ «յանցանք», ապա այդ այն էր, որ հայերը կարողացել էին պաշտպանուել, եւ Վարանդայի ու Խաչենի ոչ մի գիւղն աւարի չէր մատնուել. ի՞նչպէս կարելի էր.

որ ներկայ պայմանների տարում Խաչենն ու Վարանդան բացառութիւն կազմեն...» [90]:

Բացի Արամայիսի բերած փաստարկներից, կարելի է ասել, որ նահանգի իշխանությունները իրենց հարվածի հիմնական նշանակետը դարձրել էին Վարանդան նաեւ հետեւյալ նկատառումով: Հայտնի է, որ Վարանդան Ղարաբաղի առավել հացառատ շրջանն է: Աղքատության մատնելով Վարանդայի հայությանը՝ նշանակում էր աղքատության մատնել գրեթե ողջ արցախահայությանը:

Չնայած դեռեւս ուժի մեջ էր Զինվորական խորհրդակցությունում հարձակողական մարտավարության վերաբերյալ որոշումը, սակայն Ղարաբաղի, նույնիսկ Վարանդայի ու Խաչենի մարտական ուժերը, որոնք նախորդ կռիվներում աչքի էին ընկել քաջությամբ, որեւէ կանխարգելիչ քայլ չեն ձեռնարկել՝ պատասխանելու ռուս զինվորների գործողություններին: Եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեին՝ դադարեցնելու հայկական բնակավայրերում ռուս զինվորների բռնություններն ու ավերները, ապա կարճ ժամանակահատվածում կարող էր իրականություն դառնալ Ղարաբաղը հայաթափելու թուրքերի համաիսլամական ծրագիրը:

Թիֆլիսի ընկերներին հասցեագրած նամակներում Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարները, ներկայացնելով զինվորական արշավախմբի գործողությունների հետեւանքով Խաչենի եւ Վարանդայի շրջաններում տիրող ծանրագույն կացությունը, միաժամանակ տեղեկացնում են, որ իրենք կձեռնարկեն պատասխան գործողություններ, եթե ռուս զինվորները չդադարեցնեն բռնություններն ու ավերածությունները: Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Վարդանը, որը մինչ այդ առավելապես նախապատվություն էր տալիս պաշտպանողական բնույթի մարտավարությանը, հրահանգում է ինքնապաշտպանական շրջանների պատասխանատուներին հարձակվել կոզակների վրա, եթե նրանք շարունակեն բռնություններ գործադրել ու տեղահանել գյուղացիներին [91]:

«...մենք, գրում է Համազասպը,-ոչ մի կերպ չենք կարող լռել, եթէ նոյն իսկ քսան գիւղ ոմբակոծեն: Խփելու ենք, որովհետեւ կյանքի ու մահու խնդիր է ու Վարդանի հրամանը»:

Ընկերներին գրած մեկ այլ նամակում (1906թ. ապրիլի 26) Համազասպը հայտնում է. «Ես արդեն մօտ 120 զինվորներ դասաւորեցի որոշ վտանգաւոր պունկտներում, առաջուց Ձեզ յայտնում եմ, յայտնում եմ նաեւ Վարդանին, եթէ որեւէ տեղ կօզակները մի փոքր լրբութիւն ցոյց տուին, յար-

ձակելու ենք կօզակների վրանների վրա ու այնպիսի ջարդ տանք, որի հետեւանքը անմոռանալի դաս դառնա»[92]:

Ինչպե՞ս պիտի գարգանային իրադարձությունները Ղարաբաղում, եթե նահանգի իշխանությունները չարունակեին իրենց հակահայ գործողությունները եւ կոզակական ջոկատները դուրս չբերեին գավառի տարածքից: Ղարաբաղի շրջաններում ռուս զինվորների կատարած գազանությունները լայն արձագանք են գտնում ոչ միայն Կովկասում, այլ նաեւ Ռուսական կայսրության մի շարք քաղաքներում: Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ մերկացնող ու դատապարտող հոդվածներ են տպագրում ոչ միայն հայկական, այլ նաեւ ռուսական թերթերը[93]:

Այդ օրերին Ռուսաստանի տարբեր քաղաքներից բազմաթիվ հեռագրեր ու նամակներ էին հղում ցարական իշխանություններին եւ մասնավորապես Կովկասի փոխարքային՝ Վորոնցով-Դաշկովին, որոնցում հեղինակները իրենց բողոքն ու զայրույթն էին հայտնում եւ դատապարտում արցախահայության նկատմամբ ռուս զինվորների գործադրած բռնի գործողությունները:

Կարելի է ասել, որ արցախահայությանը ահաբեկելու, նրա դիմադրողական կարողությունն ու մարտական ոգին ընկճելու նպատակով իրականացրած գործողություններով իշխանությունները իրենց սեւ գործը կատարել էին: Ղարաբաղի դեպքերի կապակցությամբ բարձրացված աղմուկի ու ինչպես նաեւ բազմաթիվ բողոքների հարկադրանքով, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հրամանով Վայոցձորի նահապահությամբ կազմվում է քննիչ հանձնաժողով, որը պիտի մեկներ Վարանդայի շրջան՝ ստուգելու գյուղերում տեղի ունեցած դեպքերի մանրամասները[94]:

Իշխանությունների կողմից այդ հանձնաժողովի ստեղծումը հանրությանը խաբելու եւ իրենց արարքները կոծկելու նպատակ էր հետապնդում: Իրականում, հանձնաժողովի կատարած ուսումնասիրության արդյունքները ցարական իշխանությունների կողմից որեւէ ուշադրության չեն արժանանում[95]:

«Բայց ի՞նչ եղաւ,-գրում է Արամայիսը,- պատժուեցի՞ն նրանք...ի՞նչ միամիտ հարց...Նրանք միայն տեղափոխուեցին ուրիշ տեղեր, գուցէ չուտով աւելի նշանաւոր պաշտօն ու շքանշան ստանալու, իսկ Վիվէրնը մնաց իր քաջագործութիւնները Խաչէնում եւս շարունակելու...»[96]:

Ավելին, նույն առաքելությամբ, դարձյալ փոխարքայի հանձնարարությամբ, Շուշի է գալիս Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Մալաման: «Դրօշակ»-ի տեղեկացմամբ գեներալն իր համաձայնությունն է հայտնել կատարված ցավալի դեպքերի կապակցությամբ եւ հույս հայտնելով, որ հանցավորներն անպայման կպատժվեն, առանց որեւէ շոշափելի գործ կատարելու, մեկնել է Թիֆլիս[97]:

Օգտվելով դեպքերի՝ իր համար շահեկան զարգացումից ժամանակն անտեղի չէր վատնում թուրքական կողմը:

Համաձայն ՀՅԴ «Ապառաժ» կենտր.կոմիտեի պատրաստած տեղեկագրերի, թուրք առաջնորդներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են հետեւյալ խնդիրների վրա.

1. Ջենք ու զինամթերքի գնում ու տեղափոխություն: Ի տարբերություն հայկական կողմի, թուրք ամբոխը գլխավորապես զինվել է ի հաշիվ իրենց առաջնորդների ու դրամատերերի: Այդ նպատակով նրանք ներդրել են հսկայական գումարներ: Իրենց գնած զենքերով թուրք առաջնորդներն ու դրամատերերը զինել են ինչպես Ղարաբաղի, այնպես էլ սահմանամերձ գավառների թուրք բնակչությանը:

2. Թուրք բնակչության շրջանում ծավալած քարոզչական աշխատանքներ: Նպատակը պարզ էր. շնորհիվ քարոզչական աշխատանքների թուրք առաջնորդները ձգտում էին ավելի խորացնել թուրք բնակչության ատելությունը հայության նկատմամբ եւ նրա մեջ ներարկել ու բորբոքել հային սպանելու եւ նրա ունեցվածքը բռնազավթելու պահանջն ու ցանկությունը:

3. Քանի որ հայ մարտական ուժերը թուրք հրոսակների յուրաքանչյուր ոտնձգությանը պատասխանում էին ավելի ուժեղ հակահարվածով, իսկ այժմ արդեն անհրաժեշտության դեպքում ձեռնարկում էին նաեւ հարձակողական գործողություններ, թուրք առաջնորդները, հատկապես Բաքվի, բազմաթիվ հեռագրեր ու դիմումներ են հղում իշխանություններին եւ անձամբ Կովկասի փոխարքային: Իրենց հեռագրերում ու դիմումներում խեղաթյուրելով եւ միակողմանիորեն ներկայացնելով տեղի ունեցած դեպքերի մանրամասները՝ նրանք բողոքում ու դատապարտում էին հայ ֆիդայիների ու նրանց առաջնորդող Դաշնակցության գործողությունները եւ պահանջում պատժել ազգամիջյան թշնամանք ու զինված բախումներ հրահրող հայ հեղափոխականներին[98]:

Իրականում Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է ճիշտ հակառակը: ՀՅԴ առաջնորդները կռիվները դադարացնելու ու երկխոսություն սկսելու առաջարկով բազմիցս դիմել են թուրք պարագլուխներին, բայց յուրաքանչյուր անգամ չեն ստացել համարժեք պատասխան:

ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ը, արտահայտելով կուսակցության պաշտոնական տեսակետը, հայտնում է. «...Համերաշխութեան համոզուած պաշտպան դաշնակցութիւնն ամմիջապէս վայր կը դնէ եւ եղբայրաբար կը հաշտուի հակառակորդի հետ, հենց որ վերջինը ցոյց կտայ շիտակ ու անկեղծ խաղասիրական տրամադրութիւն»[99]:

Հ.Յ.Դաշնակցության խաղաղասիրական տրամադրվածության ապացույցներից են 1906թ. մարտ-ապրիլ ամիսներին Թիֆլիսում կայացած ՀՅԴ արեւելյան մարմինների Ռայոնական ժողովի որոշումները: Այդ ժողովին, բացի Նիկոլ Դումանից եւ Վարդանից, մասնակցել է ՀՅԴ ղեկավար գործիչներն ու ինքնապաշտպանական շրջանների հրամանատարների մեծ մասը:

Ռայոնական ժողովում, ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում է նաեւ «Հայ- թաթարական ընդհարումների վերջնական դադարեցման անհրաժեշտութիւնը, կը ճշդուին ոճրագործներու պատուհասման պայմաններն ու չափը, մանրամասն քննութեան կենթարկուի թուրք քոչոտներու շարժումներն արտօնելու կամ արգիլելու հարցը...Կովկասի մէջ հայ-թրքական յետագա յարաբերութիւններու խնդիրները»[100]:

Քանի որ ընդհարումները շարունակվում էին, ուստի ժողովականներին առավելագույնս պիտի մտահոգեին ինքնապաշտպանության կազմակերպման ու մասնավորապես մարտավարության եւ քոչին վերաբերող խնդիրները:

Ժողովականների ճնշող մեծամասնությունը առաջարկում է չխոչընդոտել, թույլ տալ քոչը եւ վերադառնալ նախկին մարտավարությանը: Նրանց համոզմամբ, եթե հայ մարտական ուժերը չձեռնարկեն հարձակողական գործողություններ, չպատասխանեն թուրքերի ավազակային գործողություններին եւ հետայսու արտոնեն ու չխանգարեն քոչը, ապա կարելի կլինի իշխանության ներկայացուցիչների միջոցով դադարեցնել կռիվներն ու խաղաղություն հաստատել: Ժամանակը միանշանակորեն ապացուցեց, որ դա հիմնագուրկ ու չփաստարկված տեսակետ էր:

Սիմոն Զավարյանը, ընդհանրացնելով ժողովականների մեծամասնության տեսակետները, որպես որոշման նախագիծ առաջարկում է «...մենք եկանք այն որոշման, որ ոչ մի դեպքում քոչը արգելել չենք կարող, բայց պէտք է որոշենք այնպիսի միջոցներ, որով այդ ընդհարումները սահմանափակենք, եւ աշխատենք ոչ մի ընդհարման առիթ չտալ»[101]:

Հայ-թուրքական հետագա հարաբերությունների ու մարտավարության վերաբերյալ Ռայոնական ժողովը դարձյալ Ս. Զավարյանի

ձեւակերպմամբ, ընդունում է հետեւյալ որոշումը. «...Դիմադրելով թուրքերի բոլոր յարձակումները , անհատական սպանութիւնների դէպքում թուրքերի կողմից՝ չպատասխանել եւ սպասել կառաւարութեան ու թուրք բանիմաց դասի բռնած դիրքին: Փոխադարձաբար անցնել նախկին տակտիկային...»[102]:

Իշխանությունների կողմից Գանձակի նահանգում եւ մասնավորապես Ղարաբաղի շրջաններում զինվորական արշավախմբի միջոցով իրականացրած գործողությունները իրենց ազդեցությունը, անկասկած, ունեցել էին: Կարելի է ասել, որ մարտավարության ու քոչի վերաբերյալ Ռայոնական ժողովի ընդունած որոշումները Զինվորական խորհրդաժողովի որոշումների համեմատ ոչ միայն նահանջ էին, այլեւ չկշռադատված ու վտանգավոր: Հայ-թուրքական ընդհարումներն արդեն մեկ տարուց ավելի շարունակվում էին: Կռիվների ընթացքն ու փորձը միանշանակորեն մատնանշում էին, որ անհմաստ էր եւ վտանգավոր ապավինել կառավարության ու թուրք բանիմաց դասի բռնած դիրքին, որը երբեք հայանպաստ չէր:

Գարնանը եւ հատկապես ամռան սկզբներին թուրքերը Գանձակի նահանգում եւ Ղարաբաղում նկատելիորեն ակտիվացնում են իրենց ավազակային գործողությունները: Գավառում ստեղծվում է քաոսային ու անկառավարելի իրավիճակ: Պիտի ասել, որ այդ ամենին որոշակիորեն նպաստել են մարտավարության եւ քոչի վերաբերյալ Ռայոնական ժողովի ընդունած որոշումները, ինչպես նաեւ հայկական բնակավայրերում իշխանությունների դրսեւորած բացահայտ հակահայ գործողությունները:

Ղարաբաղի օգոստոսյան կռիվներից հետո Շուշիի թուրք բնակչությանը սովամահությունից փրկելու նպատակով նահանգի իշխանությունների կարգադրությամբ կոզակական ջոկատները գրավել էին Ասկերանի մարտկոցներն ու բացել Ասկերան-Շուշի մայրուղին: Իսկ այժմ նահանգի իշխանությունները կատարում են ճիշտ հակառակը՝ փակում են ճանապարհները եւ կոզակական ջոկատների միջոցով խիստ հսկողություն սահմանում Շուշին ու շրջանները միմյանց կապող հաղորդակցության ուղիների վրա: Ճանապարհների շրջափակումը մեծ վնաս է պատճառում հայկական կողմին: Նախ. շրջափակելով ու հսկողություն սահմանելով հաղորդակցության ուղիների վրա՝ նահանգի իշխանությունները խոչընդոտում եւ թույլ չեն տալիս հայերին զենք ու զինամթերք տեղափոխել Շուշի եւ մյուս շրջաններ:

«Եւլախ-Շուշի մեծ ճանապարհը.-գրում է Մ. Վարանդյանը,- կտրած լինելով, Կազմակերպութիւնը լեռներու, ձորերու վրայով, մէջէն,

ահագին դժարութիւններով նոր ճամբայ մը բացաւ, որով ուղղակի հաղորդակցութեան մէջ կը մտնէր Գանձակի ու Թիֆլիզի հետ եւ այնտեղէն զէնք ու ռազմամթերք կը ստանար մեր մարմիններու միջոցով»[103]:

Պիտի ասել, որ թուրք հրոսակների ավազակային գործողությունների ակտիվացմանը մեծապես նպաստում են Վարանդայի եւ Խաչենի շրջաններում տեղի ունեցած հանրահայտ դեպքերի հետեւանքները եւ քոչի ու մարտավարության վերաբերյալ Ռայոնական ժողովի որոշման պատճառով մարտական ուժերի զուսպ գործողությունները: Ինչքան էլ Զինվորական մարմնի եւ անձամբ Վարդանի հրահանգով հայ մարտիկները խուսափում էին ընդհարումներից ու չէին դիմում հարձակողական գործողությունների, այնուամենայնիվ, թուրք հրոսակախմբերը շարունակում եւ աստիճանաբար ուժեղացնում էին բռնությունները, առեւանգումներն ու ավարառությունը:

Քոչը սկսվելուն պես հազարավոր զինված թուրքեր իրենց հոտերով բարձրանում էին արոտավայրերը եւ հսկողության տակ վերցնում հայկական բնակավայրերի մերձակայքերում գտնվող իշխող բարձունքներն ու հաղորդակցության ուղիները: Ավելին, թուրք քոչվորները զինավառ խմբերով պարբերաբար փորձում էին հարձակվել հայկական բնակավայրերի վրա ու սպանում էին իրենց ձեռքն ընկած հայերին: Այդ օրերին առանց զինված պահակախմբի ուղեկցության հնարավոր չէր որեւէ տեղ գնալ:

Վարդանը Համազասպին հասցեագրած նամակներից մեկում (1906թ. օգոստոսի 26), նկատի ունենալով թուրք հրոսակների ու քոչվոր զինյալների գործողությունների հետեւանքով գավառում ստեղծված վտանգավոր կացությունը, գրում է.«...լեռ բարձրացած թուրքերը չափազանց լրբացել են...Նկատում է մի ընդհանուր ծրագիր թուրքերի կողմից, կառավարութեան պարզ աջակցութիւնն ու խրախուսանքը: Արտեմը գնում է Գանձակ. մեր պահակներից մի քանի զինւոր տուր կայարանից կայարան անցկացնելու...Դրութիւնը մեր շրջանում առհասարակ լարւած է. միշտ սպանութիւններ եւ թալաններ են տեղի ունենում»[104]:

Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերը տեղում ուսումնասիրելու եւ կանխելու նպատակով մայիսի վերջերին Շուշիում էր գտնվում Գանձակի նահանգապետ գեներալ Գալաշչապովը: Բայց նրա ներկայությունը սոսկ ցուցադրական ու ձեւական բնույթ է կրել եւ ոչնչով չի ազդել Ղարաբաղում տիրող լարված ու պայթյունավտանգ իրավիճակի բարելավմանը:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին գրած նամակում(1906թ. հուլիս) Համազասպը իր դժոհությունն է հայտնում քոչի եւ մարտավարության վերաբերյալ Ռայոնական ժողովի ընդունած որոշումից՝ նշելով. « Ռայոնական ժողովի առաջ, երբ կայացաւ զինւորական ժողով եւ միաձայն վճռուեց քոչին չթողնել բարձրանալ... Ռայոնական ժողովի վարժապետները քանդեցին այդ վճիռը, կարծելով, որ թուրքը իրենց հետ եղբայրացել է: Ոչինչ, այդպիսի անհեռատես վճիռների մէջ շատ է տապակւել հայ ժողովուրդը»[105]:

Նույն նամակում ընկերներին ներկայացնելով իրեն վստահված շրջանում(Խաչեն) տիրող ծանր կացությունը՝ նա պահանջում է. «Քաւ է խնամիութիւն անել. այս ռայոնի համար խոստացած 8000 ծայր(նկատի ունի փամփուշտ-Հ.Գ.) 50 մաուզեր ատրճանակ, 90 հրացանի փոխարեն գոնէ մի քառորդ ուղարկեք, ինչպես եւ որոշած գումար»[106]:

Անտարակույս, Զինվորական մարմնի ու նրա ղեկավարի՝ Վարդանի համար չափազանց դժվար էր ճիշտ կողմնորոշվել ու կիրառել գավառում տիրող կացությանը համահունչ արդյունավետ մարտավարություն: Այսուհանդերձ, Ղարաբաղում տիրող իրավիճակի ու քուրք հրոսակների կատարած սպանությունների ու առեւանգումների հարկադրանքով Վարդանը փոխում է քշնամու նկատմամբ մինչ այդ կիրառած մարտավարությունը եւ շրջանների մարտական ուժերի հրամանատարներին հրահանգում է իրականացնել վրեժխնդրական գործողություններ:

Համազասպին գրած նամակներում (1906թ. 20, 26 հունիս), հաստատելով գավառում տիրող լարվածության եւ կառավարության պարզ աջակցությամբ ու խրախուսանքով թուրքերի կողմից շարունակաբար կատարվող սպանությունների ու կանանց առեւանգումների իրողությունը Վարդանը թեեւ հրահանգում է վրեժխնդիր լինել եւ գերի վերցնել նաեւ կանանց, այնուամենայնիվ, դրսեւորելով իր խաղդասիրական էությունը՝ պատվիրում է.«1) Որ այդ կատարուի անպայման թուրքական գիւղում կամ նրանց հողում. 2) Որ կատարուի այնպիսի ձեւով, որպեսզի ոչ մի ընդհարման տեղիք չտայ...3) Քոչին ձեռք չպիտի տաք ոչ մի դեպքում, քոչի մարդկանց նոյնպէս, 4) Գերուհիներին պէտք է պահպանեք առանձնացրած եւ ամենապատւաւոր կերպով»[107]:

Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերին կարող էր միջամտել եւ անհրաժեշտ հրահանգներ տալ Բաքվի Զինվորական մարմինը, որը իրավասու էր վերահսկել ու մարտավարական արդյունավետ խնդիրներ առաջադրել ոչ միայն Բաքվի, այլեւ Գանձակի նահանգի ինքնապաշտպանական շրջանների հրամանատարությանը:

«Բաքվի մէջ,-նշում է Բաքվի Զինվորական մարմնի անդամ Աբ. Գյուլխանդանյանը,- մեզ ամենից զբաղեցնում էր Գանձակի նահանգի

Ղարաբաղի շրջանը եւ նրա յարակից միւս վայրերը, որոնք մտնում էին ՀՅԴ Ապառաժի կոմիտէութեան մէջ»[108]:

Գանձակի նահանգի գավառներից Բաքուն առավելապես կապված է եղել հենց Ղարաբաղի հետ, որովհետեւ քաղաքի ու նավթահանքերի աշխատավորության զգալի մասը ղարաբաղցիներ էին: Բացի դրանից, Չինվորական մարմնի կողմից Ղարաբաղ գործուղված ընկերները իրենց հեռագրերով ու նամակներով անընդհատ ֆինանսական, զինական օգնություն, զենք ու զինամթերք են պահանջել ՀՅԴ Արեւելյան բյուրոյից ու Բաքվի Չինվորական մարմնից:

Այս հարցում առավելապես աչքի է ընկել Վարդանը, որը «...մոռանալով իր հարեւան շրջանները(նկատի ունի Գանձակի ու Զանգեզուրի գավառները-Հ.Գ.), որոնք նոյնպէս պատերազմական գործողութիւնների մէջ էին, անդադար պահանջներ էր դնում»[109]:

Վարդանը, ըստ Աբ. Գյուլխանդանյանի վկայության, չբավարարվելով Չինվորական մարմնին ներկայացրած դիմումներով, իր ներկայացուցիչներին ցրել է բազմաթիվ վայրեր, այդ թվում Գանձակ, Թիֆլիս, Ռուսաստան եւ ամեն տեղից զենք ու զինամթերք է պահանջել: Չինվորական մարմինը, տեղի տալով Վարդանի բազմաթիվ դիմումներին, ստիպված է եղել նվազագույնի հասցնել ինքնապաշտպանական մյուս շրջաններին հատկացվող օգնությունը, միայն թե բավարարություն տային նրա պահանջներին:

Իսկ այդ օրերին ոչ պակաս ուժգնությամբ կռիվներ են ընթացել Գանձակի նահանգի գրեթե բոլոր շրջաններում:

Վարդանի պահանջները սահմանափակելու նպատակով ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն նրան է հղում հետեւյալ նամակը. «Չնայելով, որ ձեր վերջին պահանջները բաւարարեցինք, այնուամենայնիւ, դուք նորանոր պահանջներ էք անում: Մենք ուղարկել ենք ձեզ մեր բոլոր ունեցածը: Սակայն, դուք շարունակում էք նորանոր պահանջներ անել մեզ, որի կատարելը անհնար է մեզ, չնայելով որ, համարեա թէ դադարեցրել ենք միւս շրջանների պահանջները ձեզ համար»[110]:

Թուրք հրոսակախմբերի շարունակաբար կրկնվող գործողությունների հետեւանքով գավառում ստեղծված անկառավարելի իրավիճակը հարկադրում է Ղարաբաղի Չինվորական մարմնին փոխել իր մարտավարությունն ու դիրքորոշումը: Ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 4-ին, ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներին գրած նամակում Վարդանը հրահանգում է. «Դուք պէտք է քոչի

վերաբերմամբ բռնէք այլ տաքտիկայ հակառակ Ռայոնական ժողովի որոշման: Պէտք է բաց թողնել քոչր. ընտրել ամենայարմար կիրճերը, հայկական ռայոններից, եթէ հնարաւոր է , դուրս գտնուած շրջաններում ամեն կողմից շրջապատել եւ կատարեալ ջարդի ենթարկել. պէտք է գործել համոզեցնել, արագ...»[111]:

Ղարաբաղում ստեղծված իրավիճակն ու թուրքական կողմի նախապատրաստություններն ակներևաբար մատնանշում էին, որ նրանց կողմից ձեռնարկվող մեծածավալ մարտական գործողությունները շատ շուտով սկսվելու էին:

ՀՅԴ Բյուրոյին ներկայացրած «Ապառաժի» ու Չինվորական մարմնի զեկուցագրերը համաստում են, որ կռիվները վերսկսելու պարագայում թուրքական կողմի համար հարձակման գլխավոր ուղղությունը դարձյալ լինելու էր Շուշին: Ղարաբաղի միջնաբերդը գրավելու նպատակով թուրք առաջնորդները ոչ միայն ըստ ամենայնի զինում եւ կազմակերպում են Շուշիի թուրք բնակչությանը, այլ նաեւ ծրագրում քաղաքի վրա գրոհներ ձեռնարկել Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում կենտրոնացած հրոսակախմբերի միջոցով: Ըստ էության չէր փոխվել Ղարաբաղը նվաճելու թուրքական կողմի նախկին մարտավարությունը[112]:

Ինչպես նախորդ՝ մեկ տարի առաջ տեղի ունեցած կռիվների ժամանակ, այս անգամ եւս թուրք առաջնորդները մեծաքանակ մարտական ուժեր են կենտրոնացնում Աղդամում:

Համաձայն «Ապառաժ» ԿԿ- ի պատրաստած տեղեկագրի, Շուշիի վրա հարձակվելու համար թուրք առաջնորդները Աղդամում կենտրոնացրել են նաեւ «...Պարսկաստանի Շահսիւարներից 700-800 հոգի, որոնք հրաւիրած էին իրենց քաջութեամբ, օգնութեան էին գալիս Արէշի եւ ուրիշ գաւառներից»[113]:

Եթե թուրքերը հայկական բնակավայրերի ու Շուշիի վրա հարձակումները ձեռնարկեին վերոհիշյալ մարտավարությամբ, ապա դարձյալ առանձնահատուկ նշանակություն էր ձեռք բերելու Աղդամ-Ասկերան-Շուշի մայրուղին, որը տեղի ինքնապաշտպանական ուժերի զինակցությամբ պիտի պաշտպանեին Խաչենի ու Վարանդայի մարտախմբերը: Ղարաբաղը վերածվել էր թշնամու ուժերով շրջափակված յուրօրինակ կղզի-ամրոցի:

«...ողջ ռուսահայութեան ուշադրութիւնը,- գրում է Մ. Վարանդեանը,-ուղղած էր դէպի այնտեղ, Ղարաբաղի հինավուրց ու բարձրաբերձ միջնաբերդը, զոր թշնամին որոշեր էր ամեն գնով նուաճել, դուրս մղելով

հայ տարրր եւ այդ տիրական բարձունքներէն սպառնալ գաւառի հարիւր հազարաւոր հայութեան»[114]:

Չնայած իշխանությունների ու թուրքական զինյալ խմբերի հարուցած խոչընդոտների, Զիֆոնը թեեւ մեծ դժվարությամբ, այնուամենայնիվ, կարողանում է իշխանությունների հսկողությունից դուրս մնացած ուղիներով զենք ու ռազմամթերք տեղափոխել Ղարաբաղ եւ յուրաքանչյուր գյուղի պաշտպանության համար տրամադրել 20-30 հրացան: Ընդ որում հրացանները առաջին հերթին հանձնել են չքավոր գյուղացիներին: Իսկ ունեւորներին, համաձայն ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովին Վարդանի եւ Սեւքարեցի Սաքոյի ներկայացրած տեղեկագրի. «ստիպել ենք մեկից աւելի զէնք գնելու զինուորների(քաջ) տրամադրութեան տակ դնելու համար»[115]:

Զենքի առք ու վաճառքով զբաղվող հայ եւ թուրք առեւտրականները մեծ գումարներ ծեռք բերելու նպատակով գյուղացիներին բազմիցս վաճառել են ոչ միայն հին զենքեր, այլեւ անընդհատ բարձրացրել են զենք ու զինամթերքի գները: Կռիվների ժամանակ մոսին հրացանը վաճառել են 300 ռուբլով, բերդանը՝ 150, իսկ փամփուշտը 20-30 կոպեկով [116]:

Ճանապարհների շրջափակման պատճառով չափազանց դժվարացել էր Վարանդայից շրջաններ հաց տեղափոխելը: ՀՅԴ Արեւելյան բյուրոյին հասցեագրած զեկուցագրերում «Ապառաժ» կենտր. կոմիտեն ընդգծում է հատկապես Խաչենի հայ բնակչության ծանր կացությունը: Վարդանի հավաստմամբ «...Խաչէնի գաւառում կատարեալ աղքատութիւն է, մարդիկ հաց չունեն ուտելու»[117]:

Ինքնապաշտպանության ամրապնդման համար Զինվորական մարմինն ու «Ապառաժ» կենտր. կոմիտեն անհրաժեշտաբար պիտի լուծեին բնակչությանը հացով ու կենսական այլ մթերքներով ապահովելու չափազանց կարեւոր խնդիրը:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացրած տեղեկագրերում «Ապառաժ»-ի ընկերները, բացի զենք ու զինամթերքից եւ ֆինանսներից, Ղարաբաղի կուսակցական կառույցներում աշխատելու համար բազմիցս պահանջել են նաեւ գործիչներ: Կազմակերպչական ընդունակություններով օժտված գործիչների կարիքը խիստ կերպով զգացվել է Մռավի զոհվելու եւ հատկապես Վարանդայի, Խաչենի ու Դիզակի շրջաններում կոզակների կատարած վայրագություններից հետո:

Քանի որ արդեն գաղտնիք չէին կռիվների վերսկսման դեպքում թուրքական մարտական ուժերի հարձակման ուղղությունները, մասնավորապես գլխավոր ուղղությունը, Ղարաբաղի Զինվորական մարմինը մեծ ուշադրություն է դարձնում հատկապես Շուշի քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

1906թ. գարնանը Շուշի է գալիս Ռոստոմը: Նրա ներկայությունը Ղարաբաղում, ինչպես ցույց են տալիս հետագայում այնտեղ ծավալված դեպքերը, ավելի քան անհրաժեշտ էր:

«Տեղւոյս կազմակերպութեան վիճակը,-գրում է Ռոստոմը,- նախանձելի չէ: Մարգարի (նկատի ունի Մարգար Ժամհարյանին՝ Մռավ-Հ.Գ.) բացակայութիւնը զգալի է: Վարդանը շատ է գանգատւում, գործ կատարողներ քիչ կան: Երեւակայէք, հենց սա է եղել պատճառը, որ ինձ կանչել են: Վարդանը ուզում է ինձ այստեղ թողնել, ինքը մտադիր է գաւառները գնալ...»[118]:

Ռոստոմը երկու ամիս մնում է Ղարաբաղում եւ արգասաբեր գործունեություն է ծավալում ոչ միայն ՀՅԴ կառույցներն ամրապնդելու ուղղությամբ, այլեւ մեծապես օգնում Զինվորական մարմնին՝ լուծելու ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված հույժ կարեւոր մի շարք խնդիրներ: Նա Շուշիում գտնվող վարպետների, նրանց թվում նաեւ Կոստի Համբարձումի, աջակցությամբ պատրաստում եւ փորձարկում է ռումբեր ու հրթիռներ:

Ըստ Եղիշե Իշխանյանի(1917-1920թթ.Ղարաբաղի Ազգային Խորհրդի անդամ, ապա նաեւ նախագահ-Հ.Գ.), հրթիռները գմբեթաձեւ, սուր ծայրով, 8-10սմ տրամագծով եւ 40-45սմ երկարությամբ հաստ թիթեղից պատրաստված զենքեր էին: Հրթիռները 1000 քայլ տարածությունից հարվածում էին նշանակետին, առաջացնում հրդեհներ ու ամենակարեւորը՝ ռումբի պես խլացուցիչ ձայն էին արձակում ու դրանով ահ ու սարսափի մատնում հակառակորդին [119]:

Շուշիի ինքնապաշտպանության ամրապնդմանը մեծապես նպաստել են քաղաքի զինագործ-արհեստավորները: Նրանք վերանորոգել ու Զինվորական մարմնի տնօրինությանն են հանձնել ոչ միայն բազմաթիվ հրացաններ, այլ նաեւ քաղաքում գտնվող թնդանոթները:

Ըստ Վարդանի վկայության՝ «Ունեինք մեր վարպետի պատրաստած 2 դիւյմանոց 3 թնդանոթ. 2 հատ 3 դիւյմանոց-կրկին մեր վարպետի շինածը եւ 2 հատ էլ տաճկական էին, 5 դիւյմանոց հսկայական թնդանոթները»[120]:

Զինվորական մարմնի ու «Ապառաժ»-ի գործունեության ուսումնասիրությունը աներկբա հավաստում է, որ թեպետ քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ մեծ ծավալի աշխատանք-

ներ էին իրականացվել, բայց քաղաքի բնակիչների մի մասը, այնուամենայնիվ, մնացել էր անզեն: Այս հանգամանքը խիստ մտահոգել է քաղաքի մարտական ուժերի հրամանատարությանը:

Վարդանը Համազասպին հունիսի 1-ին գրած նամակում ներկայացնելով քաղաքում տիրող իրավիճակը՝ հայտնում է. «Քաղաքում զինուորներ քիչ ունենք, կռիւ ծագելու դեպքում, դարձեալ ակտիւ միջոցների չը պիտի կարողանանք դիմելու, եթէ դրսից օգնութիւն չստանանք...դու աշխատիր Խաչենի սահմաններից մօտիկ մնալ եւ յատուկ մարդիկ ունենալ, որ եթէ քաղաքում մի բան սկսուի անմիջապես ուղարկես օգնութեան...»[121]:

Համաձայն Զինվորական մարմնի ու «Ապառաժ»-ի զեկուցագրերի, իրավիճակն ավելի տագնապալի է եղել շրջաններում, որտեղ բնակչության մեծամասնությունը անզեն էր ու առավել վտանգված: Ղարաբաղում համեմատաբար բարվոք վիճակում է եղել Խաչենի շրջանը, ուր Համազասպը կարողացել էր կազմավորել մարտունակ մարտախմբեր: Կռիվների նախօրեին թուրքական զինուժը քանակական առումով բազմիցս գերակշռել է հայկական մարտական ուժերին: Բայց Ղարաբաղի ինքնապաշտպանական բանակը եղել է ավելի կազմակերպված ու մարտունակ: Ինչպես նախորդ, այս անգամ եւս - հայ ինքնապաշտպանական ուժերի գլխավոր գենքը պիտի լիներ ճկուն մարտավարությունն ու արիությունը:

Ինչպես արդեն նշվել է, Շուշիում էր գտնվում Գանձակի նահանգապետ գեներալ Գոլոշչապովը: Բայց նրա ներկայությունը ոչնչով չի ազդել Ղարաբաղում տիրող պայթունավտանգ իրավիճակի բարելավմանը: Նահանգապետը իր ներկայությանը պաշտոնական տեսք հաղորդելու եւ արդարացնելու նպատակով, թեեւ սպառնագին հրամաններ է արձակել ու պահանջներ ներկայացրել, բայց «...միշտ, ամեն տեղ, ամեն ժամանակ բոլոր ոճրագործները, մարդասպանները, հրդեհածիգները անպատիժ մնացին եւ քիմախնդրութիւնը սոսկալի չափերի հասնելով՝ վերջապէս պայթեց Յուլիսի 12-ին»[122]:

Ինչպես միշտ, նախահարձակը դարձյալ թուրքերն էին: Հուլիսի 12-ին սկսվում է Շուշիի երկրորդ կռիվը: Ի տարբերություն նախորդ կռիվների, հայկական մարտական ուժերը հրաժարվում են պաշտպանական մարտավարությունից եւ գրոհներ ձեռնարկելով՝ ընդամենը երկու ժամվա ընթացքում գրավում են թուրքերի առավել կարեւոր նշանակություն ունեցող դիրքերը: Եթե այդ բախտորոշ պահին թուրքերը չստանային անհրաժեշտ օգնություն, ապա շատ արագ կարող էին ջախջախվել:

Ըստ Շուշիի կռիվները պատմող վավերագրի՝ «Կառավարութիւնը մեր յառաջխաղացման լուրն առնելով, իսկոյն զօրք ուղարկեց վրացի Մազավարիանի օֆիցերի ղեկավարութեամբ: Մի քանի զալպերից յետոյ օֆիցերը մերոնց յետ դարձրեց գրաւած դիրքերից»[123]:

Առաջին օրը ընթացող կռիվների ժամանակ զորքը մի պատահական դիպվածի պատճառով օգնում է հայ մարտիկներին: Հրացանաձգության ժամանակ թուրքերի արձակած կրակոցներից վրացի Մազավարիանիի անխոհեմության պատճառով սպանվում են երկու ռուս զինվորներ: Նահանգապետ Գոլոշչապովը հեռացնում է վրացի սպային եւ հրամայում է քննանոթներից կրակ տեղալ թուրքերի դիրքերի ուղղությամբ: Պիտի ասել, որ նահանգապետի ծրագրերի մեջ երբեք չէր կարող լինել թուրքերին հարվածելու ու հայերին պաշտպանելու խնդիրը: Կովկասի փոխարքայից Գոլոշչապովն ու ցարական մյուս պաշտոնյաները ստացել էին միայն մեկ հանձնարարություն, այն է՝ առաջ բերել եւ խորացնել ազգամիջյան բախումները: Այն պահին, երբ Գոլոշչապովի հրամանով ռուս զինվորները թնդանոթներից հարվածում էին թուրքերի դիրքերին, «...զօրքերը մի այլանդակ, մի սպայի-Չերնեաեւի-ղեկավարութեամբ Խանին-Աղջկայ տներից հարուածում էր հայերին»[124]:

Այսուհանդերձ հայ մարտական ուժերը օգտվելով զորքի կողմից թուրքերի վրա տեղացող կրակից, նորից դիմում են հարձակման ու վերստին գրավում ու հրդեհում են թուրքերի այն բնակարանները, որոնք իշխող դիրք ունեին քաղաքում[125]:

Հուլիսի 13-ին շրջաններից Շուշի է հասնում 120 մարտիկներից բաղկացած մարտախումբը: Քաղաքի մարտական ուժերը համալրելով մարտաշարքերը՝ շարունակում են հարձակումը եւ գրավում հակառակորդի գլխավոր հենակետը՝ Ընջթան Բազարը: Թուրքերը պարտություն են կրում եւ հարկադրված հուլիսի 14-ի առավոտյան նահանգապետ Գոլոշչապովի միջնորդությամբ դիմում են հայկական կողմին՝ հաշտություն կայացնելու խնդրանքով: Հայկական կողմը, ըստ Վարդանի հավաստման «8 կետից բաղկացած մի պայմանագիր ենք ներկայացնում: Գլխաւոր կետերն են՝ քանդել Դիքտաճ-Ղուռուն եւ Գեօվհար աղայի տան դիրքերը,վերացնել բօյկոտը...»[126]:

Թուրքերը ձգձգում եւ խուսափում են պատասխանել: Պարզվում է, որ նրանք, հաշտություն խնդրելով, իրականում նպատակ ունեին ժամանակ շահել, դրսից օգնություն ստանալ եւ շարունակել կռիվները: Սակայն Շուշիի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, հասկանալով թուրքական կողմի խնդրանքով հաստատված զինադադարի իրական

նպատակը, վերսկսում է հարձակումը եւ պայթեցնում թուրքերի գլխավոր հենակետը՝ Դիքտան-Ղուռուն: Թուրքերը, կրելով հերթական պարտությունը, դարձյալ դիմում են հայկական կողմին՝ հաշտություն կայացնելու խնդրանքով, բայց գիշերը քաղաք են հասնում 200 եւ 500 զինյալներից բաղկացած երկու մարտախմբեր եւ թուրքական կողմը ստանալով օգնական ուժեր եւ ոգեշնչվելով նրանց ներկայությունից, դարձյալ ճգճգում են բանակցությունները: Այսուհանդերձ, հայ մարտական ուժերը կարող էին զարգացնել հարձակումն ու վերջնականապես ջախջախել հակառակորդին, եթե չլիներ նահանգապետի միջամտությունը:

«Գօլօշապովը,-գրում է Վարդանը,- նորից մեր առաջ է դնում ուլտիմատումը՝ կամ առաջ չգնալ, կամ թնդանօթներ՞...»[127]:

Ընդհանրացնելով քաղաքում տեղի ունեցած կռիվների արդյունքները՝ կարելի է ասել, որ հայ մարտական ուժերն ու հրամանատարությունը հակառակորդին գերազանցել են ճկուն մարտավարությամբ, վարպետությամբ ու խիզախությամբ: Հայկական զորախմբերը հակառակորդին գերազանցել են իրենց կազմակերպվածությամբ ու կարգապահությամբ: Թուրք հրոսակախմբերի համար կործանարար է եղել թալանին ու ավարառությանը տրվելու սովորույթը: Եղել են դեպքեր, երբ թուրք զինյալները, անհաջողության մատնվելով հայկական բնակավայրերում, թալանել են թուրք գյուղացիներին:

Եթէ օգոստոսյան կռիվների ժամանակ բռնկված հրդեհից առավելապես վնասվել էր քաղաքի հայկական մասը, ապա երկրորդ կռվի ժամանակ կատարվել է ճիշտ հակառակը: Կռիվների ողջ ընթացքում քաղաքի բոլոր թաղամասերում մեծ արդյունավետությամբ են գործել հրդեհածիգների խմբերը:

«Այդպիսի խմբեր, -գրում է Վարդանը,-ունէինք բոլոր շրջաններում: Դրանք կազմւած էին 14 տարեկանից սկսած անվախ, համարձակ տղաներից, կատարյալ փոքրիկ «սատանաներ», որոնք գնդակների տարափի տակ թռչկոտելով դէպի թշնամու դիրքերն էին վազում կրակելու համար թուրքերի տները...»[128]:

Միայն հուլիսի 12-ին եւ 13-ին տեղի ունեցած կռիվներում պատանի հրդեհածիգները հրդեհել են ավելի քան 200 տներ: Այդ օրը եղանակը նպաստավոր է եղել թուրքերի համար: Չնայած քամի բացարձակապես չի փչել, բայց նրանք , այնուամենայնիվ, կատարել են Զինվորական մարմնի հանձնարարությունը եւ կարողացել հատ առ հատ այրել թուրքերի առավել կարեւոր դիրք ունեցող եւ մեծահարուստ ընտանիքներին պատկանող բնակարանները:

Բացի հրդեհածիգների խմբերից, քաղաքում գործում էին հրդեհները հանգցնող խմբեր (հրաշեջներ), որոնք ունեցել են երկու հրաշեջ մեքենա, տակառներով ջուր, դույլեր, քանդելու գործիքներ: Համաձայն սահմանված կարգի, հրաշեջներները պիտի անհապաղ հայտնվեին վտանգված վայրերում եւ հանգցնեին հրդեհվող տներն ու այլ շինությունները:

Վիրավորներին ու հիվանդներին ժամանակին օգնություն ցույց տալու եւ խնամելու նպատակով քաղաքի թաղերում աշխատել են սանիտարական խմբեր: Կռիվների ընթացքում, այդ խմբերում ընդգրկվածներից շատերը գտնվել են հենց մարտադաշտում, զինվորների կողքին եւ բազմիցս օգնություն ցույց տվել վիրավորներին:

Քաղաքի թաղապետերի նախաձեռնությամբ հիմնվել են զինվորների համար թաղային ճաշարաններ, որտեղից, հիմնականում կաճայք, ուտելիք եւ ջուր են հասցրել մարտադաշտի առաջավոր բնագծերում մարտնչող մարտիկներին:

Պատշաճ մակարդակով է գործել կապը Շուշիի եւ շրջանների միջեւ: Զինվորական մարմինը կարողացել է սուրհանդակների միջոցով անհրաժեշտ հրահանգներն ու կռվի մասին տեղեկությունները կենտրոնից ժամանակին հասցնել շրջանների հրամանատարներին: Քաղաքում կազմավորվել են հատուկ խմբեր, որոնք կռիվների ժամանակ փամփուշտ էին հասցնում դիրքերում գտնվող մարտիկներին, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ փոխարինում նրանց: Վարդանի գնահատմամբ «Դիսցիպլինան կատարեալ էր, մանաւանդ առաջին օրը... »[129]:

Զինվորական մարմնի հրահանգով կազմավորվել են հատուկ նշանակության թուղթիկ մարտախմբեր, որոնք դիրքավորվելով քաղաքի մերձակա անդնդախոր ձորերի մեջ, հսկում էին թշնամու տեղաշարժերը եւ առաջնորդում էին գավառներից Շուշի գնացող օգնական ուժերին՝ անվտանգ մուտք գործելու քաղաք[130]:

Կռիվների ընթացքում թուրքերին սարսափի են մատնել Ռոստոմի նախաձեռնությամբ պատրաստած հրթիռներն ու ձեռնառումբերը: Մեծ արդյունավետությամբ են գործել Շուշիի զինագործների վերանորոգած թնդանոթները: Համաձայն կռիվների մանրամասները պատմող վավերագրի, թուրքերը նույնպես ունեցել են թնդանոթներ, որոնցից մի քանի անգամ կրակել են հայ մարտիկների դիրքերի վրա: Վավերագրի գնահատմամբ հայ վարպետների պատրաստած թնդանոթների կրակը, հատկապես հինգ դյույմանոց, եղել է ավելի արդյունավետ ու սարսափազդու[131]:

Շուշիի կռիվները որոշակի ընդհատումներով հուլիսի 12-ից շարունակվել են մինչեւ նույն ամսվա 22-ը: Մի քանի անգամ վերջնական ջախջախումից խուսափելու նպատակով թուրքական կողմը նահանգապետի միջոցով դիմել է հայկական կողմին՝ հաշտություն կայացնելու առաջարկով, բայց յուրաքանչյուր անգամ, ինչպես արդեն նշվել է, ստանալով օգնական ուժեր՝ դրժել է խոստումն ու առաջադրված պայմանները:

Հունիսի 21-ին թուրքերը, զգալի ուժեր կենտրոնացնելով քաղաքի ավերակների վերածված բաղամասերից մեկում, կրկին փորձել են գրոհել հայ մարտիկների դիրքերը: Նրանք նախօրեին գործադրքի մեջ մտնելով զորքի հրամանատարների հետ՝ ակնկալել են ստանալ նրանց աջակցությունը: Իրոք, զորքը Չերնեաեւսկու առաջնորդությամբ գալիս է մարտադաշտ եւ թուրքերին աջակցելու նպատակով փորձում հայ մարտիկներին դուրս բերել դիրքերից, բայց մատնվում է անհաջողության:

Առաջնորդվելով ինչ-ինչ նկատառումներով, նահանգապետը չի կատարել թուրքական կողմի խնդրանքը: Նահանգապետի հրամանով զորքը պահպանել է չեզոքություն եւ այդ օրը հանդես է եկել դիտորդի կարգավիճակով: Զրկվելով ռուս հրամանատարի՝ Չերնեաեւսկու խոստացած զինական աջակցությունից, թուրքերը չեն համարձակվում հարձակվել հայ մարտիկների դիրքերին: Այդ ճակատագրական պահին իր վճռական խոսքն է ասում հայ մարտական ուժերի հրամանատարությունը: Օգտվելով զորքի չեզոքությունից եւ հակառակորդի մարտաշարքերում առաջացած խուճապային տրամադրությունից՝ հայ մարտիկները հուժկու գրոհ են ձեռնարկում եւ խորտակելով թուրքերի դիմադրությունը՝ ներխուժում են նրանց պաշտպանական դիրքերը:

Անդրադառնալով իր հարամանատարությամբ գործող մարտական ուժերի վերջին գործողություններին՝ Վարդանը նշում է. «Երեկոյեան դէմ էր արդէն: Բավականաչափ ոյժ կենտրոնացրինք աւերակների ներսն ու շուրջը, ու ռումբ-ձաւներով: Փառաւոր մի ջարդ տալուց յետոյ դուրս քշեցինք թուրքերին ու աւերակները նորից ամբողջապէս գրաւեցինք...

22-ի առաւօտը լուսացաւ միանգամայն դադարած հրացանաձգութեամբ, այդպիսով վեջացաւ կռիւը, որը ընդմիջումներով տեւեց ամբողջ 9 օր եւ որը կատարեալ պատերազմատեղի էր վերածել ամբողջ քաղաքը»[132]:

Ավարտվում է Շուշիի երկրորդ կռիվը: Քաղաքի պաշտպանների հաղթանակը անվիճելի էր: Միայն վերջին օրվա՝ հուլիսի 22-ին տեղի ունեցած կռվում, ըստ Ա-ԴՕ-ի տվյալների, հայերի կորուստներն էին՝

24 սպանված եւ 102 վիրավոր, իսկ թուրքերինը՝ կրկնակի ավելի: Այդ օրը հրդեհի հետեւանքով ոչնչացվել է ավելի քան 200 տուն, որի մեծ մասը թուրքերին պատկանող[133]:

Համաձայն «Դրօշակ»-ի տվյալների, միայն հուլիսի 22-ի կռվում թուրքերն ունեցել են 190-ից ավելի սպանվածներ[134]:

Շուշիում տեղի ունեցող կռիվներին զուգընթաց մարտեր են ընթացել Ղարաբաղի շրջաններում: Հայկական մարտական ուժերը Շուշին պաշտպանելու նպատակով փակել էին դեպի քաղաք ձգվող, հատկապես Աղդամ-Ասկերան-Շուշի, ուղիները: Զրկվելով այդ ուղությամբ Շուշիի վրա հարձակվելու հնարավորությունից՝ թուրք առաջնորդները կռիվներում բեկում մտցնելու եւ քաղաքի վրա ձեռնարկվող գրոհը ավելի դյուրին ու արդյունավետ իրականացնելու նկատառումով, կիրառում են հայ մարտական ուժերին ապակողմնորոշող մարտավարություն:

Հուլիսի 15-ին թուրք հրոսակախմբերը հարձակվում եւ պաշարում են քաղաքի մերձակա՝ Վարազաբոյնի, Միրուջամալի, Ղարաղշլաղ, Շուշիքենդ եւ այլ գյուղերը: Թուրք առաջնորդների հաշվարկով Շուշիի մարտական ուժերի մի մասը ստիպված էր գնալու պաշարված գյուղերին օգնության: Եթե Շուշիի պաշտպանների մի մասը հեռանար պաշտպանական հենակետերից, ապա զգալիորեն կթուլանար քաղաքի պաշտպանությունը եւ թուրքերին հնարավորություն կընձեռվեր հեշտությամբ ներխուժելու քաղաք: Անհրաժեշտ էր օգնել հարձակման ենթարկված գյուղերին: Ինքնապաշտպանական շրջաններին գրած հուլիսի 4-ի նամակում Վարդանը հայտնում է. «Նկատում են թուրքերի գործողութիւնների մէջ որոշ ծրագրեր: Բոլոր բարձունքները բռնել են, զինուած քոչորներով թրքական շրջաններում գտնուած հայկական գիւղերը օր. Ղարաղշլաղ եւ այլն ոչնչացնել, իրենց ձեռք գցել, այդ կռիւներով քաղաքի ուշադրութիւնը հրաւիրել, այստեղ մեր ուժերը ջլատել եւ յետոյ յարձակման վայրը դարձնել քաղաքը եւ այլ հայկական վայրեր...»[135]:

Շուշիի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը, ճիշտ գնահատելով հակառակորդի հետապնդած նպատակը, նրա ոգմախաղին պատասխանում է համապատասխան մարտավարությամբ: Հայ մարտախմբերը ոչ միայն շտապում են վտանգված գյուղերին օգնության, այլեւ հարձակվում են թուրքական Շելլուի գյուղի վրա: Ընդ որում, Զինվորական մարմնի հանձնարարությամբ այդ կռիվներին մասնակցում են ոչ թե Շուշիի ինքնապաշտպանական ուժերը, այլ Վարանդայի ու Խաչենի մարտախմբերը: Հայ մարտական ուժերը, հար-

ձակում ձեռնարկելով մի քանի ուղղություններով, շրջապատում են հայկական գյուղերն աստիճանաբար իրոսակախմբերին: Ղարաբաղի Զինվորական մարմնի հաշվարկը ճիշտ էր. թուրքական ուժերը շրջափակումից խուսափելու նպատակով հարկադրված դադարեցնում են հարձակումը եւ շտապում կենտրոնանալ Շելլու գյուղում:

Կռիվը տեւել է 9 ժամ: Հայ մարտիկները կարող էին հիմնահատակ կործանել Շելլին ու ոչնչացնել բնակիչներին, բայց հանճարեղ այդ կռիվների մասնակից Արամայիսի «Այս երկրորդ անգամն էր, որ Շէլլուն ազատում էր աւերումից. մի անգամ յունուարի 6-ին, եւ մէկ անգամ էլ՝ այսօր շնորհիւ Դաշնակցութեան ներկայացուցիչների...»[136]:

Նույն օրերին կռիվներն ավելի մեծ ուժգնությամբ ընթացել են Խրամորթի մերձակայքում: Գյուղի պաշտպաններին օգնության են շտապել Համազասպի գլխավորած Խաչենի, ապա նաեւ Վարանդայի բռուցիկ խմբերը: Թուրք ջախջախված հեծելախմբերը, կրելով հերթական պարտությունը, լքել են մարտադաշտը: Հարձակման ենթարկված հայկական գյուղերի բնակիչները, օգտվելով հայ մարտախմբերի ձեռք բերած հաղթանակից, դուրս են գալիս պաշարման օղակից եւ տեղափոխվում Շուշի[137]:

Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը նկատելի հաջողության են հասնում Խաչենի գավառում:

ՀՅԴ Արեւելյան բյուրոն «Դաշնացական մարմիններին» հասցեագրած շրջաբերականում ներկայացնելով 1905 թ. դեկտեմբերի 27-ից հետո մի քանի գավառներում հայ ինքնապաշտպանական ուժերի ձեռք բերած նվաճումները՝ հայտնում է. «Խաչէնի գաւառում աւերեցինք 5 թրքական գիւղ: Այստեղ սպանուած են մօտ 300 թուրք: Գիւղերն են՝ Ումուղու, Գեօռավանդ, Ալի-Մահմուդլու եւ այլն»[138]:

Որպեսզի ավելի ամրապնդեին Շուշի քաղաքի անվտանգությունը, Ղարաբաղի մարտական ուժերի հարձակման հերթական թիրախը դառնում է խառը բնակչություն ունեցող Խանքենդ գյուղը, որը կռիվներ ժամանակ թուրքական իրոսակախմբերի համար վերածվել էր յուրօրինակ կենտրոնատեղի:

ՀՅԴ Արեւելյան Բյուրոն վերոհիշյալ շրջաբերականում անդրադառնալով նաեւ այդ գործողությանը՝ նշում է. «Շուշու մօտ գտնուող Խանքենդի խառն բնակչութիւն ունեցող գիւղի թրքական մասը ամբողջովին աւերուած է ու ոչնչացած»[139]:

Հայկական ինքնապաշտպանական ուժերն արժանի հաղթանակ են տանում նաեւ Արցախ աշխարհի Գյուլիստանի գավառում տեղի ունեցող մարտերում:

Պարտություն կրելով Ղարաբաղի գրեթե բոլոր բնակավայրերում ընթացող կռիվներում, թուրք առաջնորդներն այլեւս այլընտրանք չէին կարող ունենալ: Նրանք պարզում են սպիտակ դրոշը եւ իշխանության ներկայացուցիչների միջնորդությամբ դիմում հաշտության:

Չնայած այն իրողությանը, որ Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը հայ-թուրքական ընդհարումներում թուրք հրոսակախմբերի նկատմամբ տոնել էին անվիճելի հաղթանակ, բայց գավառում եւ հատկապես Շուշիում դեռեւս տիրում էր լարված ու բարդ իրավիճակ: Դեռեւս ընդհարումների ժամանակ, ինչպես արդեն նշվել է, թուրքական կողմը օգտվելով իշխանությունների բարյացակամ վերաբերմունքից ու Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության պաշտպանողական բնույթի մարտավարությունից, շրջափակման մեջ էին վերցրել Շուշին: Քաղաքը արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության ուղիները գտնվում էին թուրք հրոսակախմբերի հսկողության տակ: Նույն իրավիճակը, ի դժբախտություն Շուշիի հայության, պահպանվել է նաեւ կռիվների ավարտից հետո:

Շուշին գավառի բնակավայրերի հետ կապող հաղորդակցության ուղիները վերահսկելու ու նոր ուղիներ բացելու եւ նոր ճանապարհներ կառուցելու նպատակով արցախահայությունը ընտրում է գործադիր մարմին՝ «Շուշի-Գանձակ ճանապարհաշինության վարչություն»: Նորընտիր գործադիր մարմինը նոր ճանապարհներ կառուցելու եւ ֆինանսական անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու նպատակով դիմումներ է հղում մի շարք կազմակերպությունների ու անհատների:

«Մեծապատիւ տէր» Մովսես Թավադյանին հասցեագրած դիմում_մում «Շուշի-Գանձակ ճանապարհաշինության վարչության» նախագահը գրում է. «Շուշի-Ելախ ճանապարհը վերջին տարին Ղարաբաղի հայության համար մի կատարեալ սպանդանոց է դարձել: Անմեղ հայ ճանապարհորդները հինգով, տասնով, երեսունով, յիսունով՝ հարս, կին, երեխայ անխտիր, 2-300 հոգուց աւելի, զոհուեցան այս մի տարում: Վաճառականը զրկուեց իր ապրանքից, կորցրեց հարիւր հազարներ...»[140]:

Ներկայացնելով Շուշիի շրջափակման հետեւանքով քաղաքում տիրող չափազանց ծանր ու քաոսային կացությունը՝ դիմումագիրը հայտնում է. «...հայ ազգաբնակչութեանը սպառնում է մահ, սով, սնանկութիւն...

Հաշտութեան ապահովութիւն եւ վստահութիւն այսուհետեւ երբէք չի կարելի, որովհետեւ թշնամութիւնը խոր արմատներ է բողել երկու հարեւանների սրտերում...»[141]:

Ինչ՞ պետք է արվեր: Իրենց իսկ արտայայտությամբ «դժոխային ճանապարհով» երթեւեկելը արցախահայության համար անհնարին էր, բուրք ավազակախմբերը մշտապես հարձակվում էին հայ ճամբորդների վրա եւ անխտիր սպանում բոլորին:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը մեկն էր. հարկավոր էր բացել նոր ուղիներ, կառուցել նոր ճանապարհներ: Ամենօրյա սարսափներն ու հաղորդակցության ուղիներում տիրող կացության հարկադրանքով Ղարաբաղի հայությունը դադարում է Շուշի-Եվլախ ճանապարհով երթեւեկելուց եւ որոշում նոր ճանապարհ բացել Գանձակից Շուշի, որը պիտի անցներ Խաչեն ու Ջրսբերդ գավառների հայկական գյուղերի տարածքով:

Ճանապարհի շինարարության համար, ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ էր ֆինանսական միջոցներ: Այդ նպատակով «Շուշի-Գանձակ ճանապարհաշինության վարչության» նախագահը վերոհիշյալ դիմումում գրում է. «Օգնեցէ՛ք, եթէ ուզում էք, որ Շուշին անհետ չը կորչի...մեր դռանը մեզ սով է սպասում, մեր յարկի տակէ կորուստ:

Օգնեցէ՛ք, ոչ թէ ռուբլիով, այլ առատ նուէրներով, որ կարող լինենք այդ նուէրներով կազմել հսկայ գումարը՝ 70 հազար ռուբլի եւ գործ շինել, թէ չէ կը մնանք կէս ճանապարհին»[142]:

Թեպետ մեծագույն դժվարությամբ, այնուամենայնիվ, արցախահայությունը կարողանում է հաղթանակով դուրս գալ նաեւ այդ կացությունից: Բացվում են նոր ուղիներ, որոնց զգալի մասը անցել է դժվարանցելի սարերով ու անդնդախոր ձորերով: Սկսում է գործել Շուշին արտաքին աշխարհի հետ կապող, քաղաքի հայության համար կենսական նշանակություն ունեցող դժվարանցելի, բայց բանուկ ճանապարհները:

Ընդհանրացնելով Ղարաբաղում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների արդյունքները՝ կարելի է աներկբա հաստատել, որ արցախահայությունը, շնորհիվ իր կազմակերպվածության ու կռիվներում դրսեւորած քաջության, տարել է լիակատար հաղթանակ:

---

1. ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ 7:
2. ՀԱԱ, ֆ.150, ց.1. գ.4, Արամայիս, «Մի քանի գլուխ հայ-բրքական ընդհարումներից. Թիֆլիս, 1907, էջ 6:
3. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ10:
4.Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ 395:
5. Նույն տեղում:

6. ՀԱԱ, ֆ.227, ց. 1, գ. 395, թ. 137:
7. ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ 10:
8. Տե՛ս նույն տեղում, բծ. 404, գ. 10, էջ 10:
9. ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ1, էջ 37-38:
10. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ 10:
11. Տե՛ս նույն տեղում, բծ. 3, գ. 24, էջ 3:
12. Նույն տեղում, բծ. 404, գ. 10, էջ 9:
13. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 402, ց. 2, գ.1, էջ 37:
14.Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 322:
15. Նուն տեղում:
16. ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 9:
17. Նույն տեղում, բծ. 402, գ. 6, էջ 1:
18. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց 2, գ.1, էջ 39-40:
19. ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ.6, էջ 2:
20. Նույն տեղում, էջ 1:
21. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 9, էջ3:
22. Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 153:
23. ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 9, էջ 7:
24. Նույն տեղում, բծ. 402, գ. 9, էջ 7:
25. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, էջ 40:
26. ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 9, էջ 7:
27. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 322:
28. ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, էջ 42:
29. Տե՛ս «Մշակ», 1905, 30 օգոստոսի:
30. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ 14:
31. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 322:
32. Ռոստոմ (Նամականի), էջ 397:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35. ՀԱԱ, ֆ.402, ց. 2, գ. 1, էջ 40
36. Տե՛ս Ռոստոմ (Նամականի), էջ 397:
37. Նույն տեղում:
38. ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 4, Արամայիս, «Նշվ. աշխ., էջ 8:
39. Նույն տեղում, էջ 32:
40. Նույն տեղում, էջ 17:
41. Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:
42. Տե՛ս Ա-ԴՕ, էջ 186:
43. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 10:
44. «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութիւն» Բոստոն, 1950, էջ 493:
45. Տե՛ս, ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 10, էջ 19:

46. Նույն տեղում, էջ 20
47. ՀՅԴ ԿԱ, բծ. 402, գ. 15:
48. Նույն տեղում:
49. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ 17:
50. Տե՛ս Նիւթեր, հ. Բ,էջ 251:
51. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 11, էջ 17:
52. Նույն տեղում, էջ 18:
53. Նույն տեղում, էջ 19:
54. ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ .4, Արամայիս, Ձշվ. աշխ., էջ 47:
55. Տե՛ս նույն տեղում, էջ 47-48:
56. Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 13, էջ 207:
57. «Նիւթեր...», հ. Բ, էջ 237:
58. Արամայիս, «Վնասակարը», Թիֆլիս, 1907, էջ 28:
59. ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 4, Արամայիս, Ձշվ. աշխ., էջ 19 :
60. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ.6, էջ 2:
61. Տե՛ս նույն տեղում, բծ. 404, գ. 12, էջ 5:
62. Նույն տեղում, էջ 5-7:
63. Արամայիս, «Վնասակարը», Թիֆլիս, 1907, էջ 33-34
64. Նույն տեղում:
65. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 12, էջ 5:
66. Նույն տեղում, բծ. 403, գ. 24, էջ 1:
67. Արամայիս, «Վնասակարը», Թիֆլիս, 1907, էջ 36:
68. Վ. Փափազեան, «Իմ յուշերը», հ. 1, էջ 431-432:
69 Մ. Վարանդեան, Ձշվ. աշխ., էջ 322:
70. «Նիւթեր...», հ.Բ, էջ 237:
71. Տե՛ս Դ. Անանուն, «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում(1870-1900)», հ. 2, էջ 33:
72. «Նիւթեր...», հ. Բ, էջ 237:
73. Նույն տեղում, էջ 239:
74. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 23, էջ 1-2:
75. Նույն տեղում, բծ. 403, գ. 25, էջ 1:
76. Տե՛ս նույն տեղում, էջ 2-3:
77. «Նիւթեր...», հ. Բ, էջ 251:
78. Տե՛ս նույն տեղում:
79. Մ Վարանդեան, Ձշվ. աշխ , էջ 324:
80. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 44, էջ 3:
81. Մ. Վարանդեան, Ձշվ. աշխ., էջ 335:
82. Տե՛ս նույնը, էջ 336:
83. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 44:
84. Նույն տեղում, գ. 40:

85. Նույն տեղում, Թծ. 394, գ. 5, էջ 1:
86. Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ5, էջ 71: ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 17, էջ 1:
87. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 5, էջ 1:
88. Տե՛ս «Դրօշակ», 906, թիւ4, 50: «Յառաջ», 1906, թիւ 66, 70:
89. Տե՛ս ՀԱԱ, ֆ.150, ց. 1, գ. 4, Արամայիս, «Մի քանի գլուխ հայ բրք-ն... », էջ 85-96:
90. Նույն տեղում, էջ 85-86:
91. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 6, էջ 2:
92. Նույն տեղում, էջ 3:
93. Տե՛ս «Ալիք», 1906, թիւ 15, 16:
94. Տե՛ս «Յառաջ», 1906, թիւ 9:
95. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 4, Արամայիս, Ձշվ. աշխ., էջ 96:
96. Նու յն տեղում:
97. Տե՛ս «Դրօշակ», 1906, թիւ 6, էջ 87:
98. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 15, 16, 17:
99. «Դրօշակ», 1906, թիւ 3, էջ 37:
100. «Նիւթեր...», էջ 258:
101. Նույն տեղում, էջ 265:
102. Նույն տեղում, էջ 267:
103. Մ. Վարանդեան, Ձշվ., աշխ., էջ 333:
104. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 21:
105. Նույն տեղում, գ. 24, էջ 1:
106. Նույն տեղում, էջ 2:
107. Նույն տեղում, բծ. 403, գ. 20, գ. 21:
108. «Հայրենիք», 1934, թիւ 7, էջ 142:
109. Նույն տեղում:
110. Նույն տեղում:
99. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 13, էջ 3-4:
111. Տե՛ս նույն տեղում, գ. 6, գ. 7:
112. ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 10, էջ 21:
113. Մ. Վարանդեան, Ձշվ., աշխ., էջ 327:
114. ՀՅԴ ԿԱ, բծ. 404, գ. 12, էջ 1-2:
115. Տե՛ս նույն տեղում, բծ. 405, գ. 7, Մ. Վարանդեան, Ձշվ., աշխ., էջ 333:
116. Նույն տեղում, բծ. 403, գ. 17, էջ 1:
117. Տե՛ս «Հայրենիք», ամս., 1962, թիւ 9-10, էջ 43:
118. Ռոստոմ (Նամականի), էջ 398:
119. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 19, էջ 4:
120. Նույն տեղում, գ. 22, էջ 1-2:
121. Արամայիս, Ձշվ. աշխ., 2- րդ մաս, էջ 6:
122. ՀՅԴ ԿԱ, բծ. 403, գ. 19, էջ 1:

123. Ա-ԴՕ, ձշվ. աշխ., էջ 167:
124. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ.403, գ.19, էջ 1-2:
125. Նույն տեղում, էջ 2:
127. Նույն տեղում, էջ 5:
128. Նույն տեղում:
129. Նույն տեղում, էջ 3:
130. ՀՅԴ ԿԱ, թծ. 403, գ. 10, էջ 1:
131. Տե՛ս նույնը, էջ 2-3:
132. ՀՅԴ ԿԱ, թծ. 403, գ. 19, էջ 8:
133. Տե՛ս Ա-ԴՕ, ձշվ. աշխ., 1907, էջ 167:
134. Տե՛ս «Դրօշակ», 1906, թիվ 8, էջ 115:
135. ՀՅԴ ԿԱ, թծ. 403, գ. 13, էջ 2-3:
136. Արամայիս, ««ձշվ. աշխ., 2-րդ մաս, էջ 11:
137. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 404, գ. 10, էջ 21-22:
138. Նույն տեղում, թծ. 15, գ. 38, էջ 2:
139. Նույն տեղում:
140. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 159, էջ 1:
141. Նույն տեղում:
142. Նույն տեղում:

ԲԱՔՎԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Բաքուն, ինչպես հայտնի է, Կովկասի արդյունաբերական այն ճշանակավոր կենտրոնն էր, որտեղ կովկասյան թուրքերը 1905 թ. փետրվարին սանձազերծեցին հայկական առաջին կոտորածը: Ինչպես արդեն նշվել է, այդ ժամանակ շնորհիվ Նիկոլ-Դումանի կազմակերպած ինքնապաշտպանության եւ հայ փոքրաքանակ մարտիկների հերոսական դիմադրության, տապալվեցին թուրք առաջնորդների հայակործան ծրագրերը, եւ Բաքվի հայությունը փրկվեց անխուսափելի կոտորածից:

Հայ մարտիկների պատասխան հուժկու հարվածները, իրենց ծրագրերի փլուզումը, գոնե ժամանակավորապես ու առերես, փոխում են թուրք վերնախավի վերաբերմունքն ու տրամադրությունը:

Մ. Վարանդյանի բնութագրմամբ «...Մեր անուղղելի դրացիները գոհ չմնացին իրենց նիւթած սարսափներու արդիւնքէն: Ջղոումի թափորներ սարքեցին, բանքէտներու, խնճոյքներու մէջ եղբայրացան, հաշտեցին հայերուն հետ, հանդիսաւոր խոստումներ ըրին չենթարկուիլ այլ եւս «Շէյքանի» ազդեցութեան ու ներշնչումներուն եւ չվերսկսիլ եղբայրասպան կռիւները [1]:

Տեղիք տալով ու հավատ ընծայելով թուրք առաջնորդների ու հատկապես հոգեւորականության կեղծ խոստումներին ու երդումներին՝ քաղաքի հայության մեջ ու անգամ ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեում այն տրամադրությունն է իշխել, որ փետրվարյան դեպքերը լոկ պատահականություն էր, իսկ խաղաղությունը կարելի է համարել լիովին վերականգնված [2]:

Ավելին, ըստ Աբ. Գյուլխանդանյանի խոստովանության «...հաւատալով թաթարների բարի հարեւանութեան վրայ, աւելորդ համարուեց դիրքերի մէջ մեր մարտկոցների ներկայութիւնը եւ կարգադրուեց, որ բոլոր մարտիկները թողնեն դիրքերը եւ վերադառնան իրենց նախկին աշխատանքներին»[3]:

Սակայն կարճ ժամանակ անց դեպքերը Բաքվում եւ շրջաններում այնպես են դասավորվում, որ հստակ կերպով ցույց են տալիս, որ ձեռք բերած խաղաղությունն ավելի քան երերուն էր ու խաբուսիկ:

Կովկասում, ինչպես նաեւ Բաքվում ծավալվող հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ քանի դեռ կայսրության տարածքում չէր մարել հեղափոխական շարժումը եւ շարունակվում էր ռուս-ճապոնական

պատերազմը, ազգամիջյան բախումները հրահրող ու հովանավորող ուժերի, այն է՝ ցարական իշխանությունների համար դեռևս բնավ չահեկան չէր դադարեցնել ազգամիջյան ընդհարումներն ու Կովկասում հաստատել խաղաղություն: Ցարական իշխանությունները, ազգամիջյան բշնամանքը վառ պահելու եւ այն առավել ամրապնդելու նպատակով, բուրք պարագլուխների եւ իրենց գործակալների միջոցով տարածում էին այնպիսի ստահոդ, մտացածին լուրեր, որոնք ազգաբնակչության մեջ ավելի էին խորացնու, առանց այն էլ արդեն ներթափանցած վախն ու սարսափը:

Օրինակ, քաղաքի բուրքական բոլոր թաղամասերում նրբորեն տարածում էին տեղեկություններ, որոնց հավաստմամբ հայ զինական ուժերը արեւմտահայ ֆիդայիների գլխավորությամբ պատրաստվում են հարձակվել ու կոտորել ոչ միայն Բաքվի մահմեդական բնակչությանը, այլեւ զինվորներին եւ պետական ապստիճանավորներին: Միաժամանակ նույն սցենարով հայերի մեջ նույնպես տարածում էին լուրեր, համաձայն որոնց «...բուրքերը մտադիր են յարձակելու հայերի վրայ, եւ այդ լուրը հաստատելու նպատակով մեջ են բերում այն, որ իբրեւ թէ վերջին ժամանակներս գիւղերից մեծ բազմութեամբ եկած բուրքեր են երեւում քաղաքում»:

Ցարական իշխանությունների վարած այդօրինակ երկդիմի քաղաքականությունը շատ վտանգավոր էր եւ հղի անկանխատեսելի բացասական հետեւանքներով: Միանգամայն պարզ էր եւ հասկանալի, որ չբավարարվելով հաստատված ժամանակավոր խաղաղությամբ՝ իշխանությունները ձգտում էին առավելագույնս շիկացնել լարված մթնոլորտը եւ անհրաժեշտության դեպքում վերսկսել ազգամիջյան ընդհարումները: Իսկ դա, ինչ խոսք, համահունչ էր բուրք վերնախավի ծրագրերին ու տրամադրվածությանը:

Բաքվի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին տարբեր ազգությունների տասնյակ հազարավոր բանվորներ, որոնք հեղափոխական շարժումների խորացմսն պարագայում կարող էին լուրջ վտանգ ներկայացնել իշխանությունների համար: Այդ պատճառով իշխանությունները Բաքվում եւ նավթահանքերում կենտրոնացրել էին հազարավոր զինվորների, որոնց պարտականությունն էր խեղդել հեղափոխական յուրաքանչյուր շարժում: Հաճախակի փոխվել են զինվորական նահանգապետերը:

1905 թ. աշնանը Բաքվի զինվորական նահանգապետ է նշանակվում իշխան Ամիրախվարին, որը ստանձնելով պաշտոնը՝ քաղաքի ազգաբնակչությանը պաշտոնապես հայտարարում է, որ ինքը եկել է Բա-

քու վերջ տալու հակամարտություններին ու կռիվներին եւ սպառնում, «...թէ բոլոր նրանք , որոնք կը փորձեն խանգարել քաղաքի խաղաղութիւնը, պիտի պատժուեն ամենախիստ կերպով, համաձայն պատերազմական օրէնքների»[4]:

Բայց շատ շուտով նորանշանակ նահանգապետի կեցվածքը ներկայա ցույց է տալիս, որ նրա սպառնալիքներն ու զգուշացումը վերաբերում են միմիայն հայ բնակչությանը: Քաղաքում գտնվող զինվորները շրջել եւ խիստ հսկողություն են սահմանել ու խուզարկություններ կատարել միայն հայկական քաղաքամասում, իսկ բուրքական մասերում զինվորները շատ քիչ են երեւացել եւ երբեք խուզարկություններ չեն կատարել:

Աբ. Գյուլխանդանյանի պնդմամբ «Հայկական մասերում շրջագայող եւ խուզարկող զորամասերը բաղկացած էին գլխատրապէս «պլաստուն» կոչուած կոզակներից, որոնք յայտնի էին իրենց դաժանութեամբ: Այդ զորամասերը, որոնք գրեթէ ամէն օր կերեւային հայկական մասերում, լկտի հայհոյանքներով կը սկսէին հարուածել եւ ծեծել անխտիր բոլոր անցորդներին: Վայ նրան, որ կը փորձէր խուսափել այդ բարբարոսութիւնից: Կը սկսէին համազարկեր տեղալ խուսափող հայի կամ հայերի վրայ...»[5]:

Ջորքի ներկայությունը սարսափելի կացություն է ստեղծում քաղաքի հայության համար: Բազմաթիվ դիմումներց ու բողոքներից հետո ի վերջո իշխանությունները համաձայնում են քաղաքից հեռացնել զինվորներին, բայց խուզարկությունները, ի դժբախտություն հայերի, շարունակվում են: Նահանգապետությունը ընդունում է օրենք, որով զենք կրելու ազատ իրավունք է տրվում բոլոր «վստահելի» քաղաքացիներին: Պարզվում է, որ նահանգապետության որակավորմամբ «վստահելի» քաղաքացիները բուրքերն էին, որոնք կարող էին զենք կրել եւ ազատորեն շրջել քաղաքի բոլոր մասերում: Դրան հակառակ զանազան պատրվակներով արգելել են հայերին զենք կրել եւ զինված փողոց դուրս գալ: Միանգամայն պարզ էր ու հասկանալի, որ բուրքերն անպայմանորեն կօգտագործեն իշխանությունների կողմից իրենց շնորհված իրավունքը եւ հայերի նկատմամբ կդիմեն բռնությունների ու սպանությունների:

Ժամանելով Բաքու իշխան Ամիլախվարին ընդհարումների բռնկման պատճառներն ու մեղավորներին պարզելու նպատակով հրավիրում է խորհրդաժողով, որին բացի պետական պաշտոնյաներից, մասնակցել են նաեւ հայ եւ բուրք ազգաբնակչության ներկայացուցիչները: Հայկական կողը միամտաբար կարծել է, որ իշխան Ամիլախվարին Բաքու է ժամանել արդարությունը բացահայտելու, խաղաղություն հաստատելու ու կռիվների

սանձազերծման մեղսագործներին պատժելու առաքելությամբ: Սակայն հայ պատգամավորների համար միանգամայն անսպասելի է եղել այն, որ նահանգապետը փոխանակ խոսի ընդհարումների բռնկման պատճառների ու ոճրագործների մասին, ասել է. «Դուք՝ հայերդ պարտականութիւն ունէք զսպելու ձեր կոմիտէներին(նկատի ունի ՀՅԴ կոմիտեներին-Հ.Գ.):

Մեր գիտերում ինչ-որ ես հրամայում եմ մեր գիտացիներին, լսում են եւ հնազանդւում: Մի՞թէ դուք՝ հայերդ չէք կարող զսպել ձեր կոմիտէները»[6]:

Իհարկե, ժողովի մասնակիցներին, այդ թվում իշխան Ամիլախվարիին քաջ հայտնի էր, որ եթե իր մատնանշած կոմիտեները չկազմակերպեին քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունը, ապա թուրք հրոսակախմբերը անխնա սպանդի կենթարկեին հայությանը: Հայ հեղափոխական կազմակերպությունները, իհարկե՝ գլխավորապես ՀՅԴ, ցարիզմի դեմ որդեգրած իր հեղափոխական պայքարի ռազմավարությամբ ու «Կովկասյան նախագծով» անցանկալի եւ վտանգավոր տարր էր իշխանությունների համար:

Ժողովի մասնակիցներից Թիֆլիսի նախկին նահանգապետ Բիկովը, որը հայտնի էր որպես սեւհարյուրակային խմբերի ղեկավար, պաշտպանելով իշխան Ամիլախվարիի տեսակետը, ասել է, թե կոտորածի պատճառներից մեկը եւ ոչ գլխավորը այն է, որ հայերի մեջ գոյություն ունեն կոմիտեներ, որոնք գաղտնի «...դրամներ են հանգանակում, սպառնալից նամակներ են ուղարկում եւ յաճախ ի կատար են ածում այդ սպառնալիքը...Ամէն միջոց պէտք է ձեռք առնուի՝ վերջ տալու համար այդ կոմիտէների գործունէութիւնը»:

Կոտորածների բռնկման պատասխանատվությունը գլխավորապես հայ կոմիտեներին վերագրելը թեւաւորում է ժողովի թուրք մասնակիցներին, որոնք օգտվելով նաեւ հայ պատվիրակների չփոթությունից՝ հայտարարում են. «...հայ կոմիտէների գործունէութիւնը ուղղուած է մահմեդականութեան դէմ, թէկուզ նրանք ապրելիս լինեն Թուրքիայում, դա ոչ թէ եղբայրասէր, այլ եղբայրասպան կոմիտէ է...»[7]:

Նորանշանակ նահանգապետի եւ պետական պաշտոնյաների հետագա գործունեությունը միանշանակորեն ցույց էր տալիս, որ նրանք ամեն կերպ աշխատում էին կոծկել ու մոռացության տալ փետրվարյան դեպքերը: Բաքվի հայության համար այլեւս գաղտնիք լինել չէր կարող, որ ոչինչ չէր փոխվել, եւ անհմաստ էր ակնկալել արդարություն եւ դրական տեղաշարժեր:

Տիրող կացությունը թելադրում էր որոշակի քայլեր ձեռնարկել մերկացնելու եւ լուրջ հակահարված տալու նման քաղաքականությանը:

Սթափ գնահատելով ցարական իշխանությունների հետապնդած նպատակների իրական արժեքն ու բովանդակությունը՝ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն հրապարակում է հայերեն եւ ռուսերեն լեզուներով տպագրված «Բազմահայ ազգաբնակչութեան» վերնագրով մի հայտարարություն, որում մերկացնելով «Черная сотня»-ի եւ ոստիկանության գործակալների կողմից հայ եւ մահմեդական բնակչության մեջ ծավալված նենգադավ գործունեությունը՝ նշում է. «...բոլոր այդ լուրերը, ինչ չափով որ նրանք վերաբերում են հայերի ագրեսիւ գործողութիւններին-միանգամայն սուտ են. դրանք խաւար ուժերի զազիր նենգամտութեան արտադրութիւններ են: Հայերը երբեք չեն կամեցել եւ այսուհետեւ էլ չեն կամենալ թուրքերի վրայ նախայարձակ լինել: Իսկ ինչ վերաբերում է հայերի՝ զօրքերի վրայ յարձակելու մտադրութեան, այդ լուրի անմտութիւնը թէեւ ինքնըստինքեան պարզ է, բայց Կազմակերպութիւնս անհրաժեշտ է համարում ամենակտրուկ կերպով յայտարարել, որ այդ լուրն էլ միեւնոյն անարգ պրովակատօրների գործն է...»:

Նույն հայտարարությունում ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն ոչ միայն նախազգուշացնում է Բաքվի հայ եւ թուրք բնակչությանը չհավատալ իշխանությունների կողմից տարածվող սուտ լուրերին ու չտրվել նրանց կողմից ձեռնարկվող սադրանքներին, այլ նաեւ զգուշացնում. «...Կազմակերպութիւնս ձեռնարկելով թուրքերի դէմ ոչ մի ակտիւ գործի, նա սակայն չի կարող տանել եւ անպատիժ թողնել նոյնանման գործեր, որ թուրքերի կողմից ուղղուած կը լինեն դէպի հայերը»[8]:

Համանման հայտարարություններով բնակչությանը դիմելն ու զգաստացնելը, թերեւս, նույնպես կարեւոր էր, բայց այդ ամենը դեռեւս շատ բան նշանակել չէր կարող: Գալիք անխուսափելի փորձություններին կազմ ու պատրաստ, արժանավայել դիմագրավելու համար անհրաժեշտ էր ճիշտ գնահատել անցյալի դասերը եւ ըստ ամենայնի ու լրջորեն նախապատրաստվել: ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեի եւ Զինվորական մարմնի առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրը եղել եւ մնում էր միջոցներ ձեռնարկել կազմակերպելու քաղաքի հայ բնակչության ինքնապաշտպանությունը:

Փետրվարյան դեպքերը, որոնք առաջադրեցին նոր խնդիրներ, ուսուցողական ու զգաստացնող դասեր էին ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտ. կոմիտեի եւ հայության համար: Որպեսզի չկրկնվեին անցյալի սխալներն ու բացթողումները, ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտ. կոմիտեն եւ Զինվորական մարմինը պիտի լուծեին հետեւյալ կարեւորագույն խնդիրները.

«Ա. Ոճրագործներին պատժելու խնդիրը.

Բ. Ինքնապաշտպանության գործի կազմակերպումը Բագուում եւ գաւառներում.

Գ. Զենքերի հայթայթում եւ գինում»[9]:

ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտ. կոմիտեում այն համոզմունքն էր տիրում, որ փետրվարյան դեպքերի պատասխանատուն եւ մեղսագործը ոչ թե թուրք հրոսակախմբերն ու նրաց առաջնորդներն էին, այլ իշխանության ներկայացուցիչները, առաջին հերթին Բաքվի նահանգապետ գեներալ Նակաշիձեն, որոնց քաջալերանքով եւ թողտվությամբ թուրք զանգվածը սանձասերծեց հայկական կոտորածներ:

Փետրվարյան դեպքերին հաջորդած ամիսներին քննելով Բաքվում տեղի ունեցած հայկական ջարդերի մանրամասները, ՀՅԴ կենտ. կոմիտեն որոշում է պատասխանատվության ենթարկել գլխավոր մեղսագործներին՝ նահանգապետ Նակաշիձեին, նավթաշրջանի ոստիկանապետ Խամիցկուն, եւ քաղաքի ոստիկանապետ Դիմինսկուն:

Ինչպես հայտնի է, Դաշնակցության ահաբեկիչ մարմնի հանձնարարությամբ գեներալ Նակաշիձեի ահաբեկումը իրականացնում է Դրոն[10]:

Պիտի նկատել, որ ինքնապաշտպանության կազմակերպման գործը համեմատաբար ավելի դյուրին էր դարձել: Նախ, փետրվարյան սարսափազդու դեպքերից հետո թուրքական թաղամասերում բնակվող հայերը լքել էին իրենց նախկին բնակարանները եւ կենտրոնացել էին հայկական թաղերում: Բաքվի Ջինվորական խորհրդի եւ անձամբ Նիկոլ Դումանի որոշմամբ քաղաքի հայկական մասը բաժանվում է երեք ինքնապաշտպանական շրջանների եւ յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում է մի պատասխանատու ղեկավար, որին անվանել են շրջանապետ: Յուրաքանչյուր շրջանապետ ունեցել է երկու օգնական:

Բաքվի թուրք բնակչության վրա իր նշանակալի ազդեցությունն էին գործել ոչ միայն փետրվարյան դեպքերի ժամանակ հայ մարտիկների անբասիր գործողությունները, այլեւ Գանձակի նահանգից, հատկապես Ղարաբաղի շրջաններից ու Շուշիից քաղաք հասնող լուրերը: Ղարաբաղում ընթացող կռիվներում հայ մարտակաս ուժերի հաղթանակները, հատկապես Շուշիում իրենց արյունակիցների կրած պարտությունը երկակի տրամադրվածություն ու գործելակերպ էին առաջացրել թուրք բնակչության շրջանում:

Նախ, այդ հաղթանակները ավելի էին խորացրել թուրքերի մեջ տրոսկած վախն ու սարսափը: Թուրք վերնախավը շատ լավ հասկանում էր, որ Գանձակի նահանգում եւ այլ վայրերում հայկական մարտական ուժե-

րի նկատած հաղթանակները կարող էին արմատապես փոխել ուժերի հարաբերակցությունը հօգուտ հայերի նաեւ Բաքվում ու գավառում: Շատ կարեւոր էր կաշկանդել հայ մարտական ուժերի հաղթական գործողությունները եւ ինչ-որ միջոցներով ազակցել Ղարաբաղում եւ այլ գավառներում դժվարին իրավիճակում հայտնված հայրենակիցներին: Այդ նպատակով թուրք վերնախավը աշխատում էր միջոցներ գործադրել շիկացնելու բաղաքում տիրող մթնոլորտը եւ թուրք ամբոխը գրգռելով հայերի դեմ՝ նրանց սահսբեկելու միջոցով մեղմացնել Շուշիում եւ մյուս շրջաններում հայ մարտական ուժերի ծավալած հարձակումները:

Օրինակ, այդ օրերին հայերին ապակողմնորոշելու եւ նրանց կաշկանդելու ու վախ ներշնչելու նպատակով «Խաղաղարար Յանձնաժողովի անդամներից Բաշխի բէկ Թալիշխանովը զանազան հաւաքոյթների կամ ժողովների ժամանակ յայտնում էր, որ ղարաբաղցի թաթարները շատ են գրգռուած եւ որ, թէեւ ինքը ամէն կերպ աշխատում է հանգստացնել, բայց մեծ յոյսեր չունի:...Նա յայտնեց, որ «բագուաբնակ ղարաբաղցի թաթարները իրեն դիմում են անդադար եւ հարցնում են, թէ որտե՞ղ վրէժխնդիր լինենք հայերից, այստե՞ղ՝ Բագո՞ւմ, թէ՞ գնանք Ղարաբաղ»»»[11]:

Շուշիում հայ մարտական ուժերի ձեռնարկած հարձակումները կասեցնելու եւ դժվարին կացությունում հայտնված իրենց արյունակիցներին օգնելու համար, թուրք պարագլուխների կողմից օգոստոսի 19-ին մի պատգամավորություն է ներկայանում Նորանշանակ զինվորական նահանգապետ Խանեեին եւ նրան տեղեկացնում, որ Շուշա դեպքերի պատճառով քաղաքի երիտասարդությունը չափազանց գրգռված է: Ավելին, պատվիրակները նահանգապետին նաեւ վերջնագրի կարգով հայտնում են, որ իրենք այլեւս անզոր են զսպելու երիտասարդությունը, եւ եթե հարձակումներ լինեն հայերի վրա, ապա իրենք պատասխանատու չեն[12]:

Պիտի ասել, որ թուրք վերնախավի համար դա փորձված ու ընդունելի մարտավարություն էր: Նման մարտավարությամբ նրանք փորձել են կասեցնել հայ ինքնապաշտպանական ուժերի հարձակումները նաեւ Երեւանի նահանգում, բայց նման խորամանկ գործելակերպով, իհարկե, հնարավոր չէր կաշկանդել Նիկոլ Դումանին:

Քանի որ գանկացած պահի հայությանը սպառնում էր թուրք ամբոխի հարձակման վտանգը, ուստի Ջինվորական մարմինը մինչեւ օգոստոսյան երկրորդ ընդհարումների բռնկումը ինքնապաշտպանական շրջաններում կազմավորել է մարտական մի քանի խմբեր, իսկ համապատասխան կետերում պահեստավորել զենք ու զինամթերք: Բայց այդ ամենը, այսինքն՝ ինքնապաշտպանության կազմակերպման գործը ընթացել է խիստ դժվա-

րին պայմաններում: Դարձյալ գլխավոր խոչընդոտը իշխանությունների վարած քաղաքականությունն էր. նրա հարուցած արգելքները:

«Ապեն օր գինուորական նահանգապետ Ամիլախվարին,-գրում է Աբ. Գյուլխանդանյանը,- կամ զօրքի ընդհանուր հրամանատարը մի- մի ագռնր էին հրապարակում. որոնց բոլորի իմաստ այն էր. թէ ում մօտ գէնք գտնուի կամ եթե փողոցներում գինուած մարդիկ երեւան՝ ամենախիստ պատասխանատուութեան կենթակուեն: Մինչեւ անգամ սպառնում էին ռմբակոծել այն շէնքը, որտեղից կրակ կը բանան կամ գէնք կը գտնուի խուզարկութեան ժամանակ» [13]:

Ըստ Աբ. Գյուլխանդանյանի պնդման, այդ սպառնալիքները ուղղված էին միմիայն հայերին, իսկ թուքերը ազատ էին այդ կարգի սպառնալիքներից: Իհարկե, իշխանությունների հրամաններն ու սպառնալիքները իզուր չէին անցնում, նրանք «չափազանց վախեցնում էին հայկական մասերում ապրող հայ կամ օտար տանտէրերին կամ բնակիչներին: Նրանք երկիւղ էին կրում, որ իրենց կայքը կամ անձը վտանգի կենթարկուի. եթէ իրենց տներում գէնք կամ մարտիկներ տեղատրուին» [14]:

Այսուհանդերձ, փետրվարյան դեպքերից հետո Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն, Կովկասահայության ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմինը եւ նրա անմիջական ղեկավարությամբ գործող Զիֆոնը զգալի աշխատանքներ են ծավալում ինքնապաշտպանական ուժերը կազմակերպելու եւ քաղաքի հայ բնակչությանը զինելու ուղղությամբ:

Բաքվի նահանգի բնակչությունը ունեցել է հետեւյալ կազմը.[15]

	հայեր	ռուսներ	շիաներ	սիւնիներ	լեռնականներ
Բաքուի քաղաք	73.000	103.000	143.000	21.000	14.000
Բաքուի գաւառ	----	1.000	27.000	----	----
Գեոքչայի	7.000	2.000	48.000	61.000	2.000
Ջաւադի	----	17.000	88.000	5.000	----
Ղուբայի	2.000	6.000	34.000	88.000	61.000
Լենկորանի	2.000	20.000	111.000	30.000	1.000
Շամախի	21.000	18.000	40.000	75.000	-----
Ընդամենը	105.000	167.000	491.000	280.000	78.000

Նահանգում հայ բնակչության տեղաբախշումը հստակ մատնանշում է, որ անհամեմատ շատ ավելի դժվարին է եղել ինքնապաշտպանությունը կազմակերպել, կայուն հիմքերի վրա դնել շրջաններում, որտեղ թուրքերը, հատկապես շիաները. բացարձակ մեծամասնություն էին կազմում:

Համաձայն Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամ Հ. Շահրիկյանի տվյալների, 1905 թ. փետրվարից մինչեւ օգոստոս, այսինքն՝ առաջին ընդհարումներից մինչեւ երկրորդ ընդհարում, ՀՅԴ Ա-րեւելյան բյուրոյի համաձայնությամբ Կենտրոնական Զիֆոնը կարողացել էր գնել եւ Բաքու տեղափոխել տարբեր տեսակի 2034 հրացան, 3842 ատրճանակ ու համապատասխանաբար 1,374953 եւ 518,727 փամփուշտ: Միաժամանակ Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի ու տեղի Զիֆոնի ջանքերով այդ նույն ժամանակահատվածում ձեռք էր բերվել եւ Բաքու տեղափոխվել 1430 հրացան, 316 ատրճանակ եւ համապատասխանաբար 345,315 ու 120,429 փամփուշտ[16]:

Փետրվարյան դեպքերի ժամանակ արժանի հակահարված ստանալով հայ մարտիկներից թուրքերը ժամանակավորապես դադարեցնում են հայկական թաղերի ու հայերին պատկանող ձեռնարկությունների վրա ձեռնարկվող զանգվածային հարձակումները, բայց փոխարենը շարունակել են հայ բնակչության նկատմամբ առաջին իսկ հնարավորության դեպքում պարբերաբար կիրառել բռնություններ եւ սարսափագդու բազմաթիվ գործողություններ, անգամ նաեւ սպանություններ:

«Փետրվարեան արիւնոտ օրերից յետոյ,-գրում է Ա-ԴՕ-ն,- Բագուի թուրքերը ուղղակի անտանելի էին դարձել. նրանց հետ, ինչպես ասում են, խօսել չէր լինում: Քաղաքային խորհրդարանում փողոցային թուրք սրիկաների ձեռքով վարչութեան ծառայողների ծեծելը, զինուած խմբերով նաւթահանքերում շրջագայելը ու սրան նրան մահուան սպառնալիք կարդալը, վերջապէս օրը ցերեկով դեմօնստրատիւ կերպով սպանութիւններ կատարելը, այս բոլորը գալիս էին ապացուցելու, որ ներկայ դրութիւնը երկար շարունակել չէր կարող» [17]:

Թուրք հրոսակների կողմից Բաքվում իրականացվող այդօրինակ գործողությունները կանխելու համար նախեւառաջ իրենց վճռորոշ խոսքը պիտի ասեին քաղաքային իշխանություններն ու ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն ու քաղաքի հայկական Զինվորական խորհուրդը:

Բաքվում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումները ներկայացնող վավերագրերում ու հուշագրություններում չկա գեթ մեկ

վկայություն, փաստ, որը մատնանշի միևչեւ օգոստոսյան երկրորդ ընդհարումը, թուրք հրոսակների կողմից կատարվող սպանությունների ու բռնությունների դեպքերը կանխելուն ուղղված իշխանությունների ձեռնարկած որեւէ գործողություն:

Հ. Շահրիկյանի հուշերից պարզվում է, որ Բաքվի երկրորդ ընդհարումների բռնկումից երեք օր առաջ, հայ եւ թուրք հոգեւորականության ներկայացուցիչները նահանգապետի ու հաշտարար խմբի ուղեկցությամբ շրջել են քաղաքում եւ հանդիպելով հայ ու թուրք բնակչությանը՝ կրկին անգամ խաղաղության են կոչել նրանց: Բայց դա ամենեւին չի խանգարել, որ թուրք զինյալները կրակ արձակեին նույնիսկ նահանգապետի վրա [18]:

«Ծովափում,-շարունակում է Հ. Շահրիկյանը,-Գեն. Գուբերնատորի տան մօտերքը պերտանքաներով զինուած թուրք ամբոխը շատ անգամ հաւաքուել է, բայց գօրքը չէ համարձակուել ցրելու եւ զինաթափ անելու» [19]:

Նույն սկզբնաղբյուրների վկայությամբ ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն եւ հայ բնակչությունը, հիմք ունենալով փետրվարյան արյունալի դեպքերը, թեպետ արել էին անհրաժեշտ հետեւություններ, բայց շարունակում էին հարազատ մնալ նախկինի՝ խաղաղություն պահպանելու, առավել եւս նախահարձակ չլինելու մարտավարությանը: Իսկ թուրքական կողմի պահվածքն ու սանձարձակ նկրտումները թելադրում էին, որ հայկական կողմը, առաջնորդվելով փոխվրեժի մարտավարությամբ, պիտի համարժեք գործողություններով պատասխաներ հակառակորդի կողմից շարունակաբար իրականացվող սպանություններին եւ բռնություններին:Բաքվի Զինվորական մարմինը առանց աղմուկի եւ ավելորդ ցուցադրական ելույթների առայժմ պատրաստվում էր:

Բնական է, որ ի սկզբանե հայակործան ծրագրերով առաջնորդվող թուրքերը պիտի լավագույնս օգտագործեին ոչ միայն քաղաքային իշխանությունների անտարբերությունն ու թողտվությունը, այլեւ ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի ու հայկական Զինվորական խորհրդի կրավորական դիրքորոշումը եւ դարձյալ հանդես գային նախահարձակի դերում:

Համաձայն Նուխիի ՀՅԴ «Ծաղկաձոր» կոմիտեի կազմած զեկուցագրի, թուրքերի հարձակման մասին կոմիտեն տեղյակ է եղել դեռեւս դեպքերի նախօրեին [20]:

Թվում է, որ այս անգամ թուրքերի հարձակումը չպիտի անակնկալ լիներ, եւ հայկական ինքնապաշտպանական ուժերը կազմ ու պատրաստ

պիտի կարողանային կանխարգելիչ հարվածով կանխել թշնամու ոտնձգությունները եւ թույլ չտային հայերի սպանությունները:

Ըստ այդ նույն սկզբնաղբյուրների, այդ թվում՝ նաեւ Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամ վերոհիշյալ Հարությունի Շահրիկյանի՝ Բաքվի դեպքերը ներկայացնող հուշագրության վկայությունների, պարզվում է, որ այդ օրերին հայության ինքնապաշտպանության կազմակերպումն այն միակ խնդիրը չէր, որը մտահոգել է հայ ազգային-քաղաքական կուսակցություններին, այդ թվում նաեւ՝ Դաշնակցությանը:

Այդ նույն սկզբնաղբյուրները վկայում են, որ նույնիսկ այն օրերին, երբ բովանդակ Կովկասում ծավալվում էին հայ-թուրքական ընդհարումները, եւ բնականաբար հայության ու նրա ազատագրական պայքարն առաջնորդող կազմակերպությունների գլխավոր խնդիրը եւ մտահոգությունը պիտի լիներ կովկասահայության անվտանգության ապահովումն ու ինքնապաշտպանության կազմակերպումը, Հնչակյան եւ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունները, որդեգրելով ցարիզմի դեմ հեղափոխական պայքար մղելու ռազմավարությունը, այլ քաղաքական կուսակցությունների, հատկապես սոցիալ-դեմոկրատների համագործակցությամբ ինչ-որ չափով մասնակցել են գործադուլներ եւ իշխանությունների դեմ բողոքի զանգվածային ցույցեր կազմակերպելու աշխատանքներին:

Օգոստոսյան բախումների նախօրեին Բաքվում գործող քաղաքական կուսակցությունների, իսկ Հ. Շահրիկյանի հավաստմամբ Հնչակյան եւ Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունների նախաձեռնությամբ, ընդհանուր գործադուլի պիտի դուրս գային Բաքվի նավթահանքերի բանվորները, իսկ բանվորության զգալի մասը կազմում էին հայերը [21]:

«Դրօշակ»-ի տվյալներով գործադուլի գլխավոր նախաձեռնողն ու կազմակերպիչը եղել է ռուսական Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը:

Բաքվում հունիս եւ հուլիս ամիսներին զուտ տնտեսական պահանջներով գործադուլ են արել տեղական երկու օտար՝ Նոբելի եւ Ռոշիլդի ֆիրմաների բանվորները: Մի փոքր անց դարձյալ նույն՝ տնտեսական պահանջներով գործադուլների էին դուրս եկել նաեւ հայ արդյունաբերողներին պատկանող ձեռնարկությունների բանվորները: Բնականաբար, այդ գործադուլներին մասնակցել են նաեւ հայ բանվորները:

ՀՅԴ խորհրդի կողմից «Կովկասյան նախագիծ»-ը ընդունած Հ.Յ. Դաշնակցությունը, որպես ընկերվարական կուսակցություն թեպետ

մասնացել է այդ գործադուլներին, սակայն «Դրօշակ»-ի խոստովանությամբ «Հայկական ֆիրմաներում հայ բանւորութեան կողմից, իհարկէ միացած օտար տարրերի հետ, կատարւած գործադուլները վերջ ի վերջոյ, աննշան բացառութեամբ, բանւորութեան նպաստաւոր կերպով վերջացան՝ դաշնակցական մարմնի միջամտութեամբ»[22]:

Ի տարբերություն հայ ձեռնարկատերերի, օտար ֆիրմաները չեն բավարարել իրենց ներկայացված, այն է՝ օրավարձը բարձրացնելու պահանջը, որն էլ պատճառ է դարձել երկարատեւ գործադուլների:

Օտարներկրյա ֆիրմաների տերերին օգնելու եւ գործադուլը դադարեցնելու նպատակով գործին միջամտում են իշխանությունները եւ դիմում պատժիչ խիստ միջոցների: Փոխարքայի կարգադրությամբ Բաքվի ընդհանուր նահանգապետը հայտարարում է, որ «...աշխատանքի չեկողներին ճանապարհելու է իրենց հայրենիք՝ Ռուսաստան: Մինչ այդ, ֆիրմաները յայտարարել էին արդէն իրենց բանւորներին՝ որ մինչեւ այս ինչ թւական գործի դուրս չեկող բանւորը արձակված են համարւում »[23]:

Լրանում է նախատեսված ժամկետը, բայց բանվորները աշխատանքի դուրս չեն գալիս, եւ իշխանությունները սկսում են ձերբակալությունները:

Ահա այս միջոցին Սոցիալ-դեմոկրատական կուսակցության տեղական կազմակերպությունը, որը գործադուլը ղեկավարելու համար մինչ այդ հիմնել էր գործագուրկների բյուրո, որոշում է կազմակերպել ընդհանուր քաղաքական գործադուլ եւ համագործակցության առաջարկութեամբ դիմում է նաեւ հայ ազգային-քաղաքական կուսակցություններին[24]:
Գործադուլ կազմակերպելու նպատակով մի քանի քաղաքական կազմակերպությունների, որոնց թվում Սոցիալ-Դեմոկրատական, Հնչակյան եւ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունների մասնակցությամբ Բաքվում մի քանի անգամ գումարվում է միջկուսակցական ժողով, որին չեն մասնակցել թուրքական կողմի ներկայացուցիչները: Ժողովի
մասնակիցների համար գաղտնիք չէր, որ եթե բանվորները, որոնց մեծամասնությունը հայեր էին, սկսեին գործադուլը եւ դուրս գային փողոց, ապա բնավ չէր բացառվում, որ թուրք զինյալները հարձակվեին նրանց վրա ու սանձազերծեին նոր կոտորածներ:

Չէր բացառվում, որ թուրքերը կարող էին օգտագործել պատեհ հնարավորությունն ու անկառավարելի իրավիճակը եւ կոտորածները վերսկսել նաեւ քաղաքում: Այդ պատճառով ժողովի մասնակիցների գլխավոր մտահոգությունը հենց այդ էր: Հարց է ծագում. եթե իրոք թուրք զինյալները հարձակվեին բանվորների վրա, ապա ժողովի մասնակից քաղաքական կազմակերպությունները ուժ կունենային, ի զորու կլինեին պաշտպանել բանվորությանը:



Աբրահամ Գյուլխանդանյան

Ժողովին, բացի հնչակյաններից ու դաշնակցականներից,սոցիալ-դեմոկրատներից, մասնակցել են նաեւ այլ քաղաքական կուսակցության ներկայացուցիչներ, որոնց անունները Հ. Շահրիկյանը չի նշում: Ըստ Հ. Շահրիկյանի, ժողովում ծավալված քննարկումներից պարզվում է, որ հանդիպման մասնակիցները «...ոչ մի ուժ չունեն, յայտնեցին որ ընդամենը 3 ատրճանակ ունեն...»: Ավելին, նրանք Դաշնակցությունից պահանջել են «...փոխառութիւն անել իրենց 10000 ռուբլի զէնք հայթայթելու համար եւ 500 ռուբլի տալ իրենց թուրք բանվորների մէջ թուրքերէն թռուցիկներ ցրելու համար, կամ առհասարակ թուրքերէն թռուցիկների տպագրութեան համար, որովհետեւ իրենք նիւթական միջոց եւ այդ բանին հասնող մամուլ չունեն»[25]:

Իհարկե, Դաշնակցությունը մերժում է իրեն ներկայացված նման անօգուտ եւ անլուրջ պահանջը եւ հաշվ առնելով ժամանակի յուրահատկություններն ու քաղաքում տիրող կացությունը՝ հրաժարվում է մասնակցել գործադուլին:

Հանդիպման մասնակիցները, բացի հնչակյաններից, հաշվի առնելով իրենց անզորությունն ու պաշտպանվելու անհրաժեշտ միջոցներ չունենալը, համաձայնվում են, որ նման իրավիճակում անմտություն ու վտանգավոր էր գործադուլ կազմակերպելը: Այսուհանդերձ, ցարիզմի դեմ հեղափոխական պայքարի ռազմավարությամբ

առաջնորդվող կուսակցությունները, հաշվի առնելով այն իրողությունը, որ Դաշնակցությունը քաղաքում ուներ զինված մարտական ուժեր եւ բավական ուժեղ էր եւ ինչքան էլ դեմ լիներ գործադուլին, այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում «...եթէ յարձակում տեղի ունենայ ամբոխի կողմից, ստիպուած կը լինի զինուած դուրս գալու պաշտպանուելու համար, որով եւ առաջ գալիք չփոթութիւնը, խառնակութիւնը կը ծառայէ իրենց նպատակին, այն է՝ գործադուլը գործադուլի համար, խառնակութեան, անիշխանութեան»[26]:

Ժողովի մասնակիցների որոշմամբ նախատեսվում է քաղաքում գործադուլը սկսել օգոստոսի 16-ին, բայց ինչ-ինչ պատճառներով այն տեղ չի ունենում եւ մի քանի օր անց՝ օգոստոսի 19-ին, գործադուլ են անում միայն ծիաքարշի աշխատողները: Թեեւ ծիաքարշի աշխատողները սակավաթիվ էին եւ առանձնապես լուրջ վտանգ չէին ներկայացնում, բայց գործադուլը կարող էր տարածվել ու օրինակ ծառայել նավթահանքերի ու արդյունաբերական մյուս ձեռնարկությունների բանվորների համար: Իշխանությունները չպետք է թույլ տային գործադուլների բռնկումն ու ծավալումը եւ այդ պատճառով քայլեր պիտի ձեռնարկեին՝ մարելու ծիաքարշի աշխատողների գործադուլը:

Գործադուլի բռնկման հաջորդ օրը՝ օգոստեսի 20-ին, քաղաքի իշխանությունների կարգադրությամբ զորքը բռնագրավում է ծիաքարշը եւ վերականգնում երթեւեկությունը: Սակայն շուտով հայտնվում են ծիաքարշի աշխատողները եւ փորձում կանգնեցնել երթեւեկությունը: Այդ հողի վրա ընդհարում է սկսվում զինվորների ու ծիաքարշի ծառայողների միջեւ: Ընդհարման հետեւանքով եղել են նաեւ զոհեր, իսկ ծիաքարշի հայ ու թուրք աշխատողներն առանց միմյանց վնասելու, տեղի տալով զինվորների բռնություններին՝ դիմում են փախուստի: Իր ընդգրկումով խիստ սահմանափակ այդ միջադեպից մի փոքր անց քաղաքում գործողությունները ծավալվում են բոլորովին այլ ուղղվածությամբ: Թուրք վերնախավը կարծես հենց այդ պահին էր սպասում իրագործելու իր ծրագրերը: Թուրքերն անմիջապես օգտագործում են ընձեռված առիթն ու հնարավորությունը եւ սկսում քաղաքի տարբեր ուղղություններից կրակ տեղալ հայկական քաղաքամասի եւ փողոցներում գտնվող հայերի վրա, որին անմիջապես հաջորդում է հայկական կողմի համարժեք պատասխանը[27]:

Գործադուլի մասին այլեւս խոսք լինել չէր կարող:

Օգոստոսի 20-ին սկսվում է Բաքվի երկրորդ ընդհարումը, որն արագորեն տարածվում է քաղաքի զանազան մասերում եւ ապա նաեւ հանքավայրերում ու քաղաքի հարակից բնակավայրերում:

Շուշիի դեպքերից հետո, երբ իրավիճակը սկսել էր աստիճանաբար հիմնանալ, Բաքվի հայության ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչն ու ղեկավարն արդեն Զինվորական մարմինն էր, իսկ ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեն դառնում է նրա օժանդակ կառույցը:

Փետրվարյան դեպքերից հետո, ինչպես արդեն նշվել է, Նիկոլ Դումանի հանձնարարությամբ Բաքվի հայկական քաղաքամասը բաժանվել էր ինքնապաշտպանական երեք շրջանների, որոնք համապատասխանաբար ունեցել են 7, 8 , 4 դիրք:

Երկրորդ ընդհարման նախօրեին Զինվորական մարմինը, հիմք ունենալով քաղաքում տեղի ունեցող տեղաշարժերն ու փոփոխությունները, ինչպես նաեւ հայ մարտական ուժերի որակական եւ քանակական աճը, քաղաքը բաժանում է վեց ինքնապաշտպանական շրջանների, որոնք ունեցել են 38 մարտական դիրք: Բացի դրանից, Զինվորական մարմնի տրամադրության տակ եղել են նաեւ երկու թուրքիկ խմբեր, որոնք անհրաժեշտության դեպքում պիտի օգնության հասնեին վտանգված շրջաններին:

Քաղաքի վեց ինքնապաշտպանական շրջանները ունեցել են հետեւյալ մարտական կազմը.

	հոգի
«Առաջին շրջան	29
Երկրորդ շրջան	16
Երրորդ շրջան	27
Չորրորդ շրջան	31
Հինգերորդ շրջան	38
Վեցերորդ շրջան	23
Երկու թուրքիկ խմբեր	19
Ընդամէնը՝	175
Հայոց գիւղը՝ հինգ դիրք, ընդամէնը՝	31
Թուրքիկ խումբ	50
Ընդամէնը՝ 81»:	

Ըստ Աբ. Գյուլխանդանյանի «Սեւ եւ Սպիտակ Քաղաքները եւ Հայոց Քիշլի գիւղ 84 հոգի, բացի այդ՝ նոյն շրջանի գործարանատէրե-

ը իրենց հաշուով պահում էին 36 հոգի, որոնք կռւի ժամանակ պիտի ենթարկուէին մերոնց. ուրեմն ընդամէնը՝ 120 հոգի:

Բիբէյբաթի շրջանում կար 30 հոգի:

Այդպիսով քաղաքի եւ իր արուարձանների մէջ մենք ունէինք պատրաստի եւ անմիջապէս մեր տրամադրութեան տակ ընդամէնը՝ 406 հոգի»[28]:

Հայ մարտիկների 13 տեռկոսը զինված է եղել մաուզերներով, 40 տոկոսը սովորական ատրճանակներով, իսկ մնացածները հրացաններով, որոնց մեծ մասը եղել է Բերդան հրացան:

Ընդհարումների բռնկման նախօրեին, Զինվորական մարմնի կենտրոնավայրը Իսահակ Մելիքյանի լուսանկարչատնից(Բաքվի հանրահայտ «Ռեմբրանտ» լուսանկարչատունն է, որը փետրվարյան առաջին ընդհարումների ժամանակ եղել է Նիկոլ Դումանի ռազմական շտաբը-Հ.Գ.) տեղափոխվում է Մալականի այգու դիմացը գտնվող անհրաժեշտ հարմարություններ ունեցող Գեանջեցյանի մեծ շենքը [29]:

«Որպեսզի փետրուարեան օրերի նման,-նշում է Զինվորական մարմնի անդամ Աբ. Գյուլխանդանյանը,-անակնկալի չհանդիպէինք, մեր բոլոր դիրքերը անխտիր կերպով միացուել էին կենտրոնի հետ հեռախօսային հաղորդակցութեամբ...Մշտական հերթապահներ կային, որոնք իրաւունք չունէին հեռանալու իրենց վայրերից: Բոլոր մարտիկները կազմ ու պատրաստ իրենց դիրքերի մէջ էին»[30]:

Նախահարձակ լինելով՝ բուրք հրոսակախմբերը փորձել են ներխուժել հայկական թաղերը:

Պիտի նկատել, որ բուրքերի հարձակումները այս անգամ արդեն չէին կարող անակնկալ լինել: Ի պատասխան բուրքերի ձեռնարկած գրոհների ու հրացանաձգության, հայ մարտիկները զուտ մարտավարական նկատառումով բողել են հարձակվողներին մոտենալ իրենց դիրքերին, ապա միահամուռ համազարկեր տեղացել նրանց վրա:

Ի տարբերություն Երեւանի, Գանձակի նահանգներում եւ Թիֆլիսում տեղի ունեցած կռիւները, ինչպես նաեւ Բաքվի փետրվարյան ջարդերը պատմող սկզբնաղբյուրների, որոնք որոշակիորեն պատկերում են տեղի ունեցած դեպքերի մանրամասները, մարտական խմբերի հրամանատարների եւ ինքնապաշտպանական մարտերում հայ մարտիկների կիրառած մարտավարությունը, Բաքվի երկրորդ ընդհարումներին վերաբերող վավերագրերն ու հուշագրությունները կատարված դեպքերը ներկայացնում են առավել ընդհանուր գծերով [31]:

Նույն պատկերն է Բաքվի երկրորդ ընդհարումներին նվիրված. այդ դեպքերի մասնակից Աբ. Գյուլխանդանյանի հուշագրություններում: Իսկ նա այդ ժամանակ Բաքվի ՀՅԴ «Ռսկանապատ» կենտր. կոմիտեի անդամն էր եւ Զինվորական մարմնի ղեկավարը(լսիգոր):

Օրինակ, ըստ արժանվույն գնահատելով օգոստոսի 20-ին տեղի ունեցած կռիվներում հայ մարտիկների դրսեւորած հերոսական գործողությունները՝ նա գրում է. «Այդ օրը մեր բոլոգիկ խմբերը, կարելի է ասել, հրաշքներ էին գործում: Չրամանատարութեան կարգադրութեամբ անդադար անցնելով մի դիրքից միւսը՝ իրենց ճանապարհին նրանք մաքրում էին բոլոր թաթարական անհատական կամ խմբական զինուած ուժերը»:

Միաժամանակ նշելով, որ «Շնորհիւ մերոնց այս քաջ դիմադրութեան, թաթարները իրենց բազմաթիւ յարձակումներով հանդերձ, անկարող եղան թափանցել հայկական քաղաքամասը, եւ այդպիսով միանգամայն վիժեցին թաթարների բոլոր ծրագիրները», նա չի նշում մարտական խմբերի կազմը, զինվածությունը, հրամանատարների եւ կռիվներում աչքի ընկած մարտիկների անունները, ինչպես նաեւ կիրառած մարտավարությունը [32]:

Ուշագրավ է, որ մինչ այդ փողոցներում պարեկություն անող զորքը կռիվների ժամանակ ընդհանրապես չի երեւացել փողոցներում: Եւ միայն երեկոյան հայտնվել է քաղաքի փողոցներում, նաեւ թուրքական քաղաքամասում, որպեսզի ստիպի հակամարտող կողմերին դադարեցնելու կռիվը:

Աբ. Գյուլխանդանյանի վկայությամբ «Ոստիկանութիւնը զօրքի հետ նոյնպէս դուրս եկաւ փողոց՝ «կարգը պաշտպանելու» եւ դիակները հաւաքելու համար: Մենք զոհեր չունէինք: Թաթարների կորուստները զգալի էր. մի քանի տասնեակ զոհեր էին տուել նրանք այդ օրը մինչեւ զօրքի երեւալը:

...Զօրքը մնաց փողոցներում մինչեւ կէս գիշեր, որից յետոյ բոլոր փողոցները դատարկուեցին» [33]:

Վերոհիշյալ վավերագիրը, արժանվույնս գնահատելով օգոստոսի 20-ին տեղի ունեցած մարտերում հայ մարտիկների դրսեւորած հերոսականությունը, նույնպես նշում է, որ բուրքերը ունեցել են տասնյակ զոհեր, իսկ հայկական կողմը չի ունեցել ոչ միայն զոհեր, այլեւ նույնիսկ վիրավորներ [34]:

Զորքի հեռանալուց հետո, բուրքերը վերսկսում են հարձակումը եւ այս անգամ փորձում են պաշարել հայ մարտիկների այն դիրքերը, որոնք գտնվել են բուրքական թաղամասերի մերձակայքում: Նրանք հույս են ու-

ննգել, որ նման մարտավարությամբ իրենք կկարողանան խորտակել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել հայկական քաղաքամաս:

Համաձայն այդ կռվի մասին պատմող վավերագրի, հայ մարտիկները ոչ միայն կարողացել են հետ մղել թուրքերի գրոհները, այլեւ իրենք են դիմել հարձակման: Հարկ է նշել, որ Զինվորական մարմնի հարձակողական մարտավարությամբ գործելու որոշումը համակողմանիորեն կշռադատված էր եւ արդյունավետ: Թուրքերը չդիմանալով հայ մարտիկների հարձակմանը, դիմում են փախուստի[35]:

Անդրադառնալով այդ կռվում հայ ինքնապաշտպանական ուժերի ձեռնարկած հարձակմանը՝ Աբ. Գյուլխանդանյանը, կարծես հաստատելով վերոհյալ վավերագրի ներկայացրած պատմությունը, նշում է , որ զորքի հեռանալուց հետո թուրքերը իրենց համար նպաստավոր համարելով ստեղծված իրավիճակը «...կէս գիշերին մեծ ուժերով յարձակուեցին հայկական քաղամասի վրայ...

Դաշնակցական մարտիկների հրամանատարութիւնը, որ իրազեկ էր եւ հսկում էր թաթարների բոլոր տեսակի շարժումներին եւ պատրաստութիւններին, եւ օգտվելով զօրքի բացակայութիւնից եւ գիշերուան մթութիւնից , հրամայեց մերոնց անցնել հակահարուածի: Մեր անակնկալ հակահարուածը այնպիս խուճապ առաջ բերեց թուրքերի մէջ, որ նրանք սարսափած սկսեցին փախչել»[36]:

Թուրքերին առավելագույն սարսափի ու խուճապի մատնելու նպատակով Զինվորական մարմնի հրահանգով հայ մարտիկները իրենց զբաղեցրած բոլոր դիրքերից միահամուռ կրակ են տեղում թուրքական թաղերի վրա: Հայ ինքնապաշտպանական ուժերի հակահարվածն ու միահամուռ համազարկերը այնպիսի ազդեցություն են գործել թուրքերի վրա, որոնք դարձյալ մի քանի տասնյակ զոհեր տալով, այսուհետ չեն համարձակվել քաղաքում հարձակվել հայերի վրա[37]:

Օգոստոսի 21-ին հրացանաձգությունը քաղաքում դարձյալ վերսկսվում է: Այդ օրը Բաքվի մերձակա գյուղերից քաղաք են ներխուժում հազարավոր թուրքեր, որոնք միանալով տեղի թուրք ամբոխին՝ շարունակում են հարձակումը հայկական քաղաքամասի վրա, միաժամանակ կրակ տեղում նաեւ զինվորների վրա: Գազազած ամբոխի զոհն անկասկած կարող էին դառնալ նաեւ զինվորները, եթե հարկադրված չլինեին դիմելու պատասխանաւ գործողությունների:

Այդ դեպքերը ներկայացնող վավերագրերից մեկի վկայությամբ զինվորները միահամուռ համազարկեր են տեղում ամբոխի վրա եւ կրակ արձակում նույնիսկ թնդանոթներից[38]:

«Դրօշակ-ի» հավաստմամբ Օգոստոսի 21-ի ցերեկը համեմատաբար հանդարտ է անցնում, բայց «...գիշերը զօրքը սարսափելի կերպով կոտորում էր թիւրքերին, որոնք մոտիկ գիւղերից ահագին քանակութեամբ թափուել էին քաղաք, բոլորը զինուած»[39]:

Այդ ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, համապատասխան դիրքեր գրավելով, քաջաբար դիմադրել եւ խափանել են թուրք ամբոխի՝ հայկական քաղաքամաս ներխուժելու բոլոր փորձերը: Այդ ժամանակ քաղաքում գտնվել է 4500 զինվոր: Բաքու ներխուժած բազմահազար թուրք ամբոխի առկայությունն ու նրա կողմից զորքի եւ հայկական քաղաքամասի վրա շարունակաբար կրկնվող հարձակումները հարկադրում են իշխանություններին Թիֆլիսից Բաքու բերել եւս 2000 զինվոր[40]:

Զինվորների միջամտությամբ թեեւ կռիվը դադարում է, բայց փողոցներից, տներից, անկյուններից երկուստեք շարունակվում են կրակոցները: Զորքի հրամանատարությունը քաղաքը խաղաղեցնելու եւ հարձակման փորձերը կանխելու նպատակով պատերին փակցնում է հետեւյալ հայտարարությունը.

«Ա. այն անձը, որ կը համարձակուի զէնք կրել, կը յանձնուի զինուորական դատարանին եւ կը պատժուի պատերազմական օրէնքի համաձայն(մահուան պատիժ կախաղանի միջոցով);

Բ. Այն տունը, ուր զէնքեր կը գտնուին կամ որտեղից զէնք կը պարպուի,անմիջապէս կը ռմբակոծուի»[41]:

Ընդհարումների երրորդ օրը նահանգապետը հակամարտող կողմերին առաջարկում է դադարեցնել կռիվները ու հաշտություն կայացնել: Հայկական կողմը ընդունում է նահանգապետի առաջարկը, բայց հիմք ունենալով նախորդ բազմաթիվ փորձերն ու հատկապես թուրքական կողմի խաբեությունն ու վստահություն չներշնչող կեցվածքը, հաշտություն կայացնելու համար ներկայացնում է որոշակի պայմաններ, որոնք պիտի երաշխավորեին հաշտության անկեղծությունն ու կայունությունը: Թուրքական կողմը մերժում է առաջադրած պայմանները, իսկ նահանգապետը փոխարքային զեկուցում է, թե հայերն են մերժում հաշտությունը[42]:

Հիմք ընդունելով այդ կեղծ զեկուցումը՝ «...փոխարքան հեռագրով դիմում է կաթողիկոսին, որպեսզի իրա հեղինակութիւնը գործ դնի հայերի վրայ հաշտելու համար: Կաթողիկոսը ի հարկէ ստուգելով, պատասխանում է եւ յայտնում է ստութիւնը»[43]:

Կաթողիկոսի պատասխանից եւ հայերի կողմից բազմաթիվ բողոք-դիմումներ տանալուց հետո միայն, զորքի միջամտությամբ կռիվները քաղաքում դադարում են:

Համաձայն Մ. Վարանդյանի տվյալների, Բաքվի երկրորդ ընդհարման ժամանակ «1905 թ. օգոստոսի ամսում-որու ընթացքին սպանեցան շուրջ 400 հոգի, 270-ը թուրք, 130-ը հայ ու այլ ազգի»[44]:

Բաքվի երկրորդ ընդհարման ժամանակ Մ. Վարանդյանի ներկայացրած զոհերի քանակը միանգամայն համապատասխանում են Ա-Դ-Օ-ի հրապարակած թվերին: Ավելի ստույգ, քանի որ Ա-Դ-Օ-ն վերոհիշյալ տվյալները հրապարակել է ավելի վաղ՝ 1907 թ., ապա ճիշտ կլինի ասել, որ Մ. Վարանդյանը պարզապես կրկնում է Ա-Դ-Օ-ի հրապարակած տվյալները, առանց սկզբնաղբյուրը նշելու[45]:

Զորքի միջոցով հակամարտությունը քաղաքում դադարեցնելուց ու խաղաղություն հաստատելուց հետո իշխանությունները դիմում են բռնությունների ու անօրինական գործողությունների:

Իրենց լրտեսների մատնությամբ ու տեղեկատվությամբ ոստիկանները սկսում են խուզարկությունները. իհարկե, նրանց խուզարկության հիմնական թիրախը հայերին պատկանող տներն էին ու գրասենյակները:

Հ. Շահրիկյանի բնութագրմամբ, բախումների ժամանակ՝ սկզբից մինչեւ ավարտ, ոստիկանությունը հակամարտող կողմերի նկատմամբ դրսեւորել է նույն վերաբերմունքը. ինչը դրսեւորել էր փետրվարյան դեպքերի ժամանակ:

«Օրինակ. երբ զինուած հայ են տեսնում,- գրում է Հ. Շահրիկյանը,- նրան ձերբակալում կամ գնդակահարում են, բայց երբ թուրքերին են տեսնում, լռելեայն անցնում են. երբ մի հայ տնից գնդակ է կրակում, անմիջապէս շրջապատում, խուզարկում են, բայց երբ թուրքի տնից կամ դիրքից են ոչինչ չեն անում»[46]:

Ըստ այդ նույն վավերագրերի, եղել են նաեւ դեպքեր, երբ զորքը հայերին պատկանող տների, կենտրոնների ու ձեռնարկությունների վրա կրակ է արձակել ոչ միայն հրացաններից, այլեւ նույնիսկ թնդանոթներից[47]:

Զորքի կողմից քաղաքի հայ բնակչության նկատմամբ դրսեւորված համանման վերաբերմունքը նշում է նաեւ «Դրօշակը» ընդգծելով. «Կառաւարութիւնը անհամեմատ աւելի խիստ է դէպի հայերը, քան դէպի թիւրքերը: Մինչ այժմ թնդանօթի է բռնել թիւրքերի տներից միայն մէկը,իսկ հայերինը մինչեւ՝ 7-ը: Զինուած հային իսկոյն բռնում, զինաթափ են անում, իսկ բերդանկաներով զինուած թիւրք ամբոխը պտտում է նոյնիսկ նահանգապետի բնակարանի առաջ: Կառաւարական պաշտօնեաները սկսած, յետին «գօրօդովօյից» մինչեւ կօզակների գնդապետը, կաշառուած են թիւրքերից»[48]:

Այս հարցում բոլորովին հասկանալի չէ պետական պաշտոնյաների նկատմամբ հայերի, հատկապես դրամատեր մեծահարուստ հայերի դրսեւորած վերաբերմունքը: Փոխանակ թուրքերի կողմից կաշառված պաշտոնյաներին մեղադրելու, անհրաժեշտության դեպքում իրենք նույնպես պիտի աշխատեին կաշառել պետական պաշտոնյաներին, զինվորականներին ու չահեին նրանց համակրանքն ու աջակցությունը, մանավանդ որ զուտ ֆինանսական առումով բավ չէին զիջում իրենց հակառակորդին:

Հայերի, առավել եւս զինված հայերի նկատմամբ պետական պաշտոնյաների ու զորքի դրսեւորած նման վերաբերմունքը Զինվորական մարմնի, Բաքվի ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի եւ նրա անդամ Հ. Շահրիկյանի համար բոլորովին անակնկալ չպետք է լիներ: Դեռեւս մինչեւ օգոստոսյան ընդհարումները իշխանությունները զորքի միջոցով բազմիցս փորձել էին զինաթափել ու ձերբակալել հայերին: Հայ բնակչության նկատմամբ կովկասյան իշխանությունների վարած քաղաքականությանը խոչընդոտելու նպատակով ՀՅԴ Արեւելյան բյուրոն հարկադրված հրապարակում է հայտարարություն, որով զգուշացնում ու սպառնում է իշխանության ներկայացուցիչներին, որ «...այսուհետեւ նրանցից յուրաքանչիւրը անխնայ կերպով ոչնչացուի, եթէ համարձակուի հայերի ձեռքից զենք խլել, խուզարկութիւն կատարել կամ բանտարկել...»:

Այդ հայտարարությանը հաջորդում է Բաքվի ոստիկանության պետի՝ Մահմեդբեկովի եւ մի քանի ոստիկանների ահաբեկումը[49]:

Մահմեդբեկովը իր թշնամական վերաբերմունքը հայության նկատմամբ հստակ դրսեւորել էր փետրվարյան դեպքերի ժամանակ եւ շարունակում էր նույն գործելակերպը նույնիսկ այն օրերին, երբ քաղաքում խաղաղություն հաստատելու նպատակով հայ եւ թուրք բնակչության ներկայացուցիչներից կազմվել ու գործում էր խաղաղարար հանձնաժողովը: Թուրք ոստիկանապետը գլխավոր մեղսագործն էր գնդապետ Բիկովի ահաբեկիչ, Բաքվի փետրվարյան ինքնապաշտպանական կռիվների հերոս Համո Ջանփոլադյանի սպանության գործում: Նրա հրամանով էին մարտի 22-ին ոստիկանները քաղաքային պարտեզում առանց որեւէ պատճառի ու բացատրության ձերբակալել եւ ոստիկանատուն են տարել Մկրտիչ Աղամալյանին (Սահրադ), Մարտիրոս Չարուխչյանին, Ախալցխացի Սկոյին եւ Համո Ջանփոլադյանին(Բաքվի փետրվարյան դեպքերի ժամանակ նրանք եղել են Դումանի մարտախմբում-Հ.Գ): Իսկ այդ օրերին իրավիճակը քաղաքում համեմատաբար խաղաղ է եղել: Ոստիկանությունն

տանելու ճանապարհին նրանց վրա հարձակվել ու կրակ են բացել թուրք զինյալները, որոնց ոստիկանապետի հրամանով միացել են նաեւ ոստիկանները: Չամոն փորձել է պաշտպանվել, բայց զոհվել է ոստիկանների արձակած գնդակներից:

Երրորդ ընդհարումից հետո Մահմեդբեկովի հանձնարարությամբ ոստիկանության լրտեսները քաղաքի թուրք բնակչության աջակցությամբ ակնդետ հետեւել են հայերի յուրաքանչյուր քայլին:

Չամոյի զոհվելու եւ կատարած չարագործությունների համար թուրք ոստիկանապետը պիտի կյանքով հատուցեր: Զինվորական մարմնի որոշմամբ հայ վրիժառուները օրեր շարունակ հետապնդում եւ հարմար պահը որսալով, ինչպես արդեն նշվել է, ահաբեկում են ոստիկանապետ Մահմեդբեկովին ու հայերին թշնամաբար տրամադրված մի քանի ոստիկանների[50]:

Գեներալ Նակաշիձեի եւ ոստիկանների ահաբեկումը, այնուամենայնիվ, այդ օրերին իր ներգործությունն ունեցել է: Փոքր-ինչ փոխվել է հայության նկատմամբ զինվորականների եւ ոստիկանության վերաբերմունքը:

Ահաբեկչական գործողությունների իրականացումը չեն հակասում Հ.Յ.Դաշնակցության ռազմավարությանն ու մարտավարությանը: Ընդհակառակը, դրանք համապատասխանում են ՀՅԴ ծրագրում ամրագրված, ինչպես նաեւ 1-ին, 2-րդ եւ 3-րդ Ընդհանուր ժողովներում կուսակցության կողմից ընդունած մարտավարության պահանջներին:

Ահաբեկչական գործողություններ ձեռնարկելու մասին որոշումը Հ.Յ. Դաշնակցությունը ընդունել է 1-ին Ընդհանուր Ժողովում[51]:

Մ. Վարանդյանը գրում է, որ այս հարցի ընդունման վերաբերյալ ժողովականները պաշտպանել են տարբեր տեսակետներ: Համաժողովի պատգամավորներից Արամ Արամյանը (Թաթուլ-Աշոտ) պնդել եւ առաջարկել է. «...քանի որ մեր տկար ու ցրված ժողովուրդի համար ընդհանուր ապստամբութիւնը անկարելիութեան չափ դժար է...Տերոր կատարելէ յետոյ փախուստ չտալ, այլ կանգնիլ տեղն ու տեղը եւ յայտարարել, որ ինքն է կատարողը...»[52]:

Ընդհանուր Ժողովը մերժում է Աշոտ-Թաթուլի առաջարկությունը եւ ընդունում «Կռիւ մղել ու ահաբեկել կառավարութեան պաշտօնեաները, մատնիչները, դաւաճանները, վաշխառուները եւ ամեն տեսակ հարստահարիչները»[53]:

Առաջնորդվելով Ընդհանուր Ժողովների որոշմամբ՝ Հ.Յ. Դաշնակցությունն ահաբեկչական գործողություններ իրականացնելիս հետապնդել է տարբեր նպատակներ.

Ա. Թուրք իշխանությունները Արեւմտահայաստանի տարածքում եւ կայսրության հայաբնակ շրջաններում հիմնել էին գաղտնի գործակալների եւ մատնիչների լայն ցանց: Ազատագրական պայքարի նշանավոր բազմաթիվ գործիչներ դավաճանության ու մատնության զոհ դարձան:

Ահաբեկչական գործողությունները ուղղված էին նախ եւ առաջ թուրք իշխանություններին ծառայող հայ դավաճանների եւ մատնիչների դեմ:

Բ. Ահաբեկչական գործողություններն ուղղված էին քրդական ցեղախմբերի ցեղապետերի եւ բոլոր այն հրոսակախմբերի առաջնորդների դեմ, որոնք ասպատակում էին հայկական բնակավայրերն ու զենքի ուժով ու բռնությամբ ձգտում էին տեղահանել հայ գյուղացուն: Ահաբեկչության կազմակերպիչները այդ գործողություններով փորձել են սանձել ու զգաստացնել քրդական ցեղախմբերին եւ թույլ չտալ նրանց հետագա տարածումը հայկական բնակավայրերում:

Քրդական ցեղախմբերի ցեղապետերի եւ հրոսակախմբերի առաջնորդների, ինչպես նաեւ թուրք իշխանությունների գաղտնի գործակալների ու մատնիչների նկատմամբ ահաբեկչական գործողություններ առավելապես կենսագործել են Աղբյուր Սերոբն ու Գեւորգ Չավուշը եւ նրանց առաջնորդությամբ մարտնչած ֆիդայիները[54]:

Գ. Ահաբեկչական գործողությունները ուղղված էին բարձրաստիճան պաշտոնյաների, զինվորական ու ոստիկանության աստիճանավորների դեմ:

Օրինակ, այդ ժամանակահատվածում կայսրությունում ցնցող տպավորություն է գործել հայ վրիժառուների կողմից իրականացրած Իգդիրի գավառապետ Բոգուսլավսկու ահաբեկումը, որի մասին Երեւանի նահանգում տեղաբաշխված զորքերի հրամանատարը՝ գեներալ Ֆրեզեն Պետերբուրգ է ուղարկել հետեւյալ հեռագիրը.

«Ներքին գործոց նախարարին

«Այսօր, գիշերւա ժամը 2-ին Իգդիր գյուղի շուկայում կրակոցով սպանվել է Իգդիրի գավառապետ փոխգնդապետ Բոգուսլավսկին: Սպանողը անհայտ է: Երեւանի նահանգապետը մեկնել է Իգդիր»:

Գեներալ Ֆրեզե

11. 07.1904 թ. »[55]:

Ահաբեկչության մասին ՀՅԴ Ընդհանուր ժողովների ընդունած որոշումները հաստատվել է նաեւ 4-րդ Ընդհանուր ժողովի կողմից:

Համաձայն այդ որոշման «1. Կազմակերպել քաղաքական սիստեմատիկ տեռոր՝ ուղղված կառավարական կարեւոր ներկայացուցիչներին...ընդունելով ներկայ պայմաններում նրա ունենալիք խոշոր հետեւանքները...»[56]:

Նույն Ընդհանուր ժողովի 35-րդ նիստում(15 մարտ) իր ելույթում կարեւորելով ահաբեկչության գործոնը՝ Ռոստոմը նշում է. «Դաշնակցութեան յաջող տեռորները՝ խորը տպաւորութիւն թողին բոլորի վրայ: Այդ տեսակետից կառավարութիւնը ակնածել է դաշնակցութիւնից: Փոխարքայի կայացած մի զինուորական խորհրդի ժամանակ, զինուորականների մեծամասնութիւնը դէմ է եղել կտրուկ միջոցների դիմելու ծրագրին, ասելով, թէ «Դաշնակցութիւնը Գուրիա չէ»[57]:

Բաքվում իշխանությունների կողմից հաստատված խիստ ռեժիմի հարկադրանքով փոխվում է նաեւ հայ-թուրքական հակամարտության մարտավարությունը:

Քանի որ հրազենի կրակոցները իրենց վրա էին բեւեռում զինվորների ու ոստիկանության ուշադրությունը եւ զենք ունեցողներին, առավել եւս գործածողներին սպառնում էր խիստ պատիժ, Աբ. Գյուլխանդանյանի բնորոշմամբ «Այդ պատճառով նպատակայարմար համարուեց սառը զէնք գործածել»[58]:

Ինչպես նախորդ բոլոր դեպքերում, այս անգամ եւս « սառը զէնք գործածել»-ու նախաձեռնողները դարձյալ թուրքերն էին, որոնք խուսափելով հրազեն գործածելուց՝ հնարավորության դեպքում դաշունահարելով սպանում էին պատահած հայերին:

Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը թուրքական կողմին կրկին անգամ ապացուցեց, որ նման մարտավարությամբ, թեկուզ զանգվածային հարձակումներ գործելու դեպքում, հնարավոր չէր այլեւս քաղաքն ազատել հայ բնակչությունից: Հաջորդ օրերին թուրքական կողմը շարունակում է գործել մասնավոր սպանություններ կատարելու մարտավարությամբ:

Դեռեւս Շուշիի դեպքերից առաջ թուրք ազդեցիկ առաջնորդներ Աղաեւի, Թոփչիբաշեւի, Թաղուեւի, Սաֆար Ալիեւի: Բախշի բեկի եւ այլոց գլխավորությամբ Բաքվում կազմակերպվում է թուրք պանիսլամիստական մի գաղտնի կոմիտե, որը ի թիվս այլ գործողությունների, կազմակերպել է անհատական սպանություններ:

Հ. Յ. Դաշնակցության ահաբեկիչ մարմինը բացահայտելով վերոհիշյալ կազմակերպության նախաձեռնությամբ իրականացրած սպանությունները, նամակով դիմում է հայ-թուրքական միջազգային խաղա-

դարար կոմիտեին՝ աղդարարելով, որ «...եթէ քաղաքակրթական-յառաջադիմական նպատակով կազմուած լիներ բրքական գաղտնի կոմիտէն, Հ.Յ.Դ-ն ծափահարելով առաջինը կը լիներ ձեռք մեկնելու, բայց քանի որ փաստերը հակառակն են ցոյց տալիս , եւ քանի որ նա կազմել է հայ ժողովրդին ահաբեկելու, կոտորելու, այդ պարագայում՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին նիւրուած Դաշնակցութիւնը չէ կարող ձեռնպահ մնալ ու անխնայ կը լինի դէպի այդ գաղտնի կազմակերպութեան ղեկավարներն ու ներշնչողները...»[59]:

Այդ նույն նամակով Հ. Յ. Դաշնակցության ահաբեկիչ մարմինը հայ-թուրքական միջազգային խաղաղարար կոմիտեին ներկայացնում է ոչ միայն սպառնալիքներ, այլեւ առաջարկում է միջոցներ ձեռնարկել դադարեցնել եղբայրասպան ընդհարումներն ու թուրքերի կողմից կատարվող սպանությունները:

Ըստ «Դրօշակ»-ի տվյալների միայն մեկ շաբաթվա ընթացքում մասնակի սպանությունների հետեւանքով սպանվել էին 40 հայեր[60]:

Թուրքերի ոտնձգությունները սանձահարելու ու համարժեք պատասխան տալու համար հայկական կողմը պիտի անպայմանորեն ասեր իր վճռորոշ խոսքը: Իրավիճակը թելադրում էր, որ ոչ թե պիտի մնալ սոսկ պաշտպանվողի դիրքերում, այլ անհրաժեշտ էր ձեռնարկել հարձակողական գործողություններ:

Զինվորական մարմնի հանձնարարությամբ մարտական խմբերի մի մասը մնալու էր դիրքերում, իսկ մյուս մասը, դաշույններով զինված, պիտի իջներ փողոց եւ թուրքերին ահաբեկելու, ահ ու սարսափի մատնելու նպատակով դաշունահարեր բոլոր նրանց, ովքեր անցնելու էին հայկական թաղամասով կամ այդ թաղամասերի մերձակայքով:

Վրեժխնդրություն՝ Ակն ընդ ական, միայն նման մարտավարությամբ կարելի էր սանձել թուրքերին:

Ի պատիվ Զինվորական մարմնի, պիտի ասել, որ այդ որոշումը, ինչը միանշանակորեն ապացուցեց ժամանակը, շատ արդյունավետ էր եւ ճիշտ ժամանակին: Շնորհիվ հակառակորդին ահաբեկելու եւ ահ ու սարսափի մատնելու այդ մարտավարության՝ «...հայկական թաղամասով անցնող թաթարների չնչին մասը միայն կարողացաւ ազատուել: Մեծամասնութիւնը անխուսափելիօրէն ենթարկուեց դաշունահարութեան հայ մարտիկների կողմից»[61]:

Բաքվի ինքնապաշտպանական գոտու մեջ մտնում էին քաղաքի արվարձանները եւ նավթահանքերի շրջանը, որտեղ աշխատում էին հազարավոր հայ բանվորներ:

ՀՅԴ Բաքվի «Ազկանապատ» կենտր. կոմիտեի եւ Ջինվորական մարմնի պարտականությունների մեջ էին մտնում ընդհարումների բռնկման պարագայում նաեւ արվարձանների եւ նավթահանքերի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպումն ու բնակչության եւ աշխատավորության անվտանգության ապահովումը:

Ջինվորական մարմնի որոշմամբ քաղաքի արվարձանները բաժանել էին երեք զինվորական բաժանմունքների կամ շրջանների:

Ինքնապաշտպանական յոթերորդ շրջանի մեջ մտնում էին քաղաքից ընդամենը երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հայոց գյուղը եւ թուրքական Շամախինկա թաղի՝ հայերով բնակեցված մասը: Բաքվի Ջինվորական մարմնի որոշմամբ այդ շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար կազմվել էր Հայոց գյուղի Ջինվորական մարմին, որի կազմում, բացի դաշնակցականներից ընդգրկվել էին տեղի ազդեցիկ անձինք:

Հայոց գյուղի Ջինվորական մարմնի կազմում էին գյուղի մարտական խմբի խմբապետը՝ մասնագիտությամբ ատաղձագործ, ՀՅԴ անդամ Դուրասան Թումասյանը, Խանասորի արշավանքի նշանավոր քահանայի՝ Դարալագյազցի Տեր Գրիգորի եղբայրը, Գեւորգյան ճեմարանի շրջանավարտ Ռաֆայելը, գյուղի քահանան՝ «...անձնական քաջության տեր մի անձ, որի մօտ էին գտնւում Հայոց Գիւղում եղած Դաշնակցութեան կարեւոր պահեստները» [62]:

Ջինվորական մարմինը կազմել է նաեւ թռուցիկ խումբ, որի հրամանատարն է եղել տեղացի Կարապետ Տեր- Ռաֆայելյանը: Բացի վերոհիշյալներից, Ջինվորական մարմնի կազմում ընդգրկվել են նաեւ տեղացի երկու անձինք:

Ջինվորական մարմնի անդամներից միակ զինվորականը Կարապետ Տեր- Ռաֆայելյանն էր, որը վերջացրել էր պետական զինվորական ծառայությունը եւ ունեցել է ենթասպայի աստիճան:

Ինքնապաշտպանական ութերորդ շրջանի մեջ էին մտնում Սեւ Քաղաքը, Սպիտակ Քաղաքը եւ Հայոց Քիշլի գյուղը: Այդ խիստ արդյունաբերական շրջանը թեեւ հրդեհների բռնկման առումով խիստ վտանգավոր էր, բայց քանի որ թուրք տարրը շատ քիչ էր, այդ պատճառով չկար այն մտավախությունը, որ կարող էր հարձակումների ենթարկվել [63]:

Այդ շրջանի միակ խոցելի տեղը եղել է թուրքական Քիշլի գյուղի մոտակայքում գտնվող Մանթաշյանի գործարանը, բայց նրա բարձրաբերդ ամրակուռ պարիսպները հակառակորդի հարձակման պարագայում մեծ հնարավորություններ էին ընձեռում հուսալիորեն պաշտպանվելու համար:



Մարտիրոս Չարուխչյան



Դրո

Ջինվորական մարմինը անակնկալներից խուսափելու նկատառումով, այնուամենայնիվ, այդ շրջանի պաշտպանության համար առանձնացրել է մարտական խումբ: Շրջանի ինքնապաշտպանությունը իրականացնում էր նուխեցի Ավետիս Ավետիսյանի գլխավորած տեղի ՀՅԴ «Հրայր» կոմիտեն [64]:

Ա. Գյուխանդյանի բնութագրմամբ Ավետիս Ավետիսյանը «Մի եռանդուն անձնաւորութիւն էր եւ Սեւ քաղաքի աշխատաւորութեան մէջ ուներ զգալի հեղինակութիւն: Որովհետեւ այդ շրջանը ոչ այնքան վտանգաւոր էր յարձակման տեսակէտից, որքան հրդեհի, Ավետիս Ավետիսյանը աշխատում էր գործարանատէրերի վրայ ծանրաբեռնել ինքնապաշտպանութեան ամբողջ գործը: Մասամբ նրան յաջողուեց այդ»:

Ինքնապաշտպանական հաջորդ՝ իններորդը՝ Բիբեյբաթի շրջան էր: Քանի որ Բիբեյբաթի տարածքը ամբողջովին նավթային էր, համարվել է խիստ վտանգավոր շրջան: Բայց այդ շրջանի բնակչության մեծամասնությունը լեզգիներ էին, որոնք համամիտ չլինելով զինված բախումների՝ չեզոք դիրք էին գրավել: Այդ շրջանի թույլ եւ վտանգավոր տեղը եղել են Շիխովա գյուղի թուրքերը եւ Մուխտարովի հանքերի բանվորները, որոնք ղեկավարվել են հայության նկատմամբ ատելությամբ տրամադրված հանքերի սեփականատեր Մուխտարովը եւ նրա գործերի կառավարիչ Թալիշ բեկ Թալիշյունովի կողմից:

Այդ շրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարել է տեղական ՀՅԴ կոմիտեն, որի կազմում էին «... մեքենավար Թովմաս Յովնաթա-

նևանը. Աբանէսը. Չոփուռ Դաւիթը: Սրանք անվեհեր եւ ժրաջան կերպով վարում էին այդ շրջանի ինքնապաշտպանութեան գործը: Նրանց աջակցում էին Իշխան Միրզաբէկեանն եւ Սերգէյ Միրզայեանը...

Սակայն, այդ շրջանի ինքնապաշտպանութեան ոգին Լեւոն Քալանթարեանն էր, որ տեղական զինուորական ընդհանուր վարիչն էր եւ որին էին ենթարկւում բոլոր մարտական ուժերը »[65]:

Ինքնապաշտպանության մյուս գոտին՝ Նավթաշրջանն էր, որտեղ գտնվում էին տարբեր ընկերություններին պատկանող նավթահորերը, գրասենյակներն ու ձեռնարկությունները, հսկայական նավթապահեստները, ծառայողների եւ պաշտոնյաների բնակարանները, ինչպես նաեւ բանվորական կացարանները, որտեղ իրենց ընտանիքներով բնակվում էին հազարավոր բանվորներ:

Այդ ժամանակ նավթահանքերում աշխատել են տարբեր ազգության պատկանող 50.000 բանվորներ եւ նավթային մի շարք ընկերությունների բազմաթիվ պաշտոնյաներ, ինժեներներ եւ տարբեր բնույթի գործավարներ ու արհեստավորներ:

«Ըստ ազգութեան՝ այդ աշխատաւորները բաժանված էին այսպէս՝

Ռուսներ՝ 15.000
Հայեր՝ 8.500
Թաթարներ՝ 5.500
Պարսիկներ՝ 13.700
Կազանի թաթարներ՝ 2.700
Լեզգիներ՝ 4.800
Միւս ազգերից՝ 1.800
Ընդամենը՝ 49. 500»[66]:

Ըստ Բաքվի Զինվորական մարմնի տվյալների, նավթահանքերում աշխատող 9.000 հայերին եթե ավելացնենք նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաեւ բազմաթիվ մեծ ու փոքր գործարաններում եւ արհեստանոցներում աշխատողներին, ապա ընդհանուր հաշվով կստանանք ավելի քան 13.000 անձ:

«Այս թիւը,-գրում է Աբ. Գյուլխանդանյանը,-պէտք է ճիշտ համարել, որովհետեւ Կովկասի Փոխարքայ դիւանի հրատարակութիւնը 1911 թուին, նաւթաշրջանի հայերի թիւը հաշւում էր 12.253 հոգի»[67]:

Այդ շրջանի ինքնապաշտպանության կազմակերպման դժվարությունները պայմանավորված չէր միայն այն հանգամանքով, որ նավթաշրջանը զբաղեցնում էր հսկայական տարածք: Նավթաշրջանը գտնվում էր բուրքաբնակ գյուղերի տարածքում, որոնց բնակիչները

հայտնի էին հայության նկատմամբ տածած ատելությամբ եւ ավարառության ու ոճրագործության նկատմամբ դրսեւորած նկրտումներով: Ընդհարումների բռնկման պարագայում, այդ գյուղերի բնակիչները հագամանքների թելադրանքով անկասկած կհորդեին նավթահանքերը, իսկ հանքերի մեջ կային բազմաթիվ բնակարաններ ու կացարաններ, որտեղ բնակվում էին հազարավոր բանվորներ:

Զինվորական մարմինը նավթաշրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելիս առաջնորդվել է հետեւյալ նկատառումով.

1. Ուշադրությունը կենտրոնացրել է միայն բանվորների եւ հանքերում գտնվող բնակարաններում ու կացարաններում ապրող բնակչության պաշտպանությունը ապահովելու վրա:

2. Հանքերի պաշտպանությունը եւ այնտեղ աշխատողների անվտանգությունը պարտավոր էին ու պիտի ապահովեին իշխանությունները եւ հանքավայրերի տերերը: Օրինակ, քանի որ նավթահանքերը պետական գանձատուն էին մուծում տարեկան 130 միլիոն ռուբլի, հետեւաբար պետությունը շահագրգռված էր պաշտպանել նավթահանքերը եւ թույլ չտար, որ բուրք ամբոխը հրդեհեր ու ոչնչացներ իր ֆինանսական կարեւորագույն հենասյունը:

«Մեր ենթադրութիւնները,-գրում է Աբ. Գյուլխանդանեանը,-աւելի եւս հաստատում էին նրանով, որ կառավարութիւնը անենից առաջ զբաղուեց նաւթային շրջանի պաշտպանութեամբ եւ մեծ քանակութեամբ զօրքեր կենդրոնացրեց այդ շրջանում»[68]:

Սակայն, չէր բացառվում, որ ընդհարումների բռնկման դեպքում եթե բուրք ամբոխը, այնուամենայնիվ, ներխուժեր այդ տարածքը եւ հրդեհեր նավթահանքերը, ապա Զինվորական մարմնի պարտականությունը պիտի լիներ վտանգված շրջանից դուրս բերել հայ բնակչությանը եւ տեղափոխեր անվտանգ վայր: Այդ նպատակով կազմվում է նավթաշրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմին, որի անդամներ էին ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր. կոմիտեի անդամներ, արդեն բազմիցս հիշատակված Հարություն Շահրիկյանն ու Գրիգոր Աղաջանյանը[69]:

Ինքնապաշտպանությունը հաջողությամբ կազմակերպելու համար նավթաշրջանը բաժանվում է մի քանի զինվորական մասերի եւ յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում է Զինվորական մարմին, որը ենթարկվելու էր նավթաշրջանի Զինվորական մարմնին:

Նավթաշրջանի ինքնապաշտպանական շրջաններն էին.

1. Բալախանի նավթաշրջանը, որի պաշտպանությունը հանձն էր առել Միրզոյեւի նավթահանքի աշխատողները:

Բալախանի նավթաշրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու էր ՀՅԴ տեղական կոմիտեն, որի անդամներն էին «...Սահակ Մատինյանը, Ստեփան Տէր Մկրտչեանը, Ռաֆայել Մելքոնեանը եւ ուրիշներ:

...Այդ շրջանի համար որոշուած էր այսպէս.-կռուի ժամանակ գործի ղեկավարութիւնը պիտի վերցնէին իրենց վրայ Ռաֆայել Մելքոնեանը եւ իր եղբայր՝ Օվէն»[70]:

Աբ. Գյուլխանդանյանի վկայությամբ Ռաֆայել Մելքոնեանի եղբայրը՝ Օվեն փորձառու հայդուկ էր, մասնակցել էր ահաբեկչական գործողությունների եւ «...մի վերին աստիճանի յանդուգն, ձեռներէց, գաղտնապահ եւ դրանց հետ միասին չափազանց համեստ ընկեր էր...

Օվէն գոհ գնաց մեծ պատերազմի ժամանակ թուրքերի հետ տեղի ունեցած Սարդարաբատի կռիւներում»[71]:

2. Զաբրատի ինքնապաշտպանական շրջան:

Այդ շրջանի նավթահանքերում աշխատող բանվորների զգալի մասը նախիջեւանցի հայերն էին: Զաբրատի տարածքում էր գտնվում Մանթաշեւի մեքենագործարանները եւ Փիթոեւի «Արամազդ» ընկերության հանրակացարանները, որտեղ բնակվում էին մեծ քանակությամբ հայեր:

Շրջանի ինքնապաշտպանության ղեկը, ինչպես մյուս շրջաններում, դարձյալ ստանձնում է ՀՅԴ տեղական կոմիտեն, որի պատասխանատուն եղել է Մանթաշեւի գործարանի մեխանիկի օգնական, Էջմիածինի Գեւորգյան ճեմարանի շրջանավարտ Բարսեղը, որը կուսակցության մեջ հայտնի էր խմբապետ Արամելիք անունով[72]:

Բացի Բարսեղից, Զաբրատի ինքնապաշտպանական շրջանի Զինվորական մարմնի անդամներն էին նաեւ Բուդդան Ալեքսանյանը, Հայրապետ Հայրապետյանը, Թեւան Յուզբաշյանը, Արամ Պահլավունին եւ Դրոյի զինակիցներից պահեստի սպա Թադեւոս Պետրոսյանը, որը «...հայ-թաթարական կռիւների ժամանակ զինուորական ղեկավարներից մէկը եղաւ Բարսեղի հետ միասին...»[73]:

3. Ռոմանի ինքնապաշտպանական շրջան:

Այդ շրջանում թուրքական Ռոման գյուղի հարեւանությամբ գտնվել են Մանթաշեւ Կասպյան ընկերությունը, Մելիքովի եւ Փիթոյեւի նավթահանքերը: Ռոմանի շրջանում հայությունը թուրք տարրի համեմատ կազմում էր բանվորության փոքրամասնությունը:

4. Սաբունչու ինքնապաշտպանական շրջան:

Այդ շրջանը Բաքվի հետ կապված էր երկաթուղով: Այնտեղ էր գտնվում Հարություն Շահրիկյանի եւ Գրիգոր Աղաջանյանի գլխավորած նավթաշրջանի ինքնապաշտպանությունը ղեկավարող Զինվորական մարմնի կենտրոնավայրը:

Այդ երկու շրջաններում ինքնապաշտպանության կազմակերպման ղեկը դարձյալ ստանձնել են ՀՅԴ կոմիտեները:

Հարկ է նկատել, հայ-թուրքական ընդհարումների մանրամասների ուսումնասիրությունը միանշանակորեն հավաստում է, որ մի շարք վայրերում, մասնավորապես Բաքվում եւ նավթաշրջանում բացի Դաշնակցության կառույցներից հայության ինքնապաշտպանության գործում բոլորովի չի երեւում հայ ազգային-քաղաքական մյուս կուսակցությունների մասնակցությունը:

Ինքնապաշտպանական յուրաքանչյուր շրջանում Զինվորական մարմինները, որոնք ղեկավարվել են դաշնակցության տեղական կառույցների կողմից, կազմավորել են մարտական խմբեր, որոնց հիմնականում անդամագրվել են պետական զինվորական ծառայությունն անցած բանվորները:

Ըստ Աբ. Գյուլխանդանյանի, ընդհարումների նախօրեին «...նաւթաշրջանի ինքնապաշտպանութեանը նուիրուած էին ոչ աւելի քան 250 հոգի, որոնցից 170-ը շրջաններում, իսկ թուրքիկ խմբերում՝80:

...ամբողջ Բաքվի շրջանի ինքնապաշտպանութեան համար կենտրոնացած էին ոչ աւելի քան 700 հոգի...»[74]:

Իհարկե, եթե նկատի ունենանք թուրքական կողմի ունեցած ուժերի գերակշռությունը եւ այն հսկայական տարածությունը, որը պիտի պաշտպաներ Բաքվի Զինվորական մարմնի հրամանատարությամբ գործող ընդամենը 700 մարտիկները, անտարակույս չափազանց դժվարին էր, կարելի է ասել, գրեթե անհնար:

Աբ. Գյուլխանդանյանի խոստովանությամբ «...աւելի մեծ ուժեր հրապարակ բերել եւ կարճ ժամանակի ընթացքում ռազմամթերք ճարել՝ անկարելի էր, մանաւանդ որ գաւառները արդէն երեւան էին բերել իրենց ծով կարիքները: Եղած ռազմամթերքը, ինչպէս եւ մարտական ուժերը փոխադրւում էին գաւառները՝ անպաշտպան հայութեան կեանքը փրկելու համար»[75]:

Բաքվում շաբաթ օրը՝ օգոստոսի 20-ին տեղի ունեցած դեպքերից մեկ օր անց՝ օգոստոսի 21-ին տագնապալի ու շիկացած իրավիճակ է ստեղծվել Բալախանի նավթարդյունաբերական շրջանում եւ գյուղում: Թուրքական կողմը մասնավոր սպանությունների միջոցով հայերին ահաբեկելու մարտավարությամբ գործելը շարունակել է կիրառել նաեւ նավթաշրջանում:

«Կառավարութիւնը,-գրում է Հ. Շահրիկյանը,- դադարացրեց քաղաքի եւ Բալախանիի միջեւ երկաթուղու երթեւեկութիւնը՝ գուցէ փետրուարեան օրերում կատարուածի նման Բալախանից գինուած թուրք ամբոխի դէպի քաղաք խուժելը արգելելու համար: Բայց մասնաւոր սպանութիւնները սկսուեցին նոյն օրը(նկատի ունի օգոստոսի 21-ը-Հ.Գ.): Մինչեւ երեկոյ հինգ հայ վիրավոր եւ դիակներ բերեցին հիւանդանոց: Մերոնք փակուեցին իրենց բնակարաններում, սպասելով դրսի յարձակմանը »[76]:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին թուրքական հրոսակախմբերը չբաւարարուելով մասնաւոր սպանութիւններով, հարձակուել են այն հիմնարկների եւ գրասենեակների վրա, որտեղ աշխատողների մեծ մասը հայեր էին: Հետեւել է հայկական կողմի պատասխան հարուածը, որի հետեւանքով սպանուել է երկու թուրք:

Նավթաշրջանի Զինվորական մարմնի անդամ Հ. Շահրիկյանը նկատի ունենալով թուրքական կողմի ուժերի գերակշռութիւնն ու հարձակումներ գործելու տրամադրուածութիւնը, դիմում է Բալախանի ոստիկանապետին, որպեսզի զորք ուղարկեին նավթահանքերի ու աշխատողների պաշտպանութեան համար: Շատ չանցած ոստիկանապետը ուղարկում է նախ հեծեալ կոզակների, ապա նաեւ հետեւակ զինուորների, որոնց, պարզվում է, ուղարկել էին ոչ թէ պաշտպանելու նավթաշրջանն ու աշխատավորութեանը, այլ «...շրջապատելու, բանտարկելու համար, որովհետեւ թոյլ չէին տալիս ոչ միայն դրան առաջ երեւալու, հիւանդանոց գնալու, հաց, ուտելիք, ջուր ճարելու՝ այլ մինչեւ անգամ պատուհանից նայելու: Հրացանները շարունակ ուղղած էին դէպի պաշարուածները, ամէն մի անգգոյշ նայվածք վարձատրւում էր գնդակահարութեամբ»[77]:

Նավթահանքերի շրջանում թուրքական կողմը նկատի ունենալով այդ տարածքի յուրահատկութիւնը, չի բավարարվում միայն հարձակումներ ձեռնարկելով: Այս անգամ նրա հարձակման հիմնական թիրախը, իհարկե նախեւառաջ հայերին պատկանող, նավթահանքերն էին, գործարաններն ու բանվորների կացարանները:

Զորքի եւ ոստիկանութեան ներկայութեամբ թուրք հրոսակները հրդեհում են բազմաթիվ նավթահորեր եւ հրդեհն արագորեն տարածվելով՝ ընդգրկում է նավթաշրջանի մեծ մասը:

Թուրքերի գործողութիւններին ոչնչով չի փորձել խոչընդոտել Բաքվում եւ նավթաշրջանում տեղաբաշխված զորքի հրամանատար գեներալ Սվետլովը, որը մշտապես գտնվել է Բալախանում:

Համաձայն «Դրօշակ»-ի հավաստման, գեներալ Սվետլովը փոխանակ միջոցներ ձեռնարկեր կանխելու թուրքերի ձեռնարկումները,

«...թիւրքերի ձեռքը սեղմելով, շնորհակալութիւն է յայտնել նրանց հաւատարիմ հպատակային զգացումների եւ գործողութիւնների համար, որովհետեւ նրանք ասել էին, որ հայերի հետ ընդհարուել են միայն այն պատճառով, որ հայերը իրանց առաջարկել են պետութեան դէմ ապստամբել»[78]:

Նավթահանքերում կատարվող դեպքերից անհանգստացած արդյունաբերողները Նոբելի ընկերության ներկայացուցչի մասնակցությամբ պատգամավորություն են ուղարկում գեներալ-նահանգապետի մոտ եւ խնդրում միջոցներ ձեռնարկել դադարեցնելու նավթահանքերում կատարվող իրադարձությունները: Ընդառաջելով արդյունաբերողների խնդրանքին «...գեներալ գուբերնատորը հեռագիր է տուել գեներալ Սւետլովին, որ հայերին եւ պարսկահպատակ թիւրքերին չը հալածի եւ տեղական թիւրքերին երես չը տայ...»[79]:

Բաքվի դեպքերը լուսաբանող վավերագրերի պնդմամբ գեներալ Սվետլովը նույնպես կաշառված է եղել թուրք վերնախավի կողմից եւ վճռական քայլեր չի ձեռնարկել կատարելու նահանգապետի եւ անգամ փոխարքայի հրահանգները [80]:

Թրքամետ գեներալը այս անգամ եւս փոխանակ կատարելու գեներալ նահանգապետի հրահանգը, առավելապես ձեռնամուխ է եղել հայերին զինաթափելու գործով [81]:

Վերոհիշյալ վավերագրերի վկայությամբ նավթաշրջանի բոլոր ինքնապաշտպանական շրջաններում տեղի ունեցած կռիվներն առանց բացառությամբ սանձազերծել են թուրքերը: Թեպետ զորքն ու ոստիկանությունը մեծամասամբ պաշտպանել են թուրքական կողմին, այնուամենայնիվ, հայ ինքնապաշտպանական ուժերն արժանի դիմադրություն են ցույց տվել թուրք հրոսակախմբերի հարձակումներին եւ կռիվներում ունեցել են անհամեմատ քիչ զոհեր:

Նավթահանքերում տեղի ունեցած դեպքերը լուսաբանող վավերագրերն ու հուշագրությունները ընդհանուր գծերով ներկայացնելով հայ մարտական ուժերի հերոսական գործողությունները, չեն նշում կռիվների մանրամասները, հրամանատարների ու մարտերում աչքի ընկած մարտիկների անունները [82]:

Օրինակ, «Բալախանի կոտորածը օգոստոսի 20-23-ը» խորագիրը կրող հուշագրությունը ներկայացնում է Բալախանի շրջանում գտնվող Կասպական ընկերությանը պատկանող գործարանի վրա թուրք հրոսակների հարձակման ժամանակ բանվորների կազմակերպած ինքնապաշտպանությունը:

Գործարանի բանվորները, որոնց միացել են նաեւ մի քանի փոքր ֆիրմաների ծառայողները, ընդհանուր թվով մոտ 1500-2000 հոգի պաշտպանական դիրքեր են գրավել ընկերության գրասենյակի բակում եւ մի քանի օր կարողացել են դիմագրավել թուրքերի հարձակումներին:

Ըստ հուշագրության հեղինակի «...պաշտպանելու համար ունեինք 55 բերտան հրացան, 185 ատրճանակ գանագան համարի եւ գանագան սիստեմայի: Իսկոյն եւէք երեք հոգի մենք, բաժանեցինք բակը տասներկու դիրքի, եւ ընտրելով ամեն մէկ գէնք բանեցնողին փոխանորդ, որոնք փոխում էին ժամը մի անգամ»[83]:

Օգոստոսի 22-ին եւ 23-ին հայ մարտիկները թեեւ մեծ դժվարությամբ, բայց, այնուամենայնիվ, կարողանում են հետ մղել թուրքերի ձեռնարկած հարձակումները: Չկարողանալով ընկճել հայ մարտիկների դիմադրությունը՝ թուրքերը օգոստոսի 24-ի առավոտյան հրդեհում են գրասենյակի շուրջը գտնվող նավթի աշտարակները եւ «...կրակը սկսեց իր հրեղեն լեզուներով լափել նավթոտ փայտեա վիշկաները»[84]:

Բանվորները թեպետ փորձել են հանգցնել հրդեհը, բայց նրանց ջանքերն ապարդյուն են անցել: Խուճապի մատնվելով հրդեհի սարսափազդու տեսարնից՝ բանվորները լքում են ընկերության գրասենյակի տարածքը եւ մեկնում կայարան[85]:

Ի դեպ, թուրքերի հարձակումների եւ նավթահանքերում ուժգնացող հրդեհների հետեւանքով կայարանում են հավաքվել ոչ միայն Բալախանից, այլեւ մյուս շրջաններից եկած հազարավոր հայեր:

Ինչպես արդեն նշվել է, ընդհարումների ժամանակ դեպքերի թելադրանքով, թուրք ամբոխի դեմ երբեմն կռվել է նաեւ զորքը: Համանման մի դեպք տեղի է ունեցել Բալախանի գյուղի կռվի ժամանակ, երբ զինվորները հայ մարտիկների համագործակցությաբ դիմագրավել են թուրք ամբոխի հարձակումները:

Համաձայն այդ կռիվը ներկայացնող վավերագրի, Օգոստոսի 21-ին եւ 22-ին «Այդ տեղ(նկատի ունի Բալախանի գյուղը-Հ.Գ) գտնւում էր մի ջոկատ, զինուոր կազակ, որոնք այդ երկու օրում շատ լաւ էին վերերւում ղէպի հայերը եւ Բալախանի գիւղից թուրքերի յարձակումների դէմ կռւում էին հայերի հետ...»[86]:

Կռվի ժամանակ զինվորները իրենց փամփուշտները քիչ լինելու պատճառով մինչեւ անգամ փամփուշտ են վերցրել հայ մարտիկներից: Հերթական անգամ մարտադաշտում մատնվելով անհաջողության՝ թուրք ամբոխը նույն օրը՝ երեկոյան հրդեհում է գյուղի հարեւանությամբ գտնվող նավթահորերը: Ուշագրավ է, որ այս անգամ զորքն ու ոստիկանությունը դարձյալ համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել խոչընդոտելու թուրք ամբոխի գործողությունները:

Ավելին, զորքի կողմից կատարվում է անսպասելին:

Ըստ վավերագրի «Մի կողմից հրդեհը սկսեց ամէն կողմից բոցավառել; միուս կողմից՝ զորքերը, որոնք դեռ խաղաղ ժամանակից Ռոմանի, Բալախանի, Սաբունչի գիւղերի կողքին պոստ էին դրած, կամ անգործ մնացին եւ կամ փախուստ տուեցւն»[87]:

Ավելի քան անհասկանալի ու տարօրինակ է եղել այն զինվորների վերաբերմունքը, որոնք հայ մարտիկների համագործակցությամբ երկու օր շարունակ դիմագրավել էին թուրք ամբոխի գրոհները:

Կռիվների հաջորդ օրը՝ օգոստոսի 23-ին զինվորներն անսպասելիորեն լքում են իրենց զբաղեցրած հենակետերը եւ տեղափոխվում գյուղի մերձակայքում գտնվող բլուրը, ընդսմին պատճառաբանելով, որ իրենք կատարում են հրամանատարության հրահանգը:

Հայ մարտիկներն ու գյուղի բնակիչները չկարողանալով սթափ գնահատել իրավիճակը, միամտաբար թողնում են իրենց դիրքերն ու հետեւում զինվորներին: Թուրքերն անհապաղ գրավում են զինվորների եւ հայ մարտիկների թողած դիրքերը եւ կրակ տեղում հեռացողների վրա:

Թվում է, որ զորքը պիտի ամրապնդվեր բլրի վրա եւ համազարկեր տեղալով թուրքերի ուղղությամբ՝ օգներ, որպեսզի հայ մարտիկները նույնպես կարողանային պաշտպանական հուսալի դիրքեր գրավել: Սակայն, «...զօրքը բլուրից էլ փախուստ տալով, համոզում են հայերին հետեւել իրենց, եւ հայերը կորուսած լինելով իրենց դիրքը՝ ակամայ հետեւում են զօրքին եւ գալիս են մինչեւ հիւանդանոց...»[88]:

Թուրքերն անարգել ներխուժում են գյուղ եւ տրվում թալանի ու ավերի :

Այդ օրերին նավթաշրջանում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը աներկբա հավաստում է, որ բավարար քանակությամբ մարտական ուժեր, զենք ու զինամթերք չունենալու պատճառով Բաքվի Զինորական մարմնին եւ Հ.Յ.Դաշնակցության կառույցներին չի հաջողվել ըստ ամենայնի կազմակերպել քաղաքի հարակից հայկական բնակավայրերի եւ նավթահանքերում ու գործարաններում աշխատող հայ բանվորության ինքնապաշտպանությունը:

Վերոհիշյալ վավերագրի հեղինակի պնդմամբ, նավթաշրջանում իրավիճակն անհամեմատ հանգիստ ու թեթեւ կլիներ, եթե բանվորները փոքր-ինչ ավելի լավ զինված լինեին եւ «...եթէ մենք ունենայինք մի լաւ հրամանատար նշանակուած կուսակցութեան կողմից»[89]:

Զորքը, ինչպես արդեն նշվել է, ավելի շատ հանդես է եկել ի պաշտպանություն թուրքերի եւ շատ հաճախ խոչընդոտել ու նույնիսկ զինաթափել է ինքնապաշտպանության դիմած հայերին:

Օրինակ, վավերագրերից մեկի հեղինակ Միխայիլ Վարդանյանցը ներկայացնում է ընդհարումներից մի դրվագ, երբ ռուս զինվորների ու կոզակների ներկայությամբ մի խումբ զինված հայեր, գործարանի պարսպի հետեւում դիրքավորված փորձել են պաշտպանել շենքի ներսում պատսպարված հազարավոր հայերի, որոնց մեջ եղել են բազմաթիվ կանայք եւ երեխաներ[90]:

Ներկայացնելով այդ պահը՝ Միխայիլ Վարդանյանցը նշում է. «...րոպէ առ րոպէ սպասում էինք, որ թշնամին կհարձակի, իսկ յետից կոզակներն էին դիրքեր բռնած եւ մեզ պատուիրում էին, որ ոչ ոք չի համարձակվի հրացան կամ ատրճանակ գցել: Կոզակները ասում էին, եթէ թշնամին կհարձակվէ մենք պատասխան կտանք իսկ եթէ մեր ուժը քիչ կլինի, այն ժամանակ դուք կարող եք օգնել»[91]:

Հաջորդ օրը կոզակները ոչ միայն չեն թույլատրում հայ մարտիկներին կրակ տեղալ հարձակվողների վրա, այլեւ կատարում է այնպիսի մի արարք, որը միամգամայն անսպասելի էր հայերի համար:

«...հրաման եկաւ նաչալնիկ գարնիզոնից,-գրում է վավերագրողը,-, որ զինաթափ լինենենք, ասելով ու եթէ զինաթափ չլինէք, կոչնչացնեմ»[92]:

Տվյալ իրավիճակում հայերի համար այլընտրանք չկար, նրանց մի մասը զինաթափվում է, իսկ մի մասը կարողանում է թաքցնել զենքերը եւ մի քանի բաժակ օղի խմեցնելով զինվորներին, նրանց ուղեկցությամբ տեղափոխվում են «Սառչաստնիկ» ընկերության տարածք, ուր հանգրվանել էին տարբեր շրջաններից եկած հարյուրավոր հայեր:

Օգոստոսի 22-ին թուրք ամբոխը հարձակվում է հայերի վրա եւ փորձում կրակի տալ այդ «Սառչաստնիկ» ընկերության պատկանող նավթահորերը: Դիմելով ինքնապաշտպանության՝ հայ մարտիկները կարողացել են հետ մղել գրոհները եւ թույլ չեն տվել թուրք հրձիգներին մոտենալ նավթահորերին: Տեսնելով, որ առանց հրդեհների հնարավոր չէ ընկճել հայ մարտիկների դիմադրությունը, թուրքերը մեծագույն ջանքեր գործադրելով ի վերջո կարողանում են կրակի տակ հանքահորերից մեկը, որի հետեւանքով բռնկվում են նաեւ մի քանի հանքահորեր:

«23-ի օգոստոսի լոյս երկուշաբթի, -վկայում է Միխայիլ Վարդանյանցը,- արդեն չորս կողմերս այրւում էին վիշկաները: Նաւթահանքերից կրակը թափվում էր մեր վրայ: Կրակը մի կողմից, ծուխը մի կողմից,

քամին միւս կողմից շունչ քաշել, ալք բանալ չէր կարելի:Կարծես թէ դժոխքի մեջն էինք տանջվում»[93]:

Ի դեպ, թուրքերի հարձակումների եւ նավթահանքերում ուժգնացող հրդեհների հետեւանքով կայարանում են հավաքվել ոչ միայն Բալախանից, այլեւ մյուս շրջաններից եկած հազարավոր հայեր:

Վավերագրերից մեկը ներկայացնում է դարձյալ Բալախանի տարածքում գտնվող Թումայեւ եւ Արշալույս ընկերություններին պատկանող ձեռնարկությունների վրա օգոստոսի 23-ին թուրք ամբոխի հարձակման մանրամասները[94]:

Ըստ վավերագրի, այն պահին երբ թուրք ամբոխը հարձակում է գործում, ընկերության ներկայացուցիչներն ահաբեկված հարձակվողների բազմաքանակությունից եւ նրանց արձակած վայրի ու սարսափազդու աղաղակներից, հեռախոսով օգնություն են խնդրում ոստիկանությունից, թեեւ այդ ժամանակ ընկերությանը պատկանող տարածքում եղել են զինվորներ:

Ոստիկանությունը չի արձագանքում նրանց խնդրանքին եւ օգնություն չի ուղարկում: Դրությունը դարձյալ փրկում են ձեռնարկություններում գտնվող հայ ինքնապաշտպանական ուժերը, որոնք համապատասխան դիրքեր գրավելով՝ կարողանում են հաջողությամբ դիմագրավել ամբոխի հարձակումները:

Ուշագրավ է ձեռնարկություններում գտնվող զինվորների վերաբերմունքը: Նրանք փոխանակ օգնելու հայ մարտիկներին դիմագրավելու հարձակումները, դուրս են գալիս տարածքից ու հեռանում: Կատարվում է անսպասելին, հայ մարտիկները հետեւում են զինվորներին ու նույնպես հեռանում ընկերության տարածքից: Վավերագիրը չի նշում, թե այդ պահին ովքեր մնացին ընկերություններում, եւ արդյոք այնտեղ հայ բանվորներ ու ընդհանրապես աշխատողներ կային, թե ոչ:

«...Ճանապարհին,-շարունակում է վավերագիրը,- դարձեալ ընդհարումներ են պատահում: Զօրքը թողնում, փախչում է, բայց տղերքը թուրքերին փախցնելուց յետոյ դարձեալ գալիս են եւ տղերանց ստիպելով բերում են ոստիկանատուն, որտեղ նրանց զինաթափ անելով ուղարկում են Տեխնիչէսկի նաղզոր: Տեխնիչէսկի նաղզորի շինութիւնն ու ոստիկանութիւնը միմեանցից շատ հեռու չեն »[95]:

Ճանապարհին զինվորների ուղեկցությամբ իրենց ընտանիքի անդամներով նրանց է միանում Միրզոեւի եւ մի քանի այլ շրջանների նավթահանքերի բանվորները, որոնցից շատերը զինված են եղել: Հայ բանվորների թափորը շարժվում է հիվանդանոց, որը գտնվել է Նոբելի գրասենյակի մոտակայքում: Հիվանդանոց հասնելուն պես թուրք ամբոխը

հարձակվում է նրանց վրա: Հայ զինյալներն անմիջապես դիրքեր են գրավում եւ համազարկերով դիմավորում հարձակվողներին:

Այս պարագայում դարձյալ ավելի քան զարմանալի է եղել զինվորների գործելակերպը: Նրանք կարծելով, որ հայերն են իրենց վրա կրակում, դիրքեր են գրավում Նոբելի գրասենյակի մոտ գտնվող ռուսական եկեղեցու բակում եւ համազարկեր տեղում հիվանդանոցի բակում խմբված բազմության վրա:

Վավերագրի գնահատմամբ «Այս ենթադրութիւնը չէր կարելի անել, որովհետեւ յարձակումը եւ կրակումը յիւանդանոցի յետեւի կողմը դէպի արեւմուտք էր, իսկ զօրքը եւ կոզակները գտնվում էին հիւանդանոցի դրան կողմը դեպի արեւելք»:

Նույն օրը, երեկոյան ճավթահանքերում տեղաբախշված զորքի հրմանատարի հրահանգով պիտի զինաթափեին հայերին եւ ուղարկեին քաղաք, իսկ չենթարկվողներին սպառնում էին գնդակահարել:

Ավելին, հաջորդ օրը առավոտյան չսպասելով հայկական կողմի պատասխանին, զորքը հրանոթներից կրակ է տեղում հիվանդանոցի եւ «Տեխնիչէսկի ճաղգոր»-ի շենքի վրա, որտեղ ոստիկանության ու զորքի պարտադրանքով պատսպարվել էին հազարավոր հայեր:

Ի՞նչ պիտի արվեր: Հիվանդանոցից որպես պատգամավոր հրամանատարության մոտ են գնում ազգությամբ ոչ հայ բժիշկներ, պարզելու քնդանոթածգության պատճառներն ու խնդրելու դադարեցնել կրակը:

Պարզվում է, որ այդ ամենը կատարվել է հայտնի հանցագործ, մեծահարուստ, երդվյալ հայատյաց ոմն Շաբոնի եւ թուրք ոստիկանների ջանքերով, որոնք կարողացել էին կաշառել ռուս սպաներին եւ նրանց հավատացրել, որ հիվանդանոցում ու «Տեխնիչէսկի ճաղգոր»-ի շենքում գտնվող բազմության մեջ մեծ թիվ են կազմում ցարական իշխանությունների համար մեծ վտանգ ներկայացնող հեղափոխականներ: Նրանք պատգամավոր բժիշկներին ասել են, որ միայն այն դեպքում կդադարեցնեն հրետանակոծությունն ու հարձակումը, եթե բանվորները զինաթափվեն, դուրս գան հիվանդանոցից եւ մեկնեն քաղաք[96]:

«Բժիշկ պատգամաւորը,- նշում է վավերագիրը,- սարսափած վերադառնում է: Հիվանդանոցում եւ «Տեխնիչէսկի ճաղգորում» պատսպարվողները ճարահատյալ զինաթափ են լինում, բայց այս գործողությունը վերջանում է կես ժամ ուշ քան տրված երեք ժամը»[97]:

Հայերի դանդաղկոտությունից «սաստիկ բարկացած» հրամանատարը զինվորներին հրամայում է կրակել հիվանդանոցում եւ Տեխնիչէսկի ճաղգորում գտնվող բազմության վրա եւ պահանջում, որ հայերն արագ-

րեն զինաթափվեն ու դուրս գան: Բժիշկներին հաջողվում է խնդրելով ու մեծ ջանքեր գործադրելով համոզել հրամանատարությանը հետ վերցնել հրամանը, իսկ հայերը զինաթափվելով՝ դուրս են գալիս հիվանդանոցից եւ Տեխնիչէսկի ճաղգորի շենքից ու ուղեւորվում քաղաք, վավերագրի բնորոշմամբ «...թողնելով Բալախանին սանձարձակ թուրքերին եւ նրանց պաշտպան ոստիկանութեանն ու զինուորական պաշտոնեաներին»[98]:

Հիվանդանոցում հայերին զինաթափելու հարցն արծարծվել է նաեւ ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի 38-րդ նիստում (17 մարտի), երբ քննարկվել է «Ոսկանապատ» կեմտր. կոմիտեի տեղեկագիրը:

Տեղեկագիրը ներկայացնող Չոփուրյանի պտասխանություններից պարզվում է, որ «Հիւանդանոցում հաւաքուած էին մօտ 1500 մարդ, որոնց մօտ կար 3-400 զէնք. երբ ժողովուրդը որոշում է զէնքերը յանձնել, 40 հոգի, հրաժարւում են տալ եւ դուրս են գալիս, խորհրդակցելով Բալախանիի կոմիտէի երկեու անդամի եւ Կ. Կոմիտէի մի անդամի: Սրանք դուրս են գալիս, որ միանան մի այլ ֆիրմայում եղած հայերի հետ, բայց տեսնելով որ կարիք չկայ՝ գնում են քաղաք»[99]:

Բալախանիի ճավթահանքերից ու կացարաններից հայ բանվորների հեռանալը նշանակալի ազդեցություն է գործում մյուս շրջանների, մասնավորապես Ռոմանի, Արամազդ, Ադամով, Մանթաշեւ, Ռադուգա, սառչաստնիկ, Պետրով եւ այլ ընկերությունների բանվորների տրամադրվածության վրա: Բանվորները տեղեկանալով զորքի եւ ոստիկանության կողմից հայերի նկատմամբ իրականացվող զինաթափությունների ու բռնությունների մասին՝ զանգվածաբար լքում են ճավթահանքերն ու մեծ դժվարություններ հաղթահարելով՝ հասնում են Բաքու:

Ներկայացնելով այդ իրավիճակը՝ Հ. Շահրիկյանը գրում է. «Քանի հայերը դատարկում են, հեռանում, նրանց տեղը բռնում են թուրքերը, լեզգիները, կազանսկի թաթարները: Թուրքերը եւ միւս մահմեդական ամբոխը միասին հրդեհում եւ կողոպտում են ինչ որ կայ»[100]:

Հինգշաբթի օրը ճավթահանքերն արդեն ամբողջովին դատարկվել էին, մնացել էին միայն թուրք ամբոխի կողմից շրջապատված Մանթաշյան ընկերությանը պատկանող հանքավայրերը: Բալախանիի ոստիկանությանն ու զորքի հրմանատարությանը հղած բազմաթիվ դիմումներն ու օգնության աղերսները իզուր են անցնում:

Օգոստոսի 26-ին Բիբի-Էյբաթում գտնվող Մանթաշյան ընկերության ճավթահանքերի վրա հարձակվում են Մուխտարովի գործարանի թուրք բանվորները: Չնայած թուրք ավազակախմբերը վաղօրոք շատ լավ զինված ու կազմակերպված էին, բայց հանդիպելով հայ ինքնապաշտպա-

ական ուժերի դիմադրությանը եւ տալով մի քանի գոհեր եւ վիրավորներ՝ հեռանում են ընկերության տարածքից ու միանալով նավթահանքերում վխտացող հրոսակախմբերին՝ թալանում եւ Խատիսյան ընկերությանը պատկանող արհեստանոցները եւ սպանում այնտեղ գտնվող արհեստավորներին [101]:

Նույն օրը երեկոյան, ըստ «Դրօշակ»-ի տեղեկացման «Ռոմանի շրջակայքում տեղի ունեցած դէպքերից յետոյ կօզակները շրջապատեցին Մանթաշեանի, Փիթօյեանի եւ մի քանի ուրիշների նաւթահանքերը եւ առաջարկեցին հայ ազգաբնակչութեանը՝ տեղափոխուել քաղաք իրենց պաշտպանութեան տակ: Բայց նախքան առաջնորդվելը, բոլորից վերցրին զէնքերը»[102]:

Հ. Շահրիկյանի հավաստմամբ գործին միջամտել են օտար ֆիրմաների ներկայացուցիչներն ու հիւպատոսները, որոնք Բաքվի գեներալ նահանգապետին հղած բազմաթիվ բողոքներով ստիպել են, որ զորքն ու ոստիկանությունը օգնություն ցույց տան Մանթաշյանի ընկերության նավթահանքերում պաշարված բանվորներին [103]:

Օգոստոսի 27-ին նավթահանքերում այլեւս ոչ մի հայ աշխատող չէր մնացել, բոլորը տեղահանվել եւ տեղափոխվել էին քաղաք:

Թվում է, որ նավթահանքերում աշխատող հազարավոր հայերին քաղաք տեղափոխելով իշխանություններն ու զորքը դրսեւորել են հայանպաստ վերաբերմունք: Բայց իրականում այդ ամենը նավթահանքերը հայերից ազատելու քաղաքականություն էր: Նավթահանքերից հայերին տեղահանելով զորքն ու ոստիկանությունը նույն վերաբերմունքին չեն արժանացրել թուրք բանվորներին, որոնք անարգել ներխուժել են հայերին պատկանող նավթահանքերն ու բռնագրավել այդ տարածքում գտնվող ձեռնարկությունները: Իրենց գործողություններն արդարացնելու համար թիւրքերը ասել են, որ «...յետ են խլում հայերից այն հողերը, որոնք երբեմն իրենց էին պատկանում եւ որ հայերը յափշտակել են...» [104]:

Թուրքերի նպատակը հստակ էր. այրելով նավթահանքերը՝ նրանք ձգտում էին ոչ միայն ունեզրկել հայ արդյունաբերողին եւ բանվորներին, տեր դառնալ նրանց ունեցվածքին, այլեւ նպատակ ունեին թույլ չտալ, որ նրանք վերադառնան նավթահանքերն ու վերսկսեն աշխատանքները:

Թուրքական կողմի նկրտումներին համախոհ էին նաեւ օտար նավթարդյունաբերողները: Հասկանալի է, նրանց համար հաճելի չէր հայ արդյունաբերողների ներկայությունը, որոնք ի տարբերություն թուրք արդյունաբերողի, անհամեմատ ավելի լուրջ մրցակիցներ էին:

Որպեսզի արդարացնեին իրենց դիւրքորոշումը՝ նրանք պատճառաբանել են. «Քանի որ հայ աշխատաւորութեան ներկայութիւնը միշտ պիտի գրգռէ բաթարներին եւ այդպիսի դէպքեր յաճախ պիտի կրկնուեն, եթէ հայերը նորէն վերադառնան հանքերը, լաւագոյն պիտի լինի, որ հայերը, այլեւս հնարաւորութիւն չունենան նաւթահանքերը վերադառնալու մասին մտածել»[105]:

Բաքվի երկրորդ ընդհարման, հատկապես հրդեհի, հետեւանքով սարսափելի աղետի է ենթարկվել նավթաշրջանը: Օգոստոսյան դեպքերը լուսաբանող վավերագիրը ներկայացնելով այդ օրերի այնտեղ տեղի ունեցած սարսափազդու դեպքերի մանրամասները, չեն նշում նավթաշրջանի կրած նյութական վնասների չափը: Այդ բացը լրացնում են Աբ. Գյուլխանդանյանն ու Ա-Դ-ն:

Համաձայն Աբ. Գյուլխանդանյանի տվյալների, նավթաշրջանն այդ ժամանակ ունեցել է 2035 գործող նավթային բուրգեր, որոնցից այրվել են 1894-ը, փրկվել՝141-ը: Նրա հաշվարկմամբ յուրաքանչյուր բուրգ իր մեքենաներով արժեր ավելի քան 25.000 ոսկի ռուբլի: Հրդեհների հետեւանքով միայն նավթարդյունաբերողների կրած վնասը մոտավոր հաշվով կազմում էր 50-60 միլիոն ռուբլի, որին պիտի գումարել ոչնչացված բազմաթիվ գործարաններ, արհեստանոցներ, շենքեր, որոնք իրենց ընդհանուր արժեքով չէին զիջում նավթարդյունաբերողների գույքի արժեքին: Եթե այդ ամենին գումարվի բանվորների գույքի արժեքն ու խնայած դրամները, ապա պիտի հաշվել, որ ընդհանուր վնասը կազմում է 100 միլիոն դոլար [106]:

Բացի դրանից, «...աւերուած եւ հրդեհուած շրջանները տալիս էին տարեկան 338 միլիոն փութ նավթ:

Փութի միջին արժէքը հաւասար էր 18 կոպէկի: Եւ որովհետեւ մոտաւորապէս մի տարի ոչ մի աշխատանք չկատարուեցաւ, հետեւապէս պետութիւնը եւ նաւթարդիւնաբերողները զրկուեցին աւելի քան 60-70 միլիոն ոսկի ռուբլուց...»[107]:

Ըստ Ա-Դ-ի տվյալների, Բաքվի նավթային շրջանը ունեցել էր ավելի քան 2500 դեսյատին տարածություն, որից մշակված է եղել միայն 1000 դեսյատինը: Այդ հազար դեսյատին տարածքում միմյանց կողքի գործել են, «3000-ից աւելի վիշկաներ, բայց աւերող կրակը լափել եւ տեղը թողել էր միմիայն 1763 հատը»:

Հրդեհների եւ ավերվածությունների հետեւանքով իրենց գրասենյակներով հանդերձ ամբողջովին այրվել էին «Կասպիական ընկերութիւնը, Ռուսօ, Թումաեւ, Արշալոյս, Մանթաշեւ, Փիթոեւ, Միրզօեւ, Կրա-

սիլիկօվներ. Մկիքով. Արամազդ. Ադամով. Տէր Յակոբովներ. «Վոտան» գործարանները. Շիրւան. Կովկասեան. Կաւկազ. Սաուչաստնիկ. Ռադուգա. Պետրով. Բալախանեան ընկերութիւնները. իշխան Գագարին. Գալպերին եւ շատ ուրիշ ֆիրմաներ»[108]:

Իհարկե, այրված եւ ավերված նավթահորերի, գործարանների, արհեստանոցների, գրասենյակների ու շինությունների մեծ մասը պատկանում էր հայերին:

Ընդհարումների եւ նավթահանքերում բռնկված հրդեհների հետեւանքով, բնական է, որ նախեւառաջ ծանրագույն իրավիճակում էր հայտնվելու բանվորությունը, որը զրկվել էր աշխատանքից ու ապրուստի միջոցներից: Միայն Բալախանի նավթահանքերում աշխատում էին 30. 000 բանվորներ: Հազարավոր հայ բանվորներ նույնպես կորցրել են աշխատանքը եւ հայտնվել ծանրագույն կացությունում:

Դեռեւս փետրվարյան դեպքերից հետո, երբ ընդհարումները բռնկվում են նաեւ գավառներում, Բաքվում աշխատող բանվորներից շատերը մտահոգվելով իրենց ծննդավայրերի ու հարազատների ճակատագրով՝ վերադառնում էին իրենց ծննդավայրերը: Այսուհանդերձ, Բաքվի երկրորդ ընդհարումից հետո քաղաքում գտնվել են ավելի քան 25.000 հայ երիտասարդներ, որոնք աշխատելու նպատակով Բաքու էին եկել տարբեր բնակավայրերից: Գավառներում շարունկվում էին բախումները, եւ շատ ավելի նպատակահարմար ու օգտակար կլիներ, եթե Բաքվում կուտակված հազարավոր հայ երիտասարդներ մեկնեին իրեց բնակավայրերն ու զինվորագրվեին ինքնապաշտպանաւ խմբերին:

Այդ օրերին ՀՅԴ Բաքվի կենտր. կոմիտեն եւ Զինվորական մարմինը արժանվույնս գնահատելով այդ հանգամանքը, ակտիվ գործունեություն են ծավալել համոզելու նավթահանքերի այրվելու հետեւանքով անգործության մեջ հայտնված քաղաքում գտնվող հայ երիտասարդներին, որ մեկնեն գավառներն ու մասնակցեն այնտեղ ընթացող մարտերին:

Պիտի ասել, որ ՀՅԴ Բաքվի կենտր. կոմիտեի եւ Զինվորական մարմնի ծավալած գործունեությունն արգասաբեր է եղել: Հենց շնորհիվ նրանց ջանքերի նավթարդյունաբերողները վճարում են բանվորների երեք ամսվա աշխատավարձը եւ նույնիսկ գավառներ մեկնողների ու նրանց ընտանիքի անդամների համար գնում երկաթուղու տոմսեր:

«Այդ օրերին,-գրում է Աբ. Գյուլխանդանյանը.- հազարավոր հայեր լցուել էին Բագուի երկաթուղու կայարանը: Մեծ մասը իրենց ընտանիքներով էին եւ չուում էին դէպի իրենց հայրենի գաւառը, մասնակից լինելու համար ինքնապաշտպանութեան գործին:

Դէպի գաւառ, դէպի հայրենի օջախի պաշտպանութիւն,-այս էր ահա այդ օրերի Զինուորական Մարմնի նշանաբանը: Շնորհիվ այդ ոգեւորութեան, Բագուի աշխատաւոր, ձեռներէց եւ քաջ տարրերի մեծագոյն մասը թողեց Բագուն եւ անցաւ գաւառները»[109]:

Ամբողջ հազարավոր հայ երիտասարդների վերադարձը եւ զինվորագրումը ինքնապաշտպանական ուժերին մեծապես կարող էր փոխել հակամարտող ուժերի հարաբերակցությունը եւ, իհարկե, հայ-թուրքական ընդհարումների բնույթը:

Բաքվի Զինվորական մարմնի անդամներ Ա. Գյուլխանդանյանն ու Հ. Շահրիկյանը իրենց հուշագրություններում հավատացնում են, որ ընդհարումների նախօրեին ՀՅԴ «Ռևկանապատ» կենտր. կոմիտեն եւ Զինվորական մարմինը կարողացել են , ճիշտ է ոչ այնքան մեծաքանակ, մարտական խմբեր կազմավորել գրեթե բոլոր ինքնապաշտպանական շրջաններում: Նավթահանքերում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը հավաստում է, որ թեպետ ինքնապաշտպանական շրջաններում իրոք գործել են մարտական ուժեր, սակայն նրանք, այնուամենայնիվ, չեն կարողացել լիովին ապահովել հայ բանվորների ու նավթահանքերի կացարաններում բնակվող նրանց ընտանիքների անվտանգությունը:

Ինքնապաշտպանական այն շրջաններում, որտեղ ՀՅԴ կոմիտեները գործել են առավել կազմակերպված ու արդյունավետ, հայ բնակչությունը անհամեմատ ավելի քիչ է մարդկային եւ նյութական կորուստներ ունեցել:

Օրինակ, Նուխիի ՀՅԴ «Ծաղկածոր» կոմիտեն եւ Զինվորական մարմինը հենց փետրվարյան դեպքերից անմիջապես հետո ձեռնամուխ են եղել լուծելու այդ շրջանի ինքնապաշտպանության կազմակերպմանը վերաբերող խնդիրները: Զինվորական մարմինը կազմակերպել է ոչ միայն մարտական ուժեր, այլեւ որոշակի կարգ է սահմանել, որը պարտադիր է եղել հայ բնակչության համար[110]:

ՀՅԴ Ծաղկածորի շտաբը շրջանը հայտարարել է պատերազմական դրության մեջ եւ բնակչությանը ներկայացրել է հետեւյալ պայմանները.

«1. Երեկոյան ժամի 8-ից յետոյ արգելւում է փողոցներում շրջելը...

2. Արգելւում է հրացան եւ ատրճանակ կրակելը...

3. Արգելւում է ցերեկները փողոցներում խմբւելը:

4. Արգելւում է հարբեցողութիւնը:

5. ... պէտք է պատրաստ սպասել վտանգին, իսկ այն ընտանիքները, որոնց առաջարկուած է տեղափոխուել, մի ձլան եղած րոպէին տեղափոխուեն շտաբները:

6. Վերոյիշեալ պայմաններից չեղողները կենթարկուին խիստ եւ խիստ պատասխանատուութեան»[111]:

Ամենարակուսյ, Զինվորական մարմինը եւ ՀՅԴ կոմիտեները որոշակի աշխատանքներ կատարել էին ինքնապաշտպանական ուժեր կազմավորելու եւ հայ բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, սակայն հարցը, ինչը միանշանակորեն ցույց տվեց ժամանակը, չէր սահմանափակվում սոսկ զինվածությամբ ու մարտական խմբերի կազմավորմամբ: Շատ կարեւոր էր Զինվորական մարմինների կիրառած մարտավարությունը: Պիտի ասել, որ ի տարբերություն Բաքվի առաջին՝ փետրվարյան ընդհարումների, երբ Նիկոլ Դումանը անհամեմատ փոքրաքանակ ուժերով համարձակորեն դիմում էր հարձակողական գործողությունների, երկրորդ՝ օգոստոսյան բախումների ժամանակ Զինվորական մարմինը գործել է ոչ թե հարձակողական, այլ պաշտպանողական մարտավարությամբ:

Ընդգծելով, որ հրդեհված ու կողոպտված նավթահանքերի, ֆիրմաների, բնակարանների մեծ մասը պատկանում են հայերին՝ Հ. Շահրիկյանը խոստովանում է, որ այդ բոլորը կատարվել է միայն այն պատճառով «...որ հայերը նախահարձակ չեղան ոչ մի տեղ, որ հայերը ամենախիստ պաշտպանողական դիրք բռնելով փակուեցին, կտրուեցին յարաբերութիւններից, զրկուեցին միմիանց օգնութեան հնարաւորութիւնից, ջրից եւ պաշարից»[112]:

Բացի դրանից, կար եւս մի հիմնավոր պատճառ: Զինվորական մարմինը համոզված լինելով, որ բախումների վերսկսման պարագայում զորքն ու ձեռնարկատերերն անպայմանորեն հոգ կտանեն ապահովելու նավթահանքերի ու ձեռնարկությունների անվտանգությունը, այնքան էլ չեն հոգացել կազմակերպելու նրանց պաշտպանությունը: Իսկ հետեւանքն ավելի քան սարսափելի էր հատկապես հայերի համար:

Հարց է ծագում, ինչո՞ւ իշխանությունները ինչպես հարկն է համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել պաշտպանելու նավթահանքերը եւ թույլ տվել բուրք հրոսակներին այրելու բազմաթիվ նավթահորեր, գործարաններ ու տարբեր նշանակության շինություններ, երբ նավթահանքերի պաշտպանության համար վաղօրոք կենտրոնացրել էին ոստիկանական ուժեր եւ հազարավոր զինվորներ: Չէ որ այդ նույն նավթահանքերից տարեկան միլիոնավոր ռուբլիներ էին հոսում պետական գանձարան, եւ բացի դրանից մի շարք պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց թվում նաեւ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը նավթահանքերում ունեին իրենց մասնաբաժինները:

Բաքվում եւ նավթահանքերում տեղի ունեցած դեպքերը ներկայացնող սկզբնաղբյուրները, նույնիսկ ՀՅԴ կոմիտեների կազմած զեկուցագրերը, թեեւ այս հարցի պարզաբանման վերաբերյալ չեն տալիս համակողմանիորեն փաստարկված ու սպառիչ պատասխան, բայց նշում են մի շարք հանգամանքներ, որոնք թելադրում եւ ուղղորդում էին ռուս զինվորականների, հատկապես բարձրաստիճան սպայական կազմի եւ ոստիկանության վերաբերմունքն ու գործողությունները:

1. Թուրք պարագլուխների կողմից ռուս զինվորականների, հատկապես բարձրաստիճան սպայական կազմի եւ ոստիկանության կաշառված լինելու իրողությունն ու անբարոյական կեցվածքը:

Ըստ Հ. Շահրիկյանի «...ոստիկանութիւնը մեծ մասամբ այն կողմն է՝ ինչ-որ էր փետրուարեան կոտորածների ժամանակ: Սրանց մեծ մասը մահմեդականներ են կամ Նագաշիձեի կազմակերպութեան պատկանող վրացիներ, եւ մանաւանդ սպաներ եւ կազակներ, որոնք անթիւ կաշառքներ առնելով թուրքերից՝ թոյլ են տալիս մահմեդականներին ոճիրներ, բռնութիւններ գործելու...»[113]:

Իր կարծիքը հիմնավորելու համար Հ. Շահրիկյանը վկայում է նավթահանքերում կատարված հետեւյալ դեպքը. թուրքերը ծովափին կրակում են կառքով անցնող մի հայի վրա, որի մասին դեպքին ականատես պրիստավի օգնականը զեկուցում է գեներալ նահանգապետին: Միաժամանակ այդ նույն դեպքի կապակցությամբ գեներալ նահանգապետին են դիմում ոստիկանությունն ու թուրքերը եւ հայտնում, որ կրակել են ոչ թե թուրքերը, այլ առանց պատճառի իրենց վրա կրակ են տեղացել հայ զինվորները[114]:

Եթե հիմք ընդունենք վերոհիշյալ տեսակետը, ապա կարելի է եզրակացնել, որ զինվորականությանն ու ոստիկանությանն այնքան էլ չի մտահոգել նավթահանքերի օգտակարությունն ու այնտեղից պետական դրամատունը մուտք գործող տասնյակ միլիոնավոր ռուբլիները: Նրանք, ավելի գերադասելով թուրք մեծահարուստներից վերցրած կաշառքով սեփական գրպանները հարստացնելու իրողությունը, կարող էին շրջանցել նույնիսկ փոխարքային ու նահանգապետին եւ թույլ տային ու հովանավորեին բռնություններն ու անգամ զինված բախումները:

2. Հայության եւ ըստ այդմ հայերին պատկանող նավթահանքերի ու այնտեղ աշխատող հայ բանվորության նկատմամբ ցարական իշխանությունների դետրած վերաբերմունքը:

Հանրահայտ իրողություն է, որ ցարական իշխանությունների գնահատմամբ հայությունը եւ նրա ազատագրական պայքարն առաջնորդող ազգա-

ին-քաղաքական կուսակցությունները ի տարբերություն մահմեդականության, դիտվում էին որպես առավել կազմակերպված ու հեղափոխական, հետեւաբար կայսրության անվտանգության սպառնացող վտանգավոր հակապետական ուժեր. մանավանդ հեղափոխության ծավալման ժամանակ:

Եւ իզուր չէ, որ նույնիսկ ընդհատումների ավարտից հետո պետական պաշտոնյաները ջանքեր էին գործադրում, որպեսզի խոչընդոտեին հայ բանվորների վերադարձը նավթահանքեր:

Ար. Գյուլխանդանյանի գնահատմամբ պետական պաշտոնյաների կարծիքով «...հայերը կարողանում են ոչ միայն իրենք կազմակերպել, այլ եւ ապում էին իրենց հետ եւ օտար աշխատատուրեանը, որի շնորհիւ նաւթաշրջանում միշտ հնարաւորութիւն ունէին գործադուլներ անելու եւ զանազան միջոցներով ուժեղացնելու հակապետական շարժումը»[115]:

Ուշագրավ է, որ նավթահանքերի հայ բանվորության նկատմամբ իշխանությունների դրսեւորած համանման վերաբերմունքը հավանության է արժանացել ոչ միայն թուրք, այլեւ ռուս եւ այլ ազգություններին պատկանող արդյունաբերողների ու գործարարների կողմից:

«Մինչեւ պատերազմը վերջանալը,-նշում է «Դրօշակ»-ը,- թում էր թէ կառավարութիւնը վախենալով մի գուցէ Կուկասում հայկական շարժում սկսուի, գրգռեց թուրքերին հայերի դէմ, որպեսզի հայերը ժամանակ չունենային քաղաքացիական կեանքի պահանջներով զբաղել...

Հակահայկական այս արիւնոտ քաղաքականութեանը այժմ միանում են եւ օտար կապիտալիստների հայահալած դաւերը-դուրս քշել արդյունաբերական շրջանից հայ աշխատաւոր դասակարգը»[116]:

3. Հայ ինքնապաշտպանական ուժերի, հատկապես նրանց հրամանատարների խիզախությունն ու կռիվներ մղելու վարպետությունը:

«Դրօշակ»-ի եւ բազմաթիվ այլ սկզբնաղբյուրների պնդմամբ, հայության նկատմամբ իշխանությունների դրսեւորած վերաբերմունքը օգոստոսյան դեպքերից հետո ավելի վատթարագույն է եղել, նույնիսկ փետրվարյան դեպքերի համեմատ:

Համաձայն «Դրօշակ»-ի «Տեսնելով, որ զէնքի ուժով հայերի դէմ ճակատ առ ճակատ կռանգնելը դժուար է եւ այդ պարագայում գուցէ թիւրքերը աւելի են կարեւորում, տեսնելով որ կոտորածի սպառնալիքներով, մարդկային զոհերով հայերը տեղի չեն տալիս, ներկայում եւ ապագայում տնտեսապէս բայքայելու միջոցների դիմեցին, այն է՝ հրդեհը ու արդյունաբերական շրջանից արտաքսումը»[117]:

Ընդհանրացնելով 1905 թ. օգոստոսին նավթահանքերում տեղի ունեցած դեպքերն ու նրանց հետեւանքները, կարելի է ընդունել, չնայած այն իրողությանը, որ Բաքվի Զինվորական մարմնին եւ Հ.Յ.Դաշնակցության կառույցներին չէր հաջողվել ըստ ամենայնի կազմակերպել նավթահանքերում ու ճնշարկություններում աշխատող հայ բանվորության ինքնապաշտպանությունն ու լիովին ապահովել նրա անվտանգությունը, այնուամենայնիվ, եթե չլիներ հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը, իրավիճակն անկասկած կլիներ բազմիցս ավելի ծանր ու սարսափելի:

Բաքվում հայ-թուրքական թվով երրորդ ընդհարումները վերսկսվում են հոկտեմբերի 20-ին եւ շարունակվում մինչեւ հոկտեմբերի 25-ը: Ինչպես նախորդ երկու ընդհարումների ժամանակ, այս անգամ եւս նախահարձակը դարձյալ թուրքերն էին: Հարավային Կովկասում ծավալված ընդհարումների ժամանակ թուրքական կողմը իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում առաջնորդվում էին հետեւյալ մարտավարությամբ.

«1. Կաշառքով եւ այլ միջոցներով սիրաշահել ու ջերմ հարաբերություններ հաստատել պետական, զինվորական եւ ոստիկանական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

2. Վարկաբեկել ու մտացածին չինծու մեղադրանքներ վերագրել հայկական կողմին, իրենց ներկայացնել որպես ցարական իշխանությունների հավատարիմ ու նվիրված քաղաքացիներ, իսկ հայերին որպես հեղափոխականներ եւ պետության համար վտանգավոր ու անհավատարիմ տարրեր:

Նրանք այդ գործելակերպին հավատարիմ էին նաեւ Բաքվի առաջին ու երկրորդ դեպքերի ժամանակ եւ երրորդ ընդհարման նախօրեին առաջնորդվել են դարձյալ նույն մարտավարությամբ:

Եթե նախորդ ընդհարումների ժամանակ Բաքվի իշխանությունները հայերի նկատմամբ դրսեւորած իրենց վերավերմունքն արտահայտել են ոչ այնքան բացահայտ, ապա այս անգամ գործել լիովին բացահայտ, թուրքերի եւ այլ մութ ու խուլիգանական ուժերի հետ աննախընդրելի միասնական ու համերաշխ:

Ինչպես հայտնի է, 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակվել է ցարի՝ Նիկոլայ 2-րդի ստորագրած մանիֆեստը, համաձայն որի ցարական Ռուսաստանը հռչակվում էր սահմանադրական միապետություն: Բազմազգ Կայսրության միլիոնավոր բնակչությունը ցնծությամբ եւ ընդունել ցարի կողմից «շնորհած» մանիֆեստը եւ իրենց ուրախությունն ու գոհունակությունը բազմաթիվ բնակավայրերում արտահայտել են տոնախմբություններով եւ խաղաղ ցույցերով: Նույն տրամադրությունը տիրել է նաեւ Բաքվում:

Բաքվի երրորդ ընդհարումը ներկայացնող վավերագրի տեղեկությունից պարզվում է, որ ի տարբերություն կայսրության մյուս բնակավայրերի, որտեղ տոնախմբություններին մասնակցել է հիմնականում ժողովուրդը, Բաքվում ի պաշտպանություն մանիֆեստի, իշխանությունների թելադրանքով հանդես են եկել թուրքերն ու ռուս սեւհարյուրակայինները[118]:

Հայկականան կողմը, ի դեմս Դաշնակցության, թեեւ այնքան էլ խանդավառված չի եղել մանիֆեստով, ավելի ճիշտ նրան վերաբերվել է բացասաբար, բայց անցանկալի դեպքերի տեղիք չտալու պատճառով, իրեն դրսեւորել է զուսպ եւ հավասարակշռված: Համաձայնվել դիրքորոշման համար ՀՅԴ ունեցել է լուրջ փաստարկներ:

Բախումների բռնկումից մի քանի օր առաջ՝ հոկտեմբերի 16-ին Բաքվի ՌՍԴԲԿ կոմիտեն, այսինքն բոլշեւիկները գործադրել են հայտարարում եւ իրենց ձեռնարկումն արդարացնելու ու ավելի կազմակերպված բնույթ տալու նպատակով գործուն քարոզչություն են ծավալում եւ աշխատում մյուս քաղաքական կազմակերպություններին, այդ թվում Դաշնակցությանը համոզել, որ համընդհանուր գործադուլը ցույց կտա, որ հայ եւ թուրք աշխատավորությունը իշխանությունների դեմ պայքարում միասնական են ու համերաշխ:

Համաձայն վերոհիշյալ վավերագրի, ՀՅԴ չէր կարող ընդառաջ գնալ բոլշեւիկների առաջարկությանը եւ մասնակցել գործադուլներին, քանի որ արդեն գաղտնիք չէր, որ թուրքական կողմը հավատարիմ մնալով իր որդեգրած մարտավարությանը, չի մասնակցի գործադուլին եւ ռիթը կոգտագործի վարկաբեկելու հայերին, նրանց մեղադրելով, որպես հակապետական, թշնամի ու վտանգավոր տարրեր[119]:

Ավելին, քաղաքում տիրող իրավիճակը, թուրքական կողմի պահվածքը հուշում էր, որ պիտի զերծ մնալ ավելորդ չկշռադատված ու վնասակար քայլերից եւ պատրաստ լինել դիմագրավելու մոտալուտ դեպքերին:

Քանի որ համաձայն մանիֆեստի ազատություն էր շնորհում նաեւ քաղբանտարկյալներին, ժողովուրդը ոգեւորվելով այդ օրենքով, հեկտեմբերի 19-ին հավաքվում է քաղաքի Պարապետի հրապարակում ու կարմիր դրոշներ պարզած շարժվում բանտ՝ ազատելու քաղբանտարկյալներին: Հավաքին մասնակցել են քաղաքի հայ բնակիչներից շատերը, որոնք հույս են ունցել, որ բանտից ազատ կարծակվեն նաեւ գեներալ Նազաշիձեի սպանության կապակցությամբ ձերբակալված հինգ հայերը, որոնց մահապատիժ էր սպառնում: Սակայն, նրանց սպասվում էր դառը հիասթափություն: Բանտի մերձակայքում ցուցարարների վրա կրակ են

բացում պահակախմբի զինվորները եւ տասնյակ մարդիկ սպանվում են եւ վիրավորվում[120]:

Ավելի սարսափելի դեպքերը սկսվում են հաջորդ օրը՝ դեկտեմբերի 20-ին:

Ինչպես արդեն նշվել է, իշխանությունների թելադրանքով Բաքվում ի պաշտպանություն մանիֆեստի հանդես են եկել թուրքերն ու ռուս սեւհարյուրակայինները, որոնց կազմակերպած «հայրենասերների» մանիֆեստացիային միանում են նաեւ լեզգիները եւ կոզակները:

Հոկտեմբերի 20-ին «հայրենասերների» մանիֆեստացիա անվան տակ հանդես եկող ամբոխը շարժվում է քաղաքի փողոցներով եւ սկսում սանձազերծել կոտորածներ, թալանն ու ավերը:

ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր կոմիտեն դիմում է իշխանություններին եւ պահանջում միջոցներ ձեռնարկել դադարեցնելու քաղաքում տեղի ունեցող ջարդն ու ավարառությունը: Բայց ապարդյուն, սարսափազդու դեպքերը քաղաքում շարունակվում են, իսկ իշխանությունները որեւէ քայլ չեն ձեռնարկում դադարեցնելու «հայրենասերների» գործողությունները:

Ի՞նչ պիտի արվեր: Այլընտրանք չկար: ՀՅԴ «Ոսկանապատ» կենտր կոմիտեն եւ Զինվորական մարմինը հրահանգում են քաղաքի ինքնապաշտպանական ուժերին դիմել զենքի եւ անխնա կոտորել բոլորին, անգամ «...ռուսական զօրամաս, որոնք կհամարձակուէին յարձակուել հայերի վրայ...»[121]:

Բաքվի երրորդ ընդհարումը ներկայացնող սկզբնաղբյուրները նշում են, որ հայկական մարտական ուժերը մղել են ինքնապաշտպանական մարտեր, սակայն չեն ներկայացնում կռիվների մանրամասները:

Այս առումով, բերեւս միակ բացառությունը, կարելի է ասել, կազմում է Զինվորական մարմնի կենտրոնատեղերից մեկում (Բաքվի հայոց բարեգործական ընկերության «Աղբատանոց» շենքն է-Հ.Գ) տեղի ունեցած կռվի համառոտ նկարագրությունն է:

Հոկտեմբերի 24-ին թուրք ամբոխն ու կոզակները հարձակվում են այդ շենքի վրա: Թեպետ շենքում գտնվել են նաեւ կանայք եւ երեխաներ, սակայն ամբոխն ու կոզակները որեւէ ուշադրության չարժանացնելով նրանց լացին, փորձում են պայթեցնել շենքը: Շենքում գտնվել են հայ մարտիկներ, նրանց թվում Բավքի առաջին կռիվների հերոս նշանավոր Մարտիրոս Չարուխչյանն ու Շամախեցի Արտեմը, որոնց մշակած ու իրականացրած մարտավարությամբ խափանվում է հարձակվողների ծրագրած եղեռնագործությունը:

Համաձայն հայ մարտիկների մշակած մարտավարության, չեների ներսում գտնվող ուժերը բաժանվում են երեք մասի, որոնցից մեկը՝ Շամախեցի Արտեմի գլխավորած մարտախումբը մնալու էր ներսում, որպեսզի պաշտպաներ ներսում գտնվողներին, իսկ մյուսները Մարտիրոսի եւ Սենիկի գլխավորությամբ պիտի արագորեն դուրս գային չեներից ու հակառակորդի համար անսպասելի «...տարբեր կողմերից պէտք է յարձակուեին ցուցարարների եւ զօրքի վրայ...»[122]:

Հայ մարտիկների ձեռնարկած գրոհը պսակվում է լիակատար հաջողությամբ: Նրանք սրընթաց հարձակումով ջախջախում են իրենց պահարող թուրքերին ու կոզակներին եւ փրկում չեներում պատսպարվածներին անխուսափելի սպանդից[123]:

Որեւէ կասկած լինել չի կարող, որ եթե չլիներ հայ ինքնապաշտպանական ուժերի հերոսական գործողությունները, ապա թուրքական կողմը որեւէ պարագայում չէր դիմի իշխանությունների միջնորդությանը եւ խնդրելու հաշտությունը:

Երրորդ ընդհարումների ժամանակ կկրկնվում է նույնը: Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը եւ հատկապես հոկտեմբերի 24-ին Մարտիրոս Չարուխչյանի եւ Շամախեցի Արտեմի գլխավորած մարտախմբերի ճնշած տվավորիչ հաղթանակը հարկադրում են Բաքվի ճահանգապետ Ֆաղեեւին դադարեցնել թուրքերի ու ռուս սեւհարյուրակայինների կազմած «հայրենասերների» մանիֆեստացիայի կազմակերպած բափորները եւ միաժամանակ հրաման արձակել արգելելու ցույցերն ու միտինգները:

---

1. Մ. Վարանդեան. նշվ. աշխ., էջ 307:
2. Տե՛ս «Հայրենիք», ամս., 1933, թիւ 9, էջ 127:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում. 1933, թիւ 4, էջ 126-127:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, 1933, թիւ 4, էջ 128:
7. Տե՛ս նույն տեղում, էջ 128-129:
8. Նույն տեղում, 1933, թիւ 12, էջ 160:
9. Նույն տեղում:
10. Տե՛ս Հ. Գեւորգյան, «Դրու», Երեւան, 2007, էջ 20-21:
11. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 4, էջ 128:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, 1933, թիւ 7, էջ 148:
14. Նույն տեղում:

15. Նույն տեղում, թիւ 9, էջ 129-130:
16. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 2-3:
17. Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 32:
18. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 6:
19. Նույն տեղում:
20. Տե՛ս թծ. 344, գ. 9, էջ 1:
21. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 1:
22. «Դրօշակ», 1906, թիւ 9, էջ 139:
23. Նույն տեղում, էջ 140:
24. Տե՛ս նույն տեղում:
25. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 2:
26. Նույն տեղում, էջ 3:
27. Տե՛ս նույն տեղում, էջ 4:
28. «Հայրենիք», ամս., 1933, թիւ 1, էջ 144:
29. Տես նույն տեղում, 1934, թիւ 9, էջ 109:
30. Նույն տեղում:
31. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 15, 6, 7, 8, 9:
32. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 9, էջ 110:
33. Նույն տեղում:
34. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 2:
35. Տե՛ս նույն տեղում, էջ 3-4:
36. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 9, էջ 110:
37. Տե՛ս նույն տեղում:
38. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 5, էջ 2:
39. «Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 149:
40. Տե՛ս նույն տեղում:
41. «Հայրենիք», ամս., 1934, թիւ 9, էջ 111:
42. Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 11, էջ 166:
43. Նույն տեղում:
44. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 308:
45. Տե՛ս Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 33:
46. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 5:
47. Տե՛ս նույն տեղում, թծ. 344, գ. 5, էջ 6:
48. «Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 148:
49. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 5, էջ 6:
50. Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:
51. Տե՛ս «Նիւթեր...», հ. Բ, էջ 15:
52. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 96:
53. Նույն տեղում:
54. Տե՛ս Հ. Գեւորգյան, «Էջեր Հայոց Ազատամարտի», «Ազատագրական պայքարի հերոսապատումից»:

55. ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 45, թ 2:
56. «Նիւթեր...», հ. Գ., էջ 302:
57. Նույն տեղում, էջ 295:
58. «Հայրենիք», 1934, թիւ 9, էջ 9:
59. «Դրօշակ», 1905, թիւ 11, էջ 165:
60. Տե՛ս նույն տեղում:
61. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 9:
62. «Հայրենիք», ամս., 1933, թիւ 1, էջ 141:
63. Նույն տեղում,:
64. Տե՛ս նույն տեղում. , էջ 142:
65. Նույն տեղում, էջ 143:
66. Նույն տեղում, 135, թիւ 4, էջ 125:
67. Ն ույն տեղում:
68. «Հայրենիք», ամս., 1935, թիւ 4, էջ 148:
69. Նույն տեղում:
70. Նույն տեղում, 1933, թիւ 1, էջ 148-149:
71. Նույն տեղում:
72. Տե՛ս նույն տեղում:
73. «Հայրենիք», ամս., 1933, թիւ 2, էջ 151-152:
74. Նույն տեղում, էջ 153:
75. Նույն տեղում:
76. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 9:
77. Նույն տեղում, էջ 10:
78. «Դրօշակ», թիւ 11, էջ 167:
79. Նույն տեղում:
80. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, թծ. 344, գ. 4, 5, 6, 7, 8, 9:
81. Տե՛ս «Դրօշակ», թիւ 11, էջ 167:
82. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, թծ. 344, գ. 4, 5, 6, 7, 8, 9:
83. ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 8, էջ 2:
84. Նույն տեղում:
85. Տե՛ս նույն տեղում:
86. ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 6, էջ 2:
87. Նույն տեղում:
88. Նույնտողում, էջ 3:
89. ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 8, էջ 2:
90. Նույն տեղում:84. Նույն տեղում:
91. Նույն տեղում:
92. Նույն տեղում:
93. Նույն տեղում:
94. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 344, գ. 7:
95. Նույն տեղում:

96. Տե՛ս նույն տեղում, էջ 19:
97. Նույն տեղում, էջ 20:
98. Տե՛ս Նույն տեղում, էջ 21:
99. «Նիւթեր...», հ. Գ, էջ 98:
100. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 21-22:
101. Տե՛ս «Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 149:
102. Նույն տեղում:
103. ՀՅԴ ԿԱ, թծ. 324, գ. 13, էջ 21-22:
104. «Դրօշակ», 1905, թիւ 10, էջ 149:
105. «Հայրենիք», 1935, թիւ 4, էջ 122-123:
106. Նույն տեղում:
107. Նույն տեղում:
108. Ա-ԴՕ, ձշվ. աշխ., էջ 36:
109. «Հայրենիք», 1935, թիւ 5, էջ 132:
110. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 351ա, գ. 16:
111. Նույն տեղում:
112. Նույն տեղում, թծ. 324, գ. 13, էջ 23:
113. Նույն տեղում, էջ 6-7:
114. Նույն տեղում, էջ 7:
115. «Հայրենիք», ամս., 1935, թիւ 4, էջ 126:
116. «Դրօշակ», 1905, թիւ 11, էջ 166:
117. Նույն տեղում, էջ 167:
118. Տե՛ս ՀՅԴ, թծ. 344, գ. 9, էջ 12:
119. Տես նույն տեղում, էջ 12-13:
120. Նույն տեղում, էջ 13:
121. Տե՛ս նույն տեղում, էջ 14:
122. Տե՛ս նույն տեղում, էջ 15:
123. Նույն տեղում, էջ 16:

2.9. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսում ընդհարումները բռնկվում են 1905թ. նոյեմբերին, այսինքն այն ժամանակ, երբ արդեն ամիսներ շարունակ կռիվներ էին ընթանում Կովկասի գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում: Թիֆլիսում ընդհարումների համեմատաբար ուշ սկսվելը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. նախ, Թիֆլիսը Կովկասի փոխարքայի նստավայրն էր, այնտեղ էին գտնվում փոխարքայության վարչական եւ ոստիկանական գլխավոր մարմինները: Քաղաքում էին բնակվում փոխարքայության բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ընտանիքներով; Քանի որ ընդհարումներ ծավալվելու պարագայում կարող էին վտանգավոր կացութիւնում հայտնվել պաշտոնյաների ընտանիքները, ուստի թվում էր, որ հանուն իրենց անվտանգության նրանք թույլ չէին տա, որպեսզի կռիվներ բռնկվեն նաեւ Թիֆլիսում:

2. Թիֆլիսը կովկասյան ազգերի, այդ թվում նաեւ հայության մշակութային եւ կրթական հաստատությունների կենտրոնավայրն էր, ինչպես նաեւ մի շարք քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների, մասնավորապես Հ. Յ. Դաշնակցության ղեկավար մարմնի՝ ՀՅԴ Արեւելյան բյուրոյի նստավայրը:

3. Հայությունը կազմում էր Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը: Համաձայն Ա-ԴՕ-ի տվյալների. «1864 թին Թիֆլիսն ուներ 66 հազար բնակիչ, 1874թին՝ 100 հազար, 1897թին՝162 հազար, 1903 թին 210 հազար, իսկ 1905 թին այդ թիվը հասաւ արդեն 240 հազարի»[1]:

Քաղաքի ընդհանուր բնակչության բազմացմանը զուգընթաց, աճել է նաեւ հայ բնակչության թիվը: Ըստ ոստիկանության տեղեկությունների, Թիֆլիսում 1905թ. ապրում էին 84000 հայեր, 57000 ռուսներ, 55000 վրացիներ, 13000 թուրքեր[2]:

Համաձայն Ալ. Խատիսյանի, որն այդ ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխն էր, «Թիֆլիսի 15 հազար չէնքերէն 11 հազարը կը պատկանէին հայերուն. ըր բոլոր մեծ հիմնարկութիւնները՝ թատրոն, գրադարան, դրամատուն, խանութ կը պատկանէին հայերուն. ըր 300 հազար աղգաբնակչութենէն 120հազարը հայեր էին, 80 հզարը՝ վրացիներ, 70 հազարը՝ ռուսներ եւ 30 հազարը՝ այլազգիներ»[3]:

Բոլոր տվյալները վկայում են, որ այդ ժամանակ հայերը ոչ միայն կազմում էին Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը, այլեւ նրան է պատկանել քաղաքի մշակութային, կրթական, բանկերի ու այլ հաստատությունների, ինչպես նաեւ պետական պաշտոնյաների (քաղաքագլուխ, վարչության անդամներ, քաղաքային բժիշկներ) մեծագույն մասը:

Քաղաքագլխի եւ այլ կարեւորագույն պաշտոններ այդ ժամանակ ընտրովի են եղել: Համաձայն գործող օրենքի, ընտրելու իրավունք տրվում էր միայն վաճառականներին ու քաղաքում անշարժ գույք ունեցողներին: Քանի որ Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը հայերն էին, ապա քաղաքագլխի եւ մյուս պաշտոնյաների ընտրության ժամանակ, բնականաբար, ունենալով զգալի գերակշռություն՝ հաղթել են:

1870-1916 թթ. Թիֆլիսը ունեցել է 11 քաղաքագլուխներ, որոնցից իննը հայեր էին[4]:

Այս հանգամանքը,-նկատում է Ալ Խատիսյանը,-կը վիրաւորէր վրացիներու ինքնասիրութիւնը, մանաւանդ որ Թիֆլիսը՝ ըլլալով ամբողջ Կովկասի կեդրոնը՝ կարեւոր ազդակ մըն էր Թուրքիոյ եւ Պարսկաստանի յարաբերութիւններու համար: Թիֆլիսի դերը մեծ էր ամբողջ Կովկասի առեւտուրի համար»[5]:

Ի տարբերություն քաղաքի, նահանգում բնակչության հարաբերակցությունը բոլորովին այլ էր: Համաձայն «Кавказский календарь на 1905 год»-ի նահանգի բնակչությունը հասնում էր 970000-ի, որից 219000-ը հայեր էին, 113000-ը՝ թուրքեր, իսկ մեծամասնությունը՝ վրացիներ[6]:

Քաղաքում հայ բնակչության մեծամասնություն կազմելու իրողությունը այն պատրանքն էր ստեղծում, թե թուրքերը չեն համարձակվի կռիվներ սկսել Վրաստանի մայրաքաղաքում, որտեղ կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Իրոք, ընդհարումների առաջին ամիսներին նրանք աշխատում էին իրենց հանգիստ պահել՝ վախենալով, որ զինված ընդհարումները կարող են իրենց համար կործանարար հետեւանքներ ունենալ:

Իրականում ընդհարումների փորձը աներկբա մատնանշում էր, որ թուրքերը նախահարձակ էին լինում նաեւ այն վայրերում, որտեղ չէին կազմում բնակչության մեծամասնությունը: Իհարկե, Դաշնակցության համար արդեն գաղտնիք լինել չէր կարող թուրքական կողմի մարտավարությունը: Բայց կռվների ծավալման նախօրեին Թիֆլիսում տեղի են ունենում այնպիսի աղմկահարույց դեպքեր, որոնց նկատմամբ Դաշնակցությունը պիտի դրսեւորեր իր վերաբերմունքը:

Ցարական կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումը իր արձագանքն է գտնում Կովկասի քաղաքներում եւ բնականաբար նաեւ Թիֆլիսում: Կովկասում գործող հեղափոխական կազմակերպությունների խնդիրն էր պարզել հեղափոխական պայքարի դրոշը եւ կովկասյան ազգերին, անկախ նրանց ազգային ու կրոնական պատկանելիության, մասնակից դարձնել ցարիզմի դեմ մղվող պայքարին:

Ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարը, ինչպես արդեն նշվել է, Դաշնակցությունը դրդեգրել էր դեռեւս ՀՅԴ Խորհրդի կողմից ընդունված «Կովկասյան նախագծի» ընդունումից առաջ, 1904թ. նոյեմբերին Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովում, որին մասնակցել են նաեւ ռուս, լեհ, ֆին, վրաց եւ լատիշ հեղափոխական կուսակցությունները:

Ինչպիսի՞ մարտավարությամբ պիտի գործեր Հ.Յ. Դաշնակցությունը: Հայ-թուրքական ընդհարումները չթուլացող ուժգնությամբ շարունակվում էին: ՀՅԴ պիտի՞ պայքարեր երկու ճակատներում, թե՞ իր ուշադրությունն ու կարողությունը բեւեռեր կազմակերպելու ու առաջնորդելու կովկասահայության ինքնապաշտպանությունը: Պիտի ասել, որ հայության համար բախտորոշ նշանակություն ունեցող ժամանակաշրջանում Դաշնակցությունը հեղափոխական մյուս կուսակցությունների համագործակցությամբ թեեւ որոշակիորեն մասնակցել է հեղափոխական շարժմանը, բայց հաստատապես մնալով ազատագրական պայքարի դիրքերում՝ մեծ աշխատանք է ծավալել՝ կազմակերպելու ու առաջնորդելու կովկասահայության ինքնապաշտպանությունը:

Ճիշտ է, այն մտայնությունն էր տիրում, որ Թիֆիսում ազգամիջյան բախումներ չեն սկսվի, սակայն ՀՅԴ, այնուամենայնիվ, որոշակի քայլեր է ձեռնարկել կազմակերպելու քիֆլիսահայության մարտական ուժերը:

Թիֆլիսահայության ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունը Նիկոլ Դումանի եւ Ռոստոմի առաջարկությամբ ՀՅԴ Արեւելյան բյուրոյի հանձնարարությամբ ստանձնում է Արմեն Գարոն:

«Դաշնակցութեան բոլոր ակտիւ ուժերը,-գրում է Արմեն Գարոն,- զօրակոչած են գաւառներու պաշտպանութեան համար: Իսկ Թիֆլիսի ինքնապաշտպանողական գործը ինձ էր յանձնուած: Հինգ հարիւրակ ունէի Թիֆլիսի մէջ եւ հազիւ 200 կտոր զէնք մեծ ու պզտիկ»[7]:

Այդ նշանակումը պատահական չէր: Արմեն Գարոն մասնակցել էր Օտոմանյան բանկի գրավման գործողությանը եւ այդ պատճառով արդեն մեծ ճանաչում ու հեղինակություն էր ձեռք բերել:

«Արմէն Գարոյին,-գրում է նրա կենսագիրներից Ղազար Չարըգը,- յանձնուած է Թիֆլիզի հարիւր հազարուոր հայութեան ինքնապաշտպանութեան գործը: Մեծ տարողութեամբ եւ պատասխանատու գործ մը, ուր Պանքայի(Նկատի ունի Բանկ Օտոմանը-Հ.Գ.) հերոսը անգամ մը եւս հայ ժողովրդին ի սպաս պիտի դնէր, իր ռազմական եւ իմացական կարողութիւնները...»[8]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյի եւ Զինվորական մարմնի հանձնարարությամբ քաղաքի ինքնապատպանական ուժերը կազմակերպելու ու առաջնորդելու նպատակով Թիֆլիս են գալիս զենքի գործածությանը տիրապետող բազմաթիվ քաջավարժ մարտիկներ:

Նիկոլ Դումանի հրամանով Երեւանից Թիֆլիս է մեկնում բազում կռիվների մասնակից, փորձառու ռազմիկ Կոփեցի Պետոն, որը հաստատվելով քաղաքի ամենահայաշատ Ավլաբար թաղամասում, խիստ գաղտնի կազմակերպում ու մարզում է զենք կրելու ընդունակ տասնյակ երիտասարդների, որոնցից շատերը Դաշնակցության կոչով եկել էին Թիֆլիս՝ իրենց մասնակցությունը բերելու կովկասահայության ինքնապաշտպանությանը:

Արդեն ամիներ շարունակ ընթացող կռիվների փորձը հավաստում էր՝ եթե թուրքական կողմը փորձեր կռիվներ սանձազերծեր նաեւ Թիֆլիսում, ուր հայությունը կազմում էր բնակչության մեծամասնությունը, ապա անպայմանորեն կօգտագործեր սահմանամերձ շրջանների մարտական ուժերը: Նման մարտավարություն թուրք առաջնորդները կիրառում էին առանց բացառության բոլոր այն շրջաններում, ուր թուրքերը չէին կազմում բնակչության մեծամասնությունը: Անհրաժեշտ էր համապատասխան քայլեր ձեռնարկել եւ զրկել հակառակորդին նման մարտավարություն կիրառելու հնարավորությունից:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ՀՅԴ Արեւելյան բյուրոն միջոցներ է ձեռնարկում կազմակերպելու նաեւ Թիֆլիսի մերձակա հայկական բնակավայրերը, մասնավորապես Բորչալուի գավառը, ինչպես նաեւ Ղազախ-Շամշադին-Իջեւան շրջանները: ՀՅԴ Արեւելյան բյուրոյի որոշմամբ Ղազախ-Շամշադին-Իջեւան ինքնապաշտպանական շրջանի հրամանատարությունը ստանձնում է Սեւքարեցի Սաքոն: Նա իր հարուստ մարտական կենսագրությամբ հանրահայտ դեմք էր: Նրան ճանաչում ու ակնածանքով էին վերաբերվում ոչ միայն հայերը, այլեւ թուրքերը: Անկասկած նշանավոր ռազմիկի ներկայությունը ոգեշնչում էր հայությանը, իսկ թուրքերին՝ զգաստացնում ու երկյուղ ներշնչում:

Թեպետ Սաքոյի գլխավորած ինքնապաշտպանական ուժերը գործում էին Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ, բայց ընդհարումների ողջ ընթացքում սերտորեն համագործակցել են Թիֆլիսի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության հետ, քանի որ անհրաժեշտության դեպքում պիտի օգնեին ու աջակցեին միմյանց:

Ինքնապաշտպանական ուժերը, ինչես արդեն նշվել է, գավառներում, մասնավորապես Ղազախ-Շամշադին-Իջեւան ինքնապաշտպանական շրջանում, ավելի քան սահմանափակ էին: Այդ բացը կարելի էր լրացնել քրտնաջան աշխատանքով, կշռադատված ու ճկուն մարտավարություն կիրառելով: Պիտի նշել, որ ինքնապաշտպանական շրջանների հրամանատարությունը ստանձնած, ինչը մեկ անգամ եւս անգամ ապացուցեց ժամանակը, բազմափորձ ֆիդայիները կռիվներ վարելու վարպետությամբ զգալիորեն գերազանցում էին թուրք հրոսակախմբերի առաջնորդներին:

Սեւքարեցի Սաքոն կազմում է իրեն վստահված ինքնապաշտպանական շրջանի ռազմական հատակագիծը եւ այն ներկայացնում է ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ու Երեւանի նահանգի ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար Նիկոլ Դումանին [9]:

Համաձայն այդ հատակագծի, հայ մարտախմբերի կողմից ամենօրյա խիստ հսկողություն էր սահմանվում Ղազախից Շամշադին ապա նաեւ Իջեւանի բնակավայրերը միմյանց կապող կարեւորագույն նշանակություն ունեցող հաղորդակցության ուղիների վրա: Ղազախ-Շամշադին-Իջեւան տարածքը բաժանվում է երեք ինքնապաշտպանական շրջանների եւ «...յուրաքանչյիւր լիագորին (ինքնապաշտպանական շրջանի հրամանատար-Հ.Գ.), -գրում Սաքոն,- առանձին հրահանգ տուեցի. գաւառը յայտարարում եմ զինուրական դրութեան մէջ եւ երեք շրջանների մէջ գտնուած ձիաները, զէնքերը, զինամթերքները. նաեւ 87 թուից բոլոր պահեստի կրթուած զինուորները եւ քաջերը մտնում են անխտիր երեք լիագորների հրամանատարութեան եւ տրամադրութեան տակ: Այլեւս բոլոր ծառայողները, պետերը եւ բոլոր գործող անձինք իրենց զէնքերով եւ ձիերով ենթակոմիտէների հայեցողութեամբ մտնում են նոյնպէս լիագորների տրամադրութեան տակ»[10]:

Այսուհանդերձ, հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ էր զենք ու զինամթերք: Ըստ Սաքոյի կազմած տեղեկագրի, Ղազախ-Շամշադին եւ Լոռիի շրջանների մարտախմբերի մարտիկներից յուրաքանչյուրը ունեցել է ընդամենը 30-50 փամփուշտ [11]:

Այդ օրերին տարբեր բնակավայրերց Սաքոյին եւ շրջանների զինվորական լիագորներին են ներկայացել բազմաթիվ գյուղացիներ ու պահանջել զենք ու զինամթերք: Կարելի էր ժողովրդին զինել, բավարարել նրա պահանջները, եթե լինեին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Ի՞նչ պետք է արվեր:

«...Կարգադրեցի,-նշում է Սեւքարեցի Սաքոն,- անյապաղ փող ժողովել ամէն մի դիմող հասարակութիւնից յուրաքանչիւրը ըստ իւրեանց կարողութեան եւ այդ փողերը առանձին ցուցակով յանձնեցի Պ. Սմբատ Յարութիւնեանին գնալ Մեծ քաղաք(նկատի ունի Թիֆլիս-Հ.Գ.) գնելու հարկաւոր ռազմամթերքները եւ զինելու վերաբերեալ բոլոր մասերը»[12]:

Չբավարարվելով այդ ամենով, զենք ու զինամթերք ձեռք բերելու նպատակով Սեւքարեցի Սաքոյի առաջնորդած մարտախմբերը հարձակվել են նաեւ թուրքական գյուղերի վրա եւ կարողացել մի քանի տասնյակ հրացաններ ու հազարավոր փամփուշտներ վերցնել նույնիսկ գավառի պետական պաշտոնյաներից:

Շրջանների ինքնապաշտպանությունը ըստ ամենայնի կազմակերպելու համար անհրաժեշտ էին փորձառու մարտիկներ: Սեւքարեցի Սաքոն, սթափ գնահատելով շրջաններում տիրող ծանր իրավիճակը «...1905թի օգոստոս ամսին գրում է Թիֆլիս ընկերներին, խնդրում է կոփեցուն(նկատի ունի Կոփեցի Պետոյին-Հ.Գ.) ուղարկելու իրեն՝ վտանգված շրջանների մի մասի ինքնապաշտպանութեան գործերը ղեկավարելու»[13]:

Թիֆլիսում մարտական խմբեր կազմավորելուց ու մարզելուց հետո Կոփեցի Պետոն վերադառնում է Բորչալուի գավառ եւ արգասաբեր գործունեություն ծավալում հայկական բնակավայրերում, հատկապես Լոռվա գյուղերում:

Լոռիի շրջանը ուներ 49070 բնակիչ, որից 33910-ը հայերն էին, 8765-ը՝ ռուսներ, 3290-ը՝ հույներ, 1820-ը՝ թուրքեր[14]:

Գավառում խիստ կերպով զգացել էր տալիս մարտական գործողությունների բովով անցած մարտիկների պակասը: Սեւքարեցի Սաքոյի եւ Կոփեցի Պետոյի պահանջով ՀՅԴ Արեւելյան բյուրոն Թիֆլիսից վտանգված շրջաններ է գործուղում փորձառու գործիչների, որոնք հաստատվելով մարտավարական առումով առավել կարեւոր նշանակություն ունեցող բնակավայրերում՝ ձեռնամուխ են լինում ինքնապաշտպանական ուժերի կազմավորմանը:

Մի ուշագրավ հանգամանք. համաձայն Բորչալուի գավառում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների մանրամասները ներկայացնող

վավերագրի, ինքնապաշտպանական ուժերի կազմակերպման աշխատանքներին մասնակցել է նաեւ Հովհաննես Թումանյանը [15]:

Ուզում եմ գյուղում կայացած ժողովրդական հավաքում դիմելով ներկաներին՝ Հովհ. Թումանյանը ասել է.«... վտանգի տակ գտնւող հայութիւնը՝ Ձեզ, իր հայ եղբայրներին օգնութեան է կանչում եւ Լուսայ այդ քաջարի ժողովուրդը չպետք է զլանայ օգնութեան հասնելու վտանգի տակ գտնւող իր հայ եղբայրներին ու քոյրերին: Հայեր, վտանգը մեծ է եւ սպառնում է հանուր հայութեան, պետք է զինվել, պատրաստվել՝ Ձեր ֆիզիկական գոյութիւնն ու պատիւը պաշտպանելու համար: Ասում է Յովհաննես Թումանեանը, գաւառի ժողովրդի հոգեբանութեանը ծանոթ, իւր գեղեցիկ ոճով պարզում է դրութիւնը եւ հրաւիրում է լոռեցիներին զէնք ձեռք բերել ու պատրաստել...»[16]:

1905թ. օգոստոսին Բորչալուի գավառի Զինվորական մարմինը ունեցել է ընդամենը «...վստահելի հրացաններ, մոսին-բերտան 91 հատ-50 ական փամփուշտներով: Ոչ վստահելի, հին սիստեմի ամէն տեսակ զենքեր-60 հատ. շատ քիչ ռազմամթերք: Ատրճանակներ ամէն տեսակ-28 հատ, սառը զենքեր՝ սուր, դաշույն, գերանտի, եռաժանի 100-ից աւելի եւ 46 ձիեր»[17]:

Քանի որ զենքերի քանակը ավելի քան սահմանափակ էր, Զինվորական մարմինը մարտական խմբերում ընդգրկում է ֆիզիկապես ուժեղ, մարտնչելու վճռակամութեամբ օժտված երիտասարդների: Հակառակորդի հարձակման դեպքում բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով գյուղերի մերձակայքում գյուղացիների ուժերով կառուցվում են պաշտպանական ամուր հենակետեր ու խրամատներ:

Պիտի ասել, որ Սեւքարեցի Սաքոյի գլխավորած Զինվորական մարմինը կարճ ժամանակահատվածում կարողանում է Զիֆոնի աջակցությամբ ձեռք բերել զգալի քանակությամբ զենք ու զինամթերք ու գրեթե բոլոր գյուղերում կազմակերպել մարտական խմբեր[18]:

Զինվորական մարմինը զուգահեռաբար նախապատրաստական լուրջ աշխատանքներ էր իրականացնում նաեւ Թիֆլիսում: Արմեն Գարոն թեպետ հանրահայտ դեմք էր, բայց չուներ կռիվներ վարելու բավարար փորձառություն: Այդ պատճառով բիֆլիսահայության ինքնապաշտպանությունն առավելագույնս ամրապնդելու նպատակով, Կոփեցի Պետոյի գավառ մեկնելուց հետո, քաղաքի Հավլաբար թաղում կենտրոնացած մարտական ուժերի հրամանատարությունը ստանձնում է հայ ազատագրական պայքարի անվանի գործիչ, բազում կռիվների մասնակից Տուրքախը, որը իր հետ Թիֆլիս է բերում «...իր պատ-

րաստած անձնազոհ հայդուկները, որոնք իրենց փորձառու հրամանատարի հետ մեռնելու պատրաստ են»[19]:

Հ.Յ.Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը մատնանշում է, որ նույնիսկ այն օրերին, երբ ջարդարար սուրը սպառնում էր կովկասահայությանը, դաշնակցության շարքերում կային այնպիսի գործիչներ, որոնք ձգտում էին կուսակցության գործունեությունը նպատակաուղղել ի շահ կայսրությունում ծավալվող հեղափոխության:

Ռուսաստանում տեղի ունեցող գործադուլներն ու զանգվածային բողոքի ցույցերն ու հատկապես հոկտեմբերի 17-ին ցարի ստորագրած սահմանադրակ մանիֆեստը ոգեւորել ու հակացարական պայքարի տրամադրություններ էր հաղորդել Թիֆլիսի հայ եւ այլ ազգի բնակչությանը:

Անդրադառնալով հոկտեմբերի 17-ի սահմանադրական մանիֆեստի հռչակման հետեւաքով բիֆլիսահայության մեջ առաջացած խանդավառությանը՝ Արմեն Գարոն գրում է. «...փողոցը լիքն էր բազմութեամբ, եւ ամէն քայլափոխի ճառախոսողներու կը հանդիպէինք. մէկը միւսէն աւելի կրակոտ խօսքերով կը փորձէին ժողովուրդը գրգռել, մղելով զայն դէպի ծայրահեղ քայլեր...Ծափերով եւ հուռռաներով գինովցած ամբոխը կը պահանջէր կախաղաններ սարքել հրապարակներուն վրայ եւ կախաղան բարձրացնել Փոխարքայէն սկսած բոլոր ցարական պաշտօնեաները»[20]:

Հոկտեմբերի 17-ին սահմանադրակ մանիֆեստը ոգեւորել եւ հակացարակ պայքարի տրամադրությոնն էր հաղորել ոչ միայն Անդրկովկասում գործող քաղաքական կուսակցություններին, այլ եւ Դաշնակցության մի շարք գործիչների: Պիտի ասել, որ այդ ժամանակ Դաշնակցությունն իր կազմակերպական եւ հատկապես մարտական կառույցներով ավելի հզոր էր եւ ազդեցիկ, քան մյուս քաղաքական կուսակցությունները: Կարեւորելով նաեւ այդ իրողությունը՝ ռուս եւ վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները ջանքեր էին գործադրում համառուսական հեղափոխական շարժման մեջ ընդգրկել նաեւ Դաշնակցությանն ու բիֆլիսահայությանը: Իսկ այդ օրերին Բաքվում, Երեւանում եւ Նախիջեւանում թուրքական հրոսակախմբերն արդեն փորձել էին իրականացնել հայկակական կոտորածներ, իսկ հայաբնակ մյուս վայրերից, մասնավորապես Գանձակից եւ Ղարաբաղից, պարբերաբար Թիֆլիս էին հասնում տագնապալի լուրեր:

Դաշնակցության համար արդեն որեւէ գաղտնիք լինել չէր կարող, որ ընդհարումները տարածվելով ու խորանալով, վաղ թե ուշ կբռնկվեն նաեւ Թիֆլիսում: Այսուհանդերձ, փոքր-ինչ անհասկանալի է այդ օրե-

րին Դաշնակցության գործունեության ուղղվածությունը: Պատրաստվելով ինքնապաշտպանության, ՀՅԴ բազմիցս տեսնելով եւ համոզվելով ցարիզմի հակահայ տրամադրվածությունն ու ձեռնարկումները, զուգահեռաբար մյուս կուսակցությունների համագործակցությամբ գործուն կերպով մասնակցում է իշխանությունների դեմ ուղղված բողոքի ցույցերի եւ գործադուլների կազմակերպմանն աշխատանքներին:

Նոյեմբերին, Կովկասի մի քանի քաղաքներում, այդ թվում նաեւ Թիֆլիսում տեղի են ունենում, Արմեն Գարոյի գնահատմամբ «Նոյեմբերեան մեծ գործադուլները», որոնց հիմնական կազմակերպիչներից մեկը եղել է Դաշնակցությունը [21]:

Ավելին, թիֆլիսահայության համար բախտորոշ նշանակություն ունեցող ժամանակում, հեղափոխական շարժմանը իրենց մասնակցությունն ու անելիքները որոշելու նպատակով, ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեն ժողով է գումարում եւ ընդունում հայության շահերին ու կացությանը բոլորովին չհամապատասխանող որոշում:

«Ժողովի մեծամասնութիւնը,-նշում է Արմեն Գարոն,-եկաւ այն եզրակացութեան, թէ պէտք է Մետեխի բանտին վրայ յարձակուիլ եւ բոլոր քաղաքական բանտարկեալները ազատել: Չէ որ Ռուսաստանի զանազան քաղաքներէն լուրեր կային, թէ նոյնանման բաներ էին կատարուած, եւ մենք՝ Դաշնակցականներս ինչո՞վ էինք անոնցմէ պակաս»[22]:

Այդ օրերին բնակչությանը սարսափի մատնելու ու նրան հակացարական ելույթներին մասնակցելուց հեռու պահելու նպատակով իշխանությունները լուրեր էին տարածում, որ ամենադաժան միջոցներով կոչնչացնեն բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն մասնակցել խռովություններին: Ավելին, իրենց սպառնալիքներն ավելի ծանրակշիռ ու սարսափազդու դարձնելու նպատակով իշխանության ներկայացուցիչները

հայտարարում էին, որ շուտով Թիֆլիս է ժամանելու 40000 զինվորներից բաղկացած պատժիչ զորաբանակը [23]:

Արմեն Գարոն, որպես Թիֆլիսի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, սթափ գնահատելով Մետեխի բանտի վրա հարձակում գործելու հետեւանքով իշխանությունների կողմից քիֆլիսահայությանը սպառնացող վտանգը, կտրուկ կերպով մերժում է զինվորներ տրամադրել իր իսկ արտահայտությամբ նման «թեթեւամիտ ձեռնարկի» իրականացմանը:

Շնորհիվ Արմեն Գարոյի եւ նրա դիրքորոշումը պաշտպանող դաշնակցական գործիչների կշռադատված գործողությունների, ձախողվում է Դաշնակցությանը համառուսական շարժման մեջ ներքաշելու

քաղաքական կուսակցությունների ու հեղափոխության արձագանքներով իանդդավառված դաշնակցական մի շարք գործիչների գործադրած ջանքերը: Թեեւ ինքնապաշտպանության կազմակերպումը եղել եւ մնում էր ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեի գործունեության առաջնահերթ խնդիրը, բայց դա չի նշանակում, որ դաշնակցությունը ամբողջովին հրաժարվում է հակացարական պայքարին մասնակցելուց: Ցարիզմի դեմ մղվող քաղաքական պայքարին Դաշնակցությունն առավել ակտիվորեն մասնակցում է ընդհարումների ավարտից հետո, հատկապես Պետական դումայի ընտրությունների նախօրեին:

«Քաղաքացիներ» վերնագրած ուղերձում(1906, ապրիլի 21), ՀՅԴ - Թիֆլիսի կենտր. կոմիտեն, քննադատելով ցարիզմի հակաժողովրդական քաղաքականությունը, քաղաքացիներին կոչ է անում «...քանի որ սպիտակ տերրորը թագաւորում է ամենուրեք, քանի որ կառաւարութիւնը գումարում է այդ դուման որպեսզի Եւրոպայում վերանորոգէ իր կորցրած վարկը, իսկ երկրում հանգստացնէ մտքերը, բոլոր մտածող ու ազնիւ մարդիկ պէտք է հեռու պահեն իրենց որեւէ մասնակցութիւնից»[24]:

Թիֆլիսահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում իր մասնակցությունն է ունեցել նաեւ Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը: Հնչակյանները նույնպես կազմավորել են մարտական խմբեր եւ այդ օրերին դաշնակցականների հետ որեւէ լուրջ տարաձայնություն չեն ունեցել:

Քանի որ հիշյալ ժամանակահատվածում կայսրության տարածքում ծավալվող հեղափոխական շարժման հետեւանքով, ռուս քաղաքական կուսակցությունների գործունեությունը գտնվում էր հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում, այդ պատառով նույն կարգավիճակում էին գտնվում նաեւ Հ.Յ. Դաշնակցություն ու Ս.Դ. Հնչակյան կուսակցությունները:

Կովկասի փոխարքայության ոստիկանական ծառայության կազմած տեղեկագրերը պարունակում են տեղեկություններ նաեւ Հ.Յ. Դաշնակցություն ու Ս.Դ. Հնչակյան կուսակցությունների գործունեության վերաբերյալ:

Տեղեկագրերից մեկում, կազմողները ներկայացնելով հայ ազգային կուսակցությունների համառոտ նկարագիրն ու նրանց փոխհարաբերությունը՝ ընդգծում են, որ մինչեւ վերջին ժամանակները, այն է՝ հայ-թուրքական ընդհարումների բռնկումը, «Դաշնակցություն»-ը եւ «Հնչակ»-ը միմյանց նկատմամբ ունեին թշնամական հարաբերություններ: Սակայն, իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ Կովկասում

բռնկվում են հայ-թուրքական կռիվները: Այդ հանգամանք հարկադրում է հայ հեղափոխական կազմակերպություններին իրեց ուժերի զգալի մասը կենտրոնացնել ու նպատակաուղղել ոչ թե իրենց ծրագրային խնդիրների կենսագործմանը, այլ ազգակիցների ինքնապաշտպանության կազմակերպմանը [25]:

«Մեր ունեցած տեղեկությամբ,-ընդգծում է տեղեկագիրը,-սույն տարվա հոկտեմբերին, «Դաշնակցություն»-ը եւ «Հնչակ»-ը միմյանց միջեւ հաշտություն են կայացրել» [26]:

Թիֆլիսում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ տեղեկագրի ներկայացրած տվյալները Հնչակյան եւ Դաշնակցություն կուսակցությունների փոխհարաբերության մասին, իրոք համապատասխանում է իրականության: Ճիշտ է, տվյալ ժամանակահատվածում Հ.Յ. Դաշնակցությունը իր կազմակերպական կառույցներով, մարտական ուժերով եւ ժողովրդի մեջ ունեցած հեղինակությամբ ավելի ուժեղ էր ու ազդեցիկ, այնուամենայնիվ, հնչակյաններն ու նույնպես իրենց կարողությունների ու հնարավորությունների սահմաններում մասնացել են կովկասահայության, մասնավորապես Թիֆլիսի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Քանի որ Թիֆլիսում քաոսային, վտանգավոր եւ անկառավարելի իրավիճակ էր տիրում, իսկ բնակչությունը պարբերաբար տարածվող սարսափազդու լուրերից անհանգիստ վիճակում էր գտնվում, ուստի Հնչակյան կուսակցության մարտական խորհուրդը «...քաղաքի բոլոր կէտերում պահակախմբեր էր նշանակել-աւելացնելով թէ խուզարկու եւ թէ քոռւցիկ խմբերի թիւը» [27]:

Քաղաքում բնակչությանը ահաբեկելու նպատակով սարսափազդու եւ սադրիչ լուրեր տարածողները եղել են փոխարքայության հատուկ ծառայությունների գործակալները, որոնք շրջելով քաղաքի փողոցներով՝ անհարգալից ու վիրավորական արտահայտություններ են արել դաշնակցականների ու հնչակյանների հասցեին: Բացի հատուկ ծառայությունների գործակալներից, քաղաքում ավելի հաճախակի են կրկնվում կողոպուտի ու մարդկանց վրա հարձակվելու ու նրանց թալանելու դեպքերը:

Քաղաքի հայ բնակչության հանգիստը ապահովելու եւ սադրիչ գործողություններ կանխելու նպատակով, հնչակյանների մարտական խմբերը քաղային պահակախմբերի հետ միասին գիշեր ու ցերեկ պարեկություն են արել քաղաքի փողոցներում:

«Թիֆլիզի վերջին դեպքերը (Թռուցիկ նօթեր)» խորագիրը կրող գրությունում (13 դեկտեմբերի 1905 թ.), ներկայացնելով այդ օրերին

Թիֆլիսում տիրող իրավիճակն ու իրենց ձեռնարկած քայլերը, գրության հեղինակները նշում են, որ գիշերային պարեկության ժամանակ «Հնչակյան կուսակցության խուզարկու խումբը վերջին օրերս ձերբակալել է մի շարք մարդկանց, որոնք զբաղուելիս են եղել կողոպտուած իրեր գնելով կամ թաքցնելով» [28]:

Անցանկալի դեպքերը կանխելու, թալանչիությամբ զբաղվողներին զգաստացնելու նպատակով խուզարկու խումբը հայտարարում է, որ խիստ պատասխանատվության կենթարկվեն ոչ միայն կողոպուտի մասնակիցները, այլ նաեւ նրանք, ովքեր իմանալով կողոպտված իրերի տեղը, այդ մասին ժամանակին չեն տեղեկացրել Հնչակյան խուզարկու խմբին կամ զինվորական խորհրդին:

Պատրաստվելով ինքնապաշտպանության՝ հայ ազգային-քաղաքական կուսակցությունները ընդհարումները կանխելու եւ խաղաղություն հաստատելու նպատակով, այնուամենայնիվ, փորձել են ձեռնարկել որոշակի քայլեր: Ընդհարումների նախօրեին ՀՅԴ խաղաղություն հաստատելու կոչով բազմիցս դիմել է ժողովրդին ու մահմեդականությանը: Խաղաղություն հաստատելու նկատառումով Դաշնակցությունը բանակցում է քաղաքական կազմակերպությունների հետ: Նոյեմբերի 21-ին կայանում է ՀՅԴ Կենտր. կոմիտեի անդամների եւ ՌՍԴԲԿ - Թիֆլիսյան կոմիտեների, ապա նաեւ քաղաքի թուրք բնակչության ներկայացուցիչների հանդիպում-խորհրդակցությունը:

Ըստ Ալ. Խատիսյանի «Ընդհանուր իրարանցումին մէջ, տեղի ունեցաւ յեղափոխական կուսակցութեանց մարմիններու խառն ժողով, որուն կը մասնակցէին վրացական Սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը(այն ժամանակ ռուսական կուսակցութեան հատուած մը միայն), Հ. Յ. Դաշնակցութիւնը, Էս-Էրներու կուսակցութիւնը եւ վրաց ֆեդերալիստները» [29]:

Ժողովը ընդունելով, որ քաղաքում յուրաքանչյուր պահի կարող է աղետ բռնկվել, փոխանակ կշռադատված վճիռներ կայացներ ու վճռական քայլր ձեռնարկեր կանխելու աղետը, կայացնում է մի տարօրինակ որոշում, այն է «...ատոր (նկատի ունի աղետը-Հ.Գ.) առաջքը առնելու միակ միջոցն է գիտել վրացի բանուորները: Ժողովին հրավիրուեցաւ ոստիկանապետ Մարտիրովը, որուն յանձնարարուեցաւ տեսակցել փոխարքային հետ, զեկուցել անոր, որ վրացի բանուորները պատրաստ են իրենց վրայ առնել կարգի պաշտպանութիւնը՝ պայմանաւ որ պետական պահեստներէն իրենց յանձնուին 600 հրացան» [30]:

Խաղաղություն հաստատելու հարցում ՀՅԴ Կենտր. կոմիտեի եւ ՌՍԴԲԿ Թիֆլիսյան կոմիտեների ներկայացուցիչները համաձայնվում

են համագործակցել ու միջոցներ ձեռնարկել քաղաքում պահպանելու խաղաղությունը: Իսկ քաղաքի հայ եւ թուրք բնակչության ներկայացուցիչների հանդիպման ժամանակ երկուստեք խոստացել են, որ հետայսու իրենց կողմից հարձակում չի լինելու: Ավելին, տեղի ունեցած բախումների ու անցանկալի դեպքերի պատճառներն ուսումնասիրելու ու քննելու նպատակով որոշում են ստեղծել հանձնախումբ եւ ուղարկել փոխարքայի մոտ: Հանձնախմբի անդամները փոխարքային պիտի ներկայացնեին քաղաքում տիրող իրական կացությունն ու նրան խնդրեին, որպեսզի իշխանությունները համապատասխան միջոցներ ձեռնարկեին վնասազերծելու քաղաքին սպառնացող վտանգը[31]:

«Փոխարքան,-գրում է այդ հանձնաժողովի անդամ Ալ. Խատիսյանը,-մեզ ընդունեց, խոստացավ իր աջակցութիւնը... Փոխարքան պալատ կանչեց զօրքերու հրամանատարը եւ նահանգապետը: Վերջինս հաստատեց, որ կացութիւնը ծանր է, իսկ զօրքերու հրամանատարը յայտարարեց, որ ոչ մէկ վստահութիւն ունի իր 8 հազար հոգիէ բաղկացած բանակին վրայ»[32]:

Փոխարքա Վորոնցով-Դաշկովը ընդունում է նահանգապետի ու զորքերի հրամանատրի առաջարկությունը եւ կարգադրում, ըստ Ալ. Խատիսյանի հավաստման, 600 հրացան հանձնել Թիֆլիսի բանվորներին, որոնք պիտի օգնեին կարգ ու կանոն հաստատելու քաղաքում[33]:

Ալ. Խատիսյանը խոստովանում է, որ վրաց սոցիալ-դեմոկրատներին ու բանվորներին 600 հրացան տրամադրելը կատարվել է նաեւ իր համաձայնությամբ եւ խորհրդով: Ավելին, «Ես,-գրում է Ալ. Խատիսյանը,-վստահեցուցի Փոխարքային, որ այդ միջոցը(նկատի ունի վրաց սոցիալ-դեմոկրատներին ու բանվորներին 600 հրացան հանձնելը-Հ. Գ.) լաւագոյնն է՝ չարիքն առաջ առնելու համար... Փոխարքան կանչեց զինուորական պահեստի պետը եւ կարգադրեց 600 հրացան յանձնել Թիֆլիսի բանուորներուն, ի զարմանս զինուորական եւ քաղաքացիական իշխանաւորներուն»[34]:

Ըստ «Արշալոյս»-ի, փոխարքայի հրամանով վրաց մենշեւիկներին հանձնում են ոչ թե 500 կամ 600 հրացան, այլ «...1.200 հրացան իրենց փամփուշտներով: Հրամանը կատարվում է հէնց նոյն գիշերը... Կազմակերպում են «պրուժինայի» խմբեր, որոնք եւ սպիտակ դրօշակներով անցնում են փողոցից-փողոց, դիրքից-դիրք, ամեն տեղ աշխատելով խաղաղար դեր կատարել»[35]:

Այդ նոյն զեկուցագրում փոխարքա Վորոնցով-Դաշկովը կայսրին ներկայացնելով Կովկասում տիրող իրավիճակը, անդրադառնում է

նաեւ սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը զենք տրամադրելու իրողության պարզաբանմանը:

Զեկուցագրում փոխարքան նախ հայտնում է, որ նոյեմբերի 18-ին տեղական իշխանությունների համար անսպասելի, քաղաքում բռնկվում են հայ- թուրքական բախումներ, որոնք առավել դաժան բնույթ են ստացել շնորհիվ հարեւան գյուղերից քաղաք ներխուժած երկու ազգերի զինված խմբերի, մոտավորապես 6500 զինված մարդիկ:

Իր ընդունած որոշման անհրաժեշտությունը հիմնավորելու համար, փոխարքան՝ կոմս Վորոնցով-Դաշկովը որպես հիմնարար փաստարկ, ընդգծում է երկու հանգամանք.

1. Քաղաք ներխուժած 6500 զինված մարդկանց բռնի զինաթափումը անհնարին էր, քանի որ «...վոստիկանութիւնը գործադուլ արեց, իսկ զորքերը հարկադրված էին պահպանել քաղաքը գլխաւորաբար Բորչալվի գաւառի կողմից եկող զինված թուրք խմբերից...»[36]:

2. Քաղաքի նեղլիկ փողոցները հազարավոր հայ եւ թուրք զինված մարդկանցով բռնված լինելու պատճառով քաղաքում ստեղծվել էր չափազանց վտանգավոր ու պայթունավտանգ իրավիճակ: Քանի որ նման պայմաններում զորքի ու ոստիկանության գործողությունները դարձել էին անհնարին, ուստի «...ես վորոշեցի 500 հրացան բաց թողնել մաքուր սոցիալ-դեմոկրատական(մենշեւիկ) բանւորական կուսակցութեանը, որը հանձն առաւ յետ պահելով իր սկզբունքից՝ չօգտագործել այդ զենքը կուսակցական նպատակներ հետապնդելու համար, օժանդակել հայերի եւ մուսուլմանների խաղաղեցմանը...»[37]:

Հարց է ծագում, եթե քաղաքում գտնվող 8000 թվակազմ ունեցող բանակն ու դրան գումարած նաեւ ոստիկանությունը ի զորու չէին կանխել աղետն ու խաղաղ իրավիճակ հաստատել, ապա ի՞նչ կարող էին անել վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարությամբ գործող 500 կամ 600 բանվորները, անգամ զենքեր ստանալու պարագայում: Ի՞նչ պիտի անեին նրանք: Չէ որ գրեթե մշտապես նախահարձակ էր լինում թուրքականն կողմը: Իսկ դա հանրահայտ իրողություն էր, այդ դեպքում վրացի բանվորները պիտի կրակ բացեին թուրք զինյալների վրա ու թույլ չտային նրանց ներխուժելու հայկական թաղեր:

Չնայած Դաշնակցության, ինչպես նաեւ հնչակյանների ձեռնարկած քայլերին, նոյեմբերի 22-ին՝ երկուշաբթի օրը, Թիֆլիսում բախումները սկսվում են եւ ինչպես նախորդ բոլոր դեպքերում, այս անգամ եւս - նախահարձակը թուրքերն էին: Այդ օրը Թիֆլիսի քաղաքային տան մեջ դարձյալ հանդիպում էին քաղաքական կուսակցությունների եւ քաղա-

քային վարչության ներկայացուցիչները: Ժողովում հանդիպման մասնակիցները քննարկել են ժողովրդական միլիցիա կազմավորելու հարցը: Դեռ որոշում չկայացրած, թուրքական կողմից ժողովականներին է ներկայանում նրանց ներկայացուցիչը եւ հայտնում հետեւյալը. «Ես գալիս եմ թուրքերի թաղից, այնտեղ մեծ յուզմունք եւ երկիւղ է տիրում: Հայերի վերաբերմունքը անտանելի են, մեզ խուզարկում են, անպատւում, սպառնում: Ես թուրքերի կողմից յայտնում եմ ձեզ, որպեսզի իմանաք եւ ապագայում մեզ չմեղադրէք...»[38]:

Թուրքերի կողմից դա վաղօրոք ծրագրված դիվանագիտական քայլ էր: Նրանք մի քանի ժամ անց սրդեն պիտի սկսեին հարձակումը եւ իրենց գործողություններն արդարացնելու համար նման հայտարարությամբ փորձում էին ժողովականներին հավատացնել, որ եթե բռնկվեին զինված բախումները, ապա դա կատարվելու է հայկական կողմի անտանելի վերաբերմունքի պատճառով:

Ժողովականների եւ անգամ ժողովի մասնակից Թիֆլիսի քաղաքագլխի համար որեւէ գաղտնիք չէր հայկական կողմի խաղասիրական տրամադրվածությունը: Դիմելով թուրք լրաբերին՝ քաղաքագլուխն ու ժողովի մասնակիցները նշում են. «Իզուր է ձեր վրդովմունքն ու երկիւղը... Այստեղի հայերը դէպի Ձեզ թշնամական ոչ մի նպատակ չունեն. պատահած մանր-մունր դէպքերը աւելի շուտ խուլիգանների գործն է, քան հայերի...

Գնացէք եւ հանգստացրէք ձերոնց...»[39]:

Ժողովականները լուրջ ուշադրություն չեն դարձնում թուրքի ասածներին եւ հանգիստ շարունակում են խորհրդակցությունը, իսկ հաշված ժամեր անց թուրք հրոսակախմբերը սկսելու էին համազարկեր տեղալ հայկական թաղերի վրա: Նրանց ոգեշնչել ու մարտական տրամադրություն էին հաղորդել նախօրեին՝ նոյեմբերի 22-ին, Գանձակում իրենց հայրենակիցների ձեռնարկած հարձակողական գործողություններն ու կատարած սպանությունները եւ թալանը: Քանի որ թուրքերը կազմում էին քաղաքի բնակչության փոքրամասնությունը եւ շատ լավ հասկանում էին, որ միմիայն իրենց ուժերով ի զորու չէին քաղաքում հասնելու լուրջ հաջողությունների, ուստի հայ բնակչությանը սարսափի մատնելու նպատակով, դիտավորյալ լուրեր էին տարածում, որ Բորչալու գավառից Թիֆլիսի հայ բնակչության վրա հարձակվելու էին հազարավոր թուրք զինյալներ:

«Կըսէին,-գրում է Ալ. Խատիսյանը,-որ թալանի տենչը կը մղէ զիրենք (նկատի ունի Բորչալուի թուրքերին-Հ.Գ.) քաղաք: Թիֆլիսը կը վախնար. իսկ իշխանութիւնը կը տատանէր»[40]:

Թիֆլիսի ինքնապաշտպանական մարտերը գուտ մարտավարական առումով կարելի է բաժանել երկու շրջանի. առաջին շրջանը՝ նոյեմբերի 22-ից մինչեւ նոյեմբերի 26-ը, իսկ երկրորդ շրջանը՝ նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը:

Առաջին շրջանում թուրքերը սկսում են կռիվը, բայց հարձակում չեն ձեռնարկում: Համաձայն «Արշալույս»-ի տվյալների, նոյեմբերի 22-ին երեկոյան ժամը 8-ին թուրքական թաղի կողմից թուրքերը միահամուռ կրակ են տեղում հայկական թաղերի ուղղությամբ:

«Երէկ,-նշում է Արշալոյսը,-երեկոյեան ժամը 8-ին յանկարծակի սկսուեց իրարանցում: Լսուեց միահամուռ հրացանաձգութիւն թուրքական թաղի կողմից եւ իսկոյն ամեն ինչ իրար խառնուեց: Շատերը փախուստի դիմեցին, կան սպանուածներ...»[41]:

Հրացանաձգությունը շարունակվել է նաեւ հաջորդ օրը: Նոյեմբերի 22-23-ին կատարված հրացանաձգության հետեւանքով սպանվում են 2-3 եւ վիրավորվում 4-5 հոգի:

Կայսր Նիկոլայ 2-րդին ներկայացրած վերոհիշյալ զեկուցագրում, ներկայացնելով նոյեմբերի 22-ին Թիֆլիսում տեղի ունեցած դեպքերը՝ փոխարքան նշում է. «...22-ի գիշերից սկսած քաղաքի ասիական մասում դաժան հրաձգություն էր կատարվում հայերի յեվ թուրքերի միջեվ, վորից ավելի տուժեցին վերջիններս՝ շնորհիւ հայկական մասի լեռնային դիրքի»[42]:

Հաջորդ օրը փոխարքայի հրամանով, սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչների առաջնորդությամբ, բանվորներից կազմված խմբերը, զինված փոխարքայի կարգադրությամբ ստացած հրացաններով, քաղաքում խաղաղ կարգավիճակ հաստատելու նպատակով, դուրս են գալիս փողոց:

Խաղաղ իրավիճակը շարունակվել է ընդամենը երկու օր: Համոզվելով, որ իրենց գործողություններին չէին կարող խոչընդոտել ոչ զորքը եւ առավել եւս բանվորներց կազմված «խաղաղապահ» ուժերը, գավառից քաղաք ներխուժած թուրք զինյալները տեղի թուրքերի համագործակցությամբ վերսկսում են հարձակումը հայկական թաղերի վրա:

Հայ ինքնապաշտպանական ուժերի համար թուրքական կողմի ձեռնարկումներն արդեն չէին կարող անակնկալ լինել: Թուրքերի դիրքերից հայկական թաղերի վրա տեղացող կրակին հայ մարտիկները պատասխանում են ավելի ուժգին համազարկերով:

Զեկուցագրում ներկայացնելով նոյեմբերի 22-ին հաջորդած օրերին քաղաքում տեղի ունեցած դեպքերը՝ փոխարքան հայտնում է.

«Յերկու եւ կես որ հրաձգություն չեղավ հայերի յեվ թուրքերի միջեվ: Բայց այնուհետեվ թուրքերը չհամբերեցին յեվ հարձակվեցին այդ պաշտպանության վրա եվ սպանվածներ ու վիրավորներ տալով նահանջեց առաջավոր դիրքերից...»[43]:

Այս դեպքերից հետո, մինչեւ նոյեմբերի 26-ը, հակամարտող կողմերի մարտական ուժերը, ձեռնպահ մնալով հակառակորդի դիրքերի վրա գրոհներ ձեռնարկելուց, բավարարվել են միայն հրացանաձգությամբ:

Պիտի ասել, որ Թիֆլիսի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ հայկական մարտական ուժերի հրամանատարության կիրառած մարտավարությունը եղել է համակողմանիորեն կշռադատված եւ արդյունավետ: Նախ, քաղաքի հայկական թաղերի անվտանգությունը առավելագույնս ապահովելու նպատակով կառուցվել են բազմաշերտ պաշտպանական գոտիներ, որտեղ մշտապես հերթապահել են մարտական խմբերը: Նույն օրը՝ նոյեմբերի 22-ի եւ լույս 23- գիշերը քաղաքի յուրաքանչյուր հայկական թաղում, համաձայն վաղօրոք մշակած մարտավարության, մշտարթուն Ա. «...կանգնած էին յեղափոխական զինուորները եւ կամաւորները: Ամէն տեղ նկատելի էր ինքնապաշտպանութեան պատրաստի ոյժը...»[44]:

Բ. Կատարվել է մարտական ուժերի վերադասավորում: Նկատի ունենալով, որ կռիվները սկսվելու դեպքում հակառակորդը նախ եւ առաջ կփորձի հարձակում ձեռնարկել քաղաքի հայկական ամենամեծ թաղի՝ Հավլաբարի վրա, Զինվորական մարմինը ինքնապաշտպանական ուժերը բաժանում է երկու հիմնական մասի: Մի մասը Տուրբախի գլխավորությամբ կենտրոնանում է Հավլաբարում, իսկ մյուս մասը Արմեն Գարոյի հրամանատարությամբ Քուռ գետի աջ ափին: Եթե թուրք հրոսակախմբերը փորձեին ներխուժել Հավլաբար եւ հայկական մյուս թաղերը, ապա կհայտնվեին Տուրբախի եւ Արմեն Գարոյի գլխավորած մարտախմբերի խաչաձեւ հարվածների տակ: Բացի հիմնական մարտական ուժերից, քաղաքի տարբեր թաղերում կազմավորվել են նաեւ բուռուցիկ մարտախմբեր, որոնք անհրաժեշտության դեպքում պիտի անհապաղ օգնության հասնեին վտանգված շրջաններին:

Մարտախմբերը զինելու համար օգտագործել են «Ջէնք-ինչ տեսակի ու ժամանակի ուզենաք. Մաուզերի եւ Բէրդանի հրացաններ, տեսակ-տեսակ ատրճանակներ, դաշոյններ, սրեր, կացիններ, ու մեծ-մեծ դանակներ...»[45]:

Գ. Հայկական մարտական ուժերի հրամանատարությունը, հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը, այս անգամ արդեն կիրառում է ավելի ակտիվ մարտավարություն: Ընդհարումների բռնկման հաջորդ օրը եւեթ՝ նոյեմբերի 23-ին, հայ մարտական ուժերը, չբավարարվելով հակառակորդի վրա տեղացող համազարկերով, նախահարձակ են լինում եւ ամբողջովին շրջապատում թուրքական թաղն ու իրեց հսկողության տակ վերցնում արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության ուղիները:

«24 ժամւան մէջ,-գրում է Արմեն Գարոն,-մեր զինւորական կազմակերպութիւնը կատարեալ ձեւ մը առաւ: Ռուս ոստիկանութիւնը քաշուեցաւ հրապարակէն եւ Թիֆլիզի իրական տէր դարձաւ Հ.Յ. Դաշնակցութիւնը: Մեր պահակները կը կանգնեցնէին, կը խուզարկէին նոյն իսկ ռուս սպաները, որպես զի անոնք զենք ու ռազմամթերք չտանէին դէպի թրքական թաղը»[46]:

Նույնը հաստատում է նաեւ Մ. Վարանդեան, որը բառացիորեն կրկնում է Արմեն Գարոյի վկայությունները [47]:

Թեպետ բազմաթիվ սպառնալիքներին ու խոստումներին, քաղաքի իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկել կանխելու զինված հակամարտությունը: Ավելին, Մ. Վարանդյանի հավաստմամբ «Ծեր աուէսը, Վօրօնցօվ-Դաշկովը հրահանգեր էր ազատ ասպարէզ տալ երկու կուռղ կողմերուն... Քիչ յետոյ արիւնոտ խառնարանին մէջ պիտի փորձէ նետել եւ վրացիները...»[48]:

Չնայած այն իրողությանը, որ ընթանում էին տոսկ դիրքային կռիվներ եւ երկուստեք դեռեւս չէին ձեռնարկել հարձակողական գործողություններ, այնուամենայնիվ, հայկական կողմը իր դրսեւորած կազմակերպվածությամբ ու կիրառած մարտավարությամբ որեւէ կասկած չէր թողնում, որ կռիվների շարունակման դեպքում անպայմանորեն պարտության կմատնի թուրք հրոսակախմբերին:

«Դաշնակցական խումբերու կազմն ու կեցւածքը,-գրում է Մ. Վարանդյանը,-ընդհանուր հիացման առարկայ էին: Հիացումով կը դիտէր մեր մարտական շարքերը նաեւ հռչակաւոր Սօլօլակի հայ պճնազարդ, օտարացած բուրժուազիան...եւ կը տրամադրէր իր հքեղ պալատները մեր զինւորական մարմիններուն...»[49]:

Եթե ընդհարումների արդյունքում հայկական կողմը նվաճեր հաղթանակներ, ապա անկասկած կբարձրանային հայության եւ նրան առաջնորդող քաղաքական կազմակերպությունների կշիռն ու հեղինակությունը: Իսկ հայության եւ նրան առաջնորդող ՀՅԴ կարգավիճակի ու հեղինակության բարձրացումը բնավ ձեռնտու չէր ոչ միայն իշխանություններին, այլեւ վրաց քաղաքական կազմակերպություններին: Հավա-

նաբար դա էր պատճառներից մեկը, որ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, ընդհարումները դադարեցնելու եւ քաղաքում խաղաղություն հաստատելու համար, ընդունում է որպես միջնորդ հանդես գալու վրաց սոցիալ-դեմոկրատների (մենշեւիկ) առաջարկությունը: Ավելին, համաձայն Արմեն Գարոյի, փոխարքան ոչ միայն ընդունում է վրաց մենշեւիկների առաջարկությունը, այլեւ նրանց է հանձնում 500 հրացան [50]:

Այդ մասին, ինչպես արդեն նշվել է, վկայում է նաեւ Ալ. Խատիսյանը, որը որպես իշխանության ներկայացուցիչ, կարծես փորձում է արդարադատ ու անկողմնակալ ներկայացնել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին:

Իրականում խաղաղություն հաստատելու համար որեւէ անհրաժեշտություն չկար զինելու վրաց սոցիալ-դեմոկրատներին: Չնայած հայկական կողմը նկատելի առավելություն ուներ հակառակորդի նկատմամբ, բայց Դաշնակցությունը, ճիշտ գնահատելով ազգամիջյան բախումների կործանարար նշանակությունը, միշտ էլ ձգտել է պահպանել խաղաղությունը: Ընդհարումների երկրորդ օրը՝ նոյեմբերի 23-ին, շրջափակելով թուրքական թաղամասերը, բախումները դադարեցնելու եւ խաղաղություն հաստատելու առաջարկությամբ ՀՅԴ կրկին դիմում է Թիֆլիսի հայ եւ թուրք բնակչությանը: Թուրքերը դարձյալ չեն արձագանքում ՀՅԴ առաջարկությանը [51]:

Վրաց մենշեւիկների միջոցով հակամարտող կողմերին հաշտեցնելու ու քաղաքում խաղաղություն հաստատելու փոխարքայի համաձայնության որոշումը քաղաքական կուսակցությունների համար միանգամայն անսպասելի էր: Նույնիսկ բոլշեւիկներն են իրենց պաշտոնաթերթ «Кавказский рабочий листок »-ում հայտնում իրենց անհամաձայնությունն ու տարակուսանքը [52]:

Վորոնցով-Դաշկովի որոշումը պատահական չէր, այն վաղօրոք կշռադատված էր ու ծրագրված: Վրաց սոցիալ-դեմոկրատները լուրջ ուժ չէին ներկայացնում, եւ փոխարքան, նկատի ունենալով այդ հանգամանքը, փորձում էր հենց նրանց միջոցով զինաթափել Հ.Յ. Դաշնակցությանը, որն իր կազմակերպվածությամբ ու կառույցներով եւ հատկապես ունեցած մարտական ուժերով կարող էր լուրջ վտանգ ներկայացնել իշխանությունների համար, մանավանդ հեղափոխության ծավալման ժամանակ:

Խաղաղություն հաստատելու նպատակով իշխանությունների ձեռնարկած քայլերը որեւէ արդյունք չեն տալիս: Եթե սոցիալ-դեմոկրատների զինված խմբերը ազատորեն շրջում էին հայկական թաղերում, ապա թուրքերը ոչ միայն չեն թույլատրել նրանց մուտք գործելու իրենց թաղերը, այլեւ դույզն-ինչ չեն արձագանքել նրանց կոչերին: Պարզվում է, որ թուրք պարագլուխները, օգտվելով այն հանգամանքից, որ քաղաքում պարեկություն էին անում վրաց սոցիալ-դեմոկրատների զինված խմբերը, կարողանում են նոյեմբերի 27-ին սահմանամերձ գավառներից քաղաք տեղափոխել 250 ձիավոր եւ հետիոտն մարտիկներից բաղկացած զինյալ հրոսակախմբի [53]:

Վրացի սոցիալ-դեմոկրատները ոչ միայն չեն արգելել թուրքերի մուտքը քաղաք, այլեւ շատ մտերմական հարաբերություններ են հաստատել նրանց հետ:

«Թիֆլիզեցի թուրքերի կողմից,-նշում է «Արշալույս»-ը,- դա ռազմական մի խորամանկ խաղ է, որով ուզում են նախ հայերին ցույց տալ, որ իրանք ոյժ ունեն, իսկ երկրորդ՝ մեծ քալանի ու աւերածութեան դէպքում հնարաւորութիւն ունենան ապագայում ասելու. Մենք ի՞նչ մեղաւոր ենք. եկոր թուրքերն էին, քալանեցին ու տարան...» [54]:

Քաղաքում թուրքական նոր ուժերի ներկայությունը ավելի է շիկացնում առանց այդ էլ տիրող լարված ու տագնապալի իրավիճակը: Վրաց սոցիալ-դեմոկրատները քաղաքի հայ բնակչությանը սարսափի մատնելու եւ Դաշնակցությանը եւ հնչակյաններին իրենց կամքը թելադրելու նպատակով լուր են տարածում, որ քաղաք են ներխուժել ավելի քան 14000 թուրք զինյալներ: Իրականում հինգշաբթի եւ ուրբաթ օրերին քաղաք էին մտել ընդամենը 1500 թուրք զինյալներ:

Համաձայն մեկ այլ սկզբնաղբյուրի, ավարառության նպատակով Բորչալուից, ընդ որում սայլերով եւ այլ փոխադրամիջոցներով, քաղաք էին եկել 1500-2000 թուրքեր [55]:

Վրաց սոցիալ-դեմոկրատների առաջնորդներ Ժորդանիան եւ Ռամաշվիլին հայերին ու թուրքերին հաշտեցնելու ու քաղաքում խաղաղություն հաստատելու նպատակով գալիս են Հ.Յ. Դաշնակցության շտաբը եւ վերջնագրի կարգով ներկայացնում են թուրքական կողմի հետեւյալ պայմանները.

«1. Հայոց կաթողիկոսը անձամբ պէտք է երթայ Շէյխ-իւլ-Իսլամի մօտ ներողութիւն խնդրելու կատարուած սպանութիւններու համար:

2. Հայ հոգեւորականութիւնը եկեղեցիներուն եւ փողոցներուն մէջ պէտք է դատապարտէ կատարուած սպանութիւնները եւ հաշտութեան քարոզներ ընէ ժողովրդին:

3. Հ.Յ. Դաշնակցութիւնը նոյն մտքով թռուցիկներ պիտի հրատարակէ եւ միթինկներ կազմակերպէ քաղաքին զանազան մասերուն մէջ:

4. Անմիջապէս պէտք է յանձնել իշխանութեանց սպաննած 70 թուրքերուն ոճրագործները...»[56]:

ՀՅԴ կողմից Ժորդանիայի եւ Ռամաշվիլու հետ կայացած հանդիպմանը մասնակցել են Համո Օհանջանյանն ու Հովհաննես Քաջազնունին: Որպեսզի հայերին ընդունել տան իրենց ներկայացրած պայմանները. վրացիները դարձյալ վկայակոչել են քաղաքում գտնվող 14000 թուրք զինյալներին, որոնք սպառնում էին կոտորել բնակչությանն ու քարուքանդ անել Թիֆլիսը:

«Թիֆլիսը,- ասել են Ժորդանիան եւ Ռամաշվիլին.- Կովկասի յեղափոխութեան օճախն է եւ մենք պարտաւոր ենք յանուն Ռուսական մեծ Յեղափոխութեան զիջումներ ընել եւ ընդունել թուրքական կողմի պայմանները...»[57]:

Արմեն Գարոյի հավաստմամբ, եթե չլիներ իր վճռական միջամտությունը. ապա Դաշնակցությունը տեղիք տալով վրաց սոցիալ-դեմոկրատների մտացածին սպառնալիքներին, կընդուներ Ժորդանիայի եւ Ռամաշվիլու միջոցով իրենց ներկայացված թուրքերի պայմանները[58]:

Ինչպիսի՞ն էր իշխանությունների վերաբերմունքը, չէ որ քաղաքում հազարավոր թուրք զինյալների ներկայությունը բոլորովին պատահական չէր եւ միանգամայն պարզ էր ու հասկանալի, որ այն չէր կարող ինքնապատակ հետապնդել:

«Արշալոյս»-ի հավաստմամբ «Այդ օրը քաղաքիս մէջ զօրքերը քիչ էին երեւում, չնայած որ նահանգապետը խոստացել էր աւելացնել քաղաքիս պահապանութեան համար զօրքերի թիւը: Հրացանաձգութիւնը հայերի կողմի հրդեհի ամբողջ ժամանակ ընդհատուած էր, որովհետեւ հայերը ինքնապաշտպանութեան սկզբունքին հաւատարիմ մնալով, հրացան չարձակեցին ոչ հրդեհողների, ոչ էլ թալանողների վրայ, որոնք թուրքական թաղում ազատ շրջում էին հայոց դիրքերի հանդէպ»[59]:

Ճիշտ է, զուտ մարտավարական նկատառով այդ օրը հայ ինքնապաշտպանական ուժերը համապատասխան քայլեր չեն ձեռնարկել պատասխան տալու թուրք հրոսկախմբերի կատարած չարագործություններին, բայց մշտարթուն հետեւել են հակառակորդի տեղաշարժերին ու լիովին պատրաստ են եղել վճռական մարտական գործողությունների:

Շաբաթ օրը՝ նոյեմբերի 29-ին, սկսվում է Թիֆլիսի երկրորդ կռիվը: Չնայած այն հանգամանքին, որ նահանգապետը խոստացել էր ավելացնել զորքերի թիվը, այդ եւ նախորդ օրը քաղաքում զինվորներ գրեթե չեն երեւացել: Ժամը 4-ին թուրքերը մի քանի ուղղությամբ սկսում են

հարձակումը, եւ վրաց սոցիալ-դեմոկրատների զինվորները, խուճապի մատնվելով, գցում են հրացաններն ու դիմում փախուստի: Հայ մարտիկները խուճապի մատնված վրացիներից վերցնում են 40 հրացան:

Կիրակի առավոտյան թուրքերը, գավառներից եկած ուժերով համալրելով իրենց մարտաշարքերը, վերսկսում են կռիվը եւ հարձակվում հայ ինքնապաշտպանական մարտախմբերի ուժերի դիրքերի վրա: Հայ ինքնապաշտպանական ուժերը, հետ մղելով թուրքերի գրոհները, դիմում են հարձակման եւ մոտենում նրանց դիրքերին: Շնորհիվ կշռադատված ու ճկուն մարտավարության՝ հայ մարտական ուժերը հակառակորդի նկատմամբ ձեռք են բերում վճռական գերակշռություն: Քուռ գետի աջ ափին դիրքավորված Արմեն Գարոյի գլխավորած մարտախմբերի հարվածներին զուգընթաց, հակառակորդի վրա գրոհում են նաեւ Տուրբախի գլխավորած Հավլաբարի մարտական ուժերը:

Ներկայացնելով այդ վճռական պահը՝ Արմեն Գարոն նշում է. «Կիրակի ամբողջ օրը տաք կռիւ էր բոլոր դիրքերուն վրայ: Մերոնք քանի մը տեղ յարձակողականի սկսան եւ մոտիկացան թուրքերու ամենաւտանգաւոր դիրքերուն: Հալաբարեն Տուրբախը իր դիրքերէն լաւ մը խաչեց թրքական դիրքերը»[60]:

Պարտություն կրելով՝ թուրքերը դիմում են փախուստի եւ փորձում են դուրս գալ քաղաքից, բայց հանդիպում են հայ թոուցիկ խմբերի դիմադրությանը, որոնք ամուր փակել էին քաղաքի բոլոր ելքերն ու մուտքերը:

«Թիֆլիզի վերջին դէպքերից...» խորագիրը կրող վավերագիրը արժանավույն գնահատելով թուրք հրոսակախմբերի դեմ հայ ինքնապաշտպանական ուժերի տարած հաղթանակը՝ նշում է. «Որքան եւ Թիֆլիսի ջարդն ու կոտորածը «Շէյթանի» կողմի փառաւոր ծրագրով էր կազմած, աւելի զգուշութեամբ, հեռատեսութեամբ ու խնամքով, քան ռուս-ճապոնական պատերազմի ծրագրերն ու ու մարշրուտները, այնուամենայնիւ, նրա «խոփը այս անգամ քարին դիպաւ»,-Շէյթանի յառաջամարտիկ բանակը թաթարական յարձակումը ամենախայտառակ անհաջողութեան հանդիպելուց յետոյ երկրորդ քիկնապահ բանակը, կարգաւոր եւ ոչ կարգաւոր խուլիգանական բանակը այլ եւս չհանդգնեց ցարդ երեւան գալ...»[61]:

Թիֆլիսի ինքնապաշտպանական մարտերին մասնակցել են նաեւ Հնչակյան կուսակցության նախմեռնությամբ կազմակերպված մարտախմբերը: Այդ օրերին ընթացող կռիվների մասին պատմող վերոհիշյալ «Թիֆլիզի վերջին դէպքերից...» խորագիրը կրող վավերագիրը, անդ-

րաղառնալով ինքնապաշտպանական մարտերին հնչակյանների մասնակցությանը, նշում է. «...Հնչակեան մարտական Ա. բանակը կռուի օրերին դիրքեր էր բռնել կռուի ամենատանգաւոր դիրքերում՝ Շէյթանբազարի եւ ալիւրի Մէյդանի շրջակայքում, ճակատ առ ճակատ թուրքական յառաջապահ գնդերի, որքան եւ նոյն Հնչակեան Ա. բանակի թոյլիկ երկու կտրիճ խմբերը այս ու այն կողմերից սլանում էին թուրքերով բռնուած թաղերը եւ հերոսական քաջագործութիւններ անում, մի քանի անգամ յետ մղելով հարիւրաւոր հոգիներից բաղկացած թաթարական բանակը, սոսկալի ջարդ տալով նրանց...» [62]:

Վավերագրի գնահատմամբ իրենց նվաճած հաղթանակի արդյունքում փրկվեց Թիֆլիսը, իսկ հաղթանակը ձեռք բերվեց շնորհիվ հեղափոխական բոլոր ուժերների եւ կուսակցությունների միասնական ու համախմբված ջանքերի:

Ուշագրավ է նաեւ վավերագրի հետեւյալ գնահատականը. «...Հնչակեանների եւ Դաշնակցականների անձնուիրութիւնը, կարգն ու կանոնը, զինուորական դիսցիպլինան եւ դէպի քշնամին իսկ ցոյց տուած ասպետութիւնը հիացմունք է պատճառել նոյն իսկ մեր ոտոյներին-կռուող թաթարներին» [63]:

Որպես ավարտական ու ընդհանրացնող խոսք՝ վավերագիրը իրավացիորեն ու ցավով նշում է. «Եւ այս բոլորից յետոյ ոչ միայն ցաւ, այլ եւ խորին զգուանք է յառաջանում մարդու մէջ ներկայումս, երբ մի քանի հրապարակախօսներ աշխատում են խլրտում գցել ազգութիւնների եւ կուսակցութիւնների միջեւ» [64]:

Դեկտեմբերի 1-ին՝ երկուշաբթի առավոտյան, կռիվները Թիֆլիսում դադարում են: Թուրքերը վերջնական ջախջախումից փրկվելու նպատակով պարզում են սպիտակ դրոշ եւ իշխանությունների միջնորդությամբ հաշտություն կնքելու խնդրանքով դիմում են հայկական կողմին: Իշխանություններն արագ արձագանքում են թուրքերի խնդրանքին: Քաղաքի փողոցներում անմիջապես հայտնվում են ռուս զինվորները եւ «...Ամէն կողմ ազդարարվեցաւ, թէ այլեւս կռվելն արգելված է»[65]:

Արմեն Գարոյի գնահատմամբ «Այդպես կվարվեին ռուսները ամեն տեղ, երբ իրենց պաշտպանյալ թուրքերը կհաղթվեին, շուտով կմիջամտեին՝ կռվին վերջ տալու համար»[66]:

Հայկական մարտական ուժերը գուտ վրեժխնդրության նկատառումով կարող էին կոտորել բազմաթիվ թուրքերի, բայց դրսեւորելով ասպետական վերաբերմունք՝ ընդառաջում են թուրք պարագլուխների խնդրանքին եւ դադարեցնում կռիվները:

Օրինակ, «Թիֆլիզի վերջին դէպքերից...» խորագիրը կրող վավերագիրը պատմում է, որ գավառից Թիֆլիս ներխուժած թուրքեր պարտություն կրելուց հետո, երբ հեռանում էին քաղաքից իրենց գյուղերը, կառքերով, ձիերով, ֆուրգոններով տանում էին հայերից թալանած ապրանքները: Հնչակյան մարտիկները կարող էին անմիջապես հարձակվել ավարառուների վրա ու շրջապատելով՝ զինաթափել նրանց եւ խլել բոլոր կողոպուտը, սակայն ներկայանում են քաղաքագլխին ու հայտարարում. «...նորանոր թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, այդ բանը չենք անում եւ թողնում ենք ձեզ, որ միջոցներ ձեռք առնէք դրա առաջն առնելու»: Քաղաքագլուխը խոստացաւ դիմել այդ մասին գեներալ Մալամային»[67]:

Թուրք պարագլուխներից մեկը, երախտագիտությամբ գնահատելով հայկական կողմի հումանիստական վերաբերմունքը, նշել է.«...ձեր խմբերը մեզ աւելի շատ կոտորածներ տուին, բայց եւ ականատես եղանք ձեր շատ ասպետութիւններին, դուք չարատաւորեցիք ձեր զէնքը՝ անմեղ եւ անզեն մարդկանց արիւն թափելով...»[68]:

Թիֆլիսի երկրորդ կռիվների ժամանակ, ըստ Արմեն Գարոյի, «Թուրքերու զոհերն եղան մինչեւ 500 հոգի սպանված ու վիրավոր, իսկ մենք ունեցանք 8 սպանված ու 60 վիրավոր»[69]:

Հայկական մարտական ուժերը անվիճելի հաղթանակ են տանում նաեւ շրջաններում: Պիտի ասել, որ բոլոր այն ինքնապաշտպանական շրջանները, որոնք գործել են Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ, ի սկզբանե առաջին իսկ հնարավորության դեպքում դիմել են հարձակողական գործողությունների: Նույն մարտավարության ջերմեռանդ կողմնակից էր նաեւ նաեւ Սեւքարեցի Սաքոն: Նրա գլխավորած մարտական ուժերը իրականացրել են մի շարք հարձակողական գործողություններից, որոնցից առավել ուշագրավն ու արդյունավետը թուրքական ավելի քան 1500 բնակչություն ունեցող Փոլադ-Այրի գյուղի կործանումն էր:

Շամշադին-Ղազախ շրջաններում՝ ի պատասխան Փոլար-Այրիի թուրքերի կողմից Ղաչավանք գյուղին պատճառած ավերածությունների, Սեւքարեցի Սաքոն, համաձայն դումանյան փոխվրեժի պարտադիր սկզբունքի, պիտի իրականացներ պատասխան մարտական գործողություններ: Քանի որ Սաքոյի հրամանատարության տակ գտնվող ուժերը, բացահայտորեն, անբավարար էին ծրագրված հարձակումը հաջողությամբ կենսագործելու համար, ուստի դիմում է կենտրոնի օգնությանը:

Տեղեկանալով Շամշադին-Ղազախ շրջաններում կատարվող իրադարձություններին, Դումանը հրամայում է անհապաղ կազմակերպել Սաքոյին օգնության ուղարկվող զինախումբ եւ այդ պատասխանատու առաջադրանքը հանձնարարում է Երեւանում հիմնադրած ռազմական դպրոցի սաներ, իր կողմից խմբապետների կոչումների արժանացած երիտասարդ հրամանատարներ Սեդրակ Ջալալյանին(Սեբո) եւ Արտաշես Մելքոնյանին:

Սաքոն Սեդրակ Ջալալյանին եւ Արտաշես Մելքոնյանի գլխավորած մարտախմբի զինակցությամբ մեծ հաջողությամբ է իրականացնում Փոլադ-Այրիի վրա ձեռնարկած հարձակումը: Ժամանակ խստաշունչ պայմաններում՝ փետրվարի 21-ին իրականացրած հարձակման ժամանակ հայկական մարտախմբերը հիմնահատակ կոչնչացնեին Փոլատ-Այրիի եւ նրան հարակից թուրքաբնակ գյուղերը, եթե չլիներ ռուսական հեծելազորի, ապա նաեւ ոստիկանական ուժերի միջամտությունը[70]:

Ղազախի շրջանում վերոհիշյալ դեպքերին ռուս զինվորների միջամտության իրողությունը նշվում է «Դաշնակցութեամ մարմիններին Արեւելեան Բիւրօյից» շրջաբերականում[71]:

«Դեկտեմբերի 21-ին, - նշվում է շրջաբերականում, - հայերը նոր գրոհի էին պատրաստւում, երբ յանկարծ երեւաց կօզակների եւ ստրաժնիկների մի խումբ՝ 60 հոգուց բաղկացած՝ ռուս չինովնիկի առաջնորդութեամբ: Չինովնիկը սպիտակ դրօշակը ձեռքին առաջ անցաւ խմբից եւ յայտնեց, որ ինքը եկել է երկու հարեւան ազգերի մէջ հաշտութիւն գցելու, որ թշնամութիւնը լաւ բան չէ եւ այլն»[72]:

Անդրադառնալով կռիվներին ռուսների միջամտության իրողությանը՝ Սեդրակ Ջալալյան իր կենսագրականում գրում է. «Դրութիւնը վերականգնեցինք եւ թուրքերին այնքան նեղը գցեցինք, որ նրանք դիմեցին Թիֆլիս եւ ռուսական զօրք բերել տուին, որի պատճառով մենք վերադարձանք Երեւան»[73]:

Հայ-թուրքական բնդհարումների ավարտից հետո Թիֆլիսում խիստ կերպով լարվում է քաղաքական իրավիճակը: Քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ դեկտեմբերի 12-ին սկսվում են համաքաղաքային գործադուլն ու բողոքի ցույցերը: Ի պատասխան քաղաքական կուսակցությունների գործողությունների, Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը դեկտեմբերի 17-ին պատերազմական դրություն է հայտարարում Թիֆլիսում եւ իր օգնական գեներալ Մալամային նշանակում Թիֆլիսի գեներալ-նահանգապետ[74]:

Նույն օրը եւեթ գեներալ Մալաման «...յայտարարեց, որ անմիջապէս պետք է բացին բոլոր խանութները, հակառակ դեպքում 3 ամիս բանտարկութեան կամ 3000 ռ. տուգանքի կենթարկուեն, իսկ խանութները կը կոտրատուեն»[75]:

Քաղաքում հաստատվում է զինվորական խստագույն դրություն: Ավելին, այդ օրերին իշխանությունների որոշմամբ քաղաքում տեղի են ունենում այնպիսի գարհուրելի դեպքեր, որոնք «Դրօշակ»-ի գնահատմամբ «...գերազանցեցին բոլորը, ինչ մենք տեսել էինք Պլէվէ Գոլիցիեան րեժիմի տակ»[76]:

Զինվորական հրամանատարությունը քնդանոթներից կրակ է տեղում քաղաքի Նախալովկա բանվորական թաղի եւ Ներսիսյան դպրոցի մերձակայքում գտնվող հրապարակի ու տների վրա:

«Դրօշակ»-ի հավաստմամբ «Շարան-շարան հրապարակում փռած էին այրուած, ածուխ դարձած դիակներ. հրապարակում գնդակի բռնեցին փախչողներին: Այրուած եւ սպանուածների թիւը 100-ից անց է եւ բոլորը խեղճ ու կրակ մարդիկ:

...Նոյն գիշերը կօզակները թալանեցին «Սօլդատսկի» բազարի շուրջը գտնուող բոլոր խանութները(բոլորը հայ), մինչեւ «Մշակի» խմբագրատան փողոցը »[77]:

Չբավարարվելով այդ ամենով եւ քաղաքում հաստատված ռազմական դրությունը ավելի խստացնելու նպատակով, գեներալ Մալամայի փոխարեն Թիֆլիսի եւ գավառի գեներալ-նահանգապետ է նշանակվում գեներալ Ալիխանով-Ավարսկին, որի ծառայությունը Նախիջեւան քաղաքում եւ գավառում անկասկած բարձր էին գնահատվել իշխանությունների կողմից[78]:

Ճիշտ է, Թիֆլիսում կռիվներն ավարտվել էին, բայց բազմաթիվ բնակավայրերում հայ-թուրքական զինված բախումները դեռեւս շարունակվում էին: Հ.Դ.Դաշնակցությունը, որը դեպքերի թելադրանքով ստանձնել էր կովկասահայության ինքնապաշտպանության դերը, այդ օրերին, հավատարիմ մնալով ՀՅԴ Խորհրդի կողմից ընդունած «Կովկասյան նախագծին» եւ 1904 թ. Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովի ընդունած որոշմանը, միանում է ցարիզմի դեմ պայքարի դրոշ պարզած քաղաքական կուսակցություններին եւ ակտիվորեն մասնակցում նրանց կազմակերպած միտինգներին, ցույցերին ու գործադուլներին:

Իշխանությունների դեմ պայքարելու եւ միասնական ճակատ ստեղծելու նպատակով մի քանի քաղաքական կուսակցություններ

(Սոցիալ-դեմոկրատական, ռուս սոցիալիստ- հեղափոխական, վրաց սոցիալիստ- ֆեդերալիստ), որոնց միանում են նաեւ Հայ Հնչակյան սոցիալ-դեմոկրատական եւ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունները, որոշում են. «...պատերազմական դրութեան ժամանակ համերաշխութեամբ գործել եւ դրա համար կազմեցին «Համաձայնութեան Բիւրո» քաղաքի գործերը վարելու»[79]:

Փաստորեն Դաշնակցությունը Կովկասում պայքարելու էր երկու ճակատով: Որքանով էր հայանպաստ ու նպատակահարմար առաջնորդվել համաձման մարտավարությամբ, մանավանդ պատերազմական իրավիճակում, երբ ցարական իշխանությունները իրենց ոչ հայանպաստ դիրքորոշումը քողարկելու եւ հայկական կողմին մեղադրելու նպատակով մշտապես շեշտում էին Դաշնակցության հեղափոխական կեցվածքն ու հակացարական գործունեությունը:

Ավելին, համաձայն Արմեն-Գարոյի հավաստման, եթե չլիներ իր վճռականությունն ու ընդդիմադիր դիրքորոշումը, ապա ՀՅԴ Արեւելյան բյուրոյի որոշմամբ հայկական մարտական ուժերը կմասնակցեին վրաց սոցիալ-դեմոկրատների առաջարկությամբ Թիֆլիսում տեղի ունեցող զինված ապստամբությանը: Հիմք ունենալով Ռուսաստանում բռնկված հեղափոխական շարժումների ընդգրկումներն ու արձագանքները՝ ՀՅԴ ՀՅԴ Արեւելյան բյուրոյի անդամները չեն կասկածել հեղափոխության հաղթանակին:

Հ.Յ.Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրօշակ»-ը իր հիացմունքն ու համակրանքն արտահայտելով ցարական իշխանությունների դեմ Ռուսաստանում, Ֆինլանդիայում եւ Լեհաստանում ծավալվող հեղափոխական շարժմանը՝ անխախտ հավատով նշում է. «Դէպքերը գահաւիժում են անասելի արագութեամբ. իւրաքանչիւր ժամին հեռագիրը ծանուցանում է յեղափոխական շարժման նոր վճռական հարուածների մասին...ամէն տեղից, ամէն մի անկիւնից ազատութեան կուի շռինդն է լսւում, որ վաղուն մեծ, անխուսափելի Յաղթանակն է աւետում»[80]:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյի ընդլայնված ժողովում Համո Օհանջանյանը(ՀՅԴ Արեւելյան բյուրոյի անդամ-Հ.Գ.) որպես փաստարկ ի պաշտպանություն զինված ապստամբությանը մասնակցությանը, հիշեցրել է վրաց սոցիալ-դեմոկրատների հետեւյալ սպառնալիքը. «...թէ ով որ չմասնակցի զինուած ապստամբութեան պիտի նկատուի հակայեղափոխական: Շարունակ կը մատնանշուէր, որ մեր ժողովրդի վիճակը կրնայ տաժանելի դառնալ, եթէ վաղը յեղափոխութիւնը յաղթական դուրս գայ, ինչ որ իր կարծիքով կասկածից վեր էր»[81]:

Արմեն Գարոն, որպես Թիֆլիսի մարտական ուժերի հրամանատար, կտրականապես հրաժարվել է զինվորներ տրամադրել ապստամբությանը մասնակցելուն եւ իր որոշումը հիմնավորելիս նշել է.«Կը մտածէ՞ք րոպէ մը, թէ ի՞նչ է լինելու ապստամբութեան արդիւնքը: Որպեսզի Ժորտանիա մր ձեզ «հակայեղափոխական» չանուանէ, դուք կուզէք հարիւր հազարանոց հայ բնակչութիւնը ռուսական թնդանօթներուն բերանը տալ...»[82]:

«Թիֆլիսի վերջին անցքերը» խորագիրը կրող վավերագրում նշվում է, որ իրոք, փոխարքայության զինվորական իշխանությունները ծրագրել էին զինված ապստամբություն սկսվելու դեպքում ռուս բնակչությանը դուրս բերել քաղաքից ու թնդանոթներով ռմբակոծել հայկական ու վրացական թաղերը[83]:

Բարեբախտաբար Դաշնակցությունը հրաժարվում է մասնակցել զինված ապստամբությանը, իսկ դա հավասարազոր էր, որպեսզի այն ընդհանրապես տեղի չունենար:

Պարզվում է, որ վրաց սոցիալ-դեմոկրատները, չունենալով մարտական ուժեր, նպատակադրվել էին զինված ապստամբություն սկսվելու պարագայում օգտագործել հայ մարտական ուժերը[84]:

Թիֆլիսում գտնվող մարտիկներից շատերը մեկնում են տարբեր շրջաններ՝ համալրելու տեղի ինքնապաշտպանական ուժերի մարտաշարքերը:

Անդրկովկասում ազգամիջյան բախումները շարունակվում էին, իսկ Թիֆլիսում՝ Կովկասի փոխարքայի պալատում, իշխանության ներկայացուցչների, հայ եւ թուրք բնակչության կողմից ընտրված երեսունական պատգամավորների մասնակցությամբ, գումարվում է խորհրդաժողով՝ պարզելու երկու ազգերի ընդհարումների պատճառներն ու մշակելու իրական միջոցառումներ՝ ազգամիջյան բշնամանքին վերջ տալու, խաղաղություն հաստատելու նպատակով:

Փետրվարի 20-ին սկսված խորհրդաժողովում բացման խոսքով հանդես է գալիս Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը եւ չխորշելով փաստերի խեղաթյուրումից, հայտարարում, որ ինքը ջանքեր չի խնայել մուսուլմանների եւ հայերի միջեւ շարունակվող խելացնոր կոտորածները դադարեցնելու գործում: Այս բացահայտ սուտն արտահայտելուց հետո փոխարքան երկու կողմերի ներկայացուցիչներին կոչել է փոխըմբռնման ու խաղաղ համագործակցության: Ելույթն ավարտում է հետեւյալ խոսքերով. «Հարցն այն չէ, թէ ով է մեղաւոր այս չփոթի մէջ, այլ այն, թէ երկրի նիւթական բարօրութիւնը կործանող չարիքը

դարաբեգների համար ո՞ր միջոցներն են իրական։ Այդ չարիքը մեռ-
տու է միայն առագաների եւ վարափոխական կազմակերպությունների
համար»[55]։

Ելույթի վերջաբանում Վորոնցով Դաշկովը կամփոփում է ին-
տում է երկու կարեւոր հանգամանք

1. Ազգամիջյան բախումների պատճառների ու դրանց չեզոքման
կարեւորության անտեսում

2. համաձայնություն ոնկով հնարավորական կազմակերպությու-
ների ու ավազակների միջեւ՝ ընդհարումների մնջոր. հայտնի սահմռիկ
հանդիպման ժամանակ. բարելի հնարավորական կազմակերպություն-
ների. մասնավորապես Հ.Յ. Դաշնակցության վրա. որը տվյալ ժամա-
նակահատվածում արդեն ամենահզոր կազմակերպությունն էր ողջ
Անդրկովկասում։

Փոխարքայի վերոհիշյալ հարձակումների չորրորդ մասը վերաբերում էր
հայ եւ թուրք պատգամավորների վիճարանություններին

Հայության ներկայացուցիչները. պահանջով չեզոքել ընդհա-
րումները ծնող պատճառները. պնդում էին, որ դրանք գլխավորապես
պայմանավորված էին իշխանությունների հանգավոր ու դիտավորյալ
թույլտվությամբ ու անտարբերությամբ։ Իսկ թուրքերի ներկայացու-
ցիչները. պաշտպանելով փոխարքայի «հարցն այն չէ թե ո՞վ է մեղա-
վոր» թեզը. բծնությամբ գովաբանում էին «ժողովրդի չահերին ու խա-
ղաղության ամրահիմնորեն» ծառայող իշխանություններին։ Ըն-
գամիջյան կռիվների գլխավոր մեղքը վերագրելով Հ.Յ. Դաշնակցու-
յանը՝ թուրքերը պահանջում էին Կովկասի սահմաններից հեռացնել
հայ դաշնակցականներին եւ ֆիդայական խմբերին։ Միանգամայն
հասկանալի տեսակետ է։ Ընդհարումների ընթացքում զարհավոր իշ-
խանությունները եւ նրանց կամակատար թուրք նոնելիները խորա-
պես համոզվեցին. որ իրենց հայակործան ծրագրերը խոչտակվեցին
գլխավորապես դաշնակցության հետ կազմակերպվածության եւ
ֆիդայիների հերոսական գործունեության շնորհիվ[56]։

Լեռյի կարծիքով ընդհարումների պատասխանատվությունը
Հ.Յ.Դաշնակցության վերագրելով թուրքերը նշանակում էին նաեւ
հետեւյալ նպատակը. «...մյուս այդ դաշնակցականները հայրենական
խմբեր էին կազմում եւ տանում էին իրենց հետ։ Այս մեծ
մեծ յանգանք էր հանաքուրանասեր պրոֆեսորի նոքարկած բեռ-
րի աչքում եւ այդ յանգանքները ոանեալ էր որ թուրքերը Անդրկովկա-
սում յարձակում էին իրենց ոարեւոր նպատակ»[57]։

Հայաստության կեղծ լուսանկարով քարտերկով իրենց նիստական
նպատակները։ Նրանք ձգտում էին դաշնակցության կազմակերպա-
յումներին եւ Ֆիդայիներին նոմկասիր հետապնդման միջոցով հարյուրա-
որ փրել իր ամրոտական ուժերի ակտիվությունից եւ ամրի դարձ
պատճառներ ստեղծել հայակործան ծրագրերի իրագործման համար։

Մի քանի օր ընթացող խորհրդաժողովում քեզով երկու կազմակերպ
ներկայացուցիչների ելույթներն ու առաջարկությունները կուռ Վարոն
ցով-Դաշկով։ Ամրոնկնատուն ծավալվող ընդհարումները դադարեց
նել. սահմանել առաջարկում է

1. Համաձայն. այն տարի քոչի կանոնակարգման մասին եւ դաշտա
յին աշխատանքների ապահովման մասին յանձնաժողովի եզրակա
գություններ.

2. Հիմնել տեղական կառավարության կից առանձին խորհուրդ
երկու ազգերի ներկայացուցիչներից

3. Նահանգապետերին եւ գավառապետներին կից նույն հիմքերով
կազմել հատուկ յանձնաժողովներ. այն նպատակով որ տեղա
կան իշխանությունների անորոշներում կարողանան դիմել
նրանց. ոայ-բուրքական յարաբերությունների ամիսով գավառական
յանձնաժողովներ. պետք է գավառի գիտենա հիմնական
նպատակ բոլորին այսքան կանգնի խաղաղությանը»[58]

Այս առաջարկություններ ինչ և թուրք պատգամավորների ու
շադրությանը ներկայացնելուց հետո փոխարքան հայտնում է նաեւ, որ
անկարող այս ամենին. ինչի անհապաղ կարգադրելու դրա
նիստաշրջան. անհապաղ միջոցներ ձեռք առնել և միայն արեւ
տարի ամեն ազգային ընդհարումներ. այլեւ ձնշելու եւ խիստ պատժելու
մեղավորներին. և ապահովելու ապրանքների հանգիստ հոսանք
դադարության ամրապարտների անվտանգություն։

Ամռան օ-ին գարձյալ կայացած կայքին նիստում Վարոնցով-Դաշկով որ
այս եզրահանգել յուրաքանչյուր ազգամիջյան ընդհարման հայտնում է
«ժողովուրդ» կարծիք ոանալ է. որ ոայ-ամրոնական դիմադարձ
դադարեցնել եւ սա պետք է դադարի ձեռք են դիտում. գործադրել
ևս գործ ոնել. Ձեռ ավելցուքները դադարեցնելու ոանալ չեզոքացնել.
որ եւ քաղաքներ. Տարածության ընդհանրապես. թ
այն խոսում արտոնների ամսի. որոշ պետք է. արտադրել
որքի արտադարձել լինել։[59]

Ցարիզմն արդեն բացահայտորեն էր որ ընդհանուր
արժեքից զուրկ որոշումներ չէր. որ պետք կազմակերպել

Անդրկովկասում ու հայերից հեռացնելին նրա գոյությանը սպառնացող վտանգը:

Հայկական կողմը ներկայացնելով ու գնահատելով ցարական իշխանությունների վարած քաղաքականությունը, որպես կանոն, քննադատում եւ բացասական կողմերով է ներկայացնում ցարական պաշտոնյաների, սկսած փոխարքաներից(Գոլիցին եւ Վորոնցով-Դաշկով), մինչեւ ստորին աստիճանավորների վերաբերմունքը հայության նկատմամբ, հատկապես հայ-թուրքական ընդհարումների ժամանակ:

Պատմական տվյալ ժամանակահատվածի ուսումնասիրությունը, իրոք, աներկբա ապացուցում է, որ այս հարցում իշխանության ներկայացուցիչներին ներկայացրած հայկական կողմի մեղադրանքներն ու գնահատականների ճշմարտացիությունը վեր է որեւէ կասկածանքից: Բայց հանուն ճշմարտության պիտի ընդգծել, որ այդ ամենով հանդերձ, այնուամենայնիվ, իշխանության ներկայացուցիչները իրենց վարքով, հայության նկատմամբ դրսեւորած վերաբերմունքով, տարբերվել են միմյանցից:

Օրինակ, իրեց համոզմունքներով եւ վարքագծով զգալիորեն տարբեր են եղել Գոլիցինն ու Վորոնցով-Դաշկովը: Ճիշտ է, որպես ցարական բարձրաստիճան պաշտոնյաներ նրանք պարտավոր էին իրականացնել եւ իրականացնում էին կայսրության շահերին համահունչ քաղաքականություն, բայց որպես տարբեր անհատականություններ չէին կարող չունենալ իրենց յուրօրինակ համոզմունքներն ու նրանցով պայմանավորված գործելակերպ եւ վարքագիծ:

Գոլիցինը իր համոզմունքով ու վարքագծով եղել է ընդգծված հայատյաց: Դրա լավագույն եւ անժխտելի ապացույցը նրա սադրանքով կայսր Նիկոլայ 2-րդի կողմից ընդունված հուլիսի 12-ի օրենքն է, ապա նաեւ նրա գլխավորած իշխանության հովանավորությամբ ու թողտվությամբ Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումները:

Կոմս Վորոնցով-Դաշկովը ի տարբերություն Գոլիցինի, եղել է ավելի քաղաքակիրթ, փորը-ինչ ավելի մեղմ եւ դիմացինի կարծիքը լսող ու գնահատող:

Նրան, որպես փոխարքայի եւ անհատի, հայ-ազգային-քաղաքական գործիչներից վատ չի բնութագրում Ալ. Խատիսյանը, որը լինելով Թիֆլիսի քաղաքագլուխը, ապա նաեւ Անդրկովկասի քաղաքների միության նախագահը, հաճախակի է շփվել ու բազմապիսի հարցեր քննարկել նրա հետ:

«Բազմիցս անդամներ,-գրում է Ալ. Խատիսյանը,- եղած եմ փոխարքայ Վորոնցով-Դաշկովի մօտ եւ ամէն անգամ ալ, ինձ ընդունած

է, մանրամասն լսած է իմ գեկուցումներն ու առաջարկները եւ համապատասխան կարգադրութիւններ ըրած հայ ժողովրդի պաշտպանութեան համար՝ գիւղերու եւ քաղաքներու մէջ»[90]:

Նիկոլայ 2-րդին ներկայացրած զեկուցագրերից մեկում(1905 թ. դեկտեմբերի 5) նրա արծարծած նկատառումներից պարզվում է, որ նրա համար այնքան էլ ընդունելի ու հաճելի չի եղել այն ամենը, ինչը 1905 թ. կատարվում էր իրեն վստահված փոխարքայության սահմաններում[91]:

Նույն զեկուցագրում կայսրին ներկայացնելով Անդրկովկասում տեղի ունեցած դեպքերի մանրամասները՝ Վորոնցով-Դաշկովը խոստովանում է. «Կայսրության մեջ ծավալված հեղափոխական շարժումն անդրադարձել է յեվ Կովկասի վրա: Ըստ որում յես նախ աշխատել էյի դրա դեմ կռվել խաղաղ ճանապարհով, աշխատելով խուսափել ավելորդ ռեպրեսիաներից, որոնք ըստիս, կարող էյին արյունահեղ ապստամբության հանգեցնել յերկիրը, որը զինվել է դեռեւս իմ նախորդի ժամանակ: Վերջին դեպքերը խախտեցին իմ առողջությունը յեվ ես այժմ պարկած եմ... Այս հանգամանքը կապած նրա հետ, որ գուցե ձերդ մեծությունն, իմ քաղաքականությունը Կովկասում չենք գտնում ժամանակակից պահանջներին համապատասխան՝ դրդում է ինձ, տեր առաջարկ անել ձեզ, հետ կանչելու ինձ իմ դիրքերից...»[92]:

Այսուհանդերձ, ինչպիսին էլ լիներ Վորոնցով-Դաշկովի համոզմունքները, նա, այնուամենայնիվ, ցարական բարձրաստիճան պաշտոնյա էր, Կովկասի փոխարքան:

Համագումարի ավարտից հետո ընդհարումները, ինչպես խոստացել էր փոխարքան, չընդհատվեցին: Հայ ինքնապաշտպանական ուժերի համար թուրք հրոսակախմբերի հարձակումներն արդեն չէին կարող լինել անակնկալ ու խիստ վտանգավոր:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի գնահատմամբ՝ «Տագնապներով լի հուսահատական այդ շրջանում ահաբեկ հայ ազգաբնակչության գլխավոր նեցուկը Հ.Յ.Դաշնակցությունն էր: Բախտավորություն էր, որ նա էր կանգնած գործի գլուխը, նա էր զորահավաքի ենթարկում ազգի ներուժը՝ դեմ հանդիման գնալու եւ կասեցնելու ոտքից մինչեւ գլուխ զինված տասնյակ հազարավոր արյունարբու խուժանի հարձակումները: Աղետներն ամբողջ Անդրկովկասում աներեւակայելի ծավալ կառնեին, եթե Դաշնակցության զինված խմբերը, հին փորձված զինվորների ղեկավարությամբ, հրապարակ չիջնեին իրենց հատուկ անձնուրացությամբ»[93]:

Դաժան փորձությունների ենթարկվելով ցարական բյուրոկրատիայի եւ համամիսլամական գաղափարներով առաջնորդվող թուրք պարագլուխների կողմից սանձազերծված ազգամիջյան ընդհարումներում՝ հայ ժողովուրդը հերոսական ինքնապաշտպանությամբ նվաճեց ապրելու եւ հարատեւելու իրավունքը: 1905-1906 թթ. հայության գոյապայքարում անգնահատելի են քաջակորով հայորդիներ Նիկոլ Դումանի, Սեբաստացի Մուրադի, Խանասորի Վարդանի, Քեռու, Սեպուհի, Սեւքարեցի Սաքոյի, Համազասպի, Մմբատի, Հաճի Հակոբի եւ բազում այլ հերոսների անգնահատելի ծառայությունները: Հարազատ ժողովրդի բախտորոշ ժամանակաշրջանում հայտնվելով դեպքերի կիզակետում՝ հայ ֆիդային անձնական օրինակով հայությանը ներարկեց մարտնչելու, ազգի գոյությունն ու արժանապատվությունը պահպանելու անխորտակ կամք ու պայքարի անհաղթ ոգի:

Կարելի է ասել, որ 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում հայության ինքնապաշտպանությունը համաժողովրդական պատերազմ էր, ազգային-ազատագրական պայքարի անքակտելի բաղկացուցիչ մասը, որին կովկասահայության հետ մեկտեղ իր մասնակցությունը ունեցավ նաեւ արեւմտահայությունը: Այն շարժումը, որ հայ ժողովուրդը ծավալել էր ընդդեմ ցարիզմի, սկսած հայոց դպրոցների փակումից եւ 1903 թ.-ից, ավարտվեց 1905-1906 թթ. ազատագրական պայքարի հաղթանակով:

Նույնիսկ ցարական ոստիկանությունն է իր կազմած տեղեկագրերում խոստովանում հայ-թուրքական ընդհարումների ընդացքում հայ մարտական ուժերի նվաճած անվիճելի հաղթանակի իրողությունը եւ այդ գործում Հ.Յ. Դաշնակցության, հիրավի, անգնահատելի ծառայությունը:

«1905-1906 տարիները,-ընգծում է «Օխրանա»-յի տեղեկագիր»-ը,- Կովկասում եղան խիստ փոթորկոտ եւ նշուեցին արեան վտակներով, որ արդիւնքն էր հայերի եւ թաթարների միջեւ եղած դարաւոր ատելութեան: Այդ պայքարի մէջ Դաշնակցութիւնը ցոյց տուաւ իր կարողութիւնը, հակադրելով անկազմակերպ թաթարական հորդաներին լիովին մարզուած, ուղիղ կազմակերպուած եւ խիստ կարգապահութեան մէջ դաստիարակուած մարտական ջոկատները...»[94]:

Ավելին, «Օխրանա»-յի տեղեկագի գնահատմամբ, այդ ժամանակ հայերը բացի հաղթանակ նվաճելուց, հասել են մեկ այլ նպատակի: Նրանք ոչ միայն կարողացան ազատագրել թուրքերի կողմից բռնազավթված հողերը, այլեւ այդ հողերի վրա բնակեցրին այն գաղթականներին, որոնք գաղթում էին Թուրքիայից եւ մասամբ նաեւ Պարսկաստանից[95]:

Ուշագրավ է հայ-թուրքական ընդհարումներում հայ ինքնապաշտպանական ուժերին տված Զարեվանդի հետեւյալ գնահատականը. «Դժբախտաբար, թուրքերուն համար, հայ բազուկը Կովկասի մեջ անգեն չէր ինչպես Թուրքիւ մեջ: Ռուս բանակը զենքի վարժուցուցել էր հայ երիտասարդը եւ հայ հեղափոխությունը անոր սովրեցուցել էր գործածել զայն իր անձին, իր ընտանիքին ու ազգին սրբազան պաշտպանության համար: Երեւանի եւ Թիֆլիսի մեջ, թե Ղարաբղի բարծունքներուն, մանավանդ Ասկերանի «Քանձը» կիրճին մեջ, հայերը այնպիսի քաջությամբ կռվեցան եւ այնպիսի ջարդ տվին թաթարներուն, որ մինչեւ Թուրքիա հասավ անոնց սարսափելի աղաղակը.

«Կովկասի հայերը յամա՜ն են...»[96]:

---

1. Ա-Դ-Օ, «Հայ Թուրքական ընդհարումը Կովկասում», էջ 390:
2. Ալ. Խատիսյան, «Քաղաքապետի մը յիշատակները», էջ 74:
3. Տե՛ս նույն տեղում:
4. Տե՛ս նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Տե՛ս «Кавказский календарь на 1905 год», 1905, 3-й отд., ст. 46:
7. Արմեն Գարո, «Ապրած օրեր», Բոստըն, 1948, էջ 165:
8. Ղազար Չարըգը, «Յուշամատեան Բարձր Հայքի», Պէյրութ, 1957, էջ550:
9. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 450, գ. 15, էջ 22-23:
10. «Հայրենիք», ամս., 1959, թիւ8, էջ 79:
11. Տե՛ս նույն տեղում:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, էջ 79-80:
14. «Кавказский календарь на 1905 год., 3-й отд.», ст. 215:
15. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 450, գ. 15, էջ 15:
16. Նույնը, էջ 19:
17. Նույն տեղում:
18. Տե՛ս նույնը, էջ 19-21:
19. «Հայրենիք», 1923, թիւ 5, էջ 40:
20. Ղազար Չարըգը, «Յուշամատեան Բարձր Հայքի», էջ 550:
21. Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 164:
22. Նույն տեղում:
23. Տե՛ս «Հայրենիք», ամս., 1959, թիւ 8, էջ 79:
24. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թղ. 450, գ. 15, էջ 22-23:
25. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 130, թ. 1:
26. Նույն տեղում, էջ 2:
27. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 39:

28. Նույն տեղում, ֆ. 1456, ց. 1, գ. 100, էջ 1:
29. Ալ. Խատիսեան, աշխ. աշխ., էջ 74:
30. Նույն տեղում:
31. Տես «Մշակ», 1905, նոյեմբերի 27:
32. Ալ. Խատիսեան, աշխ. աշխ., էջ 75:
33. Տե՛ս նույն տեղում:
34. Նույն տեղում, էջ 76:
35. «Արշալոյս», 1905, նոյեմբերի 27:
36. Նույն տեղում, ֆ. 1022, ց.3, գ. 111, թ. 1:
37. Նույն տեղում, թ. 2:
38. «Արշալոյս», 1905, նոյեմբերի 27:
39. Նույն տեղում:
40. Ալ. Խատիսյան, աշխ. աշխ., , էջ 74:
41. «Արշալոյս», 1905, նոյեմբերի 23:
42. ՀԱԱ, ֆ. 1022, ց.3, գ. 111, թ. 1:
43. Նույն տեղում:
44. «Արշալոյս», 1905, նոյեմբերի 23:
45. Նույն տեղում:
46. Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 167:
47. Մ. Վարանդեան, աշխ. աշխ., էջ 354:
48. Նույն տեղում:
49. Նույն տեղում, էջ 355:
50. Տե՛ս Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 167:
51. Տե՛ս «Արշալոյս», 1905, նոյեմբերի 27:
52. Տե՛ս «Кавказский рабочий листок» , 1905, 29 ноября:
53. Տե՛ս «Արշալոյս», 1905, նոյեմբերի 29:
54. Նույն տեղում:
55. Տե՛ս «1905թվի հեղափոխությունը», էջ 212:
56. «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակ-ն», հ. Բ, էջ 367:
57. Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 172:
58. Նույն տեղում, էջ 174-175:
59. «Արշալոյս», 1905, նոյեմբերի 29:
60. Տե՛ս Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 174-175:
61. ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 100, թ. 2:
62. Նույն տեղում:
63. Նույն տեղում:
64. Նույն տեղում:
65. «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակ-ն», հ. Բ, էջ 367:
66. Նույն տեղում:
67. ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ.100, թ. 2:
68. Նույն տեղում:

69. Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 176:
70. Տես Հ. Գևորգյան, «Ազատագրական պայքարի հերոսապատումից», Երևան, 2006, էջ 477:
71. ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.100, թ.2:
72. «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակ-ն», հ. Բ, էջ 367:
73. Կ. Գևորգյան, «Ամենուն Տարեգիրք», 1957, էջ 173-174:
74. ՀՅԴ ԿԱ, թԱ 41, գ. 2:
75. Նույն տեղում:
76. «Դրօշակ», 1906, թիւ 1, էջ 10:
77. Նույն տեղում:
78. Տե՛ս նույն տեղում:
79. Կ. Գևորգյան, «Ամենուն Տարեգիրք», 1957, էջ 173-174:
80. ՀՅԴ ԿԱ, թԱ 408, գ. 3:
81. Նույն տեղում:
82. Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 178:
83. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, գ. 100, թ. 2-3:
84. Արմեն Գարո, «Ապրած օրեր», էջ 178:
85. «Մուրճ», 1906, փետրվար, էջ 136:
88. Լեո, «Ժիրայրեան յեղափոխութեան գաղափարաբանութիւնը», հ. Բ, Փարիզ, 1935, էջ 51:
89. «Մուրճ», 1906, փետրվար, էջ 170:
90. Ալ Խատիսեան, աշխ. աշխ., էջ 73:
91. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 3, թ. 3:
92. Նույն տեղում:
93. Տե՛ս Մանուկյան «Ազատագրական պայքարի բառարանում», Գ. 1.
94. «Նիւթեր...», հ. Բ, էջ 329:
95. Տե՛ս նույն տեղում:
96. Չարեանդ, «Միջեալ եւ անկախ Թուրանիա», Երեւան, 12993, էջ 21:

ԳԼՈՒԽ 3. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Ավելի քան մեկ և քարորդ դար է, ինչ պատմության գիրկն է անցել 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարը, սակայն պատմական տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկությունների և նույն ժամանակահատվածում տեղի ունեցած մի շարք կարևորագույն իրադարձությունների համակողմանի փաստարկված վերլուծությունն ու լուսաբանման անհրաժեշտությունը այսօր էլ պատմագիտության մեջ անտարակույս չի կորցրել և չի կորցնելու իր արդիականությունն ու կարևորությունը:

Կարելի է ասել, որ համանման պահանջ կարելի վերագրել ազգային-ազատագրական պայքարի հենքի վրա ծնունդ առած ու այդ պայքարը կազմակերպելու և առաջնորդելու առաքելությունը ստանձնած հայ ազգային-հեղափոխական կուսակցությունների գործունեության ուսումնասիրությանն ու լուսաբանմանը:

Գաղտնիք չէ, որ հայ ազգային-հեղափոխական կուսակցություններից յուրաքանչյուրը պատմական ժամանակաշրջանի յուրահատկությունների, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների թելադրանքով երբեմն իրենց գործունեության ոլորտում ընդգրկել են ռազմավարական նշանակություն ունեցող նոր խնդիրներ և հիմնադրույթներ եւ դրանք կենսագործելու նպատակով որդեգրել համապատասխան մարտավարություն:

Այս առումով Հ.Յ. Դաշնակցության գործունեությունում ռազմավարական նշանակություն ունեցող երևույթներից է «Կովկասյան Նախագիծ»-ը, որը, որպես կուսակցության ծրագրային հիմնադրույթ ընդունվեց 1907թ, Վիննայում կայացած ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում:

Հ.Յ. Դաշնակցության պատմության ուսումնասիրությունը հավաստում է, որ կուսակցության վերին մարմնի՝ ՀՅԴ Խորհրդի եւ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված ծրագրային դրույթներից բերեւս միակը «Կովկասյան Նախագիծ»-ն է, որի ընդունումը տեղիք է տվել բուռն վիճաբանությունների ու ամգամ հակամարտությունների եւ քիչ է մնացել պատճառ հանդիսանար Դաշնակցության պառակտմանը:

Ի՞նչ է «Կովկասյան Նախագիծ»-ը. եւ ինչպիսի՞ նախադրյալներ պայմանավորեցին Հ.Յ.Դաշնակցության կողմից «Կովկասյան Նախագիծ»-ի ընդունմանը:

Եթե անկողմնակալ մոտեցմամբ եւ քննական փաստարկվածությամբ տրվեն վերոհիշյալ հարցադրումների պատասխանները, ապա, ի թիվս մի շարք այլ հարցերի, պիտի պարզաբանել ու միաժամանակ արժեւորել հետեւյալը.

1. «Կովկասյան նախագծի» ընդունումը պատմական ժամանակաշրջանի թելադրանքի հետեւանքն էր, թե ոչ:

2. Արդյո՞ք, «Կովկասյան նախագծի» ընդունումը հիմնավորապես պայմանավորված էր Հ.Յ.Դաշնակցության կողմից պատմական այդ ժամանակաշրջանի յուրահատկությունների անկողմնակալ գնահատմամբ:

3. «Կովկասյան նախագծ» ընդունումը բխում էր հայ ազգային-ազատագրական պայքարի շահերից, այսինքն՝ ի՞նչ նպաստ կարող էր բերել հայությանն ու նրա մղած պայքարին:

Մինչեւ 1903 թվականը Դաշնակցության գործունեության ոլորտը սահմանափակված էր գլխավորապես Արեւմտյան Հայաստանով: ՀՅԴ ձեւավորվել էր արեւմտահայ խնդրի շուրջը, եւ կուսակցության ծրագրում տեղ գտած հիմնադրույթներն ու համաժողովների ընդունած որոշումները հիմնականում վերաբերում էին թուրքական լծից Արեւմտյան Հայաստանի ազատագրմանը:

1903թ. հունիսի 12-ի օրենքը եւ Կովկասի հայաբնակ վայրերում տեղի ունեցած իրադարձությունները, կարելի է ասել, այն կարեւոր նախադրյալներից էին, որոնք հիմք հանդիսացան ՀՅԴ ծրագրային առաջին փոփոխության՝ Կովկասյան նախագծի ընդունմանը:

«Կովկասյան նախագիծ»-ը ընդունել եւ հրատարակել էր Հ.Յ. Դաշնակցության Խորհուրդը, պատմական տվյալ ժամանակաշրջանի եւ կովկասահայության կյանքում տեղի ունեցած արմատական տեղաշարժերի թելադրանքով:

20-րդ դարի սկզբներին Հ.Յ. Դաշնակցությունը, հատկապես եկեղեցիական կալվածների բռնագրավումից հետո, Կովկասում ավելի ու ավելի տարածվելով եւ ամրապնդվելով, դարձել էր բավականի ուժեղ ու ազդեցիկ քաղաքական կազմակերպություն:

Ելակետ ունենալով վերոհիշյալ հանգամանքը Ա. Գյուլխանդանյանը փորձում է հիմնավորել այն նախադրյալները, որոնք հիմք հանդիսացան Հ.Յ. Դաշնակցության կովկասյան գործունեության արմատական փոփոխությանն ու «Կովկասյան Նախագիծ»-ի ընդունմանը:

Ըստ Ա. Գյուլխանդանյանի, Կովկասում Հ.Յ. Դաշնակցության հզորացումը կարող էր բացասական ազդեցություն ունենալ կուսակցության հետագա գործունեության համար. եթե կուսակցությունը

չկարողանար իր ուժերը ճիշտ գործադրել ու տեղաբաշխել, այսինքն որոշակի քայլեր ձեռնարկել՝ իրագործելու կենսունակ եւ գործնական մարտավարություն: Կովկասում արդյունավետ գործունեություն ծավալելու, ժամանակաշրջանի պահանջներին ու յուրահատկություններին համահունչ մարտավարություն որդեգրելու համար Դաշնակցությունը պիտի ելակետ ունենար հետեւյալ հանգամանքները.

1. «Մենք համոզված էինք,-գրում է Ա. Գյուլխանդանյանը,-որ ցարական կառավարութիւնը, եկեղեցական կալուածների գրաւումից յետոյ, չպիտի կանգ առնէ, այլ պիտի շարունակի իր հալածանքները հայերի դէմ»[1]:

2. Հեղափոխական շարժումները թափանցել էին Կովկաս եւ կովկասահայությունը, հատկապես երիտասարդությունը ոգեշնչելով հեղափոխական գաղափարներով ու տրամադրություններով, ձգտում էր իր մասնակցությունը բերել կայսրությունում ծավալվող հեղափոխական շարժումներին ու ցարիզմի դեմ մղվող պայքարին:

Ա. Գյուլխանդանյանի գնահատմամբ՝ «Դաշնակցութիւնը չէր կարող չկշռել այդ հանգամանքը եւ պէտք չզգալ զբաղուելու բացի Տաճկահայաստանի գործերից նաեւ կովկասահայութեան վիճակով, ինչպէս եւ վճռականօրէն մասնակցելու Կովկասի եւ Ռուսաստանի յեղափոխական շարժումներին»[2]:

Ինչպես ցույց տվեց ժամանակը, «Նախագծի» ընդունումը, իրոք, պատասխանատու եւ համարձակ քայլ էր, որի պատճառով ՀՅԴ շարքերում արագորեն ծայր առած տարաձայնություններն ու անգիջում պայքարը, պառակտելով կուսակցությանը, անգամ տեղիք են տալիս զինված բախումների:

1904 թվականին կայացած 3-րդ Ընդհանուր ժողովում ՀՅԴ-ն, մեկ անգամ եւս հավաստելով իր դիրքորոշումը կուսակցության գլխավոր նպատակի՝ արեւմտահայության ազատության եւ իրավունքների համար մղվող պայքարի նկատմամբ, որոշում է. «Ներկայիս Դաշնակցութիւնը իր վրայ առնելով Կովկասահայ դատի ինքնապաշտպանութեան գործը, որոշեց յանձնել այդ՝ Կովկասի Պատասխանատու Մարմնին...

Ժողովը Կովկասի վերաբերմամբ ընդունեց բերանացի եւ գրատոր պրոպագանդի, տեռորի, ժողովրդական ցոյցերի եւ զինուած դիմադրութեան տակտիկը, մնալով ինքնապաշտպանութեան հողի վրայ»[3]:

Համաձայն ՀՅԴ գործող կանոնադրության, ծրագրային հիմնադրույթների փոփոխությունը իրավասու է կատարել Ընդհանուր ժողովը, սակայն ՀՅԴ Խորհուրդը, չսպասելով հերթական՝ 4-րդ համաժողովի

գումարմանը եւ նկատի ունենալով ռուսական կայսրությունում ու ըստ այդմ էլ Ընդրկովկասի հայության քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների յուրահատկությունը, իր վրա է վերցնում ողջ պատասխանատվությունը եւ որոշում. «Կովկասյան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեության...»[4]:

«Կովկասյան նախագիծը», ի տարբերություն ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովի որոշման, որը կուսակցության գործունեությունը Կովկասում սահմանափակում էր ինքնապաշտպանության շրջանակներում, այժմ արդեն ազդարարում է իր հեղափոխական գործունեությունը նաեւ ռուսական կայսրությունում:

ՀՅԴ Խորհուրդը համամման ռազմավարական նշանակություն ունեցող որոշում կայացնելու համար որպես հիմք վկայակոչում է հետեւյալ նախադրյալները.

1) «Որ վերջին Ընդհանուր ժողովից յետոյ (նկատի ունեն 1904թ. ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովը-Հ.Գ.) Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի չափ ծաւալ:

2) Որ բռնապետութիւնը արտաքին քշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարրերի հարուածների տակ զգալապէս թուլացել է:

3) Որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում Կովկասը պէտք է բարձրացնի իր ձայնը:

4) Որ ներկայ պատմական րոպէի ստիպողականութիւնը թոյլ չէ տալիս սպասել նոր ընդհանուր ժողովին՝ Կովկասեան գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար:

5) Որ, բացի այդ կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կուի ներկայ պայմաններում, համաձայնութիւն գալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ»[5]:

ՀՅԴ Խորհրդի թվարկած նախադրյալների մեջ, կարելի է ասել, բացակայում է ամենակարեւորը՝ հայության իրական կացությունը:

Քաղաքական այն կուսակցությունները, որոնք պայքարի դրոշ էին պարզել ընդդեմ ցարական Ռուսաստանի, ի տարբերություն Հ.Յ. Դաշնակցության, կոչված չէին կազմակերպելու ու առաջնորդելու իրենց կամ որեւէ բռնադատված այլ ազգի ազգային-ազատագրական պայքարը:

Ցարիզմի դեմ պայքարող քաղաքական կուսակցությունները, որպես կանոն, սոցիալիստական (բնկերվարական) կամ սոցիալիստ-դեմոկրատական, սոցիալիստ-հեղափոխական գաղափարներ դավանող կուսակցություններ էին:

ՀՅԴ Խորհրդի կողմից «Կովկասյան նախագծի» ընդունումը, անտարակույս, պայմանավորված էր կուսակցության դավանած սոցիալիստական(ընկերվարական) գաղափարաբանությամբ:

Հ.Յ. Դաշնակցության գործունեության ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՅԴ Խորհուրդը «Կովկասյան Նախագիծ»-ը ընդունել է հիմք ունենալով նաեւ հետեւյալ հանգամանքը: Կայսրությունում բռնկվել էր հեղափոխական շարժումը: Ցարիզմի դեմ պայքարելու համար Հ.Յ. Դաշնակցությունն անհրաժեշտաբար պիտի համագործակցեր կայսրության ներսում գործող հեղափոխական կազմակերպությունների հետ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի ցարիզմի դեմ մղվող պայքարը ընդունվեր եւ վավերացվեր ՀՅԴ գերագույն մարմնի կողմից եւ դառնար կուսակցության ծրագրային դրույթներից մեկը, նրա գործունեության ռազմավարությունը:

«Օխրանա»-յի տեղեկագիրը նկատի ունենալով այդ հանգամանքը՝ նշում է. «1905 թուին, ի տես Ռուսաստանում ուժգնացող յեղափոխական շարժման, Դաշնակցութիւնը արդէն անհրաժեշտ գտաւ կազմելու յատուկ ծրագիր, համագործակցութեան համար Կովկասի այն յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ. այս նպատակով, «Կուսակցութեան Խորհուրդ»-ը 1905 թուի Մայիսին կազմեց «Նախագիծ», որը եւ դարձաւ «խարիսխը Դաշնակցութեան գործունէութեան՝ Կովկասում» [6]:

Ցարական ինքնակալության դեմ մղվող պայքարը Դաշնակցությունը որդեգրել էր դեռեւս ՀՅԴ Խորհրդի «Կովկասյան նախագծի» ընդունումից առաջ, 1904թ. նոյեմբերին Փարիզում կայացած Ռուսաստանի հեղափոխական ու դիմադրական կուսակցությունների 1-ին խորհրդաժողովում, որին բացի ռուս, լեհ, ֆինն, վրաց եւ լատիշ սոցիալիստական գաղափարներ դավանող հեղափոխական կուսակցություններից, մասնակցել է նաեւ Հ.Յ.Դաշնակցությունը:

Այդ խորհրդաժողովում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից միաձայն ընդունվել է հետեւյալ բանաձեւը.

«1. Բռնապետության ոչնչացումը:

2. Միապետական (ինքնակալ) կազմի փոխարինումն ազատ, ռամկավարական կարգերով, հիմնուած ընդհանուր ձայնատուութեան վրայ:

3. Ազգային ինքնորոշման իրաւունք, օրէնքներով երաշխաւորած ազգայնական զարգացման ազատութիւն բոլոր ժողովուրդներուն համար»[7]:

Հ.Յ. Դաշնակցությունը, հիմք ունենալով, որ Անդրկովկասի մյուս ազգությունները հայ բնակչության հետ միասին գտնվում են քաղաքական եւ տնտեսական միեւնույն պայմաններում, առաջադրում է քաղաքական ու տնտեսական պահանջներ, որոնք համապատասխանաբար բաղկացած են 17 եւ 12 կետերից[8]:

Ընդհանրացման կարգով քաղաքական պահանջների մեջ կարելի է առանձնացնել.

1. Անդրկովկասը, հիմնված ընդհանուր, հավասար, ուղղակի եւ գաղտնի ձայնատվության (հանրաքվե)վրա, պիտի հռչակվի դաշնակցային ռամկավարական հանրապետություն: Ընդսմին, Անդրկովկասը կազմում է ազատ Ռուսաստանի անբաժան, դաշնակից մաս, իսկ դաշնության կազմի մեջ մտնող բոլոր ազգերն ու կրոնական համայնքները ունենալու էին հավասար իրավասություն:

2. Անդրկովկասյան դաշնությունը ունենալու էր ժողովրդի կողմից ընտրված պառլամենտ Թիֆլիսում եւ ներկայացուցիչներ Ռուսաստանի պառլամենտում:

Բնակչության յուրաքանչյուր 250.000-ը ընտրում էր մեկ պատգամավոր, իսկ ընտրելու իրավունք ունենալու էին 20 տարին լրացած անդրկովկասցիները, անկախ սեռի ու դավանանքի խտրության:

«Ընդհանուր պարտադիր եւ ձրի սկզբնական կրթութիւն մայրենի լեզվով, կատարելապէս համապատասխան իւրաքանչիւր ազգի կարիքներին եւ զարգացման...

Ռուսերէնը, իբրեւ ընդհանուր պետական լեզու՝ պարտադիր է»:

4. Հիմք ունենալով բնակչության ազգային եւ կրոնական պատկանելությունը, Անդրկովկասը բաժանվելու էր ինքնավար գավառների, որոնց ղեկավար մարմինների պաշտոնյաները պիտի ընտրվեին ժողովրդի կողմից: «Համայնական ու գաւառական բոլոր պաշտոնեաների համար պարտադիր է՝ տեղական երկու գլխավոր լեզուներն իմանալը, իսկ Անդրկով. Դաշնակցութեան ընդհանուր պաշտոնեաներու համար՝ երեք գլխաւոր լեզուներ»[9]:

5. Անդրկովկասի Դաշնության եւ գավառների բարձրագույն դատավորները, որոնք ընտրվելու էին համաձայն Անդրկովկասի սահմանադիր ժողովի սահմանած սկզբունքների, անկախ էին ու անփոփոխելի: Հստակ որոշված էր դատարաններում գործածվող լեզուների հարցը, համաձայն որի «Դաշնակցական ընդհանուր դատարանի երեք գլխավոր լեզուները պարտաւորական են»[10]:

«Անդրկովկասեան սահմանադրութիւնը մասամբ կամ ամբողջութեամբ քոքափելու որոշումը կարող է կայացնել Անդրկովկասի ինքնավար ժողովուրդը, ընդհանուր քւէարկութեամբ եւ ձայների 2/3-ի առաւելութեամբ...»[11]:

Տնտեսական պահանջների մեջ կարելի է առանձնացնել.

1. «Հողերի աստիճանական համայնացում»:

2. «Վերացում անուղղակի հարկերի: Մտցնել պրոգրեսիվ տուրք եկամտի ու ժառանգութեան վրայ եւ բոլորովի ազատել դրանից՝ որոշ չափից պակաս մանր եկամուտները»[12]:

3. Բանվորների համար սահմանվում էր ութժամյա աշխատանքային օր եւ տարբեր զբաղմունքի տեր մարդկանց համար՝ նվազագույն օրավարձ քաղաքում եւ գյուղում:

4. Աշխատանքը պաշտպանելու եւ հովանավորվելու էր օրենդրությամբ: Արգելվում էր մինչեւ 15 տարեկանների աշխատանքը: Արգելվում էր նաեւ կանանց եւ երեխաների գիշերային աշխատանքը: Իսկ 15-ից մինչեւ 18 տարեկանների աշխատաժամանակը սահմանափակվում էր վեց ժամով:

Հանգստյան օրը կիրակին էր:

5. «Պետական ապահովագրութիւն դժբախտ պատահարներից, հիւանդութիւններից, ծերութիւնից եւ անաշխատութիւնից՝ պետութեան եւ գործատէրերի հաշուով[13]:

Հ.Յ.Դաշնակցության կողմից խորհրդաժողովի ընդունած բանաձեւը ստորագրել է Միքայել Վարանդյանը:

1905 թ. ՀՅԴ Խորհրդի ընդունած «Կովկասյան նախագիծ»-ը, ինչպես եւ սպասվում էր, մեծ իրարանցում առաջ բերեց հայ հեղափոխական գործիչների ու մտավորականության շրջանում: Մինչ այդ, միայն արեւմտահայության դատի պաշտպանությամբ հանդես եկած Հ.Յ. Դաշնակցությունը որդեգրեց նաեւ արեւելահայության դատի պաշտպանությամբ գործելու ծրագիրը:

«Կովկասյան նախագիծը», փաստորեն, ծնունդն էր արեւելահայության նկատմամբ ցարիզմի կիրառած հանցավոր քաղաքականության եւ Դաշնակցության դավանած ընկերվարության գաղափարաբանությանը:

Ըստ Արշալույս Աստվածատրյանի (1918թ. Արամ Մանուկյանի գլխավորած Երեւանի Ազգային Խորհրդի անդամ-Հ.Գ.)՝ ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի նախօրեին «Կովկասյան նախագիծ»-ի ընդունման պատճառով Դաշնակցության շարքերում առաջացել էին հինգ տեսակետ պաշտպանող ուղղություններ.

1. ՀՅԴ Խորհրդի կողմից հրատարակված այդ որոշման դեմ առաջին հերթին ընդվզում են արեւմտահայ գործիչները. հատկապես՝ ֆիդայիները, որոնք կարծում են, որ Դաշնակցությունը, ընդունելով «Կովկասյան Նախագիծը», դավաճանում է Արեւմտահայաստանի ազատագրության նպատակով օսմանյան բռնապետության դեմ ծավալած ազգային-ազատագրական պայքարին:

Այդ տեսակետը պաշտպանողների առաջնորդը Մոսուն-Զորի արշավանքի մասնակից, «Արտավազդ» մարտախմբի հրամանատար, խմբապետ Բաբերդցի Միհրանն էր, որի անունով էլ կուսակցության մեջ ծայր առած շարժումը ստացել է «Միհրանական շարժում» անվանումը:

Խմբապետ Միհրանը գտնում էր, որ «...ռուսահայ դատի իւրացումով՝ տաճկահայոց դատը կը տուժէ, թէ ընկերվարութիւնը վնասակար է հայկական դատի համար, թէ Դաշնակցութիւնը պէտք է պահել գործունէութեան նախկին սահմաններում՝ բացառապէս զբաղուելով յեղափոխական աշխատանքով ընդդէմ թրքական բռնապետութեան»[14]:

Ըստ Արամ Մանուկյանի գնահատման՝ բոլոր այն գործիչները, ովքեր կարծում էին, թե կովկասյան ընդհարումները խանգարել են արեւմտահայության դատին, չարաչար սխալվել են: Հատուկ նպատակով տարածվող այդ մտացածին լուրերը հայ մութ ուժերի եւ ռուս կառավարության սադրանքների արդյունք էին:

Ա. Մանուկյանը իր պնդումը հիմնավորելու համար նշում է. «... 1905թ. աշնանից սկսած, մանաւանդ 1906թ. այնպիսի ծաւալ եւ բովանդակութիւն ստացաւ, որ այդ 2-3 տարուայ ընթացքում Կովկասից Երկիր թափուած ռազմամթերքն ու զէնքը, դրամական միջոցները ու քանակը գործիչների, մի քանի անգամ աւելի բարձր էին, քան նախկին 15 տարիներին ամբողջ ուղարկածները միասին վերցրած...»[15]:

Կուսակցության մեջ ծայր առած տարաձայնություններն օգտագործեցին նաեւ հայ պահպանողական ուժերը, որոնց գործունեությունը հաճոյքով սնուցում էին հայ հեղափոխական կազմակերպությունների եւ մասնավորապես Հ.Յ. Դաշնակցության շարքերը խարխլելու դիտավորություններ հետապնդող ցարական կառավարության գաղտնի ծառայությունները:

«Կովկասյան նախագծի» դեմ խմբապետ Միհրանի ծավալած պայքարը օգտագործում են Դաշնակցության հակառակորդներն ու ցարական գաղտնի ծառայությունները: Միհրանը հեռանում է Դաշնակցության շարքերից, եւ նրա գլխավորած Միհրանական շարժումը (Միհրանականություն) կուսակցության համար դառնում է պառակտող, դավաճան ու բշնամի ուժ:

2. ՀՅԴ Խորհրդի ընդունած Կովկասյան նախագծին եւ ընկերվարությանը դեմ էին մի շարք անվանի խմբապետներ ու մտավորական գործիչներ, հատկապես Անդրանիկը, Սեբաստացի Մուրադը, Ավ. Իսա-

հակյանը, Ա. Վռամյանը, Ռ. Զարդարյանը: Ի տարբերություն Սիհրանի եւ նրա կողմնակիցների, նրանք, այնուամենայնիվ, մնացել են Դաշնակցության գաղափարական ակունքներում եւ ի վերջո պաշտպանել են կուսակցության միասնականությունը[16]:

3. Հ.Յ. Դաշնակցության ղեկավար գործիչների ճնշող մեծամասնությունը՝ Ս. Չավարյանը, Ռոստոմը, Ավ. Ահարոնյանը, Ակնունին, Մ. Վարանդյանը, Ե. Թոփչյանը, ինչպես նաեւ անվանի խմբապետներ Նիկոլ Դումանը, Խանասորի Վարդանը, Սեւքարեցի Սաքոն եւ Սեպուհը, «Կուսակցութեան մէջ բռնում էին Կենտրոնական տեղը՝ պաշտպանելով տաճկահայ եւ ռուսահայ դատերի միացման եւ ընկերաւարութեան իւրացման ծրագիրը»[17]:

Վերոհիշյալ գործիչները 4-րդ Ընդհանուր ժողովում հանդես են եկել ի պաշտպանություն ՀՅԴ միասնականության պահպանմանն ու ամրապնդմանը: Այս առնչությամբ առավել ուշագրավ է Նիկոլ Դումանի տեսակետը: Նա թեեւ չի մասնակցել Ընդհանուր ժողովի աշխատանքներին, բայց իր տեսակետը ներկայացրել է ժողովի մասնակիցների քննարկմանը: Դումանը դատապարտում է աջ եւ ձախ հոսանքների անջատողական ձգտումները եւ առաջ է քաշում միանգամայն հիմնավորված՝ տվյալ ժամանակաշրջանի համար խիստ կարեւորություն ներկայացնող հետեւյալ առաջարկությունները.

Քանի որ կուսակցության աջ եւ ձախ հոսանքները ձգտում էին հիմնական ուշադրությունը դարձնել հայության այս կամ այն հատվածի ազատագրության խնդիրների վրա, Դումանը մերժում էր հայությանը երկու հատվածների բաժանելու եւ առանձին-առանձին կազմակերպություններ ստեղծելու տեսակետները: Գոյություն ունի միայն մեկ Հայաստան, մեկ միասնական ազգ, որին չի կարելի բաժանել առանձին հատվածների: Նրա դավանանքը ամբողջական, միասնական Հայաստանն է[18]:

Նիկոլ Դումանի տեսակետը, այն է՝ կուսակցության միասնականության պահպանումն ու ամրապնդումը, պաշտպանել են Դաշնակցության անդամների մեծամասնությունը, առավելապես այն անհատները, որոնք պայքարել էին Արեւմտյան Հայաստանում՝ անցնելով ֆիդայական պայքարի բովով:

4. Ըստ Ա. Ազնավուրյանի բնութագրման՝ Դաշնակցության մեջ առաջացել էր «Ձախակողմեան-երիտասարդական խմբեր»:

Կուսակցության մեջ առաջացած այս ուղղությունը ներկայացնում էին Արշակ Ջամալյանը (Ա. Իսահակյան), Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան), Ա. Շահխաթունյանը եւ այլք:

Վերոհիշյալ գործիչները թեպետ կողմնակից էին կուսակցության միասնականության պահպանմանը, բայց ձգտում էին «...յեղաշրջել Դաշնակցութեանը եւ տալ նրան գուտ ընկերաւարական դիմագատկեր»[19]:

5. Անջատականները:

Ս. Վրացյանի գնահատմամբ այս ուղղության ներկայացուցիչները՝ Լեւոն Աթաբեկյանը (Րիխարդ), Մռավյանը (Ամիրյան) եւ այլք պահանջում էին «...ռուսահայ դատը բոլորովին բաժանել տաճկահայ դատից եւ Դաշնակցութեան կովկասեան հատուածը վերածել ընկերվարական-յեղափոխական կուսակցութեան»[20]:

Կուսակցության մեջ ընկերվարական (սոցիալիստական) գաղափարներ դավանող Լեւոն Աթաբեկյանի գլխավորած ձախ հոսանքը, առաջնորդվելով ընկերվարության դրոշով, ձգտում էր համագործակցել ռուս հեղափոխական կուսակցությունների հետ եւ պայքարի սլաքն ուղղել ցարիզմի դեմ:

Պիտի նկատել, որ այս տեսակետի կողմնակիցները անհամեմատ փոքրաքանակ էին:

Քանի որ ՀՅԴ Խորհրդի կողմից «Կովկասյան նախագիծ»-ի ընդունումը տեղիք էր տվել տարաբնույթ տեսակետների եւ ըստ այդմ կուսակցության շարքերում մի քանի ուղղությունների առաջացման, ուստի Թիֆլիսում կայացած ՀՅԴ «Արեւելեան մարմինները 1906 մարտ-ապրիլ Ռայոնական ժողով»-ը իր օրակարգում, ի թիվս մի շարք հարցերի, ընդգրկում է երկու հույժ կարեւորագույն նշանակություն ունեցող «Գ. Տաճկահայաստանի կացութիւնը, Երկրի գործունեութեան եղանակները եւ կովկասահայութեան ունենալիք դերը՝ այդ գործունեութեան մէջ» եւ «...Դ. Դաշնակցութեան կովկասեան գործունէութիւնը» հարցեր[21]:

Ըստ Հ. Տասնապետյանի, Ռայոնական ժողովի աշխատանքներին մասնակցել են «...ամբողջ փարաւզը Դաշնակցութեան աւուանի առաջնորդներուն եւ կարեւոր դէմքեր՝ մարտական դեկաւարներեն,- Սիմոն Զաւարեան, Ռոստոմ, Արմէն Գարօ, Յովնան Դաւթեան, Յովհ. Եուսուֆան (Մելիք), բժ. Համօ Օհանջանեան, Ավետիս Ահարոնեան (Ղարիբ), Գարեգին Խաժակ, Աւետիք Սահակեան, Եղիշէ Թոփչեան, Աբրահամ Գիւլխանդանեան, Միքայել Վարանդեան, Մարտիրոս (Սաֆօ), Սեբաստացի Մուրադ, Վանայ Սարգիս (Բարսեղան), խմբապետ Համազասպ, Ստեփան Տէր Մկրտչեան, Կոմսը եւ ուրիշներ»[22]:

Գ. հարցի կապակցությամբ ժողովականները մանրամասնորեն քննարկում են արեւմտահայ եւ արեւելահայ դատի փոխհարաբերության, այն է՝ միացման կամ անջատման խնդիրը:



Արմեն Գարո



Տուրքախ

Համաժողովում, ինչպես եւ սպասվում էր, առավել թեժ բանավեճեր են ծագում օրակարգի Դ. հարցը (Դաշնակցության կովկասյան գործունեությունը) քննարկելու ժամանակ:

Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումները, ռուս-ճապոնական պատերազմում ռուսական զորքերի կրած պարտությունները ցարիզմի դեմ պայքարելու տրամադրություններ էին հաղորդել Դաշնակցության շարքերին, հատկապես երիտասարդությանը: Հարավային Կովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումները դեռեւս շարունակվում էին: Համաձայն իրավիճակում ինչպիսի՞ գործունեություն էր ծավալելու Դաշնակցությունը. պիտի գործուն մասնակցություն բերեր Ռուսաստանի հեղափոխական շարժումներին, թե շարունակեր գործել նախկին ռազմավարությամբ ու մարտավարությամբ:

Ռայոնական ժողովում այս հարցը քննարկելիս ժողովականների պաշտպանած տեսակետներից առավել ուշագրավը երկուսն են.

1. Ռուսական հեղափոխական շարժումներին գործուն մասնակցության ջերմեռանդ կողմնակիցներ:

Ժողովի մասնակիցներից նրանք ՀՅԴ այն անդամներն էին, ովքեր կուսակցության ծրագրում ի սկզբանե առավելապես կարեւորում էին ընկերվարական գաղափարները:

Վ. Փափազյանի բնութագրմամբ, նրանք «...մեր նորահաս եւ ղեկավարութեան պատրաստուող սերունդն էր՝ Կարճիկեանը, Շահխաթունին, Ալ. Պօպովեանը (իրաւաբան) եւ Աբաբէկեանը՝ վերջինս զօրեղ

տրամաբանող մը եւ հռետորական տաղանդով օժտուած երիտասարդ մը: Անոնց կողմը կը քաշէր նաեւ Շահրիկեան (նկատի ունի ՀՅԴ ավագ սերնդի ներկայացուցիչ Հարություն Շահրիկյանին-Հ.Գ.), ինչը որ կը կատղեցնէր մեր հիները...»[23]:

Իհարկե, Ընդհանուր ժողովի մասնակիցների մեջ կային նաեւ Ռուսական հեղափոխական շարժումներին գործուն մանակցության ջերմեռանդ կողմնակիցների ընդդիմադիրներ, որոնցից Վ. Փափազյանը առանցնացնում է Սիմոն Զավարյանի եւ Սեբաստացի Մուրադի ելույթները:

Ս. Զավարյանը որպես հիշեցում փաստում է, որ Դաշնակցությունը ստեղծվել է արեւմտահայության ազատագրության նպատակով եւ կուսակցության գործունեության կենտրոնը պիտի լինի Արեւմտյան Հայաստանը, «...քանի որ սահմանէն այն կողմը ինկած մեր ժողովուրդը ոտքի ենք հանած մենք՝ յեղափոխականներս, ու անոր միակ անդաւաճան ապաւէնը մենք ենք, մինչ դեռ Ռուսաստանի յեղափոխական ուժերը բազմաթիւ են, որոնք օժտուած են պայքարելու բազմաթիւ միջոցներով...»[24]:

Այսուհանդերձ, Ս. Զավարյանը գտնում է, որ վնասակար է նաեւ բոլորովին կղզիացած լինել ու հեռու մնալ Ռուսաստանում կատարվող իրադարձություններից: Նրա կարծիքով ՀՅԴ մասնակցությունը Ռուսաստանի հեղափոխական շարժումներին անհրաժեշտ է, քանի որ քանակական եւ որակական առումով կարող է նպաստել կուսակցության հզորացմանը:

Իրավացիորեն գնահատելով, որ «Երկու ճակատի վրայ, մեր ունեցած ուժերով եւ միեւնոյն թափով կռուիլը յիմարութիւն է», Ս. Զավարյանը, այնուամենայնիվ, գտնում է, որ անհրաժեշտ է ընդառաջ գնալ եւ հաշվի առել նաեւ աշխատավորական խմբերի ընկերային- տնտեսական պահանջները: Նրա գնահատմամբ «...մեր երտասարդ ընկերներու գործն է այս, անոնք պէտք է նուիրուին այս աշխատանքին»[25]:

Կուսակցության գործունեության ուղենիշը նոր իրավիճակում սահմանելու համար Ս. Զավարյանը կարեւորում է ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները, այն է՝ արեւմտահայության ազատագրության խնդիրն ու ընկերվարությունը, հետեւաբար՝ Դաշնակցության միասնականության պահպանումն ու ամրապնդումը:

, Վ. Փափազյանի բնութագրմամբ, Ս. Զավարյանի «Կրքոտ, կորովի եւ երբեմն կծու հրաշալի ճառը» ժողովականների վրա մեծ տպավորություն է գործում[26]:

Արեւմտահայության ազատագրության նպատակը ՀՅԴ առաջնորդներից մեկի՝ Ս. Զավարյանի կողմից Դաշնակցության գործունեության առանցքը ու նպատակը Ռայոնական ժողովում կրկին անգամ

փաստելը ընդգծված գոհունակությամբ են ընդունում հատկապես Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը, որոնք անվերապահորեն նվիրված էին Օսմանյան կայսրության կապանքներից Արեւմտյան Հայաստանի ազատագրման դատին:

Ի տարբերություն Ս. Զավարյանի, որը կուսակցության գործունեության առանցքն ու կենտրոնը համարում է ազգային ու ընկերվարական խնդիրների ներդաշնակությունն ու միասնականությունը, Սեբաստացի Մուրադը իր ելույթում, կարեւորելով բացառապես արեւմտահայության ազատագրության խնդիրը, նշում է. «Ինչպէ՞ս կրնանք երեսի վրայ բողոլ լեռներուն այն կողմ մեզի հաւատացող, մեզի սպասող տառապող ժողովուրդը՝ չէ՞ որ անոնց յոյս ենք ներշնչած, ոտքի ենք հանած եւ գիտեր-քաղաքներ տակն ու վրայ են եղած...Ի՞նչ իրաւունք ունինք լքելու: Որո՞ւ համար կուզէք կռուիլ, արիւն թափել հոս, Կովկասի մէջ- ռուսներու, որ այսօր թաթարներու միջոցով կուզեն բնաջնջել հայե՞րը: Մենք, Տարօնէն, Սասունէն, Վանէն, Էրզրումէն, Խարբերդէն եւ Տիգրանակերտէն յեղափոխականներս եկած ենք հոս, ձեզի հետ այստեղի մեր եղբայրներն ու քույրերը պաշտպանելու...Կրնա՞ք դուք ալ հրաժարիլ նոյն դերէն հոն, այն կողմ գտնուող Հայաստանի մեր ազգակիցներու վերաբերմամբ...»[27]:

Ընդհանրացնելով այս հարցի կապակցությամբ ժողովականների արտահայտած լուրջ քննադատական տեսակետներն ու առաջարկությունները՝ Հ. Տասնապետյանը նշում է. «Տեղի կունենան լուրջ քննադատութիւններ՝ Կովկասեան Նախագծի կապակցութեամբ, վիճաբանութիւններ՝ «ընկերվարակա՞ն, թէ ազգային» խնդրին շուրջ, եւ, ի վերջոյ, վերստին իրարու կը բախին Թուրքիոյ եւ Կովկասի հայութեանց դատերու անջատման, կամ միաւտեղ՝ իբրեւ համահայկական դատ հետապնդող տեսակէտները [28]:

Ռայոնական ժողովում ժողովականները բեպետ ավելի հաճախ անդրադարձել են Կովկասյան խնդիրների քննարկմանը, բայց պատշաճ ուշադրության են արժանացրել նաեւ Արեւմտյան Հայաստանում գործող ՀՅԴ կառույցների գործունեությանը:

Համաձայն Ռայոնական ժողովի որոշման, Դաշնակցությունը արեւմտահայության զինման համար ավելի մեծ քանակությամբ զենք ու զինամթերք պիտի ուղարկեր Երկիր:

ՀՅԴ կառույցների գործունեությունն ավելի ուժեղացնելու ու արդյունավետ դարձնելու նպատակով Դաշնակցության ղեկավար մարմինները պարտավորվում են մեծ թվով ձեռնհաս ու կարող գործիչներ տրամադրել Երկրում գործող կառույցներին: Իսկ Դաշնակցության

կովկասյան գործունեության եւ Կովկասյան նախագծի վերաբերյալ վերջնական որոշումը պիտի կայացներ ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովը:

Կոմսի հավաստմամբ՝ «Ռայոնական այդ ժողովի ատենն էր, որ մշակուած բանաձեւերու հիմնու վրայ յատուկ մասնախումբ մը կազմուեցաւ կովկասեան գործունէութեան նախագիծ մը պատրաստելու համար: Այդ հանձնախումբի անդամներէն կը յիշեմ միայն Նիկոլ Աղբալեան, Աթաբէկեանը եւ Մարտիրոս Յարութիւնեանը»[29]:

Կովկասյան Նախագծի ընդունման պատճառով կուսակցության մեջ արմատավորված տարբեր տեսակետներ դավանող դաշնակցական գործիչները ձգտել են հնարավորինս ավելացնել իրենց գաղափարակից ընկերների քանակը:

Կուսակցության միասնականությունը պաոակտելու եւ նրանում միահեծան իշխանություն հաստատելու հավակնող ամենահզոր ուժը խմբապետ Միհրանն էր՝ «Կովկասյան նախագծի» եւ արեւելահայության դատի պաշտպանության ամենակատաղի հակառակորդը, որը, շնորհիվ իր ունեցած բազմաթիվ համախոհների, լուրջ վտանգ էր ներկայացնում:

Քանի որ արեւմտահայության դատի պաշտպանության ամենահետեւողական նվիրյալները Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած մարտական գործիչներն էին, ուստի Միհրանն աշխատել է նախեւառաջ ձեռք բերել նրանց զինակցությունն ու աջակցությունը:

Այն օրերին, երբ Թիֆլիսում ընթանում էր Ռայոնական ժողովը, Միհրանը հանդիպել է ժողովի մասնակից ՀՅԴ մարտական անվանի մի շարք գործիչների հետ եւ փորձել, օգտագործելով Կովկասյան նախագծի ընդունման փաստը, նրանց տրամադրել ընդդեմ կուսակցության ղեկավար մարմինների (ՀՅԴ Խորհուրդ, Արեւելյան եւ Արեւմտյան Բյուրո), որոնց հեղինակությամբ էր ընդունվել եւ շարքերին ներկայացվել «Նախագիծը»:

Վ. Փափազյանը (Կոմս) իր հուշերում պատմում է Թիֆլիսի «Վիկտորիա» իջեւանատանը կայացած մի ուշագրավ հանդիպման մասին, երբ Միհրանը, հանդիպելով Սեբաստացի Մուրադին, Սեպուհին, Կայծակ Առաքելին եւ Գյումուշխանի Ավոյին, յուրովի ներկայացրել է Կովկասյան նախագծի ընդունման նախադրյալներն ու բուն էությունը եւ աշխատել շահել նշանավոր ռազմիկների համակրանքն ու վստահությունը:

Միհրանի գնահատմամբ՝ կուսակցության ներսում արմատավորված չարիքը պայմանավորված էր այն հանգամանքով, որ իրենց կառավարող-

ները (նկատի ունի կուսակցության ղեկավար մարմինների՝ ՀՅԴ Խորհրդի ու Բյուրոյի անդամներին-Հ.Գ.) ռուսահայերն են, որոնք, նստած փափուկ աթոռների վրա, կուզեն հեռվից ղեկավարել իրենց ու շարժումը, առանց ճանաչելու Երկիրը, ժողովրդին ու նրանց պահանջները:

Նրա գնահատմամբ՝ իրենց կառավարող ռուսահայերը այդպես են գործում. «...որովհետեւ ռուսական ընկերվարական գաղափարները եւ ծեռնարկները անմիջապէս իրենց քովը տեղի կունենան, իրենց չաները կը շօշափեն, ուրեմն բնական է, որ անոնք տարուին հոսանքէն եւ իրենց ցաւերով ապրին, բայց մենք ալ պէտք է մենք մեզի մնանք եւ մեր ցաւերը եւ ընելիքնիս գիտնանք...»[30]:

Միհրանի բացատրության մեջ հանդիպման մասնակիցները տեսնում են արեւմտահայությանը արեւելահայությանը հակադրելու ու այդ հողի վրա կուսակցությունը պառակտելու միտում:

Միհրանին առաջինը պատասխանել է Գյումուշխանի Ավոն, որը, որպես ճշմարտախոս, արդարամիտ ու քաջ մարդ, մեծ հարգանք էր վայելում ընկերների շրջանում:

Դիմելով Միհրանին՝ Ավոն ասել է. «Ըսածդ ի՞նչ է, Միհրան, բաժանուինք Դաշնակցութիւնէն...Ո՞վ պիտի ըլլայ մեզ ղեկավարողը՝ դուն...Կը հասկնա՞ս ըսածներուդ հետեւանքները: Մենք Տերսիմէն, Քեռիին հետ, այդ դրօշակի տակը կռուեցանք. կռուեցանք Հրայրին ու Ամդրանիկին հետ, կուզես որ մեր նամուսը, մեր ուխտն ու երդումը ցեխի՞ն հաւասարացնես...չէ,՝ մենք քեզի հետ չենք, ա՛ղբերս...»[31]:

Ավելի ժխտողական ու դատապարտող է Սեպուհի հետեւյալ պատասխանը. «Սեւ մտքեր ունիս: Պառակտել կուզես մեր կուսակցութիւնը: Ո՞վքեր են ռուսահայերը, որ կը կառավարեն քեզ ու զիս...Գուրգէ՞նը կըսես, որ իննկաւ մեր տուրք հողին վրայ. Դումա՞նը, Վարդա՞նը, որոնք մեր օրհասական ժամին Երկիր մտան, Թումա՞նը, Թորգո՞մը, Իշխա՞նը, Արա՞մը, որ իրենց երիտասարդութիւնը եւ ասպարէզը զոհած՝ Երկիր էին եկած մեր ժողովրդի համար... Վե՛րջ տուր խաղերուդ, Միհրան, եւ մի պղտորիր մեր կուսակցութեան ներքին կեանքը»[32]:

Ավելի մեղմ, հաշտվողական ու գործնական է Մուրադի արտահայտած տեսակետը: Նրա գնահատմամբ, թեպետ ժամանակաշրջանի հարկադրանքով, կուսակցությունը պիտի մասնակցի իր շուրջը ծավալվող դեպքերին, սակայն Դաշնակցությունը չպետք է խախտի իր դիրքն ու մոռանա Երկիրը:

Մուրադի կարծիքով՝ «Երիտասարդներ ունինք՝ թող անոնք ալ հոս աշխատին, կազմակերպեն, յեղափոխական ուժերու հետ ըլլան: Բայց

ունինք Երկրին հետ տարիներով կապուած մարմիններ, որոնք միայն Երկրին կեանքով կապրին, անոնք ալ մեզի թող օգնեն»[33]:

Մուրադը համամիտ է, որ Դաշնակցությունը Կովկասի մեջ պիտի մասնակցի այնտեղ կատարվող դեպքերին, բայց չպետք է մոռացվի Երկիրը: Ո՞րն է ելքը: Որպես ստեղծված կացությունից դուրս գալու հավանական ելք՝ Մուրադը զինակիցներին ներկայացնում է հետեւյալ առաջարկը. «...աւելի աղեկ չէ՞, որ մեր ղեկաւար մարմինները աշխատանքը բաժանեն իրենց մէջ՝ մաս մը թող կովկասան գործերով զբաղի, միւս մասը Երկրին գործերով...Բայց բոլոր ենթարկուին կեդրոնական մարմնի մը, որ պիտի ուժերու բաշխումը կատարէ եւ օժանդակութեան չափը որոշէ...»[34]:

Հանդիպման մասնակից Կոմսը հավանություն է տալիս Մուրադի առաջարկին եւ պատասխանում, որ այն կարելի է ներկայացնել առաջիկա Ընդհանուր ժողովին, քանի որ նա է միակ իրավասու մարմինը, որը կարող է լուծել նման հարցեր:

Այս հանդիպումը զուտ գործնական առումով չէր կարող բավարարել Միհրանին: Իր գործն առաջ տանելու նկատառումով նա առանձին գործնական հանդիպումներ է ունենում կուսակցության բազմաթիվ անդամների հետ [35]:

Պիտի նկատել, որ ՀՅԴ առավել նշանավոր մարտական գործիչները, թեեւ այնքան էլ չեն համակրել ՀՅԴ Խորհրդի կողմից հրապարակած «Կովկասյան նախագիծ»-ը, բայց կուսակցության միասնականության պաշտպանության հարցում եղել են հաստատակամ ու անզիջում պայքար են ծավալել ընդդեմ Միհրանական շարժման:

Միհրանը իր համախոհների թիւը ավելացնելու եւ «Կովկասյան նախագիծ»-ը ընդունելու դեմ պայքարելու նպատակով, մինչ 4-րդ Ընդհանուր ժողովի գումարվելը, նամակներ է հղել Արեւմտյան Հայաստանում գործող Հ.Յ. Դաշնակցության կառույցների ղեկավարներին, որոնց թվում նաեւ՝ Գեւորգ Չավուշին:

Միհրանն աշխատել է օգտագործել «Կովկասյան նախագծի» ընդունման իրողությունը եւ կուսակցության ղեկավար մարմնի, այն է՝ ՀՅԴ Խորհրդի դեմ տրամադրել արեւմտահայ անվանի գործիչներին: Եթե նա կարողանար իրականացնել իր ծրագրերը եւ իր շուրջը համախմբեր արեւմտահայ գործիչներին, մասնավորապես մարտական ակնառու կենսագրություն ունեցող նշանավոր դեմքերին, որպիսին Գեւորգ Չավուշն էր, ապա անտարակույս մեծ հնարավորություն ձեռք կբերեր՝ իր կամքը թելադրելու կուսակցությանը:

ՀՅԴ Խորհրդի դեմ Միհրանի ծավալած պայքարն ավելի է խորանում եւ սպառնալի կերպարանք ստանում հատկապես Կովկասում չարտունակվող հայ-թուրքական ընդհարումների ավարտից հետո: Միհրանն իր վինակիցներով վերջնագիր է ներկայացնում ՀՅԴ ղեկավար մարմիններին, պահանջելով հրաժարվել «Կովկասյան նախագծից», հակառակ պարագայում սպառնում զենքի ուժով վերցնել կուսակցության ղեկը:

ՀՅԴ Խորհուրդը մերժում է իրեն ներկայացված վերջնագիրը, իսկ Միհրանը կուսակցության ղեկը գավթելու նպատակով ստեղծում է «Ժամանակավոր գինվորական խորհուրդ» կոչվող մարմին: Այդ մարմինը պատրաստում է ՀՅԴ անունով կեղծ կնիք, հրատարակում է թռուցիկներ եւ կուսակցության գինապահեստներից բռնագրավում զենք ու գինամթերք[36]:

ՀՅԴ ղեկավար մարմինները, ի պատասխան Միհրանի եւ նրա կողմնակիցների ձեռնարկած գործողությունների, նույնպես համապատասխան գրություններ (շրջաբերական, նամակներ ու բացատրագրեր) են ուղարկել ՀՅԴ կառույցներին:

Համո Օհանջանյանի ստորագրությամբ Բյուրոյի կողմից Գեւորգ Չավուշին ու Ռուբենին հասցեագրված նամակներից պարզվում է, որ կուսակցության մեջ առաջացած խմբավորումների հակասությունները սպառնում էին նրա միասնականությանն ու խարխլում կարգապահությունը:

Ռուբենը նշում է, որ իրենց նամակներ է ուղարկել նաեւ խմբապետ Միհրանը, որն իր գրություններում շեշտում էր, որ ՀՅԴ Ռուսական կայսրության դեմ պայքարելու ծրագիր ընդունելով, դավաճանում է հայկական հարցի լուծմանը: Քանի որ բացակայում են Գեւորգ Չավուշի տեսակետը վկայակոչող փաստաթղթեր, ուստի դժվար է բնութագրել նրա դիրքորոշումը «Կովկասյան նախագծի» վերաբերյալ: Միայն Ռուբենի հուշերից պարզվում է, որ Միհրանին գրված պատասխանում Գեւորգն ու ինքը պնդել են, թե՝ «...Տաճկահայ դատը բնաւ չի վնասուիր նախագծէն եւ վերջապէս էջմիածինը նոյնքան հայաստան է, որքան ս. Կարապետը»[37]:

Կարելի է ասել, որ Ռուբենի վերոհիշյալ վկայությունը այնքան էլ համոզիչ չէ: Վարց է ծագում. այդ նույն ժամանակահատվածում, երբ այնքան էլ լավ ու ապահով չէին գործում հաղորդակցության միջոցները եւ չափազանց դժվար էր իրականացնել կապը Երկրի ու Կովկասի միջեւ, ինչպե՞ս, ո՞ւմ միջոցով խմբապետ Միհրանը կարողացավ նամակ հասցնել Գեւորգ Չավուշին, ու նրանից ստանալ Ռուբենի վկայած պատասխան նամակը:

Պահպանվել է Գեւորգ Չավուշի 1907 թ. հոկտեմբերի 17-ին թվագրված «Սարուստանի (նկատի ունի Ռուսաստանի-Հ.Գ.) գինվոր ընկերներին» խորագիրը կրող նամակը:

Նամակում «Կովկասյան նախագծի» վերաբերյալ արտահայտելով «Դուրան-Բարձրավանդակ» կենտր. կոմիտեի դիրքորոշումը՝ Գեւորգը նշում է.«Յաւում ենք, արեան մէջ մկրտուած ընկերներ, որ դուք մոռացաք Տաճկաստանի ու Կովկասի այս տագնապալի դրութիւնը, մոռացաք ձեր ընկեր նահատակների վրէժը, ընկած էք այնպիսի ցնորքների յետեւ, որ կորստաբեր է երկար ու ծիգ տարիների ընթացքում ստեղծուած այն կազմակերպութեան, որի անունն է Դաշնակցութիւն...ձեր ճակատին պիտի դրոշմեն դաւաճանի սեւ անունը, եթէ դուք այնքան նեղ, այնքան կուսակցական լինեք, որ մոռանաք, կլանւիք միմիայն Կովկասեան կամ Տաճկահայ հարցով: Չեզանից կոյր են նրանք, որ չեն ընդունում Տաճկաստանի գործի կարեւորութիւնը եւ Կովկասեան հարցի անհրաժեշտութիւնը...»[38]:

Թեպետ ՀԱՄ արխիվում պահպանվող այդ փաստաթուղթը վերագրվում է Գեւորգ Չավուշին, բայց այն ձեռագիր չէ եւ նամակի շարադրանքի հստակությունն ու գրելաոճը հուշում են, որ չի բացառվում, որ այդ նամակը գրված լինի ոչ թե Գեւորգ Չավուշի, այլ մեկ ուրիշի, օրինակ Ռուբենի կողմից:

Խմբապետ Միհրանին հաջողվում է իր շուրջը համախմբել կուսակցության բազմաթիվ անդամների, որոնք դժգոհ էին Դաշնակցության որդեգրած ռազմավարությունից:

Միհրանի այդ շրջանի գործունեության եւ Միհրանականության դեմ կուսակցության ղեկավար մարմինների ձեռնարկած պայքարի մասին ուշագրավ տեղեկություններ են հաղորդում ՀՅԴ «Մեծ քաղաք» կենտր. կոմիտեի գործիչ Մուշեղ Թերզյանի հուշերը: Նա, որպես ՀՅԴ գործիչ, կուսակցության հանձնարարությամբ գործել է Թիֆլիսում, Վրաստանի մի շարք հայաբնակ շրջաններում, ինչպես նաեւ Ջավախքում: Վերթական անգամ գործելով Ջավախքի ՀՅԴ կառույցներում, Մ. Թերզյանը 1906 թ. գարնանը Ռոստոմի պահանջով վերադառնում է Թիֆլիս եւ «Գործ» թերթի խմբագրությունում հանդիպում Ռոստոմին ու Սիմոն Զավարյանին:

Մ. Թերզյանը կուսակցության առաջնորդներին ամփոփ զեկուցում է Ջավախքում կատարած իրենց գործունեության մասին եւ գովեստի խոսքերով ներկայացնում իր հետ գործող ընկերների դրսեւորած պատասխանատվությունն ու կուսակցական կարգապահությունը: Նա դեռ չէր ավարտել իր զեկուցումը, երբ նրան ընդհատում է Ռոստոմը եւ

ընդգծված վրդովմունքով ասում. «..այո՛, Կազմակերպածդ ու մարգած զինուորութիւնն է՛ր կարգապահ, պարտաճանաչ ու գոհաբերող, իսկ այսօր չարիք է դառցած կուսակցութեան գլխին...»:

Երբ Թերզյանը ցանկացել է իմանալ, թե ինչո՞ւ են արժանի Ռոստոմի ներկայացրած մեղադրանքին, Ս. Զավարյանը նախ խոսում է Միհրանական ավանդույթի մասին եւ ասում, որ «...նրանք՝ գործիք դառցան Մշակական (նկատի ունի «Մշակ» թերթին-Հ. Գ.) քլիկի եւ հակայեղափոխական հակառակորդների ձեռքին՝ գործում են հարազատ կուսակցության... մեր սիրելի Դաշնակցութեան դեմ եւ այդ շարժման միացել են թէ Թիֆլիսի եւ շրջաններից վերադառցող բոլոր մարտական ուժերը»[39]:

Շարունակելով Զավարյանի արտահայտած մեղադրանքը՝ Ռոստոմը հայտնում է, որ Թերզյանի կողմից գովասանքի արժանացած զինվորությունն այսօր կույր գործիք է դարձել ուրիշների ձեռքին եւ իր գործունեությամբ վարկաբեկում, քայքայում ու մասնատում է Դաշնակցության շարքերը[40]:

Միհրանի կողմնակիցների ածին նպաստում էր նաեւ այն հանգամանքը, որ 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ՀՅԴ շարքերը համալրեցին Դաշնակցության գաղափարաբանության եւ որդեգրած ծրագրի հետ որեւէ առնչություն չունեցող հարյուրավոր մարդիկ, որոնք իրենց ներկայությամբ մեծապես խարխլել են կուսակցության կարգապահությունն ու միասնականությունը:

ՀՅԴ Արեւելյան բյուրոն միհրանականների հակակուսակցական շարժումը չեզոքացնելու համար դաշնակցական ազդեցիկ ընկերների, հատկապես մարտական փորձառություն ունեցող, մասնակցությամբ կազմում է զինվորական մարմին (խորհուրդ), որի կազմում ընդգրկվում են Սեբաստացի Մուրադը, Մեպուհը, Սմբատ Բորոյանը, Հածի Հակոբ Կոտոյանը, Կոփեցի Պետոն եւ այլոք: Ճիշտ է, զինվորական մարմինը կազմվում է վերոհիշյալ գործիչների գործում մասնակցությամբ, բայց նրանք լինելով ինքնապաշտպանական շրջանների մարտական ուժերի հրամանատարներ, չէին կարող երկարատ ժամանակ մնալ Թիֆլիսում եւ ղեկավարել միհրանականների դեմ մղվող պայքարը:

Քանի որ Կովկասում ծավալվող դեպքերի թելադրանքով վերոհիշյալ գործիչները հարկադրված մեկնում են իրենց վստահված շրջանները՝ կազմակերպելու եւ առաջնորդելու հայ ինքնապաշտպանական ուժերը, այդ պատճառով ՀՅԴ Արեւելյան բյուրոյի նախաձեռնությամբ կազմավորվում է նոր Զինվորական մարմին (խորհուրդ), հետեւյալ կազմով՝ «Պատվոյ նախագահ՝ խորհուրդը ընդունած էր Սեւքարեցի

Սաքոն. գործող նախագահ Կոփեցին (վերոհիշյալ հուշերի հեղինակն է՝ Մուշեղ Թերզյանը-Հ. Գ.), անդամ քարտուղար-Արշակ Նալբանտեան, անդամներ՝ նախիջեւանցի Ստեփան Մելիք Սողոմոնեան, Ղազախեցի Ստեփան, Բուլանուղցիներ՝ Արսէն Գասպարեան, Նազար Բաղդասարեան, Մշոյ Դաշտեցի Ավօն: Փոխանդամներ Վարդան Զուլոեան, Եօճալուխցի Լուտվիկ եւ խնուսցի Յովհաննես Չաուշեան»[41]:

Զինվորական մարմինը (խորհուրդ) իր ենթակայության տակ ունեցել է մարտական միավորներ, որոնք կազմված են եղել հարյուրակից եւ մարտական խմբերից:

Հարյուրակը բաղկացած էր 80 զինվորներից, 20 հնգապետից, 10 տասնապետից, 2 հիսնապետից եւ մեկական հարյուրապետից, գանձապահից, քարտուղարից ու պահեստապետից:

Զինվորական մարմինը իրավասու էր կազմավորել մարտական խմբեր, որոնք կարող էին ունենալ 25-ից մինչեւ 100 անդամներ:

Համաձայն Մ. Թերզյանի վկայության իրենց ենթակայության տակ գտնվող մարտական խումբը ունեցել է 16 զինվոր, 4 հնգապետ, 2 տասնապետ եւ մեկական խմբապետ, գանձապահ, քարտուղար ու պահեստապետ:

Բացի մարտական խմբերից, Զինվորական մարմնի(խորհուրդ) ենթակայության տակ եղել են քաղաքական եւ օժանդակ խմբեր: Խրապետերի կողմից ղեկավարվող այդ խմբերի անդամների թիվը սահմանափակ չէր եւ նրանցից յուրաքանչյուրը կարող էր ունենալ 15-100 եւ ավելի անդամներ: Մարտական խմբերի օրինակով քաղաքական եւ օժանդակ խմբերը նույնպես ունեցել են գանձապահ, քարտուղար ու պահեստապետ[42]:

Միհրանը իր զինակիցների աջակցությամբ նույնպես կազմավորել էր Զինվորական մարմին, որը ունեցել է իր կնիքը՝ «ՀՅԴ ժամանակավոր Զին. մարմին» մակագրությամբ: Այդ մարմնի ղեկավարությամբ կազմավորվել են մարտական խմբեր, որոնք գտնվում էին ոչ միայն Թիֆլիսում, այլեւ շրջաններում: Ընդ որում, «ՀՅԴ ժամանակավոր Զին. մարմին»-ի կազմավորած մարտական խմբերում ընդգրկված մարտիկների քանակը ավելին է եղել, քան Զինվորական մարմնի (խորհուրդ) ենթակայությամբ գործող մարտական ուժերը:

Իրենց պայքարի խնդիրներն ու մարտավարությունը ճշտելու եւ համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով Միհրանը Թիֆլիսում հրավիրում է ժողով, որին մասնակցում էին տարբեր շրջանների ներկայացուցիչներ:

Միհրանի հրավերքով այդ ժողովին մասնակցել է Զինվորական մարմնի(խորհուրդ) նախագահ, վերոհիշյալ հուշագրության հեղինակ կոփեցի Մուշեղ Թերզյանը: ՀՅԴ գրականությունում թեպետ բազմաթիվ էջեր կան նվիրված Միհրանականությանը, բայց չկա Միհրանի նախաձեռնությամբ հիմնված «ՀՅԴ ժամանակավոր Զին. մարմին»-ի կառուցվածքի եւ Թիֆլիսում գումարած ժողովի մանրամասները ներկայացնող որեւէ սկզբնաղբյուր: Այս առումով կարելի է ասել, որ Մ. Թերզյանի հուշագրությունն այն եզակի սկզբնաղբյուրն է, որը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում «ՀՅԴ ժամանակավոր Զին. մարմին»-ի կառուցվածքի եւ Թիֆլիսում տեղի ունեցած ժողովում քննարկված առավել կարեւոր հարցերի վերաբերյալ:

Ժողովին մասնակցել են բացի հրավիրյալներից, տարբեր շրջանների 45 ներկայացուցիչներ, որոնցից 4-ը հարյուրակի ներկայացուցիչ էին, 3-ը՝ հիսնյակի, 10-ը՝ մարտական խմբերի, 13-ը՝ քաղաքական եւ 21-ը՝ օժանդակ խմբերի:

Ներկայացնելով ժողովի մասնակիցների կազմը՝ Մ. Թերզյանը, որպես ընդհանրացնող խոսք նշում է. «Ահա մօտաւոր այն ոյժերը, որոնք Միհրանի կազմած ժամանակաւոր մարմնի շուրջ հաւաքուած էին պայքարելու ՀՅԴ դէմ եւ պաշտպանելու տաճկահայ դատին...»[43]:

Ճիշտ է, Մ. Թերզյանը հիմք ընդունելով ժողովի մասնակիցների քանակն ու ներկայացուցչությունը, փորձում է ներկայացնել միհրանականների մոտավոր ուժերը, բայց նրանք իրենց ունեցած մարտական ուժերի ստույգ քանակն ու տեղաբաշխման վայրերը պահել են խիստ գաղտնի եւ ոչ որի չեն հայտնել: Ժողովում Մ. Թերզյանը փորձել է իմանալ «ՀՅԴ ժամանակավոր Զին. մարմին»-ի ղեկավարությամբ գործող մարտական, քաղաքական եւ օժանդակ խմբերի կառուցվածքն ու նրանցում ընդգրկված մարդկանց ստույգ քանակը, բայց Միհրանը մերժել է հայտնել՝ պատճառաբանելով, որ դա ռազմական գաղտնիք է[44]:

Ժողովում նախագահել եւ բացման խոսքով հանդես է եկել Միհրանը: Քանի որ այդ ելույթում ըստ էության շարադրված են Միհրանականության սկզբնավորման դրդապատճառներն ու նրա հետապնդած նպատակների իրական բովանդակությունն ու ուղղվածությունը, ուստի նպատակահարմար ենք գտնում այն ներկայացնել ամբողջությամբ:

«Ընկերներ այսօր հաւաքուած ենք ժողովի, խորհրդակցելու՝ անիրաւուած մի սրբազան դատի շուրջ: Ընկերներ պէտք է գիտնաք, որ Դաշնակցութիւն կուսակցութիւնը՝ իր գոյութեան օրից մինակ մի իտեալ է ունեցել՝ տաճկահայ ժողովրդի ազատագրումը, թուրք բռնակալութեան

տակից...Այդ ժողովրդի ազատագրման իտեալն է, որ հանուր հայութիւնը կապած է այդ կուսակցութեան հետ: Դաշնակցութիւնը՝ իր տասնեակ տարիների գործունէութեան ընթացքում, տաճկահայութիւնը սարսափելի տուժած է՝ թէ նիւթապէս, թէ բարոյապէս...եւ տուած հարիւրաւոր, հազարաւոր զոհեր...: Ընկերներ այսօր պէտք էր, որ այդ կուսակցութիւնը իւր բոլոր ոյժերը միացներ, Տաճկահայ ժողովրդի առաջ իւր վրայ առած պատասխանատու պարտքը կատարեր...Կուզիմ ասել, որ հայութեան հնարաւոր բոլոր ոյժերը միացներ, արտաքին ու ներքին հնարաւոր բոլոր միջոցները գործ պէտք է դնէր լուծելու այդ արիւնի մէջ խեղդուող հայ ժողովրդի դատը եւ...: Բայց ինչ ենք տեսնում, դաշնակցութեան այսօրուայ ղեկաւարութիւնը բացարձակ դաւաճանում են...եւ Տաճկահայ վիրաւոր ժողովրդին յուսախաբ արիւն եւ թողնում են իւր դառն ու դժբախտ ճակատագրին...: Այդ դաւաճանները մէջտեղ են հանած ի'նչ. կովկասեան նախագիծ կոռւելու ռուս կառաւարութեան դէմ, կովկասահայ ժողովրդին էլ այստեղ արեան մէջ խեղդելու...կարծես թէ տուած զոհերի քիւը պակաս է մնացել...: Մենք գործին տեղեակ, Տաճկահայ դատին սրտացաւ ընկերներս տեսնելով այդ դաւաճանների կողմից Տաճկահայ դատին սպառնացող վտանգը, մէջտեղ եկած ենք պաշտպանելու հայ ժողովրդի հետ մէկտեղ այդ սրբազան դատը...: Ընկերներ այդ դաւաճանների բռնած վտանգաւոր ընթացքը անգործունեութեան մատնելու համար՝ կազմեցինք ՀՅԴ-եան ժամանակաւոր զինվորական մարմին, յենելով մեր բոլոր մարտական ոյժերի եւ այդ դատին համակրող մարտական բոլոր հայութեան վրայ:

Զին. մարմինը ունի իւր կնիքը՝ ՀՅԴ ժամանակաւոր զին. մարմին մակագրութեամբ: Զինվորական մարմինը յայտարարած է՝ «Դիկտատուրայ» եւ վերջնականապէս որոշած է՝ ոչ մի միջոցի առաջ կանգ չառնել՝ գրաւելու այդ դաւաճան բախտախնդիրների ձեռքից դաշնակցութեան հետ կապած թէ բարոյական եւ նիւթական բոլոր միջոցները...

Ընկերներ որից յետոյ է ժամանակ. զին. մարմինը հրաւիրելու է ՀՅԴ ընդհանուր պատգամավորական՝ իսկական գերագոյն ժողովը՝ ուղղութիւն տալու կուսակցութեան գործունեութեանը»[45]:

Ինչ խոսք, Միհրանի վկայակոչած փաստարկումներն ու դատողությունները պարունակում են ճշմարտության որոշակի հատիկներ: Իրոք, այնպիսի բախտորոշ ժամանակահատվածում, երբ հայությունը հանում հարազատ եկեղեցու ունեցվածքի պաշտպանության, պայքարի էր դուրս եկել ընդդեմ հզոր կայսրության, ինչ որակով նպաստ կարող էր բերել «Կովկասյան նախագիծ»-ը հայությանն ու նրա մղած ազգային-

ազատագրական պայքարին, առավել եւս այն օրերին, երբ կովկասահայությունը գոյապայքար էր մղում ընդդեմ ցարական իշխանությունների հովանավորությամբ ու աջակցությամբ իրենց բնակավայրերն ասպատակող կովկասյան թուրք հրոսակախմբերի դեմ:

Բայց հետաքրքիր է եւ անկասկած դատապարտելի Միհրանի որդեգրած մարտավարությունը: Նա դատապարտելով ՀՅԴ ղեկավարության գործունեությունն ու իրականացրած քաղաքականությունը, նպատակադրվում է իր ձեռքը վերցնել կուսակցության ղեկը, բայց ոչ թե գաղափարական պայքարով, կամ ինչ-որ խաղաղ ճանապարհով, այլ միմիայն բռնությամբ, մարտական ուժերի միջոցով:

Բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով, չէ որ Դաշնակցությունը, այնուամենայնիվ, հզոր կուսակցություն էր: Միհրանը ինչպե՞ս, ի՞նչ ուժերով կարող էր գրավել այդ կուսակցության «...բարոյական եւ նիւթական բոլոր միջոցները»:

Երբ այդ հարցի պատասխանը ստանալու ակնկալիքով Թերզյանը դիմել է Միհրանին, նա պատասխանել է. «Ընկեր Կոփեցի, Ձեր պահանջին բաւարարութիւն տալ հնարաւոր չէ, դա ժամանակ. զինւ. մարմնի...գաղտնիքն է...»[46]:

Ժողովում ելույթ է ունեցել նաեւ Մ. Թերզյանը: Միհրանն ու նրա զինակիցները չեն իմացել, թե իրականում ո՞վ էր նա եւ ում էր ներկայացնում, այլապես որեւէ պարագայում նրան չէին հրավիրելու մասնակցելու իրենց կազմակերպած ժողովին:

Քանի որ ՀՅԴ ղեկավարության հասցեին հնչեցրած մեղադրանքները Միհրանը հիմնավորում էր հիմք ունենալով հիմնականում «Կովկասյան Նախագիծ»-ը, ուստի Թերզյանն աշխատել է ժողովի մասնակիցներին նախեւառաջ բացատրել «Կովկասյան Նախագիծ»-ի էությունն ու հիմնավորել ՀՅԴ Խորհրդի կողմից նրա ընդունման անհրաժեշտությունը:

Ըստ Թերզյանի, Դաշնակցությունը «...այդ նախագծով մի հեռավոր նպատակ ունէ՝ կովկասում հայ ժողովրդի դրութեան բարելաւումն ու գործարաններում հազարաւոր հայ բանւորների դատի պաշտպանութիւն, մի պահանջ, որ չատ էական է եւ իրաւացի, այսօր այդ ուղղութեամբ՝ պահանջներ ունեն եւ ռուսները, վրացիները եւ ռուսահպատակ բոլոր ազգերը»:

Հ.Յ. Դաշնակցությունը ընկերվարական (սոցիալիստական)կուսակցություն է եւ Թերզյանը իր ելույթում «Կովկասյան Նախագիծ»-ի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորում է հիմք ունենալով ՀՅԴ որդեգրած հենց այդ ռազմավարությունը:

Ընդդիմադառնալով Միհրանի կողմից առաջ քաշած այն մեղադրանքին, որ «Կովկասյան Նախագիծ»-ը ընդունելով, Դաշնակցության ղեկավարությունը փաստորեն հայության ու հայ դատի նկատմամբ բշնամաբար է տրամադրել ցարական իշխանություններին, Թերզյանը իրավացիորեն նշում է, որ ռուս կառավարությունը երբեք բարեկամական վերաբերմունք չի ունեցել հայ ժողովրդի նկատմամբ, սկսած Սարգիս Կուկունյանի արշավանքից մինչեւ Թուման Թումանյանի մարտախմբի կործանումը (նկատի ունի գնդապետ Ռիկովի հրամանատարությամբ գործող ռուս սահմանապահների կողմից 1904 թ. հուլիսի 1-ին «Զարդանիսի» կռվում Թորգոմի եւ Որսորդ Գեւորգի գլխավորած «Որսկան» մարտախմբի ջախջախումը-Հ.Գ.) եւ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ զորքի ու ոստիկանության դրսեւորած հակահայ կեցվածքը:

Ընդհանրացնելով հայության նկատմամբ զարիզմի վարած քաղաքականությունը՝ Թերզյանը տալիս է հետեւյալ գնահատականը՝ «...ինչ ընթացք էր բռնել ռուս կառաւարութիւնը...այն, որ Հայաստանն առանց հայերի էր պէտք իրեն...»:

Թերզյանի ելույթի ժամանակ Միհրանն ու նրա համախոհներն անընդհատ խանգարել են նրան ու փորձել ընդհատել նրա ելույթը. Սակայն, նրան աջակցել են մարտական ղեկավարները, որոնք սպառնացել են լքել ժողովը, եթե թույլ չտրվի կոփեցուն հանգիստ արտահայտելու իր մտքերը:

Թերզյանը ելույթում դատապարտում է կուսակցության ղեկը բռնությամբ զավթելու Միհրանի ծրագրած մարտավարությունը եւ որպես ավելի խելամիտ ու խաղաղ տարբերակ, առաջարկում է հետեւյալը. «Ընկեր Միհրանը ասում է, որ դաշ. ղեկաւարութիւնը դաւաճանում է Տաճկահայ դատին, եթէ դա այդպէս է, մօտիկ ժամանակներում տեղի կունենայ դաշ. գերագոյն ժողովը, որին մասնակցողների 2/3-ը երկրում գործող այդ դատին նւիրուած, արտացաւ ընկերներից են, թող զին. մարմինը՝ բողոքի ղէրի մէջ մտնէ եւ օրինաւոր ճանապարհով իւր արդարացի տեսակէտը ներկայացնէ ժողովին, այդ դէպքում ժամանակ. զին. մարմինը թող լիովին վստահ եղնէ, որ ամբողջութեամբ մենք իրա հետն կեղնենք...»:

Միհրանը ընդհատում է նրան ու ասում. «...գուր տեղն է կոփեցին իր յոյսը դնում պատգամաւորների եւ այդ ժողովի վրայ...որոնց 99%-ը ներկայ ղեկաւարութեան լաքէյներն են...լիովին համոզուած դրա մէջ՝ ժամանակ. զին. մարմինը վերջնական կերպով վճռած է իրագործելու իւր որոշումը...»[47]:

Շարունակելով ելույթը՝ Թերզյանը անդրադառնում է Միհրանի ներկայացրած «Դիկտատուրայի» բացատրությանը, որը ըստ նրա հավաստման մեծապես նպաստում է ժողովականների վերջնական կողմնորոշման վրա:

«...ըստ իս,-նշել է Թերզյանը,-դիկտատոր մարմինը՝ իր մէջ կեդրոնացնում է բէ քաղաքական եւ մարտական բոլոր իրաւունքներն ու ուժերը եւ բոնի միջոցների է դիմելու՝ գրաւելու իսկայ կուսակցութիւնի նրա բոլոր իրաւունքներն ու միջոցները եւ այլն, որը չը տեսնւած դժբախտութիւնների հետ է կապւած, հասկանում էք, գիտէք հետեւանքը ի՛նչ է լինելու...

Մեր կենսունակ մարտական ուժերը թշնամուն թողած իրար կոտորելու են: Կատարելու է մի դաւաճանութիւն: Կարմիր Սուլթանը՝ իր տասնեակ տարիների դիւային աշխատանքով չը կարողացաւ յաջողիլ...եւ դժբախտ Տաճկահայ դատը, մնք մեր ձեռքով պիտի թաղենք...»[48]:

Թերզյանը թողնում է դահլիճը, ընդմիմ կոչ անելով ժողովի մասնակիցներին չմասնակցել եղբայրասպան կռվին ու հեռանալ ժողովից ու Միհրանից:

Պարզվում է, որ ժողովի մասնակիցների մեծ մասը տեղյակ չի եղել, թե ինչ է նշանակում հաստատել դիկտատուրա, դիկտատոր մարմին: Թերզյանի հավաստմամբ, իր բացատրությունից հետո ժողովականների մեծ մասը նոր միայն հասկացել է Միհրանի կողմից Դիկտատուրա հաստատելու նպատակն ու էությունը եւ հետեւելով նրա օրինակին՝ հեռացել է ժողովից:

Միհրանականության դեմ պայքարելու համար միավորվել են բազմաթիվ նշանավոր գործիչներ, անկանի ռազմիկներ, որոնց շարքում էր նաեւ Նիկոլ Դումանը:

Թիֆլիսում Միհրանն իր զինակիցներով փորձում է գավթել նույնիսկ «Հորիզոն» եւ «Հառաջ» թերթերի խմբագրությունը:

Համաձայն Կոմսի վկայության, «Հորիզոն» թերթը գավթելու նպատակով, Միհրանը իր բիկնապահներով ներխուժում է թերթի խմբագրություն: Նրա դեմ դուրս է գալիս խմբագրությունում գտնվող Ավետիս Ահարոնյանը, որը «...թոյլ տուաւ քանի մը խօսք արտասանելու, ապա վճռական քայլերով մօտեցաւ սենեակի դուռին, բացաւ ու որոտաց՝ «դո՛ւրս, դո՛ւրս, իսկոյն»: Միհրանը գլխիկոր դուրս ելաւ ու հեռցաւ»[49]:

Չախողվում է նաեւ նրա կողմից «Հառաջ» թերթի խմբագրությունը գրավելու փորձը:

Վաղօրոք տեղեկանալով թերթի խմբագրությունը գրավելու Միհրանի դիտավորության մասին՝ Նիկոլ Դումանը գալիս է խմբագրություն. «Միհրանը սարսափեց. նոր միայն ուշքի եկավ, երբ տեսավ, որ իր դէմ ժայռի նման ցցված է դաշնակցութեան հին հայդուկապետը»[50]:

Հզոր հայդուկապետի ներկայությունը բավարար էր սանձելու կուսակցության ղեկը գավթելու հավակնություն դրսեւորող խմբապետին: Այս դեպքից հետո Միհրանն իր զինակիցների հետ հեռանում է Թիֆլիսից:

Սարգիս Օհանջանյանի հուշերից պարզվում է, որ 1906 թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Միհրանը եղել է նաեւ Երեւանում եւ հանդիպելով բազմաթիվ կուսակցականների, փորձել է իր շուրջը համախմբել ոչ միայն քաղաքի, այլեւ նահանգի դաշնակցական ազդեցիկ ընկերներին: Դժվար է ասել, թե ինչպիսի՞ հաջողություններ կունենար Միհրանը Երեւանում, եթե նրա ճանապարհին դարձյալ չկանգներ Նիկոլ Դումանը[51]:

Ս. Օհանջանյանի հավաստմամբ՝ Միհրանը «Անհեռատես ընկերներից մի քանիսի պաշտպանությունն ու խրախուսանքը վայելելով, նա ժամանակաւորապէս կարողացաւ միամիտ հոգիներին իր կողմ գրաւել, մինչեւ որ Դուման-Նիկոլը պարզապէս վռնդեց նրան Երեւանից»[52]:

Թեպետ Դաշնակցությունը կարողանում է պահպանել իր միասնականությունը, սակայն կուսակցության շարքերում միհրանականությունը, այնուամենայնիվ, ինչ-որ չափով որոշակի հետք թողել էր եւ այն դեռեւս կարող էր լուրջ վտանգ ներկայացնել: Չպետք է մոռանալ, որ ՀՅԴ անդամների զգալի մասը, հատկապես զինվորական գործիչները, արեւմտահայեր էին կամ արեւմտահայության ազատագրության պայքարին նվիրված անհատներ, որոնք այնքան էլ համակրանքով չէին վերաբերվում «Կովկասյան Նախագիծ»-ին:

Մամուլում եւ բնակչության տարբեր շերտերում ծավալվում էին քննարկումներ, որոնք վերաբերվում էին «Կովկասյան Նախագիծ»-ի եւ արեւմտահայության դատի խնդիրներին: Այդ օրերին հատկապես շատ կարեւոր էր կուսակցության արեւմտահայ անդամների դիրքորոշումը: Ի դեմս կուսակցության արեւմտահայ անդամների, Միհրանն ու նրա համախոհները տեսնում էին իրենց հիմնական ու հուսալի հենարանը:

Կուսակցության միասնականությունն առավելագույնս ամրապնդելու, միհրանականության ազդեցությունը Դաշնակցության շարքերում արմատախիլ անելու համար անհրաժեշտ էր ձեռնարկել որոշակի քայլեր:

Համաձայն Կոմսի հուշերի, նման քայլ ձեռնարկել են ինքը, Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը, երբ լիովին բացահայտվել է միհրանական-

ների բուն նպատակը: Նրանց նախաձեռնությամբ 1906 թ. հոկտեմբերի 30-ին գումարվում է մի համագումար, որին մասնակցել են մտավորական եւ զինվորական 50 գործիչներ:

Համագումարի, որը ստացել է «Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցականներու համագումար» անվանումը, քննարկման հիմնական թեման նվիրված է եղել «Կովկասյան Նախագծին» եւ արեւմտահայության դատին առնչվող խնիրների քննարկմանը:

Համագումարը, քննության առնելով վերոհիշյալ հարցերը՝ հանդես է գալիս հայտարարարությամբ, որն ուղղված է այն անհատների դեմ, որոնք պայքարելով «Կովկասյան Նախագծի» դեմ, մամուլում եւ բնակչության մեջ հանդես են գալիս ի պաշտպանություն արեւմտահայության դատի:

Քննելով այդ երեւույթի պատճառները՝ «Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցականներու համագումար»-ը հայտարարարում է.

«1.-Որ այդ հակայեղափոխական մութ տարրերու ագիտացիա է՝ զանազան մութ, ստոր, եսական նպատակներու ծառայող.

2.- Որ՝ այդ ընթացքը լոկ դաւաճանական արարք է տաճկահայ դատի համար.

3.-Որ՝ Դաշնակցութիւնը, ինչպես 16 տարի առաջ, այսօր ալ կը շարունակէ գործել նոյն ճանապարհով՝ իբր հայ ժողովրդի եւ դատի պաշտպան»[53]:

Քանի որ բացակայում է «Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցականներու համագումար»-ի իսկությունը հաստատող այլ սկզբնաղբյուր, ուստի դժվար է հաստատել, որ , իրոք, տեղի է ունեցել Կոմսի ներկայացրած համագումարը, որն էլ ընդունել է վերոհիշյալ հայտարարությունը:

Փոքր-ինչ համոզիչ չէ համագումարի գումարման գործում Սեբաստացի Մուրադի, որպես նախաձեռնող անդամի, մասնակցությունն ու դիրքորոշումը: Հանրահայտ իրողություն է, որ ՀՅԴ առավել նշանավոր զինվորական գործիչներից հենց Մուրադն է, որն ի սկզբանե ընդգծված հակակրանքով է վերաբերվել «Կովկասյան Նախագծին» եւ այդ մասին նա անքաքույց արտահայտել է բազմիցս, նույնիսկ ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում, որը կայացել է 1907 թ. (փետրվար 22- մայիսի 20)-ին, այսինքն «Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցականներու համագումար»-ից ավելի քան չորս ամիս անց:

Ճիշտ է, Սեբաստացի Մուրադը ՀՅԴ անդամ էր եւ իհարկե կողմնակից էր կուսակցության միասնականության պահպանմանը, բայց նա նախեւառաջ արեւմտահայության ազատագրության պայքարի նվիրյալն էր,

Սասունի եւ Զանգեզուրի հերոսը, որը մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում ազատագրական պայքարի գործիչների շրջանում:

Որպեսզի առավել հստակ ու համոզիչ լինի Մուրադի դիրքորոշումն ու վերաբերմունքը «Կովկասյան Նախագծի» ու արեւմտահայության ազատագրության դատի նկատմամբ, վկայակոչենք Մուրադի ուշագրավ ելույթը 1906 թ. մարտ-ապրիլ ամիսներին Թիֆլիսում կայացած ՀՅԴ արեւելյան մարմինների Ռայոնական ժողովում, որը իր հուշերում ներկայացնում է արդեն բազմիցս հիշատակված Վահան Փափազյանը):

Ռայոնական ժողովին ներկա են եղել Հ.Յ.Դաշնակցության առաջնորդների ու նշանավոր գործիչների մեծ մասը՝ Ս. Զավարյան, Ռոստոմ, Արմեն Գարո, Յոնան Դավթյան, Հովհ. Յուսուֆյան, Համո Օհանջանյան, Ավ. Ահարոնյան, Գարեգին Խաժակ, Ավ. Սահակյան, Ա. Գյուլխանդանյան, Մ. Վարանդյան, Սեբաստացի Մուրադ, Սեպուհ, Համազասպ, Կոմս եւ այլոք:

Ժողովի օրակարգի գլխավոր հարցերի թվում էին «Ք. Հայ-թաթարական ընդհարումները...Գ. Տաճկահայաստանի կացութիւնը, Երկրի գործունեութեան եղանակները եւ կովկասահայութեան ունենալիք դերը՝ այդ գործունէութեան մէջ...Դ. Դաշնակցութեան կովկասեան գործունէութիւնը...»[54]:

Կոմսը իր հուշերում ներկայացնելով Ռայոնական ժողովի որոշ մանրամասներ՝ նշում է, որ ժողովականների միջեւ բուռն բանավեճ է ծագել, երբ քննարկվել են հետեւյալ հարցերը.

«1. Կովկասեան թաթարներու վտանգաւոր շարժումները, ռուս կառաւարութեան դիրքը եւ Դաշնակցութեան ընելիքը:

2. Դաշնակցութեան գործուն մասնակցութիւնը Ռուսաստանի յեղափոխական շարժումներին...»[55]:

Ժողովի մասնակիցների մի մասը, հատկապես ՀՅԴ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ Խ. Կարճիկյանը, Շահխաթունին, Ալ. Պոպովյանը, Լեւոն Աբաբեկյանն ու այլոք, գտնում էին, որ Դաշնակցությունը պիտի գործուն մասնակցություն ունենա Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական շարժումներին:

Ժողովում, Կոմսի բնութագրմամբ, կրքոտ, կորովի եւ երբեմն կծու, հրաշալի ելույթներ է ունեցել Ս. Զավարյանը, որոնցից մեկը եղել է առավելագույնս տպավորիչ ու անմոռանալի:

Այդ ելույթում Ս. Զավարյանն այն տեսակետն է զարգացրել, որ «...Դաշնակցութիւնը ստեղծուած է բոլշեւիկ ժողովրդի ազատագրութեան նպատակով. ծաղրութեան կենդրոնը հոն պիտի լինի, քանի որ

սահմանէն այն կողմը ինկած մեր ժողովուրդը ոտքի ենք հանած մենք՝ յեղափոխականներս, ու անոր միակ անդաւաճան ապաւէնը մենք ենք, մինչդեռ Ռուսաստանի յեղափոխական ուժերը բազմաթիվ են...երկու ճակատի վրայ, մեր ունեցած ուժերով կռուիլը յիմարութիւն է: Անհրաժեշտ է, սակայն, որ մենք ընդ առաջ երթանք մեր աշխատաւորական խումբերու ընկերային-տնտեսական պահանջներուն. մեր երիտասարդ ընկերներու գործն է այս, անոնք պէտք է նուիրուին աշխատանքին»[56]:

Կոմսի վկայութեամբ, Ս. Զավարեանի ելոյթը հիացմունք է պատճառել Մուրադին եւ Սեպուհին: Ավելին, ոգեւորվելով այդ ելոյթով, Մուրադը չի համբերել եւ ժողովում ելոյթ ունենալով, անկեղծորեն արտահայտել է իր սրտի ու մտքի խոսքը:

«...Ինչպե՞ս կրնանք,-ասել է Մուրադը,- երեսի վրայ թողուլ լեռներուն այն կողմ մեզի հաւատացող, մեզի սպասող տառապող ժողովուրդը. չէ՞ որ անոնց յոյս ենք ներշնչած, ոտքի ենք հանած եւ գիւղեր-քաղաքներ տակն ու վրայ են եղած...Ի՞նչ իրաւունք ունինք լքելու: Որո՞ւ համար կուզէք կռուիլ, արիւն թափել հոս, Կովկասի մէջ-ռուսներու, որ այսօր թաթարներու միջոցով կուզեն բնաջնջել հայե՞րը: Մենք, Տարօնէն, Սասունէն, Վանէն, Էրզրումէն, Խարբերդէն եւ Տիգրանակերտէն յեղափոխականներս եկած ենք հոս, ձեզի հետ այստեղի մեր եղբայրներն ու քոյրերը պաշտպանելու...Կրնա՞ք դուք ալ հրաժարիլ նոյն դերէն հոն, այն կողմ գտնուող Հայաստանի մեր ազգակիցներու վերաբերմամբ...»[57]:

Ելոյթի սկզբում Մուրադը ընդգծում է, որ «Ես ինտելեգենտ չեմ, գրագէտ ալ չեմ, այն ինչ որ կըսեն ձեզմէ շատերը՝ սորված եմ, իսկ ԵՍ ԱՊՐԱԾ ԵՄ... »:

Ժամանակն աներկբա ապացուցեց, որ բնատուր մտավոր հարուստ կարողություններով օժտված Մուրադն ու Հայոց Ազատամարտին անվերապահորեն նվիրված նրա զինակիցները, թեեւ «ինտելեգենտ ու գրագետ» չէին, բայց շատ ավելի լավ էին հասկանում հայության իրական կացությունն ու անելիքները, քան Եվրոպայի տարբեր համալսարանում կրթություն ստացած եւ Ռուսական հեղափոխությամբ տոգորված ընկերվարական գաղափարներ դավանող հեղափոխականները, որոնք Մուրադի դիպուկ բնութագրմամբ «այն ինչ որ կըսեն ձեզմէ շատերը՝ սորված են», բայց ոչ ապրած:

1907թ. (փետրվար 22- մայիսի 20) Վիեննայում գումարվում է ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովը, որտեղ, ինչպես արդեն նշվել է, քննարկվում եւ ընդունվում է «Կովկասյան Նախագիծ»-ը, որպես կուսակցության ծրագրային հիմնադրույթ:

«Կովկասյան նախագծի» ընդունման հետեւանքով կուսակցության մեջ առաջացած այլ եւ ծախ հոսանքներից յուրաքանչյուրը ձգտում էր, որպեսզի ՀՅԴ Ընդհանուր ժողովը հաստատեր իր պաշտպանած տեսակետը:

Մարտի 30-ին, Ընդհանուր ժողովի 58-րդ նիստում «Կովկասյան Նախագծի» մասին զեկուցել է Ակնունին (Խաչատուր Մալումյան)[58]:

Քանի որ «Կովկասյան նախագծի» կապակցությամբ կուսակցության շարքերում սկիզբ էր առել անզիջում պայքար, այդ պատճառով Խ. Ակնունին՝ որպես ՀՅԴ Արեւմտյան Բյուրոյի ներկայացուցիչ, փորձում է նախ՝ բացատրություն տալ Դաշնակցության Խորհրդի կողմից «Կովկասյան նախագծի» ընդունման եւ հրատարակման մասին: Վկայակոչելով որոշակի փաստարկներ՝ նա աշխատում է հերքել պատգամավորների՝ այս առնչությամբ հնչեցրած այն մեղադրանքները, «...թէ Խորհուրդն իրաւունք չունէր հրատարակելու «Նախագիծը», եւ որ նա դրանով գործել է անհրաւական մի քայլ..»[59]:

Միաժամանակ պաշտպանելով ՀՅԴ անդրանիկ ծրագրում տեղ գտած ընկերվարական սկզբունքները՝ Ակնունին գտնում է, որ «Կովկասյան նախագծի» ընկերվարության սկզբունքները ոչ միայն չեն հակասում ՀՅԴ ծրագրին, այլեւ ավելի են լրացնում եւ ամբողջականացնում այդ ծրագիրը:

Խ. Ակնունու բացատրությունը միանշանակորեն չի ընդունվում համաժողովի մասնակիցների կողմից: «Նախագիծը» քննարկելու ժամանակ ծավալվում է թեժ բանավեճ եւ Խ. Ակնունուն ամենախիստ հակադրվողը եղել է Սեբաստացի Մուրադը, որին պաշտպանել են համաժողովի մասնակից մարտական ընկերները:

Ինչու՞ էին նրանք դեմ ՀՅԴ ծրագրում «Կովկասյան նախագծի» ընդգրկմանը: Թվում է, թե պետք է լիներ ճիշտ հակառակը: Չէ՞ որ հենց նրանք էին 1905-1906 թթ. Անդրկովկասում բռնկված հայ-թուրքական ընդհարումներում հայության ինքնապաշտպանական ուժերի առաջնորդները: Նրանք քաջատեղյակ էին, որ առանց իրենց գործուն միջամտության՝ կովկասահայությունը նույնպես դատապարտված էր կոտորածների, այս անգամ արդեն հենց ցարական իշխանությունների հովանավորությամբ:

Հակադրվելով Ակնունուն՝ Մուրադը ժողովականների ուշադրությունը բեւեռում է հետեւյալ կարեւոր հանգամանքների վրա.

1. Նրա կարծիքով 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում դաշնակցության գործունեությունը պետք է սահմանափակվեր մի-

միայն ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմամբ եւ չպետք է դուրս գար այդ շրջանակներից:

«...Նա (նկատի ունի 1904 թ. 3-րդ ընդհանուր ժողովը- Հ.Գ.) հրահանգել է դիմադրել ռուս կառավարութեան ոտնձգութիւններին, բայց ոչ երբեք յարձակողական դիրք բռնել նրա վերաբերմամբ»[60]:

2. Քանի որ Դաշնակցության Խորհուրդը խախտել էր Ընդհանուր ժողովի սահմանած կարգը, եւ ըստ այդմ անհամապատասխանություն է առաջացել ՀՅԴ ծրագրի եւ «Կովկասյան նախագծի» միջեւ:

Ելակետ ունենալով այդ հանգամանքը՝ նա պնդում է, որ Նախագիծը ընդունող ՀՅԴ Արեւելյան Բյուրոն եւ այն հաստատող եւ հրապարակող Դաշնակցության Խորհուրդը իրավունք չուներին նման քայլեր իրականացնելու:

3. Բացի դրանից, «...Խորհուրդը,-Մուրադի պնդման,- իրավունք չուներ հրատարակել Նախագիծը, քանի որ այդ խնդրին մասնակցած չեն եղել Պատասխանատու Մարմինների, մանաւանդ Երկրի ներկայացուցիչները»[61]:

Ընդհանուր ժողովում արեւմտահայության դատի պաշտպանությամբ առաջնորդվող գործիչների գլխավոր մտավախությունը միաժամանակ երկու ճակատով՝ Օսմանյան կայսրության, իսկ այժմ արդեն նաեւ ցարական կառավարության դեմ պայքարելու ռազմավարության որդեգրման վտանգավորությունն ու աննպատակահարմարությունն էր:

Եթե ելակետ ընդունենք Փարիզի խորհրդաժողովի որոշումները, ապա ակնհայտ է դառնում, որ խորհրդաժողովին մասնակցած կուսակցությունների քաղաքական պայքարի զինանոցում ազգային խնդիրների լուծումը, ազգային պետականության ստեղծման նպատակը մղված էին երկրորդական պլան:

Յուրահատկություններին ու պահանջներին համահունչ չլինելու միտումները, այլեւ ժողովրդի մեջ առաջացրած դժգոհությունն ու ապագայի նկատմամբ արմատավորած վախն ու տագնապը:

Նրանց համար կարեւորագույնը ցարական ռեժիմի տապալումն էր, ռամկավարական, ընկերվարական կարգերի հաստատումը, ապա նոր միայն ազգային խնդիրների լուծումը: Իրենց դավանած սկզբունքները կենսագործելիս, առաջնորդվելով մարքսիստական տեսությամբ, այդ հեղափոխական կուսակցությունները առավելապես կարեւորել են դասակարգային պայքարը, քան ազգային խնդիրները:

Օրինական հարց է ծագում. այնպիսի ժամանակաշրջանում, երբ արեւմտահայությունն արյունաքամ էր լինում դահճի ճիրաններում, եւ

բազում հայրենաշունչ հայորդիներ հանուն հայ ժողովրդի ազատագրման գոհվում էին օսմանյան բռնապետության դեմ մղվող պայքարում, որքանո՞վ էր նպատակահարմար, որ Դաշնակցությունը որդեգրեր «Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեութեան...» ռազմավարությունը:

Անտարակույս, Դաշնակցությունը պարտավոր էր անպայմանորեն իր գործունեության ոլորտում ընդգրկել նաեւ արեւելահայության ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրները, բայց ոչ թե որդեգրել ցարական իշխանությունը տապալելուն նպատակաուղղված ռազմավարություն եւ դառնալ դասակարգային պայքարի ջատագովն ու քարոզիչը: Եվ վերջապես, ի՞նչ օգուտ կարող էր տալ հայ ժողովրդին, նրա ազգային - ազատագրական պայքարի առաջնորդի դերը ստանձնած կուսակցության կողմից այնպիսի ռազմավարության որդեգրումը, որի իրական բովանդակությունն ու ուղղվածությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մարտահրավեր ցարական իշխանությանը:

Այս առումով միանգամայն իրավացի էր Մեքաստացի Մուրադը՝ պնդելով. «Ոչ ոք չի կարող հակառակ լինել կովկասեան գործունեութեան, ինչպէս եւ ես. բայց մենք չենք կարող թէ՛ սուլթանի եւ թէ ցարի դէմ կռուել... Տաճկահայաստանում Դաշնակցութիւնը չի կարող ունենալ ոչ մի դասակարգային գործ: Մեր դատը ազգային դատ է: Դասակարգային ոչ մի տարածայնութիւն տեղ չպետք է գտնի մեր գործունեութեան մէջ»[62]:

Ընդհանուր ժողովում «Կովկասյան Նախագիծ»-ի ընդունման ամենաջերմեռանդ կողմնակիցներից մեկը, եթե ոչ ամենաջերմեռանդը, եղել է Ակնունին: Նրան հասցեագրած վերոհիշյալ նամակում, Վահե Արծրունին փորձում է մի շարք փաստարկներով ապացուցել ոչ միայն այդ նախագծի ընդունման վտանգավորությունը, ժամանակաշրջանի պահանջներին ոչ համահունչ լինելը:

Ըստ Վ. Արծրունու, Դաշնակցությունը չպետք է բացեր պայքարի երկրորդ ճակատը եւ միանալով մյուս հեղափոխական կազմակերպություններին, կռիվ հայտարարեր ցարական կառավարությանը: Ընդհակառակը, Դաշնակցությունը կարող էր շահել իշխանությունների վստահությունն ու համակրանքը, եթե որդեգրեր ու իրականացներ այնպիսի քաղաքականություն, որը բխում էր ժամանակաշրջանի յուրահատկություններից եւ չէր հակադրվում ցարիզմի շահերին ու քաղաքականությանը[63]:

Վ. Արծրունու կարծիքով այդ ժամանակ իշխանությունները ձգտում էին, որ Դաշնակցությունը հանդես գար ոչ թե ցարիզմի դեմ պայքարող,

այլ որպես կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպող ու առաջնորդող կազմակերպություն:

Որպես փաստարկ իր պնդումների՝ Վ. Արծրունին վկայակոչում է հետեւյալ գործոնները. 1. «...Կովկասի բարձր իշխանութիւնը ակներեւ կերպով յոգնել էր այդ անվերջ կոտորածներից ու պարզ էր, որ երկրի տնտեսական քայքայումը մի կողմից, միւս կողմից այն վտանգը, որ երկիրը զինվելով, կարող էր մէկ օր մեծ սպառնալիք դառնալ իր համար...»[64]:

2. Ցարական իշխանությունների համար մեծ սպառնալիք էր նաեւ իր կայսրության տարածքում, տվյալ դեպքում Կովկասում, պանիսլամիզմի տարածումն ու արմատավորումը: Վ. Արծրունու պնդմամբ այդ իրավիճակում «...կառավարութիւնը ստիպուած եղաւ ուղղակի կռուել քրքական պանիսլամական-սեպերատիւ ձգտումների դէմ...Եւ շտաբի մարդիկ չէին ծածկում իրենց բուռն ատելութիւնը դէպի թուրքերը...»[65]:

Հիմք ընդունելով վերոհիշյալ նախադրյալները, Վ. Արծրունին վերոհիշյալ նամակում վստահաբար փորձում է Ակնունուն հավատացնել, որ չէր լինի Ղազախի, Թիֆլիսի, Բորչալուի եւ այլ բնակավայրերում տեղի ունեցած հետագա կոտորածները, եթե Դաշնակցությունը չմիանար հեղափոխական կազմակերպություններին ու պայքարի դրոշ պարզեր ընդդեմ ցարական իշխանությունների:

Վ. Արծրունին Ակնունուն հայտնում է, որ «Կովկասյան Նախագիծ»-ի, այն է՝ ցարական իշխանությունների դեմ հեղափոխական պայքար մղելու Դաշնակցության որդեգրած ծրագիրը խիստ դժգոհություն է առաջացրել նաեւ հասարակության մեջ: Որպես դժգոհության առաջացման պատճառ, նա վկայակոչում է. 1. «...հասարակութիւնը դժգոհ էր Դաշնակցութիւնից, որ նա այսպիսի տագնապալի միջոցին չկարողացաւ կամ չկամեցաւ մի քիչ օպորտունիստ լինել եւ երկու ֆրոնտի վրայ պատերազմ յայտարարեց»[66]:

Այդ նույն մտավախությունը Ընդհանուր ժողովում, ինչպես արդեն նշվել է, արտահայտել է Մուրադը՝ նշելով « մենք չենք կարող թէ՛ սուլթանի եւ թէ ցարի դէմ կռուել...»:

2. «Դժբախտութեան երկրորդ կետը այն էր, որ Դաշնակցութիւնը որոշ ծրագիր՝ չյայտարարեց, մի բան որ շատ կարեւոր էր թէ մեզ համար եւ թէ կառաւարութեան...»[67]:

Ի՞նչ ծրագիր պիտի հայտարարեր Դաշնակցությունը, որպեսզի չառաջացներ հասարակության եւ կառավարության դժգոհությունը: Անկասկած, Դաշնակցությունը պիտի հրաժարվեր «Կովկասյան Նախագիծ»-ից եւ հայտարարեր, որ իր գործունեության գերխնդիրը եղել ու մնում էր ազգայինն ու հայության ինքնապաշտպանության կազմակերպումը:



Որքան էլ Վ. Արծրունին փորձեր, անգամ ծանրակշիռ փաստարկների վկայակոչմամբ ապացուցել «Կովկասյան Նախագիծ»-ի ընդունման աննպատակահարմարությունն ու վտանգավորությունը, այնուամենայնիվ, այս հարցում Դաշնակցության դիրքորոշումն ու վճիռն արդեն անշրջելի էր:

Ընդհանուր ժողովի մասնակիցներից շատերի համար գաղտնիք չէր, որ, իրոք, Դաշնակցության Խորհուրդը չարաշահել էր իր իրավասությունները՝ ընդունելով «Կովկասյան Նախագիծ»-ը, բայց մտահոգվելով կուսակցության հնարավոր պատակտումից, հանուն ՀՅԴ միասնականության պահպանմամբ, համաժողովում կոչ են արել ընդունել «Կովկասյան Նախագիծ»-ը:

Օրինակ, հայ ազատագրական պայքարի առավել հանրահայտ գործիչներից Սեպուհը, համաժողովում հանդես գալով ի պաշտպանություն «Կովկասյան Նախագիծ»-ի ընդունման, նշել է. «Մի րոպէ ընդունենք, որ Խորհուրդը իրավասու չէ եղել, բայց թէ կովկասեան իրականութիւնը ստիպել է նրան Նախագիծը հրատարակելու: Թողնենք սակայն բոլոր այս վիճաբանութիւնները. ժողովուրդը մեզ սպասում է դրսում, թէ ի՛նչ կասէ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը: Չվախենանք ոչ Միհրանական շարժումից, ոչ միւս հակառակորդներից: Միաձայն ընդունենք Նախագիծը եւ բոլոր թշնամիները կը լռեն...»[68]:

Ընդհանուր ժողովի 94, 95 եւ 96-րդ նիստերում բուռն վիճաբանություններ ու քննարկումներ է ծավալվել կուսակցությունում արմատավորված անջատողական շարժման եւ միհրականության վերաբերյալ: Այս հարցի կապակցությամբ ելույթ ունեցողները, հատկապես Ս. Զավարյանը, Ռոստոմը, Ավ. Ահարոնյանը, Արամ Մանուկյանը, Վռամյանը խստորեն քննադատել ու դատապարտել են խմբապետ Միհրանին եւ նրա գլխավորած Չինովրականի խորհրդին, որակելով նրա գործունեությունը, որպես ոճրագործություն ու դավաճանություն[69]:

Ամերկայի ՀՅԴ կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Վահագն Տաթեւյանը Դաշնակցության ղեկավար մարմնին: Նրա գնահատմամբ եթե կուսակցության համապատասխան մարմինները ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեին այդ ոճրագործների, այն է՝ Միհրանի ու նրա զինակիցների դեմ, ապա որեւէ պարագայում նման խառնաշփոթություններ տեղի չէին ունենա:

Ավելին, նրա համոզմամբ «...եթէ ժամանակին Անդրանիկ, Վարդան, Մուրատ, Սեպուհ եւն., որոնց առաջ Միհրանը մի փոքր մարդ է հենց տաճկահայ դատի տեսակէտից, դուրս գային եւ պարզէին մասսայի առաջ

Միհրանի ստոր դիտումները եւ յայտնէին ամէն ինչ, նրա սպանութեան դէպքում անգամ ոչ մի բարդութիւն չէր առաջանայ»[70]:

Ընդհանուր Ժողովը միաձայն դատապարտում է միհրականությունը եւ «...դիտում Միհրանին եւ ընկերներին, ոչ թէ իբր գաղափարական չարջմսան ներկայացուցիչներ, այլ գեղծարարներ, դաւաճաներ եւ ոճրագործներ»[71]:

Միհրանի եւ նրա գլխավորած Չինովրական մարմնի գործունեության վերաբերյալ համապատասխան վճիռ կայացնելու նպատակով ստեղծվում է քննիչ հանձնաժողով, որը ժողովականների դատին է ներկայացնում 9 կետից բաղկացած եզրակացություն:

Համաձայն վերջին՝ 9-րդ կետի, որպես ընդհանուր եզրակացություն, քննիչ հանձնաժողովը նշում է. ««Ժամանակատր Չինտրական Խորհուրդ» անուան տակ միացած ուժերու գործունէութիւնը ոչ միայն վերին աստիճանի մի խուլիգանական շարժում է, ունենալով նեցուկ հայ բուրժուա տարրերը, ռուս ոստիկանութիւնը, այլեւ մի ստոր դաւաճանութիւն է՝ մասնատրապէս տաճկահայ դատին...»[72]:

Հիմք ունենալով քննիչ հանձնաժողովի կազմած բանաձեւը՝ Ընդհանուր ժողովում քվյարկության են ներկայացնում որոշման երկու բանաձեւեր:

Առաջին բանաձեւը, որը ներկայացնում է Արամ Մանուկյանը, ստանալով 10 կողմ եւ 17 դեմ ձայն, մերժվում է:

Քվյարկությամբ ընդունվում է (26 կողմ եւ 1 ձեռնպահ) Խաչատուր Մալումյանի (Ակնունի) ներկայացրած 4 կետից բաղկացած հետեւյալ բանաձեւը.

«1. Համարել Միհրանի եւ իր գործակիցների վարմունքը՝ ծանր յանցանք կազմակերպութեան եւ նրա պաշտպանած քրքա-հայ դատի դէմ եւ այդ հիման վրայ ճանաչել նրանց արտաքսուած Դաշնակցութեան շարքերից:

2. Յանձնել պատշաճ մարմնին՝ կազմակերպական կանոններով նախատեսուած պատժին ենթարկել Միհրանին եւ նրա գործակիցներին:

3. Հրատարակել որոշումը պաշտօնական օրգանի մէջ...[73]:

Դաշնակցության որոշումը ի դեմս նրա բարձրագույն ղեկավար մարմնի, այն է՝ Ընդհանուր ժողովի, կայացված էր: Ի՞նչ պատժի պիտի արժանանային Միհրանն ու նրա գործակիցները: Դաշնակցությունը մահվան է դատապարտում Միհրանին եւ նրա գործակիցներին, որը համաձան Մ. Վարանդյանի պնդման. «Շուտով մահուան պատիժը գործադրվեցաւ»[74]:

Արտաքսվելով Դաշնակցության կողմից, ապա նաեւ մահվան դատապարտվելով, Միհրանը համագործակցում է ցարական գաղտնի ծառայությունների հետ:

Իր հուշերում համառոտակիորեն անդրադառնալով նաեւ Միհրանի գործունեությանը՝ Սարգիս Օհանջանյանը նշում է. «Կազմակերպութեան վրէժից խուսափելու նպատակով, նա մտաւ ռուս գաղտնի լրտեսների «պահնորդական բաժանմունքը» ու սկսեց երեկուայ իր գաղափարական ընկերներին ու գործը մատնել ռուս կառավարութեան ձեռքը:

Մի քանի անյաջող մահափորձից յետոյ, որոնց ժամանակ գոհ տուեցինք բանկագին ընկերներ, վերջիվերջոյ դաւաճանը ընկաւ Ռոստովին մօտ, դաշնակցական ահաբեկչի գնդակից»[75]:

Իսկ դաշնակցական ահաբեկիչը, որը իրականացրել է խմբապետ Միհրանի սպանությունը՝ Դալի Ղազարն է:

Ըստ Ս. Օհանջանյանի, թեեւ Միհրանը ստացավ իր արժանի պատիժը, բայց նրա մատնությունների գոհն են դառնում մի շարք դաշնակցական գործիչներ: Ցարական ոստիկանությունը խուզարկում է Դաշնակցության գինապահեստները եւ բռնագրավում մեծ քանակությամբ զենք ու զինամթերք[76]:

Միհրանականության վերաբերյալ վճիռ կայացնելուց առաջ, Ընդհանուր ժողովում վերջնականապես որոշվում է «Կովկասյան Նախագիծ»-ի հարցը:

Ապրիլի 2-ին տեղի ունեցած 62-րդ նիստում, «Կովկասյան Նախագիծ»-ի վերաբերյալ Ս. Զավարյանը, Թոփչյանն ու Մալումյանը ներկայացնում են հետեւյալ նախագիծը. «Խորհուրդը հիմնուելով Դաշնակցութեան հիմնական ծրագրի, Ընդհանուր ժողովի կողմէ կովկասեան գործունէութեան մասին տրուած որոշումներու ոգիին, Կովկասեան Շրջանային ժողովի այդ առթիւ տուած որոշումներուն, ինչպէս նաեւ կեանքի հրամայողական պահանջներուն վրայ, պարտաւոր էր հրատարակելու «Կովկասեան Նախագիծ»՝ իբրեւ ուղեցոյց կովկասեան կեանքի քաղաքական եւ տնտեսական գործունեութեան, վերապահելով ամոր վերջնական հաստատութիւնը ներկայ Ընդհանուր Ժողովին»

Այս նախագիծը փոքր-ինչ լրացումների ենթարկվելուց հետո ընդունվում է[77]:

Նախագծին դեմ է քվեարկում միայն Մեքսաստացի Մուրադը՝ պահանջելով՝ «Ես իմ համաձայնութիւնը կը տամ այն պայմանով՝ որ Խորհուրդը խոստովանի, Նախագծի հրատարակումը նրա իրաւասութիւներից բարձր է եղել...հակառակ դեպքում, ես չեմ ուզում ինքնախաբեութեամբ զբաղուել այստեղ՝ ձայն տալով մի այսպիսի բանաձեւի»[78]:

Ընդհանուր ժողովում որպես ծրագրային հիմնադրույթ ընդունվում է նաեւ «սոցիալիզմ»-ը:

Այսպիսով, համաձայն ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշման, Հ.Յ. Դաշնակցության ծրագիրը լրացվում է երկու հիմնադրույթներով՝ «Կովկասյան նախագիծ» եւ «Սոցիալիզմ»:

---

1. «Հայրենիք», ամս., 1936, թիւ 11, էջ 85:
2. Նույն տեղում:
3. Նիւթեր ...», հ. Բ, էջ 119:
4. Նույն տեղում, էջ 231:
5. «Նախագիծ կովկասեան գործունեութեան», էջ 13-15:
6. Նիւթեր, հ. Բ, էջ 328:
7. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 291:
8. Տե՛ս «Նախագիծ կովկասեան գործունեութեան», էջ 3:
9. Տե՛ս նույն տեղում, էջ 14:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում, էջ 15:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, էջ 16:
14. «Հայրենիք», ամս., 1939, թիւ 1, էջ 77-78:
15. Նույն տեղում:
16. Տե՛ս նույն տեղում, 1939, թիւ 1, էջ 78:
17. Նույն տեղում:
18. Տես Հ. Գեւորգյան, Նիկոլ Դուման, էջ 88-93:
19. «Հայրենիք», ամս., 1939, թիւ 1, էջ 78:
20. Նույնը, 1938, թիւ 11, էջ 91:
21. Տե՛ս «Նիւթեր...», հ. Գ, էջ 258:
22. Նույն տեղում:
23. Վ. Փափազեան, «Իմ յուշերը», 1950, Պոսթըն, էջ 414:
24. Նույն տեղում:
25. Նույն տեղում, էջ 451:
26. Տե՛ս նույն տեղում, էջ 414:
27. Նույն տեղում:
28. «Նիւթեր...», հ. Բ, էջ 258:
29. Վ. Փափազեան, «Իմ յուշերը», էջ 417:
30. Նույն տեղում, էջ 420-421:
31. Նույն տեղում:

32. Նույն տեղում:
33. Տե՛ս, նույն տեղում, էջ 422:
34. Վ. Փափազեան, նշվ. աշխ., էջ 422:
35. Նույն տեղում:
36. «Հայրենիք», ամս., 1959, թիւ 1, էջ 15:
37. Ռուբէն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 149:
38. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 43, թ. 1:
39. ՀՅԴ ԿԱ, թծ. 450, գ. 15, էջ 68:
40. Տե՛ս Նույն տեղում:
41. Նույն տեղում, էջ 74:
42. Տե՛ս նույն տեղում:
43. Նույն տեղում, էջ 76:
44. Տե՛ս նույն տեղում, էջ 78:
45. Նույն տեղում, էջ77-78:
46. Նույն տեղում, էջ 78:
47. Նույն տեղում, 80:
48,Նույն տեղում:
49. . Վ. Փափազեան, նշվ. աշխ.,, էջ 423:
50. «Հայրենիք», ամս., 1930, թիւ 8, էջ 134:
51. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 4:
52. 46. Նույն տեղում:
53 . Վ. Փափազեան, նշվ. աշխ., էջ 424:
54. Նիւթեր, հ. Բ, էջ 258:
55. Վ. Փափազեան, նշվ. աշխ., էջ 414-415:
56. Նույն տեղում:
57. Նույն տեղում:
58.. «Նիւթեր...», հ. Գ, էջ 145:
59. Նույն տեղում, էջ 145-146:
60. Նույն տեղում, էջ 167:
61. Նույն տեղում:
62. Նույն տեղում, էջ 171:
63. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 261, գ. 8, էջ 6:
64.. Նույն տեղում:
65. Նույն տեղում:
66. Նույն տեղում, էջ 8:
67. Նույն տեղում:
68. Նիւթեր, հ. Բ, էջ 158:
69. Նիւթեր, հ. Գ, էջ 131-143:
70. Նույն տեղում:
71. Նույն տեղում:
72. Նույն տեղում, էջ 244:

73. Նույն տեղում, էջ 243:
74. Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 412:
75. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, էջ 3:
76. Տս նույն տեղում:
77. Նույն տեղում, էջ 161:
78. Նույն տեղում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Տեղեկագիր
Նախիջեւանի քաղաքի եւ գաւառի հայ-թիւրքական ընդհարման մասին:
Մայիսի 12-ից մինչեւ յուլիսի 10-ը:

Տեղեկագրում արձանագրված է նաեւ Նախիջեւանի քաղաքում մայիսին տեղի ունեցած իրադարձությունները, որոնք մասն չեն կազմում ներկայացվող հավելվածի: Ներկա հավելվածը ներկայացնում է միայն այն դեպքերը, որոնք կատարվել են Նախիջեւանի գավառի հայկական ու խառը(հայ եւ թուրք) բնակչություն ունեցող բնակավայրերում:

*2. **Թազագիւղ Նախիջեւանի քաղաքամասը:** Մայիսի 11ին գիշերը լոյս 12-ը գիւղի բոլոր կողմերում հայ կուռղները դիրքեր էին բռնել, որովհետեւ մի քանի օր առաջ թիւրքերը մեր գիւղի վրա շրջագայքից հատ հատ հրացաններ էին արձակել եւ լուր տարածել, որ շուտով հարձակում են գործելու: Գիշերուա ժամը 12-ին Շըխմամուտի ճանապարհի ձեռքի վրայ մի քանի հրացան արձակեցին մօտակայ թուրք Քալաբարովների այգուց, որին պատասխանեցին բոլոր դիրքերից: Տեսնելով դիմադրութիւն, հրացանաձգութիւնը խստացրեցին, եւ տեւեց է ժամ: Միւս օրը մայիսի 12ին հայերը պահպանում են իրենց դիրքերից գիւղը, այստեղ տքա լսում են քաղաքի կողմից սաստիկ հրացանաձգութեան ձայներ, որոնք գնալով ուժեղանում են: Իսկոյն հասկանում են, որ քաղաքում սկսուէլ է կռիվը: Գիւղացիքը նկատի առնելով, որ չունեն լաւ ու բաւականաչափ զենքեր, կարծում են, թէ չպետք է կարողանան մինչեւ վերջ դիմադրելու, ուստի յարմար են դատում կանանց, երեխաներին եւ անընդունակներին ուղարկել մօտակայ Շեխմամուտ գիւղը, իսկ իրենք մնում են գիւղը պաշտպանելու:*

Ճաշից յետոյ (մայիսի 12ին) ժամը 3-ին քաղաքի կողմից գալիս է թիւրքերի մի ահագին ամբոխ առաջնորդութեամբ համագիւղացի հարեւաններին: Ամբոխի առաջից գնում էր մի Սիյիդ կարմիր հագած եւ «եա Ալի՛» կանչելով, խրախուսում էր ու առաջ քշում խուժանին: Սկսվում է սաստիկ հրացանաձգութիւն: Տեսնելով, որ մինչեւ վերջ չպիտի կարողանանք դիմադրելու, հայերը յետ նահանջեցին իրենց դիրքերից եւ այգիների միջով փախան դեպի Շեխմամուտ: Թիւրքերը ներս են խուժում գիւղը եւ սկսում ամեն ինչ թալանել, քանդել, որ տեւում է նաեւ մայիսի 13-ին: Գիւղը բոլորո-

վին մաքրել թալանել են. եկեղեցին կողոպտուած է. իրդեհուած է մի տուն, տները քարու քանդ արած:

Մայիսի 17-ին թազագիւղացիք գիւմուրների ուղեկցութեամբ Շեխմամուտից տեղափոխւում են դեպի Նախիջեւան եւ գրւում ծանօթ ու բարեկամ տները:

Թազա-գիւղից միայն վիրաւորուած են երկու հայ: Թալանած ու կողոպտուած ապրանքները գնահատւում են-33,249 րուբլի 88 կոպ. Այդ թալանած ապրանքների շատ չնչին մասը Զաֆար Գուլի խանի ու փոխ նահանգապետի ձեռք առած միջոցների շնորհիվ վերադարձուած է հայերին:

***3. Վերին Ուզում Օբա:** 33 տուն հայ մայիսի 12ին ժամը 5-ին երեկոեան նոյն այս գիւղի թուրքերը մասնակցութեամբ Աշաղա-Ուզում Օբայի եւ այլ հարեւան թիւրք գիւղացիները շրջապատեցին հայերի տները եւ սպառնացին բոլորին կոտորել: Հայերը ահաբեկուած հազիւ կարողացան ազատել իրենց կեանքը, փախչելով գիւղի ներքեւ գտնուած անտառների միջով հասան մինչեւ Շեխմամուտ հայաբնակ գիւղը: Բոլոր տները թալանած ու կողոպտուած են. Կողոպտուած է 2 հոգի, վիրաւորված 1:*

Թալանած գոյքը գնահատվում է 40,913 րուբլի 77 կոպ.

***4. Հաջիվար - զուտ հայաբնակ 46 տուն:** Մայիսի 11ին թալանել փախցրել են տավարը: Գիւղն ենթարկուեց թիւրքերի յարձակմանը մայիսի 13-ին: Բոլոր ինչ թալանել ու տարել են: Կողոպտուած է եկեղեցին: Այրուած են 12 տներ: Գիւղացիքը փախել են քաղաք: Այժմս մի փոքրիկ մասն արդեն վերադարձել է գիւղ: Սպանուած են 5 հոգի, վիրաւորուած – 4 հոգի:*

Թալանուած գոյքը – 50,449 րուբ. 31 կոպ.

5. Դեղուվար – թիւրք գիւղ է - 6-7 տուն հայեր կան:

Հայերը ենթարկուել են թիւրքերի յարձակմանը մայիսի 13-ին: Բոլոր տները թալանած են. եկեղեցին կողոպտուած: Գիւղացիքը թողնելով իրենց տուն տեղը, մի կերպ փախել են Շեխմամուտ գիւղը: Սպանուած է 1 հայ, վիրավոր – 1 հոգի:

Թալանած գոյքը – 9,18 րուբլի. 27 կոպ.

***6. Նազարաբատ - 67 տուն հայ:** Մայիսի 12-ին Ջահուկի աւերումից յետոյ թիւրքերը մայիսի 13ին վաղ առաւօտեան գլխաւորապէս Ջահուկի թուրքերի ընկերակցութեամբ հարեւան թիւրք գիւղերի(Դիտուվար եւ Ուզումօբա)յարձակուեցին Նազարաբատի վերայ եւ վախեցնելով, թե բոլոր հայերին կըկոտորեն, դուրս քշեցին տնից եւ գիւղից դուրս: Ժողո-*

վուրդը սկսեց փախչել դեպի Շիխմամուտ գիւղը, այստեղ թիւրքերի մի մասը չդադարեցրեց փախչողներին եւ խուզարկելով ամենքին, հափշտակում էին բանկագին իրեղէներն ու ունեցած փողերը, իսկ միւս մասը յարձակուել էր տների վերայ, կոտորում էր դռներն ու պատուհանները, եւ ներս խուժելով ամեն ինչ թալանում կողոպտում: Կողոպտեցին նաեւ եկեղեցին: Հրդեհեցին մի քանի տներ: Ճանապարհին փաղչող Նազարբաւցիների վրայ հրացաններ էին արձակում այգիներից: Սպանուած են 2 հոգի, վիրաւորուած 1, անհայտ են 5 հոգի, թալանուած գոյքը – 107,311 րուբ. 83 կոպ. բացի այդ փչացրած է 30 դէսեատին ցորեն ու գարի, չորացել է անչուր մնալուց – 25 դեսեատին բամբակ, փչացել է մօտաւորապես 9 դեսեատին խոտ Եօնջա եւ Չանբալա:

7. Ջահուկ. հայ եւ թիւրք խառն: Հայերի թիւը 176 տուն: Ամենահարուստ գիւղն է գաւառում: Հարձակում սկսեցին նախ այդ գիւղի թիւրքերը իրենց տանուտէր Աբասի ղեկավարութեամբ, մի քանի ժամ Նախիջեւանի կոտորածից յետոյ: Այնուհետեւ թափուեցին նաեւ մօտակայ թիւրք գիւղերից, որպէսզի մասնակցեն հարուստ թալանին: Տեղական թիւրքերից խաբելով, մօտ 30 կանայք եւ այնքան էլ այր մարդիկ սրանց ամուսիններից, եղբայրներից եւ որդիներից, իբրեւ թե կոտորածից ազատելու պատրուակով տարան մի թուրքի տուն, որպես մի ապահով ու վտանգից ազատ տեղ: Այստեղ սոցա փակեցին եւ պահում էին իբրեւ գերի: Երկրորդ օրը ջահել կանանց բռնաբարեցին հինգ հայ տղամարդկանց ներկայութեամբ ու իրենց թիւրք կանանց առաջ, որոնք իրենց հրճուանքն էին յայտնում այդ առթիւ: Իսկ տղամարդկանց դուրս հանեցին երրորդ օրը գաւիթ եւ մի քանիսներին խողխողեցին ու սպանեցին մինչեւ որ եկաւ Երեւանի բէմական առաջնորդ Կարապետ վարդապետը, որը եւ կարողացաւ ազատել ողջ մնացած կանանց ու միւսներին: Թիւրքերն անդադար ճգնում էին այդ գերի բռնած հայերին բռնի կերպով իսլամացնել: Յարձակման ժամանակ հայերից, ովքեր կարողացան, փախան գիւղից դուրս: Մի մասը դիմեց Շիմամուտ, միւս մասը Ալիաբատ: Այս փախստականներից մի փոքրիկ մասը հետ էր վերադարձել գիւղ մայիսի 22-ին: Բոլոր տներն, խանութներն, եկեղեցին եւ ուսումնարանը թալանված, կողոպտված են: Թալանված են 25 մանուֆակտուրա եւ այլ մեծ խանութներ իրենց ամբարներով ու 30 մանր խանութներ: Այրուած եւ հրդեհված են 8 խանութ ու 4 տուն: Թալանուած գոյքի եւ ապրանքի արժողութիւնն հավասար է 395,000 րուբլու:

Սպանուած են 51 հոգի, վիրաւոր 15 հոգի:

Փչացել է մոտավորապես 70 դէսիատին ցորեն ու գարի: Արտեր եւ 60 դէսիատին բամբակի ցանքեր առանց ջրի մնալով չորացել, կորել են: Ոտնահարուած է ու փչացած մոտ 80 դէսիատին Եօնջա:

8. Մամարզա ու Դիրցա: Հայ եւ թիւրք խառն, հայ տների թիւը– 21: Թեեւ հայ տների թիւը համեմատաբար թիւրքերի հետ ավելի չատ են, բայց ընդհանրապէս թիւրքերի թիւը ավելի չատ է քան հայերինը, որովհետեւ վերջիններից չատերը օտարութեան մէջ փող աշխատելու յետեւից են ընկած: Մայիսի 21-ին ժամը 4-ին ճաշից հետո գիւղի մէջ երեւաց տեղացի թիւրքերի խուժանը, որին միացել էին նաեւ թիւրքերը հետեւեալ մոտակա գիւղերից. Շախմարանշաբ, Քիրբալա-Օրուաղ-Դիգա, Սիրաբ: Խուժանի երկու ղեկավարները, տեղական գիւղացիները դիմում են հայերին ասելով. «Առաջ մենք լավ հարեւաններ էինք ու միմեանց հետ խաղաղ էինք ապրում, բայց այժմ մենք պետք է կատարենք մեր պարտականութիւնը: Մենք անխնա ձեզ չենք սպանի, բայց դուք բոլորդ եւ ձեր գոյքը այժմ մեր սեփականութիւնն է կազմում: Անիրաւ թիւրքերը ժողովեցին հայերին եւ տարան բաժանեցին տեղաւորելով թիւրքերի տներում: Խլեցին բոլոր մեր կայքը: Միւս օրը եկաւ գիւղ 8 կազակների հետ գաւառապետի օգնականը: Սա իմանալով հայերի դրութիւնը, ոչ մի օգնութիւն չարեց, առարկելով, որ ինքը գնում է Ալագեազ, Մազրայ, այնտեղի անկարգութիւնների դէմ միջոցներ ձեռք առնելու: Թիւրքերը ազատ զգալով իրենց, թալանեցին բոլոր հայերի տները, կողոպտեցին եկեղեցին: Հայերի մի մասը կարողացաւ մի կերպ փախչել Յիւքափա, իսկ մի մասը Շեխմամատ:

Սպանուած են 3 հոգի, վիրաւոր 1 հոգի:

Թալանուած գոյքը – 16,412 ր. 90 կոպ.

9. Խալխալ – հայաբնակ 16 տուն: Թիւրքերը հարձակուեցին մայիսի 13-ին: Այս տեղի վրա գնացել են գլխաւորապես Ջահուկեցի ու Վայխորցի թիւրքերը: Խալխալցիներից գերի էին վերցրել Վայխորցիները 49 հոգի եւ տարել իրենց գիւղը, որտեղ պահել էին մինչեւ մայիսի 27-ը: Երբ եկաւ այդտեղ գեներալ Ալիխանովն ու ազատեց նրանց: Երբ Ալիխանովը հարցրեց գերիներին՝ իրենց յօժար կամքո՞վ, թե՞ բռնի ուժով են եկել Վայխոր, բոլոր հայերը միաբերան, բացի մեկից պատասխանել էին, որ բռնի ուժով էին բերուած: Թիւրքերը թալանել ու սրբել-տարել էին բոլոր տները, կողոպտած է եկեղեցին: Ազատուած գիւղացիք փախել են եւ ապաստանել էին Շեխմամատ, բողնելով ամեն ինչ թիւրքերին:

Վիրաւորուած է 2 հոգի

Թալանուած գոյքը – 61,991 ր. 77 կոպ.

Թալանուած-կողոպտուած ապրանքի մի չնչին մասը գեներալ Ալիխանովի ձեռք առած միջոցներով յետ են վերադարձուած գիւղացիներին: Մայիսի 4-ին Խալխալցիները Շեխմամատից դուրս են գալիս եւ դառնում գիւղը իրենց հանդերում ապրելու, ցանքը ջրելու: Ջահուկցի թիւրքերը հարձակւում են սրանց վրա հրացաններով, հայերը խուճապ փախչում են Շեխմամատ:

10. Ալագիոզ Մազրա - հայաբնակ 65 տուն: *Թիւրքերը հարձակումը գործեցին գիւղի վրայ մայիսի 14-ին, շրջապատելով գիւղը որոշ հեռաւորութեամբ վրայ եւ հրացանաձգութիւն սկսելով: Նոյն ժամանակին, առաւտեան ժամը 9-ին, երեւաց գաւառապետի օգնականը 12 կոզակների ու ստրաժնիկների հետ, առաջարկեց գիւղացիների թախանձանքներին ենթարկելով, ժողովել եւ իր հետ դեպի Շեխմամատ ճանապարհուել: Ժողովուրդն առաջ ընկաւ գաւառապետի-օգնականի ու կոզակների հետ Շեխմամատի ճանապարհով: Երբ այս ամբոխը անցնում էր Մամարգա-Դիզայի մօտով, թիւրքերը սկսեցին հրացաններից կրակ տեղալ ժողովրդի, գաւառապետի օգնականի ու կոզակների վրայ: Այս տեսնելով վերջիններս փախան, թողնելով հայերին միանգամայն անօգնական դրութեան մէջ, ճանապարհի վրայ: Թիւրքերը բախուեցին հայերի վրա ու սկսեցին մէկմէկ թալանել ու կողոպտել նրանց: Միա այստեղ թիւրքերը սպանեցին մի կին, մի տղամարդ եւ մէկին էլ վիրաւորեցին: Այս միջոցին յետ մնացած ժողովուրդը, տեսնելով որ արդէն ընթանալը դժուար է, վերադարձաւ վերստին գիւղ, որտեղ յետին խուճապին մնաց Դիզայի եւ Ուզում-Օբայի թիւրքերը: Վերջիններս յարձակուեցով գիւղի վրայ, սկսեցին սովորական ալաւ-բալան: Այստեղ վրա հասան նաեւ Ջահուկի (Ջահրի) թիւրքերը իրենց աւարչինայ Արասի ղեկավարութեամբ: Եկան նաեւ այլ հարեւան թիւրք գիւղի ժողովուրդը: Այդ իրարանցումի մէջ հայերը ահաբեկուած սկսեցին փախչել եւ մի կերպ իրենց ազատելու նպատակով դէպի Շեխմամատ ուղեւորուել: Թիւրքերը սկսեցին թալանից ու կողոպուտից յետոյ տները այրել ու մտնել այգիներն, որպէսզի նախ՝ որոնեն թաքնուած հայերին եւ երկրորդ՝ փչացնել հայերի այգիները: Այգիներում թաքնուած կային բավականի հայեր: Սրանց լավ թալանում, կողոպտում են թիւրքերը եւ ապա գերի բռնելով, տանում բանտարկում են Մամարգա-Դիրգայում: Ընդամենը հրդեհած են 6 տներ, սպանուած են 2 հոգի, վիրաւորուած 4 հոգի, թալանուած գոյքը 82,442 ր. 73 կոպ.

Հուլիսի 6-ին Վայխէր թիւրք գիւղի մի քանի գինուած գիւղացիք յարձակում են գործում Ալագօզ-Մազրայի վրայ եւ սպանում աղաղակելով, թե այդ հողն արդէն իրենց թիւրքերին է պատկանում եւ հայերը

իրաւունք չունին հնձելու: Հրացանաձգութեան վրա, որից հայերը ոչ մի վնաս չեն կրում, հասնում են Ալագօզ-Մազրայում կանգնած ռուս գինուորները: Թիւրքերը իսկոյն յետ են փախչում, բայց մէկը չի կարողանում ազատուել եւ բռնւում է գինուորների ձեռքով եւ բերւում ու բանտարկւում Ալագօզ-Մազրայում: Մի քանի ժամից յետոյ այդ մասին տեղեկանալով օֆիցերը Քիւլբափայի պահակից գալիս է Ալագօզ-Մազրայ, հարց ու փորձ անում թիւրքին եւ ապա ազատ թողնում:

11. Նորս–101 տուն-հայաբնակ: *Մայիսի 14-ին գիւղի արեւելեան կողմից հարձակւում են Գեզլիւ թիւրք գիւղի ժողովուրդը: Նորսեցիքն ունեին 4 բերդանի հրացաններ եւ մի քանի այլ հրացաններ: Հարձակման առաջին, երկրորդ օրը, երբ Գեզլիւի թիւրքերին միացել էին նաեւ մեկ այլ գիւղի թիւրքերը, երրորդ օրը հայերը յաջողութեամբ յետ էին մղում թիւրքերի յարձակումները: Բայց վերջին երրորդ օրը նորսեցիների վրայ յարձակուեցին նաեւ հետեւյալ թիւրքի գիւղերի ժողովուրդները. Շահբագ-Սմամուդ-Աբլաք-Բօլաճ եւ Նորս Մազրայից: Հայերը պահպանում էին դիրքերը մինչեւ գիշերվա ժամը 3-ը: Երբ հատաւ վառոդի պաշարը, այն ժամանակ ամբողջ հայերը ստիպուած էին փախչել իրենց դիրքերից գիւղի չպաշարուած կողմով եւ ապաստան են գտնում 17ին մայիսի Գէօմիրում: Թիւրքերը ներս են խուժում գիւղը եւ սկսում ամեն ինչ թալանել, կողոպտել ու այրել շատ տներ: Կողոպտում են եկեղեցին ու այրում ուսումնարանը: Սպանուել են 11 հոգի, որոնցից 7-ը մի ընտանիքի հարսներ ինքնասպան են եղել, վիրաւորվել են 3 հոգի: Գիւղացիները 2-ին յունիսի վերադարձել են վերստին իրենց գիւղը:*

Թիւրքերը տարել են մօտաւորապես 4500 ոչխար, 3000 գառ, 200 տավար, 300 հատի ձի, ջորի եւ էշեր: Փչացրել են մօտաւորապես ցորենի 500 արտեր (մօտաւորապես 28 դէսիատին): Թալանուած գոյքի արժէքը 300,000 րուբլի, մօտաւորապես-տաւարի ու ցորենի վնասն է - 200,000 րուբլի:

12. Կարաբա- հայաբնակ 22 տուն: *Թիւրքերը հարձակուել են մայիսի 13-ին եւ սկսում թալանել, կողոպտել տները, գոյքը: Եկեղեցին կողոպտուած է: Ժողովուրդը քաշւում է դէպի Գէօմիր եւ վերադառնում է վերստին իրենց գիւղը յունիսի 25-ին: Սպանուած են 3 հոգի: Թալանուած գոյքի արժողութիւնն է - 43,931 ր. 76 կոպ. (45,647 ր. 16 կոպ.): Բացի այդ տարել են 450 հատ ոչխար, 800 հատ գառ, 250 տավար: Փչացրել են մօտաւորապես 50 դէսիատին ցորեն ու գարի, 15 դէսիատին եօնջայ:*

13. Առինջ– հայաբնակ 44 տուն: *Հարձակման են ենթարկել մայիսի 14-ին: Ժողովուրդը քաշուել է դէպի Գէօմիր: Տներն ու գոյքը թալանուած, կողոպտուած են, թալանուած է նաեւ եկեղեցին: Գիւղացիք վերստին յետ են վերադարձել գիւղ յունիսի 25-ին: Սպանուած են 7 հոգի: Թալանուած են 103,445 րուբլի 62 կոպ.*

14. Գժածոր – հայաբնակ 65 տուն: *Թիւրքերը յարձակուել են մայիսի 16-ին առաւօտեան ժամը 10-ին: Բոլոր տները թալանուած ու այրուած են, նոյնպես եւ եկեղեցու մի տուն հրդեհուած է: Հայերը մայիսի 18-ի կեսօրին փախել են եւ ապաստանել Գէօմիրում: Վերադարձել են վերստին գիւղը 30 տուն: Սպանուած են 2 հոգի, վիրաւոր 3 հոգի, թալանուած գոյքը – 72,719 րուբլի 67 կոպ.:*

Թիւրքերը տարել են 500 գլուխ ոչխար, գառներ 450 գլուխ, տաւար 100 գլուխ, ձի, ջորի - 20 գլուխ: Փչացած են մօտաւորապէս 10 խալվար ցորեն ու գարի 30 խալվար:

15. Նորս Մազրայ –Խառն թուրք եւ հայ 27 տուն: *Այս գիւղը թիւրքերի կողմից հարձակման է ենթարկուել երկու անգամ. մայիսի 15-ին եւ յունիսի 9-ին: Գիւղը ամբողջովին թալանուած եւ կողոպտուած է, նմանապէս եկեղեցին: Հայերը քաշուել են դէպի Գէոմիր, որտեղ մնացել են մինչեւ յունիսի 27-ը եւ ապա վերստին իրենց գիւղը դարձել: Յունիսի 9-ին երբ Գէոմիրցիք լուր են առնում թէ թիւրքերը յարձակվել են Նորս Մազրայի վրայ եւ սաստիկ կոտորում են, իսկոյն մի խումբ զինուած տղաքը մի քանի կոզակների հետ շտապում են այնտեղ: Սրանք հասնում են Նորս Մազրայի կոտորածի բորբոքուած վարկեանին, երբ թիւրքերը առանց սեռի ու հասակի խտրականութեան կոտորում են հայերին եւ միւս կողմից թալանում ու կրակի մատնում տները: Օգնութիւն գնացողներին յաջողւում է ազատել միայն մօտ 200 հոգի: Սպանուածների թիւը մեծ է:*

Կոտորածից մի քանի օր առաջ Գէօմիրեցիք մի քանի անգամ կապակներ էին ուղարկել, որ այդ տեղի հայերին բերեն Գէօմիր: Եղան այնպիսիներ, որոնք եկան, բայց մի մասը՝ Նոր-Մազրեցիք եւ Նորսեցիք, որոնք ապաւինել էին Նոր-Մազրայում, յայտնի լինելով իրեց թիւրքասիրութեամբ, թիւրքի տունը գերադասեցին հայի տնից, հաւատ ընծայեցին հարեւան բուրքերին: Այսպիսով նրաք պատճառ դարձան անմեղ երեխաներին եւ կանանց կոտորելուն ու առեւանգելուն: Թիւրքերը չեն խնայել նաեւ այն հայերին, որոնք մահմեդականութիւն էին ընդունել: Սպանուել են 44 հոգի, վիրաւորվել են 12 հոգի եւ անյայտ կորել 5 հոգի: Թալանուած գոյքը-19,448 ր. 85 կոպ.

Բացի դրանից, թիւրքերը տարել, գողացել են հայերից 1800 գլուխ ոչխար. 250 եզ, կով, 300 գլուխ մանր տաւար: Փչացրել են մօտաւորապէս 50 խալւար ցորենի եւ 60 խալւար գարու արտեր:

16. Սուլթանաբէկ-զուտ հայկական-81 տուն, 1200 շունչ:

Թիւրքերը յարձակուել են մայիսի 12-ին, հայերը(գիւղացիք) քաշուել են Մարտիրոս գիւղը: Երկրորդ անգամ յարձակուել են մայիսի 15-ին եւ ամեն ինչ յափշտակել: Կողոպտուած եկեղեցին եւ տները հրդեհուած:

Գիւղացիք արդէն վերադարձել են իրենց գիւղը:

Սպանուած են 3 հոգի, վիրաւորված մի հոգի:

22 տուն այրուած են: Թալանուած գոյքը-95000 րուբլու մօտ:

Մայիսի 24-ին Շատա թիւրք գիւղի մօտ սպանուել է մի(1) հայ գիւղացի: Յուլիսի 1-ին յարձակուել են հունճ անողների վրայ, հրացան արձակել, բայց կազակների երեւալուն պէս անհայտացել են:

Հայ գիւղացիք կորցրել են 700 գլուխ ոչխար, 200 տաւար, փչացել է ցանքը մօտաւորապէս 200 դեսեատին:

17. Մէրս-զուտ հայաբնակ 49 տուն:

Գիւղի վրայ թուրքերը յարձակուել են մայիսի 14-ին: Յարձակուողներն էին հետեւեալ թիւրք գիւղերից-Եթեղրան, Աղխազ, Կարմազաթաղ, Պզկով: Բոլոր տներն ու գոյքը թալանուած եւ կողոպտուած է, նաեւ եկեղեցին: Հայերը քաշուել ու ապաստանել են հարեւան Մարտիրոս գիւղում, որտեղ մնացել են մինչեւ 8-ը յունիսի եւ ապա վերադարձել վերստին իրենց աւերուած գիւղը:

18. Ալահի-զուտ հայաբնակ-38 տուն:

Մայիսի 14-ին գիւղը չորս կողմից շրջապատուած էր թիւրքերով, որոնք օգտուելով հայերի անպատրաստութիւնից, ամենից առաջ քշեցին տարան գիւղի ամբողջ տաւարը, ոչխարներն ու ձիերը: Թէեւ հայերը թիւրքերի յետեւից ընկան թալանը յետ խլելու նպատակով, սակայն թիւրքերի մեծ բազմութեան եւ սաստիկ հրացանաձգութեան առջեւ ոչինչ չկարողանալով անել, յետ նահանջեցին:

Մայիսի 15-ին առաւօտեան ժամը 8-ին, թիւրքերն ահագին բազմութեամբ հաւաքուեցին գիւղի վրայ յարձակուելու: Սկսուեց գիւղում կատաղի կռիւ:

«Աշխարհում ո՛չ մի հայ այլեւս գոյութիւն չի կարող ունենալ, սա մեր հողն ու ջուրն է» աղաղակում էին թիւրքերը եւ «Եա Ալի» գոչիւնեռով յարձակւում գիւղի վրայ: Ամբողջ 3 օր հայ գիւղացիք կարողացան դիմանալ ու պաշտպանել գիւղը, բայց 4-րդ օրն այլեւս դիմանալ անկա-

րելի էր եւ բոլորը սկսեցին փախչել կանանց ու երեխաների յետ գանգաման կողմերը: Փախուստի ժամանակ թիւրքերը կտրեցին հայերի ճանապարհը եւ սկզբում առաջարկեցին կրօնները փոխել. «ռուս եւ հայ այլեւս չպէտք է լինեն մեր երկրում: Կամ պէտք է կոտորուէք, կամ» մեզ յետ «Եա Ալի» կանչէք»: Երբ հայերը մերժեցին, թիւրքերը սկսեցին տգայ վրայ գնդակներ տեղալ եւ սպանեցին հայերից 7 հոգի: Գետն են գցում թիւրքերը 3 հոգի ու մի քանի նորածին երեխաներ: Այնուհետեւ մնացած հայերը շարունակելով փախուստը, ապաստանում են Շարուր եւ Ռիստ գիւղերում:

Թուրքերը թալանեցին բոլոր տները, կողոպտեցին բոլոր գոյքերն ու եկեղեցին: Սպանուած են 12 հոգի, վիրաւորուած 4 հոգի եւ առեւանգուած են 2 աղջիկ:

Թալանուած գոյքը

19. Նորաշէն-գուտ հայաբնակ-72 տուն:

Թիւրքերը յարձակում են գործել գիւղի վրայ մայիսի 13-ին: Հայերը սկզբում որոշ դիմադրութիւն են ցոյց տալիս, բայց յետոյ չդիմանալով, քաշուել են ու պատսպարուել գիւղում գտնուած 2 տների մեջ, որոնք ծառայում էին իբրեւ դիրքեր եւ այդտեղ պաշարուած դիմադրում էին: Թիւրքերը ներս են խուժում գիւղն եւ սկսում ամեն ինչ թալանել, կողոպտել տներն ու եկեղեցին: Երբ թիւրքերն վերջացնում են թալանը, հեռանում են գիւղից, իսկ պաշարուած հայերի մի մասը մօտաւորապէս 3/4-ը փախչում է դէպի Կազանչի հայ գիւղը, իսկ միւս մասը մնում է Նորաշէնում:

Թալանած գոյքը

20. Գեալ (Գեալշարաջուր)-գուտ հայաբնակ-19 տուն:

Մայիսի 12-ին երեկոեան ժամը 10-ին Սալբախ գիւղի թուրքերը հանդից քշում են 45 տաւար. բայց ուշ լինելու պատճառով գիւղացիք չկարողացան յետեւից գնալ: Միւս օրը նոյն րայօնի պրիստաւի օգնութեամբ հայերը կարողանում են յետ ստանալ թիւրքերից միայն 33 գլուխ տաւար, իսկ մնացածը թիւրքերը խաբեութեամբ պահում էին իրենց գիւղում:

Մայիսի 13-ին առաւօտեան գալիս են Գեաղի հայերի մօտ Խոշկէշին թիւրք գիւղից 11 աղասակալներ եւ առաջարկում են հայերին ասելով. «Նախիջեւանում այլեւս մի հայ չի մնացել, բոլորին մեր թիւրքերը կոտորել են: Նոյն կերպով ձեզ կը կոտորեն: Մենք իբրեւ հարեւաներ ձեզ մօտ ենք եկել առաջարկելու, որպէսզի ձեր կանանց, աղջիկներանց, բանկագին ապրանքները դուք մեզ տաք պահելու: Եթէ դուք կոտորուէք բոլորդ, այն ժամանակ փոխանակ ուրիշների ձեռքն ընկնեն ձեր կանայք, աղջկերքը եւ ապրանքը, աւելի լաւ է իբրեւ հարեւանների, մեզ մնան: Իսկ եթէ ողջ մնացիք, այն ժամանակ ձեզ կվերադարձնենք բոլորը:

Հայերը խնդրեցին այդ թիւրքերին իսկոյն եւ ետ հեռանալ գիւղից: Դեռեւս այդ թիւրքերը գիւղի մէջն էին, երբ գիւղը շրջապատուեց թիւրքերի մի մեծ բազմութեամբ: Հայերը տեսնելով այդ, քաշուեցին գիւղի մէջտեղը գտնուած դիրքի՝ բլրի վրայ: Յարձակուող թիւրքերը յետեւյալ գիւղերից էին-Թինի, Բիլու, Եաջի, Դիզա, Բսնայ, Սալթախ, Խոշկիչի, Նորչէն, Խանաղա:

Սկսուեց Հրացանաձգութիւն. «Եա Ալի» գոռալով սկսում է կռիւը, եւ հրացանաձգութիւնը հետզհետէ աստկանում էր: Հայերը պատասխանում էին ունեցած պիստօնի հրացաններով: Թիւրքերը հայերին գոռում էին, որպէսզի հայերն էլ «Եա Ալի» կանչեն, իսլամութիւն ընդունեն: «Ռուս այլեւս գոյութիւն չունի, եապոնացիք բոլորին կոտորել են, բաւական է, որքան ձեր գլխաւորները մեր խաների հողին տիրեն»: Երբ հայերի հրացանների պաշարը հատաւ, թուրք խուժանը սկսեց գրոհ տալ եւ սոսկալի գոռում-գոչումով յարձակուեց գիւղի տների վրայ եւ սկսեց կողոպտել, թալանել, ջարդել եւ հրդեհել ամեն ինչ: Հայերի ապրանքը բարձում էին հենց հայերի տաւարների, ձիերի վրայ եւ իրենց գիւղերը տանում: Գիւղը բոլորովին թալանուել, աւերակ է դարձել, իսկ ժողովուրդը բոլորը փախած: Երբ թիւրքերը զբաղուած էին իրենց թալանով, ասպատակութեամբ, հայերը մի կերպ իջնում են բլրից ու գաղտնի ճանապարհով արեւելյան կողմից իրենց ընտանիքներով փախչում են Փարադաշտ եւ Շուրուբ գիւղերը: Կողոպտուած է նաեւ եկեղեցին:

Սպանուած 3 հոգի, թալանուած գոյքը-46.977 րուբ. 90 կոպ

21. Եարմջա-գուտ հայկական-127 տուն

Մայիսի 14-ին ժամը 8-ին շրջակայ դաշտերի վրայ սկսեցին երեւալ խումբ-խումբ թիւրքեր, որոնք հետզհետէ ստուարանում էին: Հայերը ժողովեցին իրենց կանանց ու երեխաներին եւ ուղարկեցին Շիխմամատ: Գիւղի տղայք բաժանվելով խմբերի 8-10 հոգուց բռնեցին շրջակա դիրքերը, որպէսզի ներս չթողնեն թիւրքերին: Ժամը 11-ին թիւրքերը ահագին գոռում-գոչումով «Եա Ալի՛, բա ջհատ», 3 կողմից գրոհ տուին գիւղի վրայ: Հայերը սկսեցի հրացան արձակել, սպանեցին թիւրքերից 8 հոգի: Երբ հայերի հրանիւթը սպառուեց եւ այլեւս ոչինչ չունենալով հրացաններից արձակելու, եարմջեցիք սկսեցին բոլորը միասին այգիների միջով փախչել Շիխմամատ: Այստեղ մի փոքրիկ զօրք էր կանգնած մի օֆիցերի հետ: Եարմջեցիք խնդրեցին սրանից մի քանի զինուոր, որպէսզի նրանց հետ գնալ դուրս վանելու թիւրքերին գիւղից: Սպան մերժեց այդ, ա-

ռարկելով որ ինքը իրաւունք չունի, այլ պէտք է դիմել գեներալ Ալիխանովին: Այդ ժամանակ Եարմջեցի տղայք վերցրին 5 հոգի Շիխմամատից, 10 հոգի իրենցից եւ 5 հոգի էլ հրացանատոր տղայք եւ դիմեցին դէպի Եարմջա, որտեղ բիւրքերը զբաղուած էին տուները եւ գոյքը թալանելով: Թիւրքերը կարողացել էին միայն մի տուն այրել, երբ տղայքը հասնում են, բայց եւ այնպէս ամեն ինչ արդէն թալանել ու սրբել էին: Երեկոեան դէմ վրայ հասան նաեւ կոզակները, որոնց օգնութեամբ հայերը դուրս քշեցին թիւրքերին գիւղիցը: Թալանուած էին իսպառ 54 տուն եւ եկեղեցին: Այստեղից էին հափշտակել Մեսրոպ արքեպ. Սմբատեանի «հազարափրկիչ» մատունքը, որը յետոյ Շէյխ ոլ իսլամի ջանքերով գտնուեց եւ յանձնեցին Կարապետ վարդապետին: Սպանուած է 1 հոգի, վիրաւորուած են 22:

22. Թմբուլ-խառն ազգաբնակչութիւն-132 տուն հայ, 37 տուն թիւրք:

Նախիջեւանի կոտորածից յետոյ տեղացի թիւրքերը սկսեցին իրենց ընտանիքներն ու գոյքը ուղարկել մօտակայ թիւրքի գիւղերը: Իսկ հայերին թիւրքերը համոզում էին ընդհակառակը՝ մնալ, ապահով լինել, որովհետեւ, եթե ուրիշ տեղերում նոյնիսկ հայերի կոտորած լինի, իրենք չեն թոյլ տայ, որ Թմբուլումն էլ այդպիսի բան կատարուի: Մայիսի 15-ին առաւոտեան հայերը լսեցին հանկարծակի հրացանի ճայթում խանի աշտարակից, որը ծառայեց իբրեւ մի ազդանշան ընդհանուր հրացանաձգութեան համար: Թուրքերը սկսեցին հրացաններ արձակել եւ յարձակումներ գործել հայ տների վրայ: Հայերը փախան այս ու այն կողմը, կենտրոնական մի քանի մեծ տներում, որոնք իբրեւ դիրքեր էին ծառայում պաշտպանութեան համար: Հայերն էլ սկսեցին հրացաններ արձակել թիւրքերի վրայ: Հրացանները պիստոնի էին եւ լցնում էին վառոդով: Թուրքերից շատերը ձեռքներին բռնած ունեին ցախաւելները եւ գցում դռների տակ, որպեսզի հրդեհեն հայերի տները: Այդ հրացանաձգութեան միջոցին մոլլան Ղուրան էր բարձրաձայն կարդում, իսկ խուժանը աղաղակում էր. «ջարդեցէք անհաւատներին. այս բոլոր հողերը մեզ պետք է պատկանին, ռուսական չկա, այլ մերը, պարսկական»: Թիւրքերը շատ լաւ եւ հարմար դիրքեր ունէին, իսկ հայերը կանգնած էին ցածր դիրքերի վրայ, ուստի թիւրքերի համար շատ հեշտ էր հրացան արձակել:Թիւրքերը զինուած էին բիրտանի ու մագազինի հրացաններով: Հրացանաձգութիւնը շարունակւում էր մոտաւորապես 6 1/2 ժամ եւ դադարեց միայն այն ժամանակ, երբ Նախիջեւանից վրայ հասան զինուորները:

Թալանուած են 42 տուն, այրուած 37. հրդեհուածներից մի քանիսը ջուր չունենալով կրակը հանգցնում էին կարասից վերցրած գինով:

Սպանուած են 20 հոգի, վիրաւորուած – 9 հոգի: Թալանուած գոյքի արժողութիւնը

23 Քիւլբափա - Հայարնաշ – 89 տուն:

Թիւրքերի յարձակման ենթարկուեց 13-16 մայիսի: գիւղի մի մասը թալանուած է:

Սպանուած է մի հոգի, Թալանուած է գոյքը:

Յունիսի 17-ին թիւրքերը կրկին յարձակում գործեցին այս գիւղի վրայ, բայց շնորհի տեղումն գտնուած ռուս զօրքի յետ մղուեցին. գլխաւոր յարձակուողները Ջէյնալին թիւրք գիւղիցն էին, ուստի յիշեալ գիւղը շրջապատուեց զորքով եւ թիւրքերից բազմաթիւ զենքեր խլուեցին:

24. Կուլի բէկ դիզա. խառն հայ եւ թիւրք:

13 մայիսի առաւոտեան թիւրքերը յարձակուեցին հայ տների վրա եւ սկսցին հրացանաձգութիւն, գոռալով. «, հայեր դուրս իջէք գիւղից, հեռացէք, ապա թէ ոչ, ձեզ բոլորիտ կրկոտորենք, Թավրիզից Ջաֆարգուլի խանի միջոցաւ մեզ հրամայուած է հայերին սպանիլ»: Հրացանաձգութիւնը տեւեց մինչեւ արշալոյս: Առաւոտեան թիւրքերը հեռացան, մենք էլ, օգտուելով առիթից փախանք դէպի Շիխմամուատա թիւրքերն էլ տեսնելով, որ գիւղը դատարկուել է, յետ վերադարձան վերստին եւ սկսեցին ամեն ինչ թալանել, կողոպտել:

Թալանուած է 50 տուն:

Թալանուած գոյքի արժէքը – 10273 րուբ 40 կոպ.

Յունիսի 17-ին գիշերը թիւրքերը կրկին յարձակուեցին գիւղի վրայ, բայց զինուորների օգնութեամբ յետ մղուեցին:

25 Փեարիմ Բէկ Դիզա - Խառն ազգաբն. – 53 տուն հայ.

12 մայիսի երեկոյեան Ջէյնարին, Կախաբա, Սիրաբ Կիւլեա եւ այլ գիւղերի թիւրքերը յարձակում գործեցին հայ տների վրայ: Ամբողջ հայ հասարակութիւնը հաւաքուեց ուսումնարանի շենքում, իսկ թիւրքերը մինչեւ լոյս առաւոտ անդադար հրացաններ էին արձակում հայերի վրայ: Առաւոտեան միւս օրը հայերն հարմար միջոց գտնելով գիւղի այգիների միջով սկսեցին փախչել դէպի Շիխմամուտայ, որը 1 1/2 վերստ հեռու էր Փերեմ Բէկ Դիզայից եւ միեւնոյն ժամանակ իրենց առաջից քշեցին տաւարի մեծ մասը: Թիւրքերը օգտուելով դէպքից սկսեցին թալանել հայերի տները. մի քանի օրից յետոյ, հայերը վերադարձան վերստին գիւղ իրենց կողոպտուած տները. երբ գիւղ եկան 15 ռուս զինուորներ: Սրանից յետոյ թիւրքերը մի քանի անգամ կրկին փորձեր արին յարձակուելու հայերի վրա, բայց զինուորները դուրս էին գալիս եւ հրացան արձակելով յետ էին մղում թիւրքերին. թալանուած են 27 տուն 1 տ. հրկիզեցին:

Թալանուած գոյքի արժեքը

26 Աբրակունիս հայաբնակ -79 տուն

Մայիսի 10-ին թիւրքերը յարձակուելով տարան քշեցին ամբողջ տաւարը, թէ խոշոր եւ թէ մանր անասունները:

Մայիսի 13-ին յարձակուեցին գիւղի վրայ ու թալանեցին 62 տուն: Հայերը սկզբում յետ էին մղում թիւրքերի յարձակումները, բայց որովհետեւ թշնամին լաւ դիրքեր ուներ գրաւած, ուստի ներս խուժեց գիւղի մէջ եւ սկսեց թալանել, կողոպտել եւ այրել: Հայերը ժողովեցին իրենց կանանց եւ երեխաներին եւ բոլորը միասին փակուեցին եկեղեցում:

Հասնելով եկեղեցուն թիւրքերը, չկարողանալով դռները կոտրել, պատրաստւում էին հրկիզելու եւ արդէն բերում էին տակառներով նաւթ: Հայերը շարունակում էին թիւրքերի վրա կրակ տեղալ, այդ միջոցին յանկարծակի երեւաց 3 մասի պրիստաւը կոզակների ուղեկցութեամբ: Թուրքերը տեսնելով եկողներին, սկսեցին փախուստի դիմել: Այրուած են 6 տուն.

Թալանուած ապրանքը – 20,325 րուբ.

Յունիսի 19-ին թիւրքերը նորից փորձ արին յարձակում գործելու, բայց մենք նախազգուշացած էինք, ուստի սկսեցինք հրացանաձգութիւն, բայց երբ երեւացին կոզակները թիւրքերը անմիջապես փախան:

27. Արագին հայաբնակ 39 տուն:

Թիւրքերը յարձակուել էին այս գիւղի վրայ մայիսի 12-13-ին:: Քշուած տարուած է տաւարը: Թալանուած են 38 տուն: Թալանուած իրերի մի չնչին մասը վերադարձուել է տերերին շնորհիւ 3 մասի պրիստաւի Կավրեեւի ձեռք առած միջոցներին.

Թալանուած գոյքի արժեքը

28 Գենդավազ «Գնդեվանք» 38 տուն հայ

Թիւրքերը յարձակում գործեցին այս գիւղի վրայ մայիսի 12-ին: Ամբողջ գիւղը գրեթէ թալանած է: Թալանած գոյքի փոքրագոյն մասը վերադարձուած է գիւղացիներին:

Սպանուած է 1 հոգի

Թալանուած գոյքի արժեքը

29 Բիստ հայաբնակ 52 տուն.

Մայիսի 11-ին լուր տարածուեց թէ թիւրքերը մտադիր են այս գիւղի հայերի անասուններն ամբողջապես թալանել, ուստի Բիստեցիք գնացին «Դարուղազ» կոչուած արօտատեղից ամբողջ իրենց հօտը տուն բերելու:

Մայիսի 13-ին յիշեալ տեղից հօտը տուն բերելիս ճանապարհի վրայ յարձակուեցին թիւրքերը եւ քշեցին տարան 6 ձի, 2 ջորի եւ 2 էշ, բոլորն էլ բարձած արոտատեղի պղինձներով , անկողիններով եւ այլն: Իսկ իւղ, պանիրը իբրեւ հարամ բան, թափում էին գետին եւ ոտներով տրորում, որպեսզի հայերը չըօգտուին:

Մայիսի 14-ին գիւղերուայ ժամը 11-ին հովիւները գիւղի սահմանից մեզ օգնութիւն էին կանչում, թէ ոչխարները տարան: Ուշ լինելու պատճառով, հայերը չկարողացան իրենց անասունների յետեւից գնալ: Առաւոտեան իմացուեց, որ յափշտակած ոչխարները 334 գլուխ էին: Յափշտակողները հարեւան թիւրք թեմի գիւղից էին: Նոյն օրը թիւրքերը հանդից փախցրել էին 30 եզ, նաեւ երկրագործական պարագաները: Իսկ նոյն համագիւղացի թիւրքերը 10-15 օրուա ընթացքում հայերից տարել էին մոտ 60 անասուն.

Մայիսի 14-ից մինչեւ 16-ը Բիստ գիւղը 4 կողմից պաշարուած էր հարեւան գիւղերի թիւրքերով, բայց երկիւղից, թէ այլ անյայտ պատճառներից չէին վստահանում յարձակուել եւ բաւականանում էին լոկ հրացանաձգութեամբ, երբ մայիսի 16-ին եկան պրիստաւ 8 ստրաժնիկներով, թիւրքերը իսկոյն ցրուեցին.

Թալանուած ապրանքի արժեքը 5.852 պուբ.

30 Նասրվանիս «Մսրվանիս» հայաբնակ 22 տուն

Մայիսի 17-ին ցերեկուայ ժամի 12-ին այս գիւղի սահմաններում սկսեցին երեւալ խումբ-խումբ թիւրքերը: Տեղացի հայ գիւղացիները նկատի ունենալով իրենց անզօրութիւնն եւ հարեւան հայ գիւղերի սոսկալի թալանը, կողոպուտն ու սպանութիւնները, բարուոք համարեցին ապաստանուիլ համագիւղացի թիւրքերի տներում իրենց բոլոր ընտանիքներով ու ապրանքներով: Սակայն նախապես այդ բանի մասին իմաց էին տուել Օրդուբադի շրջանի պրիստաւին:

Սա գալիս է գիւղ, մայիսի 18-ին, երբ թիւրքերը կողոպտել էին եկեղեցին եւ ամեն ինչ տակն ու վրայ էին արել.

Պրիստաւը թիւրքերին սաստեց եւ նոյն իսկ սպառնաց համագիւղացի թիւրքերին ու գնաց: Հայերը 3 օր մնացին ապավինած թիւրքերի տներում, մինչեւ որ պրիստաւը նորից եկաւ ու նրա հրամանով հայերը կրկին վերադարձան իրենց տները:

Թալանուած է եկեղեցին եւ այնտեղ պահած չորս տների բանկագին իրեղէնները:

Թալանուած ապրանքի արժեքը

32 Շիխմամուտ հայաբնակ – 124 տուն:

Թիւրքերը յարձակուել են մայիսի 10-ին հօտի ու տաւարի վրայ ու քշել տարել. հայերը դիմադրել են եւ կարողացել են թալանած տաւարի մի մասը միայն յետ խլել:

Բոլոր շրջակայ գիւղերի մէջ Շիխմամուտն էր, որ իւր հայ բնակիչներով, ոչ միայն կարողացաւ դիմադրել եւ թոյլ չտալ, որ թիւրքերն իրենց վրայ յարձակուեն, այլեւ դարձաւ մի կենտրոն, որտեղ շրջակայ հայ ապաստանած գիւղերի ժողովուրդը ապաստան էր գտնում: Շիխմամուտի հայ տղայքը նոյն իսկ երբեմն գնում էին ուրիշ հարեւան գիւղերին օգնութիւն հասցնելու թիւրքերի դեմ կռուելով, ինչպես օրինակ Մամարգայ-Դիզայի, Մազրայի հայերին, նմանապես, շիխմամատցիք էին, որ խլեցին թիւրքերից Ս. Կարապետի աջը, որը յափշտակուած էր Եարմջայից.

Շիխմամուտում հաւաքուել են հետեւեալ հայ գիւղերից, փախստականներ Վերին-Ոգուն Օբայից – 250 հոգի. Դիդավարից – 48 հոգի, Նազար աբաթից 500. Մազրայից 360, Ջահուկից 930, Խալխալից – 450. Մամարգա-Դիզայից 60 հոգի այսքան հոգի ներկայ էին յիշեալ գիւղում յունիսի սկզբներին: Բայց մինչեւ յունիսի սկզբները հաւաքուած են եղել եւ արդէն վերադարձած իրենց գիւղերը վերստին հայերը Եարմջայից, Գուլիբեկ Դիզայից Փիւրիմ Բեկ Դիզայից:

33 Խալիլու – հայաբնակ -31 տուն

Թիւրքերը յարձակուել են մայիսի 10-11 լոյս գիշերը, թալանել են մի տուն, սպանուած են չորս հոգի, վիրաւոր – 1- կին:

34 Եմխանայ. խառն ազգաբնակչութիւն – 111 տուն հայ:

Յունիսի 6-ին Նախիջեւանի ագդեցիկ անձանց ու կառաւարչական ներկայացուցիչների խոսքերին հաւատալով, թէ այլեւս տեղի չեն ունենայ որեւէ կոտորած ու թշնամական յարձակումներ թիւրքերի կողմից, մանաւանդ նկատի ունենալով, որ Եմխանայում կանգնած են 12 հոգի կոզակներ. հայ գիւղացիները սկսեցին հանդ դուրս գալ: Յանկարծ թիւրքաց Բուլխան գիւղից մի վերստ հեռաւորութեան վրա գտնուած բլրի վրայ երեւաց հեծեալ եւ հետեւակ թիւրքերի մի մեծ խումբ, որ սկսեց բլրից վայր իջնել ու բանող հայերի վրայ հրացաններ արձակել: Թիւրքերը 15-20 վարկերից յետոյ հանկարծակի կանգ առան եւ 5 րոպէ՛ չափ սպասելուց յետոյ սկսեցին յետ նահանջել: Բանից երեւաց, որ Եմխանայ գիւղի հանդէպ գտնուած Թագա գիւղում լսել էին հրաձգութիւնն (1 1 2 վերստ հեռաւորութեան վրայ Թագա գիւղը) եւ հայ տղերքը հրացանները ձեռին չտապում էին օգնութեան հասնել եմիանացիներին. գիւղում գտնուած եմիանացիներին էլ հայերը պատերի յետեւը

դիրքեր բռնելով պատրաստուել էին յարձակուիլ թիւրք հրոսախմբի դեմ կռուելու: Ահա այդ ուժեր տեսնելով, թիւրքերը վախեցան կռուելու եւ հարձակում գործելու եւ աւելի լաւ համարեցին փախչելու:

*35. **Զնաբերդ (Ազնաբերդ) 94 տուն հայ եւ մի քանի (10) տուն թիւրք թափառական քոչաւորներ:***

Յունիսի 13-ին Ղարավուշ կոչուած վայրից առաւոտեան յուսարացին քշեցին մի սուրու ոչխար եւ այծ ընդամենը 672 գլուխ, իսկ երկու հովիւներին սպանել են: Այդ դէպքից մոտ 2 ժամ յետոյ լուր եկաւ, թէ թիւրքերը տաւարը տարան: Գիւղից մի քանի ծիաւոր կոզակներ եւ մոտ 100 հոգի գիւղացիք գնացին ապրանքի յետեւից: Հրացանաձգութիւնից յետոյ, թիւրքերի դիրքերը խլելով Զնաբերդցիք յետ դարձրին բալանած տաւարի մի մասը: Տաւարից յետ չի վերադարձուել 110 տաւար, 23 ձի, 3 էշ եւ 1 ջորի, յարձակուող թիւրքերը եղել են մոտ 900 հոգի գանազան գիւղերից, գլխաւորապես Ջարաբախլար եւ Զնաբերդի գիւղացիք:

Սպանուած 2 հոգի, վիրաւոր 1 հոգի.

36 Բաղամլու. *մայիսի 14-ին թիւրքերն շրջապատեցին գիւղը չորս կողմից, հայերն ունեին 4 բիրտանի հրացաններ, ատրճանակներ, բայց ոչ որ չգիտեր արձակել: Թիւրքերը առաջարկեցին իսլամութիւն ընդունելու, միւս օրը առաւոտեան թիւրքերը եկան աւելի մեծ ամբոխով, կրկին շրջապատեցին եւ նոյն պահանջն դրեցին, հայերը ճարահատեալ տալիս են իրենց յօժարութիւնը եւ ներս են թողնում թիւրքերին գիւղ: Թիւրքերը իրենց յետ բերել էին 2 սափրիչ եւ սկսեցին անյապաղ բոլոր հայ գիւղացիներին, նոյնիսկ քահանային սափրել. թիւրքերը կանգնած էին իւրաքանչիւր հայի մոտ հրացանը ձեռքին եւ սպառնում «ով կրմնեժի ընդունել իսլամութիւն, նա իսկոյն եւ ետ կսպանուի», բոլորին սափրեցին, իսկ երեխաներին թլպատեցին: Հայ կանանց հրամայեցին «չադր» քցել վրաները: Եկեղեցին մեջիտի փոխեցին:*

Մայիսի 27-ին այս գիւղն եկան գեներալ Ալիխանովը եւ Երեւանի փոխ նահանգապետը: Այստեղ գիւղացիք յայտարարեցին, որ իրենց բռնի են իսլամացրել, ուստի բոլորը բացի մի ընտանիքից կրկին վերադարձան քրիստոնեական եկեղեցու գիրկը:

Թիւրքերը վրեժ առնելու համար, յարձակումներ գործեցին նաեւ մայիսի 30.31-ին եւ յունիսի 1-ին, թալանեցին տաւարը:

Թալանած ապրանքի գնասը – 3630 րուբլի:

37 Գէօմեր – 105 տուն հայ:

Յունիսի 8-ին առաւոտեան 7 ժամի Գէօմեր շրջապատող թիւրք բնակիչները միացած Ղարաբաղի սահմաններից եայլայ բարձրացած

թիւրքմենների հետ յարձակում գործելին: Սկզբում յարձակուելին հանդիսում գտնուած տաւարի վրայ. այդ օրը գիւղացիք հանդիսումը վար էին անում: Թիւրքերին յաջողուեց տանել ձիաների ջոկը, որ հրացանի ձայնից խրտնել ու փախել էր ղէպի սարը եւ գառների մի հոտ, մոտաւորապես 700 գառ գառնարածներից մեկին բռնել էին եւ սպանել, վարողներից մեկին 1-ին վիրաւորել: Ագատ մնացած տաւարը գիւղը բերելով, կռուող տղայքը բռնեցին իրենց դիրքերը, գիւղի չորս կողմը, որովհետեւ յարձակումը ամեն կողմից էր: Թշնամու գլխաւոր ոյժը, որ Ղարաբաղի թիւրքմեններն էին ներկայացնում, մոտ 60 հոգի, հեծեալ բերտաւկաւորներ էին, բացի յետեւակից, որ բռնել էր գիւղի վերին դիրքի վրայ սարի կողմից:

Սրա առաջին 2 յարձակումը Գէօմէրիցիք յետ էին մղել յաջողութեամբ: Թիւրքերը ունեցել էին երկու կորուստ, իսկ հայերից ոչ ոք: Հրացանաձգութիւնը չարունակուեց մեկ ընդ մէջ մինչեւ ժամը 2-ը: Այդ միջոցում թիւրքերը կորցրին էլի 3 հոգի: Մոտ ժամը 2-ին, թիւրքերը ոյժեր ստանալով (եայլաղից), առաջ շարժուեցին ձոր միջով, որ եզրին էին գտնւում հայերի հիւսիսային դիրքերն եւ արեւելեան դիրքերից մէկը: Նրանց ոյժը գալիս էր այս դիրքի վրայ եւ բաւականին մոտեցել էին հայերին մոտ 20-30 սաժէնի: Թիւրքերին առաջ խաղալուն նպաստում էր ձորն իւր ծորակներով, ծառերով եւ առհասարակ իւր անհարթութեամբ: Մինչ այդ, հայ ատրճանակատրների մեծ մասը հաւաքուեցին այդ կողմը յարձակում գործելու եւ սպասում էին հարմար րոպէի. մոտ ժամը 5-ին հանկարծ արեւելեան կողմից սարի լանջին մի մեծ բազմութիւն երեւաց: Այդ երեւոյթը երկու կարծիք առաջ բերեց, կամ դրանք թիւրքեր էին, գալիս էին իրենց ցեղակիցներին օգնութեան, կամ կոզակները մեզ օգնելու:

Երկու ենթադրութիւնն էլ մղում էր հայերին յարձակում գործելու, որովհետեւ եթե եկողները թիւրքեր էին, հայերը չպետք է թոյլ տային, որ իրենց դեմ կռուողները ամբողջական ու թարմ ոյժերով միանային եկողների յետ: Յարձակման յաջող դեպքում հայերը կորուստ հասցրած կը լինեին թշնամուն եւ նրանց դիրքերից դուրս քշած: Ընդյաջող դէպքում ժամանակ կունենային մեր տղայքը իրենց երկրորդ կարգի դիրքերը գրաւել տեղի յարմարութեան համաձայն գիւղի չորս կողմը երկու շարք դիրքեր կամ շինուած, միայն արեւելեան կողմում երեք շարք էր: Եթէ եկողները կոզակներ լինէին, երկրորդ ենթադրութեամբ, հայերը իրենց ոյժերը փորձած կըլինէին, անյաջող դէպքում այնքան էլ գրկանք ու վհատութիւն չէր լինի: Կռուողները վստահ էին յաջողութեանը, տղաներին հազիվ էին կարթոնանում զսպել չյարձակուիլ:

Յանկարծ հայերը գրոհ տուին, բշնամին երկու հոգի կորցնելով, թողեց դիրքերը եւ մինչ ետ էր նահանջում, լսուեց խմբական հրացանաձգութիւն, որ մատնեց եկողների՝ կոզակներ լինելը: Թշնամին նոյն րոպէին բարձրացաւ սարերը ու անյայտացաւ: Կոզակները եկել էին Զանգեզուրի գաւառապետի հրամանատարութեամբ:

Հայերը կորցրել են սպանուած 2 հոգի, վիրաւոր 1 հոգի:

Գէօմերին շնորհիվ իւր այդ դիրքին եւ կռուող ինքնապաշտպանողական խմբի, ծառայել է իբրեւ կենտրոնատեղի, որտեղ փախել եկել էին շրջակայ գիւղերի հալածուած հայերը ապաստան գտնելու:

Այդ գիւղերն էին Նորս-Մազրա, Գիժաձոր, Նորս, Դարաբաբա, Արինջ:

38 Ղազանչի. հայաբնակ 99 տուն:

Մայիսի 12-ին Միլաի թիւրք գիւղի ժողովուրդը գիշերը քշեց դաշտից հոտի մի մասը:

Մայիսի 13-ին առաւոտեան կանուխ զինուած թիւրքերի ստուար խմբեր պաշարեցին Ղազանչի գիւղը, նախօրոք քշելով ու թալանելով հայերի տաւարն, մանր անասուններ, ձի ընդամենն 2600 գլուխ անասուն ղէպ իրենց գիւղերն: Յարձակուող թիւրքերը հետեւեալ գիւղերիցն էին. Միլաի, Մրավուս, Թէյվազ, Քաղ-Անգուր եւ այլն, բոլորը 13 գիւղից: Այնուհետեւ թալանողները վերադարձան, որպեսզի գիւղի վրայ յարձակուեն: Հայերը զինուած էին ով ինչպես կարողացել էր. սկսուեց հրացանաձգութիւն առաւոտեան ժամը 5-ից եւ հայերը պաշտպանւում էին մինչեւ երեկոյան 4 ժամը:

Մայիսի 14, 15 եւ 16-ին թիւրքերը անդադար պատրաստութիւններ էին տեսնում, որպեսզի նորից յարձակուին Ղազանչու վրայ:

Մայիսի 17-ին առաւոտեան 8 ժամին գիւղը նորից պաշարուիլ էր թիւրքերի մի ահագին բազմութեամբ, որ 15 հազարից աւելի հոգի էին: Կռիւն ու հրացանաձգութիւնը չարունակւում էր մինչեւ երեկոյեան ժամը 4-ը, երբ Ղազանչի եկած անսպասելի կերպով Շարուր-Դարալագեազի Ղազին, հին-Նախիջեւանի ծխական քահանայ Տեր Սարգիս Տեր Սահակեանցը, Նախիջեւանի մասի ժանդարմի օֆիցէրն եւ Կամրան-խան Նախիջեւանսկին: Շատ երկար աղերսանքներից ու խրատներից յետոյ, որոնցով յիշեալ անձինք դիմում էին թիւրքերին, վերջիներս սկսեցին հետզհետէ յետ նահանջել եւ իսպառ թողեցին գիւղը: Հենց նոյն երեկոյեան յիշեալ անձանց խումբ հեռացաւ Ղազանչուց:

Մայիսի 18, 19 եւ 20-ին թիւրքերը վերստին թափուեցին ու չորս կողմից շրջապատելով պաշարել էին Ղազանչին:

Մայիսի 21-ին թիւրքերը գործեցին մի նոր յարձակում գրոհ տալով մի մեծ բազմութեամբ, որ հասնում էր 20-25 հազար մարդու: Թիւրքերի գլխաւորները դրոշակներով էին «Ալի» ձեռքը վրաներին նկարած եւ գոռում գոչում էին «Եա Ալի՛, եա ջահատ» ոգեւորելով ամբոխը նոքա յարձակուեցին գիւղի վրա, որը չորս կողմից լաւ ամրացրած էր: Հրացանաձգութիւնը շարունակւում էր մինչեւ արեւի մայր մտնելը, երբ թիւրքերը սկսեցին ընկճել մեզ, նոքա արդէն ներս էին խուժում այգիները եւ այրել էին մի մարագ, երբ հայերը վերջին ոյժերը հաւաքելով եւ «ուրա՛» աղաղակելով յարձակուեցին թիւրքերի վրայ. թիւրքերը սոսկացին եւ սկսեցին փախչել. թիւրքերից այս յարձակման միջոցին սպանուեցին մի քանի հոգի եւ հայերը թիւրքերից խլեցին 9 ձի: Այսպես վերջացաւ բոլոր յարձակումները:

Մայիսի 22-ին վերջապես եկաւ պրիստաւը կոզակներով, որոնք չնայած որ պաշարման ամբողջ ժամանակ խնդրում էին հայերը օգնութիւն, Ղազանչու կռիւների ժամանակ կանգնած էին 7 վերստ հեռու Նորաշէն գիւղում:

Սպանուած են 2 հոգի

39 Շուրուտ հայաբնակ 56 տուն:

Թիւրքերի յարձակումներին է ենթարկուել մայիսի 14-20-ի ընթացքում, բայց միշտ յետ են մղուել: Թալանուած է Ս. Ստեփաննոս վանքը եւ ջրաղաց: Քշուած տարած է տաւարը 155 գառը, 8 եզ, 8 կով, 2 ձի – 1800 րուբլի արժողութեամբ.

40 Ֆարադաշտ – հայաբնակ – 36 տուն

Մայիսի 14 առաւոտեան ժամը 7-ին սկսեցին երեւալ մեծ մեծ խմբերով թիւրքերը, որոնք շրջապատեցին գիւղը: Ֆարադաշտեցիք, գուշակելով, որ դրքա յարձակուելու են գիւղի վրայ, սկսեցին ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առնել: Արեւմուտքից Ֆարադաշտի վրայ գալիս էին Խոշկէշեն, Խանաժա, Նորաշէն, Սուլթախ, Բանանձար, Բեռնաց, Ղզլջա, հարաւից 3 գիւղեր, Լաքաթալ, Դարգես, Մարգ, Թէյմալ, Բար, Գեօմէր, Բահմատ, Արավուս, Զովալա, Միլլախ գիւղերի թիւրքերը: Այս բոլորի դէմ անհաւասար կռիւ մղելով, հայերը կարողացան մինչեւ երեկոյեան ժամը 6-ը պաշտպանուել: Մայիսի 15,16 եւ 17 կրկնուեցին նոյն բազմամբոխ յարձակումները եւ հայերը կրկին յետ էին մղում:

Մայիսի 18 եւ 19-ին վերոյիշեալ բոլոր թիւրք գիւղացիք գիւղերի վրայ եւ Թեփ, Բեշա, Բոյրութ, Եայջի Ջամալտին, Արազեն, Խաշետուխ, Դիզա եւ մասամբ Նիհրամից ընդամենը 28 գիւղեր:

Գիշերուա ժամը 3-4-ը ամբողջ Ֆարադաշտը արդէն պաշարուած էր:

Սկսում է կատաղի հրացանաձգութիւն, որը տեւում է մինչեւ երեկոյեան ժամը 8-ը, բայց չնորհիւ գիւղի բնական դիրքերին, գիւղացիք կարողացան իրենց հին զենքերի օգնութեամբ, թոյլ չտալ թիւրքերին գիւղը մտնել:

Մայիսի 20, 21-ին յիշեալ թիւրք գիւղերի մի մասը շարունակեց յարձակումներ գործել, որպեսզի ներս խուժել գիւղը, բայց նորից անյաջող էին: Մայիսի 22-ին ցերեկուայ ժամը 12-ին վերջապես Ֆարադաշտին օգնութիւն է հասնում այդ րայոնի պրիստաւը 20 կոզակներով, որոնց երեւալուն պես, թիւրքերը յետ են քաշւում եւ գրւում են:

Ղազանչիում հաւաքուած ապաստանուած են եղել հարեւան հայ բալանած գիւղերի փախստականներ, Սլայեցիք եւ Նորաշէնի է ժողովուրդը:

41 . Կզնուտ – հայաբնակ 199 տուն

Թիւրքերի յարձակման է ենթարկուել մայիսի 12-13 եւ 20-ին:

Քշել են անասունը: Սպանուած են 3 հոգի:

Թալանած անասունը – 40 գլուխ տաւար եւ 300 գլուխ մանր անասուններ: Յետ են դարձրել 36 գլուխ տաւար եւ 250 գլ. մանր անասուններ:

Թալանած ապրանքի արժէքը 600 րուբ.

42 . Աղ-Խաչ- Խառն ազգաբնակչութիւն -21 հայ տուն:

Թիւրքերը յարձակուել են հայ տների վրայ մայիսի 13-ին: Հայերի մի մասը փախել է ապաւինել գիւղը, իսկ մի մասը. ծերադարձել են վերստին իրենց գիւղը յուլիսի 1-ին: Յարձակուողները իջել են Իթղրացի եւ Աղխաչու թիւրքերը:

Թիւրքերը թալանել են 600 ոչխար, 40 տաւար:

43. Ղարախան Քեկլու – 110 տուն հայ, Խանի կալուածք է:

Թիւրքերը յարձակուեցին մայիսի 13-ին, եւ տարան տաւարը:

Սկսուեց հրացանաձգութիւն: Երբ լսուեցին հրացանների ձայները, փոխնահանգապետը խանին լաւ երեւալու համար, գնաց մի խումբ ստրաժնիկներով Նախիջեւանից(2 վերստ հեռաւորութեան վրայ է) եւ ցրեց թիւրքերին, որոնք հրացան էին արձակում գիւղի վրայ, իսկ այն թիւրքերից, որոնք թալանել էին տաւարը, խլել էր կեսը թալանից եւ տեւել գիւղացիներին:

Թալանուած ապրանքի վնասը 3868 րուբլի:

44. Թամիս, 31 տուն հայ:

Թիւրքերի հարձակման է ենթարկուել մայիսի 24-ին, որոնք յետ են մղուել, բայց եւ այնպես 300 գլուխ ոչխար էին տարել:

Սպանուած է 1 հոգի:Հայերը թիւրքերից վրեժ առնելու նպատակով յարձակւում են յուլիսի 1-ին Դունիս գիւղի վրայ եւ քշում թալանում են 600 գլուխ ոչխար:

45. Ճուլֆա - հայաբնակ 90 տուն

Հայերը յետ են մղում բիւրքերի հարձակումը:

46. Ալմալու – 53 տուն հայ:

Ենթարկուեց բիւրքերի յարձակմանը մայիսի 26-ին, բայց յետ է մղուած:

Քշած թալանած է տաւարը:

47. Խառակայ – հայաբնակ 55 տուն:

Մայիսի 24-ին բիւրքերը յարձկում են հայերի վրայ եւ թալանում տաւարը 16 եզ: Յարձակումն յետ է մղուած:

Սպանուած են 2 հոգի:

Յունիսի 30-ին Թիվիցիք, Ռիլաւիցիք եւ շրջակայ բիւրք գիւղացիք համախմբուելով հարձակւում են նորից Փառակայի վրայ առաւտեան. կռիւը տեւում է մինչեւ երեկոյ: Հայ տղայք անխնայ գնդակահարում են իրենց դիրքերից եւ գետին գլորում շատերին բիւրքերի խիտ շարքերից: Հայերին օգնութիւն են հասնում Թիվիսում կանգնած կոզակները եւ 3-րդ մասի Ապրակունիսի պրիստաւը:

Թիւրքերը հալածական դառնալով փախչում են դեպի իրենց գիւղերը, թողնելով միայն կռուի դաշտում 9 դիակ, իսկ մնացած սպանուածներին տարել են յետները. բիւրքերից խլուեցան նաեւ Քիրտանի հրացաններ, որոնք այժմ հայերի ձեռքն են:

48. Մարտիրոս. հայաբնակ 107 տուն

Թիւրքերի առաջին յարձակումը տեղի է ունեցել յունիսի 8-9 եւ յետ է մղուել:

49. Օրդուբաթ 83 տուն հայ:

Յունիսի 26-ին Օրդուբաթ քաղաքում սկսուեց հայերի ու բիւրքերի մէջ խլրտում. բիւրքերը քշնամական դիրք էին բռնել եւ ուզում էին հայերի վրայ յարձակուել: Սակայն տեղական պրիստաւի ձեռք առած խիստ միջոցների շնորհիւ քաղաքը հանդարտուեց եւ ոչինչ տեղի չունեցաւ հայերի ու բիւրքերի մէջ: Բայց լափտղ հրդեհը անցաւ քաղաքի արուարձան Հանդամէջ գիւղին, որտեղ մինչեւ պրիստաւի հասնիլը աւիրուեց ու կողոպտուեց 3 տուն. սպանուեցան 4 հոգի: Հանդամէջի վրայ յարձակուել են Օրդուբաթի եւ Նուս Նուսի բիւրքերը: Սպանուած մարդիկ կողոպտուած են.

Օրդուբաթի դէպքից մի քանի օր առաջ ագուլիսցի 4 երիտասարդներ Ղարաբաղի վրայով վերադառնալիս են եղել դեպի հայրենիք: Երբ Նուս Նուս (Ագուլիսից 4 վերստ հեռու) են հասնում, բիւրքերը բռնում են նրանց քրեյտարին ու կամենում են սպանել. մի քանի վերք ստանալով կարողանում է մի կերպով ազատուիլ, հասնել Ագուլիս եւ յայտնել իրենց գլխով ան-

ցած դէպքը: Շուտափոյթ կոզակներ են ուղարկում Նուս Նուս եւ ապատնլով կողոպտուած ու սաստիկ տանջանքների ենթարկուած երիտասարդներին, տանում են Ագուլիս. բիւրքերի պարագլուխներից մեկը բռնուած է. տարել են զենքեր ու փամփուշտներ, փող, շորեր եւ մի ձի Նուս Նուսից.

Այսպես ուրեմն մայիսի 12-ից սկսած բիւրքերի յարձակման են ենթարկուել մի քաղաք եւ 47 գիւղեր, որոնցից միանգամայն աւերած ու կողոպտուած են եւ բնակիչները հեռացած - 19 գիւղ կիսաւերած, բայց ամբողջովին թալանած 10 գիւղ, յարձակման են ենթարկուած:

Քաղաքում ու գաւառում սպանուած է 300 մարդ:

Վիրաւորուած – 59, եւ անյայտ կորել են – 7 :

Թալանած գոյքը եւ ապրանքի արժեքը մօտաւորապէս 3,101, 671ր. 30 կ:

Այս գումարը միայն յայտնի եղած եւ տեղեկացրած թալանի մասին է. բայց շատ գիւղերից տակաւին կրած վնասների տեղեկութիւնները ստացուած չեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՅՔԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԲԱՅՈՒՄԸ.....3

ԳԼՈՒԽ 2. 1905-1906ԹԹ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԹԱԹԱՐԱԿԱՆ) ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ.....54

2.1. Երեւանի նահանգի ինքնապաշտպանության կազմակերումը.....80
2.2. Իրավիճակը Նախիջեւան քաղաքում եւ գավառում.....87
2.3. Ընդհարումների վերսկսումը Երեւան քաղաքում.....115
2.4. Հայ մարտական խմբերի գործողությունները Երեւանի նահանգի գավառներում.....139
2.5. Շարուր--Դարալագյազի ինքնապաշտպանական մարտերը.....146
2.6. Դանձակի (Ելիզավետպոլ) ինքնապաշտպանությունը.....244
2.7. Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերը.....311
2.8. Ինքնապաշտպանական մարտերը Ղարաբաղում.....319
2.9. Բաքվի երկրորդ եւ երրորդ ընդհարումները.....375
2.9. Ինքնապաշտպանական մարտերը Թիֆլիսում.....428

ԳԼՈՒԽ 3. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ.....464

ՀԱՎԵԼՎԱԾ.....504

ՀԱՍԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ ԳԵՒՈՐԳՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

Խմբագիր՝	**Գուրգեն Վարդանյան**
Հրատարակիչ-տնօրեն՝	**Ռուզան Սահակյան**
Շարվածք եւ սրբագրություն՝	**Լալա Մելքոնյան**
Ձեւավորումը՝	**Նելլի Մարգարյանի**
Մակետավորումը՝	**Արթուր Բոյախչյանի**

Շապիկի նկարում Արամայիսն է, Վռամը, Ուտուլ Գրիգորն ու Ուտուլ Խեչոն: Նրանք Պաղվալի Վարոյի եւ Սվազցի Հարությունի (Բիճա) աջակցությամբ 1904թ. Ալեքսանդրապոլի ռուսական զինապահեստից տարել են հարյուրավոր հրացաններ ու տասնյակ-հազարավոր փամփուշտներ:

Ստորագրված է տպագրության՝ 10.03. 2010: Չափսը՝ 60 x 84 1/16: Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպագրությունը՝ օֆսեթ: տպ. 33 մամուլ: Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում
Երեւան, Գրիգոր Լուսավորչի 6.
Հեռ. 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru